

АУТСТРАЛ-АНУЧУУСУН

ЭХЭНЭ БЭ-ХУУЛ-УН-АМ-С-ЭНЭ  
И-СУУН, АУТСТРАЛИ  
(1995-2015)









**БАХТИАР ОВАКИМЯН**

**ТЕМА ГЕНОЦИДА АРМЯН  
В ТЕАТРЕ  
(1895-2015)**



**BAKHTIAR NOVAKIMYAN**

**THE THEME OF THE ARMENIAN  
GENOCIDE IN THE THEATRE  
(1895-2015)**

**ЕРЕВАН – 2016 – YEREVAN**

1170593

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԹԵՄԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ  
(1895-2015)

A103262



ԵՐԵՎԱՆ - 2016

**Գիրքը տպագրվել է «Փյունիկ» մարդկային ռեսուրսների  
գարգացման հիմնադրամի աջակցությամբ**



**Հովակիմյան Բ. Մ., Հայոց ցեղասպանության թեման թատրոնում  
(1895-2015), Եր.-2016, 378 էջ + 16 էջ նկարների ներդիր:**

*«Հայոց ցեղասպանության թեման թատրոնում (1895-2015)» այս գիրքը «Ցեղասպանության թեման Հայ թատրոնում (1895-1995)» աշխատության երկրորդ համալրված հրատարակությունն է: Գրքում ներառված են նաև վերջին հարյուրամյակում Հայ և օտարազգի հեղինակների նոր պիեսներն ու նրանց բեմադրությունները աշխարհի թատրոններում՝ ընդգեմ Հայ և ուրիշ ժողովուրդների նկատմամբ կատարված ու կատարվող ցեղասպանության ակտերի:*

*Գրքում ներկայացված է Հայոց ցեղասպանության և նրա տխուր հետևանքների թեմայով գրված Հայ հեղինակների հայերեն գրող 218 և օտար լեզուներով գրող 16 հեղինակների, ինչպես նաև օտարազգի 14 հեղինակի պիեսների և արձակից ու չափածոյից բեմականացումների 480 ստեղծագործություն, որոնք տպագրվել կամ բեմադրվել են աշխարհի 38 երկրի 199 վայրում, 12 լեզվով:*

*Գիրքն օգտակար է ամեն մի Հայի:*

ISBN 9789939750712

© Հովակիմյան Բ. Մ.

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ  
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ  
(1895-2015 թթ.)**

**ՆԱԽԱԲԱՆ**

Հայ հասարակական-քաղաքական կյանքում կատարված ամեն մի իրադարձություն, երևույթ իր լուսաբանումն է ստանում թատրոնում: Այդ իրադարձություններից մեկն էլ ցեղասպանության թեման է, որը սակայն, դուրս է մնում թատերագիտական մտքի և պատկան մարմինների ուշադրությունից: Մինչդեռ ցեղասպանության թեմայով գրված յուրաքանչյուր ստեղծագործություն յուրատեսակ փաստաթուղթ-վկայություն է այդ հրեշավոր ակտը ապացուցելու համար: Չէ՞ որ այդ թեմայով գրված հարյուրավոր պիեսների գործող անձանց մի զգալի մասը՝ Հայ թե թուրք, անգամ օտարազգիներ, իրական դեմքեր են, պատմական կոնկրետ իրադարձությունների մասնակիցներ: Ուստի, այդ թեմայով գրված պիեսները և դրանց բեմական պատմությունը ցեղասպանության դեմ պայքարի պատմություն է թատրոնի միջոցով, կոնկրետ խոսքով ու գործով:

Իբրև հարազատ ժողովրդի պատմության գեղարվեստական տարեգիր, Հայ գրականության և արվեստի գործիչներն արձագանքելով մեր ժողովրդին սպառնացող ամեն մի վտանգավոր երևույթի, մեկը մյուսի հետևից գրել, տպագրել ու բեմ են հանել ժամանակակից և հեռավոր անցյալի հերոսական ինքնապաշտպանության դրվագներն արտացոլող զրամատիկական ու երաժշտական գործեր:

Մկրտիչ Պեչիկթաշլյանի, Սրապիոն Հեքիմյանի, Ռոմանոս Աետեֆճյանի, Սարգիս Վանանդեցու, Խորեն եպ. Գալֆայանի, Պետրոս Դուրյանի, Հակոբ Կարինյանի, Մուրադյանի, Վահան Տիրացյանի պատմական ողբերգություններին, Բաֆֆու վեպերի բեմականացումներին, Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերային իրենց Հայրենասիրական գաղափարախոսությունները փոխարինելու են

եկել 1895-ից ծնունդ առած՝ ցեղասպանության դեմ և նրա հետևանքներին մասին գրված մեծ ու փոքր պրիեսներ, որոնք արթուն են պահել հայ ժողովրդի սթափ ոգին ու ինքնապաշտպանության գաղափարը:

Հայ ժողովրդի ազգային առաջագիմությունը կասեցնելու հետ, քիչ չեն եղել նաև թատրոնի զարգացումն արգելակող սահմանափակումները կամ իսպառ փակելը: Պատահական չպետք է համարել, որ Կ. Պոլսի «Արևելյան» թատրոնի փակման համար պատճառ է հանդիսացել Միքայել Նալբանդյանի մահվան տարելիցի (1867) առթիվ ներկայացված «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» պրեսի ավարտին երիտասարդ գերասանուհի Վիրգինիա Գարագաշյանի արտասանած «Երգ ազատության» բանաստեղծությունը: Այդ նույն շրջանում, գերասանուհի Ազնիվ Հրաչյայի նպատին ներկայացվելիք պրեսից հետո Ռափայել Պատկանյանի «Հիմի է՞լ լուսնք» բանաստեղծությունը «Մանգումնի էֆքյար» թերթում ներկայացվել է որպես «Խոսք ուսս բանաստեղծի մը»:

Բնավ զարմանալի է, որ 1860-ական թվականներին Զմյուռնիայի «Վասպուրական թատրոնի», Պոլսի «Հայկազյան թատերական ընկերություն», «Ասիական ընկերություն», ինչպես և դավառական քաղաքների ընկերություններում բացակայել է Հայկական անունը: Իրենց միությունների և ընկերությունների հայկական ոգին պահպանելու համար, նրանց կազմակերպիչներն ստիպված են եղել համազոր արժեքներով անվանել ու պահպանել հայությունը համախմբող կազմակերպությունները, որովհետև գրաքննություն կողմից արգելվել է Հայ, Հայաստան բառերի դործածությունը:

Չնայած տարաբնույթ արգելքների առկայությունը, հայ բեմի գործիչները բոլոր հնարավոր միջոցներով կարողացել են կենդանի պահել թատրոնը, նրա միջոցով լեզուն, լեզվով՝ ժողովուրդը:

1877-1878 թթ. ուսուցիչական պատերազմից հետո (որտեղ պատերազմի թատերաբեմը Հայաստանն էր և 60.000 զոհ էր տվել)<sup>1</sup>, երբ եվրոպական պետությունները երես թեքեցին հայկական հարցին արդարացի լուծում տալուց, Թուրքիայում ավելի սաստկացավ հայահալած քաղաքականությունը: Արևմտյան Հայաստանի բնակչություն մի զգալի մասի տարբեր երկրներ գալթի ճամփան բռնելուն զուգահեռ, քայքայվեցին և գերասանական խմբերը: Դերասաններից ոմանք մեկնեցին Անդրկովկաս (Աստղիկ, Սիրանուշ, Ագամյան), ոմանք՝ Հունաստան և Եգիպտոս (Ս. Պենկլյանի օպերետային խումբը),

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1880, № 116:

տարրեր վայրեր՝ Թ. Ֆասուլյաճյանը և ուրիշներ: Անդրկովկասում և Ռուսաստանում շեքսպիրյան դերակատարումներով հռչակված Պետրոս Ադամյանը 1888-ին Պոլիս վերադառնալուց հետո, իր համաքաղաքացիների առաջ չկարողացավ հանդես գալ Համլետի և Արքա Լիրի դերերով, որովհետև, ինչպես 1889-ի հունվարի 19-ին Վարդգես Սուրենյանցին գրած նամակում է հայտնել՝ արգելվել են գրաքննիչի կողմից<sup>1</sup>:

Հայ, և ոչ միայն հայ թատրոնում, ընդունված է եղել ողբերգությունից հետո, հանդիսատեսի տխուր սրամազրությունը փարատելու համար, վերջում ներկայացնել կատակերգություն, Ֆարս-վոդևիլ կամ կենդանի պատկերներ: Շատ հաճախ, ներկայացումների ընդմիջումներին կամ ավարտին, կատարվել են երգեր ու արտասանություններ: Ասում ենքի համար առավելապես նախընտրելի են համարվել Գամառ-Քաթիպայի (Ռափայել Պատկանյան) «Հիմի է՞լ լռենք», «Հայերիս թուրք», որոնցով, ինչպես և իր բանաստեղծություններով, հաճախ հանդես է եկել Պ. Ադամյանը:

Այս սովորույթին զուգահեռ, Թիֆլիսի թատրոնում էլ արտասանվել են տեղական բարբառով երաժշտական-երգիծական քառյակներ, որոնցով խարազանվել են մարդկային թերությունները, կենցաղում տեղ գտած այլանդակությունները, ինչպես նաև քաղաքական կյանքը:

Թիֆլիսի թատրոնի դերասան և Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Ամիրան Մանդինյանի թղթերում մնացել են այս կարգի երգիծական սողեր, որոնք վերաբերում են 1880-ական թթ. քաղաքական կյանքին և համընկնում հայերի նկատմամբ ցարական Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի կամայականությունների ու բռնությունների քննադատությանը: Ահա այդ քաղաքականությունը մերկացնող սողեր, որ նա բերել է Պետրոս Ադամյանի թե՛ կատարման և թե՛ նրան ընդօրինակելու ձևով:

Գուզլիս Ադամյանցի հանգը կու կարգամ,

էն, որ ֆրակով դուրս է գալի-Հիմի՞ էլ լռենք.

Հիմի՞ էլ լռենք, իփ որ Ստամբուլումը

Հաու թիատրը կողպել են,

Հիմի՞ էլ լռենք.

Հիմի՞ էլ լռենք, վուր մեր շկուեքը կողպել են,

Հիմի՞ էլ լռենք.

Տո հիմի՞ էլ լռենք, վուր Բեուլինում

<sup>1</sup> Պետրոս Ադամյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 212:

էնքան բանիր խոստացան ու վունչինչ չին տալի.

Հիմի՞ էլ լռենք.

է, է, հիմի՞ էլ լռենք, իփ մեր Հայերուն

Մարաշումը կոտորում են.

Հիմի՞ էլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, վուր Ստամբուլում զաղաղա ին արի,

Վուր էլ Հայաստան անումը չտան, էի՛

Հիմի՞ էլ լռենք<sup>1</sup>:

Թերևս հարցը մի քիչ տարօրինակ թվա, բայց փաստ է, որ հայոց ազատագրական շարժումների ու ցեղասպանությունների դեմ պայքարի թեման իր արձագանքն է ստացել նաև ցարական հսկողությունից տակ գտնվող դրամատուրգ և հասարակական գործիչ Գաբրիել Սունդուկյանի 1880-ական թթ. դրամատուրգիայում: Եվ դա բնական է: Նախկին ճորտի որդի, հետագայում կոմկասի Հայոց բարեգործական ընկերությունից հիմնադիրներից մեկը, երկաթուղային ծառայությունից գեներալի աստիճանի հասած, Պեպոյի պես հերոսի կերպար ստեղծած դրամատուրգը չէր կարող հայրենասեր չլինել, իր հարազատ ժողովրդի հոգսերով չհետաքրքրվել ու առիթը բաց չթողնել՝ նրան պաշտպան դուրս գալու համար:

1888-ին Սունդուկյանի գրած «Ամուսիններ» պիեսում շոշափված հիմնական գաղափարը թեև վերաբերում է ընտանիքին, ազատ սիրո, բարոյականության հարցերին, բայց այդտեղ կրթության հետ, նուրբ երանգներով նա շոշափել է արևմտյան հայության կրած տառապանքների ու նրանց պաշտպանության թեման ևս: Եվ այդ քայլին դիմելու համար նա օգտագործել է ուսուցիչական պատերազմի մասնակից զինվորականի կերպարը:

Ռուսական բանակի սպա և գրող Արտաշես Արամյանն այսպիսի խոսքերով է նկարագրում արևմտահայության վիճակն իր դյուղատնտես ընկեր Լևոն Շիրակյանին. «Դու երևակայել անգամ չես կարող, թե ի՞նչ զգացմունք է տիրապետում քեզ պատերազմի դաշտում, երբ հանկարծ դիմացդ կանգնած ես տեսնում... դարավոր թշնամուդ, որ հափշտակել է քո հայրենի երկիրը, որի համար քո պապերն ու նախնիքը իրանց քրտինքն ու արյունն են թափել, ուր ամեն մի քար, ամեն մի ավերակ պատմում է քեզ անցյալի փառքը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Չարենցի անվան գրականություն և արվեստի թանգարանի թատերական բաժին, Ա. Մանգինյանի ֆոնդ:

<sup>2</sup> Գ. Սունդուկյան, Ամուսիններ, Արարված առաջին, տեսիլ ժԲ (ընդգծումը մերն է – Բ. Հ.):

Մի այլ տեսարանում Արամյանը Լևոնին, Մարգարիտին ու Հեղինեին ասում է. «Ինձ թվում է, որ ես հենց այս ընդհանուր դարձյալ այն սրբավայրերումն եմ շրջում և մեր թշվառ եղբայրակիցներին տեսնում եմ երկնքից օգնություն սպասելիս... Դուք չգիտեք, թե ինչ գրություն մեջ են այն խեղճերը: Պատիվ, կյանք, կայք, ընտանիք, ոչինչ, ոչինչ ապահով բան չունեն այն թշվառները»<sup>1</sup>:

Սուենդուկյանի այդ հերոսի խոսքերը որքան արդիական են ու համահնչյուն մեր սիրիահայությունների այսօրվա վիճակին:

Դերասանուհի Օլգա Գուլազյանի եղբոր, թատերասեր-գրաչար Մացակ Գուլազյանի հետ մի գրույցի ժամանակ, բացատրելով, թե «Ամուսիններն» ինչու է գրական լեզվով գրել և ոչ թե սովորականի պես՝ Թիֆլիսի բարբառով, Սուենդուկյանը հետևյալ ուշադրավ խոստովանությունն է արել. «Արտաշեսի և Մարգարիտի տիպերով, ասել է նա, — կամեցել եմ պատկերացնել ազատ Հայաստանը, որն իր անկախությունը համար մահ կամ ազատություն է վճռում: Չէ՞ որ Թիֆլիսի բարբառով Հայրենասիրական գաղափարներ քարոզելը ծիծաղելի կլինի»<sup>2</sup>: Ահա իմաստուն հեղինակի քաղաքական հայացքների բարձրակետը:

Սուենդուկյանի ցանկությունը «Ամուսիններն» առաջին անգամ խաղացվել է թատերասերների մասնակցությամբ (հավանաբար զգուշություն արձակելով), 1890-ի Հունվարի 29-ին Թիֆլիսի թատրոնում: Ներկայացման հասույթը հեղինակը նվիրել է Հայոց Դրամատիկական ընկերությունը:

Գրականության և արվեստի գործիչները հնարավորինս բողոքի ձայն են բարձրացրել թուրքական բռնությունների դեմ: Բայց թուրքին ո՞վ է բարոյականության շնորհք տվել: Ահա մի քանի նմուշ այդ բողոքներից տարբեր վայրերից:

Որքան էլ որ Հայերն իրենց բարեխիղճ ծառայություններով նպաստել են թուրքիայի ռազմա-քաղաքական և տնտեսական հզորացմանը, արհեստների և արվեստների բարգավաճմանը, այնուամենայնիվ, անմեղ մարդկանց արյուն թափելու թուրքական սովորությունը շարունակել է իր սև գործը: Սա նման է այն պատմությունը, երբ ջրում խեղդվող կարիճին օգնության է հասնում աղավինին՝ իր մեջքին նստեցնելով ափ հանում: Իսկ ցամաք հասնելուց հետո կարիճը սովորության համաձայն խայթում է իր փրկարար աղավնուն:

Թուրքին ի՞նչ վնաս կարող էր տալ բազմազամակ ընտանիքի տեր մի խեղճ Հայ ուսուցիչ, որ նրան զրկում են կյանքից:

<sup>1</sup> Նույն տեղում, Արարված չորրորդ, տեսիլ Ե:

<sup>2</sup> Հուլիսյան (Թիֆլիս), 1912, № 1, էջ 11:

Ահա, թուրքի այս բնույթն է, որ հետագայում մեկը դարձել է տասնյակ, տասնյակը՝ հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր...

Այսպիսի մի դեպք է արձանագրել վանեցի հայրենասեր գրող և մանկավարժ, պատմահայրենասիրական ողբերգությունների հեղինակ Տիգրան Ամիրճանյանը, որը գրել է «Միրզա վարժապետի սպանությունը թուրքերու կողմե» սրտառուչ բանաստեղծությունը՝ նկարագրելով հինգ աղջիկների սուղը իրենց խոշտանդված հոր դիակի վրա:

Ախ, մեր տուն ավրեցավ, մեր մեջք կոտրեցավ,

Մեր հոր կանաչ արև հողով ծածկվեցավ

Ախ, խերիկ, խերիկ, անունդ էր Միրզա

Արյան մեջ թաթխեցար, քղար նորընծա...

Ախ, տաճիկ, տաճիկ, դահիճ մեղավոր,

Ինչի՞ մեզ արեցիր ձեռոց սևավոր

Դյուք խնայել գիտե՞ք ձագվոր հավքերուն,

Ձինայեցիք մեր հոր, որ մարդ էր անուն...<sup>1</sup>

Սա, իհարկէ, եղակի չէ, բայց ո՞ւմ հասկացնես:

Մի ուրիշ՝ արևելահայ բանաստեղծ, թարգմանիչ և մանկավարժ Կոստանդին Տեր-Աստվածատրյանը տասը մասից բաղկացած «Ասացե՛ք, խնդրե՛մ» բանաստեղծության երկրորդ մասում գրել է՝

Մինչև երբ սուրը բռնավոր տաճկին

Անխրնա դրրած խեղճ հայի շլինքին՝

Պիտի խողխողե, պիտի մորթոտե

Դաշտերն ավերե՛, ու տունը քանդե...<sup>2</sup>

Արևմտյան Հայաստանի հայության դրական-կրթամշակութային կյանքի առաջընթացը կասեցնելու, նրա հետքն առհասարակ վերացնելու համար ինչպիսի միջոցներ ասեք, որ չեն կիրառվել թուրքիայում: Նրանց այդ քաղաքականությունը արձագանք է ստացել նաև օտար երկրներում: Հիշատակենք մի քանի ցայտուն օրինակ տարբեր բնագավառներից:

1869 թ. Պետերբուրգի «Биржевые ведомости» թերթի 109-րդ համարում գերմանական մի թերթից թարգմանաբար տպագրվել է մի ցնցող լուր, որով հայտնի է դարձել, որ թուրքիայում անգլիական դեսպանին հաջողվել է ձեռք գցել Հայոց Տիգրան Մեծ թագավորի արձանը<sup>3</sup>: Տեղին է նշել, որ այդ նույն 19-րդ դարի վերջերին

<sup>1</sup> Երվանդ Տեր-Մկրտիչյան, Գանձեր վասպուրականի, Հ. 1, Բոստոն, 1966, էջ 285:

<sup>2</sup> Մեղու Հայաստանի (Թիֆլիս), 1881, № 14:

<sup>3</sup> Մատենագարան, Մսերյանների ֆոնդ, թղթապանակ № 193, վավերագիր, № 196:

Արևմտյան Հայաստանում, Երզնկայում Հայանաբերվել է Անահիտ աստվածուհուն վերագրվող բրոնզե արձանի գլուխը, որը գտնվում է Բրիտանական թանգարանում:

Տիգրան Երկրորդ թագավորի արձանով հետաքրքրվել է նաև Թուրքիայում ուսական դեսպանը, որի հարցումին Թուրքական բարձրաստիճան պաշտոնյան հայտնել է, որ իրենք ուզում էին ոչնչացնել այն, որպեսզի հայերի մոտ անկախության ձգտում չծագի: Այդ իսկ նկատառումով բոլոր նահանգապետներին կարգադրություն է արվել, որ եթե նման նյութեր հայանաբերվեն՝ ոչնչացվեն<sup>1</sup>:

Թեև ուղ այս մի հատիկ օրինակը վառ սպացույց է, որ հայերի հետքն Արևմտյան Հայաստանից վերացնելու Թուրքական քաղաքականությունը է՛ն շրջանից հետևողական-սկզբունքային բնույթ է կրել և մինչև օրս շարունակվում է:

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհին հայտնի է, որ Հայոց Բագրատունյաց թագավորութայան մայրաքաղաք Անին, որը միջնադարյան ճարտարապետութայան հրաշակերտ դարձերից մեկն է, հիմնադրվել է դարեր առաջ, նախքան Թուրքերը կնվաճեին Բյուզանդիան: Բայց գրավելով Հայաստանի արևմտյան գավառները, Թուրքերը սեփականացրին նաև Անին: Տեսնված բան է, Անիի հայ բնակչության ժամանակակից սերունդը իր նախնիների ուստանն է գնում ոչ թե հարազատի իրավունքով, այլ որպես զբոսաշրջիկ: Եվ քաղաքակիրթ աշխարհն էլ համակերպվում է նման նվաճողական քաղաքականութայնը, դրանով իսկ նպաստում հայերի վերացմանը Հայաստանից:

Թուրքիան իր քաղաքականութայնքն այնքան հանդուգն է գտնվել, որ դեռևս 19-րդ դարի ութսունական թվականներին, ի դեմս Իրանում իր դեսպանութայան աշխատակիցների, ցանկացել է նրանց միջոցով ևս ճնշել հայերին, բայց չի ստացվել: Օրինակն ակներև է:

1888 թվականի վերջերին, համայն Անդրկովկասում, ինչպես և Ռուսաստանի ու եվրոպական մի շարք քաղաքներում նշվել է հայ ունակիստական դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանի գրական գործունեութայան 25-ամյակը: Այդ համաժողովրդական տոնախմբութայնը յուրովի է անդրադարձել իրանահայությունը: Թավրիզի մտավորականությունը 16 գործչի ստորագրութայնք շնորհավորական ուղերձ հղելուց բացի, դեկտեմբերի 24-ին ատրպատականի Թուրքերենով թարգմանված (թարգմանիչ Աստվածատուր Փանվելյան) ներկայացվել է նրա անմահ «Պեպոն», կովկասահայ գերասաններ Ստեփան և Ալմա Սաֆրազյանների ղեկավարութայնք:

<sup>1</sup> Նույն տեղում:

«Պեպոյից» հետո խաղացվել է ևս երկու վողեկի և ցուցադրվել «Երազ» անունով կենդանի պատկեր: «Երազը» բաղկացած է եղել չորս տեսարանից, բոլորն էլ նվիրված «Հայկական խնդրին» (հարցին): Այսպես՝

1. Մայր Հայաստանը (ըստ Ճանիկ Արամյանի համանուն նկարի) տխուր նստած է Հայոց ավերակ մայրաքաղաքներից մեկի փլատակների վրա:

2. Մի թուրք սուրը ձեռքին, կատաղի բռնած հայ կնոջ (Մայր Հայաստանի) ծամերից, ուզում է սպանել նրան:

3. Մայր Հայաստանը թզուրքի ձեռքից սուրը վերցրել և նրա ետևից ընկած, ուզում է սպանել նրան:

4. Մայր Հայաստանն արդեն սպանել է թուրքին և ոտքը նրա կրծքի վրա դրած հանդիսատեսներին ցույց է տալիս ձեռքի վահանը, որի վրա խոշոր թվանշանով գրված է եղել 61<sup>1</sup>:

«Երազի» քաղաքական բովանդակությունը եղել է՝ Հայկական խնդրի 16-րդ հոդվածը 61-ի փոխադրելու եվրոպական քաղաքականությունից քննադատությունը: Տեսարանները կատարվել են բննդայլան կրակներով և բարձրացրել հայ հանդիսատեսների հայրենասիրական տրամադրությունը: Հայերից բացի հանդիսատեսում ներկա են եղել Իրանի, Ֆրանսիայի դիվանագիտական աշխատողներ և հյուպատոսներ իրենց կազմով, Թավրիզում գտնվող ուրիշ եվրոպացիներ: Նման արարք թույլ չտալու պահանջով Թուրքիայի՝ Թավրիզյան հյուպատոսությունը քանիցս փորձել է արգելել հայկական ներկայացուցիչները, բայց Իրանի կառավարությունը թույլ չի տվել նրանց խառնվելու իրենց երկրի ներքին կյանքին:

Մեր թատրոնի պատմություն մեջ սա առաջին քաղաքական ցույց-բողոքն է եղել թուրքական բռնապետության և եվրոպական երկրների «արդարադատ» անտարբերությունից դեմ:

Ինչպես տեսնում ենք, Ա. Մանդինյանի ակնարկած՝ «Բեռլինում էնքան բանիր խոստացան ու վունչինչ չին տալի» ճշմարտությունը, թավրիզյան այս «Երազ» կենդանի պատկերը եվրոպացիների առաջ որպես բողոքի արտահայտություն պատահական բնույթ չեն կրել, այլ շարունակվել են: Տարիներ անց, 1904-ին, Թիֆլիսում այդ ոգով մի երգ էլ աշուղ Զիվանին է գրել: Ահա նրա վերջին քառատողը.

Տասնըվեց համարը ձեռքիս առան

Նախանձները վաթսուն ու մեկ դարձրին,

<sup>1</sup> Արմենիա (Մարտի) 1889, № 43:

Նենգ պիղատոսները ինձ բժիշկ դառան  
Հին ցավերուս վրա նորից ցավ դրին:

Ցավոք, այս քաջքշուկը շարունակվում է մինչև հիմա:

Թատրոնի, նրա գործիչների նկատմամբ կամայականությունները առկա են եղել նաև բուն Թուրքիայում, Կ. Պոլսում: Պոլսահայ թատրոնի երախտաշատ դերասան և ռեժիսոր Հակոբ Վարդովյանը, որը, միաժամանակ, թուրքական թատրոնի հիմնադիրն է Թուրքիայում, կառավարութայն արտոնութայմբ շուրջ տասը տարի ղեկավարել է Կետիկ Փաշա թաղամասի «Թատրոն Օսմանիե» թատերախումբը, ներկայացումներ տվել հայերեն ու թուրքերեն: Ըստ որում, թուրքերեն ներկայացումների դերակատարների մեծամասնությունը եղել է հայ դերասան-դերասանուհի:

1880 թ. հունվարին կառավարութայն կողմից Վարդովյանը հրահանգ է ստացել՝ դադարեցնել ներկայացումները: Մամուլում այդ մասին գրվել է. «Հ. Վարդովյան էֆենդիի ծանուցվեր է ոստիկանութենեն, թե հայերեն և ազգային թատերգութայնց ներկայացումներն արգելված են»<sup>1</sup>: Այսպիսի որոշումը ազգային կյանքը սպանել է, ի՞նչ է:

Ահա և դրա երկրորդ էջը, որ տեղ է գտել նամակագրութայն մեջ: Վերևում հիշատակված տպագիր որոշումից երկու օր անց, հունվարի 21-ին, մտավորական Միրզա Մսերյանը Կ. Պոլսից իր հորեղբորորդի Զարմայր Մսերյանին (Մոսկվա) հղած նամակում նշել է, որ Տաճիկները թշնամաբար են տրամադրված «Հայոց հետ, հայերեն լեզվով թատերական ներկայացումները բոլորովին արգելվեցավ: Թուրքերը կկարծեն, որ մենք քոմիտե մը կազմած ենք դադանի հեղափոխություն հանելու համար... «Թերճիմանը էֆքյար» լրագրի խմբագիր ձիվելեկյան... առանց դատելու բանտարկեցին, իբր հեղափոխական թերթի մը գլուխ»<sup>2</sup>:

1892-1893 թթ. Թովմաս Փասուլյաճյանը Սիրանուշի հետ մի երկու փորձ արին վերակենդանացնելու պոլսահայ թատրոնը: Գրիգոր Զոհրապը ողջունեց Կովկասից վերադարձած Սիրանուշի հայտնվելը ծննդավայրի թատրոնում, բայց ապարդյուն: Թուրքական իշխանություններն այս անգամ ավելի ամուր փակեցին պոլսահայ թատրոնի վարագույրները:

Մի քանի տարի անց՝ 1895-ից սկսվեցին զանգվածային կոտորածները Մուշում, Սասունում, Վանում և այլ վայրերում: Բռնություն-

<sup>1</sup> Մամուլ (Կ. Պոլս) 1880, № 1175:

<sup>2</sup> Մատենագարան, Մսերյանների ֆոնդ, թղթապանակ № 204, վավերագիր, № 811:

ները, հալածանքները, թալանն ու ավերածութիւնները նորից մասնատեցին արևմտահայութեան ուժերը: Արևելահայերի բարոյական ու նյութական օժանդակութիւնը չկարողացաւ և չէր էլ կարող ամօքել նրանց վերքերն ու կրած տառապանքները: Տնավեր հայ ազգաբնակչութիւնը նորից բռնեց գաղթի ճանապարհը:

Բռնի ազետին հաջորդել է մի նոր՝ քաղաքակրթական աղետ: Չարաբխտ առիթն իսկույն օգտագործեցին սպիտակ ջարդարարները՝ գերմանական միսիոներները: Որբերի բախտը տնօրինելու՝ նրանց կրթութիւն տալու անվան տակ հարյուրավոր երեխաների տարան Գերմանիա: Բախտի չար քմահաճույքով այդ որբերի հետ էր նաև դերասանուհի Սիրանուշի դուստրը՝ Աստղիկը (թեև նրա իտալացի հայրը ողջ էր, բայց Սիրանուշը շուրջ տասը տարի առաջ էր բաժանվել նրանից):

Աղջկան կրթութիւն տալու համար միջոցների բացակայութեան պատճառով, հավատալով նրանց խոստումներին, Սիրանուշը երկար տատանումներից հետո, համաձայնել է այդ միջոցին: Բայց ի՞նչ էր ստացվել: 1901-ին, երբ նա գնացել է Շտուտգարտ՝ աղջկան տեսնելու, Աստղիկը խուսափել էր մօր հետ տեսնվելուց: Սիրանուշը քար է կտրել նրա սառն ու անտարբեր վերաբերմունքից, այնքան ուժեղ է եղել ճիգվիտական դպրոցի քարոզը: Նա մայրական գերագույն ճիգեր գործադրելուց հետո կարողացել է աղջկան դարձի բերել և իր գիրկը վերադարձրել: Իսկ որքա՞ն որբեր այդ ճանապարհով կտրվել են հարազատ միջավայրից, կտրվել մերձավորներից, մոռացել մայրենի լեզուն ու հավատը, ազգային պատկանելիութիւնը:

Պոլսում թատերական ներկայացումներն արգելվելուց, Մուշի և Սասունի կոտորածներից հետո հայ դերասաններն այլևս անելիք չունեին: Նրանցից՝ Մ. Մնակյանը, Հ. Ալիքսանյանը և ուրիշներ, ովքեր տիրապետել են թուրքերենին հարկադրված մնացել են, մյուսները ցրվել են աշխարհով մեկ: Սիրանուշը, Վարդիթեր և Մարի-Հրանուշ Ֆելեկյան քույրերը Պոլսից, Վահան Տիրացյանը Կարինից, Կարապետ Գալֆայանը Տրապիզոնից անցել են Անդրկովկաս, Արմեն Արմենյանը՝ Փարիզ, Պայծառ Ֆասուլյաճյանը, Արշակ Պենկյանը, Վահան Երեմյանը, Տիգրան Գալեմճյանը, Մանուկ Թաշճյանը՝ Բուդապեշտ, Սերովբե Պենկյանը, Դավիթ Թրյանը, Երվանդ և Մարի Պենկյանները՝ Եգիպտոս: Փախստականների մի խումբ էլ հասնելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 1897-ին Նյու Յորքում կազմակերպել է տեղի առաջին «Հայ դրամատիկ ընկերութիւնը»:

<sup>1</sup> Սովետական Հայաստան, ամսագիր (Երևան) 1983, № 3, էջ 30-31:

19-րդ դարի վերջերին փախստական հայերը հաստատվելով տարբեր քաղաքներում, ստեղծել են հայկական համայնքներ, վերակենդանացրել կորցրած ազգային կյանքն ու սովորույթները, միություններ կազմակերպել, կրթամշակութային օջախներ, գրադարաններ լիբրեյասարհներ բացել, թերթեր հրատարակել, եկեղեցիներ կառուցել, բեմից հնչեցրել Հայ երգն ու բանաստեղծությունը:

Նորաստեղծ օջախներում, օտար միջավայրում հայությանը հայ պահելու իր մեծ ու անգնահատելի ծառայությունն է մատուցել նաև թատրոնը: Սարսափներ տեսած ու կոտորածներից ահաբեկված փախստականներից առաջինները թատերական գործիչներն էին, որ թատրոնի միջոցով անդրադարձան հայոց ցեղասպանությունը, ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագներ ներկայացնելով թատրոնում՝ հետագա սերունդներին փոխանցեցին իրենց ժամանակակիցների կրած ահավոր դեպքերն ու կորուստները:

Ազատություն ճանապարհին բոլոր մարտիկները չէ, որ ընկնում են, պարտվողները չեն ընկճվում: Պայքարի ոգին շարունակվում է ապրողների մեջ՝ ժառանգների հիշողություն ու գործունեություն մեջ:

Աշխարհով մեկ սփռված հայերի տառապանքներին հաղորդակից են դարձել օտարերկրացի առաջադեմ հայացքների տեր շատ մտավորականներ, որոնք ի սեր մարդկային խղճի, հանուն արդարություն, բողոքի ճիչ են բարձրացրել հայերի իրավունքների ու արժանապատվության վերականգնման համար: Նրանցից մեկը եղել է ամերիկացի երիտասարդ բանաստեղծուհի և թարգմանչուհի Ալիս Ստոուն Բլեքուելը, որը գանձակեցի լրագրող Հովհաննես Խաչումյանի միջոցով ծանոթանալով հայերի պատմությանն ու ճակատագրին, իր հրապարակախոսական հոդվածներով ու հայ հեղինակներից կատարած անդերերն թարգմանությունների հրատարակությամբ հասարակական դատի պաշտպանությունն է ներկայացրել իրենց հայրենի վայրերից զրկված հայերի իրավունքների ճանաչման հարցը:

Այդ նույն շրջանում բուլղարացի բանաստեղծ Պեյյո Յավորովը մտերմանալով իր հայրենիքում ապաստան գտած, անտուն փախստական հայերի հետ, կիսելով նրանց կրած տառապանքները, 1899-ի դեկտեմբերին գրել է «Արմենյի» (Հայեր) բանաստեղծությունը, ուր այսպիսի տողեր է նվիրել նրանց.

Տարագիրներ են նրանք, նրանք բեկոր մի չնչին՝  
Ոսոխներից հալածված քաջակորով մի ազգի,  
Եվ զավակներն են՝ զրկված հայրենիքի իրենց հին,  
Որ ողջակեզն է դարձել անօրինակ սխրանքի:

(Թարգմ. Հ. Սահյանի)

Մինչև 1890-ակ. թթ. Հայկական կոտորածների մասսայական բնույթ կրելը, թուրքա-քրդական բարբարոսությունները մերկացվել են նաև գրող-մանկավարժ Ատրպետի (Սարգիս Մուրայաջյան) «թուրքահայերի կյանք» թեմայով գրած «Շուշան» 3 դործողությամբ ողբերգության մեջ: Աշխատելով կոմպոզիտոր-խմբավար Քրիստափոր Կարա-Մուրզայի հետ, պետք է այն դարձնելին օպերացեղասպանության թեմայով, բայց աշխատանքը չի ավարտվել:

«Շուշանը» տպագրվել է 1890-ին, Պետերբուրգում: Հեղինակն այն ձոնել է կոմպոզիտորին՝ գրելով. «Դու, որ պատճառ դարձար և խրախուսեցիր այնքան տարիներին մտքումս պատկերացրած սիրոս մաշող տիպերի ներկայացնելուն, ընդունիր անկեղծ սրտով քեզ մատուցած այս փոքրիկ դայլայլիկներն, որի ներդաշնակ և քաղցրանվազ եղանակները ծածկեն նորա պակասությունները»:

Պիեսի գործող անձինք հայեր, քրդեր, թուրքեր են – 17 անձ: Կոմպոզիտոր Աշոտ Պատմագրյանի վկայությամբ, Ատրպետի ղեկավարությամբ «Շուշանը» բեմադրվել է Թավրիզում՝ հեղինակի՝ Թեմական դպրոցում աշխատելու տարիներին<sup>1</sup>:

Կարա-Մուրզայի ղեկավարությամբ 1890-ական թթ. կեսերին Բաքվում տրված մի համերգի ժամանակ, սպազա բանաստեղծ Հակոբ Հակոբյանը կատարել է Հեյբեկի երգը «Շուշան» օպերայից:

Թուրքական բռնակալության դեմ բողոքի յուրատեսակ օրինակ է հանդիսացել հրապարակախոս և իրավաբան Գրիգոր Զանչյանի կազմած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ստվար ժողովածուն, որը լույս է տեսել ռուսերեն Մոսկվայում և ռենցել երկու (1897, 1898) հրատարակություն<sup>2</sup>: Ժողովածուի մեջ տեղ են գտել հայ և ռուս նշանավոր գրողների ու արվեստագետների տպագիր և անտիպ ստեղծագործություններ, որոնցով իրենց համերաշխությունն են հայտնել հայերին: Ժողովածուից ստացված հասույթն ամբողջովին հատկացվել է արևմտահայ տառապալներին:

<sup>1</sup> Ա. Պատմագրյան, Իմ հուշերից, Բեյրութ, 1978, էջ 17:

<sup>2</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам այս ժողովածուն բժիշկ և հասարակական գործիչ Ալեքսանդր Խաչիյանցի աշխատասիրությամբ 2014-ին վերահրատարակվել է Կրասնոդարում (Ռուսաստան):

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ  
ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ ԵՎ ԹԱՏՐՈՆՈՒՄ  
(1895-1915 թթ.)**

1203238

1895-1896 թվականներին Սասունում, Զեյթունում, Տիգրանակերտում, Վանում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում Հայերի նկատմամբ թուրքերի և նրանց հովանավորութայամբ քրդերի կատարած բարբարոսություններից՝ ջարդերից ու կողոպուտներից հետո ողջ մնացած Հայերի բեկորները բռնել են գաղթի ճանապարհը՝ ով դեպի ուր կարողացել է:

Իրենց նոր բնակավայրերում մեկ-մեկուկես տարի փոքր-ինչ ուշքի գալով, թատերական գործիչները ֆիդայիների գործունեությունը զուգահեռ, սկսել են ազգային ինքնապաշտպանություն, ինչպես նաև առևանգումների դեմ վրեժ լուծելու թեմայով պիեսներ գրել ու հրատարակ հանել: Այդ պիեսները, ինչպես և դրանց բեմադրությունները տարբեր երկրների հայկական թատերախմբերի կողմից, դիտվել են որպես Հայերի նկատմամբ թուրքերի վարած ցեղասպանություն քաղաքականության մերկացման հավաստի ապացույցներ:

Ամենևին էլ թող զարմանալի չլի՛վա, որ այդ միջոցով ելույթ ունեցողների արշավն սկսվել է թուրքիայի հարևան Իրանի Հայերի կողմից: Իրանահայերը մոտիկից ճանաչելով թուրքական բարբարոսական բռնությունների մեթոդները, անտարբեր չեն մնացել արևմտահայություն 1894-ի մասսայական բռնությունների ու կոտորածների նկատմամբ: Թավրիզի թատերասերների խումբը, տեղի կովկասահայ դերասաններ և մանկավարժներ Բեգլար Աղայանի և Գաբրիել Պապյանի նախաձեռնությամբ 1895-ի հունվարի 14-ին բեմադրել են Մուրացանի «Ռուզան» պատմահայրենասիրական ողբերգությունը և ներկայացման հասույթը նվիրել Սասունի տառապալներին<sup>1</sup>:

Նմանակերպ են վարվել նաև Ռաշտի թատերասերները՝ նույն

<sup>1</sup> Շալիկ (Թեհրան) 1895, № 6:



տարվա փետրվարի 9-ին, Վարդանանց տոների առթիվ ներկայացնելով «Վարդանանց» ողբերգությունը և «Երևք քաջեր» կատակերգությունը: Վերոհիշյալ «Երևք քաջեր» կատակերգությունը Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Կատակերգություն երկից քաջաց» նույն ժանրով պիեսի հետ չչփոթելու համար ասենք, որ այդ նույն 1895-ի փետրվարի 9-ին, Մարաղայում, Ավթանդիլյանի տան դահլիճում բեմ է հանվել մի նոր՝ Հայոց ցեղասպանության թեմայով գրված առաջին (հեղինակն անհայտ) պիեսը՝ «Երևք քաջեր»-ը մշցի գաղթականների կյանքից: Բեմում ներկայացվել է գաղթականների սրտաճմլիկ տեսարան՝ մի կողմում փռված դիակներ, իսկ մյուս կողմում՝ փլված տների քարերի կույտեր: Ծերունի Մանուկը, այրի Սառան և ուրիշներ մորմոքող խոսքերով հանդիսատեսներին զգացնել են տվել իրենց ողբալի վիճակը: Մամուլի վկայությամբ բոլորը դերերը լավ են իմացել<sup>1</sup>:

Այս հավաստի տվյալներից բացի, հայտնի է, օրինակ, որ 1880-ական թթ. վերջերին Նոր Զուղայի թատրոնում բեմադրվել են «Տաճկական խոստմունք» 4 գործողությամբ ողբերգությունը և դերասան-մանկավարժ Մկրտում Կարապետյանի գրած «Սասունի կոտորածը» պիեսը:

Նոր Զուղայի թատրոնի պատմաբան Տիգրան Աբգարյանի ծրագրերի հավաքածոյում (համացանցում), բարեբախտաբար, պահպանվել է 1888-ի հոկտեմբերի 12-ին ներկայացված «Տաճկական խոստմունք» պիեսի ազգագիրն իր դերակատարներով: Ազգագրում տեղ գտած կերպարների մասին տվյալները որոշ պատկերացում են տալիս պիեսի մասին, ուստի այն ներկայացնում ենք ամբողջությամբ:

Տեր Անտոն (քահանա) – Աստվածատուր Սարգսյան, Կոնստանդին (ուսյալ պատանի մի) – Մայիլ Եսայան, Մշո բնակիչք՝ Լևոն – Գրիգոր Տեր Սեղբոստրոս(յան), Մամբրե – Հարություն Տեր Կարապետ(յան), Ատոմ – Աստվածատուր Սարգսյան, Սինան – Պողոս Մելքումյան, Թագվոր – Ներսես Տեր Գրիգոր(յան), Լամբրոն – Միհրան Հայրապետ(յան), Լուսպարոն – Արամ Հայրապետ(յան), Մելքիսեթ – Արամ Գևորգյան, Տաճիկ գնդապետ – Հարություն Տեր Կարապետ, երևք տաճիկ զինվոր: Թատերախումբը փոքրակազմ լինելով, ոմանք երկու դեր են կատարել: Ավելին ինչ կարելի էր սպասել:

Հայոց ազատագրական շարժումներին նվիրված նորագույն դրամատուրգիան իր հետ ծնունդ է տվել նաև թատերական նոր խմբերի,

<sup>1</sup> Նույն տեղում:

որոնք ավելի ակտիվորեն գործել են Բուլղարիայի մի քանի հայա-  
շատ քաղաքում: Նորաստեղծ թատերախմբեր են գործել հատկապես  
Վառնայում, Սոֆիայում, Ռուսչուկում: Թատերական արվեստի մի-  
ջոցով ցեղասպանութիւնը դատապարտող դրամատուրգիայով առա-  
ջինը հանդես է եկել Պոլսի «Արևելյան թատրոնի» վաղեմի հուշարար,  
ապա՝ դերասան, դրամատուրգ և թարգմանիչ Տիգրան Գալեմճյանը:

Վառնայում ապաստան գտած Գալեմճյանը՝ հավատարիմ հայրե-  
նասիրական թեմաներով պիեսներ գրելու իր նախասիրութեանը,  
1896-ից շոշափել է նոր հարցեր, նոր թեմաներ, այն է՝ թուրքական  
հայահալած քաղաքականութեան մերկացումները: 1896-ին նա գրել  
ու բեմադրել է «Սասնա հերոսները» և «Զեյթունի ապստամբու-  
թիւնը», իսկ այնուհետև՝ «Վասպուրականի հերոսները» պիեսները:  
Իբրև թուրքերի կողմից հայերի կոտորածների ականատես ու վկա,  
Գալեմճյանն իր պիեսներում ներկայացրել է իրական անցքերի հա-  
վաստի ճշմարտութիւնը, իբրև գործող անձեր հանդես բերել կոնկ-  
րետ, իրական անձնավորութիւններ:

Ապրելով ու ստեղծագործելով Վառնայում, Գալեմճյանը թուրքե-  
րի դեմ պայքարի իր ձայնը միացրել է բախտակից բուլղար ժո-  
ղովրդի հերոսական պայքարին՝ ընդդեմ թուրք բարբարոսների:  
Թրքախոս բուլղարներին մատչելի լինելու նպատակով, նա թուրքե-  
րեն պիեսներ է գրել ու բեմադրել բուլղարացի ազատամարտիկ Վա-  
սիլ Լեսկիի և հեղափոխական բանաստեղծ Խրիստո Բոտևի մասին:  
Նրա ուշադրութիւնից չի վրիպել նաև Անդրկովկասի թուրքերի  
կազմակերպած հայկական կոտորածները մի շարք քաղաքներում:  
1905 թվականի այդ իրադարձութիւններին է նվիրված նրա «Պա-  
քուի աղետը կամ Հայ բանվորները» պիեսը, որը հեղինակի բեմադ-  
րութեամբ 1906-ին ներկայացվել է Վառնայում:

Ազատագրական պայքարի թեմայով գրված առաջին պիեսներից  
մեկն էլ եղել է «Հայ հայդուկները», որը 1899-ին ներկայացրել է  
Պոլսից փախած դերասաններ Վահան Պապայանի և Արշակ Պենյա-  
նի կազմակերպած թատերախումբը:

Արևմտյան Հայաստանի բնակչութեան աղետալի դեպքերի  
դրվագների արտացոլումը դրամատուրգիայում և թատրոնում ինչ-  
որ չափով սփոփել է հայերի կրած վշտի ու տառապանքների ցավե-  
րը: Այդ են վկայում Հայոց ցեղասպանութեան դատապարտմանը  
նվիրված բազմաթիվ պիեսների առկայութիւնը և դրանց հաճախա-  
կի բեմադրութիւնները բուլղարահայ թատրոնում:

Այդ պիեսներից են Վառնայի Սենտրալ թատրոնում 1901-ի ապ-

րիլի 21-ին Հայ դերասանական խմբի ուժերով բեմադրված Տ. Գալեմճյանի «Վասպուրականի հերոսները» (այլ անվամբ՝ «Տավրոսի հերոսները» կամ «Հաղթանակ Զեյթունցվոց») հինգ գործողությամբ դրաման, որի վերնագիրն արդեն բնորոշում է նրա բովանդակությունը:

Պիեսի առաջացրած հետաքրքրության և նպատակասլացության օգտին է խոսում նրա նոր բեմադրությունը 1902-ի փետրվարի 15-ին:

Գալեմճյանի այս պիեսը բեմ է հանվել նաև Սոֆիայի «Վարիետե» թատերախմբի կողմից (1904), որտեղ գլխավոր դերերի կատարմամբ հանդես են եկել դերասաններ Թորգոմ Մեչիկյանը Տեր-Կոմիտասի և շեքսպիրյան կերպարների նշանավոր դերակատար Կարապետ Գալֆայանը՝ Պետոյի դերերում:

Դարձյալ 1902-ին Վառնայի թատերասեր երիտասարդությունը Սենտրալ թատրոնում ներկայացրել է «Սասունի ապստամբությունը» հինգ գործողությամբ պիեսը՝ նվիրված սասունցիների ազատագրական պայքարին: Երկու ամիս անց, այս պիեսի բեմադրությունը ևս կրկնվել է:

Ցեղասպանության դեմ պայքարի թեմայով դրված պիեսներից այս շրջանում խաղացվել է «Մատնիչը կամ Արյունոտ թիթամոր» պիեսը Պյոլգեիլի «Երգեցիկ» (1903) և Սոֆիայի «Քնար» (1904) թատերախմբերի կողմից:

Վասպուրական նահանգի Հայ ազգաբնակչության բռնազաղթի տառապանքները բազմակողմանի լուսաբանություն են ստացել գրող և մանկավարժ Աբրահամ Շիտանյանի դրամատուրգիայում և արձակում: Շիտանյանը (գրական անունով՝ Արմեն Շիտանյան) ծնված լինելով Վասպուրականի Թիմար գավառի Ալյուր գյուղում, իր ստեղծագործություններում ականատեսի անաչառությամբ պատկերել է այն դաժան դեպքերն ու իրադարձությունները, որոնք կատարվել են իրեն հարազատ վայրերում:

Շիտանյանի գրած «Արյունոտ հարսանիք կամ Ասլան Ջարուհի» չորս գործողությամբ դրամայում (Համեմատելով նման թեմաներով մեկից ավելի պիեսների բովանդակության հետ՝ պետք է ենթադրել, որ խանդավրել է Ասլանի և Ջարուհու ամուսնություն հանդեսը), հեղափոխական Ասլանին գերելու համար պատանդ են տարել նրա սիրած աղջկան՝ Ջարուհուն: Այս պիեսն առաջին անգամ բեմադրվել է Վառնայում (1905) կոմպոզիտոր Նաթան Աբրահամյանի կողմից, նրա իսկ ղեկավարած «Գողթան» թատերախմբի ուժերով: Ներկայաց-

մանը մասնակցել են Մ. Ենովքյանը, Խ. Գալենդերյանը, Կ. Բաշալյանը, Ա. Արսլանյանը, Բ. Շահապյանը, Մ. Զիթճյանը և ուրիշներ:

«Արյունոտ հարսանիքը» բեմադրվել է նաև Վառնայի «Սոխակ» նվագախմբատերախմբի կողմից, ի նպաստ Վանի սովյալների (1906) և Ռուսչուկի նորակազմ «Այծեմնիկ» թատերախմբի ուժերով՝ հօգուտ հայ բանտարկյալների (1907):

Իրական անձնավորությունների կյանքի ու գործունեության առանձին դրվագներ իրենց արտացոլումն են գտել Շիտանյանի նաև «Արաբո» պիեսում: Այն նվիրված է Հայոց ազատագրական շարժման հանրահայտ գործիչ և այդ պայքարում զոհված Ֆիդայի Արաբոյի (Առաքել, 1863-1893) կյանքին: «Արաբո» պիեսն առաջին անգամ բեմադրվել է Պլովդիվի Լյուքսեմբուրգ թատրոնում (1906), այնուհետև Ռուսչուկի «Այծեմնիկ» թատերախմբում (1907), իսկ «Անձնագոհ դյուցազունները» 1905-ին՝ Վառնայում:

1896-ին Կ. Պոլսում ձերբակալված և 1897-ին Բուլղարիա գաղթած թուրքական բռնությունների դեմ գրիչ վերցրած Արմեն Շիտանյանի պիեսներից մեկն էլ կոչվել է «Սուլթան Համիդ»: Պիեսը զավեշտական բնույթ է կրել և ինչ-ինչ ճանապարհով լուրը հասել է հասցեատիրոջը՝ Սուլթան Համիդին: Վերջինս բուլղարական կառավարությունից պահանջել է հեղինակին՝ նրա հետ հաշվհարդար տեսնելու: Բուլղարական կառավարությունը քաջ դիտակցելով թուրքերի վերաբերմունքը հայերի նկատմամբ, մերժել է նրա պահանջը: Ընդհակառակը, 1903-ին Սլիվեն քաղաքում կայացած դատավարության ժամանակ հեղինակն անսպառ է ճանաչվել, իսկ դատական ծախսերի գումարը Սուլթանից պահանջվել<sup>1</sup>:

Պատմական, իրական անձնավորություններին բեմ բարձրացնելու փորձերից է նաև Ա. Շիտանյանի «Պետո կամ Կախաղանին տակ» պիեսի բեմադրությունը: Պիեսը նվիրվել է 1901-ի դեկտեմբերի 9-ին Ադրիանապոլսում կախաղան հանված հեղափոխական գործիչ, Վառնայի «Շարժում» թերթի աշխատակաից Պետրոս Սերեմճյանին, որի անունով հետագայում դրադարան-ընթերցարան է գործել:

Այս պիեսի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1906-ի մայիսի 7-ին Սլիվենի (Բուլղարիա) «Ջորա» մեծ թատրոնում: Նրանում պատկերվել է հայ և բուլղարացի ֆիդայիների պայքարն ընդդեմ երկու ժողովուրդների ռխերիմ թշնամի թուրքերի դեմ:

Լեռան վրա հավաքված հայ հայդուկները լսում են Պետոյի ելույ-

<sup>1</sup> Մարմարա (Կ. Պոլիս) 1966, № 8002, 8012:

Թը: Ապա բեմ են գալիս Մերճանովը, Օննիկը, Անտոնը, Ապիլը, Թաթուլը, Սոկոլովը – միշտ համարձակ ու անվախ: Հետագա դործողություններում առևանգում են Նուրի պեյին, վիրավորվում է Պետոն, բանտարկվում, կախաղան հանվում: Այս բեմադրության դերակատարների մասին մամուլում գրվել է՝ ամեն ինչ կատարվել է հաջողակ և եռանդուն, «չի նայած, որ բոլոր դերակատարներ սկսնակ էին և առաջին անգամն էր, որ բեմ կելլեն»<sup>1</sup>:

Ներկայացման վերջում տրվել է կենդանի պատկեր: Գաղափարական ոգին ներկայացնող, վարժարանի աշակերտուհի, օր, Մաննիկ Պողոսյանը համարձակ բեմ է բարձրացել և բուլղարերեն արտասանել իր մենախոսությունը «չատ հստակ և շատ հուզիչ» և գեղեցիկ տպավորություն թողել:

«Պետո կամ Կախաղանին տակ» պիեսը 1907-ին ներկայացվել է նաև Բուրգասի «Արշալույս» թատերախմբի կողմից:

1906-ին Բուխարեստում ներկայացվել է «Արյունոտ հարսանիք» անունով 4 գործողությամբ պիեսը: «Հայերեն լեզվով ներկայացումներ կազմակերպող» թատերասերները պիեսի հեղինակ են համարել գրող և հասարակական գործիչ Վարդան Մեշտոտճյանին: Դժվար է ասել՝ թատերասերները Ա. Շիտանյանի անունը վերահսկող աչքից շեղելու համար են այդպես վարվել, թե իրոք՝ Մեշտոտճյանն էլ է նույն վերնագրով պիես գրել, որ քիչ հավանական է:

Ա. Շիտանյանի՝ ցեղասպանության թեմայով գրած որոշ պիեսներ մնայուն հետք են թողել նաև ամերիկահայ թատրոնում: 1911-ին Պոլսում տպագրված «Աքսորականը» ազգային վեպը բեմականացվելով, առաջին անգամ ներկայացվել է 1920-ին, Պրովիդենսի հնչակյան թատերախմբի կողմից: Նրան հաջորդել է «Արաբո» պատմահայրենասիրական պիեսը՝ Դեսոյթի «Արարատ» դերասանական խմբի կողմից: Արաբո և Կյուլո ամուսինների դերերում հանդես են եկել Մ. Տեր-Վարդանյանը և Արուսյակ Տեր-Վարդանյանը:

Արևմտահայության կյանքի պատկերներ են տրված Շիտանյանի՝ նաև «Վաշխառուն» վեպում, որի մեջ նա նկարագրել է 1890-ական թթ. Վանի հեղափոխական կյանքը: Այս վեպի բեմականացված տարբերակն առաջին անգամ բեմ է հանվել 1930-ի մայիսի 4-ին, Նյու Բրիթնի Ազգային սրահում, «Եփրատ» դերասանական խմբի նախաձեռնությամբ:

Վեպը պիեսի վերածողն ու Վաշխառուի դերակատարը եղել է Հակոբ Աթաշյանը: Մյուս դերերը կատարել են՝ Ահարոն Սաղրյանը

<sup>1</sup> Թագմիկ (Պոլիգրիվ) 1906, № 58:

(Մուրատ), Հայկանուշ Գրիգորյանը (Վաշխառուի կինը), Օվսաննա Չորթանյանը (Զարուհի, վաշխառուի աղջիկը), Կարապետ Հովսեփյանը (Կամսարական), Զվարթ Կյուրեղյանը (Արաքսի, Կամսարականի նշանածը), Արիս Չոլագյանը (Առաջնորդ), Սարգիս Ազարիկյանը (ոստիկանապետ, բժիշկ) և շատ ուրիշներ: Պիեսում Մուրատը երևացել է ծայրամասի թուրք զինվորի տեսքով: Այս պայմանականությունն այն ժամանակների հեղափոխական պիեսներին բնորոշ՝ առօրյա կյանքից բխող առանձնահատկություններից է, քանի որ բացահայտ վիճակով չէին կարող թուրքերի աչքին երևալ:

1920-ական թվականներից Ա. Շիտանյանի՝ հայրենասիրական թեմաներով պիեսները վերակենդանություն են ստացել բուլղարահայ թատրոնում ևս: Այսպես, նրա «Արյունոտ հարսանիք» դրաման բեմադրվել է Պլովդիվի Օբշթինսկի թատրոնում: Նրան հաջորդել է «Արարոն», որը խաղացվել է Սոֆիայի «Հառաջ» լսարանական միությունից «Պեսոս Աղամյան» թատերախմբում, ռեժիսոր Վ. Ալթունյանի բեմադրությամբ: Վերջինս, միաժամանակ կատարել է պիեսի գլխավոր հերոսի՝ Արաբոյի դերը:

«Արարոն» ներկայացման մյուս դերակատարներն են եղել՝ Մելինե Զավենը (Կյուլո), Վ. Փոխարյանը (Տոնիկ, Արաբոյի որդին), Ա. Պալյանը (Շուշանիկ, Արաբոյի աղջիկը), Վ. Մելիքյանը (Գրիբ), Կ. Գուրպանճյանը (Ռես Կազար), Գ. Ասլանյանը (Ճավահար պեկ), Հ. Քեչյանը (Ալի պեյ) և ուրիշներ:

«Արարոն» 1934-ին էլ բեմադրվել է Բուխարեստում:

Շիտանյանի պիեսներն իրենց շոշափած թեմաներով միշտ էլ արդիական հնչեղություն են ունեցել: Նրա ընդգրկած նյութերը, գրի առած գործերը հարազատ են եղել ամբողջ հայությունը: Դրանց ճշմարտությունը հավաստի է եղել մասնավորապես կոտորածներից փրկված հայությունը, որոնք, իրենց գաղթի շրջանում թե այլ միջավայրում, ականատես են եղել դրամատուրգի գործերում պատկերված իրադարձություններին: Դրա լավագույն ապացույցը նրա պիեսների բեմադրությունների աշխարհագրական լայն տարածքն է:

Կյանքի վերջին տարիներին մոտ (վախճանվել է 1932-ին Վառնայում), Վառնայի մտավորականությունը բարձր գնահատելով արձակագիր, դրամատուրգ, մանկավարժ Արմեն Շիտանյանի մատուցած ծառայությունները ազգային կյանքին, 1928-ի հունվարի 22-ին կազմակերպել է հոբելյանական հանդես ի պատիվ նրա 55-ամյա դրական-մանկավարժական գործունեությունը:

Վերը հիշատակված պիեսներից ու վեպերի բեմականացումների

բեմադրուելով լուսններից բացի, Շիտանյանի գրչին են պատկանում նաև «Գնուկի», «Կարիպ ախպեր», «Անդունդ», «Թիապարտը», «Ավագակապետը», «Մատնիչը» և այլ արձակ գործեր, որոնք սրտացավ Հեղինակի կողմից հարազատորեն պատկերել են 1895-96 թվականներին արևմտահայուլթյան կրած անասելի բարբարոսության տեսարաններն ու պատմությունը և այդ բոլորի դեմ պայքարի ելած ֆիդայիների հերոսական ինքնապաշտպանությունը:

Թուրք-քրդական կամայականությունների մերկացմանն է նվիրված Հայտնի արձակագիր, դրամատուրգ և մանկավարժ Վրթանես Փափազյանի առաջին պիեսը՝ «Արչալույս» դրաման: Վանում ծնված, Անդրկովկասում և Իրանում մեծացած, Եվրոպայում բարձրագույն կրթություն ստացած Փափազյանը երիտասարդական տարիներից ականատես լինելով հայազգի բնակչության ստրկացմանն ու ճնշմանը թուրք-քրդական ցեղերի կողմից, հարազատորեն նկարագրել է իր տեսածն ու լսածը:

1901-ին գրի առած «Արչալույս» դրամայով Փափազյանը բողոքի իր ձայնն է բարձրացրել ընդդեմ այդ բռնությունների: Պիեսի գործողությունները կատարվում են Վանի մերձակա գյուղերից մեկում: Քյուրդ ավագակապետի կամայականությունների ու բռնությունների դեմ պայքարի է դուրս գալիս գյուղական ուսուցիչը: «Արչալույսի» առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1901-1902 թթ. թատերաշրջանում, Թավրիզի Հայ թատերասիրաց ընկերության կողմից:

Մինչև «Արչալույսի» տպագրությունը, այն խաղացվել է նաև 1904-ի փետրվարի 6-ին Սալմաստի շրջանի Ղալասար գյուղում: Մամուլի վկայությամբ՝ բոլորը հաջող են եղել իրենց դերերում<sup>1</sup>:

Փափազյանի «Արչալույս» դրաման 1905-ին թերթոններով տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» թերթում, Վարդգես ստորագրությամբ, բայց բեմադրության պատմությունն սկսվել է նախքան նրա տպագրությունը: Բոստոնի թատերասերներն այն ներկայացրել են 1902-ի փետրվարի 23-ին: Հաջորդ բեմադրությունը տեղի է ունեցել Ֆրեզնոյում, «Արծիվ» դերասանական խմբի կողմից, 1906-ին: Այս բեմադրության մասնակիցներն են եղել՝ Փոթիկյանը (Մարո), Հ. Գասպարյանը (վարժապետ), Հայկ Մելիքյանը (Ռես Մլո) և ուրիշներ:

Հետագա մի քանի տարվա ընթացքում «Արչալույսը» բեմ է հանվել նաև Ալեքսանդրիայի «Ալհամարա» թատրոնում (1907), Ղազվիների (Իրան) թատրոնում (1908), Ուոթրվիլդի «Արաքս» դերասանական խմբում (1910) և այլ վայրերում:

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1904, № 38:

Ի թիվս արևմտահայ այլևայլ գավառներից եկած փախստականների, Ամերիկայում մեծ թիվ են կազմել նաև տիգրանակերտցիները: Նրանք մեծ մասամբ համախմբվել են Նյու Յորքի արվարձաններում ու մոտակա քաղաքներում: Տիգրանակերտցիների կյանքի, կրած տառապանքների պատմությունը նույնպես հարուստ նյութ է տվել Հայոց ցեղասպանությունից հատապարտմանը:

Տիգրանակերտցիների կյանքից առնված թեմայով գրված թատերական առաջին գործերից մեկը դրամատուրգ Արմենակ Շիշմանյանի «Վրեժխնդիր Տիգրանը» պիեսն է, որը ներկայացվել է 1901-ի մարտի 22-ին Ուեստ Հոպոքընում: Բեմադրությունից հիմնական կազմակերպիչները, մասնակիցները և հանդիսատեսները եղել են աղետներից փրկված և Ամերիկա գաղթած տիգրանակերտցիներ:

Ա. Մ. Շիշմանյանի գրչին են պատկանում նաև ազգային-ազատագրական պայքարին նվիրված «Խորհրդավոր գործիչը» դրաման և «Մայր Հայաստան» ողբերգությունը, որոնք խաղացվել են 1905-ի մարտ-ապրիլ ամիսներին Ուեստ Հոպոքընում:

Տիգրանակերտցիների հերոսական պայքարի դրվագների արտացոլմանն է նվիրված բնիկ տիգրանակերտցի, Ուեստ Հոպոքընի բնակիչ, բանաստեղծ և մանկավարժ Թովմաս Զավղավաթճյանի «Գոհար» («Տիգրանակերտի կոտորածը կամ Գոհարի առևանգումը») պիեսը, որի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1906-ի դեկտեմբերի 5-ին, Բոստոնում: Պիեսի հերոսուհու՝ Գոհարի դերակատարն է եղել Ա. Գարակյոզյանը:

Ինչպես տեսնում ենք, ամերիկահայ թատրոնի սկզբնական տարիների թատերախմբերը կանացի դերակատարների պակաս չեն զգացել: Եթե դեռատի աղջիկներն ու կանայք որոշակի դեր են կատարել ինքնապաշտպանությունից կռիվների պարտադրված թատրոնում, ինչն էլ չպետք է մասնակցելին թատերաբեմում ծավալվող գործողություն-կռիվներին:

Իրական անձերի կյանքի ու գործունեությունից պատմությունն ամերիկահայ թատրոնում բեմ հանելու առաջին փորձերից մեկն էլ կատարել է Ուեստի «Վասպուրական» դերասանական խումբը: 1903-ի ապրիլի 14-ին Ուեստ Հոպոքընում նրանք բեմադրել են «Վանի հայդուկները» պիեսը: Վանի ինքնապաշտպանությունը նվիրված այս պիեսի բեմական պատմությունն սկսվել է 1901-ից, Բոստոնի դերասանական խմբի կողմից: Հետագայում այն իր բեմական կյանքը շարունակել է Նյու Յորքում (1906), Պրովիդենսի «Լեռնային դերասանական խմբի» (ղեկավար՝ դերասան և ռեժիսոր Եղիա Խյմեթյան), Ուոքհեյլի երիտասարդների խմբի (1908) կողմից:

Վանեցիների՝ 1896-ի հերոսամարտին է նվիրված Ուստրում բնակութուն հաստատած մտավորական Մուշեղ Բազեյանի «Վանի ինքնապաշտպանության կռիվները» պիեսը՝ իբրև ականատեսի ճշմարտացի և թարմ հիշողության վերարտադրութուն: Այն բեմադրվել է Ուստրի թատերասերների խմբի կողմից 1907-ի նոյեմբերի 21-ին: Այս ներկայացմանը մասնակցել են՝ Ռոզա Տասնապետյանը (Լուսիա), Խաչատուր Տեմիրճյանը (Թուրք հիսնապետ) և ուրիշներ: 1908-ին էլ խաղացվել է Բոստոնում:

1890-ական թվականներին հայության կոտորածների թեմատիկային է նվիրված եղել որբեր հավաքող Ռուբեն Հերյանի «Բանտի դասերը կամ Ճշմարտացի կտակը» պիեսը, որը դերասան Վ. Չպուքճյանի մասնակցությամբ բեմադրվել է 1904-ին, Բոստոնի թատերասերների կողմից: Իրականութունից վերցված տեսարաններ են ներկայացրել «Հեղափոխականի աղջիկը», «Հայ հերոսի սերը» պիեսները (1904, Բոստոն): Վերջինս խաղացվել է նաև Ֆիլադելֆիայում, որտեղ հերոսների դերակատարներն են եղել Ս. Թաշճյանը (Հայկանուշ) և Պարոնիկ Ֆերեշատյանը (Կիրակոս):

Փամանակակից կյանքին և ոչ հեռու անցյալի ազատագրական պայքարի պատմությանը նվիրված պիեսների բեմադրութուններն առավել հնչեղութուն են ստացել պրոֆեսիոնալ թատերական գործիչների ջանքերով: Նրանցից մեկը եղել է 1904-ին Պուլսից Ամերիկա փոխադրված դերասան և ռեժիսոր Խաչիկ Նորիկյանը: Հրաժարվելով Մ. Մնակյանի թուրքերեն ներկայացումներին մասնակցելուց, Ամերիկայում Նորիկյանը ոչ միայն շարունակել է իր բեմական կյանքը՝ այլև պիես է գրել: Նրա «Բռնկող կայծեր կամ Ազատության ճամբան» չորս գործողությամբ, երեք պատկերով ու վերջաբանով դրամայի նյութն առնված է եղել ժամանակակից կյանքից<sup>1</sup>:

Այս պիեսը հավանաբար չի պահպանվել, բայց մեր օրերը հասած նրա առաջին բեմադրության ծրագրից որոշ չափով պարզվում է, որ նյութը վերցվել է հայկական տառապանքների դյուցազներգութունների տարեգրութունից: Հանդիսատեսին խորհուրդ է տրվել, որ «ամեն հայ տեսնե ու պատկերացնե աչքին առջև իր կրած տառապանքները, թուրքական կառավարության խնեշուլթյունները և վերջապես իրականապես տեսնել իր հերոսները»:

Կցկաուր ակնարկներից զգացվում է, որ պիեսում ծավալվող գործողութունները կատարվել են Վասպուրականի գյուղերից մեկում

<sup>1</sup> Փամանակի մամուլում նշվել է, որ «Բռնկող կայծերի» հեղինակը Խաչիկ Նորիկյանը չէ, բայց վերջինս ժխտել է այդ կասկածը: Տե՛ս, Չայն Հայրենյայց (Բոստոն) 1904, № 311, 312:

և իրենց հիմքում ունեն իրական պատմություն: Պիեսում նկարագրված ազգային պայքարը ճնշվել է, հերոսը զոհվել է մատնիչների ստոր մատնության պատճառով՝ թերևս խանդի հողի վրա խարսխված:

Պիեսի մասին համառոտ պատկերացում ենք ստանում նաև նրա գործող անձանց բնութագրություններից: Այսպես՝ Նվարդ (Մարտիկ աղայի աղջիկը, Վաղինակի սիրուհին), Վաղինակ (Մարտիկ աղայի որդեգիրը), Շավարշ, Սուրեն, Հրաչյա, Տիրան, Սմբատ (հեղափոխականներ), Մարտիկ աղա (հարուստ քաղաքացի), Թոմաս և իր տղան՝ Սիսակ (մատնիչներ), Պահրի փաշա (Կոստակալ Վասպուրականի), դատախազ, թուրք զորք, հայ ասպատակներ, բանտապահներ և ուրիշներ:

Ինչպես ցույց է տալիս կերպարների այս հերթականությունը, հեղինակն իր պիեսի գլխավոր գիծը դարձրել է հեղափոխական պայքարի առաջնությունը այդ շրջանի հասարակական կյանքում:

«Բռնկող կայծերն» առաջին անգամ բեմադրվել է 1904-ի հոկտեմբերի 1-ին, Պրովիդենսի Արևելյան դերասանական խմբի կողմից: Չորս շաբաթ անց՝ կրկնվել է Ուստրում (29-ին): Երկու դեպքում էլ պիեսի գլխավոր հերոսների դերակատարները մնացել են նույնը՝ Պերճուհին (Նվարդ) և Խ. Նորիկյանը (Վաղինակ):

Հետագայում հեղինակը պիեսը վերամշակել, դարձրել է հինգ գործողությամբ: Եգիպտոս փոխադրվելուց հետո Նորիկյանն իր պիեսը բեմադրել է Կահիրեի Վերդի թատրոնում, 1907-ի մարտի 19-ին, Հայ պատանյաց «Բաֆֆի» ընկերության թատերասերների ուժերով: Նվարդի դերը խաղացել է տիկ. Աստղիկը, իսկ Վաղինակինը՝ Շավարշը:

Այս պիեսի մի այլ բեմադրություն իրականացվել է Ամասիայում: Մարգվանում տպագրված՝ այդ ներկայացման հայտագրում ծանուցվել է. «Երևակայական գրվածք մը էջ, այլ տառապող ժողովրդոց չարչարանքի և խոշտանգումի լացողն է, անիկա հայուն ցավին մխիթարանքը, վշտին սփոփանքը և վերքին բալասանն է... հոն է, որ կտանջվի հերոսը, որ կկռվի և կիյնա... մատնիչը, որ կչարչարվի, բռնակալության խենեշ պաշտոնյաներ, որք ժողովուրդին արյունը կքամե, վերջապես բովանդակ հայը՝ որ տառապանքի երկունքներուն մեջ կտնքա»:

Թուրքերին հասցեագրված նախատինքի այս խոսքերը հիմա չեն ասված, որ որակվեն իբրև հետին թվով ձևակերպված մտքեր: Դրանք ասվել են ավելի քան հարյուր տարի առաջ, երբ հայ ժողովուրդը դեռ տառապում էր թուրքական բռնակալ լծի տակ՝ որը զոհվում, որը հիվանդությունից մեռնում, ով էլ ուր կարողանում էր

շունչն օտար երկրում էր առնում: Ո՞ր թուրք քաղաքագետը կամ պատմաբանը կարող է սրտի արյունով գրված այս խոսքերը ժխտել:

Շարունակենք մեր պատմությունը: 1895-ին Կիլիկիայում տեղի ունեցած դեպքերի՝ Զեյթունի և շրջակա վայրերի հերոսական ինքնապաշտպանությանն է նվիրված հայ հասարակական-քաղաքական պատմության մեջ քաջ հայտնի Աղասիի (Կարապետ Թուր-Սարգիսյան, 1871-1941) «Զեյթունի հերոսները» հինգ գործողությամբ դյուցազներգությունը, որը նա գրել է 1900-ին Կահիրեում և տպագրել 1906-ին: Հեղինակը, որը Զեյթունի մասին ֆրանսերեն գրքի հեղինակ է նաև, իր պիեսը ձոնել է Տաշոլլուզցի, Մավենքի, Արեգունի, Միխայլենքի, Զեյթունցի, Ֆոնուսցի, Հաճնցի, Մարաշցի, Այնթապցի 21 անձնվեր գործիչների, Զեյթունի պաշտպանության 125 հերոս նահատակների անմոռաց հիշատակին:

«Զեյթունի հերոսները» պիեսում ընդգրկված են տասից ավելի գործող անձեր և խմբերգը: Պիեսը գրված է ազատ չափածոյով և ավելի շատ հռետորական բնույթ ունի, քան գործողություն է պարունակում: Թերևս դա է պատճառը, որ նրա բեմադրությունը չենք հանդիպում մամուլում: Պիեսի հերոսներն են՝ Նազար իշխանը, թուրքասեր իշխան Հարոն, որին դավաճանության համար սպանում է նրա եղբոր աղջիկ Երանիկը: Թշնամու դեմ պայքարում Երանիկի հետ զոհվում է նաև նրա սիրած տղան՝ քաջասիրտ Ավետիքը: Հայրենասիրական պայքարին նպաստում են նաև Օվանես վարդապետը և Սարգիս քահանան: Գործողությունները ծավալվում են Նազար իշխանի ամառանոցում, Պերիտ լեռան քարայրերում, Ֆոնուսի շրջակայքում, սուրբ Աստվածածին վանքում:

Աղասիի պիեսում նկարագրված են պատմական կոնկրետ իրադարձություններ, իրական վայրեր ու անձնավորություններ, կոնկրետ դեպքեր: Հիշատակված են Փոնուսցի խենթ Բարթողը՝ Բարդուղեմիոս վարդապետ Թագակչյանը, հարեմի հարձ դառնալուց մահը գերադասող և իրեն ժայռից ցած նետող Փոնուսցի տիկին Տնտեսյանը, անգլիացի գնդապետը, պատվիրակ Չերմայստը, որը Քյամիլ և Սայիդ փաշաների հետ հավաքել է զեյթունցիների զենքերը՝ Հայաստանի համար բարենորոգումներ խոստանալով:

«Զեյթունի հերոսները» պիեսը գրված լինելով ականատեսի՝ պայքարի մասնակցի ամենահավաստի տվյալներով, պատմական անձերի ու իրադարձությունների հարազատ նկարագրությամբ, այնպիսի գործող ապացույցներ է կրում իր մեջ, որոնց հետ չի կարելի հաշվի չնստել:

Հայոց ցեղասպանության թեմայով գրված պիեսների շարքում

1906-ին բեմ են հանվել ևս երեք նոր պիես: Դրանք են՝ Միհրան Տերաերյանի «Դրոշակակիր հերոսուհին», որը ներկայացվել է մարտի 12-ին, Վառնայի «Սոխակ» նվագախմբատերախմբի կողմից:

Այս նույն թատերախումբը հոկտեմբերի 15-ին էլ Ա. Շիտանյանի «Արյունոտ հարսանիք» պիեսի հետ ներկայացրել է նաև հեղինակն անհայտ «Վրեժ» դրաման: Վերջինիս գործող անձերից են եղել՝ Խմբապետ Միքոն, նրա ծերունի հայրը, Մատնիչ քահանան և ուրիշներ:

Հակիրճ բովանդակութունն է. Մատնիչն ու Քյուրդ բեկը մտնելով ծերունու տուն, ահաբեկել են նրան (հավանաբար որդու տեղը հայտնելու պահանջով): Հենց այդ ժամանակ վրա են հասնել խմբապետ որդին ու նրա ընկերները և տեղն ու տեղը վրեժը լուծել:

Հուլիս ամսին էլ Նյու Յորքի ՀՅԴ թատերասիրաց խումբը բեմադրել է դարձյալ հեղինակն անհայտ «Վրեժի սերունդը» պիեսը, որի թեման նույնպես զաղթականի վրեժն է, առնված ժամանակակից հեղափոխական կյանքից: Պիեսի կենտրոնական հերոսներն ու դերակատարներն են եղել՝ Սարգիս ախպերը-Թյուֆենկյան (որի դերակատարման մասին գրվել է՝ «ուրիշ մեկը չէր կարող այդպես կատարել»), Խե Գևոն (ծպոյալ հեղափոխական) - Գ. Խ., Շուշան - տիկ. Դիմաքսյան, Սոնա (Շուշանի աղջիկը) - օր. Երկանյան և ուրիշներ<sup>1</sup>:

1907-ի նոյեմբերի 30-ին Բոստոնում բեմադրվել է «Լենկթեմուրի դեպի Սեբաստիա կատարած արշավանքը» պատմական պիեսը: Ցավոք այլ տվյալներ չկան ոչ պիեսի, ոչ էլ բեմադրական կազմի մասին: Թվում է, թե սա պետք է Պետրոս Դուրյանի «Սև հողեր կամ Հեոթին գիշեր Արարատյան» երեք գործողությամբ ողբերգությունը լինի, քանի որ միշտ չէ, որ հայրենասիրական պիեսները հեշտությամբ են բեմ հանվել (հիշենք «Սանդուխտ կույս կամ Անդրդվելի կամք» պիեսի բեմադրության արգելքը կառավարության կողմից, 1904-ին):

Դուրյանի պիեսի գլխավոր դեմքերից են՝

Սեբաստիո իշխան Նորայր

Վազենակ - Նորայրի փեսան - զորապետ Հայոց

Լենկթեմուր

Ջարմազան - զորագլուխ Թաթարաց:

Փոխելով Դուրյանի պիեսի վերնագիրը՝ դերասանական խումբը շեղել է վերահսկողության ուշադրությունը և ժամանակակից մեկնաբանություն տվել Սեբաստիայի վրա Լենկթեմուրի արշավանքին (թերևս՝ արևմտահայության կոտորածներին):

Նման արգելքներ տեղի են ունեցել նաև ուսսահայ իրականու-

<sup>1</sup> Ռազմիկ (Ֆիլիպի) 1906, № 75:

Թյան մեջ: 1884-ին փակվեցին հայկական դպրոցները, 1898-ին՝ «Ար-  
ձագանք» օրաթերթը, 1903-ին բռնադրավվեցին էջմիածնի վանքա-  
պատկան կալվածքները: Այդ քաղաքականությունը կիրառվեց նաև  
դրամատուրգիայի և թատերական ասպարեզներում:

Հայ թատրոնի խաղացանկն ազգային կյանքն արտացոլող դրա-  
մատուրգիայով համալրելու նպատակով թիֆլիսահայ թատրոնի  
երիտասարդ դերասան և ռեժիսոր Գեորգ Պետրոսյանը (1859-1906)  
1890-ին բեմականացրել է Բաֆֆու «Սամվել» պատմահայրենասի-  
րական վեպը և մտահոգվել նրա բեմադրության հարցով՝ 1891-1892  
թատերաշրջանում ներկայացնելու համար դերաբաշխում արել:  
Բայց, երբ բեմադրության թուլյտվության համար դիմել է Պետեր-  
բուրգի ներքին գործերի գրաքննության կոմիտեին, մերժում է  
ստացել, իբրև թե պիեսն ունեցել է «քաղաքական տենդենցիոզ  
բնույթ», որ կարող է Հայաստանի ինքնավարությունն երազկու  
խթան հանդիսանալ, ուստի «Սամվել» պիեսը չի կարող թուլյատրե-  
լի համարել բեմում ներկայացնելու համար»: Միևնույն ժամանակ  
տեղեկացվել է կովկասի դրաքննության կոմիտեին, որ արգելվի նրա  
թե՛ բեմադրությունը և թե՛ տպագրությունը<sup>1</sup>:

Չնայած այս խստություններին, թատերական գործիչներին եր-  
բեմն հաջողվել է իրականացնել իրենց ջանքերը: Հենց ինքը, Պե-  
տրոսյանն օգտվելով այն բանից, որ Արապիոն Հեքիմյանի «Սամելը»  
թուլյատրված է եղել ներկայացնելու, 1895-ի հոկտեմբերի 15-ին  
Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) Սուրբ Փրկիչ եկեղեցու ծխական  
դպրոցի դահլիճում, բարեգործական նպատակով «Սամելի» փոխա-  
րեն բեմադրել է «Սամվելի» իր բեմականացումը: Արգելվել է նաև  
Գեորգ Չուբարի «Սանդուխտ կույս» պիեսի բեմադրությունը:

1892-1898 թթ. Հովհաննես Աբելյանը չի կարողացել Համլետ խա-  
ղալ, որովհետև թուլյատրված պիեսների ցուցակում չի եղել նրա  
հայերեն թարգմանությունը (Հ. Մասեհյանի): 1903-ին, Երևանում,  
այդ նույն պատճառներին է դեմ առել Սիրանուշը, բայց նրա դերասան-  
ները հնարը գտել են՝ Ոստիկանապետի առաջարկով ազգագրի վրա  
գրել են՝ թարգմանությունը Դ. Ավերկիևի (թուլյատրվածը), բայց  
խաղացել Հովհաննես Մասեհյանի թարգմանությամբ:

Ինչպես Սուևդուկյանի օրինակով տեսանք՝ կովկասահայությունն  
անտարբեր չի եղել արևմտահայ ազգակիցների կրած դառը փորձու-  
թյունների նկատմամբ, օգնության ձեռք է մեկնել գաղթականներին,

<sup>1</sup> Դրամատուրգիա (Երևան) 2001, № 3, էջ 190-194:

որբերին, տնավեր փախստականներին, հատուկ ներկայացումներ և համերգներ տվել նրանց օգտին, դատապարտել հայերի հանդեպ թուրքիայի վարած քաղաքականությունը:

Սունդուկյանից հետո, երկրորդ թատերական գործիչը, որը դատապարտել է թուրքական բռնատիրական քաղաքականությունը, եղել է ախալքալաքցի գրող-դրամատուրգ, հետագայում «Ջավախք» թերթի խմբագիր-հրատարակիչ Վարդան Շահպարտյանը (Շահ Պարոն): Նրա գրած մի շարք պիեսներից երեքը նվիրված են 1895-1896 թթ. արևմտահայությունից տեղահանման, կոտորածների, թալանի իրողությունը թուրքերի կողմից:

Իր թատերական գործունեությունից հենց սկզբնական շրջանից Շահպարտյանը առաջիններից մեկն է անդրադարձել հայրենասիրական-հակաթուրքական թեմաներով պիեսներ գրելու և բեմադրություններն իրագործելու աշխատանքներին:

1899-ի փետրվարին, Վարդանանց տոների առթիվ, Ախալքալաքի երկսեռ թատերասերների ուժերով նա կազմակերպել է երկու ներկայացում: Առաջինը եղել է Գամառ-Քաթիսյայի (Ռափայել Պատկանյան) «Քաջն Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի՝ իր բեմականացրած տաբերակի բեմադրությունը, որի մեջ օգտագործվել են նաև Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի որոշ բանաստեղծությունների հիման վրա գրված երգեր: Հաջող տեսարան է համարվել կանանց սուզը Վարդանի վրա պատկերը: Հանդիսատեսները ոտնկալս են լսել «Նորահրաչ» շարականը Տ. Տոնականյանի ղեկավարությամբ: Վարդանի ղերակատարն է եղել Հ. Աղեկյանը, իսկ տ. Շ. Դարբինյանը կատարել է Լուսինի դերը:

Երեկոյի երկրորդ մասում ներկայացվել է Վ. Շահպարտյանի գրած «Վրեժ» դրամայի 4-րդ գործողությունը: Տաճկահայերի անպահով կյանքի պատկերն արտացոլող այս պիեսում հեղինակը ներկայացրել է անպաշտպան հայրենակիցների կոտորածը, թալանը, ավերումները թուրքերի կողմից<sup>1</sup>:

Շահ Պարոնը ցեղասպանությունից թեմայով իր երկրորդ պիեսը ևս գրել է Ախալքալաքում և ավարտել 1901-ի նոյեմբերի 30-ին: 58 էջանոց պիեսը տպագրությունից համար գրաքննությունից թույլտվություն ստանալու նպատակով խնդրել է իր ծանոթ Արմենակ Պողոսի Մառանջյանին, որ նա ներկայացնի ուր որ հարկն է: Բարդությունը կարգավորելուց հետո, ենթադրելով, որ թուրքական բռնապետությունից քաղաքականության դեմ գրած իր պիեսի բովանդակությունը

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1899, № 42:

չի առնչվում Ռուսաստանի քաղաքական կյանքին և արգելք չի լինի նրա հրատարակութայնը, պիեսը վերնագրել է ուշադրություն գրավող «Ֆեդայի Արմեն» անունով:

Հակառակ հեղինակի սպասածի, Պետերբուրգի Ներքին գործերի գրաքննութայն կոմիտեն արգելել է պիեսի տպագրությունը հետևյալ պատճառաբանությամբ.

«Ի նկատի ունենալով նրա ստեղծագործութայն ոչ ցանկալի հանդիսացող քաղաքական ուղղությունը, որի մեջ պատկերված են Հայերի ձգտումները Թուրքիայում, նրանց ճակատագիրը, հեղափոխական շարժումները, հույսերը ապագայի նկատմամբ և այլն, վերոհիշյալ ձեռագրի տպագրությունը՝ հենվելով օրենսգրքի 102 և 104 հոդվածների վրա, 1902 թ. ապրիլի 21-ի գեկուցագրով արգելվել է<sup>1</sup>»:

Պիեսի բեմադրութայն թույլտվութայն համար հետագայում ևս արգելքների չհանդիպելու նպատակով, հեղինակը վերամշակել է, վերափոխել նաև վերնագիրը, այն դարձնելով «Արմենն ու Ֆաթման կամ Զեյթունի պաշարումը», որը քաղաքական նոր պայմաններում վտանգավոր չի համարվել: Այս նոր տարբերակով պիեսն առաջին անգամ ներկայացվել է 1915-ի մայիսի 3-ին Բաքվի Հայոց կուլտուրական միութայն դերասանական խմբի կողմից, Սիրանուշյի բեմագրությամբ ու մասնակցությամբ (Ֆաթմայի դերում):

Ոմանք կես լուրջ, կես զարմացած հարց են տվել՝ թե Սիրանուշյն ինչն<sup>2</sup> է հանդես գալիս նման դերերում: Բայց Սիրանուշյը Սիրանուշյ չէր լինի, եթե հոյակապ արտիստուհի լինելուց բացի, մեծ հայրենասեր քաղաքացի չլիներ: Նա խտրություն չի դրել ոչ դրամատիկական և ոչ էլ կատակերգական դերերի մեջ, խաղացել է, որի մեջ ասելիք է ունեցել: Ամենևին էլ պատահական չէ, որ համաշխարհային թատրոնի պատմութայն մեջ Սիրանուշյը միակն է, որ մարմնավորել է տասից ավելի ազգությունների կանանց կերպարներ, խաղացել տղամարդու երեք դեր՝ Համլետ, Նապոլեոն, Արծվիկ:

1910-ակ. թթ. Սիրանուշյը շուրջ 10 տարի բեմադրել ու մասնակցել է Հայոց ցեղասպանութայն դեմ գրված պիեսների ներկայացումներում: Անգամ օտար պիեսում էլ նա դրել է իր ազգային վշտի արտահայտությունը, ինչպես դա տեղի է ունեցել Ա. Յուսիֆ-Սումբաստովի «Դավաճանություն» պիեսի ներկայացումների ժամանակ:

Այսպես, 1912-ի մարտին Աբելյան-Սիրանուշյ կովկասահայ թատերախումբն առաջին անգամ հյուրախաղերի է մեկնել Մոսկվա: Էրմիտաժ անշուք թատրոնում ցուցադրել են չորս պիես, որոնցից

<sup>1</sup> Պետերբուրգի Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ № 777:

մեկը հղել է «Դավաճանությունը»: Թատրոնում Սիրանուշի խաղը տեսնելու համար հրավիրվել են ուսուցիչական-թատերական հանրահայտ ղեկավար՝ Յու. Վեսելովսկին, Վ. Բրյուսովը, Վլ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն, Մ. Ն. Երմոլովան և ուրիշներ:

Հյուրախաղերի մասնակից, Դաթոյի դերակատար Արշավիր Շահ-խաթունին մի զարմանահարաչ դեպք է նկարագրել, որը միայն հայերի հետ կարող էր պատահել: Ներկայացումից առաջ ինքն ու դերասան, ռեժիսորի օգնական Գրիգոր Ավետյանը դնացել են Սիրանուշին զգուշացնելու ներկայացումն սկսելու մասին: Ահա թե ինչ տեսարան է բացվել նրանց առաջ: «Սիրանուշի զարդախուցին դուռը կիսաբաց էր, — գրել է նա, — երբ ես Ավետյանի հետ մտա այնտեղ, որպեսզի նրան իմացնեմ, որ պատրաստ լինի մուտք գործելու բեմ: Ես այնտեղ տեսա մի պատկեր, որ իմ կյանքիս մեջ անմոռանալի է:

Զեյնաթ թաղուհու փառահեղ զգեստները հազած, դեմքը՝ հարդարած, մեծ ու աննման Սիրանուշը ծուներ դրած՝ բազկատարած աղոթում էր: Մենք կանգնած էինք քարացած, նա մեղ չնկատեց, իմ ախանջին հասավ աղոթքի հետևյալ խոսքերը:

— Ով Մշո Սուլթան Ս. Կարապետ, տո՛ւր ինձ ուժ և կարողություն, որ իմ ազգիս պատվը բարձր պահեմ այսօր:

Հետ քաշվեցի Ավետյանի հետ, խոր հիացմունքի ու հուզմունքի մեջ:

Մշո Ս. Կարապետը նրան զորություն տվեց..., նա խաղաց այնպես, ինչպես երբեք չէր խաղացել իր կյանքում: Դա ներկայացում չէր, այլ կոնսերտ, սիմֆոնիա, ամեն ինչ»<sup>1</sup>:

Այսօր ի՞նչ է մնացել այդ Ս. Կարապետից, աննշան փլվածքներ: Կենդանի մարդկանցից բացի, թուրքական քրուսդն այս վանքն էլ ուզեց ջնջել մեր հավատից ու հիշողությունից: Ո՞ր մեկը հիշես...

«Արմենն ու Փաթման կամ Զեյթունի պաշարումը» պիեսի ներկայացումը տեղի է ունեցել Նիկիտին հղբայրների կրկես-թատրոնում: Երգչախումբը ղեկավարել է կոմպոզիտոր Անտոն Մայիլյանը: Դերակատարներից հայտնի են՝ Արմեն — Միքայել Կոստանյան, Փաթմա — Սիրանուշ, Ակիշա — Արուս Ոսկանյան, Սեղալ — Արմեն Դուրինյան: Մասնակիցներից են եղել՝ Մարգո Կոստանյանը, Օվի Ահարոնյանը, Մկրտիչ Թաշճյանը և ուրիշներ<sup>2</sup>:

Երկրորդ պիեսի արգելքից հետո Շահպարտյանը հանգիստ չի նստել: Նրան հուզել են հայերի նկատմամբ թուրքական կառավարության սարքած կոտորածներն ու կողոպուտները: Նա մարդկայնո-

<sup>1</sup> Արևմուտք (Փարիզ) 1949, հոկտեմբեր:

<sup>2</sup> Արիզ (Բաքու) 1915, № 31, 36:

րեն զգացել է արևմտահայ հայրենակիցների ողբերգական վիճակը և երրորդ պիեսն է գրել նույն թեմայով: Դա նրա խոստուն վերնագրով «Արցունքի ծով կամ Ջարատանջ ժողովուրդ» 4 գործողությամբ դրաման է:

Կանխազգալով որոշ քննադատվելիք դիտողությունը՝ թե ինչո՞ւ է վերհիշել անցյալի դառը կյանքը՝ արցունքն ու ավերը, հեղինակն իր պիեսի առաջաբանում գրել է. «Սա մեր թրքահայ դժբախտ ժողովրդի կյանքից է, սա դեռ հեռավոր, շատ հեռավոր պատկերն է, ինչ որ կատարվել է այդ արյունլիա երկրում... Մի՞թե Սասնա լեռների նֆոցը չէինք լսում, մի՞թե թնդանոթների որոտը, հրացանների ճարճատյունը, որոնք մահ էին սփռում խեղճ, թշվառ, անպաշտպան ժողովրդի վրա, չէին հասնում մեր ականջին, մի՞թե թուրքահայ օրիորդի երեսին խաղում է նազիկ ժպիտը... Ո՛չ, ո՛չ, արյուն էր հոսում, արցունքի հեղեղներ էին վազում, լացի, ողբի աղեխարչ վա՛յների, օգնության կանչի դարհուրելի համերգի ձայնն էր լսվում, և մի՞թե այս բոլորից հետո գրիչը կարող է արտահայտել անդորր կյանքի դուրալի պատկերներ... Ո՛չ, մռայլ էր մեր կյանքը, մռայլ էր մեր հոգին, մռայլ կլինեն և հոգու արտադրությունները...»<sup>1</sup>:

Սրտի ցավով գրած այս պիեսն արտահայտել է հեղինակի կարեկցությունը մինչև Մեծ եղեռնի առավել սարսափելի կացությունը: Պիեսում պատկերվել է Մշո դաշտում և Սասունում ծավալված պայքարն ընդդեմ համիդյան բռնակալության, որը թուրք ու քյուրդ հրոսակներով հաշվհարդար էր տեսնում հայ ազգաբնակչության հետ:

Շահ-Պարոնի «Արցունքի ծով» պիեսն առաջին անգամ ներկայացվել է 1915-ի սեպտեմբերի 20-ին, Բաքվի Մայիլյանների (օպերային) թատրոնում, Հայ դրամատիկ դերասանների ընկերակցության կողմից, դարձյալ Սիրանուշի բեմադրությամբ: Խմբապետ Հրայրի դերակատարն է եղել Վահրամ Փափազյանը, իսկ նրա ընկերոջ՝ Գրգոյի մոր դերակատարը՝ Սիրանուշը: Վերջինիս մասին մամուլում գրվել է. «Խելագարված Ջարգարի դերը կատարում էր տ. Սիրանուշը, որն իր տաղանդին վստահած՝ համարյա ամեն տեսակ դերեր վերցնում է և այդ դերն էլ տարավ լավ: Ավելի դարմանալի է տիկնոջ այն համարձակությունը, որ նա չի քաշվում ամեն տեսակի պիեսներում դուրս գալ»<sup>2</sup>:

Երկու շաբաթ անց, 1915-ի հոկտեմբերին «Արցունքի ծովը» ներկայացվել է Թիֆլիսի Զուբալովի անվան ժողովրդական տան հայկական մասնաճյուղի կողմից, Ամո Խարազյանի բեմադրությամբ:

<sup>1</sup> Շահ-Պարոն, Արցունքի ծով, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 13-14:

<sup>2</sup> Արև (Բաքու) 1915, № 153:

Այս բեմադրութեան մասնակիցներէից են եղել՝ Հրայր – Վահան Գալստյան, Մ. քե – Գուրգեն Յանիկյան, Գրգո – Ս. Միքայելյան, Արքե – Մնացական Մարության, Մարջան և Գյուլիզար – Հասմիկ (Հակոբյան), Սլո – Ա. Օդարաշյան և ուրիշներ:

Այս պիեսը 1917-ին Թիֆլիսի Ազատ թատրոնում, Գ. Թյուլպենտյանի բեմադրութեամբ ներկայացրել է նաև Մեծ եղեռնից փրկված և այդտեղ ապաստան գտած արևմտահայ թատերասերների խումբը:

19-րդ դարի արևմտահայութեան քաղաքական-հասարակական կյանքի տարբեր դրսևորումները դրամատիկական երկի նյութ են ծառայել նաև բանաստեղծ և արձակագիր Լևոն Շանթի համար, որ հետո պետք է հռչակվիր իբրև մեր լավագույն դրամատուրգներից մեկը: 20-րդ դարասկզբին նրա գրած երկու՝ «Եսի մարդը» և «Ճամբուն վրա» դրամաները վերաբերում են ժամանակի դադափարական հողի վրա ստեղծված որոշ հակումների տեղ մարդկանց գործելակերպի բարոյահոգեբանական հարցերին՝ անձնական եւր դերադասելով ազգին ծառայելու պարտականութեանից: Եվ եթե հայրենասեր Սեդրակը համալսարանական ուսումը կիսատ թողնելով վերադարձել է հայրենիք՝ ժողովրդին ծառայելու, ապա նրա ընկեր Մուշեղը դարձել է ոստիկանութեան պաշտոնյա և դավաճանել ընկերներին («Եսի մարդը»):

Շանթի վերոհիշյալ՝ «Եսի մարդը» և «Ճամբուն վրա» պիեսները բեմադրվել են գրեթե միաժամանակ՝ 1907-ին: «Ճամբուն վրան»<sup>1</sup> հունվարի 15-ին Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերութեան դերասանական խմբի կողմից, Հ. Աբելյանի բեմադրութեամբ Արտիստական ընկերութեան (այժմ՝ Ռուսթավելու անվան) թատրոնում հետևյալ կազմով. Հարենց Արթին – Արշակ Հարությունյան, Մարի – Օլգա Մայսուրյան, Մայրը – Վարդուհի (Աննա Նամուրազյան), Նեկտար – Արաքս Զարիֆյան, Վահրամ Վարդանյան – Հովհ. Աբելյան, Սարիկյան – Մաթևոս Ազայան, Դավիթ – Գրիգոր Ավետյան, Երվանդ Մինասյան – Միքայել Մանվելյան, Մարիամ – Ն. Օհանյան, Մարգար – Մկրտիչ Թաշճյան, Տանտիրուհի – Հասմիկ:

Դերակատարների որոշ փոփոխութեամբ (ընդգրկելով Բաքվի դերասաններին), Աբելյանը նույն թվականին այս պիեսը ներկայացրել է Բաքվում, տեղի Հայոց Կուլտուրական միութեան թատերախմբի դերասանների մասնակցութեամբ:

«Ճամբուն վրա» պիեսը հետագայում ներկայացվել է 1907-ին Թավրիզում, 1909-ին Կ. Պոլսում, Աբելյան-Արմենյան կովկասահայ թատերախմբի հյուրախաղերի ժամանակ:

<sup>1</sup> Տպագրվել է «Մուրճ» (Թիֆլիս) ամսագրի 1905-1906 թթ. համարներում:

1909-ին Ռուսչուկում, իսկ Վառնայում «Եսի մարդը» Գր. Ավետյան - Օվի Սևուճյան Կովկասահայ դերասանական խմբի կողմից (Սևուճյանի բեմադրությամբ):

1913-ին Բաքվում, «Քնարիկ» թատերախմբի կողմից, իսկ հաջորդ տարին՝ Բարսեղ Աբովյանի բեմադրությամբ:

1918-ին Հալեպում, Աշոտ Մատաթյանի բեմադրությամբ:

1919-ի փետրվարի 16-ին Պոլսի Հայ դրամատիկ խումբը Պրտի Շան թատրոնում ներկայացրել է Մկրտիչ Ջանանի (Հարենց Արթինի դերով) բեմադրությամբ: Մյուս դերերում ելույթ են ունեցել՝ Վահրամ - Կ. Սարյան, Մարի - Հրաչ (Փափազյան-Դերձակյան), Մայրը - Լյուսի Թոգաթյան, Նեկտար - Աղավնի Պիննեմեճյան, Մարգար - էդուարդ Չափրաստ, Դավիթ - Արմեն Աժտերյան, Սարիկյան - Նշան Պեչիկթաշլյան, Երվանդ - Երվանդ Թուլայան:

Շանթի այս պիեսի մի բեմադրություն էլ տեղի է ունեցել 1922-1923 թատերաշրջանում, եգիպտահայ դրամատիկ թատերախմբի կողմից, իսկ 1924-ին՝ Սալոնիկում:

Տասնամյակներ անց, այս պիեսը մոռացությունից հանել է Լոնդոնի թատրոնի և կինոյի ուսումնական հաստատության շրջանավարտ, իրանահայ խոստումնալից թատերական գործիչ Արբի Հովհաննիսյանը, որն էլ 1969-ին բեմադրել է այն Թեհրանում:

Դրանից քսան տարի անց, «Ճամբուն վրա» պիեսը նորից է Թեհրանի թատրոն բարձրացվել: Այս անգամ այն բեմադրել է դերասանուհի - ռեժիսոր Կիտուշ Արզույանը՝ ինքն էլ կատարել բեմի և հագուստների ձևավորումները, իսկ դեկորները՝ Արա Սուքիասյանը: Ներկայացման մեջ օգտագործվել են կոմպոզիտորներ Գրիգոր Եղիազարյանի և Լորիս Ճզնավորյանի երաժշտությունը: Արզույանի բեմադրական առանձնահատկություններից մեկը եղել են լույսային գունավոր խաղերը, մյուսը՝ զգեստների գունային խորհրդանշական հատկությունները: Եթե վերջինի համար ընտրվել է մոխրագույնը, ապա պիեսի հերոսուհուն՝ Մարիի զգեստը եղել է սպիտակ-իբրև անմեղության խորհրդանիշ, իսկ նրա մոր՝ Մարիամինը՝ կարմիր, որպես արյան ծովից փրկվածի: Կարմիր փողկապ է կրել նաև Մարիի սիրած Վահրամը<sup>1</sup>:

«Ճամբուն վրա» պիեսը խաղացվել է Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության «Արամայիս Աղամալյան» թատերախմբի ուժերով, 1989-ի դեկտեմբերին, «Կոմիտաս» սրահում, ունեցել է ութ

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1989, գեկտեմբերի 20:

ներկայացում: Կիտուշ Արզուլյանի մտահղացմամբ այն գնացել է սիրո և բախման ճանապարհով: Միմյանց սիրելով հանդերձ, Վահրամը հայրենասիրությունը գերադասում է անձնական երջանկությունից, իսկ մեկամաղձոտ Մերին ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին:

Այս բեմադրության մասին բազմավաստակ արվեստաբան Լիդա Բերբերյանը գրել է. «Արամայիս Աղամալյան» թատերախումբը սույն բեմադրությամբ իրենից ի հայտ բերեց միակտոր ներդաշնակ խաղարկություն, որի ֆոնի վրա նրբագեղորեն գծագրվեց Մելինե Տ. Սարգսյանի (Մարի) դուստլ և խորազգաց խաղարկությունը, որի հետ համընթաց քայլ սլահեց Գեիկ Մալխասյանը (Վահրամ) ինքնավստահ գերակատարությամբ»<sup>1</sup>:

Մյուս գերերում հանդես են եկել՝ Վարդգես Բաշյանը – Մարգար, Վրեժ Բաբայանը – Հարենց, Աուխտ Բորայանը – Նեկտար, Ժանեթ Ոսկանյանը – մայրը, Վարդան Ալեքսանյանը – Երվանդ, Վահե Մարտիրոսյանը – Սարիկյան, Թալին Հարությունյանը – Տանտիկին, Ռուբեն Տեր-Սարգսյանը – Դավիթ, Էդիթ Իսմայելյանը – Մարիամ:

2001-ին «Ճամբուն վրա» դրամայի բեմադրությանն է անդրադարձել Համազգայինի «Պարույր Սևակ» մասնաճյուղ – Այնճարի «Լուսարձակ 40» թատերախումբը: Բեմադրությունն իրագործել է նրա գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Առաքելյանը, որն իր մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում և տարիներ անց բեմական գործունեությունը շարունակել Այնճարում: Դեկորների մտահղացումը և երաժշտական ձևավորումը կատարել է բեմադրողը, իսկ դեկորներն իրագործել է Պողոս Մաճարյանը ըստ բեմանկարիչ Հուրի Մերճանյանի, երաժշտության ընտրությունն էլ կատարել է Սուրեն Խոջայանը:

Այս թատերախմբի ներկայացման մասնակից դերակատարներն են եղել՝ Պողոս Թերզյանը – Վահրամ, Հավերժ Շխրտմյանը – Մարի, Գաբո Ադամյանը – Հարենց, Ճորճ Շերպեթյանը – Երվանդ, Գրիգոր Գժտըրյանը – Մարգար, Սևան Ադամյանը – Նեկտար, Արևիկ Առաքելյանը – Մարիամ:

Հայոց Մեծ եղեռնի և Մուսա լեռան հերոսամարտի 90-ամյակների առթիվ Այնճարի թատերախումբը 2005-ին Հայաստանի թատերական գործիչների միության հրավերով հյուրախաղի է եկել Երևան և ցուցադրել «Ճամբուն վրա» ներկայացումը: Այս ներկայացումը կրկնվել է նաև Գյումրիում և Վանաձորում:

<sup>1</sup> Այլք (Թեհրան) 1989, գեկտեմբերի 20:

Ոչ պակաս հետաքրքրական է նաև Շանթի «Եսի մարդը» պիեսի բեմական պատմությունը<sup>1</sup>: Ինչպես արդեն նշվել է, այս պիեսն առաջին անգամ բեմ է հանվել Բաքվում, 1907-ի փետրվարի 4-ին, բեմը վաղուց թողած դերասանուհի Ազնիվ Հրաչյայի բեմադրությունամբ: Դերակատարները եղել են Բաքվի Հայոց Կուլտուրական միությունից դերասանական խմբի անդամները՝ Խ. Սարգսյանը - Մուշեղ Տերյան, Մ. Այվազյանը - Սրբուհի, Ե. Բեկնազար-Յուզբաշյանը - Արաքսի, Օ. Կրասիլնիկյանը - Ազնիվ, Հ. Սարաֆյանը - Որբևայրի, Հովսեփ Ոսկանյանը - Սեդրակ Մինասյան, Գ. Նաջարյանը - Արմենակ, Ալիստ Ազյանը - Աբրահամ, Ա. Լալայանը - Աբրահամի կինը:

Այս նույն թվականին (1907), Բաքվի բանվոր-թատերասերների «Քնարիկ» խմբի ղեկավար Քնարիկը (դերասանուհի Մարգարիտ Բաբալյան) և այն բեմադրություն է պատրաստել աշխատավորության համար: «Եսի մարդիկ» մի բեմադրություն էլ Կ. Պոլսի նորաստեղծ «Ազատ» թատրոնում (1908) է տրվել:

Բավականին երկար ընդմիջումից հետո, «Եսի մարդը» շարունակել է իր բեմական պատմությունը: Նրան «մոռացությունից» հանել է Լոնդոնի Օլգ Վիգ թատերական կրթօջախի ուսանող, բեյրութահայ երիտասարդ, շնորհալի դերասան Վարուժան Խտրչյանը: Իր ուսանողական տարիներին (1960-ականի կեսերին) Խտրչյանը մի քանի հայերեն պիես է բեմադրել Լոնդոնի «Հայ երիտասարդաց միություն» և Անգլիական թատերախմբերի հետ, ինքն էլ դերեր խաղացել երկու լեզվով:

«Եսի մարդիկ» բեմադրությունը թերևս երիտասարդ, խոստումնալից ռեժիսորի առաջին աշխատանքը լինի, որ ներկայացվել է 1964-ի ապրիլի 4-ին Լոնդոնի Սեյնթ Ջեյմս սրահում:

Բեմադրության մեջ զբաղված են եղել թատերախմբի փորձված և երիտասարդ ռեժիսոր, որոնք էլ ապահովել են ներկայացման հաջողությունը: Ահա այդ դերակատարները՝ Եսի մարդը - Հովհաննես (Ասատուր) Օհանյան, Ազնիվ - օր. Օֆելյա Իսաղուլյան, Այրի - օր. Հելեն Պայրամյան, Արաքսի - Նոլանտ Հովհաննիսյան, Արմենակ - Ստեփան Գրքյաշարյան, Աբրահամ - Անդրանիկ Թասլաքյան և ուրիշներ:

Մամուլի դնահատությունամբ ներկայացման հաջողությունը պատկանել է Խտրչյանին, որը երևույթը կապել է ժամանակի հետ: Ժողովուրդը ցնծությունամբ է ընդունել բեմադրությունը, հանդիսատեսն առաջին անգամ է ստացել լուրջ և արվեստի բոլոր ճաշակներով հարուստ թատերգության վայելքը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տպագրվել է Պետերբուրգի «Հանդես գրականության և արվեստի» պարբերականի 1904-ի Բ գրքում, էջ 1-47:

<sup>2</sup> Ազգակ (Բեյրութ) 1964, ապրիլի 29:

Մի քանի տարի անց, թատերական գործիչները նորից են անդադարձել Լ. Շանթի «Եսի մարդը» պիեսի բեմադրությունը: Այս անգամ նրա բեմադրությունը կայացել է Բեյրութի «Գասպար Իփեկյան» թատերախմբի նախաձեռնությամբ, թատերախումբ, որի կազմավորման գործին Գ. Իփեկյանի հետ նպաստել է և Լ. Շանթը:

Համազգայինի «Գասպար Իփեկյան» թատերախմբում «Եսի մարդի» բեմադրությունն իրականացրել է խմբի ղեկավար՝ դերասան և ռեժիսոր Ժորժ Սարգիսյանը:

«Գասպար Իփեկյան» թատերախմբի թեհրանյան Հյուրախաղերի ժամանակ, ի թիվս այլ պիեսների, 1968-ի փետրվարի 16-18-ին, «Արարատի» սրահում ներկայացվել է նաև «Եսի մարդը» պիեսի բեմադրությունը, իսկ հաջորդ օրը խաղացվել է աշակերտության և ուսանողության համար<sup>1</sup>:

1980-ի հոկտեմբերին «Եսի մարդը» բեմադրվել է նաև Թեհրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության Արվեստից միություն թատերախմբի ռեժիսոր, դերասան Գևորգ Նուբարյանի կողմից: Մասնակիցների նույն կազմով այս պիեսը ներկայացվել է Շիրազում, Հայ տան սրահում<sup>2</sup>:

«Եսի մարդը» պիեսի բեմադրություններից թերևս ամենահետաքրքրականը եղել է նորարար ռեժիսոր Վարուժան Խտրչյանի աշխատանքը, որը նա իրականացրել է նույն «Գասպար Իփեկյան» թատերախմբում: Բեմադրությունից բացի նրան է պատկանել նաև երաժշտական ձևավորումը, իսկ դեկորների ու տարազի մտահղացումները պատկանել են Վարանդ և Կարինե Ալեքսանդրյաններին: Առաջին ներկայացումը տրվել է 1991-ի հուլիսի 26-ին, Հ. Տեր-Մելքոնյան թատերասրահում:

Ներկայացումն սկսվել է Գործավարի ձայնով (Հակոբ Տեր-Հարությունյան): Աստիճանաբար բեմ են եկել Սեդրակը - Կարո Գրճըլյան, Ազնիվը - Այտա Սրապոնյան, Մայրը - Մարո Քյուրտյան, Մուշեղը - Վ. Խտրչյան, Շահանը - Պերճ Պոչնազյան, Աբրահամը - Կարո Խաչատուրյան, Արմենակը - Ժան Պեքերեճյան, Այրին - Մարի Ռոզ Մանուկյան, Արաքսին - Մարալ Սարգիսյան, Սրբուհին - Սալբի Թյուֆենճյան:

Այս բեմադրության առնչությամբ «Դեպքերու 100-ամյակին առթիվ» բեմադրիչի իր խոսքում, Վ. Խտրչյանը գրել է. «Եսի մարդը»

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1968, № 3:

<sup>2</sup> Նույն տեղում, 1980, № 127:

իմ առաջին բեմադրութիւնս է եղած, կրնամ ըսել: Առաջինը, ուր-տեղ ես իմ անհատականութիւնս գտա ու իմ ոճս: Խոսքի, արտա-հայտութեան, կշռույթի և մանավանդ երաժշտութեան գործածումը, որ կհետևի Վահաներյան լեյթմոթիֆներու օգտագործման տեսակե-տին: Այս հայտնութիւնը զիս գրավեց, երբ առաջին անգամ դայն բեմադրեցի Լոնդոն 1964-ի մարտ-ապրիլին... և այս բեմադրութեան մեկնաբանութիւնով կու գամ մտածելու բիեսի հերոսի՝ Սեդրակին տրամաբանութեամբ», այսինքն՝ գործելուց առաջ մտածել անելիքի հետևանքի մասին:

«Եսի մարդի» վերջին բեմադրութիւնը կայացել է 2004-ին, Թեհ-րանում, դերասան և ռեժիսոր Սուրեն Մնացականյանի ղեկավարու-թեամբ: Թեհրանի «Ազատ» թատերախումբն այդ ներկայացումից երկու տեսարանով 2008-ի օգոստոսի 19-ին մասնակցել է Հայաս-տանյան «Մեկ ազգ մեկ մշակույթ» փառատոնին: Ներկայացումը տեղի է ունեցել Արմավիր քաղաքում: Մասնակցել են՝ Վահագն Ազիզյանը – Մուշեղ, Անի Զաքարյանը – Այրի, Մագի Խուզալաքիսը – Արաքսի, Արա Ասլանյանը – Սեդրակ, Շաքե Մնացականյանը – Ազ-նիվ, Սուրեն Մնացականյանը – Արմենակ<sup>1</sup>:

20-րդ դարի սկզբներից արևմտահայութեան նկատմամբ հալա-ծանքներին ու նրանց տառապանքների պատկերմանն է անդրադար-ձել նաև գրող-հրատարակախոս և մանկավարժ Ալիստիս Ահարոնյա-նը: Նա եղել է հայ ժողովրդի վշտի ու արցունքի արտահայտիչը գրականութեան մեջ և արվեստում:

Երկար տարիներ աշխատելով գալաօսական մի շարք քաղաքների ու գյուղերի դպրոցներում, Ահարոնյանը մոտիկից ճանաչել ու տե-սել է հայ աշխատավորութեան սոցիալական ծանր վիճակը, թուրքե-րի վարած քաղաքական ճնշումներն ու բռնութիւնները, կոտորած-ները, ավերումները և հոգում կուտակված դարգերը գրականու-թեանը հանձնել: Իր տեսած ու լսած դեպքերի պատմութիւնները նա խտացրել է արձակում և դրամատուրգիայում:

Վերահիշյալ իրադարձութիւնների մի զգալի մասը նա պատկերել է իր առաջին դրամատիկական երկում՝ «Արցունքի հովիտը» չորս գործողութեամբ դրամայում, որ նա գրել է 1906-ին բանտում և տպագրել 1907-ին, Բաքվում:

1890-ական թթ. կեսերին Արևմտյան Հայաստանում թուրքերի կողմից կազմակերպված հայերի ջարդերը գյուղացի Ասլանին դարձ-

<sup>1</sup> Սուրեն Մնացականյանի հաղորդումը:

նուժ են հեղափոխական մարտիկ ընդդեմ տիրակալների կամայականութեան: Երկար տարիների բացակայութեանից հետո նա ազջկա՝ Հյուսիսի հետ վերադառնում է ծննդավայրը: Ծանապարհից հոգնած, նրանք հարազատ գյուղը տանող ճամփի հզրին կանգ են առնում հանգստանալու: Անծանոթ ճանապարհորդների տեսնելով, նրանց ապահովութեան համար, պառավ Փերին ու նրա թոռնուհի Շողիկը հրավիրում են իրենց տուն՝ գիշերելու: Հյուսիսն վախենում է ճանապարհով գնացող գյուղացիներից, հայրը հանգստացնում է նրան:

Փերիի զոհված որդու երիտասարդ այրի Նազեն երեխայի օրորոցի մոտ վրեժի թեմայով երգի մեղեդիների տակ նրան քնեցնելով անիծում է աշխարհի բարքերը: Փերին օտար ճամփորդների մասին տեղեկացնում է Նազենին: Ներս են գալիս Ասլանն ու Հյուսիսն: Փերին Հյուսիսին նկարագրում իր որդի Ասլանին: Հյուսիսն ճանաչում է իր տատ Փերիին: Բոլորը ողջագուրվում են:

Հյուսիսն ու Շողիկը խաղում են ծառի մոտ: Նազեն լալով օրոր է ասում: Յուրայիններով Ասլանին տեսնելու է գալիս Ռես Մնոն, միաժամանակ զգուշացնում, որ չերևա գյուղում: Ասլանի ընկերներ Բարկենն ու Սուրենը գրուցում են Հյուսիսի ու Նազենի հետ: Հյուսիսն իր անկեղծ սերն է հայտնում Բարկենին: Ասլանն իր նոր ընկերներով գալիս է և բոլորին կարգադրում՝ ընդառաջ գնալ մահվան: Ռես Մնոն ուզում է հետ պահել նրան իր մտադրութեաններին:

Ի հակադէպ Հյուսիսի ու Բարկենի սիրո և ազատութեան հուշերազների, գալիս է Ասլանը և ընկերներին տված առաջադրանքներն ստուգելուց հետո նրանց նոր սխրանքի ուղարկում: Ամենքին համոզելով, ինքն էլ է գնում: Նազեն ու Փերին զգում են պայթյունի վտանգը: Բիչ անց, գուժկանները գալիս և հայտնում են Ասլանի զոհվելու սև բոթը:

«Արցունքի հովիտն» առաջին անգամ բեմադրվել է Թիֆլիսի Արտիստական (այժմ՝ Ռուսթավելու անվան) թատրոնում, Հայոց դրամատիկական ընկերութեան դերասանական խմբի կողմից:

Այս բեմադրութեանը մեծ արձագանք է գտել Թիֆլիսի թատերական կյանքում: Մամուլը բարձր է գնահատել պիեսի արժանիքները: Գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, Իրանում և Թիֆլիսում թատերական կյանքի մասնակից Լևոն Բաբայանը գրել է. «Արցունքի հովիտը» պատկանում է ոչ թե հայկական սովորական դրամաների շարքին, այլ դրամատիկական գեղարվեստի ամենավերջին՝ սիմբոլիկական ուղղութեամբ գրված պիես է: Թատերական գեղարվեստի այդ նորագույն ուղղութեանը, որի աշխարհահռչակ ներկայացուցիչներն են Մետերլինկ, Իբսեն, Հաուսլոման, Պշիբրըզևսկի և

ուրիշները, պ. Ա. Ահարոնյանի նոր դրամայով առաջին անգամ մուտք է գործում հայկական թատերական նորագույն դրականության մեջ և այն էլ շատ պատվավոր կերպով:

«Արցունքի հովիտը» դրամայի կենտրոնական գաղափարը բռնակալությունն է, որի ծանր լծի տակ ճնշվում է արցունքի հովիտը՝ իշխանական դոկալի բռնակալության տակ հեծող արյունաքամ ազգաբնակչություն»<sup>1</sup>:

Իշխանական դոկալի տակ գետնուղի փորելով, Ասլանն ու իր ընկերները ցանկանում են պայթեցնելով վերացնել այդ գերիշխանությունը: Եթե այսօրվա տեսանկյունից նայենք՝ վերացնել այդ դոկալ-պետությունը և ազատ շունչ քաշել: Բայց պայթյունի հետ զոհվում են և պիեսի հերոսները:

Պիեսի հերոսի՝ Ասլանի գերակատարն ու բեմադրողը եղել է Հովհաննես Աբելյանը: Նրա խաղընկերներն են եղել՝ Օլգա Մայսուրյանը - Հյուբրի, Վարդուհին (Աննա Նամուրազյան) - Փերի, Սիրանուշը - Նադե, Մարիամ Ավետյանը - Շողիկ, Արշակ Հարությունյանը - Ռես Մնո, Հովհաննես Ջարիֆյանը - Բաբկեն, Գրիգոր Ավետյանը - Սուրեն, Վարվառե Մելիքյանը - Ջիննի (ցնորված), Մկրտիչ Աղաբեկյանը - գուժկան, Հասմիկը - կին, Ն. Օհանյանը - ազդիկ, Մաթևոս Աղայանը, Ի. Ադիլխանյանը - Գյուղացիներ:

Ահարոնյանի այս պիեսը տասնյակ տարիներ, ամենուրեք ներկայացվել և հուզումնալից ընդունելություն է գտել: Թեև պիեսի գործողությունների համար կոնկրետ վայրի անուն չի հիշատակվում, բայց դա ընդհանուրի համար իր ժամանակի կամ կորցրած գյուղի, քաղաքի հետ կապված հիշողություններ արթնացնող տեսարաններ են, կերպարները՝ հարազատ դեմքեր: Ուստի և մեծ է նրա թողած բարոյական ներգործությունը:

Պիեսի երկրորդ կարևոր անձը պետք է համարել ամուսնուն կորցրած երիտասարդ Նադեին, որի հոգեբանությունից բխած հայրենասիրական օրորոցայինը վաղուց ի վեր մտել է ազգային երգարանների մեջ<sup>2</sup>: Ահա մի հատված այդ երգից, որ առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում լույս տեսնող «Հուշարար» հանդեսում:

### Նագեի օրորը

Բնի՛ր, ի՛մ բալիկ, օրօր, իշ արա,

Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել...

<sup>1</sup> Հուշարար (Թիֆլիս) 1907, № 3, էջ 38:

<sup>2</sup> Երգի եղանակը՝ Դանիել Ղազարյանի:

Վարավանն անցավ, բարձած արցունքով,  
Սև անապատում ծունկ չոքեց, մնաց,  
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է...  
Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց,  
Գիտեմ այն դառն է, չես ուզում, բալի՛կ,  
Ախ, վշտիս թուլնն է քամվել նրա մեջ...  
Կաթիս հետ մեկտեղ սև վիշտս ծծի՛ր,  
Հոգուդ մեջ թող նա սև վրեժ դառնա,  
Ծլի՛ր, բոյ քաշի՛ր, բոյի՛դ ևս զուրբան,  
Եվ լաց մի լինիր, ևս շատ եմ լացել:

(գործողութունը կրկնող, տեսարան առաջին)<sup>1</sup>:

Այս երգը մեծ հուզմունքով կատարել է Նազեի դերակատար Սիրանուշը, որի մասին «Մշակ» թերթի խմբագիր և թատերախոս Ալեքսանդր Բալանթարը գրել է թե՛ նա կարողացել է տալ քնքուշ ու սիրող կնոջ մեջ դեպի վրեժը և խստությունները կատարվող փոփոխությունները:

Դերասանուհի Մանյա Կարախանյանը Սիրանուշի դերակատարության մասին պատմել է, որ օրորոցի տեսարանը նա սկսել է «երեսխային լուռ օրորելով, ապա շատ չանցած, ինչպես սիրում էր Սիրանուշը, քթի տակ դնալով սկսում էր ինչ-որ ժողովրդական մեղեդի, կարծես հրեխայի հետ խոսելիս լիներ: Ապա սկսում էր երգել, բայց ոչ բարձր, հետո աճում էր երգը և հանկարծ լալով՝ ընդհատում ու... նորից շարունակում՝ արցունքները կուլ տալով՝ փոխվում զուսպ հեկեկոցի»<sup>2</sup>:

Այնքան զգացմունքային է եղել Սիրանուշի կատարումը, որ թե՛ փորձերին և թե՛ ներկայացումների ժամանակ լացացրել է և՛ բեմում, և՛ դահլիճում գտնվողներին:

Կովկաս-սփյուռքահայ դերասան-ուժիտոր Բարսեղ Աբովյանն իր հուշերում պատմում է, որ երբ 1909-ին Օվի Անուժյան – Գրիգոր Ավետյան թատերախմբով հյուրախաղային ելույթներ են ունեցել Վառնայում, մեծ ցանկություն են ունեցել տեսնել այնտեղ ապրող Անդրանիկին: Այդ ցանկությունը մասամբ բխել է նրանից, որ իրենց խաղացանկում ընդգրկված է եղել նաև «Արցունքի հովիտը» պիեսը:

Այս առնչությամբ Աբովյանը գրել է. «Մենք գիտեինք, որ քաջն Անդրանիկ ապրում է Վառնայում յուր քրոջ հետ միասին: Շատ մեծ

<sup>1</sup> Ա. Ահարոնյան, Արցունքի հովիտը, Բաքու, 1907, էջ 18 (համառոտված):

<sup>2</sup> Ս. Զատիկյան, Սիրանուշ, Երևան, 1961, էջ 128:

փափագ ունեինք տեսնել այդ հերոսին՝ Սասունի կտրիճին, բայց ուր  
և երբ, ահա պատեհ ժամանակը եկավ և խուճուրդ որոշեց զնալ, գտնել  
և նրան հրավիրել թատրոն: Եվ մեր խուճուրդ որոշեց զնալ իրեն այցել-  
լուծյան և հրավիրել թատրոն:

Անդրանիկին շատ էլ կարևորություն չէին տալիս բուլղարահա-  
յերը: Ինչ հակասություն: Մենք որտեղից որտեղ եկել էինք Վառնա  
և ուզում էինք տեսնել մեր հերոսին, իսկ էստեղի հայերը կարևորու-  
թյուն անգամ չէին տալիս: Մի մարդու առաջնորդությամբ գնա-  
ցինք տեսնելու հերոս Անդրանիկին: Մեզ տարավ մի շատ աղքատ  
սրճարանի դուռը, մեզ ասաց՝ հոս սպասեցեք նայիմ թե հոս է:  
Մտավ և մի քանի վայրկյանից հետո դուրս եկավ մի միջահասակ  
մարդ հին փափախով և մեզ հետ դացող մարդը:

Մենք մոտավորապես 12 հոգի կանք դերասանուհիները մաքուր  
շտկվել են, թե ինչ է հերոսը պետք է տեսնեն: Մեր մարդը բերավ  
մեզ մոտ և ասաց – սա է ձեր փնտրած Անդրանիկը: Բոլորս հիաս-  
թափվեցինք, երբ տեսանք այն հերոսին, որի մասին՝ այնքան լսել և  
երգերն էլ երգել ենք: Ոտից գլուխ նայեցանք և մենք գտանք այն  
հերոսը, որ մենք էինք ուզում: Մեկ խոսքով ասացինք, որ մենք  
Կովկասից ենք գալիս, հայ դերասաններ ենք, եկանք ձեզ տեսու-  
թյան: Ասաց՝ շնորհակալ եմ ձեզմե, դուք հոս գալով իմ քովս, ամ-  
բողջ Կովկասը հիշեցի: Գիտեմ թե ինչ է կովկասցին, ներեցեք ինձ, որ  
տեղ չունիմ ձեզ ընդունել, մի քույր ունեմ, ան ալ հիվանդ է տանը:

Մենք շատ հուզվեցանք և մեր դերասանուհիներից շատերի աչ-  
քերից արցունքներ եկան, և երեսները դարձուցին: Անդրանիկը նո-  
րից ասաց, – ներողություն, ձեզ ոտքի վրա ընդունեցի: Մեր Սևուճ-  
յանը դառնալով հերոսին, ասաց՝ երբեք չնեղվիք, որ հնարավորու-  
թյուն չունեցաք ընդունելու, բայց մենք բոլորս մանկութենե եր-  
գում ենք ձեր հերոսական երգերը, դուք մեր սրտերի մեջ կմնաք  
անմահ հավիտյան: Ընկեր Անդրանիկ, մեր խուճուրդ ձեզ հրավիրում է  
վաղը գիշեր թատրոն և տալիս է մեկ օթյակ 4 անձի համար: Եվ այս-  
պես մենք բաժանվեցինք Անդրանիկեն շատ տխուր: Շատերը փսոս-  
ացին, բա մեր հերոսը այսպես աղբի... և մեկնեցինք տխուր...

Մյուս օրը խաղում էինք Ահարոնյանի «Արցունքի հովիտը» թա-  
տերգությունը: Տեղ կա, որ Ասլանը ասում է – դո՞ւ ես, դո՞ւ ես,  
նզովյալ գնեք<sup>1</sup>, որ իմ երազներս թունավորեցիր մանկության օրե-  
րից: Այս մենախոսությունը ասելուց հետո Անդրանիկը հանկարծ

<sup>1</sup> Բնագրում չենք: Նկատի ունի հինավուրց գղյակը:

Ղղայնանում է և բռունցքով խփում է օթյակի դռանը և վեր ցատկելով գնում է թատրոնից: Հասարակութունը հետաքրքրվում է ձայնից, թե ի՞նչ է պատահել: Հետո իմանում են, որ Անդրանիկն էր, Ղղայնացած հեռացավ թատրոնից: Մյուս օրը տեսած են մեր մի քանի դերասանները Անդրանիկին և հարցրել են, թե ինչն՞ է բարկացած հեռացել թատրոնից: Նա ասել է, — Ախպար, ա՛լ հերիք է, նորեն հին վերքերս կբանաք... և այսպես, այլևս Անդրանիկը չտեսանք»<sup>1</sup>:

Ահա, պիեսի ներգործության մի բացառիկ օրինակ ևս:

1914 թվականի դեկտեմբերի 4-ին Բաքվի Նիկիտինների կրկես-թատրոնում եկատերինա Դուբյան — Արմենյանի (Նազելի դերում) բենեֆիսին ներկայացվել է «Արցունքի հովիտը» Արմեն Արմենյանի բեմադրությամբ:

Տեղի է ունեցել բացառիկ երևույթ հայ թատրոնում: Ասլանի դերում Հովհաննես Ջարիֆյանը խաղացել է Բրիտտափոր Միքայելյանի կերպարով (գրիմով), Սուրենի դերում՝ Արմեն Արմենյանը Սիմոն Ջավարյանի կերպարով, Բաբկենի դերում՝ Վահրամ Փափազյանը Նիկոլ Դուժանի կերպարով<sup>2</sup>:

«Արցունքի հովիտը» այնպիսի հաջողութուն է ունեցել, որ Թիֆլիսի թատրոնի մի քանի դերասան մեկնելով գավառական քաղաքները, տեղի թատերասերների հետ ներկայացրել են այն:

Այսպես՝

1908-ի մայիսի 22-ին Գանձակում այն ներկայացրել են Հ. Բերոյանը, Լ. Ալավերդյանը, Վ. Մելիքյանը, Օ. Նոնիկյանը (Գուլագյանը) տեղի թատերասերների հետ:

Հուլիսի 18-ին, Կարսում՝ Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախմբի արտիստները Ամո խարազյանի ղեկավարությամբ:

Հոկտեմբերին, Կարինում, Աբելյան-Արմենյան Կովկասահայ դերասանական խմբի կողմից:

1911-ի մարտի 5-ին, Ռաշտում, թատերասերների խումբը՝ օր. Անահիտ — Հյուրի, տիկ. Կատիա — Փերի, տիկ. Լուսիկ — Նազել, Հ. Խաչատրյան — Ջիննի, Մ. Դավթյան — Ասլան:

1911-ին Թեհրանում լույս է տեսել «Արցունքի հովիտի» պարսկերեն թարգմանութունը Մատթեոս խան Մատթեոսյանի կողմից:

1911-ին խաղացվել է Գորիսում, Ամո խարազյանի խմբի և տեղական սիրողների կողմից:

<sup>1</sup> Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժին, Բ. Արուստյանի ֆոնդ:

<sup>2</sup> Արև (Բաքու) 1914, № 198, 201:

1912-ին «Արցունքի հովիտը» Քերքի (Թուրքմենստան) են հասցրել Թիֆլիսահայ դերասաններ Լևոն Մելիք-Ալալկերդյանը և Ելիզավետա Մելիք-Շահնազարյանը:

Մեծ եղևնից օրեր առաջ՝ 1915-ի մարտի 26-ին «Արցունքի հովիտը» բեմ է հանվել Նոր Զուղայի թատերախմբի ուժերով, որոնք կատարել են հետևյալ դերերը՝ Ասլան (ճամփորդ) – Արմենակ Հարությունյան, Հյուրի (նրա աղջիկը) – Դատրիկ Դավթյան, Փերի (պառավ կին) – Նեկտարինե Զորաբյան, Նազե (նրա հարսը) – Կատարինե Հարությունյան, Շողիկ (Նազեի աղջիկը) – Մերջանիկ Աբրահամյան, Բաբկեն, Սուրեն (Ասլանի ընկերները) – Կ. Հորդանանյան, Ա. Հայրապետյան, Մաննի (Զիննի – վշտահար պառավ) – Ե. Իսրայելյան, Ռես Մոնո-Հ. Աբրահամյան, Գուժկաններ-Հ. Ասլանյան, Վ. Հախվերդյան:

Նոր Զուղայում «Արցունքի հովիտն» ունեցել է այլ բեմադրություններ ևս, որոնցից հիշարժանը 1929-ի նոյեմբերի 17-ինն է, որը նվիրված է եղել Ավ. Ահարոնյանի գրական գործունեության 40-ամյակին: Բեմադրությունն իրագործել է սփյուռքահայ դերասան և ռեժիսոր Արմեն Մկրտումյանը:

1917-ին Հ. Աբելյանի ղեկավարությամբ «Գուրգեն» (ի հիշատակ պատերազմում զոհված Գուրգեն Ավան-Յուզբաշյանի) թատերախումբը կամավորների հետքերով գնալով ներկայացրել է Երևանում և Կարսում: Գլխավոր դերակատարներն են եղել Աբելյանը, Ի. Ալիխանյանը, Ա. Վրուլը, Օլգա Գուլազյանը, Ժասմենը (Մարիամ եղանյան):

«Արցունքի հովիտն» Անդրկովկասում վերջին անգամ պետք է խաղացվել 1923-ի աշնանը Բաքվի հայկական թատրոնում, Թիֆլիսի թատրոնի դերասանուհի և ռեժիսոր Օլգա Մայսուրյանի բեմադրությամբ ու Նազեի դերակատարությամբ, բայց, ըստ երևույթին չի թույլատրվել:

1919-ից «Արցունքի հովիտն» իր արչավանքն սկսել է սփյուռքահայ թատրոնում: Առաջին նախաձեռնողները և իրականացնողները եղել են Վարդիթեր և Մարի-Հրանուշ Ֆելեկյան քույրերը Պոլսի Սկյուտարի և Բերայի թատրոններում<sup>1</sup>:

1915-ի Մեծ եղևնից փրկված մի շարք թատերական գործիչներ աշխարհի տարբեր քաղաքներում թատերական օջախներ կազմակերպելով շարունակել են իրենց գործունեությունը՝ խաղացանկ մտցնելով նաև «Արցունքի հովիտը»: Այդ գաղթօջախներում կազմակերպված թատերախմբերի դերասանները, համեմատաբար, ավելի հասուն

<sup>1</sup> Վերջին լուր (Կ. Պոլիս) 1919, № 1649:

և իրենց գործում մասնագիտացած լինելով, մեծ տեղ են տվել ցեղասպանության թեմայով պիեսների բեմադրություններին: Նրանցից մեկը եղել է ռեժիսոր Վահե Մանվելյանը, որը 1921-ին «Արցունքի հովիտը» ներկայացրել է Ֆիլադելֆիայում: Այս բեմադրության մեջ Ասլանի դերը կատարել է դերասան և թատերական քննադատ Արտաշես Հացիկյանը: Ներկայացումը տեղի է ունեցել 1921-ի մարտի 19-ին:

Իզմիրի 1922 թ. հուլյն-թուրքական կռիվներից տուժած մեծ թվով հայեր փոխադրվել են արտասահմանյան երկրներ: Նրանց մեջ եղել են նաև կովկասահայ դերասաններ, որոնք մի կերպ Սալոնիկ հասնելով ցրվել են տարբեր ուղղություններով: Ֆրանսիա փոխադրված մի խումբը կովկասահայեր և պոլսեցիներ 1922-ին հունվարի 30-ին, Փարիզի Շան զ' Էլիզեի թատրոնում ներկայացրել են ժամանակի ոգուն հարազատ «Արցունքի հովիտը»: Դերակատարների թվում եղել են դերասանուհի-երգչուհի Լյուսի Սևումյանը, Լևոն Հարութը, Խաչիկ Սվաճյանը և ուրիշներ<sup>1</sup>:

Բաղաքական հողի վրա Ահարոնյանի ստեղծագործություններն արգելված են եղել Խորհրդային Հայաստանում և Ռուսաստանում: Բայց հնարամիտներ բոլոր հասարակարգերում էլ լինում են: Մոսկվայի Հայկական դրամատիկական ստուդիայում, որի ղեկավարն է եղել Սուրեն Խաչատրյանը (կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի մեծ եղբայրը), ուսումնական ներկայացումների շարքում բեմադրվել է նաև «Դեպի արևը» մեկ գործողությամբ պիեսը, որը ոչ այլ ինչ է, քան մի տեսարան «Արցունքի հովիտից» – Ասլանի վերադարձը: Այդ հատվածը ներկայացվել է 1922-ի մայիսի 30-31-ին, Խորհրդային Հայաստանի մշակույթի տանը (նախկին Լազարյան ճեմարանի դահլիճում): Դա եղել է ստուդիայի առաջին ցուցադրական աշխատանքը, որտեղ հանդես են եկել ստուդիականներ Գ. Գեղարիկը (Տեր-Գաբրիելյան) – Ասլանի, Արփիկ Մելյանը – Հյուբրիի, Անահիտ Մասչյանը – Փերիի, Սիրանուշ Թոփչյանը – Նազեի, Ա. Չոլախյանը – Շողիկի դերերում: Ներկայացման ձևավորող նկարիչն է եղել՝ հետագայում ճարտարապետ Միքայել Մազմանյանը:

«Արցունքի հովիտի» մի ներկայացում էլ տեղի է ունեցել Կոնստանցայի (Ռումինիա) Էլփիս սրահում, 1924-ի ապրիլի 13-ին, Արարտյանի բեմադրությամբ ու Ասլանի դերակատարությամբ, Հյուբրի – Վերմին Մկրտիչյան, Փերի – Արաքսի Մկրտիչյան, Ջիննի – Արշակ Մարգարյան, Ռես Մնո – Միհրան Թորոսյան<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, 1922, № 2409:

<sup>2</sup> Նոր Արշալույս (Բուխարեստ) 1924, № 203:

Հաջորդ բեմադրութիւններն իրականացվել են 1929-30 թվականներին Բուենոս Այրեսում, Օննիկ Թարագճյանի բեմադրությամբ, Հալեպում Կոստանյանների բեմադրությամբ, 1939-ին՝ Դամասկոսում:

«Արցունքի հովիտը» բեմական պատմութիւն է ունեցել նաև լիբանանահայ թատրոնում: Բեյրութի թատրոնի նշանավոր դերասան և ռեժիսոր Պողոս Մենտիլյանի բեմադրությամբ այն ներկայացվել է 1943-ին, Սինեմա Քրիստալում, ուր Ասլանի դերակատարն է եղել դերասան-լուսանկարիչ Սամվել Խանդիկյանը: Մեկ տարի անց, Մենտիլյանն ինքն է խաղացել Ասլանի դերը՝ խաղընկերներ ունենալով Կայծակ Գնդունուն, Էդուարդ Օհանյանին, Հրանդ Շիրինյանին, Դավիթ Էվերեկլյանին և ուրիշներին:

Մեծ եղեռնի 50-ամյակի շրջանում Մենտիլյանի գործը շարունակել է նրա կրտսեր գործընկեր՝ դերասան, դրամատուրգ, ռեժիսոր և թատրոնի պատմաբան Դավիթ Էվերեկլյանը: Վերջինիս բեմադրությամբ «Արցունքի հովիտը» ներկայացվել է 1965-ի մարտի 20-ին Սեն ժոզեֆ սրահում, «Պեյրութահայ քուլիսականներու» թատերախմբի ուժերով: Բեմադրութիւնը հովանավորել է լիբանանցի հայասեր արաբ բանաստեղծ Սաիա Աիլին, որը ներկայացման միջնաբարին ջերմ խոսքեր է ասել տոկուն և աշխատասեր Հայերի մասին: Հայության անունից նրան հայերեն և ֆրանսերեն լեզուներով շնորհակալության խոսք է ասել հայոց եղեռնի մասին բազմաթիվ գործերի հեղինակ Վազգեն Այգունին:

«Արցունքի հովիտը» ներկայացվել է նաև ապրիլի 10-ին Բեյրութի Վիեննական Մխիթարյան երկրորդական վարժարանի սրահում, ուր բանախոսությամբ, արտասանությամբ ու երգով հանդես են եկել Գրիգոր վարդապետ Հեպոյանը, Վարդան վարդ. Աշգարյանը, Վազգեն Այգունին, ասմունքող Խաչիկ Արարատյանը, երգչուհի Արփինե Փեհլիվանյանը:

Ներկայացման մեջ զբաղված են եղել՝ Դավիթ Էվերեկլյանը – Ասլան, Թերեզ Ճապրայանը – Հյուբի, Բերկրուհի Էվերեկլյանը – Փերի, Ռոզիկ Էվերեկլյանը – Շողիկ, Հովհաննես Տեր-Գալուստյանը – Ա. գեղջուկ և Գուժկան, Նսայի Խաչատուրյանը – Սուրեն և Բ. գեղջուկ, Գարեգին Փանոսյանը – Ջիննի, Եփրուհի Տեր-Գալուստյանը – Նազե, Ռուբեն Էսկիճյանը – Ռես Մնո, Մարտիրոս Ճապրայանը – Բաբկեն, Եղիա Պերեճիլյանը – վիրավոր գեղջուկ և Գուժկան: Խաղացվել է նաև տարբեր թատերասրահներում, չորս անգամ:

Լիբանանյան պատերազմի շրջանում մի խումբ թատերական գոր-

ծիչներ փոխադրվել են այլ երկրներ: Էվերեկլյանն իր գործունեությունը շարունակել է Մոնրեալում (Կանադա): 1980-ի մայիսի 3-4-ին «Արցունքի հովիտը» նա բեմադրել է տեղի «Արմենյան» թատերախմբում, միաժամանակ կատարելով Ասլանի դերը:

Ապրիլյան եղեռնի 65-րդ տարելիցի առթիվ տրված այս ներկայացման մուտքը եղել է անվճար՝ ի նշան խորին հարգանքի մեր նահատակների հիշատակին:

Հայոց ցեղասպանության թեմային նվիրված պիեսների բեմադրությունների պատմության մեջ «Արցունքի հովիտը» թերևս ամենաշատ վայրերում արցունքներ խլած գործերից մեկն է, կթև ոչ միակը:

«Արցունքի հովիտը» բեմադրություններ է ունեցել նաև Շուշիում և Վերին Ագուլիսում (1908), Բաթումում (1909), Մոզդոկում և Գրոզնիում (Հյուսիսային Կովկաս, 1911), Դիլիջանում (1913), Ալեքսանդրապոլում (Գյումրի, 1915), Պրովիդենսում (1934), Աբադանում (Իրան, 1956): Վերջին բեմադրությունը կայացել է 1990-ի հոկտեմբերի 10-ին, Քվեբեկում, առանձին տեսարաններ Դ. Էվերեկլյանի ղեկավարութայամբ:

«Արցունքի հովիտից» հետո Ա. Ահարոնյանը գրել է «Ուխտվածներ» ևրեք գործողութայամբ դրաման: Թեմատիկ առումով սրանք նույն իրականության տարբեր էջերի պատկերներ են առանց կրկնության՝ արևմտահայության տառապանքները թուրքական բռնապետության պայմաններում:

Եթե «Արցունքի հովիտում» Ահարոնյանը պատկերել է արդեն կատարվածն ու նրա հետևանքները, ապա «Ուխտվածներում» տվել է նոր՝ սպասվելիք կատարվելիքը, որի պատճառով վերջինիս գործող անձինք նոր են ընկնելու «Արցունքի հովտի» իրենց բախտակիցների օրը:

«Ուխտվածներում» այնքան է սրվում կացությունը, որ թուրքերի կողմից հայաժանք-սպառնալիքների տակ հայ աշխատավոր մարդը հարկադրված է լինում ընտանիքի կյանքը փրկելու համար թողնել հայրենի տունն ու տեղը և անհույս բռնել գաղթի ճամփան՝ թե ո՞ւր, ոչ ոք չի կարող բացատրել, որովհետև ամբողջ շրջապատը նույն վիճակի մեջ է:

Պիեսի գլխավոր հերոսը՝ աշխատավոր գյուղացի Գրիգոր ամին գավակների, հարսների, թոռների հետ, իր աշխատանքից ու ապրուստից գոհ, ապրում է ընտանիքի հետ: Հարազատներին կորցրած թափառական ուսուցիչը տեղից-տեղ շրջելով, բարի հույսեր է ներշնչում նրանց: Բայց հային ո՞վ է հանգիստ ապրելու հնարավորու-

թյուն տվել: Նորից գլուխ է բարձրացնում գուլումը՝ կոտորածը, արյունահեղությունը, լացն ու կոծը: Կյանքները փրկելու համար անտեր թողնելով հարազատների գերեզմանները, նրանք չվում են ով ուր կարող է:

Այս պիեսում առկա է նաև մի սիմվոլիկ կերպար՝ Սևազգեստ կինը կամ Վիշտը, որը ողբում է տարաբախտ հայության վիճակը:

«Ուխտվածները» առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1910-ի հունվարի 25-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայոց դրամատիկական ընկերության խմբի ուժերով, դերասանուհի և ռեժիսոր Օլգա Մայսուրյանի կողմից: Ինքը՝ Մայսուրյանը կատարել է Սևազգեստ կնոջ դերը: Մյուս դերերը կատարել են՝ Գրիգոր ամի - Արշավիր Շահխաթունի, Մարթա - Ջաբել, Մեծ հարս - Վարվառե Մելիքյան, Հրաչ - Հասմիկ (Հակոբյան), Ծովիկ - Օլգա Գուլազյան, Թափառական ուսուցիչ - Իսահակ Ալիխանյան, Ա. թաղող - Արշակ Հարությունյան, Ճգնավոր - Լևոն Ալավերդյան, Ա. գյուղացի - Հ. Չիլինգարյան, Ծերունի ժամհար - Վարդանյան:

Կրկնությունը՝ փետրվարի 25-ին, Թափառական ուսուցչի դերը կատարել է Հովսեփ Ոսկանյանը<sup>1</sup>: Այս նույն կազմով խումբը փետրվարի 26-ին ելույթ է ունեցել Ալեքսանդրապոլում (Գյումրի):

Ահարոնյանի «Ուխտվածները» դրաման տեղ է գտել նաև Սիրանուշի ղեկավարությամբ Կ. Պոլսում գործող «Նոր բեմ» թատերախմբի խաղացանկում: Առաջին անգամ խաղացվել է 1910 թ. փետրվարի 19-ին, Վարիեսեի թատրոնում<sup>2</sup>:

Այս առնչությամբ երկու խոսք Սիրանուշի ղեկավարությամբ գործող «Նոր բեմ» թատերախմբի մասին, որ ծնունդ էր առել 1908-ի Օսմանյան Սահմանագրությունից հետո: Դա ոչ թե արտոնություն, այլ զիջումներ էր տեղի փոքր ազգությունների համար:

Թիֆլիսի «Գեղարվեստ» հանդեսի գրական-գեղարվեստական քրոնիկոնից տեղեկանում ենք, որ Պոլսում ռուսերեն հրատարակվող «Ստամբուլսկիե նովոստի» (Ստամբուլյան նորություններ) թերթում Մ. Ս-ի-ի «Կ. Պոլսի թատրոնները» վերնագրով հոդվածում, հեղինակը խոսելով թուրքական մայրաքաղաքում արվող ներկայացումների մասին, գրել է. «Թատրոն, բառի բուն նշանակությամբ, որպես դրամատիկական արվեստ, Կ. Պոլսում գոյություն չունի:

Բացի արի. Սիրանուշի հայկական խմբից, մնացած բոլոր ներկա-

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1910, № 18:

<sup>2</sup> Ազատամարտ (Կ. Պոլիս) 1910, № 31:

յացումները, ինչպես առհասարակ լինում է կուլտուրապես ետ մնացած երկրներում, ծառայում են լոկ զվարճության և ստիպված հարմարվում ժողովրդի ճաշակին:

Դրամատիկական արվեստի մեջ առաջնության դասիններն անպայման պատկանում են այդ տաղանդավոր հայ դերասանուհուն իր գեղեցիկ խմբով: Տիկին Սիրանուշը շարունակում է ավանդական սովորությունն այն հայ դերասանների, որոնք դարձան Թուրքիայում դրամատիկ արվեստի հիմնադիրները: Առաջին թուրքական թատրոնը հիմնել են հայերը, իսկ նրա սկզբնական խմբերը կազմված են եղել բացառապես հայերից»<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս հոգեվածագիրը պատահական լրատու չի եղել, այլ հայ և թուրք թատրոնների պատմությանը լավատեղյակ անձնավորություն: Իսկ ի՞նչ էր մնում անել թուրքերին, հայության հետ վերացնել նաև հայկական մշակույթը:

Սիրանուշի կազմակերպած «Նոր բեմ» թատերախմբում ընդգրկված են եղել պոլսասայ և կովկասահայ դերասաններ, որոնք էլ, առաջին անգամ պոլսահայությանը ծանոթացրել են դրամատուրգ Ահարոնյանի հետ: Այսպիսով, «Ուխտվածները» դերակատարներն են եղել՝ պոլսահայ դերասաններ Վահրամ Փափազյանը (Թափառական ուսուցիչ), Ա. Առաքելյանը (Հրաչ), Բնար Սվաճյանը (Նազե), կովկասահայերից՝ Հովհաննես Ստեփանյանը (Գրիգոր ամի), Ազնիվ Անդրանիկը (Մարթա), Համբարձում Սանթուրճյանը (Ա. թաղող), Ավետ Ազյանը (Ծերունի ժամհար) և ուրիշներ: Սևագրեստ կնոջ փոքրիկ, բայց ազդեցիկ դերը կատարել է Սիրանուշը:

«Ուխտվածներ» պիեսն այնպիսի ընդունելություն է գտել հայ հասարակության մեջ, որ 1910-ական թթ. դարձել է ամենատարածված գործը Անդրկովկասում և նրանից դուրս գործող թատերական կյանքում, ինչպես՝ Հյուսիսային Կովկասում, Անդրկասպյան երկրամասում (Միջին Ասիայում), Իրանում, Թուրքիայում և այլ վայրերում:

Միայն 1910-1911 թատերաշրջանում «Ուխտվածները» բեմադրվել է 1910-ին՝

մարտի 13-ին, Կարսում, Վարդան Միրզոյանի (Գրիգոր ամի) կողմից,

հունիսի 13-ին, Իզդիրում, Լևոն Ալավերդյանի (Գրիգոր ամի) կողմից,

<sup>1</sup> Գեղարվեստ (Թիֆլիս) 1909, № 3, էջ 157: (Տե՛ս, նաև Тифлисский листок (Թիֆլիս) 1910, № 61):

Հուլիսի 16-ին, Շուշիում, Հ. Չիլինգարյանի (Գրիգոր ամի) կողմից,

սեպտեմբերի 16-ին, Բաքվում, Նիկողայոս Հովհաննիսյանի (Գրիգոր ամի) կողմից,

սեպտեմբերի 26-ին, Գանձակում, Անդրանիկի (Սողոմոնյան, Գրիգոր ամի) կողմից,

Հոկտեմբեր-դեկտեմբերին, նույնի ղեկավարութեամբ և Ազնիվի (Մարթա), Իսահակ Ալիխանյանի (Թափառական ուսուցիչ) մասնակցութեամբ Միջին Ասիայի Կրասնովոդսկ, Աշխաբադ, Մերվ (Մարի), Սամարղանդ քաղաքներում:

1911-ին՝

փետրվարի 6-ին, Երևանում, Դավիթ Դավիթխանյանի (Գրիգոր ամի) կողմից,

Հուլիսին, Գանձակում և Գետաշեն գյուղում, Գ. Քոչարյանի (Գրիգոր ամի) կողմից,

Հոկտեմբերին, Նուխիում (այժմ՝ Շաքի), Անդրանիկի և Հմայակ Շահենի կողմից:

Նույն 1911-ի ապրիլին, Թիֆլիսահայ՝ Մայսուրյան-Ջարիֆյան Թատերախումբը ներկայացրել է Թավրիզյան հյուրախաղերի ժամանակ:

Մինչև 1917 թվականը, «Ուխտավաճները» կովկասահայ թատրոններում բեմադրվել է Ախալցխայում, Թիֆլիսում, Երևանում, Բաքվում (1915-ից տուժած գաղթականների օգտին), իսկ 1917-ին՝ Թիֆլիսում, Հավլաբարի «Արևմտահայ թատերախմբի» (փախստական արևմտահայերի) կողմից, Ա. Սեմերճյանի բեմադրութեամբ, Երևանի համանուն թատերախմբում՝ Լևոն Հարութի (Հարությունյան) բեմադրութեամբ:

«Ուխտավաճների»՝ մեզ հայտնի վերջին բեմադրությունը կայացել է 1932-ի դեկտեմբերի 19-ին, Բուխարեստի «Երևան գեղարվեստաարհեստի միություն» թատերասերների ուժերով, Կոպեռնիկ Սեմերճյանի ղեկավարութեամբ, «Թատրոն-Երևանում»:

«Ուխտավաճների» հաճախակի բեմադրությունների համար որպես ընդհանուր գնահատական, հետաքրքիր կարծիք է թողել Թիֆլիսի «Կովկասի լրագրեր» թերթի թատերախոս Սափսարը (Սարգիս սարկավազ Երզնկյան): Թիֆլիսի Զուբայովի անվան ժողովրդական տանը՝ Հայոց Դրամատիկական ընկերութեան դերասանական խմբի կողմից 1912-ի նոյեմբերի 8-ի ներկայացման առթիվ նա գրել է. «Ահարոնյանին ճանաչում ենք բոլորս: Նրա գրվածքների մնայուն մասը

պատվում է արևմտյան եղբայրների տանջանքների, հարստահարութիւնների, ավարի շուրջը: Զուլումի երկիրը, ինչպես անվանում է նրան Ահարոնյանը, այդ երկրի մի բուռն աշխատավոր գյուղացիութիւն վիշտը, լացն ու կոծը այնպիսի մեծ ազդեցութիւն է ունեցել մեր երգչի հոգու վրա, որ նա չբավականանալով իր գողտրիկ վեպերի մեջ այդ բոլորը երևան հանելուց, ցանկացել է նաև կենդանի պատկերներով ազդել հասարակութիւն վրա»:

Իսկ թե ինչպիսին են եղել այդ պատկերները, թատերախոսը միանալով պիեսի հեղինակի գաղափարախոսութիւնը, մեկիկ-մեկիկ բացատրել է՝ «Տաճկաստանում դարեր շարունակ կոտորել են՝ տանջել, չարչարել, անպատվել կույսերին, կենդանի թաղել անմեղ մանուկներին... իր կյանքի և գույքի համար ոչ մի ապահովութիւն չունեցող հայ ժողովուրդը տասնյակ տարիներ շարունակ ենթակա այդ պարբերական արհավիրքներին՝ թողնում է հայրենի տունը, պապական օջախն ու իր հարազատների վշտահար շիրիմները և չվում օտար աշխարհ, օտար հորիզոններ նոր կյանքի վարդադուլն արշալույսը փնտրելու»<sup>1</sup>:

Իրականութիւնն իրեն իսկական դնահատականով նկարագրող այս մի քանի դիպուկ պատկերը հսկայական ուսումնասիրութիւն համարժեք ստեղծագործութիւն է, որի տակ յուրաքանչյուր ազատամիտ մարդ կարող է ստորագրել իբրև բողոքի ձայն ուղղված բոլոր տեսակի բռնութիւնների, կողոպտիչների, սպանութիւնների կազմակերպողների, խաղաղ բնակիչներին իրենց բնակարաններում վառողների ու ոչնչացնողների դեմ:

Եվ այս գաղափարախոսութիւնը հրապարակ է հանվել մինչև 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնը, ապացուցելով, որ թուրքական սուլթանիզմը ուրիշների հաշվին ապրելով, աստիճանաբար արմատախիլ է արել նրանց, հետքը կորցրել: Բոլոր այդ եղեռնագործութիւնները կատարվել են ծրագրված կարգով, որտեղ մասնակի, որտեղ մասսայական կոտորածներ սարքելով: Այս բոլորը կուտակվելով, իր գագաթնակետին հասավ 1915-ի ապրիլի 11/24-ին, ամբողջ Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի տարածքով մեկ, իր հետ ներառելով նաև Վասպուրականի իրանական մասը, արևելահայաստանի որոշ շրջաններ:

Այսօր ո՞ր արգարամիտ թուրքը կարող է ժխտել անցյալի այդ իրողութիւնը: Միայն նա, ով իր պապերի հավատարիմ հետևորդն է և շարունակում է նրանց քաղաքականութիւնը: Տցուն օրինակը

<sup>1</sup> Կովկասի լրագրեր (Թիֆլիս) 1912, № 13:

Հայ խմբագիրը և հրատարակախոս Հրանդ Տինքի՝ կազմակերպված սպանությունն էր Ստամբուլում, օրը ցերեկով, հասարակություն ներկայությունը, 2007-ի հունվարի 19-ին:

Ավետիս Ահարոնյանի դրամատիկական ժառանգությունից բացի, ցեղասպանության թեման իր արտահայտությունն է ստացել նաև նրա արձակում: Գեղարվեստական գրականության մատչելիությունն ու թեմաների գրավիչությունը նպաստել են նրա արձակ գործերի բեմականացմանն ու բեմադրությունը տարբեր երկրների հայկական թատրոններում:

Առաջին գործը, որ բեմական կյանք է մտել Ահարոնյանի արձակ երկերից, եղել է «Արյունոտ թթխմորը»: Այն ներկայացվել է 1906-ի հունիսի 29-ին Ֆիլիպի (Պոլիպիլ, Բուլղարիա) «Երգեցիկ – թատերասեր» երկսեռ խմբի կողմից: Սկսնակ դերակատարների թերությունների կողքին, մամուլի վկայությունը, «աչքի են ընկել» Հայրոյի, Քահանայի, Բաբիկի, Մատնիչի, Թորոս էմի թաթուլի դերակատարները<sup>1</sup>: Կանացի կերպարներն են եղել Նարգիզը – Մատնիչի կինը և Սոնան: Քյուրզ բեկի դերակատարը քրդի սպավորությունն էր թողել, խմբապետը ծանրաբարո չի եղել, Կրպոն – միօրինակ և այլն: Անհայտ թատերախոսը ոչ մի դերակատարի անուն չի հիշատակել: Գուցե դա նրանից է, որ խաղը թույլ է եղել և ցանկալի սպավորություն չի թողել: Բայց երիտասարդ թատերասերներից ավելին պահանջելն այնքան էլ մեղադրելի չպետք է համարել: Կարևորը ցանկությունը և նրա իրագործումն է եղել:

«Արյունոտ թթխմորը» հետագա տասնամյակներում ևս երևացել է թատերաբեմերի վրա: Բեյրութահայ թատերական գործիչ Կարո Խաչատրյանի բեմականացումով այն դարձել է երեք գործողությունը պիես և բեմադրվել 1959-ի մայիսի 6-ին, Բեյրութի Նորաշեն թաղամասի «Ազատամարտ» ակումբի վարչության «Շահխաթունի» թատերախմբի կողմից «Ազատամարտ» թատերասրահում<sup>2</sup>:

Մի այլ բեմադրություն էլ կայացել է 1981-ի մարտի 3-6-ին Թեհրանի «Հրազդան» Մարզամշակութային միությունից սրահում: Բեմադրողը եղել է էդիկ Դավթյանը, օգնականը՝ Արմիկ Նիսիյանը: Ներկայացմանը զբաղված են եղել 16 դերակատար, այդ թվում՝ Արիս Բաղումյանը, Բելլա Սարգսյանը, Արմինե Միրզախանյանը, Սեդիկ Պողոսյանը, Նոյեմիկ Խուզարախչյանը, Ռիմա Մադաթյանը, Ժորա Շահբաղյանը, Հմայակ Բաղրամյանը և ուրիշներ:

<sup>1</sup> Ռազմիկ (Ֆիլիպի) 1906, № 70:

<sup>2</sup> Ազգակ (Բեյրութ) 1959, № 49:

Ներկայացումից առաջ հանդիսատեսներին ծանուցվել է, «որ թատերգությունը ենթարկված է որոշ փոփոխությունների, որպեսզի ավելի ճշգրիտ կերպով արտացոլվեր հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ի նկատի առնվեն դասակարգային հակամարտությունները, որոնց անտեսել է դրողը»: Արտասանվել է Միքայել Նալբանդյանի «Երգ ազատության» բանաստեղծությունը<sup>1</sup>:

Արձակից բեմականացված երկրորդ գործը «Ազատության ճանապարհին» երկն է: Ունեցել է մի քանի բեմականացում ու բեմադրություն: Ղարիբի (Ա. Ահարոնյան) «Ազատության ճանապարհին» պիեսն առաջին անգամ ներկայացվել է 1907-ի դեկտեմբերի 28-ին Սենթրըլ Ֆոլսոմ (Ամերիկա): Ներկայացումը կազմակերպվել է Սուրսուրի (Արևմտյան Հայաստան) Ուսումնասիրաց ընկերությունը<sup>2</sup>:

«Ազատության ճանապարհին» երկը բեմականացնողներից է եղել նաև եգիպտահայ գործիչ Ղազար Բոլատը: Նրա մշակած տարբերակը կրել է «Կյանքի ճամբին» վերնագիրը և այդ անունով ներկայացվել է 1916-ի աշնանը, Կահիրեում<sup>3</sup>:

Ահարոնյանի այս աշխատանքը պիեսի է վերածել նաև իրանահայ դերասան և ռեժիսոր Գևորգ Նուբարյանը: Նրա բեմականացումն էլ ունեցել է «Մեր ժողովուրդը ինքը» անվանումը: Քանի որ այս երկի բեմականացրած տարբերակների մասին բավարար տվյալներ չկան, գոնև անհայտ են մեզ, պատկերացում ունենալու համար ծանոթանանք գործող անձանց և նրանց դերակատարներին: Ասենք, որ «Մեր ժողովուրդը ինքը» պիեսը բեմադրվել է 1981-ի ապրիլի 29-ին Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության Արվեստից միություն թատերական բաժանմունքի նախաձեռնությամբ:

Պիեսը բեմադրել և Խայի դերակատարն էլ եղել է ինքը՝ Գևորգ Նուբարյանը: Երաժշտության համար օգտագործվել են Լորիս Ճգնավորյանի, Կոմիտասի և Հ. Հովհաննիսյանի երաժշտական կտորներից, որոնք համադրել է Այիդա Չեմրազը: Ներկայացման մասսայական տեսարաններին մասնակցել են Արարատի միութենական անդամները, որպես հուղարկավորողներ և քրդեր:

Մասնակիցների մասին ասենք, որ, ինչպես ընդունված է շատ վայրերում ներկայացնել ըստ «մուտքի հերթականության», այստեղ էլ հետևելով նրանց սկզբունքին, ներկայացնում ենք այնպես, ինչ-

<sup>1</sup> Փյունիկ (Թեհրան) 1981, № 11:

<sup>2</sup> Հուշարար (Թիֆլիս) 1908, № 13, էջ 232:

<sup>3</sup> Հուսարեր (Կահիրե) 1929, № 89:

պես նշված է մեր ձեռքի տակ եղած ծրագրում: Տեր Սարգիս-Վարդգես Բաշյան, Թաթուլ - Ռազմիկ Շահվալադյան, Ծնողները՝ Աղուշ Լալայան և Հայկ Եղիազարյան, Հաքքի բեգ - Վարդան, Տիրուհի - Աղուշ Լալայան, Գոհար-Մարո Սարգսյան, Գյուղացի-Սերգեյ Շահվերդյան, Մելիք - Հովիկ Ղազիխանյան, Ռես Գևո - Հայկ Եղիազարյան, Քյուրդ - Վահրիկ Միրտչյան, Մարե - Կիտուշ Արզույան, Երեխաներ - Թալին և Մինե Տեր-Գրիգորյաններ, Թորոս - Արա Զարգարյան, Զինվոր - Հրաչ Մանսուրյան, Սպա - Գևորգ Վարդանյան, Նազո - Դեզիրե Բաղդասարյան, Հայրո - Արա Աբրահամյան, Միքո - Հարութ Նազարյան:

Սրանցից Վ. Բաշյանը և Կ. Արզույանը երկար տարիների վաստակաշատ դերասաններ են ու բեմադրիչներ, իսկ Ա. Լալայանը փորձառու և շնորհալի դերասանուհի: Բեմադրողի հետ այս եռյակը երիտասարդներին ուղղութուն տալով պետք է, որ մեծապես նպաստած լինեն բեմադրութայն գտած Հաջողութայնը:

«Մեր ժողովուրդը ինքը» տարբերակով «Ազատութայն ճանապարհին» երկը մի բեմադրութուն էլ Նոր Զուգայում է ունեցել: Տեղի Հայ Մշակութային միութայն և «Սասուն» գրական միութայն «Ա. Ահարոնյան» թատերախմբի նախաձեռնութայնամբ այն բեմադրել է երիտասարդ դերասան և ռեժիսոր Զարեհ Թորոսյանը: Առաջին ներկայացումը կայացել է 1984-ի հունվարի 24-ին: Դերերի կատարմամբ հանդես են եկել Զ. Թորոսյանը, Վահրիկ Գրիգորյանը, Լինա Դավթյանը, Զեփյուռ Մարգարյանը, Սամիկ Պողոսյանը, Արմեն Բաբումյանը, Ալֆրեդ Ղարախանյանը, Վիդեն Մովսիսյանը, Հռիփսիմե Սիմոնյանը, Ալինա Այվազյանը<sup>1</sup>:

Ահարոնյանի արձակից բեմականացված ու բեմադրված գործերից մեկն էլ հանդիսացել է «Վազրիկը»: Առաջին բեմականացնողը եղել է սփյուռքահայ անվանի դերասան-դրամատուրգ-ռեժիսոր Մանվել Մարությանը, իսկ բեմադրողը՝ իրանահայ թատրոնի դերասան-ռեժիսոր Վաչե Ատովյանը: Ներկայացումը տեղի է ունեցել 1961-ի մայիսի 5-ին, Թեհրանի Հ. Մ. «Արարատ» կազմակերպութայն սրահում: Բեմադրութունը նվիրվել է Վասպուրականի հերոսամարտի 46-րդ տարելիցին: Մոր դերակատարն է եղել Ժ. Շաֆրազյանը:

«Վազրիկն» իրանահայ թատրոնում երկրորդ անգամ բեմականացրել է Ալբերտ Մինասյանը: «Վազրիկն» այս նոր տարբերակով բեմադրվել է 1975-ի ապրիլի 16-ին, Ահվազում, ապրիլյան սգատոնի 60-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառմանը: Բեմադրել է

<sup>1</sup> Լ. Գ. Մինասյան, Նոր Զուգայի թատրոնը, Նոր Զուգա, 1995, էջ 78-79:

էդուարդ Բաբուլյանը՝ «Բաֆֆի» ուղեցույց դպրոցի ուսուցչական կազմի ուժերով: Դերակատարներից են եղել՝ Ռուբինա Բարսեղյանը (Մայր ?), Ռոբերտ Զորգենը, Եփրեմ Ազիզխանյանը, Վազրիկ Իսրայելյանը, Անդրե Թորոսյանը<sup>1</sup>:

Ահարոնյանի ծննդյան 100-ամյակի առթիվ, Թավրիզի միջնակարգ դպրոցի նախկին սաների միության գրական խմբակի կողմից միութենական՝ գրող Կոլիա Տեր-Հովհաննիսյանի ղեկավարութեամբ, 1964-ի մայիսի 29-ին ներկայացվել է «Խալը» վերնագրով բեմականացված մի գործ: Դա ոչ այլ ինչ է, քան Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» երկից մի տեսարան, ուր դերերի կատարմամբ կուլյիսներ են ունեցել Ներսիկ Գրիգորյանը – Խայր, Անդրանիկ Մելիքյանը – Մելիքի, Անդրանիկ Ալեքսանյանը – Ռես Գևորգի դերերում և ուրիշներ<sup>2</sup>:

Վերոհիշյալ բեմականացումները միասին վկայում են Ահարոնյանի արձակի դրամատիկական հագեցվածությունը, որը թատերական գործիչներին հնարավորություն է տվել ոչ միայն բեմականացնել որոշ գործեր, այլև ներկայացնել իբրև հոգեբանական դրամատիգ՝ մով լեցուն ստեղծագործություններ և նվաճել հանդիսատեսի համակրանքը:

Արևմտահայության կրած տառապանքների արտացոլումն է տրվել նաև Վ. Սահառունու «Կարմիր մարդը» դրամայում: Պիեսի առաջին բեմագրությունը կայացել է 1908-ի հունվարի 14-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերություն թատրոնում: Այն բեմադրել է դերասան Արշակ Հարությունյանը՝ իր բեմնաֆիսին: Բազմամարդ է եղել այս պիեսը՝ 17 կերպար-դերակատարով: Նշենք՝ մի քանիսին՝ Բեկ-Արշակ Հարությունյան, Գյուլի-Արաքս Զարիֆյան, Կին-Վարվառե Մելիքյան, Ներքնապետ-Դավիթ Դավիթխանյան, Տանուտեր-Արամ Վրույր, Գզիր-Արշակ Մամիկոնյան, Ալմաստ-Օլգա Գուլագյան, Պայծառ-Հասմիկ, Երիտասարդ-Հովհ. Զարիֆյան և ուրիշներ:

Պիեսը թույլ լինելով, այլևս չի խաղացվել<sup>3</sup>:

Իրական կյանքի պատկերներ է տվել նաև Ատրպետը (Սարգիս Մուբայաջյան), նշանավոր «Տժժիկի» հեղինակը: Նրա գրած պիեսի վերնագիրն է «Վրիժառուներ»: Հինգ գործողություններ այս պիեսի բացատրականում Ատրպետը գրել է. «Թրքահայերի ժամանակակից 1907/08 թթ. կյանքից»: Պիեսը գրել է 1912-ին Թիֆլիսում:

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1975, № 93:

<sup>2</sup> Ալիք (Թեհրան) 1964, № 123:

<sup>3</sup> Մշակ (Թիֆլիս) 1908, № 11:

«Վրիժառուների» գործողութայան վայրը էրզրուսն է (Կարինը): Ընդգրկված են Հայ ընտանիքներ, Հայ և թուրք կրոնական գործիչներ, թուրք ոստիկաններ, զինվորներ: Կյանքի դաժան հարվածների տակ Սեդրակ Մախաթյանը դառնում է դավաճան, բանտարկվում, ազատ արձակվում, բայց խղճի խայթը նրան հանգիստ չի տալիս. մեղքը քափելու համար կյանքին վերջ է տալիս:...

Թեև 1908-ի Օսմանյան սահմանադրութունը ազգային փոքրամասնութուններին ազատ գործելու հնարավորութուն տվեց թուրքիայում, բայց դա ժամանակավոր պատրանք էր: Հարմար առիթն օգտագործելով արևմտահայ և արևելահայ մտավորականութունը որոշ նվաճումներ ձեռք բերեց գրականութայն և արվեստի ասպարեզներում, մասնավորապես լրագրութայն հնարավորութունների ընդարձակումով՝ կարծես թե կենդանացավ մշակութային կորուսյալ մթնոլորտը, բայց իսկույն հուսախաբ եղան:

Սահմանադրութունից երկու ամիս անց, 1908-ի օգոստոսին քսանամյա Վահրամ Փափազյանը ներկայացրեց իր առաջին Օթելլոն, որին հաջորդեցին Կորրադոն, Քինը, Համլետը և ուրիշներ: «Օթելլոյի» ներկայացման օրը թատրոնի բարոյական նշանակութայն մասին հետաքրքիր դասախոսութուն է կարդացել բժիշկ-բանաստեղծ Ռուբեն Սևակը<sup>1</sup>:

Ենովք Շահենն իր նման երիտասարդ իսանդավառ դերասաններ Աշոտ Մատաթյանի, Նշան Հովհաննիսյանի և ուրիշների հետ կազմակերպել է «Ազատ բեմ» թատերախումբը, նոր հոսանք մացրել թատրոն, բայց ինչ իմանար, որ այդ բոլորը շատ կարճ կյանք պետք է ունենար:

Այդ շրջանում կազմակերպվեց և իսկույն վերացավ Պոլսահայ առաջին թատերական ընկերութունը:

Մինչև Արևմտյան Հայաստանում և թուրքիայի հայաշատ վայրերում կկազմակերպվեին տեղական թատերախմբերը, 1908-1909 թատերաշրջանում կովկասահայ Աբելյան-Արմենյան թատերախումբը ներկայացումներով հանդես է եկել Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում և Կ. Պոլսում: Նրանց հաջորդել են Ավետյան-Սևուկյան (1909), Զարիֆյան-Սևուկյան (1914) կովկասյան թատերախմբերը՝ տասնամյակներով հայկական թատերական միջոցառումներից զրկված հայրենակիցներին ցուցադրելով ազգային և թարգմանական դրամատուրգիայի լավագույն գործերը:

<sup>1</sup> Արևիկ (Կ. Պոլիս) 1908, օգոստոսի 22:

“ Կովկասահայ թատերախմբերի, նրանց բեմադրությունների մասին դրվատական թատերախոսականներ են գրել Գրիգոր Զոհրապը, Վահան Թեքեյանը, Հակոբ Սիրունին, Ենուք Արմենը, Երվանդ Թուլայանը (Կավոռ) և շատ ուրիշներ:

Պոլսահայ աղաներն սպասել են, որ իրենց տոմսակ ուղարկեն, մինչդեռ Արևելյան-Արմենյան թատերախմբի ներկայացման հայտարարություն մեջ գրվել է. «Ոչ ոքի տոմսակ չուղարկվիր»: Եվ եթե առաջին՝ «Պատվի համարի» ներկայացմանը դահլիճը կիսադատարկ է մնացել, ապա հաջորդ օրերին լսի-լեցուն է եղել:

Դերասան Երվանդ Թուլայանն Արևելյանի մասին իր հուշերում այսպիսի տողեր է գրել. «Արևելյանն այնպես գերազանցեր էր ինքզինքը, որ երկրորդ արարի միջնարարին Գրիգոր Զոհրապն օթյակեն բեմ ցատկելով՝ ճառ մը ըսեր էր, պախարակելով պոլսահայ առաջնակարգ հասարակությունը, որ չէր եկած տեսնելու այս առաջնակարգ խումբը, որ կմրցեր փարիզյան ամենևն նշանավոր խումբերուն հետ»<sup>1</sup>:

«Պատվի համար» ներկայացման առթիվ արտահայտվել է նաև Զոհրապը: Նա թեև քիչ է անդրադարձել ներկայացումների գնահատությունը, բայց Սիրանուշի (1893), Արևելյանի (1908) մասին խրատուսական տոնով գրած հոգվածները շատ արժեքավոր են և ուսանելի հայ արվեստի պատմության ուսումնասիրության համար:

1908-ի ամռանը հուշակված Օսմանյան նոր սահմանադրությունում ազգային փոքրամասնություններին որոշ արտոնություններ «չնորհած» Թուրքիան, տարին չլրացած, 1909-ի ապրիլին կազմակերպել է Ազանայի հայերի ջարդը՝ որի ընթացքում 11.000 հայ է զոհվել: Այդ ահավոր կոտորածի մասին ահա թե ինչ է գրել անանուն հեղինակը (թերևս Կարապետ անունով) իր «Ատանայի կոտորածը» վեց քառյակով բանաստեղծության մեջ.

Երեք օր գիշեր, կրակը մեջեն,  
Թշնամվուն սուրբ, գնդակը դուրսեն,  
Ջնջեցին Հայը երկրին երեսեն  
Արյուն կվազե մեր ջինջ գետերեն<sup>2</sup>:

Ի նշան այդ ոճրագործության դատապարտման, Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության թատերախմբի առաջնակարգ դերասանուհի Օլգա Մայսուրյանը 1909-ի հոկտեմբերի 12-ին Արտիստա-

<sup>1</sup> Հովհաննես Արևելյան, ժողովածու, Երևան, 1965, էջ 141:

<sup>2</sup> Բյուզանդ Եղիայան, Ատանայի հայոց պատմություն, Անթիլիաս, 2012, էջ 824:

կան ընկերութեան թատրոնում (այժմ Ռուսթավելու անվան) բեմադրել է ուսւ բեմի դերասան և ռեժիսոր, դրամատուրգ (հեռավոր արմատներով հայկական ծագումով) Ալեքսանդր Սումբատով-Յուժինի «Դավաճանութուն» պիեսը: Թեև նրանում պատկերվում են թուրքական բռնութիւնները Վրաստանում, բայց այդ օրվա հայերեն ներկայացումը դարձրել են ժամանակակից հայերի ու Հայաստանի վիճակի մասին պատմող գործ: Բռնակալ Սուլեյման բեկի դերակատար դերասան Արշակ Հարութիւնյանն իրեն մարմնավորած կերպարին ներկայացրել է արյունարբու Աբդուլ Համիդի գրիմով ու տեսքով: Իսկ դերված Ջեյնաբ թագուհու դերակատարը եղել է բեմադրող Օլգա Մայսուրյանը:

Խանասորի կռիւների (1896-1897) չխամրող տպավորութեան տակ արեւմտահայ մանկավարժ Հովհաննես Նազարյանը գրել է. «Խանասորի արշավանքը» հինգ գործողութեամբ դրաման՝ նվիրված Ֆիդայական պայքարին ընդդէմ քրդական ցեղապետի բիրտ արարքների ու բարբարոսութիւնների, որոնց համար նույնիսկ յուրայինները չեն ներել: «Խանասորի արշավանքը» պիեսը տպագրվել է 1917-ին Կ. Պոլսում:

Ի տարբերութիւն ցեղասպանութեան դեմ պայքարին նվիրված այլ պիեսների, գլխավոր հերոսն այստեղ աղջիկ է՝ Ջարմանը: Նա սղամարդու հագուստով ծպտված հետապնդում է իրեն անարգելու և բռնաբարելու տենչից կատաղած քուրդ Մազրիկ պեյին ու սպանում նրան: Այդ վրիժառութեան բուն շարժառիթը եղել է այն, որ իրեն պատճառով են իր աչքի առաջ վերքերից մահացել որդին ու փեսան:

Իր չար արարքների համար Մազրիկին անիծում են ուրվականներ դարձած նրա հայրն ու պապը: Պիեսի մյուս գործող անձերից են՝ խմբապետ Կարոն, Ֆիդայիներ Եփրեմը, Վրույրը, Ջարեհը, Տիգրանը, Տումանը, Ֆարհատը, Վարդանը, Պարույրը, Վահեն, Սմբատը (որոնք մարմնավորում են Խանասորում մարտնչած իրական հերոսներին):

Պիեսում տեղ ունեն և Ջարմանի ծնողները՝ Հաճի Գեղամն ու Խաթունը, Ֆիդայիների առաջնորդ հովիվ Սահակը, կույր աղքատ սուրհանդակը և ուրիշներ: Պիեսի ավարտին Ֆիդայիները երգում են ազատութեան մարտիկ Գալուստ Ալոյանի հեղինակած «Կարկուտ տեղաց» երգը:

Հեղափոխական, Ֆիդայական պայքարի նվիրյալների շարքին է պատկանում նաև դերասան, ռեժիսոր Սուրեն Աբելյանի «Ֆեդայիներ կամ Կապուլտ զնգուն հուլունքներ» պիեսը: Երևանի Սոււնդու-

կյանի անվան թատրոնի նախկին գերասան, գերմանական ճամբարների ռազմագերի, հետագայում Ամերիկայում որոշ շրջան բեմադրություններ տալուց հետո, իր ապրած ծանր տարիների հուշերով գրել է 1900-ական թթ. Ֆիդայիների հերոսական պայքարի մասին:

1895-1896 թթ. Սասունի կոտորածներից չորս տարի անց, նորապսակ Հակոն, միանալով Ֆիդայիներին, ուխտ է արել, որ ոչ միայն իր սպանված հոր, այլև բազում մարդկանց սպանության համար վրեժխնդիր լինել իրենց գյուղին տիրացած, թուրքացած քյուրդ Ալան բեկից: Կոնֆլիկտն ավելի է սրվում, երբ քյուրդ Հսոն հետապնդում է Հակոյի դեռահաս կնոջը, չորս տարվա ընթացքում դեռևս ամուսնական առագաստ չմտած խորոտ Նազեին, որը հիասթափություններից ի վերջո տեղի է տալիս և փախչում նրա հետ:

Ֆիդայիները հետապնդում և վերադարձնում են Նազեին, հանձնում Հակոյի դատաստանին՝ պահանջելով վերջ տալ դավաճանի կյանքին: Մոլուցքի պահին Հակոն դաշունահար է անում Նազեին, բայց ինքն էլ ընկնում Հսոյի եղբոր արձակած գնդակից:

Հուզառատ այս պիեսն իր շոշափած հարցերով ու լուծումներով գալիս է հավաստելու, որ դեռևս միում են հայ ժողովրդի բազում տարիների վերքերն ու ցավերը թեկուզ այդ սոսկալի իրադարձություններից անցել են հարյուրից ավելի տարիներ:

Օսմանյան սահմանադրությունը որքան որ խոսքով է ազատություն տվել, այնքան էլ գործնականում հակառակն է վարվել: Դրա փայլուն վկայություններից մեկն է հանդիսացել հնչակյան գործիչ Հմայակ Արամյանի (Մ. Շվոտ) «Անմահ ժիրայր կամ Մեծ հեղափոխականը» վերնագրով պիեսի բեմադրության՝ փորձը Կ. Պոլսի նորաստեղծ (1909) «Ազատ բեմ» թատերախմբի կողմից:

«Անմահ ժիրայրը» նվիրված է ազատագրական պայքարի մարտիկ Բարթոլ Ջորյանի (հեղափոխական անունով՝ ժիրայր) հիշատակին, որը կախաղան է հանվել 1890-ին: «Ազատ բեմը» եղել է առաջադեմ հայացքների տեր երիտասարդներից կազմված դերասանական խմբի ազատասիրական ձգտումների արտահայտիչը նոր պայմաններում: Սակայն որքան էլ որ նրանք ազատություն գոչեին, այնուամենայնիվ, թուրքի հսկող աչքն ու ականջը թույլ չէր տա հեղափոխական տրամադրություններ հրահրվելին մայրաքաղաքում: Դրա համար էլ նախատեսված բեմադրությունն ամբողջական չի եղել:

«Անմահ ժիրայր» պիեսը տարածվել է ձեռագիր վիճակում: Բեմադրվել է նախքան սպագրվելը՝ 1909-ին «Կոհակ» հնչակյան թեր-

թում: Բեմադրութեան նախաձեռնութիւնը պետք է վերագրել խմբի ղերասան և ռեժիսոր Ենովք Շահենին (Սոմոնճյան, 1880-1915), որի համարձակութիւնը չարաբաստիկ ավարտ ունեցավ 1915-ին:

«Անմահ ժիրայրի» հաջորդ բեմադրութիւնը տեղի է ունեցել 1912-ի փետրվարի 3-ին, Կիրասոնում, 32 գործող անձով<sup>1</sup>, սիրողների կողմից: Նույն ամսին այն խաղացվել է նաև Քղիի թատերասերների ուժերով:

1912-ից «Անմահ ժիրայր» պիեսը հաստատուն տեղ է գրավել ամերիկահայ թատերախմբերի խաղացանկում: Բեմադրութեան առաջին ձեռնարկողը եղել է Պրովիդենսի «Հնչակ» ղերասանական խումբը, որի ներկայացումը տեղի է ունեցել 1913-ի փետրվարի 5-ին<sup>2</sup>: Խումբը փոքրաթիվ լինելով, մասնակիցները ստիպված երկու-երեք դեր են կատարել: Ահա մի փոքրիկ ցանկ նրա դերակատարներից: Ժիրայր – Վահե Մանվելյան, Աչքբալաչ(յան) – Կարապետ Խոսրովյան, Միսաք – Գաբրիել Ֆրենկլյան, Լեյլա և Աննա – օր. Մարիձա (Մարիցա Խ. Ահարոնյան, հետագայում թատերախմբի ակտիվ գործիչներուց և Հնչակյան մամուլի հայտնի խմբագիր Սիրվարդի-Եղիա Գրիգորյանի կինը):

Հաջորդ բեմադրութիւնն իրագործել է Ուստրի նորակազմ «Արծիվ» թատերախումբը, 1913-ի հուլիսի 6-ին, Ս. Փրկիչ ազգային ժողովարանի դահլիճում: Այդ հուզիչ դրամայի հանդիսատեսները համայնաձեռն եղել ժիրայրի՝ անձնուրաց հեղափոխականի գործունեութեամբ՝ միշտ ժողովրդի համար, ժողովրդի հետ<sup>3</sup>:

Այսնակ և անփորձ դերակատարների մեջ դերասանական տվյալներով ամենաօժտվածը եղել է ժիրայրի դերակատար Հովհաննես Մեսրոպյանը: Թատերախմբի անդամ չլինելով, այդ դերակատարումը եղել է նրա առաջին ելույթը ամերիկահայ բեմում:

«Արծիվ» թատերախմբի դերակատարներից հաջողված են եղել՝ Աննա Մելիքյանը (Պառավ և Մարգարիտ), Մովսես Ճանիկյանը (Մեծտահ փաշա), Ս. Սիմոնյանը (Հովսեփ), Գ. Սիմոնյանը (Խաչիկ և Շուքրի պեյ) և ուրիշներ: Ներկայացման նպաստը հատկացվել է Զեյթունի քաջերին<sup>4</sup>:

Երեք տարվա ընդմիջումից հետո «Անմահ ժիրայրը» նորից է երևացել Կ. Պոլսի թատրոնում: Պոլսահայ Հնագույն անվանի դերա-

<sup>1</sup> Կոհակ (Կ. Պոլիս) 1912, № 8:

<sup>2</sup> Նույն տեղում, 1913, № 7:

<sup>3</sup> Նույն տեղում, 1913, № 42:

<sup>4</sup> Նույն տեղում:

սան-ռեժիսոր Մարտիրոս Մնակյանի բեմադրությամբ այն ներկայացվել է 1912-ի մարտի 25-ին, Վարիետե թատրոնում: Հաջորդ երկու օրերին պիեսը խաղացվել է նաև Շահգատե-Պաշի և Օդեսոն թատրոններում:

Բեմադրության կենտրոնական դեմքը եղել է Ժիրայրի դերակատար, երիտասարդ խոստումնալից դերասան Վահրամ Փափազյանը: Նրա խաղընկերներն են եղել Քնար Սվաճյանը – Լեյլա, Ռուզանը (Հովհաննիսյան ?) – Մերձան Հանըմ, տիկ. Խաչունին – Մարգարիտ, Երվանդ Թոլայանը – Հիլմի փաշա և ուրիշներ<sup>1</sup>:

1915-ի ապրիլյան Մեծ եղեռնից հետո, «Անմահ Ժիրայրը» իր բեմական կենսադրությունը վերստին շարունակել է ամերիկահայ թատրոնում: Այդ նույն թվականին «Անմահ Ժիրայրը» բեմադրվել է Ռեյսինի «Ժիրայր» (պիեսի հերոսի՝ Ժիրայրի – Բարթոլ Ջորյանի հեղափոխական անունը կրողի) դերասանական խմբի կողմից և Պրովիդենսի «Հնչակ» դերասանական խմբի ուժերով: Իսկ 1917-ին այն բեմ է հանվել Դետրոյթի «Ասո» (հնչակյան գործիչ Տիգրան Ասոյանի հեղափոխական անունով) դերասանական խմբի կողմից:

Հմայակ Արամյանի մի այլ պիեսը, որը նույնպես գրվել է թուրքական բռնապետական քաղաքականության դեմ, կրում է «Բռնակալի մահը» վերնագիրը, բաղկացած է երեք գործողությունից: Տպագրվել է 1909-ին Կ. Պոլսում, սակայն ներկայացվել է ամերիկահայ գաղթօջախների թատերախմբերի նախաձեռնությամբ:

«Բռնակալի մահը» դրաման բեմում ներկայացնելու առաջին մտահղացումը ծնունդ է առել 1911-ին, Կամախի (Արևմտյան Հայաստան) Վերի ու Վարի՝ 250-300 տուն բնակչությամբ Բագառիճ գյուղերի առաջադեմ գաղափարներով տրամադրված երիտասարդության մոտ: Հենց նրանք էլ իրագործել են այդ մտահղացումը: «Վանի հայդուկները» պիեսի բեմադրությունից ոգևորված, նրանք ծրագրել են հաջորդաբար հասարակությունը ներկայացնել նաև «Բռնակալի մահը», Ահարոնյանի «Արցունքի հովիտը» և նման բովանդակությամբ այլ պիեսներ:

«Բռնակալի մահը» պիեսը մեկը մյուսից հետո բեմադրվել է Ուստրի «Արծիվ», Պրովիդենսի (1913), Հարթֆլդրդի «Ջեյթուն» (1914) դերասանական թատերախմբերի կողմից:

1910-ական թթ. դրական-հասարակական կյանքում նորություն է հանդիսացել թիֆլիսահայ գրող, պատմավիպերի ու դրամատիկական գործերի հեղինակ Բագրատ Այվազյանի «Սասունն այրվում է»

<sup>1</sup> Նույն տեղում, 1912, № 12:

հինգ գործողությամբ դրաման, որը գրվել է 1912-ին, տպագրվել 1913-ին: Պիեսը թեև դատապարտման ուշացած արձագանք է կղել 1894-1896 թթ. Սասունում տեղի ունեցած բռնությունների ու կոտորածների դեմ, բայց և այնպես հիշեցրել է հետագա տարիների՝ 1904-ին դարձյալ Սասունի, 1909-ին Ադանայի հայերի կոտորածները, որոնք սովորական երևույթ էին դարձել թուրքերի համար:

«Սասունն այրվում է» պիեսում ընդգրկված են տանուտեր Սրգոն, նրա կինը՝ Խաթունը, զավակները՝ Կարոն ու Եղսոն, ուսուցչուհի Քրիստինեն, Հուսեյն բեկը, նրա դուստր Լեյլին, քրդերի շեյխը և ուրիշներ: Մուսուանդ քրդերի գինված հրոսակախմբերի կողմից զոհվում են Կարոն ու Քրիստինեն, որոնք փոխադարձ սիրով իրենց կյանքը զոհում են հանուն հարազատ ժողովրդի ազատության և արդարության:

Կովկասյան երկրամասում «Սասունն այրվում է» պիեսը բեմադրելու համար գրաքննության կողմից թույլտվություն է ստացվել 1912-ի հոկտեմբերի 10-ին: Եվ ահա, մեկ ամսից քիչ անց՝ նոյեմբերի 19-ին այն բեմ է հանվել Թիֆլիսում, Ամո Խարազյանի ղեկավարությամբ գործող Հայ դրամատիկ դերասանական ընկերակցության կողմից, Վրաց ազնվականների թատրոնում: Գլխավոր գործող անձերի դերակատարներն են եղել՝ Սրգո - (Հովհաննես) Ստեփանյան, Խաթուն - Մարգարիտ (Բաբյան), Կարո - Ամո Խարազյան, Քրիստինե - (Աշխեն) Արաքսյան, Եղսո - Մարի (Բերդյան), Հուսեյն բեկ - (Հայկազ) Հայկազյան, Լեյլի - (Նինվել) Խարազյան, Քրդերի շեյխը - (Արթուր) Բաբյան, Քյուրդ - (Արշակ) Նոնիկ(յան): Կրկնվել է 1913-ի հունվարի 30-ին:

1912-ին «Սասունն այրվում է» պիեսը խաղացվել է նաև Բաքվի Հայոց Կուլտուրական միություն գեղարվեստական մասնաճյուղի Հայ դրամատիկ դերասանական ընկերության կողմից, Սիրանուշի ղեկավարությամբ: Առաջին ներկայացումը կայացել է դեկտեմբերի 6-ին, հետևյալ կազմով՝ Սրգո - (Վարդան) Միրզոյան, Խաթուն - Ազնիվ (Անդրանիկ), Կարո - (Հովսեփ) Ոսկանյան, Եղսո - Արուս Ոսկանյան, Քրիստինե - (Մարգարիտ) Ստեփանյան - Յարալյան, Հուսեյն բեկ - Անդրանիկ (Սողոմոնյան), Լեյլի - Արաքս (Ջարիֆյան), Քրդերի շեյխ - Հովհաննես Ջարիֆյան, Քյուրդ - Լևոն Ալավերդյան, Արսեն - (Արամ) Ռշտունի:

1913-ից սկսած, «Սասունն այրվում է» պիեսը բազմիցս խաղացվել է Անդրկովկասի և սփյուռքի բազմաթիվ թատերախմբերում: Վերջին բեմադրությունը կայացել է 1960-ի ապրիլի 9-ին, Թեհրանի Հ. Մ. «Արարատ» կազմակերպության թատերախմբի ուժերով, ուժի-

սոր Վահան Աղամալյանի կողմից: Ներկայացման մասնակիցներին են եղել Բ. Արմենը (Սուրեն Բաղդասարյան), Քլարա Հովհաննիսյանը, Սարգիս Սվաճյանը, Վաչե և Սիրամարգ Ատովմյանները, Լիդա և Ռուբեն Աթալյանները, Սիրանուշ Աղաջանյանը, Հրայր Մեսրոպյանը, Արա Հովհաննիսյանը<sup>1</sup>:

Հալածանքների պատճառով գաղթի ճանապարհ բռնածների մասին ուրույն գործեր է գրել եղեռնի զոհ, գրող-մանկավարժ Թլկատինցին (Հովհաննես Հարուժյունյան): Ցավոք, Թլկատինցին մոռացված դրամատուրգ է հայ թատրոնի պատմուժյան մեջ: 1900-1910-ական թթ. նա տասից ավելի մեծ ու փոքր պիեսներ է գրել, որոնց մի մասն ինքն էլ բեմադրել է Խարբերդի իր դպրոցի աշակերանների ուժերով:

Թլկատինցու «Դեպի արտասահման» (1912) և «Կուլիկ ու վարժապետը» (1913) պիեսներում պատկերված է արևմտահայուժյան գաղթի ու պանդխտուժյան տխուր ճակատագրերը խարբերդցիների (ինչպես՝ ամենուրեք) կյանքում: Նրա որոշ հերոսներ գնում են Ամերիկա, վերադառնում, հետո ամուսինը նորից է գնում, իսկ կինը մնում: Իսկ երկրորդ պիեսում, ծեր կինը՝ Կուլիկը վարժապետին նամակ գրել է տալիս պանդուխտ (Ամերիկայում) որդուն:

Վերոհիշյալ երկու պիեսները ընթերցումով ներկայացվել են Փարիզի Հայ թատերադերներին նվիրված թատերական ընթերցումների շարքում, Արբի Հովհաննիսյանի բեմադրուժյամբ (1 մարտի 1998):

Զարմանալին այն է, որ ինչպես Հակոբ Օշականն է գրել՝ թատրոն չտեսած Թլկատինցին իր պիեսները գրել է. «առանց զայն տեսած ըլլալու, ոչինչ են ստեղծած է արևմտահայ գրականուժյան իրապես թատերական տիալոգը»<sup>2</sup>:

Իբրև թե մի լավ օրի էին արևմտահայերը, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը իր մեջ առնելով եվրոպական երկրները, Ռուսաստանը, Անդրկովկասը, Արևմտյան Հայաստանը Թուրքիայի հետ միասին: Բարդաղյավ թե՛ քաղաքական, և թե՛ անտեսական կյանքը: Հարյուրավոր հայեր բանակներ զորակոչվեցին կրելով պատերազմի ամենածանր սարսափները:

Բանակ զորակոչվելուց բացի, Թուրքական ճիրաններից հայերի ազատագրուժյան նպատակով կազմակերպվեցին կամավորական ջոկատներ, որոնք ժամանակավորապես արդյունքի հասան՝ ազատագրելով որոշ շրջաններ, բայց և այնպես, ի վերջո զրկվեցին այդ ձեռքերումներին:

<sup>1</sup> Այի.թ (Թեհրան) 1960, № 82:

<sup>2</sup> Մեջրերումը կատարվել է Արբի Հովհաննիսյանի կազմած տեքստից: Հատկանշական է, որ նախքան այս պիեսները գրելը, Թլկատինցին նույն թեմայով հոգվածներ է տպագրել Կ. Պոլսի «Արևիկ» թերթի 1900-ական թթ. սկզբնական տարիներին:

Կամավորական շարժումն իր արտահայտությունն ստացավ օրվա հոգսերից անբաժան թատերական կյանքում: 1914-ի աշնանը թատերական գործիչ՝ նկարիչ, խմբագիր Գարեգին Երիցյանը, որն առավելագույնս հայտնի է «Ուշ լինի, նուշ լինի» օպերետով, Բաքվի Հայոց կուլտուրական միությունն առաջարկով գրել է «Մոտ է գարունը» չորս գործողությամբ պիեսը: Հեղինակի բանավոր վկայությամբ, իր պիեսը ծառայելու էր կամավորական շարժմանը: Եվ դա ճշմարտություն է:

«Մոտ է գարունը» պիեսում հեղինակը տվել է ոչ միայն թուրքական բռնությունների լծի տակ ճնշվող հայերի, այլև նրանց հոգեհարազատությունը Բուլղարիայի և Մակեդոնիայի ժողովուրդներին ազատագրության համար մղվող պայքարին:

Պիեսի հերոսը՝ գյուղական ուսուցիչ Լևոնը ծանր վերքից մահանում է Մակեդոնիայի լեռներում՝ հուսալույ, որ մոտ է հաղթանակի գարունը: Այդ գարունը՝ հաղթանակը պետք է և իր հայրենիքի գարունը լինի: «Հավատում եմ, — ասում է նա, — մոտ է գարունը... որ կլինի մի օր մենք էլ կազատվենք դարերով տանջող տաճկական լծից: Տանջանք չմնաց, որ կրե հայ ժողովուրդը»:

Պիեսում, որպես բեմական կերպարներ՝ ներկայացված են Հայ ազատագրական պայքարի ռազմավարներ՝ հայկական վաշտի սպա Նժդեհը և զորավար Անդրանիկը: Բուլղարիայի ազատագրական պայքարի ժամանակ հերոսացած Գարեգին Նժդեհի և Անդրանիկի անունները հարազատ են նաև բուլղարացիների համար: Եթե Գարեգինը երևում է պիեսի վերջին գործողության մեջ և շատ փոքրիկ տեքստ ունի, ապա Անդրանիկը հայտնվում է միայն վերջում, առանց խոսքի գլուխը խոնարհում է հայրենասեր գինյորի՝ մահացող Լևոնի առջ:

«Մոտ է գարունը» պիեսում առկա են նաև գեղջկուհի Աննան, նրա դուստր Մարիամը՝ Լևոնի նշանածը, տղամարդու հագուստով ծալոված մակեդոնուհի Կատինկան՝ վիրավոր Լևոնին խնամողը, Գայմագամ Խալիլ էֆենդին, Ահմեդը, Հասանը, հայ և տաճիկ գինյորներ, կամավորներ: Ներկայացման համար նախատեսված են եղել քաղաքական երգ-երաժշտություն՝ «Մեր հայրենիք», աշուղ Շերամի՝ Անդրանիկի մասին երգերը, բուլղարական «Շումի Մարիցա» տարածված քայլերգը: Հայ կամավորների դրոշակի վրա գրված են եղել Միքայել Նալբանդյանի հանրահայտ խոսքերը՝ «Երանի, որ յուր ազգի ազատության կզոհվի»:

Երիցյանի պիեսը, իր իսկ բանավոր խոստովանությամբ, գեղարվեստական մեծ արժանիք չի ունեցել, բայց իբրև այն օրերի հրատապ արձագանք, անշուշտ, դրական դեր է կատարել:

Նույն 1914-ին Երիցյանը մի պիես էլ գրել է կամավորականների

շարժման թեմայով՝ մեկ գործողությամբ «Կամավորներ» պատկերը հայ ուսանողների կյանքից: Գործողությունը կատարվում է 1914-ի աշնանը Պետերբուրգում, ուսանող իգիթյանի բնակարանում: Պիեսի գլխավոր գործող անձերից են՝ ուսանողուհի Շուշանիկը, կոնսերվատորիայի ուսանողուհի, երգչուհի Մելիքյանը, ուսանողներ Դավիթ իգիթյանը, Գրիգոր Աթոյանը, Սարգիս Վանեցյանը: Նրանք պատրաստվում են որպես կամավորներ մեկնել ռուս-թուրքական պատերազմի ճակատ, մասնակցել արևմտահայությանը տաճկական բռնապետության ճիրաններից ազատագրելու պայքարին:

Պիեսում կան ևս երեք տարեց ու երիտասարդ ուսանողներ, որոնք զանազան պատրվակով խուսափում են մասնակցել հայրենասիրական այդ շարժմանը: Նրանք են՝ 38 տարեկան Չալաբյանը, արիստոկրատ ձեռացող Ազատյանը, անորոշ դրադմուսներ տեր, 35 տ. Զոնը: Ուսանողուհիների կատարած ազգային-հայրենասիրական երգերը ոգևորում են ռազմաճակատ մեկնող կամավորներին:

«Մոտ է գարունը» և «Կամավորները» մի երեկոյում առաջին անգամ ներկայացվել են Բաքվի Հայոց կուլտուրական միության թատերական մասնաճյուղի դերասանական խմբի կողմից: Արմեն Արմենյանի բեմադրությամբ խաղացել են Նիկիտին եղբայրների կրկես-թատրոնում, 1914-ի դեկտեմբերի 13-ին: Դերակատարներն են եղել՝ Վ. Փափազյանը Օ. Գուլազյանը, Ա. Ոսկանյանը, Հ. Ստեփանյանը, Մ. Թաշճյանը, Մ. Ալիխանյանը, Գ. Լաքքան, Մ. Գարագաշը: Կրկնվել է դեկտեմբերի 20-ին:

«Մոտ է գարունը» պիեսը կամավորների թարմ հետքերով գնացել է դեպի ռազմամերձ վայրերը: Հեղինակի ղեկավարությամբ կազմակերպված դերասանախումբը, որի մեջ մտել են Հովհ. Աբելյանը, Գրիգոր Ավետյանը, Հարություն Բերոյանը, Ժասմենը և ուրիշներ, 1915-ի փետրվարին այն ներկայացրել են Երևանում, Կարսում և Ալեքսանդրապոլում: Ժասմենը պատմում էր, որ վագոններում տեղ չլինելու պատճառով ինքը մի կերպ կուշ է եկել երկրորդ հարկի նառում, զինվորների ոտքերի տակ, իսկ Աբելյանը ձեռքը գոտիով կապել է վերևի երկաթե ճաղերից, որպեսզի քնելու դեպքում չընկնի՝ կախված մնա:

Ի պատիվ կամավորների, Աբելյանի խումբը համակրական ցույցեր է արել իգիթրում: Կամավորներին քաջալերական կոչներով է դիմել նաև Հովհ. Զարիֆյանի ղեկավարությամբ դերասանախումբը:

Կամավորական շարժման թեմայով պիես է գրել նաև հասարակական-քաղաքական գործիչ Մարը (Միքայել Տեր-Մարտիրոսյան): 1914-ի դեկտեմբերի 23-ից մինչև 1915-ի հունվարի 8-ը նա Երևանում գրել է «Հերոսացանք» հինգ գործողությամբ դրաման, որի

գործողությունները կատարվում են կովկասյան մի ամառանոցում, Թիֆլիսում, Պետերբուրգում, Սարիղամիշի մոտ՝ պատերազմի դաշտում:

Պիեսի գործող անձինք են՝ Հարուստ-բարերար Ամբակում Արտաղյանը, նրա կինը՝ Նուենուֆարը, զավակները՝ Վարդը և Նվարդը, նրա հոգացողուծյամբ ուսում ստացող Յողիկը, Փարսադանը, սլոպագանդիստ Տիրանը, կամավորներ, գլխուծյան քուլյեր, վիրավորներ, գերի քրդեր և ուրիշներ:

Վարդի Հարուստ ծնողները դեմ են իրենց որդու ամուսնուծյանը Յողիկի հետ: Վերջինիս նկատմամբ անտարբեր չէ նրանց ուսանող ընկեր Փարսադանը, որը սիրող դուռդին իրարից բաժանելու համար գործիք է դառնում Ամբակումի ձեռքին՝ գողանում է Յողիկի նամակը, կեղծում և կասեցնում նրանց սերը:

Պետերբուրգում ուսանողներից կազմված կամավորական ջոկատը Վարդի դեկավարուծյամբ մեկնում է Կարս: Խմբի մեջ է և Յողիկը: Իր «սիրո առարկայի» ետևից գնում է և Փարսադանը: Պարզվում է կեղծ նամակի պատմությունը: Կռվում վիրավորվում է Վարդը, նրան խնամում է Յողիկը: Հաղթանակում է անկեղծ սերը, պատերազմի դաշտում հերոսանում են:

Մարի այս պիեսը ինքնուրույն և թարգմանական պիեսների հետ ներկայացվել է Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության մրցանակաբաշխության ժյուրիին, բայց մրցանակի չի արժանացել և չի բեմադրվել:

Արևմտահայությանը թուրքական բռնապետության լծից ազատագրելու նպատակով կազմակերպված կամավորական ջոկատները համահայկական բնույթ են կրել: Անդրկովկասից, արտասահմանյան երկրներից արձագանքել և շատ կամավորներ են հավաքվել: Ամենուրեք խրախուսվել է հայրենասիրական այդ նախաձեռնությունը, որին մասնակցել են առաջադիմական հայացքների տեր շատ գործիչներ, արվեստի ու գրականության դեմքեր, ուսանողուհիներ, որոնց համար թանկ է եղել հայրենիքի ազատության գաղափարը:

Կամավորականների դերի ու գործունեության մասին ահա թե ինչպիսի գնահատական է տվել Թիֆլիսահայ դրական-հասարակական գործիչ Սոֆիա Դանիել-Բեկը: Իր «Ճակատագրական բույս» վերնագրով հոգվածում նա գրել է. «Հայ կամավորների կարգադրիչ մարմինը հայտարարում է, որ վերաբացվել է ամենուրեք կամավորների ընդունելությունը... Կամավոր գրվելու ցանկացողների թիվը մեծ է ահագին. գալիս են նրանք հայրենիքի սիրով վառված, գալիս են իրենց քաղաքացիական պարտքը կատարելու, գալիս են հայրենիքի ազատությանը գոհվելու:

“ Զգուժմ են նրանք, հայ ժողովրդի արժանավոր զավակները, որ հասել է վճռական ընդհանրության, այլևս տատանվելու ժամանակը չէ, հաղթութուն կամ մահ, ահա այսպես է դրված խնդիրը մեր առաջ: Պարտության դեպքում կոչնչացվի աշխարհի երեսից Թուրքաց Հայաստանը, կանհետանա հայության օրորանը, մեր հույսերի, մեր երազների աշխարհը»<sup>1</sup>:

Ահա թե ինչ հույսեր խորտակվեցին անհավասար մարտերում:

Կամավորականներին աջակցելու հարցը խրախուսվել է նաև Ֆրանսիայում:

Այս առումով հետաքրքիր միջոցառումներ են անցկացվել Մարսելում, Փարիզում: 1915-ի մայիսի 16-ին, Մեծ եղեռնից մեկ ամիս անց, Մարսելի «Կովկասի հայ կամավորներուն նպաստող կոմիտեի» հովանավորութամբ, հայ թատերասերների խումբը տեղի Սալոնում անց է կացրել դեղարվեստական մեծ միջոցառում, որի բացումը կատարել է «Ազգային շահերու պաշտպանության գործին» համար Մարսելի կոմիտեի նախագահ Հովհաննես Սահաթյանը: Դաշնամուրային նվագից և Գամառ-Քաթիպայի (Ռափայել Պատկանյան) բանաստեղծությունների արտասանությունից հետո բանախոսել է «Արմենիա» թերթի երկարամյա խմբագիր, մեծ հայրենասեր Մկրտիչ Փորթուզալյանը:

Միջոցառման երկրորդ մասում ներկայացվել է Արմեն Շիտանյանի հեղափոխական թեմայով գրած «Անդրանիկ» երեք գործողությունները: Այս պիեսը թեև քիչ է խաղացվել, բայց ներկայացվել է հավեր պատշաճի: Իրրև դերակատարներ հանդես են եկել՝ Ա. Աթանասյանը – Անդրանիկ, Պ. Զամարյանը – Վահան, Գ(արեգին) Բլիթյանը – Գրգո, օր. Հ. Փորթուզալյանը – Սոնա, Ե(րվանդ) Թորոսյանը – Ռես Մելո, Ե. Գաղթացյանը – Առաջնորդ, Գ. Ղևոնդյանը – Հիվանդապահ, Մ(ելքոն) Պոտուրյանը – Ա. քյուրտ, Մ. Տոլարյանը – Պահակ, Երվանդը (Թորոսյան) – Տոնիկ աղա և ուրիշներ:

Հանդիսատեսի տխուր տրամադրությունը ցրելու համար վերջում խաղացել են «Գավաթ մը թեյ» կատակերգությունը: Բեմադրություն և դերակատարների շուրջը ծագած տարբեր կարծիքները (սիրողներից ավելին պահանջելու ցանկությունը) փարատելու նպատակով, խմբագրություն կողմից նշվել է, որ «անուրանալի է մայիս 16-ի ներկայացման դերակատարներն ամենքն ալ գովեստի, քաջալերանքի արժանի հանդիսացան այդ օր»<sup>2</sup>:

Հայերի նկատմամբ ֆրանսիացիների համակրանքի և հայոց ցե-

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս), 1915, № 145:

<sup>2</sup> Արմենիա (Մարսել) 1915, № 41, 44:

ղասպանութեան դեմ բողոքի ցայտուն բովանդակութեամբ միջոցառում է տեղի ունեցել 1916-ի ապրիլի 9-ին, Փարիզի Սորբոնի համալսարանի Մեծ դահլիճում: Տանջահար Հայաստանին նվիրված, բացառիկ հանդիսավորութեամբ՝ հարգանքի ու հիշատակի այդ պատկառելի հավաք-ժողովը կազմակերպել է «Յրանս-արտասահման մերձեցման» միութիւնը: Միջոցառումը նախագահել է Յրանսի պատգամավորների պրեզիդենտ Պոլ Դեշանիւլը:

Հավաքի ընթացքում, ի հարգանս հայ ժողովրդի, իրենց սրտագին խոսքն են ասել ժողովրդական լուսավորութեան նախագահ Պենլեն, Քրանսիական գրականութեան նախագահ Անատոլ Յրանսը, էլզասի պատգամավոր՝ Վերտելի աբբահայր Ֆերդինանդ Բիշանուն, Մարդկային իրավունքների լիգայի նախագահ Ժան Ֆինոն, «Ռեկլոս» ամսագրի հրատարակիչ Անրի Կուլոնը, փիլիսոփա էմիլ Բուտրաուն և ուրիշներ:

Միջոցառմանը ներկա են եղել բարձրաստիճան գինվորականներ, Ամերիկայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Ճապոնիայի, Սերբիայի և այլ երկրների պաշտոնական այրեր, Յրանսիայի և Բելգիայի հայ եկեղեցու ներկայացուցիչ Վառձապուհ արքեպիսկոպոս Բիպարյանը, Պողոս Նուպար Փաշան, Արշակ Չոպանյանը, ուսսական մամուլի ներկայացուցիչ Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկոն (մոր կողմից հայ) և շատ ուրիշներ:

Ընկերութեան քարտուղար Շարոնն ընթերցել է հայ ժողովրդի բարեկամ մի շարք գործիչներից ստացված հեռագրեր՝ ի հարգանս հայերի, այդ թվում՝ Անդլիայի Լորդերի պալատի անգամ Ջեյմս Բրայսից, ոուս գրող և թարգմանիչ Վալերի Բրյուսովից, Շվեյցարիայի հայագետների ներկայացուցիչ Լեոպոլդ Ֆալրից, Տուրինի (Իտալիա) «Արմենիա» հանդեսի հրատարակիչ Կորադո Կորազինոյից, Մոսկվայի «Արմյանսկի վեստնիկ» (Հայկական լրագրեր) հանդեսի խմբագրութեանից և այլ վայրերից ու անձերից:

Հավաքի գեղարվեստական մասում, Փարիզի Կոմեդի Յրանսեզի, Սառա Բեռնարի թատրոնների մի քանի դերասան-գերասանուհի արտասանել են Քրանսիացի հեղինակների, ինչպես նաև Հ. Թումանյանի, Դ. Վարուժանի, Ա. Չոպանյանի բանաստեղծութեաններ՝ Քրանսերեն թարգմանութեամբ:

Երաժշտական մասում ելույթներ են ունեցել թավջութակահար Տիրան Ալիքսանյանը, հայկական երգչախումբը, իսկ պարուհի Արմեն Օհանյանը կարգացել է Յրանսիային նվիրված իր բանաստեղծութեանը, որի համար ստացած ծաղկեփունջը նա նվիրել է ժողովի նախագահին:

Միջոցառումն ավարտվել է Ֆրանսիացի գրող Մաուրիս Բուկայի՝ Հայաստանին նվիրված հիմնի՝ «Հայաստան» և «Մեր հայրենիք» երգով՝ երգչախմբի կատարմամբ<sup>1</sup>:

Ինչպես Հիմնի ֆրանսերեն տեքստը, որը «Արմյանսկի վեստնիկի» խմբագրութանն է ուղարկել Արմեն Օհանյանը, այնպես էլ ժողովի նկարագրութունն ու որոշ ելույթների տեքստերը տպագրվել են նույն հանդեսում:

Ստորև տալիս ենք հատվածներ Անատոլ Ֆրանսի ելույթից. «Երբ սրանից քսան տարի առաջ Սուլթան Աբդուլ Համիդի հրամանով հայերի ջարդերի արյուն է թափվել, ապա ամբողջ Եվրոպայում գտնվեցին ընդամենը մի քանի ձայներ, որոնք բողոքեցին ընդդեմ ամբողջ ժողովրդի խեղդոցին...»

Երիտթուրքերը իշխանության հասնելով, դերազանցել են Աբդուլ Համիդի ջարդերի կազմակերպմանն Ադանայում: Ի վերջո, այդ մշտական տանջանքները բթացրել են մեր խղճահարության զգացմունքները քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ և հայերը մնացել են միայնակ...»

Այդ ժողովրդի մասին ոչինչ չգիտեինք՝ ոչ նրա անցյալի, ոչ նրա հանճարների, ոչ նրա հավատքի ու երկունքների մասին: Թուրքիան նրա դեմ դուրս է եկել որպես Գերմանիայի վասալ: Հայերի տանջանքը հասկացավ Ֆրանսիան:

Ֆրանսիան իսկույն հասկացավ Հայաստանի տանջանքների պատճառները: Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ դժբախտ զոհին՝ լիովին ու հավատով մեզ ուղղած հայացքով, մենք վերջապես հասկացանք, որ այդ մեր քույրն է մահանում Արևելքում, մահանում է լուրջ նրա համար, որ նա մեր քույրն է: Նրա համար, որ նա հանցանք է կատարել՝ կիսելով մեր զգացմունքները, սիրելով այն, ինչ մենք ենք սիրում, մտածում այնպես, ինչպես մենք ենք մտածել, հավատալով նրան, հանուն ինչի մենք ենք հավատացել և մեզ նման ընդունել իմաստությունը, պոեզիան ու արվեստը: Դրա մեջ է եղել նրա հանցագործությունը:

Մենք պատիվ ենք տալիս Հայաստանին ոչ միայն նրա մշտական տառապանքների, այլև այն արիության համար, որ նա կրում է դրանք: Մենք փառք ենք տալիս նրան՝ նրա անսահման սիրուն մեր զարգացածության նկատմամբ անսահման սիրո համար:

Մի քիչ արյուն, որ մնացել է նրա մեջ, թանկարժեք արյուն է, որից հերոսական սերունդ կծնվի: Մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել, երբեք չի մեռնի»<sup>2</sup>:

<sup>1</sup> Армянский вестник (Մոսկվա) 1916, № 14, էջ 15:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 16:

(Ա. Ֆրանսի ելույթի ժամանակ եղել են բազմաթիվ խրախուսական բացականչություններ ի պատիվ Ֆրանսիայի, Ա. Ֆրանսի, Հայերի, շնորհավորանքներ, գրկախառնություններ):

Համանման բնույթի գեղարվեստական մի մեծ միջոցառում էլ կազմակերպել է գրական-հասարակական աշխարհին քաջ հայտնի Արշակ Չոպանյանը՝ ի հարգանս Ֆրանսիայի և ի նշան հայկական երախտագիտության: Գրական-գեղարվեստական այդ ցերեկույթը տեղի է ունեցել 1916-ի հունիսի 18-ին: Միջոցառմանը ներկա են եղել Ֆրանսիայի պետական, գրական գործիչներ, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Օրվա հուզող հարցերին նվիրված բանախոսությունը հանդես է եկել Ա. Չոպանյանը, բանակից արձակուրդ եկած, ֆրանսիական թատրոնի և կինոյի դերասան Մաքս Մաքսուտյանն արտասանել է Մեծ եղևնի գոհեր՝ բանաստեղծ Սիմանթոյի «Արյուն» և «Բազմավեպ» հանդեսի նահատակ խմբագիր Հ. Տեր-Սահակյանի «Արարատ» բանաստեղծությունները:

Նվագախմբի և երգչախմբի համարներից հետո, բեմ է բարձրացել հուշակավոր պարուհի Արմեն Օհանյանը: Յերեկույթի ներկաներից մեկը՝ բժիշկ և խմբավար, նաև խմբագիր Լևոն Համբարձումյանը Օհանյանի մասին գրել է. «Քեկեր, ցուրեր իմ յարը» երգչախմբի կատարումից հետո «համբաքայլ բեմ եկավ տաղանդավոր պարուհին՝ տիկ. Արմեն Օհանյան և պարեց «Հոյ Նազան իմ» պարերգը երգչախմբի ընկերակցությամբ: Կեցցենք ցնդացուցին սրահը: «Կանչե՛ կուռնկ, կանչե՛» և «Դարդս լացեք» խմբերգերու ընդմեջն Վերջ Տիկ. Օհանյան պարեց Հայ սուգի և ողբի պարը, նվագախմբի ընկերակցությամբ: Ճարտար գրիչ մը չալիտի կարենար այսքան բնական կերպով արտահայտել հայ ողբը: Հայուհին սևերով պատված, մերկացած իր դարդերեն և շղթաներով շքավորված բեմ կուզա և կարտահայտվի անխուս... Հիացումը միակ տպավորությունն էր ու հուզումի արցունքը՝ արդյունքը»<sup>1</sup>:

Արմեն Օհանյանի (Սոֆյա Փիրբուզադյան) պարարվեստի մասին գրելիս, սովորաբար, նրան կոչում են արևելյան, հարևի պարերի մեծ վերամարմնավորող արվեստագետ՝ անտեսելով նրա ազգային, հայրենասիրական դիրքորոշումը:

1915-1916 թթ., երբ Կովկասում կազմակերպվող կամավորական ջոկատների գաղափարը քաջալերելու նպատակով դանազան միջոցառումներ էին անցկացվում Ֆրանսիայում, այդ նույն երկրի արևմտահայության ներկայացուցիչներն էլ իրենց հերթին հետաքրքրվում

<sup>1</sup> Արմենիա (Մարտի) 1916, № 44:

էին կովկասահայութեան քաղաքական կյանքով և արձագանքում տեղական թուրքերի դեմ նրանց պայքարի ընթացքին: Այս բացառիկ մարդասիրական մոտեցումն իր արտահայտութիւնն է ստացել նաև դրամատուրգիայում:

1915-ի ապրիլի 10-ին Փարիզի մտավորականութեան և ուսանողութեան նախաձեռնութեամբ, «Ժուռնալ» սրահում տեղի ունեցած մի միջոցառման ժամանակ, համերգային բաժնից հետո, ներկայացվել է տեղական դրամատուրգ (նաև բանաստեղծ) Մելիքսան Թախթաճյանի «Փրկարար համերաշխութիւն» չորս գործողութեամբ և երկու պատկերով դրաման: Պիեսը գրվել է ուսանողութեան խնդրանքով: Այդ նույն տարում Թիֆլիսի «Մշակ» թերթում տպագրվել է նրա մի բանաստեղծութիւնը՝ «Անպետք է հինը, նորը սկսենք» վերնագրով: Ավելին հայտնի է մեզ հեղինակի մասին: Մնում է ավելացնել, որ ներկայացման վերջում, ինչպես նշվել է մամուլում, ուրիշ առիթների պես, հեղինակն այդ անգամ էլ արժանացել է հայ հասարակութեան խանդավառ շնորհավորանքներին<sup>1</sup>:

Պիեսի բեմադրութեանը մեծապես նպաստել են փարիզահայ դերասաններ Հայկազուն Բազրատունին և (Վահրամ) Ավաճյանը:

Այս պիեսի բեմադրութեան մասին փարիզաբնակ Ռուբեն Պաղտասարյանի գրած թատերախոսականում, որն ավելի գրախոսականի բնույթ ունի, բովանդակութեան հետ լեզվական հարցեր էլ է շոշափել:

Ծանոթանանք նախ պիեսում կատարվող գործողութիւններին, ըստ տեսարանների հերթականութեան:

- I. Ժողովրդական տեսարան է. քահանան, քաղաքագլուխը և հայ երեւելիներն սպասում են թեմական առաջնորդի գալստյանն էջմիածնից:
- II. Նահանգապետի և առաջնորդի տեսակցութիւնը:
- III. Հայ պատգամավորական ընդհանուր ժողով. համերաշխորեն ինքնապաշտպանութեան և այլ հարցերով են զբաղված:
- IV. Հայկական սպայակույտի տեսարան. հայ խմբերը առյուծի պես կռվում են թուրք ամբոխի դեմ:
- V. Սիրային տեսարան. գթութեան երկու հիվանդապահ քույրեր հիվանդանոցի մի անշուք սենյակում խնամում են հիվանդներին:
- VI. Ահռելի ընդհարումի տեսարան. պիեսի հերոս Բեռնեն դաշույնի դիպուկ հարվածով գետնին է տապալում ջարդարար թուրքերի Իսրաֆիլ բեկի մարմինը:

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1915, № 95:

Ներկայացումն ավարտվում է անշարժ ապոթեոզով՝ ռուս գեներալը, եպիսկոպոսը, ազգային ներկայացուցիչներ, հայ մարտիկներ, հերոսուհի կանայք և օրիորդներ:

Այս սեղմ կառուցվածքից զգացվում է, որ սա անսխալ հեղինակի աշխատանք է, ուր խոսքը գերակշռում է գործողությունը: Գործողությունն էլ կովկասի որ մասում է կատարվում, անհայտ է: Գործող անձերից մեկից բացի մյուսների անուններն ու մասնակիցների քանակը նույնպես անհայտ են:

Թերևս այս թերուշխույններն են պատճառը, որ հոգվածագիրը պիեսի վերլուծությունը թողած, լուսաբանել է նրա մի այլ հատկությունը: Նա գրել է. «Հարգելի հեղինակը, թատերագրի ճկուն տաղանդով օժտված, վտանգի բոլորին համերաշխություն ու միություն անհրաժեշտությունը շեշտելու համար կողք-կողքի բերած էր անխտիր բոլոր դասակարգերու և քաղաքական կուսակցություններու ներկայացուցիչները՝ ինքնապաշտպանության կռիվը մղելու վայրենի թուրքին դեմ... թատերախաղի լեզուն, ինչ որ ամենին ավելի գնահատության կարժանանա, բեղուն, ինքնատիպ, կուռ և սեղմ էր: Արևելահայ և արեւմտահայ հայ աշխարհաբարները հավասարապես յուրացրած ըլլալով պ. Մ. Թախթաճյան փորձած էր կարծես իրարախառնել զանոնք ու շնորհալի, ներգաշնակ նոր հայերեն մը ստեղծել»<sup>1</sup>:

Նոր հայերենն ասելով, նա առաջարկել է «կիլիկյան, պարսկական, թուրքական և կովկասյան հայ միջավայրերու մեկ ծայրին մյուսը գրական մեկ լեզու հնչեցնելու»: Պարզ չէ, դրամատուրգն է զարգացրել այս միտքը թե հոգվածագիրն է որոշ գործող անձանց բարբառային խոսակցություններից այդպիսի եզրակացություն եկել: Բոլոր դեպքերում մեկ ընդհանուր լեզու ստեղծելու հարցը կլուծի ժամանակը:

Կարևորը որևէ անսպասելի դժբախտություն դեպքում հայերի՝ իրար օժանդակելու, մարդասիրական օգնության ամենաբարոյական հատկանիշն է, որը շուրջ երկու դար սրբորեն կիրառվում է մեր ժողովրդի կյանքում:

Կամավորականների շարժմանը և նրան հաջորդած ողբերգական իրադարձությունների պատկերմանն է նվիրված արեւմտահայ մտավորական Գրիգոր Գուտուլյանի «Վրեժի ոգին, Հայի նամուսը, Բռնապետի վախճանը» որոշակի թեմայով գրված պիեսը: Հեղինակն այս գործը գրել է 1909-ին Ադանայում սպանված և Սիհուն գետը նետված, 1915-ին Մարաշում կախաղան հանված, Տեր Ջորի անսպասունքով քշված իր հարազատների ու ազգակիցների հիշատակը

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1915, № 95:

// ոգեկոչելու, չարագործ ուժերի դեմ մշտական պայքարի համար կամավորական շարժումն իբրև անհրաժեշտ գործոն հաստատ պահելու նպատակով:

Կամավորական շարժումների սկզբնական քայլերն են արտացոլված նաև Նոր Նախիջևանցի դրամատուրգ էմմանուել Բախչիսարայյանի «Արյունաներկ Արևելք» հինգ գործողությամբ դրաման: Նրա դրամատիկական ժառանգության մեջ գերակշիռ տեղ է զբաղել կենցաղային, արատավոր բարքերը ծիծաղով ուղղելու առողջ մոտեցումը: Բայց երբ սաստկացել են արևմտահայության դեմ թուրքերի բռնությունները, նա փոխել է իր սովորական ժանրը և դատապարտել կոտորածների քաղաքականությունը:

«Արյունոտ Արևելք» պիեսի գործողությունները կատարվել են՝ Բեռլինում, Կ. Պոլսում, Տաճկահայաստանում, Տաճկական ընդհանուր հրամանատարի մոտ:

Տաճկահայաստանի մի փոքրիկ քաղաքի հարուստ ընտանիքի գուսար Աստղիկը սովորում է Գերմանիայում: Նա այրիացած մորից ստանում է մի նամակ, որով երկրում կոտորածներ սկսվելու պատճառով աղջկան առաջարկում է վերադառնալ տուն: Աստղիկն ուսումը կիսատ թողնելով շտապում է վերադառնալ հայրենիք: Տաճկաստանի բեռլինյան դեպարտամենտում ձգձգում են նրա փաստաթղթերի ձևակերպումները: Բարձրաստիճան մի պաշտոնյա Աստղիկին գրավելու համար, իբրև թե օգնում է նրան: Ճանապարհին (գնացքում) իբրև թե պատահաբար նորից է հանդիպում Աստղիկին:

Աստղիկն անփորձանք տուն է հասնում: Մայրը՝ Մարիամը, որպես քաղաքի պատվավոր մարդու այրի, Աստղիկի խորհրդով հրավիրել է տալիս տեղում մնացած տարեցյներին, ժողով անում և որոշում օգնության կանչել Քեռիին իր կամավորներով: Աստղիկը նրանց անունից նամակ է գրում և անցնելով ռուսական սահմանը, հասնում Քեռիի ջոկատին: Քեռին խոստանում է հաջորդ օրը, որոշյալ ժամին ջոկատ ուղարկել հայերին փրկելու համար:

Մինչև Աստղիկի վերադարձը, թուրքերը և քրդերը կողոպտում են նրանց տունը, սպանում եղբայրներից մեկին:

Քաղաքի հրապարակում տաճկական սպան կարգում է զորքի ընդհանուր հրամանատարի հրամանը՝ իր բանակն ուղարկել գեղեցիկ աղջիկներին: Աստղիկը որոշում է հերոսական քայլի դիմել՝ մինչև Քեռիի մարդկանց գալը հետ պահել տաճիկ զորքի առաջնադասումը: Աստղիկը տաճկական զգեստով գնում է թուրքական բանակատեղին, որտեղ նորից հանդիպում է բեռլինյան ծանոթին:

Աստղիկը ենթարկվելով նրա փաղաքշանքներին, գինի խմեցնելով

ձգձգում է անձնատուր լինելը, սպասելով Բեռլինի ջոկատի գալուն: Նա սպասողական ապրումներով անընդհատ լուսամուտից դուրս է նայում: Լսվում է աղմուկ, իրարանցում: Ընդհանուր հրամանատարը հարձակվում է Աստղիկի վրա: Հենց այդ ժամանակ ներս է գալիս Մարիամը և սրահարում թշնամուն: Թուրքերը հասկանում են Աստղիկի գաղտնի դիտավորութունը և վիրավորում նրան: Աստղիկն ընկնում է մոր ոտքերի մոտ, բայց նրանք ուրախ են, որ կարողացել են կասեցնել թշնամու հարձակումը և փրկել կոտորածից:

Աստղիկի վերքից ծորոց արյունը դարձել է Հայաստանի փրկության խորհրդանիշը<sup>1</sup>:

Այս պիեսը թեև չի բեմադրվել, բայց լիովին համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի՝ այդպիսի թեմայով գրված պիեսների ոգուն: Չնայած դրան, «Արյունաներկ Արևելք» պիեսի սցենարով ռուսական կինոյի գործիչները 1914-1915 թթ. նկարել են համանուն վերնագրով առաջին կինոֆիլմը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը: Ֆիլմում նկարահանվել են Մոսկվայի Մեծ ու Փոքր թատրոնների, Կորչի և Նեղյոբինի թատրոնների մի խումբ դերասան-դերասանուհիներ: Ֆիլմը 1915-ի գարնանը և աշնանը ներկայացվել է Բաքվում և Ալեքսանդրապոլում:

Կամավորականների ջոկատների գործունեության մասին 1915-ին գրված ու բեմադրված պիեսների թվին է պատկանում նաև Արա Լեռիի (Մարգարյան) «Նախօրյակին» հինգ գործողությամբ դրաման: Մոսկվայում ուսանող Արմենի տանը տեղի ունեցող ժողովում քննարկում են կռվի դաշտ գնացող կամավորականների անելիքների հարցերը: Նրանք համոզված են, որ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից կարող են ազատել ռուսական բանակի հետ կողք-կողքի կռվելով: Հեղինակի գաղափարախոսական առանցքն ամփոփված է ուսանող Սերգեյի հետևյալ խոսքերում. «Մանկությունից ապրելով Հյուսիսում, ես հեռու եմ եղել այն ամենից, ինչ նույնքան անհրաժեշտ է մարդուն, որքան օդը: Բայց սիրելի Հայրենակիցներ, ես վերապրում եմ Հայրենիքս վիշտն ու ուրախութունը ձեզ հետ հավասար, երբ մեր ծննդավայրի վրա սև ամպեր են կուտակվել, ես ձեզ հետ եմ»:

Բննարկելով մի քանի բանաձևեր, ուսանողները կանգ են առնում Արմենի կազմած բանաձևի վրա, որտեղ ասվում է.

«Մոսկվայի հայ ուսանողութունը ընդառաջ գնալով պատմական

<sup>1</sup> Արևիկ (Բաքու) 1915, № 6:

պահի պահանջին, մարտական կամավոր խմբերով մտնում է ռուսաց կովկասյան բանակը, որպես նշանաբան ունենալով Հայաստանի ազատագրութունը»:

Արմենի և նրա ընկերների մտադրութունը խրախուսում են նրա սիրած աղջկա՝ Նյուերայի ռուս ծնողները: Գործողութուններն այնուհետև ծավալվում են կովի դաշտերում, դաշտային հիվանդանոցում, ուր որպես բուժքույր աշխատում են գիմնազիստուհի Նյուերան, ուրիշ ուսանողուհիներ: Կովի դաշտում մահացու վիրավորվում է Արմենը, Նյուերան և բժիշկներն անկարող են լինում փրկել նրա կյանքը:

«Նախօրյակին» պիեսի առաջին, թերևս միակ բեմադրութունը տեղի է ունեցել 1915-ի ապրիլի 13-ին՝ նրա բեմադրության համար թույլտվութունից մեկ ամիս անց: Թիֆլիսի Ջուբալովի անվան ժողովրդական տան հայկական մասնաճյուղի դերասաններով այն բեմադրել ու Արմենի դերը կատարել է Ամո Խարազյանը: Նյուերայի դերում հանդես է եկել Հասմիկը (Հակոբյան), նրա մոր՝ Գորսկայայի դերում՝ Աշխեն Արաքսյանը: Արմենի ընկերներ Տիգրանի և Աշոտի դերերը կատարել են Վահան Գալստյանն ու Լևոն Երամյանը:

Ահա, նույն շրջանի ևս մի պիեսի բեմադրութուն:

Բաքվում գործող Ալեքսանդր Ազարյանի «Ազատության ճանապարհին» չորս գործողությամբ դրաման ևս գրվել է 1914-ի դեկտեմբերին: Գրաքննության կողմից բեմադրության թույլտվութուն է ստացել 1915-ի հունվարի 15-ին: Երկու շաբաթ անց այն խաղացվել է Բաքվի Հայոց կուլտուրական միության թատերական մասնաճյուղի դերասանների կողմից:

«Ազատության ճանապարհին» պիեսը բազմամարդ է: Նրա գործող անձերից են՝ Խաչատուր էֆենդին (քաղաքի երեւելիներից մեկը), նրա աղջիկ Մարիամը, փախստական Սառան, նրա ամուսին Սարոն, նրա հայր Մկոն, հայ գնդի գլխավոր հրամանատար Մուշեղը, միսիոներ Աբրահամը, ուսուցիչ Խաչիկը, գիկտատոր Ֆարուխ փաշան, նրա քարտուղարը, թիկնապահը, գերմանացիների լիազոր Ֆոն Մալտիուսը, լրտես Մուրադը, Սուլթանի թիկնապահ Թուրդութ պեյը, երիտթուրքերի կոմիտեի գլխավոր Սուլեյման էֆենդին և ուրիշներ:

Պիեսի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1915-ի հունվարի 29-ին, Նիկիտինների կրկես-թատրոնում, Արմեն Արմենյանի (Պետեկի դերով) բեմադրությամբ: Գլխավոր դերակատարներն են եղել՝ Վ. Փափաղյանը՝ Ֆարուխ փաշա, Մկրտիչ Գարագաշը՝ Մուշեղ, Արուս Ոսկանյանը՝ Մարիամ և ուրիշներ<sup>1</sup>:

<sup>1</sup> Արև (Բաքու) 1915, № 22:

«Ազատութեան ճանապարհին» պիեսը նույն թատրոնում, նույն թվականի օգոստոսի 2-ին ներկայացվել է Բարսեղ Աբովյանի բեմադրութեամբ, իսկ 1916-ի օգոստոսի 21-ին Մայիլյանների Մեծ (օպերային) թատրոնում Արուս Ոսկանյանի բեմադրութեամբ ու Մարիամի դերակատարութեամբ<sup>1</sup>:

Առաջին պիեսի ընդունելութունից ոգևորված, Ազարյանը երկրորդ պիեսն է հրապարակ հանել: Դա նրա «Քաղաքացիական պարտք» չորս գործողութեամբ դրաման է, որի բեմադրութեան համար թույլտվութունն ստացել է 1915-ի ապրիլի 9-ին<sup>2</sup>:

Պիեսի գործող անձինք են՝ Բեռլինի համալսարանի նորավարտ բժիշկ Սարգիս Վանեցյանը, նրա հայր Արտեմը, մայրը՝ Երանուհին, աղջիկը՝ Սոֆիկը, գերմանուհի կինը՝ Օլգան, վերջինիս ծնողները, ազգային ինքնապաշտպանութեան կոմիտեի նախագահ Սիմոնյանը և ուրիշներ:

Արտեմ Վանեցու զավակները Արդահանի շրջանում կամավորական բանակում թուրքերի դեմ կռվելիս ցուցաբերած հերոսութեան համար պարգևատրվում են Գեորգիևյան խաչի շքանշանով: Կամավորների հետ, որպես գթութեան քույր աշխատում է նաև Հայաստան եկած Օլգան՝ Սարգիսի կինը: Այս պիեսի բեմադրութեան պատմութեան մասին տվյալներ չունենք:

Կամավորական շարժումների կազմակերպման ու գործունեութեան թեմային է նվիրված Ժիրայրի «Սարերի ետևում» չորս գործողութեամբ դրաման: Պիեսը նվիրված է Վանի ինքնապաշտպանութեան հերոսներ Օննիկ Վռամյանին (Դերձակյան), Վռամին (Արամ Մանուկյան) և Իշխանին (Նիկոլ Միքայելյան): Երեքն էլ հայոց ազատագրական պայքարի կարկառուն դեմքեր:

Ռուսական բանակի շարքերում կռվող հայերի ազատագրական պայքարից ահաբեկված Վանի կուսակալ Սևդեթը (Իրականում՝ Զեդեթը) յուրայիններին պատվիրել է Շատախի ճանապարհին սպանել պարագլուխներին և գլուխներն իրեն ներկայացնել: Ահա նրա խոսքերը՝ «Ամենից առաջ պետք է սպանել տալ կոմիտայինների գլխավորներին՝ նրանցից ամենավտանգավորներն են (ցուցակին նայելով) Վռամյան, այդ մարդը եթե կենդանի մնա, մեզ ապագայում էլ մեծ վնաս. Վրամ էֆենդի... Օ, այդ մարդը հրեշ է իմ աչքին, հետո Իշխանը, որ նուրբ քաղաքականութեամբ ինձ հավատացնում է

<sup>1</sup> Արև., 1915, № 115, 1916, № 182:

<sup>2</sup> Չարենցի անվան դրականութեան և արվեստի թանգարանի (ԳԱԹ) թատերական բաժնի ձեռագիր պիեսների ֆոնդ:

Հայերի բարեկամութեան մասին: Ես լավ գիտեմ, թե նրանք ում են հավատում, նրանք սպասում են ուուսներին, թող սպասեն: Նախ մենք, այժմ ուսնենալով այնպիսի ուժեղ թիկունք, որպիսին է Գերմանիան, կրեք չենք հաղթվի ոուսից, իսկ եթե հաղթվենք էլ, միևնույն է, Հայաստանը ոուսները կվերցնեն, բայց առանց հայի»<sup>1</sup>:

Ահա, հետևողական քաղաքականութուն հետապնդող կառավարութեան ներկայացուցչի հավատամքը, որը լիովին արտահայտում է Հայերի դեմ նրանց վարած բացահայտ ցեղասպանութեան ծրագիրը:

Պիեսում, բացի վերոհիշյալ կրեք դեմքերից, գործում են նաև Վահանը, Վարդանը, վարդապետը, աշուղը, Անահիտը, Հայկոն, Խեչոն, Աղքատ մատնիչը, գեներալը, Խալիլ բեյը, Շերիֆ բեյը, խուզարկու ոստիկանը, Ղաֆիեն և ուրիշներ, ընդամենը՝ 23 անձ:

«Սարերի ետևում» պիեսը Բաքվի Մայիլյանների Մեծ թատրոնում բեմադրել է Հովսեփ Ոսկանյանը, որը, միաժամանակ կատարել է Արամի դերը: Մյուս դերերում բեմ են բարձրացել Արուս Ոսկանյանը Մարոյի, Գրիգոր Ավետյանը Տխմար դաֆիե-լրտեսի, Հովհաննես Բաղդասարյանը Աշուղի դերերում և ուրիշներ: Առաջին ներկայացումը կայացել է 1917-ի մայիսի 25-ին<sup>2</sup>:

Կովկասահայութունը և առհասարակ Ռուսաստանի տիրապետութեան տարածքի հայութունը հետևողականորեն արձագանքել է 1915-ի ապրիլյան Մեծ եղեռնի ցավալի հետևանքներին, զբաղվել գաղթականութեանն ու որբերին օգնելու և խնամելու հարցերով: Այդ նպատակով շարունակվել է 1890-ականների կոտորածների ժամանակ ծնունդ առած «Եղբայրական օգնութուն Թուրքիայում տուժած հայերին» կարգախոսը:

1915-1920 թթ. տարբեր քաղաքներում ու գյուղերում կազմակերպվել են նպաստամատույց կոմիտեներ, հանգանակութուններ կատարվել և այդ բոլորը էջմիածնի միջոցով հասցրել կարիքավորներին: Այդ տարիներին «Մշակ» և այլ թերթերում տպագրվել են հարյուրավոր մարդկանց անուններ, ովքեր որ իրենց հնարավորութեան սահմաններում մուծումներ են կատարել: Այդ օժանդակութեանը նույնիսկ մասնակից են եղել ձապոնիայում ապրող մի բուռ հայեր:

Մի շարք քաղաքներում՝ Երևան, Ալեքսանդրապոլ (Գյումրի), Թիֆլիս, Դիլիջան, Գանձակ և այլուր կազմակերպվել են որբանոցներ, որոնցում կրթութուն են ստացել, արհեստներ սովորել, զբաղան-մշակութային կյանք ստեղծել:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Արև (Բաքու) 1917, № 107:

Օգնութեան ձեռքից մեկն էլ եղել է գեղարվեստական միջոցառումների (փախստականների օգտին ներկայացումներ, համերգներ, դասախոսութիւններ) կազմակերպումը տարբեր վայրերում:

Մի ուշագրավ երևույթ այս միջոցառումներից: Արևմտահայութեանը եղբայրական օգնութիւն ցույց տալու նպատակով, Մոսկվայի նպաստամատուց շայկական կոմիտեի կազմակերպած միջոցառումներից մեկը եղել է տեղի նշանավոր՝ Փոքր թատրոնի տնօրեն-գերասան-ռեժիսոր-գրամատուրգ Ալեքսանդր Յուժին-Սումբատովի «Դավաճանութիւն» դրամայի (իր լիբրետոյի) հիման վրա ռուս կոմպոզիտոր Մ. Մ Իպոլիտով-Իվանովի գրած համանուն օպերայի կատարումը Ջիմինի օպերային թատրոնում: Մետեխի կործանման տեսարանում նվագախումբը կատարել է «Ձեյթունցիների քայլերգը»<sup>1</sup>:

Եթե սփյուռքահայ գրականութեան մեջ 1915-ի աղետներից փրկված և գրականութեան մեջ անուն հանած հեղինակներին իրավացիորեն անվանում են մանկութիւն չունեցող գրողներ, ապա Անդրկովկասում ապաստան գտած նրանց ընկերակիցներին էլ պէտք է անվանել որբանոցային գրականութեան գրողներ:

Մեծ եղեռնից հետո, մինչև 1920-ականի սկզբները Անդրկովկասի մի շարք որբանոցներում կազմակերպվել են գրական խմբակներ, հրատարակվել են ձեռագիր և խմորատիպ հանդեսներ, որտեղ իրենց մկրտութիւնն են ստացել Նաիրի Զարյանը (Հայաստան Եղիազարյան), Գուրգեն Մահարին (Աճեմյան), Վաղարշակ Նորենցը (Երիցյան), Սարմենը (Արմենակ Սարգսյան), Խորեն Ռազին (Աճեմյան), Էդվարդ Խոճիկը (Խոճիկյան), պատմաբան Երվանդ Խալեյանը և շատ ուրիշներ:

Անդրկովկասի քաղաքներում լույս տեսած ձեռագիր և խմորատիպ գրական մամուլից են՝ «Արծվի Վասպուրական», «Հրազդան», «Նպատակ», «Փափաք» (Երևան, 1916-1917 թթ.), «Ծիածան», «Նոր սերունդ», «Փարոս» (Ալեքսանդրապոլ-Գյումրի, 1918-1923), «Արտիստ», «Կայծ», «Նոր աշակերտ» (Թիֆլիս, 1917-1923):

1915-ին Անդրկովկասի և Ռուսաստանի՝ հարավի ու հյուսիսի ամբողջ Հայութիւնը մտահոգված է եղել արմատախիլ արված արևմտահայութեանը՝ փախստականներին հենարան հանդիսանալու անհրաժեշտ հարցով: Այս ազնվափայլ հոգատարութեան շրջանում, մայիսի 6-ին Ալեքսանդրապոլում, տեղի փախստականներին հագուստ,

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1915, № 30:

անունդ հասցնելու օրերին հանկարծամահ է եղել Համառուսական քաղաքների միության, Աստրախան քաղաքի և գավառի ներկայացուցիչ Գեորգ քահանա Մկրտումյանը: Սիրված, գործունյա, գրական ձիրքերով օժտված, թատերասեր քահանայի կորուստը մեծ ցավ է պատճառել բոլորին:

«Մշակ» թերթի մայիսի 12-ի համարում «Փախստականներին խնամող կոմիտեի» կողմից Մկրտումյանի մահվան գույշժը հաղորդելուց բացի, թերթը տպագրել է նաև հանգուցյալի «Փախստականները» վերնագրով պատկերավոր բանաստեղծությունը, որտեղ թարմ տպավորության տակ նա խորին սրտացավությամբ նկարագրել է իր արյունակլիցների դառը ճակատագիրը:

Դրամատուրգիայից բացի, ցեղասպանության թեմայով արձակ և չափածո շատ գործեր են գրվել, բայց Մկրտումյանի գրածը ուրիշ որակ է, ուրիշ պատկերավոր արտահայտություն, որ բերում ենք ամբողջությամբ:

### Փախստականները

Գալիս են, գալիս, անթիվ, անհամար...  
Շարժվում են առաջ, անվերջ, անդադար,  
Որպես կատաղի դարնան հեղեղատ  
Ողողել են սար, ձոր ու անապատ  
Մարդիկ, անսասան, անխոս ու խոսուն,  
Ահի սարսափից բարձած վայնասուն,  
Անոթի, անքուն առաջ են մղվում,  
Կյանք ազատելու սև ուղիներում:  
Գալիս են նրանք՝ հուսահատ, վհատ,  
Անթիվ լլկվածներ՝ կույսեր ու հարսներ,  
Մերկ ու բոկոտան ծեր ու մանուկներ,  
Եվ ծնողագուրկ անտեր որբուկներ,  
Եվ անմխիթար, սգվոր այրիներ:  
Արյուն է ծորում նրանց սրտերից,  
Արցունք է մազվում տանջված աչքերից,  
Ցրտից գոսացած, սառած ձեռն ու ոտք,  
Ջախջախված գանգեր, սոված ստամոքս,  
Ծծկեր մանուկներ մոր գրկում անկյանք,  
Կազմում են սրանց դառը զարգարանք:  
Եվ այդ սգվոր վաշտի թափորը  
Շարժվում է առաջ... մեր սահմանները...  
— Բախտավոր մարդի՛կ, ազի՛ղ եղբայրներ,

Հույս ենք որոնում, կյանք ենք աղերսում,  
 Տվեք մեզ մի որջ, ձգեք մեզ փշրանք,  
 Որ դառն օրհասին ապրել կարենանք...  
 Փախստականներ... անտեր ու անտուն...  
 Զեր շեմքը եկանք, ձեր դուռն ենք բախում,  
 Մեր կուշտ եղբայրներ, ձեր գուլթը հայցում...  
 Կենդան մնացինք, մի սուրբ ուխտ ունենք —  
 Դառնանք մեր երկիր, զարկենք, զարկվենք,  
 Մեր ազիզ վաթան, սուր ու կրակից  
 Մեր արյան գնով նորից ետ խլենք<sup>1</sup>:

Դերասանուհի Սիրանուշը, որը ցեղասպանության թեմայով մի շարք պիեսներ է բեմադրել ու դերեր խաղացել, շուրջ մեկ տասնամյակ, ամեն անգամ, երբ Աստրախան հյուրախաղերի է գնացել, վայելել է Մկրտումյանի ընտանիքի հարգանքը: Այս անգամ էլ հյուրախաղերի դալով Թիֆլիս, լսելով իր լավ բարեկամի մահվան բոթը, «Մշակ» թերթի խմբագրության միջոցով 20 ռուբլի է նվիրել՝ «պսակի փոխարեն հօգուտ Վանի տառապյալ դժբախտների, ի հիշատակ դառն ցավով ողբացյալ անգնահատելի բարեկամիս՝ Գևորգ քահանա Մկրտումյանի»<sup>2</sup>:

Գաղթականների նկատմամբ կարեկցանքը Թուրքիայի դեմ բողոքի վերածելու մի շարք փորձեր են արվել նաև դրամատուրգիայում և թատրոնում: Նման ձեռնարկումներից մեկը տեղի է ունեցել 1915-ի դեկտեմբերի 17-ին Բաքվի բանվորական արվարձան Բալախանիի կրուժոկում: Բանվորական թատրոնների դերասան և ռեժիսոր Մեսակ Սառաջյանը (իր բննեֆիսին) բեմադրել է Մաժակի «Պատերազմի դաշտը» չորս գործողությամբ դրաման:

Պիեսը չի պահպանվել, բայց մնացել է մետաքսե կտորի վրա տպագրված նրա ներկայացման ծրագիրը<sup>3</sup>: Ծրագրից պարզվում են նրա գործող անձերը և դերակատարները: Նրանք են՝ Մուրադ (հարուստ գյուղացի) – Հ. Մինասյան, Խեչո (Մուրադի ազգական) – Մ. Սառաջյան, Շաքե, Նազե, Հուլիկ, Ցողիկ (Մուրադի աղջիկները) – տիկ. Արուս Ոսկանյան, օր. օր. Համեստուհի, Ռերեկա, Ագրինե, Սաքո (Խեչոյի ընկերը) – Ն. Բայրուրդյան, Հայր սուրբ – Գառնիկ, Վարդան – Դավիթ, Խենթ – Հայկազ, Թալևաթ բեգ (թուրք հրամանատար) – Գ.

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1915, № 99:

<sup>2</sup> Նույն տեղում, № 105:

<sup>3</sup> Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնի ծրագրի ֆոնդ, № 460:

Ռշտունի, Օմար (Թայկաթի թիկնապահ) – Տ. Սաֆյանոսյան, Գնդապետ – Պետյա (ըստ երևույթին դերակատարը ռուս է եղել, որովհետև նրա անունը ռուսերեն է գրվել):

Մուրադի չորս աղջիկների առկայությունը, որոնցից մեկի՝ Շաքեի դերակատարն արդեն Բաքվում ճանաչված դերասանուհի Արուս Ոսկանյանն է եղել, կռահել է տալիս, որ աղջիկներից մեկն առևանգվել է թուրքերի կողմից և ազատվել ռուս զինվորականի միջամտությամբ: Այն շրջանում հայերի փրկություն հարցը կապված է եղել ռուս զինվորականության հետ:

Այս նույն տարիների աղետյալ հայերի պատկերն է տվել նաև բաքվաբնակ Արմենակ Սանասարյանը: 1916-ին նա գրել է «Արյունոտ կիսալուսին» չորս գործողությամբ դրաման, որի վերնագրին հետևում է «տաճկահայ կյանքից» բացատրագիրը: Պիեսի ձեռագիրը պահպանվել է դերասան Հովհաննես Աբելյանի մոտ՝ ըստ երևույթին կարծիքի կամ բեմադրության նպատակով: Պիեսի վրա հեղինակի կամ Աբելյանի կողմից բեմադրա-ռեժիսորական նշումների բացակայությունը վկայում է, որ այն չի խաղացվել:

«Արյունոտ կիսալուսին» դրամայում պատկերված է գյուղական տիտուր կյանքը և թուրքերի բարբարոսությունները հայերի նկատմամբ: Պիեսը գրված է որպես բողոքի ճիչ ընդդեմ Հայ օրիորդների առևանգման, հարեմի «ապրանք» դարձնելու սանձարձակ սովորություն:

Իբրև գործող անձեր, պիեսում ներկայացված են հարուստ գյուղացի Մադոն, նրա դուստր Անթառամը, որին փախցնում է Մահմադ փաշան, տանում իր հարեմը, անունը փոխում՝ դարձնում է Զոյա: Այնուհետև՝ գյուղի հարկահան Մուրադը, նրա կին Սանամը, գավակները՝ Վարդգեսը և Լուսնիթազը, ավազակ-առևանգող Ահմադը, նրա օգնական Օսմանը, ներքինի Հարեմբեկը, հույն միջնորդուհի, աղախին և ուրիշներ: Ինք տարվա որոնումներից հետո, Մադոյին, Մուրադին և նրանց ընտանիքների անդամներին հաջողվում է գտնել Անթառամի հետքերը և ազատել հարեմից:

Հայոց կամավորականների գործունեության առանձին դրվագներ են արտացոլված դերասան Անդրանիկի (Սողոմոնյան) «Ռեսի աղջիկը» չորս գործողությամբ դրամայում, որ նա տպագրել է 1916-ին Թիֆլիսում Դաշտեցյան ազգանունով: Դրանով նա ակնարկել է իր՝ Դաշտեցի-Ներքին Ազուլիսցի լինելը: Պիեսը բեմադրության համար թույլտվություն է ստացել 1915-ի մարտի 15-ին:

Գյուղերն ավերող քրդերի դեմ պայքարում, երբ հազարավոր

Հուսահատ կյանքեր օգնություն են աղերսում, կռվի մեջ է մտնում Վերժինեն: Նա խեղդում է իրեն առևանգող քյուրդ բեկին: Անցնում է 19 տարի: Կամավորական ջոկատը ռուսական բանակի հետ գրավում է Հին Բայազետը և շրջակա վայրերը: Վերժինեի տղա Բաբկենը, որին այդպես էր կոչել նրա մայրը ի հիշատակ իր սիրեցյալի, իրեն լկտի պահելով սպանվում է որպես քրդի դավակ:

«Ռեսի աղջիկը» բեմադրվել է 1916-ին, Թիֆլիսի Արհեստավորաց ակումբում, հեղինակի ղեկավարութամբ, իսկ 1918-ին նույն ակումբում դերասան Գրիգոր Ավետյանի բեմադրութամբ: Պիեսի գործող անձերն են՝ Տեր Վահանը, Կարոն, նրա մայր Եղսոն, Ռես Սրգսյի աղջիկ Վերժինեն, որն առևանգվել է քրդերի կողմից և որդի ունի, նրա սիրած տղան՝ կռվում զոհված Բաբիկը, վերջինիս հայրը՝ ցնորված Ակոն, քյուրդ բեկը, Ռես Գրգոն, Քոռ Եղոն, Ալեն և ուրիշներ:

Անդրանիկն ընդգեմ ցեղասպանության մի պիես էլ Ամերիկա փոխադրվելուց հետո է գրել (1929-ին), «Դեպի հայրենիք» դրաման: Այս պիեսը գրեթե ինքնակենսագրական հիմք ունի՝ հայրենիքի կարոտի զգացումն ու վերադարձի իղձը: Չէ՞ որ ինքը ագուլեցի, կարսեցի կինը՝ Ազնիվը, շուշեցի փեսան՝ Եղիշե Հարութ(յունյան)ը Անդրկովկասի խառնակ ժամանակներում հեռացել են երկրից և ընտանիքով գաղթել Պոլիս, Եգիպտոս, Հունաստան ու հասել Ամերիկա: Իսկ ո՞ւմ հայտնի չէ՞ թուրքերի կոտորածն Անդրկովկասում, ադրբեջանցիների ջարդերը Բաքվում, Շուշիում, Ագուլիսում, ո՞ր մեկին դիմանային:

Անդրանիկն իր այս պիեսը քանիցս բեմադրել է Ամերիկայում: Վերջին անգամ խաղացվել է 1969-ի հունվարի 26-ին Լոս Անջելեսի Վիլշիրերել թատրոնում հեղինակի աղջկա՝ Գոհարի և նրա ամուսին Եղիշե Հարութի բեմական գործունեության 50-ամյակի առթիվ:

Եղիշե Հարութը հանդես է եկել ընտանիքի հոր՝ 60-ամյա նախկին ուսուցիչ Մելքոնի, իսկ Գոհարը՝ նրա 50-ամյա կնոջ՝ Ալմազի դերերում: Պիեսի մյուս գործող անձինք են՝ նրանց զավակները՝ 27-ամյա Բագրատը, 22-ամյա Սիրանը (Սիրանուշ) և նրանց բարեկամ 35-ամյա Գրիգորը:

Պիեսն սկսվում ու ավարտվում է հայրենիքի կարոտի թեմայով: Սկսվում է Սիրանի՝ վշտահար ու արցունքոտ աչքերով, կիթառի նվագակցութամբ երգով՝ նրա հոգեբանությանը հարազատ մի քառյակի կատարմամբ «Անուշ» պոեմից:

Ամպի տակից ջուր է գալի,

Դու չէ տալի, փըրփըրում,

էն ո՞ւմ յարն է նըստած լալի,  
Հոնգուր-հոնգուր էն սարում<sup>1</sup>:

Հայր ու աղջիկ խոսում են հայրենիք վերադառնալու մասին: Վեց տարի առաջ, իրենք էլ ոչխարի հոտի պես խառնվելով հայրենիքից հեռացողների խմբին, այլևս չեն կարողանում հաշտվել նոր միջավայրի հետ:

Գալիս է Մեկքոնի ճեմարանյան շրջանի աշակերտ Գրիգորը և Սիրանին հանձնում իր մոր նամակի հետ ուղարկված մի նամակ: Նամակը գրել է Սիրանի սիրած տղան՝ Սուրենը: Սուրենը նամակի մեջ ուղարկել է Սիրանենց անտեր-անմշակ մնացած պարտեզից քաղած մանուշակի չորացած տերևներ, որոնք է՛լ ավելի են հուզում հայրենակարոտ հորն ու աղջկան:

Մեկքոնը գիրք է գրում՝ «Դեպի հայրենիք» վերնագրով, որով նա ցանկանում է «ես կանգնեցնի օտարամոլներին, այլասերումից, քայքայումից»:

Մեկքոնի տղան՝ Բագրատը խոստանում է փաստաթղթեր պատրաստել հորն ու քրոջը Հայաստան ուղարկելու համար: Բայց հիվանդ հոր սիրտը չի դիմանում այդ ապրումներին:

Պիեսն էլ ավարտվում է Բագրատի խոսքերով՝ «Հայրենիքի կարոտը սպանեց նրան»<sup>2</sup>:

Անդրանիկի ավագ թոռնուհին, դերասանուհի Մագդա Եղիշեի Հարութը մի առիթով պատմում էր, որ պապիկը շատ է ցանկացել հայրենիք վերադառնալ..., բայց լավ է, որ չեկավ: Մագդան նկատի ուներ 30-ական թվականների բռնությունները:

1960-ական թթ. Անդրանիկի դերասանուհի դուստրերը՝ Գոհարիկն ու Պերճուհին, այնուհետև Հարութ ամուսիններն իրենց ավագ դստեր՝ Մագդայի հետ եկան Հայաստան, չիվեցին հայ թատերական կյանքի հետ, նկարահանումներ արին ու տարան Ամերիկա ցուցադրելու հայրենիքի կարոտյալներին:

1969-ին Մագդան հրավիրվեց Հայաստան: Էվայի դերով մասնակցեց Դրամատիկական թատրոնի «Մի բուռ մանրուք», իսկ էսթերի դերում՝ Սունդուկյանի անվան թատրոնի «Գինը» ներկայացումներում<sup>3</sup> և բարի հիշատակ տարավ ու բարի հիշատակ թողեց հայրենիքում:

<sup>1</sup> Անուշ, Առաջին երգի VI մասի 2-րդ քառատող:

<sup>2</sup> Դերասան Անդրանիկ, Դեպի հայրենիք, Լոս Անջելես, 1979, էջ 48:

<sup>3</sup> Բ. Հովակիմյան, Մագդա Հարութը հայրենի բեմի վրա, Գրական թերթ (Երևան) 1969, № 28:

1910-ական թթ. Թիֆլիսում գրված ու բեմադրված գործերից է նաև հայտնի թառահար, երաժշտական գործիչ Սամսոն Կարապետյանի «Զուլուժի աշխարհ կամ Սիրահարի վրեժը» չորս գործողությամբ պիեսը: Այն առաջին անգամ բեմադրվել է 1916-ի սեպտեմբերի 20-ին տեղի դրամա-օպերետային դերասանական խմբի կողմից, Հավլաբարի «Պալաս» թատրոնում: Բեմադրել է դերասան Գևորգ Փիրոսյանը, իսկ նվագախումբը ղեկավարել է հեղինակը՝ Ս. Կարապետյանը:

«Զուլուժի աշխարհը» համարվել է «ինքնուրույն դրամա-օպերետ, վերցված թուրքահայերի վերջին աղետալից կյանքից»: Ներկայացումը տրվել է հեղինակի բենեֆիսին: Դերակատարներից բացի մասնակցել են կամավորականներ, զինվորներ, գաղթականներ, երգիչներ<sup>1</sup>:

1916-1920 թթ. «Զուլուժի աշխարհը» բեմադրվել է նաև Բաքվում, Երևանում, Թավրիզում և այլ վայրերում: Բեմադրողներից են եղել՝ Սեդրակ Մաղալյանը, Միքայել Կոստանյանը, Արմեն Արմենյանը և ուրիշներ: Գլխավոր դերերի կատարմամբ Անդրկովկասում և Թավրիզում ելույթներ են ունեցել Լևոն Ալավերդյանը – Մելքոն աղա, Գայուշը (Գայանե Փեշտիմալճյան) – Աննա, Աստղիկ Երամյանը – Լուսին, Մնացական Տեր-Առաքելյանը – Սեպուհ, Գևորգ Փիրոսյանը – Փաշա և ուրիշներ:

Գրական-հասարակական և մշակութային կյանքում արևմտահայերի առաջադիմության մեջ վտանգավորութուն տեսնելու պատրվակով, Առաջին համաշխարհային պատերազմը առիթ ծառայեցնելով, երիտթուրքերի Համիդ-Թալեաթյան հայաջինջ քաղաքականութունը ծրագրված կարգով մի գիշերում շարքից հանեց արևմտահայության սերուցքը և միլիոնավոր հայերի քչեցին թուրքահպատակ երկրների անապատները: Այդ անմեղ մարդկանց մի մասին կոտորեցին ամեաբազանային եղանակներով, մյուս մասն էլ անապատներում անշնչացավ: Նրանք նույնիսկ պառլամենտի անդամներին չխնայեցին ու սպանեցին ամենաբիրտ եղանակով՝ քարով ջախջախելով գլուխները:

Նախապես ծրագրված այս ոճերն սկսվեց ի կատար ածվել 1915-ի ապրիլի 11/24-ի գիշերը: Տեղի ունեցավ նախադեպը չունեցող Հայոց Մեծ եղեռնը, 20-րդ դարի առաջին մեծ ոճրագործութունը:

Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնին զոհ գնացած բազում մտավորականների թվում նահատակվեցին նաև մի

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1916, № 211:

շարք թատերական գործիչներ՝ դերասաններ, դրամատուրգներ, թարգմանիչներ, թատերական քննադատներ: Ահա նրանցից մի քանիսը:

**Բյուրատ (Տեր-Ղազարյան) Սմբատ Ղազարի (2.3.1862 Զեյթուն – սպանվ. 2.8.1915 Այաշ) –** դրող, դրամատուրգ, խմբագիր, մանկավարժ: Հայ թատրոնում ամենից շատ տարածում գտած և բազմիցս բեմադրված պիեսներից մեկը Բյուրատի «Քաջն Վարդան Մամիկոնյան կամ Ավարայրի արծիվը» պատմահայրենասիրական ողբերգությունն է, որն ավանդաբար 1900-1960-ական թթ. անընդմեջ բեմադրվել է եզրիպատահայ թատրոնում, ինչպես և այլ երկրների թատերախմբերում: Զեյթունի հերոսական պաշտպանությանն է նվիրված նրա «Զեյթունի հավատքը կամ Զորանոցը» պիեսը: Մամուլի գործիչ Սարգիս Տիրունու բեմականացումով 1925-ին Բեյրութում բեմադրվել է նրա «Երլորդե Սասուն» վեպի բեմական տարբերակը:

**Զոհրապ(յան) Գրիգոր Խաչիկի (14. 6. 1861 Կ. Պոլիս–սպանվ. 7. 10. 1915 Ուրֆայի մոտ) –** գրող, խմբագիր, իրավաբան, հրապարակախոս: 1878-ից մուտք է գործել լրագրա-հրապարակախոսական աշխարհ:

1883-ից զբաղվել է փաստաբանությամբ:

1908-ի Օսմանյան սահմանադրությունից հետո ընտրվել է պառլամենտի անդամ:

Զոհրապը բավականին առնչություններ է ունեցել թատերական գործիչների հետ, գնահատել նրանց աշխատանքը: Սիրանուշի Մարգարիտ Գոտիեի («Կամելիազարգ տիկին») դերակատարության առթիվ, 1892-ին «Հայրենիք»-ում գրել է. «Քաջ կխոսի հայերենը, բան մը քիչ քիչ պակսելու վրա է դերասաններեն շատերուն»: Մի այլ առիթով գրել է՝ «դերասանական արվեստը միջակություն չընդունիր»:

Դերասան Թովմաս Ֆասուլյանյանն էլ նրա մասին գրել է. «Զոհրապ էֆենտիի գրչեն ելած... լուրջ քննադատությունք ուժ կուտան մեզի»: Զոհրապը բարձր է գնահատել նաև Աբելյան-Արմենյան կովկասահայ թատերախմբի հյուրախաղերի առաքելությունը Արևմտյան Հայաստանում և Պոլսում (1908-1809 թթ.): Այդ առթիվ նա գրել է. «Ադամյանի մահվընեն ի վեր Պոլիս սասնկ արվեստական ներկայացում տեսած չէր»:

Զոհրապն իբրև արվեստի մարդ, 1912-ին բացել է դերասան Մարտիրոս Մնակյանի բեմական գործունեության 50-ամյակի հանդեսը Կ. Պոլսում: Նրա գրչին են պատկանել «Զոքանչը» չափածո անավարտ և «Ղազարոս աղա» պիեսները, որոնցից վերջինը ձեռքակալության շրջանում կորել է:

Զոհրապի «Փոստալը» հոգեբանական նորավեպը Հակոբ Սիրունու բեմականացումով 1919-ին ներկայացվել է Կ. Պոլսում:

1960-ական թթ. Թբիլիսիում և Երևանում երկու անգամ տեսնվել ենք Վարդգես Սերենկյուլյանի կնոջ՝ մանկավարժ Հռիփսիմե Սերենկյուլյանի հետ, նամակագրություն ունեցել (Տե՛ս Կամար (Բեյ-րուլթ) 2012, №№ 16, 17): Մի նամակում խնդրել էր պարզել Զոհրապին և Վարդգեսին սպանող Չերքեզ Ահմետի ով լինելը, որին անտեղյակ էինք այն ժամանակ: Հիմա՝ ըստ թուրքական աղբյուրների պարզվել է, որ նա եղել է ահաբեկիչ դեղապետ, Վանի և Տիգրանակերտի կոտորածների կազմակերպիչն ու իրագործողը: Մի առիթով, նա սնապարծությամբ խոստովանել է. «Ոչ միայն Վան և շրջակայքը քարուքանդ ըրի, այնքան մը, որ մեկ հայ չես կրնար գտնել հոն, այլև սպանների հայ երեսփոխաններ Զոհրապը և Վարդգեսը: Բռնեցի Զոհրապը, գետնին տապալեցի զինքը, ոտքերուս տակը առի և մեծ քարի կտորով մը ջախջախեցի իր գլուխը, ջախջախեցի ու ջախջախեցի, մինչև զինքը սպաննեցի»<sup>1</sup>:

Խաթակ (Խաթակնյան) Գարեգին Կարապետի (6.8.1867 Ալեքսանդրապոլ – սպանվ. հուլիս, 1915, Տիգրանակերտ) – գրող, թարգմանիչ, թատերական քննադատ, հրապարակագիր: 1900-1910-ական թթ. ակտիվ դեր է կատարել Թիֆլիսի թատերական կյանքում, հոգվածներ է գրել Սիրանուշի, թատերական հարցերի մասին առհասարակ: Հայ թատրոնում նրա թարգմանությամբ են խաղացվել Ֆ. Դոստոևսկու «Ապուլը», Գ. Հաուպտմանի «Ռոդա Բերնդ», Ա. Շնիցլերի «Կտակ», Ն. Տիմկովսկու «Ուժեղներ և թույլեր» պիեսները:

Տիրացյան Վահան Հակոբի (1870-ական թթ. Կարին – սպանվել է 7.5.1915, Կարին) – դրամատուրգ, թարգմանիչ, թատերախոս: 1896-ին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած կոտորածներից հետո անդափովել է Անդրկովկաս, եղել է Բաքվի և Թիֆլիսի թատերախմբերի հուշարար: Գրած պիեսներից ամենամեծ ժողովրդականություն է վայելել «Վարդանանց պատերազմը», որը տասնյակ տարիներ չի իջել բեմից:

20-րդ դարի սկզբներից եղել է Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության անդամ, մասնակցել միջոցառումներին, հոգվածներ գրել: Ռուսերենից, գերմաներենից և ֆրանսերենից թարգմանել է Ա. Դյումա-որդու «Անառակ հայրը», «Ֆրանսիլիոն», «Օտարուհին», Գ. Հաուպտմանի «Միքայել Կրամեր», Ա. Բիսսոնի «ԱպաՀարզանի սյուրպրիզները», «Բարի գատավորը», Հ. Իբսենի «Նորա», Պ. Կոսսի «Ներոն» և այլն պիեսներ:

<sup>1</sup> Պայթար (Երևան) 1995, № 2-3, էջ 12-13:

**Ենովք Շահեն (Սոմոնճյան Ենովք Եփրանոսի (1881 Պարտիզակ – սպանվ. 28.7.1915, Այաշ) – խոստովանալից դրամատիկ դերասան, ասմունքող: Բեմական կյանքն սկսել է Մ. Մնակյանի ղեկավարած Օսմանյան թատերախմբում: 1908-ի սահմանադրությունից հետո, դերասաններ Աշոտ Մատաթյանի, Նշան Հովհաննիսյանի հետ կազմակերպել են «Աղատ բեմ» թատերախումբը: 1911-ին Վ. Փափազյանի, Ա. Մատաթյանի և ուրիշների հետ հյուրախաղերով ելույթներ են ունեցել Եգիպտոսում:**

Իբրև Պ. Ադամյանի երկրպագու, ձեռք է բերել նրա մի քանի բեմական դպեստ, որոնցից Օթեյլոյի թիկնոցը հետագայում անցել է դերասանուհի Սիրանուշ Ալիքսանյանի ձեռքը, վերջինս էլ ուղարկել է Երևան և այժմ պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնում, Ադամյանի ֆոնդում:

**Ենովք Շահենի խաղացած դերերից են՝ Թրիբուլե (Վ. Հյուգոյի «Արքան զվարճանում է»), Յագո, Կասիո (Շեքսպիրի «Օթեյլո») և ուրիշներ: Հաճախակի հանդես է եկել Ֆ. Կոպպեի «Դարբինների գործադուլը» մենախոսության կատարմամբ: Թատերական կյանքին նվիրված հոդվածներ է տպագրել Պոլսի մամուլում:**

**Ենովք Շահենի աքսորական կյանքի մասին սրտառու է հուշեր են թողել նրա ժամանակակից – փրկվածները:**

Թեև շատ է գրվել մեր անմեղ զոհերի կրած չարչարանքների մասին, բայց ավելորդ է վերհիշել երկու փրկվածների վկայութունները, մանավանդ, որ այս դերասանի կյանքը մնացել է ստվերում:

Բուխարեստի «Նոր Արշալույս» թերթում, իր «Այաշ» (Հուշ մը մեծ եղեռնին) վերնագրով հուշագրության մեջ Գաբրիել Պերպերյանը նկարագրել է հետևյալ սրտաճմլիկ տեսարանը: Այաշ լեռան կողքի Սարը Գըշլան վայրում, արգելափակված մի սենյակում իրենց վերջին օրերն են ապրել Սիամանթոն, Միհրդատ Հայկազնը, Կիկոն, Գ. Բարսեղյանը, (Ատոմ) Շահրիկյանը, Ենովք Շահենը, դոքտոր (Կարապետ) Փաշայանը, Ժիրայրը: «Ճակատամարտ» թերթի խմբագիր Համբարձում Համբարձումյանը դուրս երկու կողմի ծեփածածկ պատի վրա ածուխով նկարել է նրանց պատկերները: Պատերին գրված արձանագրութուններից Պերպերյանը գրի է առել հետևյալ զգուշավոր տեքստը՝ «Կխնդրվի դեղերուն չդիպչիլ, թույներ կան», «Թեյի բաժակը կոտրվեցավ» 16 հունիս, 1915: Ժիրայրի «մանր գիրով» գրած «Եշ (հինգշաբթի – Բ. Հ.) մաքրություն Համբարձումյանի խումբ. խոհանոց Ե. Շահենին»:

Հիշատակություն՝ «Ելքի դռան վրա Ե. Շահենին վերջին հասցեկալով մեկ արձանագրություն մը արդեն կճշտէ չարաբաստիկ թվականը, երբ անոնք խողխողվեցան՝ «կը մեկնինք անծանոթ ուղղությամբ 28 հուլիս 1915, Ե. Շահեն»<sup>1</sup>:

Անկախ վերոհիշյալ գործիչների կրած տառապանքներից, ակնհայտ է նաև թուրքերի խարդախության մի խորամանկ ձևի մերկացումը: Սրով, թրով, հրագեներով, քարկոծելով և այլ վայրենի միջոցներից բացի, հայերին կոտորել են նաև թունավոր դեղամիջոցներով իբրև թե չեն սպանվել, այլ մահացել են: Ահա թե ուր է հասել թուրքի ցինիզմը, նացիստական մտածելակերպն ու դործադրելը:

Սուլախյան Արտաշես Խաչատուրի (2.11.1884 Վան – սպանվ. 8.4.1915 Վան) – դերասան, թարգմանիչ, ռեժիսոր, մանկավարժ: Սահմանադրությունից հետո բեղմնավոր աշխատանք է կատարել Վանի թատերական կյանքում: Կնոջ՝ Կալիպսեի հետ հանդես է եկել դրամատիկական-կենսորոնական դերերում: 1909-ին Թիֆլիսում գործակցել է Սիրանուշի, Հ. Աբելյանի հետ, ծանոթացել Գ. Սունդուկյանի հետ, հեղինակից նվեր ստացել նրա պիեսների հրատարակություններից:

Սուլախյանը Վանի թատրոնում բեմադրել է Սունդուկյանի «Խաթաբալա» կատակերգությունը, Շիրվանզադեի «Պատվի համար», Շեքսպիրի «Օթելլո» և այլ պիեսներ: Թուրքերենի է թարգմանել ու բեմադրել «Պատվի համարը» և «Օթելլոն» – կատարելով էլիզբարյանի և Օթելլոյի դերերը: Եվ այս բոլորը մանկավարժական աշխատանքին զուգընթաց:

Բրուտյան Աբրահամ (1890 Վան – սպանվ. 8.4.1915 Վան) – դերասան, մանկավարժ: Եղել է Վանի թատերական գործունյա դերասաններից մեկը, Ա. Սուլախյանի ակտիվ աջակիցը, նույնպես դրամատիկական դերերի հմուտ դերակատար: Խաղացել է հայերեն և թարգմանական պիեսներում, ինչպես նաև թուրքերեն բեմադրություններում: Սուլախյանի հետ, նույն օրը սպանվել է իր ծննդավայրում:

Վերադառնանք վերը հիշատակված երկրորդ հուշագրությանը:

Հեղինակը Հալեպի «Եփրատ» թերթի պատասխանատու-տնօրեն, բժիշկ Խ. Պողոսյանն է: «Ապրիլի 24-ի հուշերես» ակնարկում նա գրել է. «1915-ի ապրիլի 24-ի չարազետ դիշերին ձերբակալվածներս, թվով 250 է ավելի, հետևյալ երեկո առաջնորդվեցինք Հայդար Բաշայի կայարանը – մինչև էնկյուրիի վերջին կայարանը՝ Սրնճան քյոյ, ուր աքսորվածներս երկու մասի բաժանվելով, մեկ մասը Չանդըրի ճամբան բռնեց և մյուսը Այաշի...»:

<sup>1</sup> Նոր Արշալույս (Բուխարեստ) 1926, № 393 (25 ապրիլի):

Այս հուշաբեկորում Պողոսյանը բացահայտել է մի մեծ ճշմարտություն, որ թուրքական պատմագրությունը հերքելով հերքում է առանց գեմքի մի մկանը շարժելու կամ գույնը փոխելու:

Այդ ճշմարտությունն այն է, որ բոլոր ձերբակալվածները նախապես ցուցակագրված են եղել: Այս փաստը հավաստում է, որ ձերբակալությունները կանխամտածված, ծրագրված ակտ են հանդիսացել: Ահա թե ինչպես է եղեռնի կանխամտածված լինելու ծայրը բացել Պողոսյանը: Նա գրել է. «Կերևի թե Պոլսո սատիկանությունը ձերբակալվելիք հայերու ցանկը պատրաստելէ վերջը, զայն շրջաբերականով մը զրկած էր բոլոր պահականոցներուն, որպեսզի ցանկին մեջ գտնվող հայեր անմիջապես ձերբակալվին և կեղրոնական բանտ դրկվին: Ասկե ծագում էր, որ նույն անունը կրող մեկե ավելի հայեր ձերբակալված և աքսորված էին»<sup>1</sup>:

Ի հաստատումն այս ամենի, հուշագիրը մի քանի օրինակ է բերել: Պրուսայի ազգային վարժարանի տնօրեն, դաշնակ մտավորական Վրթանես Փափազյանի տեղ ձերբակալվել է «անուս ծերունի մը, որ գեթախտություն ունեցած էր նույն անունը կրելու»: Իսկ Մաքրիգյուղի թաղապետության նախագահ Հարություն Գալֆայանի անունով ձերբակալվել են նույն անունն ունեցող երկրագործ, վարժարանի ուսուցիչ, վաճառական:

Այս տվյալները ժամանակին հրապարակ է հանել աքսորական – ականատես վերապրողներից մեկը և ոչ թե այսօրվա մարդը: Այս օրինակներից ո՞ր մեկն է ժխտելու թուրք կեղծարարը, ուրացողը, ուրիշի աչքին թող փչող լրագրողը կամ պատմաբանը: Ափսոս, որ այդպիսիների ականջակոթին հասցրած այս ապտակը միայն հայերեն է հնչում:

**Տեր-Սահակյան Կարապետ (Սեդրաք) ծայրագույն վարդապետ Մովսեսի (9.1882 Մուշ – սպանվ. հուլիս 1915, Տրապիզոնի Թոց գյուղ)** – բանասեր, բանաստեղծ, դրամատուրգ, «Բաղմավեպ» հանդեսի խմբագիր: Արամայիս Մամիկոնյան անունով գրել է «Հովհաննես Չմշկիկ» պիեսը: 1910-ին Պոլսում հրատարակել է «Համիտի տապալումը» գիրքը: «Բաղմավեպ»-ում անստորագիր հոգված է գրել կովկասահայ ականավոր դերասան Հովհաննես Աբելյանի բեմական դործունեության 25-ամյակի առթիվ (1908):

1910-ական թթ. սկզբներին թատերական ասպարեզ է մուտք գործել հանրահայտ հնչակյան-հեղափոխական, մեղրեցի Փարամազը (Մաթևոս Սարգսյան): Ջենքով կռվելուց բացի, թուրքական բռնա-

<sup>1</sup> Եփրատ (Հալեպ) 1930, № 283 (26 ապրիլի):

պետութեան դեմ նա մարտնչել է նաև գրչով: Գրական իր ուժերը նա փորձել է դրամատուրգիայում – մարտական խոսքերով կուպելու թշնամու դեմ: Բայց նա իր կարճատև կյանքում չի հասցրել լիովին ճաշակել իր պիեսների բեմադրութուններից ստացած հրճվանքը: Իր մարտական 19-ը ընկերների հետ նահատակվել է 1915-ի հունիսի 15-ին: Նրանց կախաղան են հանել Պոլսի Բայազիդի հրապարակում, ժողովրդի աչքի առաջ:

Համագործակցելով Տիգրանակերտի հնչակյան թատերախմբի հետ, Փարամազը նրանց համար գրել է «Ձեռքերը վեր կամ ճուղուպրիստները» (տպվ. 1917, Չիկագո), այնուհետև «Պաքո» և «Քամու բերածը, քամին կտանի» (երգախառն, տպվ. 1919, Չիկագո) պիեսները:

Մեր թատրոնի պատմութեան մեջ բեմադրութեան են արժանացել Փարամազի «Ձեռքերը վեր» և «Պաքո» պիեսները: «Ձեռքերը վեր» չորս գործողութեամբ դրաման իրական կյանքից առնված գործ է, որի գործողութունները կատարվել են 1907-ին, Բաքվում: Վերնագիրն իսկ հեղափոխական պայքարի կնիք է կրում: Պիեսը բեմադրվել է թե՛ հեղինակի կենդանութեան և թե՛ հետմահու տարիներին:

Առաջին բեմադրութունը կայացել է 1913-ին, Տրապիզոնում<sup>1</sup>: Բեմադրել է գրական-մանկավարժական-հասարակական գործիչ Գարեգին Կոզիկյանը (գրական-հեղափոխական անունով՝ Եսալեմ), թատերասերների մասնակցութեամբ:

«Ձեռքերը վեր» պիեսի հաջորդ բեմադրութունը տեղի է ունեցել 1914-ին Վանում<sup>2</sup>: Բեմադրողն է եղել հայտնի մանկավարժ-թատերական գործիչ Արտաշես Սուլխյանը, որն իր բեմադրութուններով որոշակի դեր է խաղացել Վանի թատրոնի պատմութեան մեջ:

Անցել են չարաբաստիկ-աղետալի տարիները, բայց չեն մոռացվել ոչ հեղինակը և ոչ էլ նրա պիեսը: 1926-ի հունիսի 6-ին Լիոնի (Ֆրանսիա) Ս. Դ. հնչակյան մասնաճյուղի նախաձեռնութեամբ, հնչակյան «Ասուպ» թատերախումբը ներկայացրել է «Ձեռքերը վեր կամ ճուղուպրիստները» պիեսը, որի մեջ Միշայի դերով ելույթ է ունեցել Պետրոս Արզումանյանը:

1929-ին «Ձեռքերը վեր» պիեսը մուտք է գործել ամերիկահայ թատրոն: Բեմադրութունն իրականացվել է Ուոթերթատունի «Շահումյան» թատերախմբի կողմից<sup>3</sup>:

«Ձեռքերը վեր» պիեսն իր հետաքրքրութունը չի կորցրել նաև հետագա տարիներին: 1935-ի հունիսի 23-ին այն ներկայացվել է Բեյրութի Սահակյան վարժարանի սրահում, «Պանդուխտ» թատեր-

<sup>1</sup> Երիտասարդ Հայաստան (Նյու Յորք) 1955, № 72:

<sup>2</sup> Արմենիա (Մարսել) 1914, № 30:

<sup>3</sup> Երիտասարդ Հայաստան (Չիկագո) 1929, № 15:

րախմբի ուժերով: Բեմադրողն է եղել վաստակաշատ դերասան և ռե-  
ժիսոր Պողոս Մենտիլյանը: Ներկայացմանը մասնակցել են դերասա-  
նուհիներ Ժամենը, Ս. Դավթյանը (Մենտիլյանի կինն ու զոքանչը)  
և դերասան Գևորգ Թյուլթյունճյանը, ուրիշներ:

Փարամազի դրամատիկական ժառանգությունից բեմադրության  
է արժանացել նաև նրա «Պաքո» պիեսը: Առաջին անգամ բեմադրվել  
է 1924-ի օգոստոսի 31-ին, Կիլիկիայի Պեյլան գյուղի եկեղեցու բա-  
կում, մի խումբ երիտասարդների կողմից՝ ի նպաստ Ազգային վար-  
ժարանի: Թագավորի դերակատարն է եղել ձեմիլ Պեզճեանը:

Նույն թվականի նոյեմբերի 29-ին էլ «Պաքոն» ներկայացվել է  
Կիլիկիայի Վազըֆ գյուղի Ս. Դ. Հնչակյան կուսակցության պատա-  
նեկան միության կողմից<sup>1</sup>:

Ի հարգանս մեծ հեղափոխականի, 1920-ական թթ. կեսերին Ամե-  
րիկայում և Մարսելում գործել են «Փարամազ» անունով թատե-  
րախմբեր:

Թուրքական բռնությունների, կոտորածների, հայերի ունեցված-  
քի թալանի, իրենց հարազատ տնից-վայրերից արտաքսելու դեմ  
պայքարի ելած արևմտահայ և արևելահայ հայրենասերների նկատ-  
մամբ պարբերաբար մահապատիժներ կիրառելու ցանկում ամենա-  
սոսկալի պատժի են արժանացել Հնչակյան կուսակցության գործիչ-  
ներ Գալուստ Անդրեասյանը և Հաբեթ Թևեքելյանը: Սասունի հերո-  
սամարտերին մասնակից այդ անվեհեր մարտիկները զոհվել են ամե-  
նաբարբարոսական եղանակով: 1904-ի նոյեմբերի 21-ին խարբերվից  
ոչ հեռու Մեղրեք քաղաքում նրանց գլխատել են կացնով<sup>2</sup>: Նրանց  
դիակներն ի տես բնակչության երեք ժամ հրապարակում մնալուց  
հետո, հնարավոր է եղել տանել խարբերդ և այնտեղ հողին հանձնել:

Շապին Գարահիսարցի այս երկու հեղափոխականների անուն-  
ներն իրար միացնելով դարձրել են միանուն՝ Հակոբ Հաբեթ: Նրանց  
մասին «Հակոբ Հաբեթ» վերնագրով վեց գործողությամբ պիես է  
գրել Հնչակյան գործիչ Լևոն Մարտիրոսյանը: 1914-ին նա փորձել է  
Պոլսում տպագրել այդ պիեսը, սակայն գրաքննության կողմից ար-  
գելվել է նրա հրատարակութունը: Փոխադրվելով Ամերիկա, Մար-  
տիրոսյանին հաջողվել է իր պիես-խոնարհումը նահատակների  
առաջ 1919-ին տպագրել Չիկագոյում լույս տեսնող «Երիտասարդ  
Հայաստան» թերթում:

<sup>1</sup> Սուրիական մամուլ (Հալեպ) 1924, № 301, 340:

<sup>2</sup> Մանուկ Գ. Ճիզմեճյան, խարբերդ և իր գավախները, Ֆրեզնո, 1955, էջ 387:

Որքան մեզ հայտնի է, Լ. Մարտիրոսյանի «Հակոբ Հաբեթ» պիեսի առաջին բեմադրությունը կատարվել է 1920-ի փետրվարի 23-ին Բոստոնում, տեղի Ս. Դ. Հնչակյան «Պայքար» դերասանական խմբի կողմից<sup>1</sup>: Նույն թվականի մայիսի 7-8-ին «Հակոբ Հաբեթը» բեմ է հանվել Վառնայի թատերախմբում<sup>2</sup>:

Հետագա բեմադրություններից հայտնի է 1935-ի մայիսի 5-ի Վիննոն (Ֆրանսիա) տրված ներկայացումը: «Հակոբ Հաբեթն» այդտեղ խաղացվել է Թրագոշի բեմադրությամբ: Հիմնական դերերի կատարողներն են եղել՝ Նշան Տեր-Սարգսյանը – Հաբեթ, Կարապետ Ճելլոյանը – Հակոբ, Փայլածու Ճելլոյանը – Հաբեթի կինը, Մարիամ Մինասյանը – Հաբեթի մայրը, Արտաշես Սինասյանը – Հաբեթի գաժակը՝ Աշոտ և ուրիշներ<sup>3</sup>:

Փարիզի «Ապագա» թերթի վկայությամբ՝ բոլոր դերակատարներն իրենց դերերը լավ են կատարել: Ուրեմն, ներկայացումն իրեն բարոյաճողեբանական հաճելի ներգործություն է ունեցել հանդիսատեսների սրտերում:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբնական շրջանում, Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչույթյանը թուրքական ջարդարանների կոտորածներից ու հալածանքներից փրկելու նպատակով, Անդրկովկասում կազմակերպված կամավորականների շարժման իրենց մասնակցությունն են բերել նաև մի շարք թատերական գործիչներ: Եվ եթե կամավոր Վահրամ Փափազյանին, դեմքի մարդ չլինելով, խնայել են՝ կարևորել նրա տեղն ու դերը բեմի վրա, ապա պատերազմի թատերաբեմի իսկական մարտիկ է եղել զինվորական կրթություն ստացած սպա-դերասան Արշավիր Շահխաթունին, որն ակտիվորեն մասնակցել է Արևմտյան Հայաստանում թուրքերի դեմ մղված մարտերին՝ փոխգնդապետի աստիճանով: Ռազմադաշտ մեկնելուց առաջ, Շահխաթունին հրաժեշտի ներկայացումներ է տվել Բաքվում և Թիֆլիսում, որտեղ նրա խաղընկերներն ու հանդիսատեսները խաչ և սուր են նվիրել՝ հաջողությունների մաղթանքներով:

Թիֆլիսի թատրոնի դերասան Լևոն Ալավերդյանը ծառայել է սանիտարական զնդում: 1914-ի աշնանից Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերության թատերախմբի դերասանուհի Ժամանը (Մարիամ Եգանյան, Գրիգորյան) կես տարի սովորել է տեղի Նադեժ-

<sup>1</sup> Հայրենիք (Բոստոն) 1922, № 2342:

<sup>2</sup> Երիտասարդ Հայաստան (Չիկագո) 1920, № 10:

<sup>3</sup> Ապագա (Փարիզ) 1935, № 142:

գինսկայա բուժքույրական դասընթացներում: Յերեկներն աշխատել է Միքայելյան հիվանդանոցում և Օրթաճալայի հոսպիտալում, իսկ երեկոները մասնակցել Արտիստական թատրոնի ներկայացումներին: 1918-ի աշնան սկզբներին, նախքան Օսմանյան թուրքերի ներխուժումը Բաքու, ժամենը, որպես բուժքույր, ծառայել է Համազասպի գնդում, Շամախի-Բաքու հատվածում:

Մինչև Բաքվի Կոմունայի անկումը (1918-ի սեպտեմբերի սկիզբ), հանխատեսելով վերահաս վտանգի սպառնալիքը, շատ թատերական գործիչների պես, Բաքվից հեռացել է նաև դերասանուհի Վարվառե Մելիքյանը: Նա աղջկա՝ Վարյայի և փեսայի՝ Նույնպես դերասան Սուրեն Բուդաղյանի հետ փոխադրվել են Մոսկվա և աշխատել Հայ օգնություն բուժկայանում: Հետո բախտի անիվը նրանց տարել է Իրկուտսկ, այնտեղից՝ Խարբին (Չինաստան): 1921-ին, Խարբինում, ընտանիքով և տեղի հայ թատերասերների ուժերով «Պեպո» ներկայացումով նշել են ինչպես պիեսի առաջին բեմադրություն 50-ամյակը, այնպես էլ Վ. Մելիքյանի բեմական գործունեություն 25-ամյակը: Այդտեղից էլ նրանք չվել են Ամերիկա և իրենց բեմական գործունեությունը շարունակել Ֆրեդնոյում:

Հեղափոխական դեմքերից բացի, հայ գրականության մեջ (արձակ, չափածո, դրամատուրգիա) կարևոր տեղ են գրավել նաև ազատագրական պայքարի մարտիկների հարազատների՝ մայրերի, կանանց կերպարները: Դրամատուրգիայում դա առանձնապես իր արտահայտություն է ստացել մեկ գործողությունամբ, մի քանի գործող անձերով պիեսներում, որոնք պակաս հուզիչ ազդեցություն չեն թողել, քան ծավալուն գործերի բեմադրությունները: Հնարավոր է, որ ստորև ներկայացվող մի ասմունքային ելույթի պատմությունը եզակի եզրած լինի, բայց թողած տպավորությունը հուզիչ օրինակ դարձած հայոց ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ:

Պոլսահայ դերասանուհիներ Վարդիթեր և Մարի-Հրանուշ Ֆելեկյան քույրերը 1900-ական թթ. սկզբներին իրենց հյուրախաղերն իրանում ավարտելուց հետո, բեմական կյանքը շարունակել են Ամերիկայում: Ինչպես ամենուրեք, այնպես էլ այդտեղ ներկայացումների հասույթի մի զգալի մասը նրանք նվիրել են բարեգործական նպատակների: Դրանցից մեկը եղել է Տարոնի անապահով հայություն օգտին տրված երեկույթը:

1905-ի փետրվարի 22-ին Նյու Յորքում տեղի ունեցած այդ երեկույթի ժամանակ, Վարդիթեր Ֆելեկյանն օրվա հուզող հարցերի առնչությունամբ, սև զգեստ հագած արտասանել է «Ձինվոր կերթամ

Հայաստան» Հայրենասիրական բանաստեղծությունը<sup>1</sup>: Այնքան հուզիչ է եղել դերասանուհու արտասանության տպավորությունը, որ անընդհատ ծափահարություններով մի քանի անգամ ընդհատվել է բանաստեղծության մատուցումը: Այս ելույթը ոչ պակաս կարևոր նշանակություն ունի, որքան մեծածավալ ստեղծագործությունն ներկայացնելը՝ Հայրենիքի կարոտն ու նրան օգտակար լինելու, նրան կատմամբ սիրո և նվիրվածության հավատարմության արտահայտությունը: Հետո կրկնվել է ուրիշների կողմից:

Հայոց ազատագրական պայքարի պատմությունը Հայ գրողների մոտ երբեմն իր արտահայտությունն է ստացել դրական փոխկապակցության մեջ: Եվ դա բնական էր: Նրանք՝ նույն սերնդի մարդիկ լինելով, մեկն այսօր, մյուսը՝ վաղը, չէին կարող անտարբեր լինել իրենց աչքի առաջ կամ շրջապատում կատարվող իրադարձությունների նկատմամբ:

1905-ին «Շիրակ» (Ալեքսանդրիա) ամսագրի առաջին համարում տպագրվել է գրող-հրապարակախոս Միքայել Կյուրճյանի «ազգային կյանք» առնված «Տուրքը»<sup>2</sup> մեկ գործողությունամբ դրաման, որի «գործողությունը կանցնի Կ. Պոլիս, 1895-ի դեպքերին կողք»: «Տուրքը» Կյուրճյանի առաջին և ինքնուրույն միակ պիեսն է: Դրանից հետո նա համագործակցել է Երվանդ Օտյանի և Տիգրան Կամսարականի հետ մի քանի գործի հեղինակակից դառնալով:

«Տուրքի» գործող անձերն են՝ այրի տիկին Սուրբիկ Հանրմը, նրա որդի Արամը և նրանց հարեանուհի Մաքրուհին՝ Արամի մանկության ընկերուհին: Արամն ընկերների հետ իր ազգային տուրքն է տալիս հեղափոխական գործին: Գործողությունն ավարտվում է Արամի փախուստով և այդպիսով ազատվում հավասարի ձերբակալումից:

Տարիներ անց, մայրական թեման Հաստատուն տեղ է գրավում Հայ դասական գրողների ստեղծագործական կյանքում և պարզորոշ վկայում նրանց մշտական կապվածությունը հարազատ ժողովրդի հույզերի ու հոգսերի հետ: Ասպարեղ է գալիս Վահան Թեքեյանի «Մայրերը» մեկ գործողությունամբ պիեսը, որը թեև նա գրել է 1922-ին<sup>3</sup>, բայց արտացոլում է 1908 թվականի ամռան վերջերի պոլսահայ միջավայրը: Սա ևս Թեքեյանի միակ դրամատիկական գործն է: (Մեկ տասնամյակ անց, Սուրեն Պարթևյանի հետ նա բեմականացրել է Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուց» վեպը):

<sup>1</sup> Արմենիա (Մարտի) 1905, № 30:

<sup>2</sup> Շիրակ (Ալեքսանդրիա) 1905, № 1:

<sup>3</sup> Բարձրավանք (Կ. Պոլիս) 1922, № 1:

Ինչպես ժամանակին ճիշտ նկատել է թատրոնի և կինոյի տեսու-  
թյանն ու պատմությանը քաջատեղյակ ռեժիսոր Արթի Հովհաննիս-  
յանը, Թեքեյանն իր դրամայով շարունակել է Կյուրճյանի «Տուր-  
քը», թե հեղափոխության թեմայի բովանդակությամբ, և թե գործող  
անձերից ոմանց կյանքի շարունակությունը տալով: «Գրություննե-  
րը, — գրել նա, — թատերայնորեն կցվելով, ուշագրավ բանաստեղծա-  
կան ներքին կապ ու շունչ կդրսևորեն»<sup>1</sup>:

Թեքեյանի մոտ հեղափոխական Արամը տասներկու տարի անց  
(Օսմանյան Սահմանադրությունից՝ 1908-ից հետո) վերադառնում է  
Կ. Պոլիս, մայրական օջախը: Իսկ քանի՞ քանիսները զոհվել են ազա-  
տագրական պայքարի ճանապարհին, խոր սուգի մեջ պահելով նրանց  
սպասող հարազատներին: Փրկված Արամն ի վիճակի է ճշմարտու-  
թյունն ասել ազգային գործին նվիրված զավակին սպասող մորը:  
Այդ վիշտը բոլորը հասկանում են և լռությամբ տանում ցավը:

Կյուրճյանի «Տուրքը» և Թեքեյանի «Մայրերը» պիեսների համա-  
տեղ առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1996-ի հուլիսի 10-  
ին, Երևանի Սուենդուկյանի անվան թատրոնի երկրորդ հարկի ճե-  
մասարհում, շատ թեթև ձևավորումով և հանդիսատեսների համար  
երկու կողմում տեղադրված նստարաններով: Ներկայացումն ընթա-  
ցել է սուենդուկյանցի դերասան-դերասանուհիների ընթերցման եղա-  
նակով և պատմիչի նկարագրությամբ: Երկու պիեսի կերպարների  
դերակատարները նույն էին՝ Սուրբիկ հանրմ - Ժենյա Ավետիսյան,  
Արամ - Արտաշես Ալեքսանյան, Մաքրուհի - Լուսինե Ավետիսյան:

Ներկայացման քննարկմանը՝ բեմադրող Արթի Հովհաննիսյանից  
հետո գնահատության խոսք ասացին բեմական խոսքի դասախոս  
Հրաչուհի Զինանյանը, սողերիս գրողը և ուրիշներ:

«Տուրքը» և «Մայրերը» Ա. Հովհաննիսյանը նույն թվականի  
դեկտեմբերի 1-ին Հայ մշակույթի տանը ներկայացրել է նաև Փարի-  
զի Հայ թատրոնի ընկերակցության խմբի ուժերով, թատերական ըն-  
թերցումների հաջորդական շարքում, առանց բեմական զգեստի,  
պայմանական միջոցներով հանդիսատեսին հասցնելով պիեսների  
բովանդակությունը: Այստեղ ևս երկու պիեսում կրկնվող կրեք՝  
գլխավոր դեմքերի դերակատարներն եղել են նույն դերասանները՝  
Սուրբիկ հանրմ - Լենա Չորպաճյան, Արամ - Արսեն Այնթապյան,  
Մաքրուհի - Հերա Թոսունյան: Մյուս դերերը («Մայրեր»-ում) կա-  
տարել են՝ Միհրդատ Ապակյան - Դանիել Նշանյան, Ծավարչ Խնկու-  
նի - Թորոս Գոֆթիկյան, Հռիփսիմե Մելիքյան - Նայիրի Հովսեփյան,  
Սպասուհի - Հելգա Գևորգյան, Ծագիկ Գրիգորյան - Մարգարիտ Փել-

<sup>1</sup> Հայ թատերագիրներու նվիրված թատերական ընթերցումների 2-րդ շարքի ներ-  
կայացման ծրագիրը (1996, դեկտեմբերի 1):

Թեքյան: Թեքեյանի պիեսում մայր և որդի՝ Սուրբիկ հանըմը և Արամը կրում են Գոհարյան, իսկ Մաքրուհին՝ Ապակյան ազգանունները: Բեմական գործողությունների մեկնաբանություններն ընթերցել է խմբի անդամ Արմինե Գրիգորյանը:

Մոռացությունից հանվել են մայրերին նվիրված ևս երկու պիես, որոնք նույնպես առնչվում են հեղափոխական կյանքին և հարստացնում ցեղասպանությունից դեմ պայքարի պատմությունը նվիրված պիեսների ցանկը: Դրանցից մեկը Ավետիս Ահարոնյանի «Մայրերը» վերնագրով արձակ գործն է, որը հեշտությամբ դրամայի է վերածվել և բեմադրվել տարբեր թատրոններում: Ահարոնյանի արձակին իր կենդանի լեզվով գրված լինելու հանգամանքով առանձին դժվարություն չի պատճառել բեմականացնողների համար:

Ահարոնյանի «Մայրերի» բեմականացման բեմադրությունից առաջին փորձը կատարել է Վրաստանի Օքրոյակերտի դպրոցի ուսուցիչ Մնացական Մարությանը, որը տարիներ անց դարձավ Թբիլիսիի հայկական թատրոնի լավագույն դերասաններից մեկը: Ներկայացումը տեղի է ունեցել 1912-ի հունվարի 7-ին նույն դպրոցի դահլիճում: Ռուհանի դերակատարը եղել է ինքը՝ Մարությանը<sup>1</sup>:

Տարագրյալ տաճկահայերի նկատմամբ մշտապես ուշադիր Բաքվի հայությունը հետ համատեղ, իր կարեկցանքն ու մխիթարությունն է արտահայտել տեղի Հայոց Կուլտուրական միությունից թատերական մասնաճյուղը: Դերասանուհի Ալմա Սաֆրազյանի ղեկավարությամբ գործող ժողովրդական ներկայացումներ կազմակերպող՝ Հայ դրամատիկ թատերասերների ընկերակցությունն իր 6-րդ ձևոնարկը նվիրել է Ահարոնյանի «Մայրերի» բեմադրությանը<sup>2</sup>:

«Մայրերի» բեմադրությունը Բաքվում տեղի է ունեցել 1916-ի ապրիլի 17-ին: Բեմադրողը եղել է թատերախմբի երիտասարդ դերասան և ռեժիսոր Արմեն Դուրինյանը: Սուսանի դերում հանդես է եկել դերասանուհի Քնարիկը (Հայկանուշ Կյուրեղյան, հետագայում՝ Արովյան):

Գավառական թատրոնը հետ չի մնացել մայրաքաղաքայինից: Այդ է վկայում Իրանի Փերիա գավառի Բոլորան դյուղում «Մայրերի» մի նոր բեմադրությունը 1932-ին, Վարդանանց տոների առթիվ: Տեղի թատերասերների խումբն այն ներկայացրել է «Հայրիկյան» դպրոցի դահլիճում: Քանի որ ամթիխած հայ կինը կամ աղջիկը դեռ բեմ չէր բարձրանում, Սուսանի դերը՝ գյուղացի կնոջ տարագ հագած կատարել է ուսուցիչ Վահան Հայրապետյանը<sup>3</sup>:

<sup>1</sup> Հորիզոն (Թբիլիսի) 1912, № 16:

<sup>2</sup> Արև (Բաքու) 1916, № 81:

<sup>3</sup> Ալիք (Թեհրան) 1932, № 48:

«Մայրերի» մի բեմականացում էլ կատարել է իրանահայ լրագրող և հասարակական գործիչ Նորայր Պահլավունին: Վաստակաշատ թատերական գործիչ Նապոլ Սարվարյանի բեմադրած պիեսի ներկայացումը տեղի է ունեցել 1960-ի ապրիլի 2-ին, Թեհրանի Հ. Մ. «Արարատ» կազմակերպության սրահում, ապրիլյան միջոցառումների շրջանակում: Դերերի կատարմամբ հանդես են եկել «Արարատի» թատերախմբի դերասան-դերասանուհիներ Արշալույս Մելիք-Բաղդասարյանը (Սուսան), Բլարա Հովհաննիսյանը (Գնչուհի), Էդիկ Ասլանյանը (Քահանա), Ա. Տեր-Հովհաննիսյանը (Գրար) և ուրիշներ<sup>1</sup>:

Իրանահայ թատրոնում «Մայրերի» մի ներկայացում էլ տրվել է 1962-ի ապրիլին, Նոր-Ձուղայի Ազգային դպրոցի դահլիճում, տեղի թատերախմբի ուժերով: Նախաձեռնությունը պատկանել է Հայ կանանց միությունը:

Ահարոնյանի «Մայրերը» երկու գործողություններ պիես է դարձրել և Ջիկագոյում ու Պրովիդենսում բեմադրել ամերիկահայ դերասան Վահրամ Տեր-Բարսեղյանը: Նմանօրինակ աշխատանք է կատարել նաև դերասան Նորայր Աբուլյանը Թեհրանում (1983):

Մի շարք պիեսների թվում, Մայրերի թեմայով դրամատիկական ժառանգություն է թողել գրող-գրականագետ-մանկավարժ Հակոբ Օշականը: Նրա գրած «Մայրերը» խաղացվել է 1965-ի ապրիլի 20-21-ին, Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առթիվ: Թաթուլ Այնեճյանի բեմադրություններ այս պիեսը ներկայացվել է Հալեպի Զավարյան թատերախմբի ուժերով: Դերակատարների ցանկի մեջ մտել են՝ Սիրանուշ Մաժունյանը - Մայրը (Տիկին Հովիտիմե), Գրիգոր Էսկիճյանը - Ներսես, Զեփյուռ Վ. Մաժունյանը - Արշալույս (աղջիկը), Զավեն Բրտոյանը - Պետրոս Էֆենդի (կառավարական պաշտոնյա), Շահն Շիրինյանը - Պետրոսի տղան (Արշալույսի նշանածը):

Մայրերի թեմայով պիեսների շարքում, մանավանդ հեղափոխականների տոկուն մայրերի առումով, մի ինքնատիպ բովանդակություն է ներկայացնում «Վշտահար մայրը» մեկ գործողությամբ դրաման: Այն ներկայացվել է 1924-ի ապրիլի 20-ին Ռեյսինի (Ամերիկա) Վերթիլենա Հոլում, Հայ Կարմիր խաչի մասնաճյուղի տարեկան հանդեսին:

«Վշտահար մայրը» ծավալով փոքրիկ, բայց բովանդակությամբ մեծ այս պիեսի դերակատարներն են եղել՝ Մայր - Հ. Տապանյան, Վիրավոր հեղափոխական որդի - տիկ. Եղիսարեթ Բեռսեյան, Մայր - Ազնիվ Տեր-Ավետիսյան, Կարմիր խաչի բուժաշխատող - Արաքսի Մաքսուտյան, որը վիրավոր զինվորի վերքը կապելով երգել է «Վի-

<sup>1</sup> Նույն տեղում, 1960, № 90:

րավոր ախպեր, թող վերքդ կապեմ» երգը: Թուրք ոստիկանների դերերը կատարել են Աբրահամ Կարապետյանը և Ղազար Տետեյանը<sup>1</sup>:

Զինագաղարի շրջանում, երբ Թուրքիայում մի քիչ թուլացել էին դրաքննութայն խստությունները մամուլի և մասսայական միջոցառումների նկատմամբ, պոլսահայ մտավորականությունը կարողացել է որոշ երեկոներ կազմակերպել անմեղ զոհերի հիշատակին:

1919-ի ապրիլի 25-ին Օդեսոնի թատրոնում Պոլսի Հայ դրամատիկ ընկերությունը կազմակերպել է «Ազգային մեծ սգահանդես նվիրված Հայ մտավորականներու մարտիրոսացումին անմոռանալի հիշատակին», որի ժամանակ ներկայացվել է «Գողգոթա» մեծ ողբերգը՝ ամբողջ խմբի մասնակցությամբ, ինչպես նաև Սմբատ Բյուրատի «Ավարայրի արժիվները» պիեսը<sup>2</sup>:

Ապոթեոզը նվիրվել է Այաշի նահատակներին՝ է. Ակնունի, (Ա.) Շահրիկյան, (Գ.) Զոհրապ, (Գ.) Խաթակ, Հ. Պոյաճյան (Մուրատ), Ռ. Զարդարյան, Ա. Հարությունյան, Դ. Վարուժան, Վարդգես (Սերենկյուլյան), (Օ) Վռամյան, Տոքթ. (Ն.) Տաղավարյան, Տ. Քելեկյան, Բ. Շահպաղ, Ռ. Սևակ և ուրիշներ:

Հաջորդ օրը՝ ցերեկն այդ նույնը կրկնվել է որբերի և ուսանողների համար:

Այս բովանդակությամբ ազգագիր հրատարակելը, ըստ երևույթին փրկվել է Ս. Բյուրատի «Ավարայրի արժիվը» պիեսի առկայությամբ, որը նվիրված է Վարդանանց պատերազմին՝ ընդդեմ Իրանի:

Այդ նույն թվականի սեպտեմբերին, Բերայի Վարիտեի թատրոնում էլ «Սևակ» միությունը կազմակերպել է երաժշտաթատերական երեկո՝ նվիրված Դ. Վարուժանի որբերին: Թատերական մասում կատարվել է Վարուժանի «Արմենուհի» երկարաշունչ բանաստեղծությունը «Յեղին սիրտը» շարքից, Հակոբ Սիրունու բեմականացումով:

Նյութը պարսից Շահ Աբբասի կողմից հայերի գաղթեցումն է Իրան: Արագի ափին, Շահը գերել է չքնաղ հայուհի Արմենուհուն: Յոթ աղջիկ նրա գովքն են անում՝ «Արմենուհի՛, Ֆիրզուսի քնարն էս դու», «Արմենուհի՛, շատրվան մ'ես դու մեր մեջ», «Արմենուհի՛, այտերդ են վարդ ու շուշան... և այլն»:

Գալիս է Շահը, մտնում վրանը, Արմենուհին վանում է նրան՝ «Հեռո՛ւ ինձմե, կբուրե շունչդ արյուն»: Մի կերպ փախչում է, թաքնվում Արագի ափերի ժայռերի մոտ, խոսում գետի հետ՝ «Որպեսզի հարճ չըլլամ, ըլլամ պիտի դի»: Փրկութայն հույսը բոլոր հարազատներից կտրած, նա դիմում է Հայոց գետին:

<sup>1</sup> Հայրենիք (Բոստոն) 1924, № 3658:

<sup>2</sup> Հառաջ շարաթաթերթ (Բեյրութ) 1966, № 79 (24 ապրիլի):

Ո՛վ Արագ, տե՛ս, ահա լքված ամենեն՝

Ես քո գուլթդ լուկ կաղերսեմ ապավեն:

Հետո նա իրեն նվիրած բոլոր զարդեղենները գետը նետելով, թողնում է միայն նշանածի մատանին: Ազատվելու համար նա գիշերով իրեն նետում է գետը, բայց ընկնում ուռկանի մեջ:

Լուսարաց է: Արագը նրան տանում, հեռացնում է: Գետի մի ափին հայտնվում է Շահը, մյուսին՝ Առյուծը: Ամեն մեկն ուզում է ավարին ինքը տիրանա: Մենամարտի են բռնվում: Առյուծի ժանիքների տակ փշրվում է Շահի սուրը: Առյուծը գետից հանում է Արմենուհուն, իսկ Շահը վերադառնում է իր վրանը:

Պատմությունը վերջանում է Վարուժանի լավատեսական խոսքով:

Առյուծն անբիծ կույսն առած կտանի

Լեռներն ի վեր, ավերակ բերդն հայրենի...

Առյուծի կերպարը պետք է հասկանալ Արմենուհու նշանածին, որ փրկում է նրան: Այստեղ շահեկան է Արմենուհու կերպարը, որ կատարել է գերասանուհի Վարդիթեր Ֆելեկյանը («Շատ հաջող էր»), իսկ Շահին՝ դերասան Նշան Պեչիկթաշլյանը<sup>1</sup>:

1919-1922 թվականներին, մի կարճ շրջան, որ հաջորդում էր զինադադարին, արևմտահայության համար կարծես թե հանգիստ անցավ: Վերակենդանացան արվեստն ու գրականությունը, մամուլը: Պոստում կազմակերպվեց «Հայ դրամատիկ խումբը», 1921-ին Հովհաննես Թումանյանի հորդորանքով բացվեց Հայ արվեստի տունը (Թիֆլիսի Հայարտան օրինակով): Զմյուռնիայում կազմակերպվեց «Արտավազդ» թատերական ընկերությունը: Հասարակական-մշակութային այս կազմակերպությունները կոչված էին կարգավորելու և նպաստելու թատերական կյանքի առաջընթացին, որն, իրոք, վերելք ապրեց այդ տարիներին:

Պոլսի թատերական կյանքի առաջընթացին մեծապես նպաստեց Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Նիկոլ Աղբալյանի հանձնարարությունները Պոլիս գործուղված հմուտ թատերական գործիչ՝ դերասան և ռեժիսոր Օվի (Հովհաննես) Սևումյանի (1880-1920) թեև կարճատև, բայց Նշանակալից գործունեությունը: 1919-1920 թթ. պարբերաբար ներկայացումներ կազմակերպելով, նա պետք է երիտասարդ կարող թատերական ուժեր պատրաստեր Հանրապետության՝ պետական հիմքերի վրա դրվելիք նորաստեղծ թատրոնի համար: Սակայն, նրա անսպասելի մահը խափանեց բոլոր ծրագրերը:

Անդրկովկասի քաղաքական անկայուն հանդամանքների պատ-

<sup>1</sup> Արագած (Կ. Պոլիս) 1919, № 37, էջ 196:

ճառով Պոլիս մեկնեցին Հովհաննես Աբելյանը, Հովհաննես Զարիֆյանը, Անդրանիկ իր՝ վեց հոգանոց ընտանեկան թատերախմբով, Արշավիր Շահխաթունին, Գրիգոր Ավետյանը, Սուրբբյան և Ղազարյան ամուսինները և ուրիշներ: Նրանք Պոլսի Հայ դրամատիկ խմբի անգամ դերասանների հետ աված ներկայացումներով նոր որակ ու երանգ բերին դրամատիկական և օպերետային արվեստի զարգացմանը Կ. Պոլսում:

Աշխուժացել էր Հայ արվեստի տան գործունեությունը, որին նպաստել էին նրա նախագահներ Երվանդ Օտյանը, ապա՝ Վահան Թեքեյանը: Հայարտան ճյուղերից մեկն էլ եղել է թատերականը: Գրողների և Հայ դրամատիկի դերասանների ուժերով նշվել են Պետրոս Դուբրյանի մահվան 50-ամյակը, Մոլիերի ծննդյան 300-ամյակը, որի մասին հայերեն ղեկուցել է Ե. Օտյանը, իսկ Ֆրանսերեն՝ բանաստեղծ և արձակագիր Կոստան Զարյանը:

Պոլսահայ դրամատիկից բացի, այդտեղ գործել են Ֆելիկյան քույրերի (Վարդիթեր և Մարի-Հրանուշ) թատերախումբը, երիտասարդական այլ խմբեր, հրատարակվել են ազգային և թարգմանական մի շարք պիեսներ:

Պոլսահայ թատերական կյանքի վերելքը, սակայն, երկար չտևեց: 1922-ի սեպտեմբերին Իզմիրում բռնկված հուլյն-թուրքական պատերազմը կորստաբեր դեր խաղաց նաև հայերի առօրյալում: Այս էլ ո՞րերորդ անգամ հայերի մի զգալի մասը ստիպած եղավ նորից բռնել գաղթի ճանապարհը:

Նրանց բախտին են արժանացել նաև Անդրկովկասից գնացած թատերական գործիչները: Աբելյանը, Զարիֆյանը, Սուրբբյանը ընտանիքներով, Անդրանիկ թատերախումբը (Անդրանիկ, Ազնիվ, Գուհար, Պերճուհի, Օննիկ, Իեսան՝ Եղիշև Հարութ), Սեդրակ Մաղալյանը, Գայուշ Փեշտիմալճյանն անցել են Ամերիկա: Ա. Շահխաթունին, Պոլսի դրամատիկի դերասաններ Տրդատ Նշանյանը, Սիրանուշ Ալիքսանյանը, Էլիզ Գովանը և ուրիշներ՝ Փարիզ, Արտաշես Վրույրը՝ Բուլղարիա: 1922-ի աշնանը Վահրամ Փափազյանը խմբով հյուրախաղերի մեկնելու պատրվակով՝ Մկրտիչ և Ազրիկ Զանանների, Էդվարդ և Հռիփսիմե Չափրաստների, Հրաչյա Ներսիսյանի, Հրանտ Ստեփանյանի, Գրիգոր Ավետյանի և ուրիշների հետ փոխադրվեցին Խորհրդային Միություն: Նախ հաստատվեցին Բաթումում, ապա, աստիճանաբար ցրվեցին Հյուսիսային Կովկաս, Երևան, Բաքու: Նրանցից մի քանիսը հետագայում դարձան սիյուռքահայ թատրոնի անվանի դերասաններ:

Տեղում մնացածներից Աշոտ Մատաթյանը խուճբ կազմելով, թուրքերենի է թարգմանել ու բեմադրել Սուեդուկյանի և Շիրվան-զադեի մի շարք պիեսներ՝ գոնե այդ եղանակով պահպանելու հայի հայ ոգին: Բայց հայ հանդիսատեսին հայոց լեզվով ներկայացումներ էին պետք: Պոլսում հայերեն ներկայացումների շարքը բացվեց միայն 1946-ին, պատերազմի ավարտից հետո:

Սիրանուշը, որը 1918-1921 թթ. իրանյան տարագրությունից թիֆլիսով վերադարձել էր Կ. Պոլիս՝ հարազատների հետ սգալու 1915-ի իրենց կորուստների անհայտ շիրիմների վրա, բոլորովին հնարավորութուն չունեցավ բեմ բարձրանալու: Բեմի կարոտը նրան ստիպել է առաջացած տարիքում փոխադրվել Եգիպտոս, այնտեղ շարունակելու իր բեմական կյանքի մնացորդ տարիները:

Այսպիսով, Պոլսի երբեմնի հարուստ ավանդներով թատերական աշխույժ կյանքը մարեց՝ ասպարեզը թողնելով հայրենասիրական ոգով տոգորված, բայց կարճատև կյանք ունեցած զանազան թատերախմբերի ու սանուց միությունների հավուր պատշաճի կազմակերպած ներկայացումներին:

Պոլսահայ թատերական գործիչներից ոմանք մասնակցելով, երբեմն էլ ղեկավարելով սիյուռքահայ դադթօջախների աշխատանքները, զարթոնք տվին սիրիա-լիբանանյան, եգիպտահայ, բուլղարա-ուսմինական, ֆրանսիական, Ամերիկայի Միացյալ Նահանգների, ինչպես նաև արգենտինյան թատերական խմբերի վերելքին: Դա եղել է ժամանակի հրամայական պահանջի պես մի պարտականութուն, որպեսզի թե՛ մեծահասակները և թե՛ առավելապես որբացած, մանկութուն չունեցող սերունդը չմոռանա իրեն մայրենի լեզուն, կորցրած հարազատ վայրերը, իրենց ազգային հերոսներին, իրենց կենսագրությունը, հարազատ ժողովրդի պատմությունը:

Գաղթականության շարժը դեռ չավարտված, Սիրիայում և Լիբանանում հաստատված որբ ու տարագիր երիտասարդները նախաձեռնել են կանոնավոր թատերախմբեր կազմակերպել, ներկայացումներ տալ: Հենց նրանք էլ դարձել են Հալեպ, Բեյրութ և այլ քաղաքներ հյուրապահների եկած անհատ դերասանների հենարանն ու գործակիցը:

## 1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ ԵՎ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Ապրիլյան եղեռնից ու աքսորվածներից հրաշքով փրկվածների թվում կային նաև թատերական գործիչներ, որոնք պատեհ առիթով ներկայացումներ էին կազմակերպում սիրիական քաղաքներում՝ ոչ միայն դրսևորելով իրենց կենսունակությունը, այլև բարեգործական միջոցառումներով օգնություն ձեռք մեկնում անտուն, անտեղ, մերկ ու քաղցած իրենց հայրենակիցներին:

Որոշ թատերական գործիչների բախտ էր վիճակվել բազում չարչարանքներից հետո վերադառնալ «խաղաղ» կյանքի, շարունակել իրենց գործունեությունը: Այդ «բախտավորներից» մեկը դերասան, ռեժիսոր, դրամատուրգ, «Կավուոշ» երգիծական թերթի խմբագիր-հրատարակիչ Կավուոշն էր (Երվանդ Հովհաննեսի Թոլայան, 1883 Կ. Պոլիս – գնդակահար. 1937, Երևան), որը եթե փրկվեց 1915-ի սև յաթաղանից, ապա ընկավ սև գնդակի հարվածից:

Թոլայանը շուրջ երեսուն տարի Պոլսում և Փարիզում հրատարակել է «Կավուոշ» երգիծաթերթը և մի քանի տարի նույնանուն տարեցույցը: Խաղացել է բնութագրական բազմաթիվ ու բազմապիսի դերեր, բեմագրություններ արել, թատերախոսականներ գրել, 1936-ին Երևան գալուց հետո Մկրտիչ Զանանի առաջարկությամբ իր 35-ամյա խմբագրական ու թատերական գործունեության մասին հուշեր գրել: Բայց արևը ժամանակից շուտ էր մայր մտել նրա համար:

Վերադարձողների թվին է պատկանում նաև իր թատերական գործունեությունը 1900-ական թթ. սկսած դերասան, հոգևածագիր, դրամատուրգ, թարգմանիչ ու ռեժիսոր Աշոտ Մատաթյանը: 1918-ին Մատաթյանը մի խումբ թատերասերներով Հալեպում կազմակերպել է «Մեկպոմե» թատերախումբը, բեմադրել «Համլետ», «Պատվի համար», «Շերլոկ Հոլմս» և այլ պիեսներ: Ապա այդ խմբով, որի մեջ մտել են բանաստեղծ, դերասան, թարգմանիչ Գեորգ Կառվարենցը

(Արապաճյան), Խաչերյան դերասանական զույգը և ուրիշներ, 1919-ից իրենց գործունեությունը շարունակել են Ադանայում: Ներկայացումներ են տվել նաև Մերսինում, Տարսոնում, Տեորթ Յուլում, ըստ որում, դասական պիեսներից («Պատվի համար», «Պաղտասար աղբար» և այլն) բացի ներկայացվել են Գ. Կառվարենցի նոր գրած «Հայաստանի հույսը» (այլաբանական պատկեր) և այլ հեղինակների գործեր: Այդ ներկայացումներից ստացված հասույթի մի մասը հատկացվել է գաղթականներին:

1919-ին Աշոտ Մատաթյանը և Գևորգ Կառվարենցն իրենց ուղին շարունակելով հասել են Կ. Պոլիս, ներգրավվել տեղի Հայ դրամատիկ դերասանական խումբ: 1954-ին Բեյրութում նշվել է Ա. Մատաթյանի բեմական գործունեության 50-ամյակը: Իսկ Կառվարենցը (1892-1946) մնացել է որպես «Համլետի» թարգմանիչներից մեկը:

Անկարելի է չհիշել գրական-մշակութային մեծ գործիչ Թեոդիկին (Թևոդոս Լապճինճյան, 1878-1929), որի՝ 1907-1929 թթ. հրատարակած «Ամենուն տարեցույց»-ներում բավականին տեղ է հատկացվել նաև թատերական գործիչներին, առանձին թատերաշրջանների տեսությունը, հազվագյուտ լուսանկարներին: Առաջին գրքում տպագրել է Սիրանուշի հոդվածը՝ Համլետի դերի վրա մեկուկես տարվա կատարած աշխատանքի մասին՝ «Ձեռնարկս Շեքսպիրի մի գործին» վերնագրով: Ամբողջ հոդվածում Համլետի անուն չկա: Ինչպես տեսնում ենք, Ադամյանի օրերից (1880-90-ական թթ.) մինչև 1907-ը թուրքական գրաքննությունն արգելել է թագավոր բառի հետ կապված բոլոր բառակազմությունները: Թեոդիկի վերջին Տարեցույցում էլ տեղ է գտել Նշան Պեշիկթաշլյանի հոդվածը վաղամեռիկ դերասանուհի Մարի Նվարդի (Գարայան 1853-1884) մասին:

Եղևունից փրկվածներից միայն Կոմիտասին (Սողոմոնյան, 1869-1935) չհաջողվեց շարունակել իր ստեղծագործական աշխատանքը: 1900-1908 թթ. նա երաժշտություն է գրել մի շարք ներկայացումների համար: Հայոց դրամատիկական ընկերության նախագահ Մարիամ Թումանյանի առաջարկով 1904-ից սկսել է Թումանյանի «Անուշ» պոեմի թեմայով օպերայի վրա աշխատել, բավականին բան է գրել, բայց չի հասցրել ավարտել:

Կոմիտասը երաժշտական չորս փոքրիկ կտոր է գրել էմին Տեր-Գրիգորյանի «Սուր և Հուր» («Մ՞վ է մեղավոր» - 1905-ի Հայ-թուրքական կոտորածների մասին) պիեսի համար: Երաժշտության նոտաները կցված են պիեսի հայերեն (1906 և 1910) և ռուսերեն (1908)

Հրատարակություններին: Քաղաքական նկատառումներով պիտար չի բեմադրվել, հեղինակն էլ դատական պատասխանատվության է ենթարկվել (1912):

1915 թվականի բռնագաղթի հետևանքով արևմտահայության մի գգալի հատված հանգրվանել է Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասի հայաքանակ քաղաքներում: Մերվելով տեղական բնակչու- թյան հետ, գրականության և արվեստի գործիչները վիշտն ու կսկի- ծը հոգիներում անթեղած, ինչպես կենտրոնական քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), Թիֆլիսում (Թբի- լիսի), Բաքվում, Գանձակում, այնպես էլ այլ վայրերում ստեղծել են գրական-մշակութային օջախներ: Նրանց կենսունակությունը նոր ծաղկունք է ապրել: Որբանոցներում սկիզբ են առել ձևագիր գրա- կան հանդեսներ, ներկայացումներ կազմակերպվել: Նրանց ձև- նարկումները խրախուսել են Հովհ. Թումանյանը, սեփսոթ Ամո Խա- րազյանը և ուրիշներ:

Որբանոցային ձևագիր մամուլում են ծլարձակել մի շարք երի- տասարդ բանաստեղծներ, որոնք հետագայում դարձել են անվանի գրողներ, թարգմանիչներ, թատերական գործիչներ:

Առավել տարեցները մասնակցել են Թիֆլիսի և Երևանի թատե- րախմբերի ներկայացումներին, թատերախոսականներով աշխատակ- ցել տեղական մամուլին: Թիֆլիսում և Երևանում իրենց հետագա կյանքն են շարունակել Վանում հիմնադրված «Աշխատանք» և «Վան-Տոսպ» պարբերականները: Ստեղծվել են արևմտահայ գերա- սանների ուժերով կազմակերպված թատերախմբեր և ներկայացում- ներ տրվել:

Հայ ժողովրդի կրած չարագետ սարսափներն անարձագանք չմնացին թատերական գործիչների կողմից: Ականատես-վկանների կողմից գրված գրքերի, հոդվածների, հուշերի շարքում շատ շուտով երևան եկան ժամանակի իրագարծություններին մասնակից ու ալա- նատես երիտասարդ գրողներ, որոնք իրենց դրամատիկական ստեղ- ծագործություններում ճշմարտորեն պատկերեցին ու դատապարտե- ցին թուրքական յաթաղանի հերոսներին:

Այս թեմայով պիես գրած առաջին հեղինակներից մեկը եղել է այդ նույն սերնդի բախտակից-ներկայացուցիչ, գրող Անուշավան Ժեռոն (Տեր-Հարությունյան): Գաղթից հետո, իբրև ժամանակավոր հանգրվան, նա ապաստան է գտել Էջմիածնում: Մահվան ճիրաննե- րից մի կերպ փրկվելով և փոքր-ինչ ուշքի գալով, հենց նույն 1915-ի հոկտեմբերին, Էջմիածնում նա գրել է «Հազարներից մեկը» վեր- նագրով պիեսը: Սա Մեծ եղեռնի ցնցումներից դեռևս չապաքինված

ականատեսի, գաղթականի, Հայ դրագետի կողմից գրված առաջին պիեսն է, որ տեսածից վեց ամիս անց գրի է առել նրա հեղինակը: Այնքան խորն են եղել բռնութեան ու հալածանքի, վիրավորանքի ու նսեմացման ցավերը, որ նա անկարող է եղել լուել այդ ամենի մասին և իր բողոքի ձայնը չբարձրացնել կատարվածի հանդեպ:

«Հաղարներից մեկը» պիեսի գործող անձինք են՝ Հրազդանը, նրա սիրակից էլլան, նրանց նախանձորդ Սեպուհ Այգիվարդը, Հովիվ Հարոն, նրա սիրակից Սարեն, Սարևի մայր Ալմոն, ոճրագործ Պեյը, նրա երեք գերիները, աշուղը, յոթ հերոսները՝ յոթ իրիթները, զինվորներ, Ֆիդայիներ: Յուրյց են արված տանջանքի ուղին և վրեժի լուծումը:

Անփորձ, սկսնակ դրամատուրգի համար կարևորը նրա գաղափարական պայքարն է եղել: Այս տեսակետից բացառիկ կարևոր նշանակություն ունի ոչ միայն ինքը՝ պիեսը, այլև նրա հորդաբուխ առաջարանը: Ժեռոյի գրած «Արևմուտքի հառաչանքը»-առաջաբանը Հայոց ցեղասպանության պատմության մեջ հաղարներից մեկի-ականատեսի զորավոր վկայություն-փաստաթուղթ է, որը բերում ենք ամբողջութեամբ:

«Այս օրերիս, երբ ամեն միտք թմրել ու անզգայացել էր, հանկարծ արհավիրքի մի նոր հառաչանքից զարթնեց ու շշմեց:

Արևելքից մինչև Արևմուտք լեցուն են տառապանքներով, նրանք դեռ նոր պիտի երգվեն աշուղներից ու մտքերից:

Այդ բոլոր վշտերից հանկարծ արևելքի շողագարդ բացին վրա ավելի արյունոտ վերքը տեսնվեց, որի տանջանքին ի տես մոռացան նույնիսկ արյան լերթին մեջ ընկած վիրավորներ և նրանց ցավը ողբացին: Հայի տառապանքն է այդ, որ լցրեց բոլոր զգացող սրտեր համակրություն գուրգուրանքով:

Մարմարայի ափերին մեռցրին, մորթեցին մեր հանճարեղ մտքերը, ժողովուրդը խողխողեցին հրեշային տանջանքներով: Ի՞նչ մարդ պիտի անարցունք դիտեր այս Մարտիրոս ազգի վիշտը: Ինչ որ պատմություն չի տեսավ, մենք տեսանք: Արևելքից Արևմուտք մի արյունոտ հսկա գիծ պիտի դժվի դարերի իմաստունների և աշուղների ձեռքով: Իսկ Արևմուտքը պիտի չի մոռանա բնավ վրեժը իր հաղաբարավոր գավակներին, իր հանճարեղ լույսերին, որոնք մարեցին մորթոսովելով իր սրտին վրա:

Սրախողխող այս ցեղի մի փոքր մաս, հաղիվ ազատված, գաղթի տանջանքի ուղին կրկին ստիպված էր բռնել և այդ հերոս ժողովրդի այլ հալածական բախտը առանց արցունքի չէր կարող դիտել այն

աչք, որ տեսել էր նրանց՝ քնած, բայց վառ պահակները Ապրիլի խոնավ դիրքերում: Ինչ սվին չարավ, համաճարակ գործը լրացրեց: Այս մեծ տառապանք աչքերը մենակ կարող է իր սրտին պատմել, իսկ գրիչը պիտի շարժելով հրավիրել մարդկանց, որ դիտեն այդ ահեղ տեսիլները»<sup>1</sup>:

Անուշավան ժեռոյի սրտից ու ուղեղից բխած այս անկեղծ և տաքարյուն խոսքերը, ֆիզիկական ցավը չամոքած, հոգեկան խռովքը չխաղաղված գաղթականի լուսանկարած պատկերն է այն իրողության, որ կատարվել է իր աչքի առաջ, իր ներկայությամբ, իր հետ, իր շրջապատի հետ, հետևապես այն հնչում է իբրև բարձրաձայն բողոք, մեղադրական արձանագրություն ընդդեմ ամեն տիպի ու աստիճանի ցեղասպանություն դեմ:

Արևմտահայ մի այլ գրող, խմբագիր և հրատարակախոս՝ Սուրեն Պարթևյանը (Սիսակ Պարտիզականյան), լավատեղյակ լինելով արևմտահայություն կրած տառապանքներին, այդ բոլորին նույնպես արձագանքել է իր գրած ու հրատարակած «Զայնը Հնչեց» (չորս գործ.) և «Անմահ բոցը» (երեք գործ.) պիեսներով: Իր այդ՝ գործերի մասին նա գրել է. «Մեր նյութը հայ փոթորիկոտ և ճգնաժամային իրականությունն են քաղելով անոր պարզած հատկանշական հրևույթները վերլուծել, անոր հիշեցված դաժան հարցերը շոշափել. անոր բարոյական դիմահեղությունները ոգեկոչել ուզած ենք՝ կյանքի պարզ, մարդկային, իրական, անմիջական պատկերացումներու ձևին տակ»<sup>2</sup>:

«Զայնը Հնչեց» պիեսի նյութն առնված է 1915 թ. կովկասյան ռազմական կյանքից, ազատության փրկարար ձայնը հայի մեջ միշտ վառ պահելու, մշտապես հնչեցնելու մղումով: Գործողությունը կատարվում է Թիֆլիսում. գործող անձերից են՝ զորավար իշխան Բազրատ Ասատուրովը, նրա կին Սոնյան, ուսանող կամավոր Սահակ Արամովը, նրա նշանած Զարուհին, բանաստեղծ, զորավարի բարեկամ Թեոմյանը, գերմանացի սպա Ֆոն Շաֆեն, բժիշկ Արա Հախումովը: Պետք է ենթադրել, որ զորավար Բազրատ Ասատուրովի և բանաստեղծ Թեոմյանի կերպարների նախատիպերն են հանդիսացել Անդրանիկը և Հովհ. Թումանյանը: Պահպանվել է նրանց բարեկամությունը վկայող մի լուսանկար ևս, որտեղ կողք-կողքի նստած են, իսկ նրանցից քիչ հետ կանգնած է գլխավորական հագուստով մի ուրիշ տղամարդ:

<sup>1</sup> Զարենցի անվան գրականություն և արվեստի թանգարանի թատերական բաժնի ձևագիր պիեսների ֆոնդ:

<sup>2</sup> Սուրեն Պարթևյան, Անմահ բոցը, Ալեքսանդրիա, 1917:

Պիեսը գրվելուն պես (1916, Կահիրե), իբրև օրվա հուզող հարցերի անմիջական արձագանք, հեղինակն իր ղեկավարությամբ այն առաջին անգամ բեմադրել է 1916-ի հուլիսի 30-ին, Կահիրեի Բրենթանիա թատրոնում:

«Հուսարերի» թատերախոս Մ.Տ.Գ.-ն (Տեր-Գալստյան) նշելով, որ պիեսում թեև թույլ են «տիպարների հոգեբանական» զգացումները, բայց դրանք «դյուրավ սրբագրելի են բարեբախտաբար»: «Ձայնը հնչեց»-ը, — ավելացրել է նա, — երբեք չի պիտի դադրի, վստահ եմ մեր գեղարվեստական գրականության հրաշակերտներն մեկն ըլլալ է և պիտի մնա միշտ բարձր և նախանձելի իր սրտահույզ պատկերներովն, իր լեզվական սահուն և ճոխ ոճովն և իր վեհ ու վսեմ նյութովը»<sup>1</sup>:

Ներկայացումն սկսվել է գրող-դերասան Գ. Բագրատունի ոգևորիչ բանաստեղծության արտասանությամբ և ավարտվել հեղինակին բեմ հրավիրելով:

Այս թատերախոսականից հստակ երևում է նաև դերակատարների հաջողված ելույթները, մասնավորապես օրվա հերոսուհու առաջին մուտքը թատերաբեմ: «Օր. Ն(վարդ) Շաղոյան... տիրականորեն կատարեց իշխանուհի Սոնիայի դերը... անհավաստալի է, որ առաջին անգամ է բեմ դուրս գալիս, հաջող շարժուձև, նայվածք, ժպիտ, ծիծաղ, վճիտ առոգանություն»: Հախումովի դերում Շաղոյանին արժանի խաղընկեր է եղել որոշակի փորձառություն ունեցող Օննիկ Վոլթերը (Գալֆայան): Մյուս դերերում հանդես են եկել՝ Նվարդը՝ Զարուհու, Ա. Արամոֆը՝ Սահակ Արամոֆի, Թ. Տեր-Անդրեասյանը՝ նկարչի, Վ. Կյուրճյանը՝ բանաստեղծի դերերում:

Ն. Շաղոյանի, Ծաղիկ Ճերիտյանի մասնակցությամբ «Ձայնը հնչեց» պիեսը 1916-ի օգոստոսի 27-ին էլ խաղացվել է Ալեքսանդրիայի Ալհամպրա թատրոնում:

Թեև Ս. Պարթևյանի պիեսը քննադատող էլ է եղել (Սեդրակ Փափազյան, «Հուսարեր» № 64), բայց ոչ միայն պաշտպանները, այլև բազմաթիվ բեմադրությունների առկայությունը ցույց է տվել նրա դատած հաջողությունը տարբեր վայրերի հանդիսատեսների շրջանում:

Պարթևյանի «Ձայնը հնչեց» «զգայացունց և հուզումնալի» դրաման բեմադրվել է տարբեր երկրների թե՛ կենտրոնական քաղաքներում և թե՛ խուլ անկյուններում: Վերջիններից ամենաբնորոշը տեղի է ունեցել Կիլիկիայի Տեորթ Յոլ (Չորք Մարզվան) բնակավայ-

<sup>1</sup> Հուսարեր (Կահիրե) 1916, № 56:

րում, 1919-ի մայիսի 22-ին: Այս պիեսի՝ Հանդիսատեսի կյանքում ունեցած դերի ու նշանակութիւնի մասին Հետաքրքիր բնութագրութիւն է տվել Ադանայի «Հայ կյանք» թերթում տպագրված մի փոքրիկ թատերախոսական: Այդտեղ գրված է. «Հակառակ բեմական անհրաժեշտ կազմած և տարազներու չգոյութիւն, պետք է խոստովանել, ներկայացումը հաջող անցավ, տպավորութիւնն ալ զգալի և գոհացուցիչ: Առաջին անգամն էր այս, որ գիշերային Հանդէս մը տեղի կունենար Տետրթ Յուլի մեջ: Ժողովուրդը շնորհավորելի փութկութեամբ եկած էր»<sup>1</sup>:

Բեմագրութիւնի վերջում տրվել է կենդանի պատկեր՝ մթութիւնի մեջ, գունավոր լուսավորութիւնի սակ կամավորուհին պատգարակով դուրս է տարել վիրավորներին: Ահա և տեղական ուժերի Հնարամտութիւնը՝ օրվա հուզիչ թեմայով, իրականութիւնից առնված պատկերի համալրումը պիեսի բովանդակութեամբ:

Պարթևեանի պիեսի ձայնը հնչել է նաև Կ. Պոլսում, ուր խմորվել ու իրականացվել են անմեղ հայութեան կոտորածն ու աքսորը իրենց մշտական բնակավայրերից, բռնագրավվել ու դավթվել նրանց պատկան տուն ու տեղը, կալվածքը, ունեցվածքը – ամեն ինչ:

Աքսորից նոր վերադարձած դերասան և ուժիտ Աշոտ Մատթեանը Կ. Պոլսում ձեռնամուխ է եղել տեղացիներին ծանոթացնել հարազատ ժողովրդի կրած տառապալից կյանքի պատկերը ներկայացնող նորագույն պիեսը՝ Ս. Պարթևեանի «Ձայնը Հնչեց»-ը: Ներկայացումը տեղի է ունեցել 1919-ի հոկտեմբերի 29-ին, Պլատի Շանի թատրոնում, Պոլսո Հայ դրամատիկի դերասաններով: Հիմնական դերերը կատարել են՝ Քնար Սվաճյանը, Եվգինե Աճեմյանը, Տրդատ Նշանյանը, Հրաչյա Ներսիսյանը, Հրանտ Ստեփանյանը, Վ. Պաղտասարյանը և ուրիշներ: Կրկնվել է Հայ կղզու «Ադամյան» թատրոնում, Հեղինակի ներկայութեամբ:

Պարթևեանի «Ձայնը Հնչեց» և «Անմահ բոցը» պիեսները բեմագրվել են նաև մերձպլուսական Նիկոմիդիա քաղաքի թատերասերների կողմից: Նրանցից Օննիկ Քեչյանը (հետագայում բուլղարահայ թատրոնի անվանի դեմքերից մեկը) երկրորդ պիեսում կատարել է Ազատյանի դերը:

1929-ից «Ձայնը Հնչեց» պիեսը շարունակել է իր բեմական պատմութիւնը եգիպտահայ թատրոնում: Օննիկ և Բևատրիս Վոլթերների բեմագրութեամբ այն խաղացվել է 1929-ին և 1943-ին Ալեքսանդրիայում, իսկ 1946-ին՝ Նիկոսիա (Կիպրոս) կատարած Հյուրա-

<sup>1</sup> Հայ կյանք (Ադանա) 1919, № 142 (ընդգծումը մերն է – Բ. Հ.):

խաղերի ժամանակ: Եզրիպտահայ թատրոնում «Ձայնը հնչեց»-ի վերջին բեմադրությունն իրականացրել է դերասան և ռեժիսոր Սեդի Գոշոունյանը (Ալեքսանդրիա, 1965):

Ամերիկյան մայր ցամաքում Պարթևկյանի այս պիեսը բեմ է բարձրացրել ռեժիսոր Արարատյանը, Պրովիդենսի «Ազատ» թատերախմբի ուժերով, 1934-ին:

Բեմական բավականին հարուստ պատմություն է ստեղծվել Սուրեն Պարթևկյանի նաև «Անմահ բոցը» կրեք գործողությունը դրամայի շուրջը: «Տեղահան հայությունն ճգնաժամեն» առնված թեմայով այս պիեսում հեղինակը ձգտել է ցույց տալ կղևույթի շրջանի վերապրումների պատմությունը՝ ինչպես նաև հետեղեռնյան հուսալի դալիքի վստահությունը:

Գործողությունը կատարվում է Սև ծովի թուրքական ափերին: Ներկայացված են փաստաբան Ատոմ Ազատյանը, նրա մայրը, կինը, երաժշտագետ Արսեն Շահինյանը, նրա կինը, երիտթուրք Մահգար Շաքիր պեյը, միսիոներապետ վերապատվելի Սմիթը, ոստիկանապետը և ուրիշներ:

«Անմահ բոցը» պիեսի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1917-ի ապրիլի 10-ին, Ալեքսանդրիայի Ալհամայրա թատրոնում, ի նպաստ Հայոց Կարմիր խաչի: Բեմադրությունը մասնակցել են երիտասարդ խոստումնալից ուժեր, որոնցից մի քանիսը դարձել են եզրիպտահայ թատրոնի պատմությունը կերտողներ: Ավելացնենք, որ պիեսի հերոսի՝ Ատոմ Ազատյանի առաջին դերակատարը եղել է հանրահայտ բանաստեղծ, խմբագիր, հասարակական-մշակութային կյանքի երկարամյա գործիչ Վահան Թեքեյանը:

Ահա և նրա խաղընկերները՝ Սիրանուշ Ազատյան (Ատոմի կինը) - Ջարուհի Արապյան, այրի Արտեմ Ազատյան (Ատոմի մայրը) - Ջարուհի Տամատյան, Արսեն Շահինյան (երաժշտագետ, Ջապելի ամուսինը) - Վրթանես Երամյան, Ջապել Սիրաքյան (Սիրանուշի զարմուհին) - Ջարուհի Փափազյան, Մահգար Շաքիր պեյ (ժեռն թուրք) - Վահան Գասպարյան, Վերապատվելի Սմիթ (միսիոներապետ) - Հակոբ Փափազյան, Երիտասարդ միսիոներ - Լևոն Հյուրմյուզյան):

Սիրանուշի դերակատար Ջարուհի Արապյանի մասին գրվել է, որ նա «այդ դերի մեջ մարտիրոսացող Հայուհին աստվածցուց, «Անմահ բոցին» հոգին եղավ»:

Եզրիպտահայ թատրոնում «Անմահ բոցի» մասսայականացման մեջ մեծ դեր է խաղացել Օննիկ Վոլթերը (Գալֆայան): Կահիրեի և Ալեքսանդրիայի թատրոններում նրա բեմադրությունների մեջ (1929) կարևոր դերերով հանդես են եկել Բատրիս Վոլթերը (Սիրա-

նուչ Ազատյան), Խաչիկ Նորիկյանը (Ատոմ Ազատյան), Ս. Փափազյանը (Շաքիր պեյ), Գ. Պեղազյանը (Արսեն Շահինյան), ինքը՝ Վոլթերը (միսիոներապետ Սմիթ)։

Վոլթեր ամուսիններն այս պիեսը ներկայացրել են նաև Հունաստանում՝ Ֆիքսում և Գոքինայում (1934), Կիպրոսում՝ Նիկոսիայում (1946)։

«Անմահ բոցը» արժանացել է նաև կովկասահայ թատերական գործիչների ուշադրութանը։ 1918-ին խաղացվել է Թիֆլիսում, Հովսեփ Ոսկանյանի ղեկավարած թատերախմբում, իսկ 1919-ի դեկտեմբերի 1-ին Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերութան ղեկավարապետ խմբի կողմից, Լևոն Քալանթարի (Մահգար Շաքիր պեյ) բեմադրությամբ։ Սիրանուչ – Օլգա Մայսուրյան, այրի Արտեմ Ազատյան – Զաբել, Զապել Սիրաքյան – Արուս Ոսկանյան, Արսեն Շահինյան – Գրիգ-Ֆալյան, Միսիոներապետ Սմիթ – Հովհաննես Ստեփանյան, Երիտասարդ միսիոներ – Պահարե (Հայկ Պետրոսյան), Ոստիկանապետ – Ավետ Ավետիսյան և ուրիշներ<sup>1</sup>։

1920-ից Պարթևյանի «Անմահ բոցը» մուտք է գործել ամերիկահայ թատրոն։ Բոստոնի «Արծիվ» թատերախմբի նախաձեռնությամբ կազմակերպված ներկայացումը երկրորդ անգամ ցուցադրվել է Հարտֆորդի Ազգային Ռամկավարական Տիկնանց ակումբում, 1920-ի մայիսի 16-ին, անշուշտ՝ Հայրենասիրական ոգով ներշնչված կանանց աջակցությամբ։ Դերակատարներից են եղել՝ Սիրանուչ Ազատյան – Մերի Թերճանյան (չատ հաջող, հայ կնոջ պատվական ոգին), այրի Արտեմ Ազատյան – Հ. Պետրոսյան (սքանչելի), Զապել Ազատյան – Ն. Պետրոսյան (հայ աղջկա անխարդախ սերը՝ նշանվածի հետ գոհվելիս), Ատոմ Ազատյան – Հմայակ Հապեշյան (թշնամու դեմ վրիժառուլությունը), Արսեն Շահինյան (Զապելի նշանածը) – Նուպար Պաշյան (սիրող ու կռվող)։ Թատերախմբի ղեկավար Խոսրով Պոյաճյանը մարմնավորել է Շաքիր պեյի, Ղուկաս Արոյանը՝ ամերիկյան միսիոների, Պաղտասար Աճեմյանը՝ ոստիկանապետի դերերը<sup>2</sup>։

Ատոմ Ազատյանի որդի Լևոնիկի դերը կատարել է փոքրիկ Նվարդ Պետրոսյանը։ «Ազգի» թղթակից Ղազար Զավուչյանը երկու տողով բնութագրել է ներկայացումների բարոյական ներշնչանքը, գրելով՝ «երկու շաբաթ հետո էլ պատմական ներկայացում է... ամեն մարդու աչքերեն արցունք կվազէր, այնչափ որ հուզիչ էր»։

<sup>1</sup> Աշխատավոր (Թիֆլիս) 1919, № 257։

<sup>2</sup> Ազգ (Բոստոն) 1920, № 126։

«Անմահ բոցը» 1929-ի ապրիլի 7-ին ներկայացվել է Կահիրեի Վերդի թատրոնում՝ նվիրված հեղինակի՝ Սուրեն Պարթևյանի հիշատակին: «Հայ տարագրումին» անցյալ կյանքից առնված այս պիեսի բեմադրության մեջ զբաղված են եղել Կահիրեի թատերախմբի լավագույն ուժերը, որոնք շունչ ու կենդանություն են տվել նահատակների ողջակիզված կերպարներին: Այս բեմադրության դերակատարներն են եղել՝ Սիրանուշ - Բեսարիս Վոլթեր, այրի Արտեմ Ազատյան - Ջետյան, Ջապել Սիրաքյան - Արաքսի Վարդյան, Ատոմ Ազատյան - Խաչիկ Նորիկյան, Արսեն Շահինյան - Գ. Խաչունի, Վերապատվելի Սմիթ - Օ. Վոլթեր, Մահզար Շաքիր պեյ - Գեորգ Թերզիպաշյան և ուրիշներ:

Մեկ տարի անց, 1930-ի նոյեմբերի 29-ին Կահիրեի Ռամզես թատրոնում, դերակատարների որոշ փոփոխությամբ նորից է ներկայացվել «Անմահ բոցը»: Նոր դերակատարներն են եղել՝ Սիրանուշ Ազատյան - օր. Արաքսի Վարդյան (հետագայում՝ տիկ. Օհանյան), Արսեն Շահինյան - Գ. Գափամաճյան, Ջապել - օր. Ալիս, Մահզար Շաքիր պեյ - Խ. Շիրինյան, Վերապատվելի Սմիթ - Խաչիկ Սանտալճյան և ուրիշներ:

Այս ներկայացման հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, նույն Ռամզես թատրոնում, նույն պիեսի ներկայացումով ասես մրցման են դուրս եկել Կահիրեի հայ դրամատիկ խմբի հիմնադիրներ Օննիկ և Բեսարիս Վոլթերները, որոնց հետ Վ. Երամյանը կատարել է Ատոմ Ազատյանի դերը:

Սուրեն Պարթևյանի «Անմահ բոցը» բոցավառել է մի շարք երկրների հայկական թատրոնների հանդիսատեսների սրտերը՝ կսկիծի հետ հայրենասիրության ոգի ներշնչել: Այսպես՝ «Անմահ բոցը» բեմադրվել է Հալեպում և Բոստոնում (1920), Գոքինայում (1931), Աթենքում (1936), Ուեստ Հոպոքքնում (Յունիքն Սիթի), Բեյրութում և Դամասկոսում (1952), Թեհրանում (1977), թերևս այլ վայրերում ևս:

1915-ի ապրիլյան Մեծ աղետից հետո, արևմտահայության մի զգալի հատված Հունաստանի ճանապարհով անցնելով Ֆրանսիա, հիմնավորվել է տարբեր քաղաքներում և նոր կյանք սկսել: Դրանով հանդերձ, դեռ չկայունացած, մի որոշակի ալահովություն չստեղծած, թատերական արվեստի միջոցով նրանք անդրադարձել են երեկվա կյանքի վերապատկերմանը:

Այսպես, 1918-ի մարտի 10-ին, Մարսելում, Վարդանանց տոների առնչությամբ, «Գամառ-Քաթիպա» ընկերության վարչության նախաձեռնությամբ բեմադրվել է զրական-խմբադրական գործիչ Եղիշ

Թորոսյանի «Անանուն դյուցազուններ» պիեսը, որի գործողութիւնները կատարվել են 1915-ի եղեռնաշատ օրերին՝ Տրապիզոնի Շահնա գյուղում:

Եղեռնից փրկվածներից անհամեմատ մեծ քանակութեամբ հայեր 1915-ի շրջանում ապաստան են գտել Բաքվում: 1895-ի կոտորածներից փրկված և Բաքվից մեկ-երկու կիլոմետր հեռավորութեան վրա հիմնադրած Հայկական գյուղը (Հայկավան, որը հետագայում ձուլվել է քաղաքին) համալրվել է նոր փախստականներով: Եղեռնից փրկվածների մի ստվար մասն էլ հիմնավորվել է Անդրկայարանյան (Զավագզալնայա) և Կանտապլինսկայա փողոցների հայապատկան տներում<sup>1</sup>:

Այս երևույթը ներշնչել է այն բանին, որ տեղի թատերական գործիչներն սկսել են պիեսներ գրել ու բեմադրել ցեղասպանութեան թեմայով, մի հանգամանք, որ սկզբնավորվել էր դեռևս երկու տասնամյակ առաջ: Որպես այդ նախաձեռնութեան շարունակութիւն, 1914-ին, Սիրանուշի դեկավարութեամբ Հայ դրամատիկ դերասանական խումբը դեկտեմբերի 23-ին Թաղիկի թատրոնում ներկայացրել է թատերական գործիչ Շուխի (Խորեն Հովսեփյան) «Թուրքիայի գաղտնիքը կամ Սուլթան Աբդուլ Համիդ» հինգ գործողութեամբ պիեսը<sup>2</sup>: Ներկայացմանը մասնակցել են Բաքվի օպերային թատրոնի դեկավար Պավել Ամիրազոյի (Ամիրաղյան) տնօրինութեամբ նվագախումբն ու պարային խումբը: Հեղինակի անփորձութիւնն ու նյութի բարդութիւնը նրան հնարավորութիւն չեն տվել ուժեղ կառուցվածքով դրամատիկական գործ ստեղծել, բայց, իբրև համիդյան վարչակազմի քննադատութեան փորձերից մեկը, անշուշտ, իր արդարամիտ գաղափարախոսութեամբ նպաստավոր դեր է կատարել հասարակական – թատերական կյանքում: Եվ որ այդ գործի նախաձեռնողը եղել է Սիրանուշը, ցեղասպանութեան դեմ գրված մի շարք պիեսների բեմադրողն ու տարբեր դերերի դերակատարը, իսկ փորձառու դերասան Հովսեփ Ոսկանյանը Աբդուլ Համիդի դերակատարը, նշանակում է առաջադիմական մեծ քայլ է կատարվել:

Աբդուլ Համիդյան թեմայով մի պիես էլ գրվել կամ բեմադրվել է Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում: Պիեսի անվանաթերթը չի պահպանվել, ձեռագիրն սկսվում է երրորդ էջից, ունի հինգ գոր-

<sup>1</sup> Տոյերիս հեղինակը 1932-ից ապրել է 4-րդ Կանտապլինսկայա (գան թափա – արյան բլուր, ի հիշատակ 1905-ի հայկական կոտորածների) փողոցի № 30 տանը, որի բնակիչների գերակշռող մասը 1915-ին զողթած արևմտահայեր էին և այդ հանգամանքով շրջապատում հայտնի էր որպէս Հայաստանցուհի հայաթ:

<sup>2</sup> Արև. (Բաքու) 1914 № 215:

ծողմէթյուն: Այդ պիեսը սլաճսպանութիւն է Չարենցի անվան գրականութեան և արվեստի թանգարանի թատերական բաժնում, Վաղարշ Վաղարշյանի ֆոնդում, գրված (կամ արտագրված) է նրա կողմից: Կան թեթևակի խմբագրական միջամտութիւններ: Սակայն ոչ Վաղարշյանի հուշերում, ոչ էլ նրան նվիրված գրականութեան մեջ հիշատակութիւնն չի սլաճսպանվել այդ պիեսի մասին:

Պիեսի գործողութիւնները կատարվում են Սուլթան Աբդուլ Համիդի պալատում: Հայազգի կերպարներից հիշատակված է միայն Տատյան փաշան՝ իբրև արտաքին գործոց նախարար: Սուլթանն ահաբեկված է ոչ միայն Սատունի հայ հեղափոխականներից, այլև պալատում իր դեմ դավադիր ազգակիցներից, որոնք սպառնալիքի տակ ստիպում են նրան հրաժարվել գահից:

Սուլթանի թիկնապահ Սայիդ փաշան Սատունի դեպքերի մասին խոսելիս ասում է, որ «հեղափոխութիւնը մեր երկիրն է մտնում Հայաստանից, այդ անիծյալ հայերի միջոցով», որին Աբդուլ Համիդը պատասխանում է՝ «Արբել երկրի երեսից Սատունը, թող հայերի արյան դետերը իրենց մեջ խեղդեն սեփական հեղափոխութիւնը»:

Մեծ եղեռնի ստվար բեկորների մի մասը կենտրոնանալով Բաքվում, իրենք ևս ախտիվ գործունեութիւնն են սկսել ինչպես Թիֆլիսում և Երևանում ապաստանածները: Արևմտահայութեան հիշատակները սլաճսպանող օջախներ են եղել Հայկավանում բացված դպրոցը, զանազան բնույթի միջոցառումների կազմակերպումը: Բաքվի Հայ գրողների միութեան գահլիճում դասախոսութիւններ է կարդացել արևմտահայ գրող և հասարակական մեծ գործիչ Զապել Եսայանը, որը թեև փրկվել էր մեծ եղեռնից, բայց ընկել էր 1937-ի ցանցը և 1943-ին իր կյանքն ավարտել բանտում:

Տաճկահայերի կյանքին վերաբերող թեմաներով (պայքարի և տառապանքի օրինակներով) գրված նորանոր գործեր են հրատարակ եկել՝ գրվել ու բեմադրվել թե՛ քաղաքում, և թե՛ նրա արվարձաններում:

1916-ի Հուլիսի 12-ին Բաքվի Բալախանի արվարձանի ժողովարանի թատերասրահում, ժողովրդական թատրոնների դերասան և ռեժիսոր Մելիակ Սառաջյանի ղեկավարութեամբ, թատերասերների խումբը ներկայացրել է «Արյան հեռքը» պիեսը: Սա, ըստ երևույթին, պիեսի է հարմարեցրել խմբի ղեկավարը, որն իր աշխատանքում օգտագործել է Ավ. Ահարոնյանի որոշ գործեր (2-րդ գործողութեան մեջ): Տաճկահայ կյանքից առնված այս պիեսի բեմադրութեան մասնակիցներից են եղել՝ Թիկ. Հերսիլեն և պ. Մուրադյանը<sup>1</sup>:

<sup>1</sup> Արև (Բաքու) 1916 № 157:

Տաճկահայերի կյանքից առնված թեմայով պիեսներից մեկն էլ Միրովոյի «Միհրդատ» երեք գործողությամբ ողբերգությունն է, որը ներկայացվել է Բաքվի Մայիլյանների Մեծ (օպերային) թատրոնում, 1916-ի օգոստոսի 10-ին: Բեմադրողը և Միհրդատի դերակատարը եղել է Հայ դերասանական ընկերակցության ղեկավար Հովսեփ Ոսկանյանը: Շուշանի և դավաճան էֆենդիի դերերում հանդես են եկել Արուս Ոսկանյանը և Մեխակ Սառաջյանը<sup>1</sup>:

Հայ-ռուս-թուրքական բանակների միջև հակադրոծողությունների մասին է գրվել Ի. Մ. Դոնդարյանի «Դեպի էրզրում» մեկ գործողությամբ պիեսը (ռուսերեն): Գործողությունները կատարվում են թուրքահայաստանի մի ավանում: Տասը տարի առաջ թուրքերը սպանել են Մարիամի ամուսնուն, մուսուլմանացրել նրանց 13-ամյա Լեոյին, որն իբրև թուրքական բանակի սպա, կռվում է քրիստոնյաների՝ բուլղարների և ռուսների դեմ:

Մարիամի ավագ որդին՝ Կարոն էլ կռվում է ռուսական բանակում: Թուրք սպաներն առիթ են որոնում առևանգել Մարիամի գեղեցիկ դստերը՝ Արուսին: Ավանը ձեռքից ձեռք է անցնում: Լեոն գալիս է հարազատներին տեսնելու. մայրն առաջարկում է նրան թողնել թուրքերին ծառայելը, բայց նա հրաժարվում է խախտել տված երդումը: Ի վերջո, Լեոյի մոտ վերակենդանանում է քրիստոնեական հավատը և, միանալով եղբորը, զինվորագրվում է ռուսական բանակին:

«Դեպի էրզրում» պիեսը խաղացվել է Շիրվանզադեի՝ հայերեն թարգմանությամբ: Առաջին անգամ բեմադրվել է 1917-ի սեպտեմբերի 14-ին, Թիֆլիսի ժողովարանի ամառային սրահում, «Կոմեդիա» թատերախմբի դերասանական ուժերով, դերասան Գրիգոր Ավետյանի բեմադրությամբ:

Այս պիեսի մի նոր բեմադրություն էլ, առաջնակարգ դերասանների մասնակցությամբ, խաղացվել է 1918-ի մարտի 19-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնում, Հայոց Դրամատիկական խմբի կողմից, դերասան Իսահակ Ալիխանյանի բեմադրությամբ: Ներկայացման դերակատարներն են եղել՝ Մարիամ - Հասմիկ (Հակոբյան), Կարո - Իս. Ալիխանյան, Լեո - Վարդան Միրզոյան, Արուս - Լյուսի Սևումյան, Լյուսի - Արուս Ոսկանյան, Ոստիկան - Արտեմ Բերոյան:

1919-ի օգոստոսի 21-ի երրորդ բեմադրությամբ ավարտվել է «Դեպի էրզրում» պիեսի բեմական պատմությունը Թիֆլիսի թատրոնում: Ներկայացվել է Հովսեփ Ոսկանյանի ղեկավարությամբ «Ազատ թատրոն» դրամա-օպերետային խմբի լավագույն ուժերով՝ Մա-

<sup>1</sup> Նույն տեղում № 174, 179:

շրիամ – Շուշանիկ Տեր-Հակոբյան, Կարո – Ստեփան Դավթյան, Լեո-  
Փուրզեհն Թավրիզյան, Արուս – Հասմիկ (Հակոբյան), Լյուսի – Հրաչիկ  
Խաչատրյան, Տիգրան – Գր. Ավետյան, Կոլյա – Տիգրան Շամիրխան-  
յան, Անար բեյ – Սերժ Կարգատյան, Ոստիկան – Խորեն Հարություն-  
յան, Մամեդ – Սարգիս Թորոսյան:

Թեև երրորդը փաստացի վերջինն է հաշվվում, բայց բեմադրու-  
թյան այլ փորձեր էլ են կատարվել, որոնց ներկայացնելու մասին  
տվյալներ չեն պահպանվել: Պիեսի օրինակներից (տպագրվել է 1916-  
ին, Թիֆլիսում) մեկի վրա պահպանված դերաբաշխումից ստացվել է  
դերակատարների մի նոր կազմ, դարձյալ Թիֆլիսի թատրոնի դերա-  
սանների մասնակցությամբ: Այսպես, դերերի կատարման համար  
նախատեսվել են՝ Մարիամ – Ջաբել, Կարո – Արամ Ռչտունի, Լեո – Աբ-  
գար Աբգարյան, Արուս – Ժասմեն, Ալվաթ բեյ – Խորեն Հարություն-  
յան, Թուրք ոստիկան – Գավրոշ (Միքայել Հարությունյան), Լյուսի  
(աղախին) – Մանյա Ղարախանյան, Տիգրան (Հարևան) – Գեդեոն Մի-  
րազյան, Երկրորդ Հարևան – Մարգարիտ Բաբյան<sup>1</sup> և ուրիշներ: Դե-  
րակատարները եղել են Թիֆլիսի ժողովրդական տան հայկական դե-  
րասանական մասնաճյուղի դերասաններ, իսկ Ժասմենը՝ դրամատի-  
կական խմբի դերասանուհի: Գ. Միրազյանի մասնակցություները  
վկայում է, որ դերաբաշխումը կատարվել է մինչև 1919 թվականը՝  
Միրազյանի մահը:

Պեսք է նկատել, որ Կարին-էրզրումի տարածքի հայերի կոտո-  
րածների ու տեղահանություն մասին դրամատիկական գործեր քիչ  
են դրվել: Բայց, դա չի նշանակում, որ այդ շրջանի ազգաբնակչու-  
թյունը հանգիստ կյանք է ունեցել: Այս իմաստով, Դոնդարյանի  
«Դեպի էրզրում» պիեսը լրացնում է այդ պակասը և ցույց տալիս  
թուրքերից ազատվելու համար նրանց դեմ պայքարի կարևորու-  
թյունը մեր հայրենակիցների ազատագրության հարցում:

Արևմտահայության կրած տառապանքների ու զրկանքների լու-  
սաբանությունը կարևոր տեղ է գրավել նաև Շիրվանդադեի ինքնու-  
րույն դրամատուրգիայում: Նա ուրիշի պատմածներից կամ հոդ-  
վածներին ծանոթանալով չի գրել իր պիեսը, այլ որպես ականատես  
վկա: 1915-ին Հովհաննես Թումանյանի և Տեր Նիկոլի հետ Վան  
գնալով, Թիֆլիսից մինչև Վան նրա աչքի առաջ պատկերվել են այն  
վայրերն ու մարդիկ, որոնց կյանքը վերարտադրել է իր «Արհավիր-  
քի օրերին» դրամայում:

«Արհավիրքի օրերին» հինգ գործողությամբ պիեսը բեմադրու-

<sup>1</sup> Ջաբելի անվան գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնի  
ձեռագիր պիեսների ֆոնդ:

Թյան-տպագրութեան Համար Կովկասյան գրաքննութեան թույլտուութիւնն է ստացել 1917-ի հունվարին և նույն թվականին էլ տպագրել Բաքվի «Գործ» ամսագրում (№ 5-6):

«Արհավիրքի օրերին» պիեսում ծավալվող գործողութիւնները կատարվում են Արևմտյան Հայաստանի՝ խառը բնակչութեամբ գավառական մի քաղաքում: Պիեսում ներկայացված են՝ Հարուստ կալվածատեր Միհրզատ Մանդակունին, նրա կին Սաթենիկը, նրանց որդի Տիրանը, Միհրզատի եղբայր Արամազդը, որը դարձել է Հայ կամավորների գնդի հրամանատար՝ Հրազդան անունով, վերջինիս դուստր Նիգարը, Հրազդանի օգնական Ալիշանը (նախկին Տեր Ղևոնդ), ուսական բանակի գեներալ Նելիզովը, ուսանողուհիներ՝ կամավորական Տատյանա Սկվորցովան և Գայանե Շահինյանը, կամավորների հարյուրապետներ Սաքոն, ՄՀերը, քյուրդ ցեղապետ Զեմալ բեյը, թուրք սպա Անթար բեյը, զինվորներ, կամավորներ, կազակներ, գաղթականներ:

Պիեսն սկսվում է Մանդակունիների տան աղախին, հարազատներին կորցրած Նուզգարի սրտաճմլիկ երգով, որն ինքնին բնութագրում է ամբողջ ստեղծագործութեան էությունը: Ահա մի փոքրիկ հատված այդ երգից.

Եփրատ ախպեր,  
Դաշտերի սեր,  
Ինչո՞ւ այդպես  
Պղտորել ես:  
Դուն ա՞լ ինձ պես  
Խեղճ հայր ու մայր  
Կորսուցել ես:  
Արտասուքեն  
Կուրացել ես...

Քսաներեք տարի առաջ Զեմալ բեյի մարդիկ փախցրել են Միհրզատի նշանած Սաթենիկին, որը ցեղապետի մոտ 75 օր պահվելուց և առևանգվելուց հետո ազատագրվել է: Հետևանքում մնացել է նրանց որդի Գալոն, որին Միհրզատն արտաքսել է իր տնից: Նա գեռ չգիտե, թե ով է իր իսկական հայրը, բայց համակրութիւնը ավելի թուրքերի (իշխողների) կողմն է, քան քրիստոնյաների, խոսում ու գործում է թուրքերի անունից: «Թուրք կառավարութիւնը, — ասում է նա, — Հայ ժողովրդի համակրութիւնը Ռուսիային համարում է քաղաքական դավաճանութիւն»: Գալոն սիրում է Նի-

գարին:՝ բայց անպատասխան մնում: Մոր խրատներն էլ չեն ազդում նրա վրա: Տիրանն անտանելի համարելով թուրք և քյուրդ զինվորականների ու ահաբեկիչների շրջապատը, մեկնում է Կովկաս:

Եփրատի ափին, մի կիսավեր հայկական գյուղում համախմբվում են Ռուսինիայից, Ամերիկայից, Բուլղարիայից, Հնդկաստանից եկած կամավորները: Ներկայանում են նաև ուսանողուհիներ Սվկորցովան և Շահինյանը՝ պնդելով, որ իրենց վերցնեն ոչ թե որպես զթուլթյան քուլբեր, այլ կովոզ մարտիկներ: Նրանց նպատակն է զենքով վրեժխնդիր լինել բռնաբարված մայրերի ու պղծված աղջիկների համար: Գալլիս է և Տիրանը, միանում հորեղբոր՝ Հրազդանի ջոկատին:

Ջեմալ բեյը Մանդակունու տանը հանդիպում է Սաթենիկին, Գալոյի համար պարզվում է իր ծագումը: Ռուսական բանակի Հետ գալլիս են Հրազդանն ու Տիրանը: Հրազդանի մարդիկ սպանում են Ջեմալ բեյին, թուրքերը կախաղան են բարձրացնում Գալոյին՝ մեղադրելով լրտեսության մեջ: Ռուսական զորքը նահանջում է, նորից սկսվում է հայերի գաղթը դեպի Արարատյան աշխարհ:

Շիրվանզադեի այս նոր պիեսն առաջին անգամ Օվի Սևուժյանի բեմադրությամբ խաղացվել է Թիֆլիսի Արտիստական թատրոնում, 1917-ի հոկտեմբերի 23-ին: Ներկայացմանը մասնակցել են Հայոց Դրամատիկական ընկերության թատերախմբի գերասաններ՝ Վարդան Միրզոյանը (Միհրդատ Մանդակունի), Հասմիկը (Սաթենիկ), Իսահակ Ալիխանյանը (Գալո), Հայկուհի Պատոճյանը (Հետագայում՝ Գարազաշ - Նուզգար), Լյուսի Սևուժյանը (Նիգար), Օվի Սևուժյանը (Ջեմալ բեյ), Մաթևոս Սանամյանը (Անթար բեյ) և ուրիշներ:

Ներկայացումը կրկնվել է մի քանի անգամ: 1917-ի դեկտեմբերի 24-ին «Արհավիրքի օրերին» պիեսը խաղացվել է «Հայ գորքի համար»: Գեներալ Նազարբեկովի առաջնորդությամբ ներկա են եղել հայ զորավարներ և զինվորներ: Յուրաքանչյուր գործողությունից Հետո թե Հեղինակը և թե դերակատարները բեմ են հրավիրվել<sup>1</sup>:

Նույն թվականի դեկտեմբերի 1-ին «Արհավիրքի օրերին» պիեսը Հովհաննես Աբելյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ խաղացվել է Բաքվի Մայիլյան եղբայրների Մեծ (օպերային) թատրոնում: Բեմադրության մեջ զբաղված են եղել Բաքվի Հայոց կուլտուրական միության թատերական բաժանմունքի գերասանական խմբի անդամները: Գալոյի դերակատարման համար Թիֆլիսից հրավիրվել է դերասան Իսահակ Ալիխանյանը:

<sup>1</sup> Մշակ (Թիֆլիս) 1917, № 274:

Ներկայացումն ընթացել է հետևյալ ամբողջական կազմով՝ Միհր-  
 դատ Մանդակունի - (Հովհաննես) Ստեփանյան, Սաթենիկ (նրա կի-  
 նը) - (Օլգա) Մայսուրյան, Տիրան (Միհրանի որդին) - (Միքայել) Կոս-  
 տանյան, Նիգար (Միհրդատի եղբոր աղջիկը) - Ժասմեն (Եգանյան,  
 հետագայում՝ Գրիգորյան), Դանիել (Միհրդատի եղբայրը) - (Կոս-  
 տանդին) Թառլանյան (հետագայում վարդապետ էջմիածնում), Ար-  
 փենիկ (Դանիելի կինը) - (Օլգա) Գուլազյան, Նուզգար (աղախինը) -  
 օր. (Վարսենիկ) Աբրահամյան, Զեմալ բեյ (քյուրդ ցեղապետ) և զա-  
 ուամյալ Քահանա (5-րդ գործողությունում) - Հ. Արելյան, Անթար  
 Բեյ (թուրք սպա) - (Սմբատ) Արիստակյան, Նելիդով (գեներալ) - Հա-  
 կոբյան, Միլովիդով (թիկնապահ) - Մուսայելյան, Հրազդան (կամա-  
 փորների հրամանատար) - Արմեն (Դուրինյան), Ալիշան (Հրազդանի  
 օգնականը) - Մ. Մանվելյան, Սաքո (հարյուրապետ) - Արսեն, Մհեր  
 (կամափորների հարյուրապետ) - Դանդեյան, Զարմայր (տնտեսա-  
 պետ) - (Բաղրատ) Մուրադյան, Տառյանա Սկվորցովա (ուսանողուհի  
 կամավոր) - (Մարգո) Մամիկոնյան (հետագայում՝ (Կոստանյան),  
 Գայանե Շահինյան (ուսանողուհի կամավոր) - տիկ. \*\*<sup>1</sup>:

Մասսայական տեսարաններում հանդես են եկել թուրք և ռուս  
 զինվորներ, կողակներ, երաժիշտներ, դաղթականներ, կամավորներ:  
 Ներկայացումը կրկնվել է դեկտեմբերի 8-ին:

«Արհավիրքի օրերին» պիեսը բեմական կյանք է ստացել նաև Կ.  
 Պոլսի թատրոնում, 1919-ի ապրիլի 4-ին, Ֆելեկյան քույրերի (Վար-  
 դիթեր և Մարի-Հրանուշ) թատերախմբի կողմից:

Նույն թվականի հունիսի 28-ին նրա մի նոր բեմադրութուն էլ  
 իրագործվել է Պոլսահայ դրամատիկի կողմից, Օդեսոյի թատրոնում:  
 Բեմադրողն ու Մանդակունու դերակատարը եղել է Աշոտ Մատա-  
 թյանը՝ խաղընկերներ ունենալով Սիրանուշ Ալիքսանյանին (Սաթե-  
 նիկ), Մկրտիչ Զանանին (Գալո), Հրաչյա Ներսիսյանին (Տիրան),  
 Ադրինե Զանանին (Նիգար), Սարիմ Մաքսուտյանին (Հրազդան),  
 էդուարդ Չափրաստին (Դանիել), Տրդատ Նշանյանին (Զեմալ բեյ և  
 Ծեր քահանա), Հրանտ Ստեփանյանին (Անթար բեյ) և ուրիշների:

Շիրվանզադեն Ամերիկայում դտնված ժամանակ, 1920-ի նոյեմ-  
 բերի 30-ին, Ֆրեզնոյի Դուրյան դերասանական խմբի հետ, իր ղե-  
 կավարությամբ, Հուլայթ թատրոնում ներկայացրել են «Արհավիրքի  
 օրերին» պիեսը<sup>2</sup>:

Շուրջ երեսուհինգ տարվա բեմական կյանքի ընդմիջումից հետո  
 Շիրվանզադեի «Արհավիրքի օրերին» պիեսը (հինգ գործողությամբ)

<sup>1</sup> Արև (Բաբու) 1917, № 245, 248:

<sup>2</sup> Նոր կյանք Սիսվան (Ֆրեզնո) 1920, № 329:

նորից վերադարձել է բեմ: Այս անգամ իրանահայ թատրոնում: Առաջին բեմադրությանը տեղի է ունեցել 1954-ի հոկտեմբերի 22-ին Թեհրանի «Արարատի» սրահում, «Ազամյան» թատերախմբի կողմից: Այնքան է մոռացվել այս պիեսի բեմական պատմությունը, որ Թեհրանյան բեմադրությունը համարվել է սփյուռքահայ թատրոնում առաջին անգամ ներկայացվող դործ:

«Արհավիրքի օրերին» պիեսի Թեհրանյան բեմադրությունը համարվել է «ցնցող և պատմական»: Վկայությունը՝ նրա կրկնությունները հոկտեմբերի 24-ին, 29-ին և 31-ին:

Ի գնահատություն Շիրվանդադեի պիեսի և Հանդիսատեսի ընդունելություն, թատերական գործիչները հասարակությունն ուղղած կոչի մեջ հայտնել են՝ «Այս գեղարվեստական հոյակապ կառուցվածքով պատմական դրաման մեր մոտավոր անցյալի դյուցազնական գոյամարտի ու մեր ցեղի ապրելու և հարատևելու կամքի ցույցարձակ հայելին է:

Հայրենակիցներ! Դիմեցեք դեպի «Արարատի» թատերասրահը վերամկրտվելու համար հավետ անմահացած դյուցազնածին հայուհիների հայրենաբույր շնչով»:

«Արհավիրքի օրերին» պիեսի բեմադրությունն իրագործել է դերասան և ռեժիսոր Վաչե Ատովյանը, իսկ արտաքին ձևավորումը կատարել է դերասան, ռեժիսոր, դեկորատոր Վահան Աղամալյանը: Ներկայացմանը մասնակցել են շուրջ 50 դերակատար, որոնցից գլխավոր դերերը կատարել են թատերախմբի լավագույն ուժերը՝ Կյոթակուհի Սիմոնյանը (Սաթենիկ?), Սիրամարգ Ատովյանը, Սարգիս Սվաճյանը, Արտուշ Յազմուրյանը, Էդիկ Ասլանյանը, Հրաչ Թորգոմյանը, Հովսեփ Հարությունյանը, Գևորգ Նուբարյանը և ուրիշներ:

Այս բեմադրությամբ էլ ավարտվել է «Արհավիրքի օրերին» պիեսի բեմական պատմությունը, որը ժամանակին կատարել է իր հայրենասիրական պարտքը ցեղասպանությունը դատապարտողների մեծ բանակում:

1916 թվականին ոմն Պ. Պողոսյան Բաքվում կազմակերպել է դրամա-օպերետային խումբ և մի քանի ներկայացում տվել: Նրա կազմած թատերախմբի խաղացանկում նշվել են առաջին անգամ բեմադրվելիք պիեսներ, որոնց վերնագրերը թերևս վերաբերում են արևմտահայության ազատագրություն հարցերին: Դրանք են՝ Անդրիի «Հայ աղջկա վրեժը» և անհայտ հեղինակի «Մարտիկներ» պիեսները, որոնց բեմադրված-խաղացված լինելու մասին տվյալներ չեն արձանագրվել մամուլում:

Հայոց ազատագրական պայքարի պատմութեան մասին գրելիս՝ լինի դա գրականութեան մեջ, թե թատրոնում, չի կարելի պատկառանքով չհիշատակել զորավար Անդրանիկ Օզանյանի (1865-1927) անունը: 1914 թվականից Անդրանիկի բեմական կերպարը (առաջին թույլ փորձը կատարել էր Գ. Երիցյանը՝ իր «Մոտ է գարունը» պիեսում. բայց միայն ֆիզիկական ներկայութեամբ, անխոս) հաստատուն տեղ է գրավել Անդրկովկասի և սփյուռքի հայկական թատրոններում: 1917-1920 թթ. Բաքվի և Թիֆլիսի թատրոններում Հովսեփ Ոսկանյանի բեմադրութեամբ ներկայացվել է է. Մեյսարի (Ալեքսանդր Ազարյան) «Վանի գրավումը և Անդրանիկի հերոսութունը» դրաման: Նախապես արգելվել է այս պիեսի բեմ հանելը, բայց 1917-ի ռուսական հեղափոխութունից հետ արգելքը վերացվել է և մի քանի բեմադրութուն է ունեցել:

1919-ին Թիֆլիսում խաղացվել է դերասան Աբրահամ Աբրահամյանի «Անդրանիկը պատերազմի դաշտում» դրաման: Շատ հնարավոր է, որ վերոհիշյալ պիեսում ավելի շատ խոսվել է Անդրանիկի մասին, քան գործել է ինքը՝ ազգային հերոսը - հայրենիքի պաշտպանը: Պիեսները չեն պահպանվել, դժվար է ավելին ասել նրանց բովանդակութեան կամ արժանիքի մասին: Բոլոր դեպքերում դրանք եղել են օրվա հուզող հարցերի անմիջական արձագանք և, որպես այդպիսին, իրենց պատմական ծառայութունը կատարել մեր մշակութի քաղաքական պատմութեան մեջ:

Անդրանիկի՝ Սասունում ծավալած հեղափոխական գործունեութեանն է նվիրված եղել Սասնա կոտորածների դեմ առաջին զորոգրամատուրգ Տիգրան Գալեմճյանի որդի՝ բուլղարահայ թատերական գործիչ և հողվածագիր Սեթ Գալեմճյանի «Անդրանիկ կամ Հայաստանի առյուծներ» վեց գործողութեամբ պիեսը:

Հետևելով հոր օրինակին, որդի Գալեմճյանը ևս իրենց թատրոնի խաղացանկը հարստացնելու նպատակով գրել է իր պիեսը՝ վեր հանելով Անդրանիկի կատարած դերը: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1919-ի հունվարի 2-ին, Վառնայի «Հայ Երիտասարդաց ինքնազարգացում միութեան» թատերական ճյուղի ուժերով: Կին դերակատարներից ներկայացմանը մասնակցել են Հայկանուշ Գուրպեթյանը (Ավոյի աղջկա դերում), Մարի Ենիկոյուպյանը, Սիրանուշ Մանուկյանը, Վերժին Պենյանը:

Անդրանիկի մասին գրված պիեսներից առավել հետաքրքրական է Մ. Վիմենցի (եղիպաահայ դերասան Մանուկ Թաշճյան) «Անդրանիկ» պիեսը, որտեղ արտացոլված է մեծ զորավարի կյանքի կովկաս-

յան շրջանը: Պիեսը բաղկացած է երկու մասից: Առաջինում տրված է Անդրանիկի մուսքը Թիֆլիս, երկրորդում հայի ազատագրումը:

Այս պիեսը բեմադրվել է 1920-ի փետրվարի 19-ին Կահիրեում: Անդրանիկի դերում հանդես է եկել եգիպտահայ թատրոնի հնագույն դերասան Լևոն Երզնանյանը: Նրա խաղընկերներն են եղել Գրիգոր Բազրատունին՝ Վարդանի, Եզուարզը՝ փոխհրամանատար Համոյի, Մ. Սարգիսը՝ Մելիքովի, Հ. Սարյանը՝ նրա կին Եղիսաբեթի, Ե. Գասպարյանը՝ սպա Դրոյի, Մուշտակենցը՝ սպա Գեոյի, Մանուկ Թաշճյանը՝ աշուղի, Ա. Մինասը՝ Պեթրի, Վ. Վահրամը՝ Տուղրիյի դերերում և ուրիշներ:

Անդրանիկի կյանքի տարբեր տարիների ու դործունեության մասին հետաքրքիր պիես է գրել նաև դրամատուրգ Վալադ Վալադյանը (Մկրտիչ Վանեցյան): Նրա «Ազատության ճանապարհին» կամ Անդրանիկ Փաշայի մահը» հինգ գործողություններ ազգային դրաման տեղ է գտել սփյուռքի թատրոնի դերասան և սեփառ Բարսեղ Աբովյանի ղեկավարությունում գործող «Իրամա-օպերետային» խմբի խաղացանկում: 1930-ին Աբովյանն այս պիեսը ներկայացրել է Լիբանանի և Սիրիայի մի քանի քաղաքում: Այսպես՝ ապրիլի 17-ին Բեյրութի Մեծ թատրոնում (2000 հանդիսատեղով), մայիսի 13-14-ին՝ Հալեպի Սինեմա Ռոյալում, հունիսի 14-ին՝ Ալեքսանդրիեթում, հունիսի 20-ին մի այլ վայրում: Ամենուրեք Անդրանիկի դերակատարը եղել է ինքը՝ Աբովյանը:

Պիեսում ընդգրկված է 25 գործող անձ՝ Անդրանիկն իր մարտական ընկերներով՝ Սմբատ, Սեպուհ, Հրայր, Օհան, Տեր Մեսրոպ, գնդապետ Հախնազարյան: Գործում են նաև Սրքեն, Նազիկը, Իբրահիմ ղեղապետը, Մեծ Չափուշը, բժիշկ, գինյորներ և այլ անձինք:

Վալադյանի պիեսում գործողությունները կատարվում են 1902-ին Սասնա լեռներում, 1914-ին՝ Արևմտյան Հայաստանում և 1927-ին Ամերիկայում: Սասնա լեռներում ֆրիդայինները մտահոգված են թշնամուն հակահարված տալու, ինքնապաշտպանություն, գինամիթրքը խնայողաբար օգտագործելու հարցերով: Գործողության ընթացքում լուսարձակի միջոցով ցուցադրվում է Ոգին, որի՝ Անդրանիկի հետ կարճ երկխոսության միջոցով հեղինակն արտահայտել է իր պիեսի հիմնական գաղափարախոսությունը: Ահա այն.

Ոգին - Անդրանիկ:

Անդրանիկ - Ո՞վ ես դուն:

Ոգին - Թշվառություն:

Անդրանիկ - Անունդ:

Ոգին – Հայաստան:

Անդրանիկ – Ի՞նչ կուզես ինձմե:

Ոգին – Իմ ազատությունը:

Անդրանիկ – Ինձմե՞ կուզես:

Ոգին – Քեզմե, դու ես ընտրյալը:

Անդրանիկ – Ո՞վ է ընտրել դիս:

Ոգին – Ես ինքս: Քալե, քալե Հսուաջ

Դարեր ի վեր ազատություննս կվնտրեմ: Քալե և սուրբիդ ուժով բեր ինձի ազատություն: Հարագատներու դիակները կմնան անթաղ և դիշակեր թռչուններեն և գազաններեն կըզկտվեն: Այ ցամքեր է արցունքը Հայ մայրերու աչքերին և կաթը սաինքներուն մեջ»:

Երկրորդ գործողությունը տեղի է ունենում ցեղապետ Իբրահիմ Փաշայի պաշտոնավարում: Նա զայրացած է, որ մի խումբ Հայեր պարտության են մատնել իրենց ջոկատին, գազազած է Անդրանիկի դեմ: Ավագ Չավուչը բռնի բերում է Սասունի Շենիկ գյուղացի Նազիկին: 1902-ի սեպտեմբերի 30-ի գիշերն Անդրանիկն իր ընկեր Սրքեի Հետ մտնելով Իբրահիմի որջը և լսելով Նազիկի ոգնության կանչը, վրա Հասնելով վերջ է տալիս արյունարբու բարբարոսի կյանքին:

Երրորդ գործողությունը կատարվում է 1914-ին Արևմտյան Հայաստանում: Համայրվում են կամավորների շարքերը, ժողովուրդը տաք Հագուստներ է մատակարարում մարտիկներին: Նազիկը բերում է իր աղային (բեմադրության մեջ դարձրել են թոռնիկ)՝ Ներսիսյան դպրոցի 17-ամյա աշակերտ Վիգենին, որն ամենայն վճռականությամբ որոշել է դառնալ Հայրենյաց պաշտպան:

Չորրորդ գործողությունը դարձյալ կամավորների տեսարան է ներկայացնում: Դրսից լսվում է «Լուսին չկա» իմբրոդը: Անդրանիկը դալիս է ձիուն Հեծած: Բոլորն ուրախ բացակամչությամբ են դիմավորում նրան: Խոսակցության մեջ Հիշատակվում է, որ Դրոն անցել է Բայազետ, Համազասպը՝ Կաղզվանում է, Քեռին՝ Սարիղամիշում, Սերաստացի Մուրադը՝ Երզնկայում: Ռուսական բանակի Հրամանատար գնդապետ Հախնադարյանը Դիմանի ճակատում աչքի ընկած տասը Հայ զինվորի ռուսական Հրամանատարության կողմից պարգևատրում է Ս. Գեորգի 4-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով: «Մեր Հայրենիք» երգի տակ բանակը դնում է:

Վերջին գործողությունը կատարվում է Անդրանիկի ննջատեղիում: Հիվանդ Անդրանիկին Հսկում ու խնամում են նրա մարտական ընկերները: Անդրանիկը մահանում է Սասուն, Խանասոր, Զեյթուն, Հայաստան ասելով: Հնչում է Շոպենի «Մահերգը»:

Անդրանիկի և նրա մարտական ընկերների կյանքին ու գործունեությանը, քաղաքական ու ռազմական իրավիճակներին քաջածանոթ, որոշ առումով էլ՝ որպես մասնակից (1910-ական թթ. եղել է Թիֆլիսի «Հորիզոն» թերթի թղթակիցը Հայ-ռուս-թուրքական պատերազմում), Վալադյանի այս պիեսը ուշագրավ փաստաթուղթ է Հայոց ցեղասպանության դեմ պայքարի պատմության համար: Դրա վկայություններից մեկը Բարսեղ Աբովյանի կողմից մի շարք քաղաքներում կազմակերպած ներկայացումների մեծ ընդունելությունն է:

1915-ի փարիզյան բեմադրությունից հետո, 1931-ին Կահիրեի թատերական գործիչները ևս անդրադարձել են Արմեն Շիտանյանի «Զորավար Անդրանիկ»-երեք գործողություն պիեսին, որն առաջին անգամ է ներկայացվել եգիպտահայությունը: Պիեսի բեմադրությունը նախատեսված է եղել մարտի 5-ին, բայց խաղացվել է մայիսի 5-ին Բրենթանիա թատրոնում և նվիրվել Սասունի ազատագրական պայքարի պատմությունը: Բեմադրությունն իրագործել է Հայոց ցեղասպանության թեմայով գրված մի քանի պիեսի բեմադրական փորձառություն ունեցող Օննիկ Վոլթերը: Անդրանիկի կերպարը մարմնավորել է գերասան Վրթանես Երամյանը, որն արտաքնապես էլ նման լինելով մեծ զորավարին, զգալի հաջողություն է ունեցել: Վոլթերը բավարարվել է Տոնիկ աղայի դերը կատարելով:

Այս շրջանում Անդրանիկին նվիրված մի պիես էլ Բեյրութում է բեմադրվել: 1933-ի դեկտեմբերի 30-ին Մարաշի Երիտասարդաց միություն թատերախումբը Սարգիս Ֆրստրեգճյանի դեկավորությունում ու մասնակցությունում ներկայացրել է «Անդրանիկը կամ Լրտեսը» երեք գործողություն պիեսը (անտիպ): Գործողությունները կատարվում են՝ ա) Անդրանիկի բանակավայրում, բ) Հասան աղայի բանակավայրում, գ) Ռազմադաշտում: Ներկայացման մասնակիցներից են եղել՝ Գ. Թյուրթյունճյանը, Սիրան Ատրունին, Ժան Միսաքը և ուրիշներ:

Այս նույն պիեսը 1935-ի ապրիլի 28-ին, իբրև «մոտիկ անցյալի մը հերոսական ապրումները», ներկայացրել է Հալեպի «Ղարիպ» թատերախումբը՝ մասնակցությունում Հակոբ Սանունիի, Խաչիկի, Գևորգ Թյուրթյունճյանի և ուրիշների:

Հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում Մշո Առաքելոց վանքի և մոտակա Հայ բնակչության հերոսական պաշտպանությունը նվիրված պիեսների շարքը Հայ թատրոնում: Այդ պաշտպանությունը, որն իր մեջ ունի նաև կազմակերպչական բնույթ, պատմական այնպիսի զորավոր դրվագներ են,

որոնք շուրջ մեկ դար դրամատիկական ստեղծագործության թեմա են դարձել թատերական գործիչների համար: Հերոսական պայքարի պատմությունը կարգալիս ընթերցողն այն խորը տպավորությունը էի ստանում, ինչ հանդիսատեսը զգում է բնմում կատարվող գործողությունների ժամանակ: Բեմական խոսքն ու գործողությունը միմյանց ձուլվելով դառնում են մի ահեղ զենք և ներգործում հանգիսատեսի զգացմունքների վրա՝ նրան հասցնելով պիեսի հեղինակի և ներկայացման մասնակիցների բարոյախոսական նպատակը:

Ահա, անհավասար ուժերի պայքարի պատմության մեջ կամային հաղթանակի հասնելու թեմայով գրվածքներին է պատկանում մի անհայտ հեղինակի «Առաքելոց վանքի ցույցը» պիեսը: Հեղինակը, անշուշտ, տառապած հայի սերնդի ներկայացուցիչ է, մեծ հայրենասեր:

«Առաքելոց վանքի ցույցը» պիեսը բեմադրվել է 1920-ի փետրվարի 20-ին Ֆրեդնոյի մեմորիալ աուդիտորիայում, «Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության» Ֆրեդնոյի մասնաճյուղի «Հրայր» դերասանական խմբի կողմից: Պիեսն ունի 28 գործող անձ, որը մի կողմից վկայում է հեղինակի ասելիքների առատությունը, մյուս կողմից բարդացնում բեմադրողի աշխատանքը:

Պիեսի մասին փոքր ի շատն պատկերացում ունենալու համար բերենք նրա գործող անձանց և դերակատարների անուն-ազգանունները և այդպես ընկալենք նրանց հարաբերությունները: Ահա այդ կազմը. Հաճի Հակոբ – Ալեք Հակոբյան, Անդրանիկ – Կարապետ Կիրակոսյան, Գևորգ Չավուշ – Հրանդ Սյուլթճյան, Ռես Մուշեղ – Խորեն Մինասյան, Խոսրով վարդապետ – Արամ Գրիգորյան, Տնտես մայրիկ – Կիկ. Սոֆյա Մելգոնյան, Ռես Մուշեղի տղան (որը երգել է աշուղ Շերամի «Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ» երգը՝ նվիրված Անդրանիկին) – Արշակ Գավառյան և ուրիշներ:

Փառաբանվել են թե հերոս անհատները և թե նրանց նվիրված հենարան ժողովուրդը: Ցեղասպանության արարքը մի այնպիսի վիրավորական արմատներ է գցել մեր ժողովրդի կյանքում, որ անհնար է չըջանցել նրա դատապարտման թեման: Այդ ահավոր դժոխքից ու կոտորածներից փրկվածներն ու մեր օրերի սերունդը անկարող են լուրի և իրենց բողոքի ու պահանջատիրության հարցը չզննն ողջամիտ մարդկության առաջ: Ցեղասպանությունն ընդունելը դեռ հարցի լուծում չէ: Ինչպե՞ս, մինչև ե՞րբ հաշտվել այն մտքի հետ, որ համայն աշխարհին հայտնի Բագրատունյաց թագավորության հզոր ամրոց-մայրաքաղաք Անիի վրա հայկական դրոշի փոխարեն թուրքական լուսին-կեռ յաթաղանն է իջխում: Խորն է, շատ խորն է հայի վերքը: Ինչքա՞ն կարելի է դիմանալ ու դիմադրել այս բուրդին:

Ամերիկահայ թատերական կյանքում, 1917-ին Բոստոնում հրատարակվել է «Բռնկող կայծեր» վերագրով, հայ հեղափոխական կյանքը պատկերող վեց գործողություններ և երկու պատկերով մի պիես, որի անունով, դեռևս ավելի քան մեկ տասնամյակ առաջ գրել ու բեմադրել էր պոլսա-ամերիկա-եգիպտահայ թատերական գործիչ Խաչիկ Նորիկյանը:

Այս տպագիր պիեսի որպես հեղինակ հիշատակվում է Սևվայր անունը: Բայց պիեսի առաջաբանում հիշատակվում է, որ այն թատերգություն է վերածել Ուոթթերթատունի «Արարատ» դերասանական խմբի վարչությունը, որի անդամներն են եղել Արմենակ Տերոյանը (ատենապետ), Նազարեթ Վարժապետյանը (ատենադպիր), Նշան Ծիկերճյանը (գանձապահ), Հովակիմ Նալպանտյանը (կնքապահ): «Թատերգություն վերծանման գործին մեծապես» նպաստել է Նշան Ծիկերճյանը:

«Երկու խոսքից» պարզվում է, որ այդ՝ «Հեղափոխական կյանքն առնված» հուզիչ գործը վկայից է թատերգություն վերածվել: Եվ այն իր բովանդակությունը բողոքովին չի համապատասխանում Խաչիկ Նորիկյանի՝ նույն վերնագրով պիեսի շոշափած հարցերին: Ուրեմն նրա աշխատանքն ինքնուրույն գործ է և չի առնչվում Սևվայրի «Բռնկող կայծերին»: Մեղավորը ոչ այնքան վերնագրի կրկնությունն է, այլ այն աննպաստ կացությունը, որի պատճառով հայ հեղափոխականների մոտ կայծեր են բռնկում՝ անիրավ կեցությունը շտկելու համար:

Վեպի բեմականացման հրատարակությունը «Արարատ» դերասանական խմբի վարչությունը նպատակ է ունեցել ընթերցողներին ցույց տալ «Թե ի՞նչ ծառայություններ ըրած է Հայ հեղափոխականն իր ազգին ու հայրենիքին և քանի՞-քանի՞ առևանգված հայ աղջիկներ ազատած է քյուրտ պեկերու աղտոտ ապարանքներեն ու ոճրագործ թուրքերու ձեռքերեն»<sup>1</sup>:

Ավելացնենք, որ ըստ վարչություն անդամների հավաստիացումների, պիեսը ներկայացվել է մի քանի անգամ և արժանացել «ժողովուրդի գնահատմանն, խուռն բաղմունքամբ ու շանդալից ծափերով»:

Սևվայրի «Բռնկող կայծեր» վեպի բեմականացումն ունի 25 կոնկրետ գործող անձ, ինչպես և հարսանքավորներ, երաժիշտներ, ժողովուրդ: Պիեսի գերակշիռ մասը պատմողական է, երկխոսությունը գրեթե բացակայում է և գործողություն պակասը թուլացնում է հո-

<sup>1</sup> Սևվայր, Բռնկող կայծեր, Բոստոն, 1917, էջ 3:

գեբանական ներազդեցութիւնը: Հեղափոխականը ամենից շատ կենտրոնացված է վարժապետի կերպարում, որն առաջարկում է կանոնավոր խմբեր կազմել, միասնաբար պաշտպանվել, որպեսզի թուրք ու քյուրդ թշնամիները չկարողանան թափանցել իրենց գյուղերը և առեանգեն հայ աղջիկներին, չհամարձակվեն վնասել հայ ազգաբնակչութիւնը:

Թեթևակի պատկերացում տալու համար տեսնենք թե ովքեր են պիեսում տեղ գրաված գործող անձինք:

Ռեյիս – կարճահասակ, գիրուկ հայ 45 տ.

Ալո Պեկ – քյուրդ աշիրեթի մը պետ – 30 տ.

Մստո – Ալոյի աշիրեթին գլխավորը – 35 տ.

Եղսա – Օհանեսի Ավետին աղջիկը – 18 տ.

Ճուվար – անոր դրացին – 16 տ.

Նազլի – հարսնետր – 16 տ.

Մկո – Եղսայի ծերունի հայրը (մայրական պապը – Բ. Հ.) – 80 տ.

Մամի – Մկոյի կինը – 75 տ.

Ջավեն – Եղսայի եղբայրը կամ Մկոյի թոռը – 6 տ.

Մեծ Ջավեն – (նույնը մեծ տարիքում – Բ. Հ.) – 18 տ.

Մաիրամ – Ջավենի և Եղսայի մայրը – 35 տ.

Ավետ (Եղսայի հայրը – Բ. Հ.) – 35 տ.

Ասլան – Հեղափոխական – 22 տ.

Ակո – Ասլանի զինակիցը – 25 տ.

Տեր հայր – քահանա – 50 տ.

Ջաքար – 32 տ.

Պետո – 40 տ.

Մխո – 30 տ.

Վարժապետ – երկարահասակ, մի քիչ գեր – 35 տ.

Հասո – քյուրդ հետևորդ – 30 տ.

Հունո – հայ ծերունի – 50 տ.

Ալթուն – նրա կինը 45 տ.

Գևո – 28 տ.

Շեքեթ – թուրք պաշտոնյա – 45 տ.

Հասան – թուրք զինվոր

Հարս, փեսա, տավուլճի, գուռնաչի, զինվոր, մուլլա, ժողովուրդ

Գործողութիւնները կատարվում են.

Ա. Արամազդ գյուղի մոտ, ծառերով շրջապատված աղբյուր կա, ճանապարհը տանում է դեպի Ասիա գյուղ, որտեղից պեսք է վերադառնան հարսանքավորները: Ռեյիսը և Ալո Պեկը պայմանավորվել են, որ այդտեղ ջրի եկող Եղսային քյուրդերը փախցնեն Ալոյի համար: Եղսայի ընկերուհիները լեղապատառ փախչում են:

11 Բ. Նահապետական տանը, Մկոն ծխափողը (ծխամորճը – Բ. Հ.) ձևաքին նստած դատողություններ է անում Հայերի թշվառության մասին: Եզրակացությունն է. «Մեր բոլոր հարստահարիչները և կեղևքիչները միայն քյուրդերը և թուրքերը չեն, այլ ճաճիկ կառավարությունը»: Որքան որ զայրացած է Ռեյխսի վարմունքից, ավելի ուրախ է Վարժապետի՝ վրեժխնդրության գաղափարի կոչելու համար: Նազլին վազեկազ գալիս է և հեկեկալով հայտնում քյուրդերի կողմից Եղսայի առևանգման մասին:

Գ. Վեց տարի է անցել: Եկեղեցու բակում մարդիկ նստած խոսում են իրենց բերք ու բարիքի մասին, որոնց մի մասը թուրքի ու քյուրդի բաժին է դառնում: Գալիս է քաղաքի հայոց դպրոցի Վարժապետը, որին պատմում են իրենց վիճակի, այդ թվում և 6 տարի առաջ Ալո Պեկի փախցրած Եղսայի մասին: Վարժապետը խորհուրդ է տալիս կազմակերպված գործել, երդմնազրի տեքստ է կազմում: Զավենն էլ մեծացել է, միացել նրանց: Ակոյին ծեր մարդու զգեստ հագցրած՝ ծպտված հեռախոսչության են ուղարկում քյուրդ Ալոյի տեղը գտնելու:

Դ. Ալո Պեկի ապարանքն է, Ալոն դրսում է, Եղսան պատուհանի մեջ նստած, երկաթե ձողերի արանքից դուրս է նայում: Նա հիմա հարեմական Նիեմի անուն է կրում: Ալոն մտածում է՝ ինչպես վերջ տա Վարժապետին, որը քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ պտտվում, հայերին իր դեմ է գրգռում: Գնում է հոր հետ զրուցելու: Գալիս է ծպտված Ակոն, առանց հայտնելու իր ով լինելը, իբրև թե Ալոյի գյուղն է փնտրում: Զրույցի ժամանակ Ակոն հանում է դիմակը, Եղսային հայտնում, որ Զավենի ընկերներից է: Պայմանավորվում են՝ Ալոն տանը չհեղած ժամանակ գան և ազատեն Եղսային:

Մութ տեսարան է: Նվագախմբի աղմուկի տակ, սանդուղք են դնում Եղսայի պատուհանի տակ, Զավենը խարտում է պատուհանի ճաղերը, քրոջն իջեցնում և ապա պատուհանից կրակ գցում սենյակը: Ալոյին լուր են հասցնում Եղսային տանելու մասին:

Ե. Անտառ է, ծառերով չրջապատված: Հունոն պատրաստվում է տուն վերադառնալ, խոսում է Վարժապետի, Զավենի և նրա ընկերների մասին, որոնց մարտական գործողությունների շնորհիվ կյանքը մի քիչ խաղաղվել է: Գալիս են Ֆիդայիներ Մխոն, Զավենը, Գևոն, Ասլանը, քիչ հետո՝ նաև Եղսան: Անհավասար կռվում բրդերը գերի են վերցնում Վարժապետին: Եվ, քանի որ նրանք այդ ծառերին մոտ ճանապարհով պետք է անցնեն, ապստամբները թաքնվում են ժայռերի արանքում: Գալիս են: Սկսվում է կռիվը: Եղսան եղբոր տված ատրճանակով սպանում է Ալոյին:

Եղսան ազգի ազատութեան համար պայքարի մեջ մտնելով թշնամու դեմ, երգվում է. «կուզեմ ուխտյալ ըլլալ ու իմ տկար ձեռքովս այն քույրերիս արցունքները սրբել, որոնք առատորեն կթափվին շուններու հարեմանոցին մեջ»: Վերքից մահանում է Ասլանը:

Տեսարան: Վարժապետին բերել են կախելու: Թշնամին իր արարքով հրճվելու հաճույք չստանալու համար, Վարժապետն ինքն է պարանը վիզն անցկացնում: Նրա վերջին խոսքերն են լինում՝ «Գաղափարը ոչ մահ ունի և ոչ դաղափար, ոչ ալ գերեզման կամ դագաղ... զիս խեղդելով չի կրնար մարել այն կայծերը, որ կըռնկին ու պիտի բռնկեն նոր սերունդին սիրտերուն մեջ»:

Սրան հաջորդած տեսարանում Վարժապետի թարմ գերեզմանաթումբն է, որի վրա ողբում է Եղսան: Գալիս է Ջավենն իր ընկերների հետ, քրոջից իմանում Վարժապետի ձերբակալութեան և կախադանի մասին: Բոլորը համբուրում են նրա գերեզմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի և հայոց կամավորական շուկատների մասնակիցների ֆիզիկական ու բարոյահոգեբանական հետևանքների յուրատեսակ պատկեր է տվել վիպասան և դրամատուրգ Նար-Դոսը (Միքայել Զ. Հովհաննիսյան): «Սպանված աղավնի» վիպակի նման նա պիեսի է վերածել նաև իր «Անհետ կորածը» պատմվածքը: 1920-ի հոկտեմբերի 24-ին ավարտել է այդ աշխատանքը՝ վերնագրելով «Հենակներով մարդը» – դրամա մեկ գործողութեամբ: Առաջին անգամ տպագրվել է 1921-ին, Թիֆլիսի «Գեղարվեստ» հանդեսի 7-րդ համարում<sup>1</sup>:

Պիեսի կենտրոնական հերոսներն են Արամը և նրա նախկին կինը՝ Ֆլորան: Արամը կռիվ է զնացել, վիրավորվել (մի ոտքից զրկվել), գերի ընկել, հինգ տարի անց վերադարձել: Ֆլորան երկար ժամանակ սպասելուց և սպանվածների կամ գերի ընկածների ցուցակում չգտնելով նրա անունը, ամուսնացել է Կարմիր խաչի գրասենյակի աշխատող Ռուբեն Նուրյանի հետ, որը հայրություն է արել նաև նրանց որդուն՝ Սուրիկին:

Արամը վերադառնում է, գտնում Ֆլորային, զրույց ունենում, պարզում եղելությունը: Ֆլորան արգարանում է, որ նրանից ոչ մի նամակ չի ստացել, ընդհակառակը, քույրն է իրեն անընդհատ կշտամբել: Կանչում են բակում խաղացող իրենց որդուն՝ Սուրիկին, որի համար Արամը եղել է այն հայրը, որին, սակայն չի հիշում և կապված է Ռուբենի հետ:

<sup>1</sup> Գեղարվեստ (Թիֆլիս) 1921, № 7, էջ 67-78:

Պալիս է Ռուբենը, Արամն առանց խոսքի դուրս է գնում, բախում Սուրբիկի հետ խոսելու: Ռուբենի համար պարզվում է Արամի ներկայութունը, իրեն վատ է զգում Ֆլորան: Բակից կրակոցի ձայն է լսվում: Աղախինը դալիս և հայտնում է, որ հենակներով մարզն ինքնասպան է եղել:

Նար-Դոսի «Հենակներով մարդը» երկու բեմադրութուն է ունեցել: Առաջին անգամ ներկայացվել է 1922-ի հունվարին, Թիֆլիսի հայկական թատրոնում, Արմեն Արմենյանի բեմադրությամբ: Նույն տարվա ամռանը, Արմենյանը հյուրախաղային խումբ կազմելով, հին ու նոր դերակատարներով ներկայացրել է Ալեքսանդրապոլում:

«Հենակներով մարդը» պիեսի երկրորդ բեմադրութունը տեղի է ունեցել 1933-ի դեկտեմբերի 17-ին, Կահիրեի «Թատրոն Ռամզեսում»: Ըստ երևույթին, պիեսում որոշ լրացումներ կատարելով դարձրել են չորս գործողությամբ դրամա: Ներկայացումը կազմակերպվել է «Ապրիլյան սերունդ» միության կողմից, լրիվ վերնագիրն է եղել՝ «Անողոք ճակատագիր կամ Հենակներով մարդը» - բնտանական դրամա:

Ներկայացման մասնակիցներից են եղել եգիպտահայ թատրոնում որոշակի հետք թողած դերասաններ և ռեժիսորներ Արաքսի Օհանյանը, Խաչիկ Սանտալճյանը, Կարապետ Կարապետյանը և ուրիշներ: Ելնելով վերոհիշյալ մասնակիցների դերասանական առանձնահատկութուններից, պետք է ենթադրել, որ նրանք կատարել են Ֆլորայի, Արամի և Ռուբենի դերերը:

Ամենաառօրեականը և բնորոշը 20-ական թթ. հայ դրամատուրգիայի և թատրոնի պատմության մեջ, Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ դատ ու դատաստանի արտացոլումն է, մասնավորապես Թուրքիայի ներքին գործերի նախարար, հայերի արնախումբ թալեսաթ պեյի սպանության պատմությանը միջազգային դատական ատյաններում:

Երկար տարիների վրիժառության ակտն ի կատար է ածվել 1921-ի մարտի 15-ին, Բեռլինում: Ութ տասնյակի չափ հարազատից զրկված Սողոմոն Թեհիրյանը հետապնդելով հայ ժողովրդի անառակ թշնամուն, օրը ցերեկով, գեմ առ գեմ կրակոցով գետնին է տապալել նրա նեխած հոգով ու դատաստանից խուսափող մարմինը: Գերմանական դատական ատյանը խորանալով գործի էության պատմության մեջ, անպարտ է ճանաչել Թեհիրյանին և ազատ արձակել:

Իբրև սրտի ու վերքի հիշողութուն, այդ դատավարությունը դրամատիկական ստեղծագործության նյութ է ծառայել մի քանի

սերնդի գրողների համար և դեռ պետք է ծառայի: Հայ հեղինակները գրելու շատ թեմաներ ունեն, բայց այդ մեկն իր արյունալի պատմությամբ պետք է ժողովուրդներին հիշեցնի, որ ուրիշի համար փոս փորոզն ինքն է ընկնում հորը:

Թալեաթ փաշայի սպանության մասին պիեսներ են գրել դերասան Անդրանիկը («Թալեաթի սպանությունը»), Սեդրակ Շահենը («Թալեաթի սպանությունը կամ Թալեաթի անկումը»), Ժորժ Սարգիսյանը («Դատավարություն Սողոմոն Թեհլիրյանի»), Հրանդ Մարգարյանը («Սողոմոն Թեհլիրյան վրիժառուն»), Պերճ Զեյթունցյանը («Ոտքի՛, դատարանն է դալիս»): Թերևս էլի լինեն:

Թուրքական բարբարոսների դեմ հայ ժողովրդական զանգվածների ինքնապաշտպանության կռիվներն իրենց արտացոլումն են ստացել թատերական գործիչ և դրամատուրգ Սեդրակ Շահենի (Շահինյան) մի շարք պիեսներում: Նրա գրեթե բոլոր պիեսները, իբրև պայքարի ուրույն զինք, նշանակալից դեր են կատարել Հայոց ցեղասպանության և նրա հետևանքների թեմային նվիրված դրամատուրգիայում: Նրա պիեսներում հայրենասիրական բարձր դադափարով ու նվիրվածությամբ են պատկերվել մոտիկ անցյալի քաղաքական կյանքի ու ազատագրական պայքարի դեպքերն ու իրադարձությունները, տրվել ժողովրդի անկոտրում կամքի, սիրո, քաջության, նվիրվածության նկարագիրը:

Պայքարի այդ վեհ ճանապարհին, տղամարդկանց կողքին Շահենը սիրով ու ակնածանքով է ներկայացրել նաև անձնագոհ՝ հերոս կանանց ու օրիորդների, հոգևոր դասի ներկայացուցիչների կերպարները: Նրա ներկայացրած հերոսների մի մասն իրական անձնավորություններ են, որոնցից շատերը պիեսները գրելու տարիներին դեռ ողջ են եղել և շարունակել են իրենց դորձուննությունը պայքարի տարբեր փուլերում, վայելել ժամանակակիցների հարգանքն ու համակրանքը: Իսկ ընկածների հիշատակը նա ոգեկոչել է իր պիեսների բեմադրություններով, նրանց գործը շարունակել բեմական միջոցներով:

Սեդրակ Շահենի դրամատուրգիան իր հայրենասիրական գաղափարախոսությամբ բոլորովին տարբերվում է ցեղասպանության թեմայով պիեսներ գրած հեղինակների գործերից: Նրա գրեթե բոլոր պիեսներն ավարտվում են լավատեսական, լուսավոր գաղափարներով, Հայաստանն ազատագրված տեսնելու հավատով ու դիմացիին նույն ոգով հուսադրելով: Բոլոր պիեսների վերջում Ազատ Հայաստանի գովերգությունն է տալիս՝ հաստատ ու համոզված հայացքով:

Շահենի պիեսներն իրենց այժմեականությամբ ու գաղափարական նպատակասլացությամբ համահնչուն էին 1920-1930-ական թթ.

Հարազատ վայրերը կորցրած Հայության հոգեբանությանը և հաս-  
տատունն տեղ են գրավել սփյուռքահայ թատրոնի պատմության  
մեջ: Այդ պիեսների բեմադրությունները բավականին նպաստավոր  
դեր են կատարել օտար միջավայրում հայերի ինքնազոյապահպա-  
նության կարևոր գործում:

Շահենի դրամատուրգիայից ամենատարածված պիեսներից մեկը  
եղել է «Տանջվածները» (պատկերներ հայ աղետի տարագրութենեն)  
վեց գործողությամբ դրաման, որը տպագրվել է 1917-ին Նյու  
Յորքում: Պիեսի առաջաբանի փոխարեն գրած երկու խոսքում  
հեղինակը դիմելով Սգակիր ընթերցողներին, գրել է.

«Ես դժվարեցա Հայ տառապանքի կսկծեցուցիչ պատկերներ ամ-  
բողջությունը մտքիս զարնել, վասնզի իմ միտքը այդքան ծանրու-  
թյան չգիմացավ, այլ հալեցավ... Այս տերտի հոսանքին մեջ քեզ  
գտնել էր նպատակս... ցավատանջ զուլումի այս մեկ նկարագրու-  
թյան նպատակին մեջ իրար կգտնենք կհուսամ, և վերաշինություն  
սկսելու ուխտը միասին ընելնես վերջ փափաքելի բանը պետք է  
բուն Հայաստանի մեջ իրար գտնել...»<sup>1</sup>:

Պիեսը ձոնվել է «բոլոր այն շինարար Հայ բազուկներու... քանդ-  
ված Հայաստանը վերաշինելու»:

Պիեսում որպես գործող անձինք հետևյալ դեմքերն են՝

Տեր Հակոբ - Կարնո Կ. գյուղի քահանա

Ջանո - Տեր Հակոբի կինը

Եղունիկ - Տեր Հակոբի մեծ աղջիկը

Սուրմա (կույր) - Տեր Հակոբի փոքր աղջիկը

Տիրան - Տեր Հակոբի փեսան (Եղունիկի ամուսինը)

Տիլո - Խնուսցի ծեր Ռես մը

Պուսո - Տիգրանակերացի ծերուկ մը

Ջիա պեյ - Կարնո բռնակալ պեյերեն մին

Ահմետ - Ջիայի փոքր եղբայրը

(Հուլյսը՝ մտացածին պատկեր):

Տեր Հակոբին թուրքերը կոչում են մոլլա Ալի: Նրա երկու  
աղջիկներին առևանգել են թուրք եղբայրները: Տիրանը պանդուխտ  
է, իսկ Եղունիկին տիրացել է Ահմետը, անունը վերափոխելով  
Սալիհի: Սուրման աքսորի անապատներում կուրացել է: Հուլյսն ու  
Տիրանը միմյանց հուսադրում են: Հուլյսն ասում է՝ ես սիրելիիդ  
լուլյսն եմ, ես Հայաստանի հուլյսն եմ, հուսա, հուսա... պիտի ապրի  
Հայաստան, լուլյս դուն զիս հետդ ունեցիր և քալե, որ քեզմով ապրի  
Հայաստան:

<sup>1</sup> Ս. Շահեն, Տանջվածները, Նյու Յորք, 1917, էջ 5 (ընդգծումները հեղինակին են):

Կարնո մի գյուղի դաշտային տեսարան է, աշուն: 200 տնից մնացել է 30-ը: Տիրանը, որ վրեժի ոգով է լցված, ձգտում է Հայաստանը շենացնելու: Գալիս է Տեր Հակոբը, իսկ թուրքերը և քրդերը կամավորների ահից փախել են: Տիրանն ասում է Ջիային – «կառավարութեանդ հետ պատասխանատու եք և դուք՝ Ջիա: Ռուսը թերևս ներք ձեզ, բայց ռուսի ներածին, հայը դժվար թե ների...»

Կույրը՝ Սուրման նույնպես մեղադրում է Ջիային՝ իրենց ընտանիքի նկատմամբ կատարած բոլոր չարագործութիւնների համար: Այս հուզումնալից պահին, ճիշտ արձակելու ժամանակ հանկարծ վերականգնվում է տեսողութիւնը: Սուրման այս անգամ ավելի խրոխտ ձայնով է դիմում Ջիային – Գագան, դուն գագան... պատիվնիս կրծող գագան, տուններնիս քանդող գագան, գավառնիս և գյուղերնիս ավրող գագան, հայրենիքս մոխրացնող գագան... Դուն բարիք գործեցիր, ըհ (գերեզմանը ցուցնելով) հոս թաղեցիր քույրս... Ո՛ր թաղեցիր իմ նամուս գագան... Այս ասելով սպանում է նրան:

Տեր Հակոբն օրհնում է Տիրանին և Սուրմային:

Գյուղ են վերադառնում Ամերիկա, Ռուսինիա գաղթածները:

Սուրման ազգային դրոշ է կարում՝ վրան գրված «Պիտի ապրի Հայաստան»:

«Տանջվածները» պիեսի վերջում տրված են Ս. Շահենի՝ տպագրութեան համար պատրաստ մյուս պիեսների վերնագրերը, որոնց մեջ, անշուշտ, կան և Հայոց ցեղասպանութեան թեմային նվիրված գործեր: Դրանք են՝ «Մացակ բիձա» (4 գործ.), «Սարսափի սաները» (5 գործ.), «Կարմիր աղջիկը» (4 գործ.), «Չորս գանկերու վրեժը» (4 գործ.), «Գյուղացի քաջը» (4 գործ.), «Մարիան» (4 գործ.), «Լուկոչներ» (թուրքահայերի կյանքից, 6 գործ.):

Շահենի «Տանջվածները» պիեսը տպագրվելուց հետո, իսկույն բեմադրվել է Ֆրեզնոյում, այնուհետև՝ Պլենֆրդի «Կայծ» դերասանական խմբի կողմից (1918): Հետագայում «Տանջվածներին» են անդրադարձել Լոս Անջելեսում (Խորեն Փափազյանի բեմադրութեամբ, 1925), Պրովիդենսում («Հնչակ» դերասանական խմբի կողմից, 1931), Տեսինում (Կարտանի «Ավչարյան» թատերախմբի կողմից, 1932):

«Տանջվածների» բեմական պատմութեան մեջ առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում նրա բեմադրութիւնը Սվեդիայի Հաջի Հաբիրլի գյուղում: Այս բեմադրութեան ուշագրավ կողմերից մեկն այն է, որ 1924-ի հուլիսի 27-ի այդ ներկայացմանը առաջին անգամ բեմ է բարձրացել հայ օրիորդը: Այդ առթիվ մամուլում գրվել է՝ «միմիայն այս գյուղն է, որ մինչև հիմա երկեսու ներկա-

յացումներ սարքած է»<sup>1</sup>: Ներկայացումը կազմակերպվել է Հայկական երկսեռ դպրոցական միության կողմից և ցուցադրվել դպրոցի շենքում:

«Տանջվածները» ներկայացման սկզբում, միջնարարներին և վերջում արտասանվել են հայրենասիրական բանաստեղծութուններ, կատարվել ժողովրդական երգեր, որոնք գոհունակությամբ են ընդունվել հանդիսականների կողմից, իսկ Խ. քահ. Կեռկճյանը յուրաքանչյուր ընդմիջումին բացատրել է հաջորդ գործողության բովանդակութունը, քանի որ նրանցից քչերն են հասկացել հայերենը:

Այս բեմադրության մասնակիցներն են եղել՝

Դ. Քելեմյանը – թուրք Ջիա պեյ, Պետրոս Ճարաճյանը – դինվորական, Պ. Թեոդյանը – գլխասիրտ և խոհուն թուրք ազնվական, Հ. Քեչիչյանը – խղճմիտ և գլխասիրտ ծերունի Մուխթար աղա, Մ. Տոնիկյանը – կրոնավոր Տեր Հակոբ, տիկ. Մ. Ճարաճյանը – երեցկին Ջանո, օր. Ա. Մելիտոնյանը – Տեր Հակոբի մեծ աղջիկ-Եղունիկ («Եղնիկը» դերը հաջողությամբ «ճշմարիտ և անկեղծ սիրո ու հայուհիի վայել վրեժի սքանչելի նմուշ մը ստեղծեց»), Մ. Քելեմյանը – Սուրմա, օր. Մ. Գալայճյանը և պատանի Պ. Մելիտոնյանը – («Արաբիայի անապատներու վրա թափառող մուրացիկ գաղթականներ շատ լավ կերպով ուրվագծեցին»), օր. Թ. Շեմմեսյանը – «Հույս», Հ. Մարտիրոսյանը – Տիլո (Իես), Ա. Չոպյանը – Պուպո (ծերունի) և վերջապես Ի. Խ. Մ.-ն – Տիրան (Եղունիկի ամուսինը, որը «Ղարիպութենն դարձող և անապատներուն մեջ ընտանիքը փնտրողի մը տեսարանը պարզեց»)՝<sup>2</sup>:

Քարն էլ չի դիմանա այս կսկծալի պատմությանը և հուզմունքից կճաքի: Ահա թե ինչ ճակատագրի է հասցրել հայերի նկատմամբ կիրառված ցեղասպանութունը: Ո՞ր թուրքը կամ ամերիկացին է անցել այս մաղի ծակով:

«Տանջվածները» բեմադրության դերակատարումներից բացի, ներկայացման հաջողությանը նպաստել է Հ. Գերմանիկյանի՝ «Ճաշակով հարդարած բեմը»:

Երեկոն ավարտվել է «Բամբ որոտան» քայլերգի խմբերգով և ուրախ տրամադրությամբ հանդիսատեսին բարի գիշեր մաղթել:

Երկու տարի անց, 1926-ին, «Տանջվածները» Մարսելի Հնչակյան ուսանողական միության «Փարամազ» թատերախումբը ներկայացրել է Կարտանում: Ներկայացումը տեղի է ունեցել նոյեմբերի 28-ին դերասան Հ. Փափազյանի ղեկավարությամբ:

<sup>1</sup> Սուրիական մամուլ (Հալեպ) 1924, № 286:

<sup>2</sup> Նույն տեղում:

Բեմագրուելունը նվիրված է եղել Հայաստանի վերաշինուելթյանը նպաստելու գործին: Գործող անձինք ու դերակատարներն են եղել՝ Զիա պեյ – Տեմիրճյան, Ահմետ – Ա. Հոլովիկյան, զինվորական – Ե. Պողոսյան, հայասեր ծերունագարդ Մուխթար – Ինճեյան (իրական թուրք բռնապետի մը վայել եղանակով խիստ հաջող երևեցան), օրդ. Շաքեն (Եղնիկ)... «չի կարելի լուելթյամը անցնել... այդ փոքր օրիորդը թե որքան ներկաներուն արտասուելուն պատճառ եղավ, իր հուզիչ թոնով, մելամաղձոտ նայվածքով և թուրք պեյերու հարեմներու մեջ արգելափակվող, բայց միշտ իր ազգուելթյունը չուերացող ու իր նամուսի բռնաբարման համար իրեն և իր հետ թուրք գազան մը թունավորող վրեժխնդիր հայ տիկնոջ մը վայել ձևակերպուելթյուններով...»<sup>1</sup>:

Մյուս դերերում հանդես են եկել՝ Պ. Պողոսյանը՝ Տեր Հակոբ քահանա, Հեքիմյանը – Զանո, Մարին – Սուրմա, Զինճանը – Տիլո, Ն. Տեր-Հուսիկյանը – Պուպո, Զարուհի Տեմիրճյանը – «Հույս» և ուրիշներ:

«Տանջվածների» առաջին բեմագրուելթյան շրջանում բեմական կյանք է մտել Ս. Շահենի՝ ցեղասպանուելթյան թնմայով գրած մի այլ պիեսը՝ «Կարկառուն կամարներ» վեց գործողուելթյամը դրաման: Պիեսը նվիրված է սեբաստացի Մուրատի հեղափոխական գործունեուելթյանը Շապին Գարահիսարի հերոսամարտի շրջանում: Առաջին անգամ խաղացվել է 1918-ի սեպտեմբերի 28-ին, Բուենոս Այրեսի հնչակյան «Զեյթուն» դերասանական խմբի կողմից: Այնուհետև 1922-ի ապրիլի 15-ին Լորենսում (ԱՄՆ):

«Կարկառուն կամարները» քանիցս խաղացվել է Ֆրանսահայ թատրոնում: Մեր առաջին տվյալը վերաբերում է 1926-ին: Ներկայացվել է հուլիսի 3-ին, Մարսելի «Մուրատ» ընկերուելթյան կողմից, Լյուելի սրահում: Դերակատարներից են եղել՝ Հակոբ էֆենդի – Ա. Խանոյան, Մարալ – օր. Այնիվ, Զավեն – Ա(սատուր?), Հոլովիկյան, Մուրատ – Փափազյան, Գուրգեն – Հ. Թուլմանյան, Ալո – Մ. Սիմոնյան, քյուրդ – Ե. Տեր-Սահակյան, Ալի – Հ. Հարուելթյան և ուրիշներ<sup>2</sup>:

Այս պիեսը բեմագրուելթյուններ է ունեցել նաև 1926-ի սեպտեմբերի 5-ին Սեն-Շամոնում, Մշակուելթի կրթասիրաց ընկերուելթյան կողմից: Այնուհետև՝ Վիենի «Կայծ» ուսանողական միուելթյան թատերախմբի կողմից (1933), հետո՝ Վալանսում, Գրենորլում, Լիոնում և Տեսինում:

<sup>1</sup> Նոր երկիր (Փարիզ) 1926, № 31:

<sup>2</sup> Նոր երկիր (Փարիզ) 1926, № 10:

Բացի վերոհիշյալ պիեսներից, Ս. Շահենի մի շարք գործեր դեռևս 1920-ական թթ. կայուն տեղ են գրավել Լիբանանի և Սիրիայի մի քանի գաղթօջախում ևս:

Տեր Զորի տարագրությունից, արարական անապատներում ողջ մնացած գաղթականության մնացորդները, անտեր-անտիրական որբերի հետ զանգվածաբար ապաստան են գտել Բեյրութում, Հալեպում, Կիլիկիայի մի շարք գյուղերում: Ապրել են բաց երկնքի տակ, լավագույն դեպքում՝ թիթեղածածկ վրաններում, մի օր կուշտ, մի օր քաղցած, դիմակայել ամեն տեսակի հիվանդությունների և կամաց-կամաց ուշքի եկել: Որոշակի նպաստավոր պայմանների շնորհիվ սկսել են մտածել կրթություն ստանալու, մշակույթի, արհեստների զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և զբաղվելու հարցերով:

1918-ից ստեղծագործական հունի մեջ է մտել Հալեպահայ թատերական կյանքը: Մինչ այդ, դեռևս 1909-ից Հալեպում գործել է «Անդրանիկ» անունով թատերախումբ, որի բեմադրություններից հայտնի են «Պատվի համարը» (1909), «Համլետը» (1911): Այդ թատերախումբը 1919-ից մինչև վերջերս պարբերաբար աշխատել է և իր պատմությունը պահել<sup>1</sup>:

Հալեպահայերի օգնությունը թուրքական աքսորից փրկված դերասան Աշոտ Մատաթյանը վերակենդանացրել է տեղի թատերական կյանքը՝ 1918-ին բեմադրելով «Համլետ», «Պատվի համար», «Շերլոկ Հոլմս» և այլ պիեսներ: Երիցյան ամուսինների հետ կազմակերպել են «Մելպոմե» անունով թատերախումբ և իրենց գործունեությունը շարունակել ազատագրված Ադանայում: Նրանց է միացել նաև «Համլետի» թարգմանիչ, գերասան-բանաստեղծ Գևորգ Կառվարենցը (Արապաճյան): 1919-ին, Մատաթյանն ու Կառվարենցը փոխադրվել են Կ. Պոլիս, ասպարեզը մնացել է տեղացի թատերական գործիչներին:

1920-ից Բեյրութում ակտիվ դեր է խաղացել 16 տարեկան գաղթական Պողոս Մենտիլյանը, որն աստիճանաբար առաջագիմելով դարձել է լիբանանահայ թատերական հանրահայտ դեմքերից մեկը: Մի շարք հայրենասիրական պիեսների հետ, նա մեծ կարևորություն է տվել Ս. Շահենի՝ ցեղասպանությունից դեմ պայքարող պիեսների բեմադրություններին:

<sup>1</sup> Կարպիս Լեփեճյան, Պատմություն Անդրանիկ թատերախումբի 1919-2010, Հալեպ, 2010:

Այսպես՝ 1933, 1935 և 1936 թթ. Մենտրիլյանը Բեյրութում բեմադրել է Ս. Շահենի «Թալեաթի անկումը» (Թալեաթ և Սողոմոն Թեհլիրյան) հինգ գործողությունք պիեսը, միաժամանակ կատարելով Թեհլիրյանի դերը:

1935-ին Բեյրութի Սահակյան վարժարանի սրահում «Պանդուխտ» թատերախմբի ուժերով ներկայացրել է «Զեյթուն» (Զեյթունի հերոսական ապստամբությունը) չորս գործողությունք դրաման, իր և Գ. Թյուլթյունճյանի մասնակցությամբ: Ներկայացման ազդագրի վրա ծանուցվել է՝ «Ներկայացման թուրքական բաժինը թուրքերեն լեզվով պիտի կատարվի: Հայրենակիցներ, եթե կուզեք պահ մը Հայոց ազգային պայքարի մարտնչումներով ապրիլ, անպայման հաճեցեք ներկա լինիլ»:

Եվ վերջապես «Կարկառուն կամարները»: Այս պիեսը բեմադրվել է 1937-ի փետրվարի 21-ին, Սահակյան վարժարանի սրահում, նորից «Պանդուխտ» թատերախմբի դերասանական ուժերով: Պիեսի մասին ընդհանուր պատկերացում ունենալու նկատուումով տալիս ենք նրա գործող անձանց, ինչպես նաև դերակատարների ամբողջական ցանկը:

Հակոբ էֆենտի-Գեսյուր, Ալմաստ Հանրմ-տիկ. Ճիհանունի, Մարալ-օր. Շասյուր, Ջավեն և Տեր Գուլո-Կայծակ Գնդունի, Գուրգեն-Պ. Գուլումճյան, Մուրաս-Խորեն Այվազյան, Ավո-Լ. Ֆարմանյան, Սեդրակ-Գևորգ Թյուլթյունճյան, Ղուկաս-Հ. Մելիքյան, Սամուել-Ա. Առաքելյան, զինվորական-Անդրանիկ Քեչիշյան, Ֆեխի-Պողոս Նաթրյան, Գեգի-Գ. Նշանյան, Ա. զինվոր-Գ. Գրլըճյան, Բ. զինվոր-Մ., Հյուս(եին) աղա-Միհրան Սեֆերյան, Բեյպեր Ալի-Վ. Տոնապետյան, Հասան-Իմաստուն Կյուլվանեսյան, Թրքուհի-օր. Խանճիհանյան:

Խ. Այվազյանի և Գ. Թյուլթյունճյանի ղեկավարությամբ «Պանդուխտ» թատերախումբը նոր կազմով նորից է ներկայացրել «Կարկառուն կամարներ» պիեսը: Երկու բեմադրություն համար պատրաստված հայտագրերում տպագրվել է հետևյալ ուշագրավ ծանուցումը. «Հայրենակիցներ, սուլյն բիեսը, որ առնված է Հայ հեղափոխության ազատագրական պայքարեն, հոն պիտի տեսնաք ազգային գոյությունդ համար անձնվիրաբար կուրծք տվող Հայ Հերոսներուդ մարտնչումները, որքան հպարտ պիտի զգաս ինքզինքդ, երբ տեսնես քու գոյություն համար գիտակցորեն և անշահախնդրորեն նահատակվող Հայ հեղափոխական հնչակյան կուսակցության հերոսներու քաջագործությունները»:

Հայ դրամատուրգիայում և թատրոնում ազգային ազատագրական պայքարի պատմաբան-դրամատուրգ Սեդրակ Շահենի գրած

տասնմեկ պիեսներից ամենացնցողը երևի թե նրա «Քսան կախաղաններ» ողբերգական ավարտով դրաման է: Պիեսի բարոյահոգեբանական եզրակացությունն է՝ Թուրքիայում անհնար է ազատության համար պայքարի դուրս գալ, իսկ ով կհամարձակվի քննադատել թուրքական կառավարության գործելակերպը, նրանց կլռեցնեն կախաղան հանելով:

Շահենն իր այս պիեսը գրել է 1915-ի հունիսի 15-ին Կ. Պոլսի Բայազիդի հրապարակում, օրը ցեղեկով կախաղան բարձրացված սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունից 20 անձնվեր դործիչների հուզիչ տեսարանն աշխարհին ցուցադրելու նպատակով: Հեղինակն իր այս սիրելի անձնավորությունների հետ տվել է նաև Թուրքիայի Արտաքին գործերի ու բաղամական նախարար էնվերի և Ներքին գործերի նախարար Թալեաթի, թուրքական բանակի գերմանական կցորդի և այլ մարդկանց կերպարներ, որոնց թիվը հասնում է 28-ի: Որքան որ այս մարդաշատ գործող անձերով պիեսը դժվարացնում է նրա բեմադրությունը, նույնքան էլ համոզում է, որ բոլոր գեմքերն ու դեպքերը իրական անձնավորություններ են ու կատարված իրողություններ:

Թուրքը չէ, ով ուզում է լինի, ի՞նչ խիղճը կորցրած կամ վարձովի պատմաբան կարող է հերքել կամ արդարացնել Հայոց ցեղասպանությունից հրեշավոր այս արարքը:

«Քսան կախաղանները» 1918-ին Զիկագոյում տպագրվելուց հետո սկսվել է նրա բեմադրությունների շարքը աշխարհի տարբեր վայրերում: Պիեսը նվիրվել է «Բոլոր անոնց հիշատակին, որ ինկան փոքր ազգերու ազատության համար մղված մաքառումների ընթացքին»: Ինչպես տեսնում ենք, Շահենն այս պիեսով ավելի հեռուն է ընդգրկում ոչ միայն հայերի, այլև հայերիս պես փոքրամիջակ ազգերի ազատության կոչ է անում:

«Քսան կախաղաններին» առաջին գործողությունը տեղի է ունենում Վանի Վարագա վանքի բակում: Լսվում են ժամերգությունից մեղեդիները: Ծառախիտ պուրակի մոտ, աղբյուրի կողքին կանայք զրուցում են իրենց առօրյա հոգսերի մասին: Գալիս են վարձկան թուրք գինիորները և արգելում պատարագը: Պատարագին ներկա հնչակյան գործիչ Փարամազն իր բնկերներով փրկում են վանահոր կյանքը և գնում՝ միանալու հայգուկ յուրայինների խմբին:

Երկրորդ գործողությունը կատարվում է ամայի տարածություն մեջ: Հեռվում նկատվում է թարմ գերեզմանի հողաթումբ, որի կողքին վշտահար մի հայ աղջիկ ողբում է իր բռնաբարված քրոջ վշտից մահացած մոր կորուստը: Քարաժայռերի ետևից հայտնվում

է Փարամազն իր ընկերներին հետ և խոստանում փրկել առևանգված աղջկան: Երևում են թուրք զինվորներ: Փարամազն իր խմբով հարձակվում է նրանց վրա:

Երրորդ գործողություն: Քսան տարի է անցել այդ դեպքից: Կ. Պոլսի Պերա քաղաքամասի Հնչակյան կուսակցության ակումբում, կանթեղի լույսի տակ ապստամբության-գործողության ծրագրեր են մշակում Փարամազը, Դոկտոր Պեննեն, Հ. Ծանկյուլյանը, Ա. Աչքբալաշյանը, Վանիկը: Խորհրդակցում են զենքեր փոխադրելու, ապստամբություն կազմակերպելու մասին: Բայց հենց այդ պահին մատնիչներին աջակցությամբ թուրքերը շրջապատում ու ձերբակալում են նրանց:

Չորրորդ գործողությունը կատարվում է բանտի խցում: Հուսախաբ վրիժառուները մոռնում են կատարվածից: Լսվում են Հայաստանին նվիրված հայրենասիրական երգերի մեղեդիներ: Հնչակյան քսան գործիչների դատավարությունն է, որ կազմակերպել են թուրք ջարդարարներ Էնվերը, Թալեաթը, նրանց աջակից Ֆոն Սանտերսը: Վերջնական վճիռն է՝ կախաղան հանել բոլորին: Հայ ազատամարտիկները միասին երգում են՝

Կոչնակդ հնչեցուր, հնչեցուր արագ,

Թող հայք ոտի ելլեն ծագե մինչև ծագ:

Վերջաբան - վերջին տեսարանը Բայազիդի հրապարակն է, 1915-ի հունիսի 15-ը: Վաղ առավոտից պատրաստ են կախաղանների քսան սյուները: Հայ հերոսներին սպիտակ շապիկներ հագրած բերում են կառավարան: Արհամարհելով մահը, նրանք կանգնում են աթոռների վրա, վերցնում պարանի օղբ... և անմահանում: Խիզախ մահապարտների վերջին խոսքն էր՝ «Քսան հազարներ պիտի դան մեր վրեժը լուծելու»:

Բեմական մեծ պատմությունն չի ունեցել «Քսան կախաղանները», բայց եղածն էլ շատ ազդեցիկ տպավորություն է թողել:

Ս. Շահենի «Քսան կախաղաններ» պիեսի առաջին բեմադրությունը կայացել է Ֆրանսահայ թատրոնում՝ 1926-ի հոկտեմբերի 3-ին Լիոնի «Ասուպ» թատերախմբի կողմից, էմիլ Ջուլա սրահում: Մեծաքանակ կերպարներով ու դերակատարներով այս պիեսի ու նրա բեմադրության մասին համառոտ պատկերացում ունենալու համար նշենք նրանց մի զգալի թվի ով և ինչ լինելը: Հեղափոխական գործիչներից՝ Փարամազ - Ժյուզեթա Չուլճյան («Հայ բեմին զարգը»), Տոքթ. Պեննեն-Մանուկ Փանոսյան, Աչքբալաշյան - Կարպիս Էլմասյան, Ծիհանկյուլ - Պողոս Պետրոսյան, Վանիկ - Հարություն Փաշալյան, Մուրատ - Գևորգ Տեր - Գևորգյան:

Այնուհետև՝ խմբապետ Ենգո - Հայկ Գասբարյան, Վանահայր - Փանոս, Ժամկոչ - Պապո, Միաբան - Վաղարշակ Սիմոնյան, Արշակ - Շահեն, Կզուկ Մարտո - Ճաբոն, Հոճա - Տեովլեթ Պուլգարյան:

Կանացի կերպարներ ու դերակատարներ՝

Սաթենիկ (քնաշրջիկ Կզուկ Մարտոյի փոքր աղջիկը) - տիկ. Խաթուն Գասբարյան, Սիրան - օր. Քեչիշյան, Մարիա - օր. Անժել, Հոռոսմիկ Քորո - տիկ. Մարի:

Եվ վերջապես՝ Էնվեր - Վուստ Սալմանյան, Թալեսթ - Պողոս Պաղտասարյան, Փոն Սանտերս - Հարություն Տերունյան և ուրիշներ:

Հանդիսատեսի ուշադրություն արժանացած այս բեմադրությունը մասին Փարիզի «Նոր երկիր» թերթի թատերախոս Արմեն Մարալը գրել է. «Իսկական կախաղանի չվաններու տակ, երբ բերվեցան անմահ քաջերը, ներկաներուն մեջ լացի ու կոծի ձայներ սկսան լսվիլ. (Մայր Հայաստանի), օր. էլմասյան իր սահուն առողանությունը, որ արտասանած Ոգիի բաժինով, բոլոր հանդիսականները հուզեց, որոնք չէին ուզեր այդ տեսարանն բաժնվիլ»<sup>1</sup>:

Այս պիեսը՝ «Հայ հեղափոխական-ազատագրական իրական կյանքի քաղված դրաման... խնամյալ պատրաստությունը», 1927-ի ապրիլի 10-ին ներկայացվել է Կարտանի սինեմայի դահլիճում: Բեմադրության նախաձեռնությունը պատկանել է Ս. Գ. Հնչակյան կուսակցության Կարտանի «Ավչարյան» թատերախմբին: Ներկայացումն իրագործել է Լիոնի՝ վերոհիշյալ «Ասուպ» թատերախմբի դերասան և ռեժիսոր Ժյուլիեն Զուլճյանը ինքն էլ երկրորդ անգամ հանդես գալով Փարամազի դերում:

Այս բեմադրությունը նվիրվել է ի հարգանս Քսան կախաղանների, որոնք, օրը ցերեկով կախաղան են հանվել Կ. Պոլսի Բայազիդի հրապարակում՝ «Անկախ ու ինքնավար Հայաստան մը պահանջած ըլլալնուն համար»: Ծրագրի վրա տպագրվել է հինգ կարևոր դեմքերի նկարները, կենտրոնում՝ Փարամազը:

Հիշենք մասնակիցներից մի քանիսին. Վանահայր (Վարագա վանքի վերահսկիչ) - Տ. Պողոսյան, Ժամկոչ - Ն. Դանիելյան, Սաթենիկ - Տ. Կիրակոսյան, Ճիհանկյուլյան - Վ. Թագվորյան, Էնվեր - Հ. Գասպարյան, Արթուր Եսայան (մատնիչ) - Գ. Մուրատյան:

Շահենի «Քսան կախաղաններ» պիեսը 1931-ին միաժամանակ բեմադրվել է երկու երկրում՝ Արգենտինայում - Բուենոս Այրեսի «Սապահկյուլ» թատերախմբի կողմից և Բրազիլիայում - Սան Պաուլոյի «Կայծ» ուսանողական միությունից թատերախմբի ռեժիսորով<sup>2</sup>:

<sup>1</sup> Նոր երկիր (Փարիզ) 1926, № 22:

<sup>2</sup> Երիտասարդ Հայաստան (Զրիկադո) 1931, № 25, 37:

1931-ին է վերաբերում նաև «Քսան կախաղանների» մի բեմադրութունը Սոֆիայում (Բուլղարիա): Դերասան Վահան Շահինյանի ղեկավարութեամբ «Փիրալը» գերասանական խումբն այն ներկայացրել է 1931-ի հուլիսին, Թաղապետական թատրոնում: Այս բեմադրութեան ղեկավարներից հայտնի են՝ Օննիկ Աբելյանը – Փարամազ, Կ. Հայոցյանը – խմբապետ Ենգո, Սիրվարդ Նազարյանը – Սաթենիկ, Թորգոմ Պոյաճյանը – Էնվեր փաշա:

«Քսան կախաղանների» մի հուզիչ բեմադրութուն էլ կայացել է Պրովիդենսում (Ամերիկա): Տեղի «Հնչակ» գերասանական խումբը նախատեսել է այն ներկայացնել 1934-ի հունվարի 14-ին, Հայ Առաքելական եկեղեցու սրահում: Բայց կատարվել է անսպասելի ոճրագործութուն: Սպանվել է Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը, այդ իսկ պատճառով ներկայացումը հետաձգվել է մինչև մարտի 11-ը:

Բազմամարդ այս ներկայացմանը մասնակցել են՝ Ս. Դարբինյանը – Հոռոսմիկ Բորո, Խ. Հակոբյանը – Սաթենիկ, Մարդարիտ Սարոյանը – Սիրան, Ազատուհի Ղուկասյանը – Մարիա և Ոգի Հայաստանի, Մարտիրոս Պետրոսյանը – Փարամազ, Գ. Մկրտիչյանը – Դոկտ. Պեննե, Պետրոս Նորիկյանը – Յիհանկյուլ, Ա. Թղաթիկյանը – Աչքբալաչ, Տեր-Հարությունյանը – Վանիկ, Հ. Խոշմաթյանը – Մուրատ, Ն. Հյուլունյանը – Վանահայր, Կար. Պետիկյանը – Ենգո, Հարություն Ձիթանցին – Էնվեր, Ե. Տերտերյանը – Ֆոն Սանտերս, Մ. Տերտերյանը – Արթուր Եսայան և ուրիշներ:

Այս բեմադրութեան թատերախոս Զավենը մի հետաքրքիր տեսարան է նկարագրել խմբի ղեկավար Խաչիկ Մուրատյանի մտահղացումից: Գնահատելով գերակատարների աշխատանքը՝ «ապրեցին ու ապրեցուցին» որակումով, միևնույն ժամանակ նա գրել է՝ «Ոգի Հայաստանի կախաղանների ճամբող երևույթին տակ, քայլ առ քայլ առավոտյան շավիղների ներքո, նման լույսի ու հույսի պահին, Նեիր մենակութեամբ ներշնչեց ու խրախուսեց կախաղաններու վիշտը ապրող հայութեան և անոնց մրրկված հոգին առաջնորդեց ղեպի նորակերտ Խ. Հայաստանը... Վարագույրը կամաց-կամաց վար եկավ և ծածկեց «քսան կախաղաններու» մեր վառ հույսերը կապելով Խ. Հայաստանի»<sup>1</sup>:

Հայոց ցեղասպանութեան թեմայով գրված դործերից սփյուռքահայ թատրոնի խաղացանկում տեղ գտած և որոշակի հետք թողած պիեսների թվին է պատկանում Ս. Շահինի նաև «Զեյթուն» չորս դործողութեամբ գրաման: Տպագրվել է 1920-ին Նյու Յորքում:

<sup>1</sup> Նույն տեղում, 1934, № 32:

Պիեսի նյութը թուրքական բռնապետութեան դեմ Հնչակյան կուսակցութեան գործիչների մղած պայքարի պատմութեան էջերից մեկն է: Այդ անհաշտ պայքարի կազմակերպիչը նույնպես իրականպատմական անձնավորութիւն է, որը, բարեբախտաբար ողջ է մնացել ու շարունակել իր գործունեութիւնը: Այդ հերոսը պատմութեան կենդանի ներկայացուցիչն է՝ Կարապետ Հակոբի Թուր-Սարգիսյանը, հեղափոխական անունով՝ Աղասին:

Լինելով Զեյթունի հերոսական պաշտպաններից մեկը, Աղասին էլ իր հերթին է «Զեյթուն» վերնագրով պիես գրել:

Աղասիից բացի, Ս. Շահենի «Զեյթուն» պիեսում պատմական կոնկրետ գործիչներ են դուրս բերվել նաև Ապահը (Ապահ Պետրոսյան-Ավետիս Գրմգրմյան, 1872-1928), Մլեհը (Ասատուր Տամկաճյան, ? - 1926) և ուրիշներ:

«Զեյթունի» առաջին բեմադրութիւնը տեղի է ունեցել 1932-ի հունվարի 20-ին, Տեսինում (Ֆրանսիա), որին հաջորդել է Սան Պաուլոյի «Կայծ» ուսանողական միութեան թատերախմբի ներկայացումը 1933-ին:

Շահենի այս պիեսի առավել խնամված բեմադրութիւնը կայացել է 1933-ի հունվարի 22-ին Պրովիդենսի «Հնչակ» դերասանական խմբի ուժերով, Հայ Առաքելական եկեղեցու սրահում: Բեմադրել է Խաչիկ Մուրատճյանը: Աղասու կերպարը մարմնավորել է Մարտիրոս Պետրոսյանը, որի դերակատարումը դարձել է ներկայացմանը տոն տվող ոգին: Մյուս դերերում հանդես են եկել՝ խմբապետ Ապահ - Օննիկ Մկրտիչյան, Մլեհ - Եփրեմ, Խաչիկ քահանա - Խ. Կետիկյան, Սուսամ - Հ. Հյուլունյան, Սառա - Վ. Դարբինյան, Բարդուղեմիոս վարդապետ - Ա. Թղտիկյան, Ֆոնոնզի քահանա - Կարո Պետիկյան, Թուրք հրամանատար Էտիեմ փաշա - Ս. Ստեփանյան, Ալի Հյուսեյն պեկ - Վ. Մուրատճյան, Իտալական դեսպան Մըսթըր Վիտո - Պ. Թորոսյան և ուրիշներ:

Պիեսի և ներկայացման գաղափարական եզրակացութիւնն է եղել՝ Զեյթունն ազատված է, ազատ պետք է լինի և Հայաստանը<sup>1</sup>:

Սփյուռքահայ թատրոնում մեծ ընդունելութիւն գտած պիեսներից մեկն էլ Ս. Շահենի «Թալեաթի անկումը» դրաման է: Թեման հանրածանոթ է՝ Սողոմոն Թեհլիրյանի դատավարութիւնը Բեռլինում Թալեաթ փաշայի սպանութեան համար և արգարացումը: Առաջին անգամ ներկայացվել է Թեհլիրյանին արգարացնելուց և ազա-

<sup>1</sup> Երիտասարդ Հայաստան (Զիկադո) 1933, № 19:

տելուց հետո՝ 1921-ի հոկտեմբերի 9-ին, Ջոյուռնիայի Հայ ակումբում: «Արտավազը» թատերախմբի անդամներից Թադևոսը Հովհաննիսյանը կատարել է Թեհլիրյանի, իսկ Գ. Քեպապճյանը՝ Թալեաթի դերերը:

«Թալեաթի անկումը» պիեսի բեմադրություն փորձն Ամերիկայում ավարտի չի հասցվել՝ պատճառները քաղաքական բնույթ են կրել: 1924-ի դարնանը Բոստոնի «Սևալուզ» դերասանական խմբի Մանուկ Շիրինյանի ղեկավարությամբ սկսած փորձերը մնացել են անկատար, որովհետև ոմանք նպատակահարմար չեն համարել քաղաքական այդ անպատեհ ժամանակ ներկայացնել «Թեհլիրյանի և Թալեաթի խաղը»:

Թուրք-ամերիկյան դիվանագիտական հարաբերություններն ինչպես այն տարիներին, այնպես էլ դրանից տասը տարի անց՝ Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» պիեսի բեմադրության արդեւլակումը, իսկ մեր օրերում էլ ցեղասպանությունը չընդունելը, Ղարաբաղի անկախությունից հարցի լուծմանը պատասխան չտալն այդ երկու երկրների փոխհամաձայնությունից նշան է և զուրկ բարոյական գնահատականից:

Ի հակակշիռ ամերիկյան վերաբերմունքի, «Թալեաթի անկումը» պիեսի բեմադրությունը բարեհաջող ընթացք է ստացել Ֆրանսիայում, այն երկրում, որտեղ մեծահոգաբար տեղ են տվել 1895, 1915, 1922 թվականներին թուրքական բռնություններից փրկված հայերին:

«Թալեաթի անկումը» Ֆրանսիայում առաջին անգամ ներկայացվել է 1928-ի հունիսի 9-ին Լիոնի «Էմիլ Ջոլա» սրահում, Ս. Դ. Հնչակյան կուսակցության «Ասուպ» և Սեն Շամոնի «Փարամազ» թատերախմբերի կողմից՝ Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ ու Սողոմոն Թեհլիրյանի դերակատարությամբ: 20 դերակատար է մասնակցել այս ներկայացմանը: Ունեցել է դերակատարների հետևյալ կազմը՝ Հաճի Հակոբ (Թեհլիրյանի հայրը) - Հ. Գասպարյան, Տիկ. Ոսկիկ (մայրը) - Խ. Գասպարյան, Վարսենիկ (քույրը) - Հ. Քելիշյան, Հայկուհի (նշանածը) - Վ. Լաթիֆյան, Գրիգորիկ (նաբայրը) - փոքրիկ Ղ. Տեր-Գևորգյան, Արամ Էֆենդի - Գ. Քելիշյան, Ջավեն պատրիարք - Ա. Տեր-Գևորգյան, Թերթավաճառ - Գ. Մանուկյան, Թալեաթ - Հակոբ Լաթիֆյան, Էնվեր - Գ. Թերգյան, Ոստիկան Համնի - Հ. Փերեցյան, Օրիորդ Լոլա - Հայկուհի, Մերճան հանրմ (Թալեաթի կինը) - Վարդանուշ, ոստիկաններ, քարտուղարներ:

Մեկ տարի անց, «Թալեաթի անկումը» տեղ է գտել տարբեր քաղաքների բեմերի վրա: Այսպես՝ 1929-ին Եոնիլն Սիտիում («Փարամազ» դերասանական խմբի ուժերով) և Բոստոնում, Սոֆիայի «Ռե-

նեսանս» թատրոնում (1931), Ռուսչուկում (1931), Տեսինի (Ֆրանսիա) «Ավշարյան» թատերախմբում (Թեհլիրյան - Դանիելյան, Թալեաթ-Վարուժան Ղազարյան, 1931):

Ս. Շահենի «Թալեաթի անկումը» պիեսի լավագույն բեմադրություններից մեկը թերևս հանդիսացել է նյու-յորքյանը, որը տեղի է ունեցել 1932-ի հունվարի 3-ին, «Կայծ» դերասանական խմբի ուժերով: Մ. Թարայանի այս բեմադրությունը համարվել է «գեղարվեստական մեծ հաղթանակ մը»: Այդ հաղթանակն ապահովող դերակատարներն են եղել՝ Գևորգ Տեր-Գևորգյանը, Տիգրան Մանուելյանը, Արմենակ Մեսիկյանը, Էլզա Շահենը, Մաքրուհի Թորոսյանը, Կյուլվարդ Տեր-Գրիգորյանը, Կարինեն, Արա Թորոսյանը, Սասունի Շահենը, Մարալ Շահենը և ուրիշներ:

«Թալեաթի անկումը» պիեսի բեմադրությամբ է զբաղվել նաև բուլղարահայ և բուլղարական թատրոնների դերասան Շավարշ Մանուկյանը: Նախ բեմադրել է Սոֆիայում (1940-ական թթ.), ապա՝ Լոս Անջելեսում (1967):

Սեզրակ Շահենի՝ Հայրենասիրական ներշնչումով հարուստ ու լեցուն հոգին այնքան բուռն ու նպատակասլաց է եղել, որ նրա գրած գրեթե բոլոր պիեսները դարձել են Հայոց ցեղասպանության մի ընդարձակ շրջանի՝ 1890-1920-ական թթ. պատմության բաղկացուցիչ մասը: Հայոց ցեղասպանության և նրա հետևանքների մասին գրող գրամատուրգների մեջ նա ամենաբեղմնավոր գրողն է ու ամենահետևողական հեղինակը, իրական պատմության կերտողը:

Թուրք բռնապետների զազանաբարո արարքներն իրենց մերկացումներն են ստացել նաև մեծ երգիծաբան Երվանդ Օտյանի ստեղծագործություններում: Նրանցից ամենահատկանշականը, հավանաբար, «Աբդուլ Համիդ և Շերլոկ Հոլմս» վեպի բեմականացումն է, որ կատարել է եգիպտահայ թատրոնի մեծավաստակ դերասան և ռեժիսոր Լևոն Շիշմանյանը: Նրա բեմականացրած տարբերակով հինգ գործողությամբ այդ պիեսն առաջին անգամ ներկայացվել է Կահիրեի Բրենթանիա թատրոնում, 1934-ի հունիսի 24-ին: Բեմադրությանը մասնակցել են Կահիրեի և Ալեքսանդրիայի թատերախմբերի լավագույն ուժերը: Ինքը՝ Շիշմանյանը կատարել է Սուլթանի դերը:

Օտյանի «Աբդուլ Համիդ և Շերլոկ Հոլմս» վեպը շատ տասնամյակներ անց բեմականացրել ու բեմադրել է նաև Երևանի հեռուստաթատրոնի ռեժիսոր Գրիգոր Չալիկյանը: Օտյանի գործի հետ օգտագործել է նաև Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը՝ ի պաշտպանություն 1915-ի տառապյալ հայության: Ժամանակ առ ժամանակ այս պիեսը հաղորդվել է ռադիոթատրոնի կողմից, Չալիկյանի բեմադրությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մի փոքր անց, խաղաղություն տիրելուց հետո, որոշ աշխուժություն է առաջացել Լիբանանի և Սիրիայի հայաչափ Բեյրութ և Հալեպ քաղաքների թատերական կյանքում: 1918-ի վերջերին և 20-ականի սկզբներին տեղական ուժերով կազմակերպվել են թատերախմբեր, որոնք ինքնուրույն ներկայացումներ տալուց բացի օժանդակող հիմք են դարձել հյուրեկ դերասանների համար:

Խաղացանկը եղել է խայտաբղետ՝ ազգային ողբերգություններ ու զավեշտներ, տարբեր ժանրերի թարգմանական պիեսներ: Ահա, այս աշխույժ «մրցակցության» տարիներին, Բեյրութի «Սիս Երիտասարդաց միության» նախաձեռնությամբ, 1923-ն հուլիսին Ազգային վարժարանի սրահում ներկայացվել է «Արյունոտ կամուրջ կամ Երլտըզե Սասուն» պիեսը: Այս դործը Մեծ եղեռնի զոհ՝ գրող, մանկավարժ-խմբագիր Սմբատ Բյուրատի «Երլտըզե Սասուն» պատմական վեպի բեմականացումն է, որ կատարել է ու բեմադրել, հանդես եկել նրա գլխավոր հերոս Մուրատի դերում, «Սիս Երիտասարդաց միության» վարչության ատենապետ Սարգիս Տիրունին (Բեսերյան, 1885-1929):

Ներկայացման հայտագրի վրա գրված է եղել՝ «Հուշարձան ի հիշատակ Սասունի դուրցազնամարտին, 1894» և տպված մի պատկերտեսարան Սասունից: Այս պիեսի բեմադրության առթիվ մի բացառիկ հետաքրքրական նորություն էլ է հայտնվել հայ թատերական կյանքում: Մուտքի տոմսակիր վրա տպագրվել է Սասնա Հերոսի՝ Սեբաստացի Մուրատի նկարը, իսկ նկարի տակ՝ նրան նվիրված բանաստեղծության հետևյալ տողերը:

Շենիք, Սեմալ պաշարված են քրդերով,  
Տալվորիկի անցքն է փակվել թուրքերով,  
Ջքեզ տեսնեմ քաջ Մուրատ,  
Սուրդ շարժի՛ր անվհատ  
Մեր հեռավոր եղբայրներ  
Չեն կենար միշտ անտարբեր  
Շուտով կուզան օգնության<sup>1</sup>:

Ներկայացումն սկսվելուց առաջ Ս. Տիրունին ամփոփ տեղեկություն է տվել վեպ-պիեսի բովանդակության և Մուրատի գործունեության մասին:

13 տեսարանով ներկայացումն իր ձգձգումներով – տեսարանների փոփոխումով ու բազմամարդ գերակատարներով բավականին երկար է

<sup>1</sup> Սուրիական մամուլ (Հալեպ) 1923, № 152:

տեւել ըստ յայն նյութի բովանդակությունը, նույնիսկ որոշ անփորձ թատերասերների թերությունները ձանձրույթ չեն առաջացրել: Միայն քննադատությունն է խորհուրդ տվել կրճատել երեք տեսարան:

Կարմիր Սուլթանը – Արզուլ Համիդը սև կասկածներից մտահոգված, Երլտրզի հարկի տակ մահացու ծրագրեր է կազմում իշխանությունն ամուր պահպանելու համար: Իր ծրագրերի իրականացման համար օգտագործում է պալատականներին և քրդական շեյխերին:

Հայ հեղափոխականները հակազդեցիկ շարժումներով վերահսկում են իրագրությունը: Հ. Պոյաճյանը փախչում է կայսերական բժշկական համալսարանից՝ Սասունին օգնության հասնելու համար: Մահափորձի են ենթարկվում Խորեն պատրիարք Աչրգյանը, Մագսուտ Միմոնը և ուրիշներ: Համիդը հուզված է մայրաքաղաքում կատարվող իրագործություններից ու փախուստներից, Երլտրզի պալատի ներսում ու դրսում կատարվող կասկածելի շարժումներից: Հայաստանում կատարվող զինված գործողությունների շուրջը բանավեճ է դնում Համիդի և բրիտանական դեսպանի միջև: Սըր Ֆրիլպը սպառնում է նրան, նա էլ իր զայրույթը թափում է մարդասեր Սուրեյյա փաշայի և ուրիշների վրա:

Մեծն Մուրատի ղեկավարությամբ ինքնապաշտպանության ջոկատները հավաքվել են Անտիոքում: Թուրքերն արդյունքի չհասնելով, ուղում են խորամանկությամբ ոչնչացնել հայերին: Սպիտակ դրոշով հաշտություն կնքելու խորամանկ միտքը հուզում է ժողովրդին, բայց Մուրատը չի հավատում թուրքերի անկեղծությանը: 160 ռազմիկով նա մոտենում է Մուստաֆա փաշայի բանակատեղիին, բայց քարայրում ձերբակալվում է:

Անտիոքի պաշտպանության գործը մնում է կանանց հույսին, Շաքեի ղեկավարությամբ: Թուրքերն աստիճանաբար վեր են բարձրանում: Հայրենասեր կանանց մնում է ընտրություն կատարել՝ կամ թուրքերի, կամ էլ՝ մահվան գիրկը: «Նամուսն անաղարտ պահելու համար» նրանք ընտրում են երկրորդ տարբերակը:

Վերջում Մուրատի դատավարությունն է Ջեքի փաշայի մոտ:

Կերպարների առատության և դերակատարների սակավության պատճառով թատերասերներից շատերը հանդես են եկել մինչև չորս հակոտնյա դերեր կատարելով: Կերպարների միջոցով պիեսի բովանդակությունն առավել մատչելի դարձնելու նպատակով այստեղ ներկայացնում ենք երկկողմանի ցանկերը:

Մ. Աղաջանյան – Սուլթան Համիդ:

Ա. Գնունի – Սենեկապետ, Արիֆ, Ճիհատի փողահար, թուրք հրամանատար Ղալթիո հրապարակի վրա:

Մագսուտ Սիմոն – ահաբեկիչ Թագվոր, թուրքական բանազնաց Անտիոքում՝ Բեշիտ էֆենդի:

Հ. Սանդրյան – Սուրբյայ փաշա, հայկական շարժումներում՝ Ռես Գրգո:

Գ. Տ. Հարուժյունյան – Բյուրտ Տետե, Տեր Հովհաննես, Պելեկցի պետ:

Գ. Աջապահյան – Շեյխ Հասո:

Վ. Փաշապեղյան – Մուլլա Օմար (կատարումը՝ սքանչելի), Տատյան Հարուժյուն և զնդապետ:

Գ. Աղաջանյան – դրոշակակիր Ֆիդայի

Հ. Տեովլեթյան – Զիլանի Շեյխ, Հայտանցի պեկ:

Գ. Թատոյան – Բագրանլըի Շեյխ:

Հ. Սաչյան – Խեզանըքի Շեյխ:

Գ. Թատեյան – Տեռորիստ Պատրիարքարանի փողոցի վրա:

Զ. Թատեյան – Պատրիարք Խորեն Աշրգյան:

Խ. Գնդունի – Պատրիարքարանի բարապան:

Պ. Պարտիզապանյան – ահաբեկիչ Ստեփան և Զոռոյան Պետրոս:

Ա. Միքայելյան – Մեծ Եպարքոս:

Օննիկ Ճամպուլյան – անգլիական ղեսապան:

Արմեն Յանրգյան – ձայն մը:

Սարգիս Տյրուռնի – Մեծն Մուրատ: Նրա դերակատարման մասին թատերախոս Մ. Նաճարյանը գրել է. «Իր բոցեռանդ շեշտը, հպարտ շարժումները՝ մեր առջև կուրվագծեին Հեղափոխության ոգին թանձրացյալ գիծերով: Ինք տուամին միակ հերոսն էր»<sup>1</sup>:

Ա. Ճամպուլյան – Տեր Գաբրիել:

Մ. Շեքերեյան – Տեր-Ղազարյան:

Կ. Արմենյան – Տեր Քաջ և Զեքի փաշա:

Պղտիկ Հ. Տեովլեթյան – թուրք լրտես:

Վերոհիշյալ քահանաների առնչությամբ նույն Նաճարյանը գրել է, որ նրանք «ցույց տվին թե Ավարայրեն զատ Անտիոքն ալ իր Ղևոնդ Երեցները ունեցած է»:

Հ. Կեռքեյան – Հայ արշավախումբին ջուր հասցնող քաջ հովիվ:

Անտիոքի ստորտաի ժողովի անդամներ՝

Գ. Լաչինյան – Մուստաֆա փաշա:

Մ. Լաչինյան – Սեյտանցի պեկ, Ոստիկան, Սպա:

Արշակ Արապյան – ոստիկանական նախարար Նազրմ փաշա:

Օր. Ազնիվ Գեորգյան – Շաքի («արժանի է ամեն գովասանքի: Նա

<sup>1</sup> Սուրբական մամուլ (Հայկապ) 1923, № 154:

Հարազատ տպագրութիւնն էր Սասնո Պաշտելի Հերոսուհիին, եթե ներելի է այսպես ըսել: Իր շարժումները, առողանութիւնը, հանկուցիչ տպավորութիւնն մը թողուցին»):

Օր. Արե Լաչինյան-Թլսենց տիկին:

Մյուս հերոսուհիները՝ օր. Հ. Աջապահյան, Վ. Զոփուրյան, Շ. Աջապահյան, Կ. Գնդունի:

Լ. Պահատրյան-Նոզկատի Մակար:

Այս մարդաշատ (մոտ 50 անուն) ցանկը կարգացողն արգեն կհոգնի, բայց թատերասրահի հանդիսատեսները համբերութեամբ, առանց ձանձրուցի նայել են 13 տեսարանում կատարվող գործողութիւնները՝ երբեմն սիրով, երբեմն դայրուցիով, հիացել լավ դերակատարներով, ներողամիտ եղել անփորձ սիրողների նկատմամբ: Կարևորը եղել է հայրենասիրական լիցք հաղորդելն ու ստանալը:

«Երլտրգե Սասուն» պիեսի բեմադրութիւնը մի քիչ բարեփոխումներով ներկայացվել է վրան քաղաքի (գաղթականների) եկեղեցու մօտ, «բացօթյա թատրոնում»:

Թուրքերի աջակցութեամբ, թողալով յամբ ու ներշնչանքով (իբրև թե հանցագործութիւնն իրենցից հեռացնելով), հայերի հողին ու ջրին, ունեցվածքին ու տնտեսութեանը, ինչու է՝ նաև կանանց ու աղջիկներին տիրանալու բիրտ ու ամբարտապան վարմունքով, իրենց վերադասներից հետ չեն մնացել նաև քրդերը: Այդ մասին քիչ չի գրվել ինչպես արձակ և չափածո ստեղծագործութիւններում, այնպես էլ դրամատուրգիայում: Ահա, այսպիսի մի նոզկալի իրողութիւնն է պատկերել ժամանակի բարքերին լավատեղյակ սասունցի մտավորական Արամ Հ. Երեցյանը (հետագայում՝ Հմայակ քահանա):

1915-ին Սասունում կատարված դաժան իրադարձութիւններից հետո, բախտի անիվը Երեցյանին հասցրել է Ամերիկա, ուր ուշքն ու միտքը մի քիչ կարգավորվելով, 1921-ին, Թրո քաղաքում գրել է իր առաջին պիեսը՝ «Սասուն» չորս արարով և մեկ պատկերով դյուցազներգութիւն-ողբերգութիւնը (տպագրվել է Բոստոնում, 59 էջ): Պիեսը նվիրել է Սասունի՝ 1915 թվականի հերոսամարտին, իբրև իրական կյանքից առնված գործ:

Իր պիեսի նախաբանում Երեցյանը գրել է. «Սասուն - դյուցազներգութիւնը» գրելուս նպատակն եղավ հավերժացնելու հիշատակն այն հայրենակից հայ մարտիկներուն, որ իրենց նախորդներուն պես Սասունի արշուճակարմիր հողին սիրեք գիտցան...

Սասունի 1915-ի հերոսամարտին իբրև նմուշ՝ սույն թատերգութեանս մեջ հակիրճորեն պատկերացնել ջանացի, որչափ որ հնարա-

վոր էր, անձնավերներու քաջությանը, ազատասիրությանը հոգե-  
ցունց տեսարաններն, որոնց ամեն մեկը, իրապես կրնա ծնունդ տալ  
մեծածավալ հատորներու...

«Սասուն-գյուցազներգությունս»... վառ երևակայության կամ  
բուռն հուզումի ներշնչմամբ չեն գրված, այլ իրական կյանքի ար-  
յունաբուհի ակեն առնված անոնց նյութը, գրված Սասունի ոգիներն,  
անոր մելանը՝ Սասունի արյունը՝ և գրիչն ալ, անոր փշրված մեկ բե-  
կո՛ր»<sup>1</sup>:

Այս տողերը գրված են հայրենասիրական մի այնպիսի ջերմ  
չնչով, սասունցուն վայել հերոսական ջանքերով, որի տակ կարող է  
ստորագրել ցավատանջ համայն հայ ժողովուրդը: Սա իրոք որ դյու-  
ցազներգություն է, գործին համապատասխան տրված անուն:

Ծանոթանանք այդ դյուցազներգության մեջ պատկերված կեր-  
պարներին:

Տեր Ստեփան վարդապետ Պաղտասարյան – Սասունի վեղարավոր  
հերոսը:

Շերտ Մարտիրոսյան – Մշգեղի գյուղապետը:

Կենճո Մուրատյան – Գոմք գյուղացի, ծանոթ քաջամարտիկ մը:

Միսաք Պետրոսյան – Գոմք գյուղացի, ծանոթ քաջամարտիկ մը:

Դավիթ Երեցյան – Բացի գյուղացի, խմբապետ, հանրածանոթ  
մարտիկ:

Արուշ Տ. Ավետիսյան – Դալհոր գյուղացի, քաջամարտիկ հերոս:

Աղաճան – Գոմքրտեր գյուղացի, ծանոթ մարտիկ մը:

Ճեմիլ – Մահմուտ – քյուրտ, Շիկոյի աշիրապետը:

Պրահիմ – Պղար – քյուրտ, Կապսգերի պետը:

Սելիմ – Ճելալի աշիրապետը:

Մայր Հայաստան:

Փերիշան Տ. Ավետիսյան – Արուշ Տ. Ավետիսյանի կինը, հերոսուհի:

Լևոն – վեցամսյա մանչ, Արուշ Տ. Ավետիսյանի որդին:

Խուրշիտ – Մահմուտ – քյուրտ մը, ճելալցի:

Թեժիտ – Մահմուտ – Խուրշիտի եղբայրը:

Քանի մը քյուրտ:

«Սասուն» պիեսի գործողությունները կատարվում են՝ Ա, Բ, Գ.  
արարվածները՝ Սասնո Մատին Առաքելոց վանքի մի սրահում, իսկ  
Դ. արարը՝ Սասնո Ճելալիի պուրակի մեջ:

Պիեսում ծավալվող գործողությունների մեջ ամենախոսուն ու  
ազդեցիկը 2-րդ և 4-րդ արարներն են: Երկրորդում՝ երեք քյուրդ

<sup>1</sup> Արամ Հ. Երեցյան, Սասուն, Բոստոն, 1921, էջ 5, 7:

գնալիս են վանքի սրահը և ներկաներին՝ Տեր Ստեփան վարդապետի, Արուշի և ուրիշների ապահովութիւնը երաշխավորելու պատրվակով առաջարկում են իրենց Հանձնել զենքերը, կթվող անասունները, կանանց ու աղջիկներին: Այդ ցինիկ առաջարկը բորբոքում է ներկաներին, որոնք էլ ուզում են հաշվեհարդար տեսնել այդ անկոչ բարեխոսների հետ, սակայն Տեր Ստեփանը նրանց հասկացնում է, որ այդ առաջարկով նրանք ոչ թե օգնութեան ձեռք են մեկնում հայերին, այլ ցանկանում են զինաթափել, երեխաներին զրկել կաթնամթերքով սնվելուց, կանանց ու աղջիկներին առևանգել և այլ չնախատեսված միջոցներ կիրառել, հետևաբար մեծահոգաբար քրդերին դուրս է հրավիրում սրահից:

Ապստամբները հեռանում են վանքի տարածքից, ամրապնդվում լեռներում: Թշնամու դեմ որոշ հաղթութունից հետո, Արուշը վերադառնում է հայերենի գյուղ՝ տունն ու տեղն ավերակ տեսնելով, շարունակում է ընտանիքը գտնելու որոնումները: Մի պուրակում նա հանդիպում է կնոջը՝ Փերիշանին և ճ ամսական որդուն՝ Լևոնին: Բայց ուրախութիւնը երկար չի տևում: Քյուրդ Ռեփիտը գնդակահարում է Արուշին: Իմանալով, որ նա է սպանել իր եղբորը՝ Խուրշիտին, գաղազած Ռեփիտը խանչալով սպանում է երեսային և Փերիշանին առաջարկում իր կինը դառնալ: Վերջինս առերես համաձայնութիւն է տալիս՝ երգվում նրա տված խանչալի վրա և մի ուժգին հարվածով գետնին փռում նրա մարմինը: Եվ քանի որ այլևս անիմաստ էր Փերիշանի ապրելն առանց ամուսնու և զավակի, ինքն էլ ինքնասպանութեամբ վերջ է տալիս իր կյանքին պառկելով հարապատների կողքին:

Հեղինակն այսպիսի ցնցող վերջաբանով պատկերել է հայրենասեր, անձնազոհ և ընտանիքի պատիվը սրբութեամբ պահող հայ կնոջ բարոյական ու հերոսական կերպարը՝ ի ցույց աշխարհի:

Արամ Երեցյանի «Սասուն» դյուցազներգութիւնը, ցավոք, բեմական մեծ պատմութիւնն է չունի: Բայց այս և համանման այլ պիեսների բեմադրութիւնների երևան գալը հետևանք է հայրենասիրական այն քայլերի, որ կատարել են կրթական, միութենական և այլ կազմակերպութիւնների թատերախմբերը: Այս կարգի բեմադրութիւններից մեկն էլ եղել է «Սասունը», որը բեմ է բարձրացրել Հալեպի՝ Արաբկիրի կրթասիրաց թատերախումբը:

Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1924-ի փետրվարի 10-ին, Հնչակյան ակումբում: «915-ի հերոսամարտին քաղված» այս պիեսի գերակատարներն սկսնակ լինելով հանդերձ, այնպիսի նվիրվածու-

թյամբ ու հոգեպես բավարարվածությունը են խաղացել իրենց ստանձնած դերերը, որ «գոհունակություն են պատճառել ներկաներին»<sup>1</sup>:

Ահա այդ բեմական «դուցադրումները».

Կ. Փուլատյան – Հեղափոխական վարդապետ Տեր Ստեփան:

Ավետիս Աբրահամ Մասուճյան – Հեղափոխական Շերո:

Կարապետ Վեցմատյան – Հեղափոխական Կենճո:

Օր. Լուսնթագ. Թորիկյան – Հերոսուհի Փերիշան (որը «Համարձակ ձևերով ու բնական արտահայտություններով իր պատիվը պաշտպանող հայ կնոջ պատկերացումն էր, նա առանց հանձնվելու քյուրտ ցեղապետ Ռեժիտի, խելահեղորեն վրան հարձակվելով դաշյունահար ըրավ գայն, որ որոտընդոստ ծափեր խլեց ներկաներին») <sup>2</sup>:

Փիլիպոս Պալթայան – խմբապետ Դավիթ, Շ. Թորիկյան – Մենակ, Ե. Ճերեճյան – Աղաճան, Ն. Վարժապետյան – Ճեմիլ Մահմուտ, Կ. Սաղաթելյան – Պրահիմ (Իպրահիմ), Ավետիս Մասուճյան – Սելիմ, Կ. Աշըգյան – Խուրշիտ, Լ. Ֆերեշեթյան – Ռեժիտ:

«Սասունի» մի բեմադրություն էլ տեղ է գտել Ֆրանսահայ թատրոնում, 1929-ի հունվարի 27-ին Սին Շամոն քաղաքի Կրթասիրաց ընկերությունից սրահում, Տարոն Տուրուբերան հայրենակցական միությունից տեղի մասնաճյուղի նախաձեռնությամբ: Ընդհանուր առմամբ ներկայացումը լավ տպավորություն է թողել: Ամենաակնառու դերակատարումը եղել է տիկ. Աղավնի Գրիգորյանի կողմից Փերիշանի մարմնավորումը <sup>3</sup>:

Հայոց ցեղասպանությունից դեմ մաքառող ազգային ազատագրական պայքարի չհնացող թեման ավելի քան հարյուր տարի չի կորցնում իր այժմեականությունը: Այդ նրկարամյա պատմության ընթացքում մի շարք պիեսներ են գրվել Մշո Առաքելոց վանքի անառիկություն ու նրա հերոս պաշտպանների մասին: Նրանցից մեկը սասունցի Գևորգ Չավուչն է (Դազարյան, 1870-1907), որի գովքն արել են թե՛ բանաստեղծները, թե՛ դրամատուրգները:

Գևորգ Չավուչի մահվան առիթով իր ցավակցական երգն է գրել (Թերևս առաջինն արձագանքել) աշուղների մեջ բանաստեղծ, բանաստեղծների մեջ՝ աշուղ և հայ ժողովրդի պատմության տարեգիր Աշուղ Զիվանին (Սերոբ Լևոնյան, (1846-1909)):

1907-ի մայիսի 28-ին Թիֆլիսում գրած «Անդուգական Գևորգ Չավուչի մասին» բանաստեղծությունից մեջ (10 քառատող) նա գրել է.

<sup>1</sup> Սուրիական մամուլ (Հալիպ) 1924, № 209:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Ապագա (Փարիզ) 1929, № 24:

Հագար իննը հարյուր ճիշտ յոթը թվին,  
Ուղիղ մայիս ամսի քսան և ութին,  
Մշու Սուլուխ գյուղում կռիվը վերջին,  
Արավ կտրիճ Սահրատ Գևորգ Չավուշը:  
Հանկարծ վրա տվեց թշնամին վատթար,  
Պաշարեց հերոսին զորքով անհամար,  
Յոթը ժամ դեմ դրեց, կռվեց քաջարար,  
Անբիժ ու անարատ Գևորգ Չավուշը:  
Թեև մարմնով մեռավ, ստացավ նոր կյանք,  
Յուր մայր ժողովրդին պատիվ ու պարծանք,  
Ունեի երկաթե կամք, ունեի համբերանք  
Եվ անսասան հավատ Գևորգ Չավուշը:

Թեև Առաքելոց վանքի կռվի մասին գրված պիեսներում արդեն գրվել էր Գևորգ Չավուշի մասին, որպես գործող անձ, բայց տարիների հետ երևան են եկել նորանոր պիեսներ՝ կենտրոնական դեմք դարձնելով անվեհեր հերոսին:

Գևորգ Չավուշի կյանքի և մարտական գործողությունների դրվագների պատմությունն է անդրադարձել նաև հայրենասեր դրամատուրգ Արամ Երեցյանը (Հմայակ քահանա): Նրա գրած «Գևորգ Չավուշ» չորս գործողությունը դրաման իր բովանդակությամբ ու նկարագրած տեսարաններով չի կրկնում իրեն նախորդած հեղինակների՝ «Առաքելոց վանքի կռիվը» վերնագրով պիեսներին:

Պիեսի բոլոր գործողությունների կենտրոնական դեմքը Գևորգ Չավուշն է՝ պատանեկությունից մինչև զոհվելը: Գործողությունն սկսվում է Առաքելոց վանքի տեսարանով: Միջանկյալ նշենք, որ Առաքելոց վանքին ապավինած մարդկանց ինքնապաշտպանական կռիվները մեր ժողովրդի հերոսական պայքարի ուշագրավ դրվագներից մեկն է և, բնավ էլ պատահական չէ, որ շատերն են անդրադարձել այդ թեմային:

Գևորգի հայր Արոն իր 15-ամյա որդուն տարել է Առաքելոց վանք ուսման տալու՝ հետագայում նրան քահանա տեսնելու փափագով: Երկրորդ գործողություն մեջ Գևորգն արդեն Ֆիդայի է, որը համերաշխություն է քարոզում հայ և քյուրդ աշխատավոր ժողովրդի մեջ՝ ընդդեմ օսմանյան թուրքերի բռնությունների:

Երրորդ գործողությունում կառավարական զորքերը պաշարել են վանքը: Հայերի հետ միասին թուրքերի դեմ կռվում է նաև քյուրդ Սելիմ աղայի կինը՝ Նուրիեն, որն անտարբեր չէ Գևորգի նկատմամբ:

Վերջին գործողության մեջ Սոլուխի ահեղ մարտերում վիրավորված Գևորգ Չավուսը հրաժեշտի իր վերջին խոսքերն է ուղղում զավակին և հայրենիքին:

Բավականին ուշ է բեմադրվել այս պիեսը: Այն էլ՝ 1999-ի մայիսի 22-23-ին Լոս Անջելեսի Assistance League թատերասրահում Տարոն Տուրուբերանի երիտասարդաց միության անդամներից կազմված նոր թատերախմբի կողմից: Բեմադրել է Հալեպցի դերասան և ռեժիսոր Սեդրակ Պրոնգյանը:

Երեցյանի «Գևորգ Չավուս» պիեսի ներկայացման դերակատարներն են եղել՝ «Ալեք Փիլիպոս» ազգային վարժարանի 7-րդ դասարանի աշակերտ Պետիկ Սարգսյանը – փոքրիկ Գևորգի, իսկ Բաֆֆի Մարտիրոսյանը – հասուն Գևորգ Չավուսի դերերում: Ըստ մամուլի վկայություն, նրանք հարազատորեն են ներկայացրել ազնվամիտ, համարձակ և ըմբոստ հեղափոխականի կերպարը: Մյուս դերերը կատարել են՝ Անտոն Սողոմոնյանը – Գ. Չավուսի կուրացած հոր՝ Արոյի, Սիրուն Սարգիսյանը – քրդուհի Նուրիևի, Կիրո Տոնապետյանը – Սելիմ աղայի սպասավոր Պեքիրի, Գևորգ Մանուկյանը – վանքի ժամկոչի, Տիգրան Տեմիրճյանը – վանահայր Հովհաննես վարդապետի, Ժանո Եղիայանը – Գ. Չավուսի հորեղբայր Ավիկի, Թորոս Ոսկանյանը – Գ. Չավուսի զինակցի դերերում և ուրիշներ:

Թեև դերակատարների մի մասն առաջին անգամ է բեմ բարձրացել, բայց թեմայի գաղափարախոսությունից բխող հայրենասիրական զգացումները նրանց դարձնելով ավելի պարտաճանաչ ու պատասխանատու ստանձնած գործի նկատմամբ, կարողացել են հաղթահարել ամեն տեսակի դժվարությունները և հաճելի տպավորություն թողել<sup>1</sup>:

Ցեղասպանությունից հետո պայքարի մեջ մտած հերոսների անունները գնալով ոչ միայն չեն խամրում, այլև ավելի են պայծառանում: Նրանց սխրագործությունների մասին հրապարակ են հանվում նորանոր ստեղծագործություններ, որոնք ցավի ու վերքի հետ նաև հպարտություն և պատկառանք են ներշնչում:

Հիշատակությունից արժանի այդպիսի գործերի թվին է պատկանում երևանյան դրամատուրգ Գևորգ Սարգսյանի «Կարմիր կիրակիի զինվորը» պիեսը, որը նվիրված է Անդրանիկ Օզանյանի երիտասարդական տարիների գործունեությունը: Այս պիեսի բեմադրությունը հասցեագրված է եղել երիտասարդությունը և տեղ է գտել Երևանի Պատանի Հանդիսատեսի թատրոնի խաղացանկում: Բեմադրվել է

<sup>1</sup> Առաքել (Ֆրեդն) 1999, № 10997:

Թատրոնի գլխավոր ռեժիսոր Երվանդ Ղազանչյանի կողմից: Անդրա-  
նիկի դերակատարն է եղել շնորհալի դերասան Արա Դեղտրիկյանը:

Հայոց ազատագրական պայքարի պատմությանն են նվիրված Գ.  
Սարգսյանի գրած նաև «Արաբո» (3 գործ.), «Որ սպանվենք էլ, չպի-  
տի մեռնենք» (Գևորգ Չավուչ, 3 գործ.), «Սիրո քսան տարի անց»  
(Գևորգ Չավուչ, 2 մաս), «Խենթացած մի վանք» (Առաքելոց վանքի  
կռիվը, 2 մաս) պիեսները:

Գևորգ Չավուչի կյանքի և հեղափոխական գործունեությունն է  
անդրադարձել նաև իրանահայ կրթական ու թատերական երախտա-  
վոր գործիչ՝ դերասան, դրամատուրգ, ռեժիսոր, մանկավարժ Միշա  
Հայրապետյանը: Մեծ ֆիգայիին նվիրված իր «Ավետում» պիեսը  
ինքն էլ բեմադրել է: Ներկայացումը տեղի է ունեցել 1990-ի դեկ-  
տեմբերի 14-ին, Թեհրանի «Կոմիտաս» սրահում: Գևորգ Չավուչի  
դերում հանդես է եկել Ռաֆիկ Ալլահվերդյանը, իսկ Տեր Հովհաննես-  
սի դերում՝ Վարդգես Բաշյանը:

Հայոց ցեղասպանությունում ազատագրական պայքարի պատ-  
մությունը բազմակի ձևերով է զրսևորվել հայ գրողների մոտ:  
Նրանց մի մասը եղևնից փրկված, որբանոցային կյանք անցած,  
տարբեր վայրեր գաղթած հեղինակներ են եղել, որոնք չէին կարող  
անտարբեր մնալ այդ ոճրագործություն պատճառած հետևանքների  
և այն ամեն բացասական երևույթների նկատմամբ, ինչքան որ կա-  
տարվել են իրենց ընտանիքի, շրջապատի, միջավայրի, ազգակիցնե-  
րի հետ ու լուել:

Մասնավորեցնելով օրինակը, նշենք, որ գրող, դրամատուրգ,  
չեքսպիրյան պիեսների հանրահայտ թարգմանիչ, գաղթի ու որբա-  
նոցային կյանքով հասունացած Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների  
կանչը» նույնպես թատերական երկ է դարձել: Հեղինակը հետմահու  
արժանացել է Հանրապետության պետական մրցանակի: Տավրոսի  
Դաշտագեմ դյուղի ծնունդ, համեստագույն այս մարդը ականատեսի  
ճշմարտությունը (թեև շատ փոքր տարիքում) պատկերել է իր հայ-  
րենակիցների և նրանց սերնդների հին ու նոր՝ վերածնված կյանքը:

«Ռանչպարների կանչը» բեմականացվելով, 1990-ի նոյեմբերին  
ներկայացվել է Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում: Բեմադ-  
րությունն իրականացրել է թատրոնի գլխավոր ռեժիսոր Խորեն Աբ-  
րահամյանը թատրոնի՝ այն ժամանակի կարող ուժերի մասնակցու-  
թյամբ:

Հայոց ցեղասպանությունում կոտորածներից հրաշքով փրկված հեղի-  
նակներն իրենց տեսածն ու լսածը հավաքական տեսքի բերելով ու  
թատերական երկի վերածելով, հետագա սերունդներին են փոխան-

ցել նաև հոգևորականության կատարած մեծ դերը ազգապահպա-  
նության կարևոր գործում: Առավել գնահատելին այն է, որ այդ հո-  
գևորականները եղել են իրական անձնավորություններ:

Սա հոգեբանորեն պարտադիր երևույթ է եղել՝ ոչ միայն հոգևո-  
րականի դերը բարձրացնելու, այլև նրա օրինակով խտացնելու հայ-  
րենասիրության գաղափարը՝ ազգային ազատագրական ու ինքնա-  
պաշտպանության գործողություններով ինքնությունն ու հավատը  
հաստատ պահելու, աղետյալներին առաջնորդելու և հուսադրելու,  
բարոյա-հոգեբանական նեցուկ լինելու:

Թեև հոգևորականը գինքի մարդ է, բայց նրա խոսքը գինքից  
ավելի զորեղ լինելով իր ազդու նշանակությունն է ունեցել մարդ-  
կանց հուսադրելու, հավատ ներշնչելու, միասնությունն անսասան  
պահելու համար:

Եվ պատահական է, որ աշխարհական հեղինակների շարքերը  
համալրում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող մի բարձ-  
րաստիճան հոգևորական ո՛չ իբրև գործող անձ, այլ մեծ հայրենա-  
սեր դրամատուրգ, որը սրտացավությամբ նկարագրել է Հաճրնի  
ինքնապաշտպանության դյուցազներգությունը: Այդ հոգևորականը  
եղել է Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, որը հետագայում  
ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս:

Մեծ եղևունից առաջ Սարաճյանը 1910-1915 թթ. եղել է Հաճրնի  
առաջնորդ: 1920-ին նորից վերագարձել է Հաճրն: Իր բացակայու-  
թյան օրերին թուրք բարբարոսներին զոհ է գնացել նրա մայրը, ան-  
կում է ապրել Հաճրնը:

1922-ին Կիպրոսի առաջնորդ եղած ժամանակ, Սարաճյան արքե-  
պիսկոպոսը ոչ հեռու անցյալի՝ Հաճրնի ողբերգություն թարմ հուշե-  
րով դրել է «Հաճրն» վերնագրով յոթ փոքրիկ արարվածներով դրա-  
ման: Կիպրահայությունը Հաճրնի դյուցազներգությունը կենդանի  
պատկերով ներկայացնելու նպատակով, Սարաճյանն այդ շրջանում  
իր ղեկավարությունում ու հովանավորությունում պիեսը բեմադրել է  
տեղական թատերասերների ուժերով: Պիեսի ձևագիրը չկորցնելու  
մտահոգությամբ այն ուղարկել է Շասի (Ֆրանսիա), Հաճրնի հայրե-  
նակցական միություն վարչությունը:

1928-ին Բուենոս Այրեսում (Արգենտինա) լույս տեսնող «Հաճրն»  
հանդեսի խմբագիր Աբրահամ Էյոմեսեկյանը պիեսն իր հետ տարել է  
Արգենտինա: Տարիներ անց, «Հաճրն» պիեսի գործող անձերից մեկը՝  
վերապրող Սոկրատ Հարությունի Թերզյանը փոքրիկ առաջարկով  
1961-ին այն հրատարակել է Բուենոս Այրեսում (59 էջ): Թերզյանը

Մարաճյանի մասին գրել է. «Այս երկով ան ապրած օրերու հիշատակներն կներկայացնեն ողբեկան սրտաբուխ տուրք մը նվիրված Հաճընի անբախտ զոհերու հիշատակին»<sup>1</sup>:

«Հաճըն» պիեսի բեմադրութեան ու դերակատարների աշխատանքը դյուրացնելու նպատակով Ս. Թերզյանը խմբագրական որոշ աշխատանք է կատարել տեքստի վրա: Պիեսի արժանիքը նա համարել է այն, որ հեղինակն իր ստեղծագործութեամբ ցույց է տվել թուրքական վայրագութեան դեմ՝ «հայ աղջկան մը կուրծքին տակ կատարվող ցեղին վրեժը»:

Պիեսում գործողութեանները կատարվում են Հաճընում՝ տեղի երեւելիներից մեկի՝ Հարություն Թերզյանի տանը, թուրքերի մոտ, չոր ու ամայի դաշտի մեջ, անապատում, թուրք հազարապետ Ակիֆի տանը, հայկական դրոշներով զարդարված հեղափոխականների սենյակում և լեռան լանջին:

Գործող անձինք շատ-շատ են, շուրջ 30 հոգի՝ Հարություն Թերզյանը, կինը՝ Դէխոն, դուստրը՝ Երանուհին, հարսը՝ Մարին, զավակները՝ Պետրոսը, Տիգրանը, Սոկրատը, Արտաշեսը, թոռները՝ Վարդուհին և Զարուհին, Ուրֆայի (Գրիգոր) և Մարաշի (Սարգիս) դատապարտյալները, Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսը, Միրտիչ քահանա Գրգյաշարյանը, Հաճընի պաշտպանութուն գործիչներ Կարապետ Զալյանը, Սարգիս Ճերեճյանը (հրամանատար), Արամ Կայծակը (փոխհրամանատար), Սերաստացի հերոսուհի աղջիկ Սիրանուշը, Մաքրուհի, Թագուհի, Տիրուհի հայուհիները, թուրք հազարապետներ Ղալիպը, Ակիֆը և իր մայրը, սպաններ, զինվորներ, ծառայողներ:

Անմեղ ժողովրդին իրենց բնօրրանից հալածելու, կոտորելու, դժոխային ոճրի դեմ ինքնապաշտպանութեան տեսադաշտում դրսևորվում են ժամանակին կուտակված մտքեր, որոնց մեջ վեր է բարձրանում սերաստացի աղջիկ Սիրանուշի հերոսական կերպարը իր ակնհայտ վրիժառուի կեցվածքով:

Տեր-էլ-Ջորի անապատներում ոտաբոբիկ, պատառոտված շորերով այդ աղջկան հազարապետ Ակիֆը մի կերպ բերել է իր տուն և վեց ամիս պատանդ պահելուց հետո հայտնել է, որ այսուհետ իր կինն է լինելու: Աղջիկը մերժում է նրա մոր տված կերակուրները, փափուկ անկողինը՝ գերազասելով չոր հացն ու ջուրը, ամոռի վրա նստած ննջելը: Ակիֆը սարսափում է նրա հայացքից, խոստովանելով «Չեմ

<sup>1</sup> Պեսրոս արք. Մարաճյան, Հաճըն, Բուենոս Այրես, 1961 (առաջարան):

գիտեր թե ինչպես սարսափեցա, ես, որ իրեն նման Հայ աղջիկներ մարդիկ ոչխարի պես մորթած եմ Տեր-Էլ-Ջորի և Մոսուլի ճամբուն վրա Տեր-Էլ Ջորի կառավարիչ Ջեքի պեյի հրամանով»:

Ակիֆը երկու զինվորի աջակցությամբ ցանկանում է հնազանդեցնել Սիրանուշին: Վերջինս իր մոտ պահած դանակով սպանում է նրան և դրանով վրեժը լուծում բոլոր իր նմաններին զբախտացնողներին: Նա այլևս ազատ է, ազատ սարերում: Նրա վերջին խոսքերով էլ ավարտվում է լավատեսական այս պիեսը՝ «Կեցցե ազատ և Հայկական Կիլիկիան»<sup>1</sup>:

1920-ական թթ. կեսերին Մեծ եղևնի թեմայով պիեսներ գրած ու բեմադրած հեղինակների թվում իր հաստատուն տեղն ունի դերասան, դրամատուրգ, ռեժիսոր Մանվել Մարությանը: Նա եղև է Վանի սարսափները տեսած ու երևան գաղթած, Վասպուրականի ինքնապաշտպանությանը և Սարգսրապատի հերոսամարտին մասնակցած երիտասարդ, որի հիշողությունից ոչինչ չի վրիպել:

Ցեղասպանության թեմայով նրա գրած առաջին պիեսն է «Սուլթան Համիդ» (Կարմիր Սուլթան) չորս գործողությամբ «ցնցող տրամբ», որը հիմնականում բեմադրվել է հեղինակի կողմից, իսկ ինքնամենուրեք կատարել է Համիդի, երբեմն էլ՝ Ա. Կարոյի դերերը:

«Սուլթան Համիդ» պիեսը Մարությանն առաջին անգամ բեմադրել է 1927-ի նոյեմբերի 23-ին Մարսելում, իր իսկ ղեկավարությանը գործող դրամատիկ ստուգիայի ուժերով: Ներկայացմանը մասնակցել են Ասյա Կոստանյանը, Ս. Աղատյանը և ուրիշներ<sup>2</sup>:

Տեսարանները կատարվում են Կ. Պոլսում՝ Երլտըզի պալատում: Հայ հերոսները գրավում են Բանկ Օտոմանը, միջամտում են օտարերկրյա ղեկավանագետները: Հաջորդ տեսարանում Սուլթանը գլխարձանում է երգ ու պարով. անձնազուհ հերոսության է դիմում Հայուհին: Ազատարար բանակը պաշարում է Երլտըզի պալատը, տեղի են ունենում բանակցություններ: Ավարտվում է բռնակալի վախճանով: Պետք է ենթադրել, որ Սուլթանին երգ ու պարով հիացնող, կախարհող հերոս Հայուհու դերակատարը եղել է Կոստանյան (Միքայել և Մարգո դերասանական) ընտանիքի դերասանուհի և պարուհի Ասյա Կոստանյանը:

Բավականին տարիներ անց, Մարությանն այս պիեսը 1952-ին ներկայացրել է նաև Բուենոս Այրեսում, այնտեղ ևս կատարելով Համիդի դերը: Տեղի «Հայ մամուլ» թերթում Մարությանի մասին

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>2</sup> Հայ սիրտ (Մարսել) 1927, № 29:

գրվել է, որ նրան հաջողվել է տալ բռնակալի արտաքին պատկերի ճշմարտացի նմանությունը, որն իր հերթին ապահովել է դերասանի կողմից մարմնավորած կերպարի հույսերի մերկացումը:

«Կարմիր Սուլթանը կամ Պանք Օտոմանի գրավումը» վերնագրով այս պիեսը 1930-ական թթ. բեմադրության է արժանացրել նաև Մարուլթյանի ուսուցիչ Հովհաննես Զարիֆյանը: Ներկայացման վայրը նախատեսվել է Գլենդելի հայկական դպրոցի սրահը, դերակատարները՝ «Ազատամարտ» թատերախմբի ուժերը:

Իր բեմական գործունեության 60-ամյակի առթիվ տրված մի հարցազրույցի ժամանակ Մարուլթյանն ասել է. «Մասնակցել եմ Սարգարապատի ճակատամարտին: Մկրտվել եմ արյամբ, մասնակցել եմ հայրենիքի պաշտպանության բոլոր մարտերին, ոչ թե իբրև զինվոր, այլ իբրև կամավոր»<sup>1</sup>:

Այս, բայց ոչ միայն այս հանգամանքը, Մարուլթյանի գործունեության հիմքը դարձրել է հայրենասիրությունը: Այդ արտահայտություններին մեկն էլ նրա «Կոմիտաս» պիեսն է: Այստեղ պատկերված է թե՛ աշխարհիկ-գեղջուկ կյանքը, թե՛ հոգևոր շրջապատը և թե՛ տառապանքը:

1932-ին, Մարուլթյանը հանրաճանաչ երգիչ Արմենակ Շահմուրադյանի առաջնորդությամբ, կոմպոզիտոր Գուրգեն Ալեմշահի հետ այցելել են Փարիզի Վիլ ժյուլիֆի (Villejuif) հոգեբուժարան՝ հիվանդ Կոմիտասին տեսություն: Շահմուրադյանը հյուրերին ներկայացնելիս Մարուլթյանի մասին ասել է թե՛ սովորել է Վիննայում, ուզում է դնալ Միջագետք: Կոմիտասը հարցրել է՝ «Ինչո՞ւ ոչ Հայաստան» և հետո ավելացրել՝ «Հայություն կա՞ Հայաստան: Ես ուզում էի գնալ, բայց անցազիր չտվին»:

Այս հանդիպումը շատ տխուր տպավորություն է թողել դերասանի վրա: Այդ վիշտը նրան հարկադրել է պիես գրել Կոմիտասի մասին և ժողովրդի սրտում հաստատուն պահել նրա հիշատակը: Քննադատությունը թիրուխուն է համարել աքսորավայր քշված դժբախտների բացակայությունը պիեսում, պատճառաբանելով, որ ամբողջ ողբերգությունը հենց դրանից է սկսվում: Մինչդեռ եղևոն տեսած ու ապրած Մարուլթյանն աշխատել է առանց այն էլ տառապյալ հանգիստեսաներին նորից չպատկերել գաղթի շրջանի արհաւիրքները:

Մարուլթյանն իր «Կոմիտաս» պիեսը աշխարհի մի շարք քաղաքներում բեմադրելով արժանացել է մամուլի բարձր գնահատու-

<sup>1</sup> Հայրենիք (Բոստոն) 1980, դեկտեմբերի 16:

թյանը: Նա բեմադրել է Հալեպում (1946), Բուենոս Այրեսում (1951), Աթենքում (1955), ամենուրեք կատարելով Կոմիտասի դերը: Գնահատվել է թե՛ որպես պիեսի հեղինակ, թե՛ որպես Կոմիտասի դերակատար:

Ահա մի քանի օրինակ այդ գնահատություններից, որոնք ամփոփված են նրա 60-ամյա դրական-թատերական գործունեությունը նվիրված գիրք-ալբոմում (Թեհրան, 1969):

Դերասան Մ. Մարության... խիստ հաջողությամբ ներկայացուցած է նոր գործ մը «Կոմիտաս», որ իր հեղինակությունն է:

Սեզա, Երիտասարդ հայուհի (Բեյրութ), 1946:

Մ. Մարության Կոմիտասի դերին մեջ անգերազանցելի էր: Ան կարողացավ մարմնավորել ամենահարազատ գծերով Վարդապետին ապրումները, բնականություն սահմանին մեջ դարձավ գերակշիռ արվեստի երանգավորումներով:

(Թարգմ.) Արմենիա (Բուենոս Այրես), 1951:

Մ. Մարության... հինգ արարնոց թատերական գործով մը մեզի կուտա Կոմիտասի ամբողջ կյանքը՝ մանկությունն մինչև իր եղերական վախճանը:

Օ. Ջ., Նոր օր (Աթենք), 1955:

Կոմիտասյան թեման սրբություն լինելով հայ ժողովրդի համար, հեղինակից բացի, ուշադրություն է արժանացել նրա աշակերտների, համակիրների և, առհասարակ, թատերական գործիչների կողմից: Առաջինը ձեռնարկել է Մարությանի աշակերտ՝ դերասան և ռեժիսոր Թունի Ամատունին (Հարություն Թորոսյան): Վերջինիս բեմադրությունը ու՛ նաև Կոմիտասի դերակատարությունը Մարությանի պիեսը ներկայացվել է 1945-ի մարտի 18-ին, Իրանի Չարմահալ գավառի Ուսումնասիրաց միություն Ահվազի մասնաճյուղի ուժերով, հայոց դպրոցի թատերասրահում: Երրորդ գործողության ժամանակ, բեմից դուրս գտնվող երաժշտախմբի ու երգչախմբի կատարումները նպաստել են բեմադրության ընդհանուր հաջողությանը: Դերակատարներից են եղել՝ Վ. Բուդաղյանը - Խեչո, Ա. Աղայանը - Կոմիտասի ոգին (աշխարհական Սողոմոն), Ջավար Թորոսյանը, Լ. Տեր-Ղևոնդյանը (հետագայում՝ Լիդա Հովհաննիսյան) և ուրիշներ<sup>1</sup>:

Կոմիտասի ծննդյան 100-ամյակին Նոր Զուղայում և Բեյրութում կազմակերպված միջոցառումներն ավարտվել են «Կոմիտաս» ներկայացումով: 1970-ի հունվարի 27-ին Նոր Զուղայի Հայ ակումբում այն բեմադրել է թատերական գործիչ Մասիս Մաթյանը, միաժամա-

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1954, № 66:

նակ կատարելով Կոմիտասի դերը: Այստեղ Կոմիտասին հիմնականում ներկայացրել են գեղջուկների հետ տեսարանում: Դերակատարներից են եղել՝ ժ. Պարսումյանը – Սանամ, Արաքս Ղարախանյանը – Գյուլնազ, Ս. Առաքելյանը – Սարկավազ, Երանուշ Հովսեփյանը – փոքրիկ մանուկ, Ասյա Ալեքսանդրյանը – Տիկին, Զ. Բաղդանյանը – երգիչ, Մասիս Ծատուրյանը – գրող: Ներկայացման ձևավորումը կատարել է գեղանկարիչ Սմբատ Տեր-Վյուրեղյանը<sup>1</sup>:

Բեյրության ներկայացումը կայացել է հոբելյանից մի քանի ամիս առաջ՝ 1969-ի մարտի 29-ին, Հայոց եկեղեցու կիրակնօրյա դպրոցների օժանդակ միության «Շիրվանգազե» թատերախմբի կողմից: Այս բեմադրութայան հեղինակը և Կոմիտասի դերակատարը եղել է թատերախմբի դերասան և ռեժիսոր, Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի շրջանավարտ Լուսիֆի Թապալյանը: Պիեսը ներկայացվել է որոշ խմբագրութայամբ: Գեղջուկահերեր Սանամի և Գյուլնազի դերակատարներն են եղել՝ Ա. Մահտեսյանը և Հ. Ալինյանը, երգիչ Սիմոն սարկավազինը – Հ. Խաթունյանը, Կոմիտասի մտերիմ Փանոսինը – Պ. Շամլյանը: Մասնակիցների բնդհանուր թիվը հասել է քսանի<sup>2</sup>:

Կոմիտասյան թեման, որ ամեն մի հայի զգայուն սրտի հույզի արտահայտութուն է պարունակում իր հոգու խորքում, բեմ է հանվել նաև ամերիկահայ թատրոնում, 1981-ին: Այստեղ էլ բեմադրողն ու Կոմիտասի դերակատարը եղել է նույն անձը՝ Միքայել Ներուզյանը: Սրբազանի դերում հանդես է եկել Խոսրով Եսայանը, իսկ Սանամի և Գյուլնազի դերերում Հիլդա Պիողյանն ու Ռիթա Տաղլյանը:

Մարությանի «Կոմիտաս» պիեսից մի պատկեր էլ ներկայացվել է 1987-ի հոկտեմբերի 30-ին Թեհրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութայան կողմից, Մայրերի օրվա առթիվ, «Կոմիտաս» սրահում: Գործող անձինք ու դերակատարներն են եղել՝ Կոմիտաս – Վահան Աճեմյան, Հսկիչ – Սևադա Մասեհյան, Սողոմոն – Նժդեհ Հովհաննիսյան, երգիչ – Վահագն Ազիզյան, բանաստեղծ – Արմեն Սեդրոսյան: Բեմադրութունն իրականացրել է դերասան – ռեժիսոր Տիգրան Գրիգորյանը:

Կոմիտասյան թեման շատ հեղինակների է զբաղեցրել Հայ դրամատուրգիայի պատմութայան էջերում և թատրոնում: Հիմնականում երկու շրջանի մասին է գրվել՝ էջմիածնի երիտասարդական և աքսո-

<sup>1</sup> Նույն տեղում, 1970, № 47:

<sup>2</sup> Լրագիր (Նյու Յորք) 1987, հունվարի 10:

րից վերադառնալուց հետո ապրած տարիների, ներառյալ կյանքը փարիզյան հոգեբուժական հիվանդանոցում: Այս կարգի պիեսների թվին է պատկանում Գուրգեն Մահարու (Աճեմյան) «Երգ մահու և անմահության» (եղեռնից մինչև վերածնունդ) դրաման:

Մահարու այս պիեսը ներկայացվել է Իրանի Ազգային և Մշակութային միության Թեհրանի կենտրոնում, 1981-ի ապրիլի 22-27-ին, Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված ոգեկոչման շաբաթի շրջանակում: Օրվա թեմային առնչվող հարցերի շուրջը ծավալված ելույթներից, ասուունքից, երգ-երաժշտությունից հետո բեմ է հանվել վերոհիշյալ պիեսը: Կենտրոնական դեմքը Կոմիտասն է, աքսորականը: Արտասանվել են հատվածներ Պ. Սևակի, Գ. էմինի, Ս. Կապուտիկյանի՝ Կոմիտասին նվիրված բանաստեղծություններից Ղևոնդ Մողազասյանի, Հրաչ Հախվերդյանի, Աստղիկ Բաբայանի կատարմամբ:

«Երգ մահու և անմահության» դրամայի բեմադրությունն իրականացրել է Ի.Ա.Մ.Մ. «Վարդան Աճեմյան» թատերախումբը: Գործող անձերն ու դերակատարներն են եղել՝ Կոմիտաս – Արշակ Դավթյան, Սևազգեստ կին – Դալիթա Դավթյան, Փանոս Թերլեմեզյան – Գրիգոր Զաքարյան, Մարիամ – Սոնիկ Շահումյան, Համբարձում – Մարտին Գրիգորյան, Բժիշկ Լուսինյան – Անդրանիկ Բաբայան<sup>1</sup>:

Կոմիտասի կյանքի ու գործունեություն թեմայի բեմականացման ճանապարհին շատ հաճախ հենվել են Պարույր Սևակի «Անյուրի գանգակատուն» պոեմի վրա: Ահա, այս թեմայով էլ պիես է գրել դրամատուրգ Անահիտ Աղասարյանը՝ վերնագրելով «Ղողանջ հուսո»: Պիեսում, բնականաբար նաև բեմադրության մեջ, տրված է հայ ժողովրդի ծանր վիճակը, առօրյա դժվարությունները, պայքարը, կենտրոնում ունենալով Կոմիտասի կերպարը: Ներկայացման մեջ օգտագործված են արտասանություն, երգ, երաժշտություն, պար, մեջախաղ:

«Ղողանջ հուսո» պիեսը ներկայացվել է Մեծ եղևոնի 80-րդ տարելիցի առթիվ՝ 1995-ի ապրիլի 21-ին Հալեպի «Պետրոս Աղամյան» թատերախմբի ուժերով: Բեմադրել է Հայաստանյան ռեժիսոր Նիկոլայ Մատուրյանը, որը տասից ավելի պիես է բեմ հանել այդ թատերախմբում: Երաժշտության հեղինակն ու խմբավարը եղել է Խաչիկ Խաչատրյանը, դեկորի նախագիծը կազմել է բեմանկարիչ Հրազդան Թոքմաջյանը, իրագործել՝ դերասան Ներսես Տաղլյանը: Պարուսույցը՝ էլի Մանուկյանը:

Ներկայացմանը մասնակցել է 31-անձ, որոնցից կարևոր դերակա-

<sup>1</sup> Փյունիկ (Թեհրան) 1981, № 17:

տարներն են եղել՝ Դանիել Գարամանուկյանը – Կաթողիկոս, Շահե Բեշլիշյանը – Կոմիտաս, Սևակ Արոյանը – փոքրիկ Կոմիտաս (Սողոմոն), Ռաֆֆի Պաղտասարյանը – Ա. վանական, Սոսե Պչաքճյանը – Տանտիրուհի, Գեորգ Սարյանը – խաղասաց: Մասնակիցների թվում եղել են գեղջուկ-գեղջկուհիներ, վանականներ, խոսնակներ, պարողներ:

Թատերախմբի անդամներից բացի, ներկայացման մեջ ներգրավված են եղել Հայ Երիտասարդաց ընկերակցության անդամներ:

Նույն թվականի ապրիլի 25-ին, ապրիլյան սգատոռնի 80-ամյակի առթիվ, Կոմիտասին նվիրված մի պիես էլ բեմադրվել է Հալեպի «Ավետիս Ահարոնյան» սրահում: Համազգայինի Նիկոլ Աղբալյան մասնաճյուղում դերասան, դրամատուրգ և թարգմանիչ Ճորճ Վանլյանը բեմադրել է «Ծիրանի ծառը» պիեսը՝ ըստ գրող Սմբատ Փանոսյանի «Վարք Կոմիտաս Կուտինացի» վեպի իր բեմականացումով:

Ակնհայտ է, որ Կոմիտասի անվան հետ կապված ամեն մի գեղարվեստական երկ իր հետ բերում է արժեքների գնահատում, հիշողության վերականգնում, հավատի զորություն:

Մոտ երկու տասնամյակ անց, Վանլյանը նորից է անդրադարձել Կոմիտասին առնչվող թեմային: Բեյրութի «Ազգակ» թերթում տպագրված Ս. Փանոսյանի մի հոդվածի ազդեցությամբ Վանլյանը գրել է «Կոմիտաս Կուտինացի» երկու մասից բաղկացած պիեսը: Գործող անձինք են՝ Խոսնակը, որը հանգամանորեն պարզում է ամեն հետաքրքրական հարց, Կոմիտասը, որը զրույցի է բռնվում նահատակ գրողներ Ռուբեն Սևակի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Գրիգոր Ջոհրապի հետ, տանտերը, նրա աղջիկը, պատանիներ և աղջիկներ, թուրք ոստիկան չավուչը և երկու անխոս ոստիկան<sup>1</sup>:

Ապրիլյան եղևունի գոհերի հիշատակի ամենամյա ոգեկոչումներն իրենց հետ օրվա թեմային նվիրված նորություններ են բերում: 20-րդ դարի վերջին նորությունը եղել է Մեծ եղևունի 85-ամյակի առթիվ գրված «Կոմիտաս վարդապետ» պիեսի բեմադրությունը, որը տեղի է ունեցել Հայ մշակութային «Արարատ» կազմակերպություն թավրիզի մասնաճյուղի նախաձեռնությամբ «Հ. Ոսկանյան» սրահում, 2000-ի ապրիլի 28-ին<sup>2</sup>:

Միջոցառման ժամանակ բանախոսություններից, արտասանություններից, երգերից հետո կատարվել են տեսարաններ Կոմիտասի կյանքից: Բեմադրությունն իրականացրել է պիեսի հեղինակը՝ վաստակաշատ թատերական գործիչ և գեղանկարիչ Մարուսյա Վահրամյան:

<sup>1</sup> Ճորճ Վանլյան, Չորս թատերակ (պիեսների ժողովածու), Հալեպ, 2009, էջ 5:

<sup>2</sup> Ալիք (Թեհրան) 2000, № 115:

նր: Կոմիտասի դերում հանդես է եկել դերասան և դաշնակահար Կարեն Սարգսյանը, որը միաժամանակ նվագակցել է Կոմիտասի երգերի կատարողներին: Ներկայացման մեջ կատարվել են Կոմիտասի մշակած «Կուռնկ», «Կուժն առա», «Հով արեք սարեր ջան» և այլ երգեր, որոնք կատարել են Վարդան Սարգսյանը, Ռեբեկա Սարգսյանը և Սուրիկ Աբրահամյանը: Ներկայացման ղեկավարներն էին եղել՝ Արա Դիլանյանը (Թալեաթ փաշա), Սաքո Թարվերդյանը, Գագիկ Դիլանյանը, Մելիք Օհանյանը:

Կոմիտասի դերով Կարեն Սարգսյանը ելույթ է ունեցել նաև 2008-ի ապրիլի 24-ի առթիվ կազմակերպված միջոցառմանը (Նաիրա Դիլանյանի «Կոմիտաս» պիեսի), միաժամանակ ներկայացնելով մեծ երգահանին ու դաշնակահարին և հուզիչ տալավորություն թողել ներկաների վրա:

Ապրիլյան տարելիցների շրջանակներում Կոմիտասին նվիրված նորություններից մեկն էլ եղել է երիտասարդ դրամատուրգ Գեղանուշ Սայադյանի՝ պարույրսեակյան հայտնի տողերը կրող<sup>1</sup> «Իմ տառապած, իմ փառապանծ» վերնագրով համադրումը, որի բեմադրությունը տեղի է ունեցել 2005-ի ապրիլի 23-ին, Արտաշատի Ամո Խարազյանի անվան թատրոնում: Բեմադրությունն իրագործել է թատրոնի գեղարվեստական ղեկավար Հայկ Մնացականյանը և նվիրվել է Հայոց Մեծ եղևունի 90-րդ տարելիցին: Արտաքին ձևավորումը կատարել է Գրիգոր Ավագյանը, իսկ պարերը բեմադրել է Հակոբ Մովսիսյանը:

«Իմ տառապած, իմ փառապանծ» պիեսում որպես գործող անձեր տեղ են գտել հայ ժողովրդի մեծ զավակներ Կոմիտասը, Դանիել Վարուժանը, ինչպես նաև օտարազգի հայասերներ ու թուրք ջարդարներ: Պապը թոռնիկին պատմում է թուրք բարբարոսների անմարդկային ոճրագործությունների մասին, պատվիրում, որ սերնդն սերունդ պահպանեն մեր անմեղ, հայտնի ու անհայտ զոհերի հիշատակները:

Բեմադրության մեջ առկա են հետևյալ կերպարներն ու նրանց դերակատարները. Պապ - Ռոմեն Ավինյան, Կոմիտաս - Գագիկ Սարգսյան, Մ. Յակոբսոն (տարեց կին) - Գրետա Գալստյան, Դանիել Վարուժան - Սամվել Ղազարյան, Արաքսի - Անահիտ Բաղալյան, Լևիսիոս - Գարեգին Աբրահամյան, Թալեաթ - Բագրատ Գևորգյան, Հասան Ֆեհմի - Գագիկ Թովմասյան, Շաքիր բեյ - Հարություն Մինասյան, Գեղջուկ - Վոլոդյա Հովհաննիսյան, Ա. Բարրի - Լևոն Ղազար-

<sup>1</sup> Պարույր Սևակի «Մխանի ծուխ» շարքի «Հայաստան» բանաստեղծության երրորդ-չորրորդ տողերը:

յան, թուրք հարյուրապետ – Գեղամ Խաչատրյան, Գեղջկուհիներ – Սառա Ռուչանյան, Օֆելյա Հակոբյան, Նաիրուհի Ավետիսյան, Թոռնիկ – Գեղամ Մանուկյան:

Եվ այսպես, որքան վերքը սպիանում է, հիշողությունն այնքան ամրանում է: Սիրտ է պետք, որ դիմանա այս ամենին:

Կոմիտասի անվան հետ կապված դրամատուրգիական ստեղծագործությունների շարքում մի առանձին տեղ է զբաղում թբիլիսիարնակ Վալերի Հունանյանի գրած «Վիլ ժյուլիֆի բուժարանի այցելուն» վերնագրով ևրկու գործողությամբ դրաման, որը ռուսերենից թարգմանել են գրողներ Անահիտ Բոստանջյանն ու Արա Արթյանը և տպագրել «Կամուրջ» տարեգրքում<sup>1</sup>:

Երկու կյանք է պատկերված այս պիեսում: Առաջինում 12-ամյա Սողոմոնն է, էջմիածնի Գեորգյան ճեմարանի սանը: Երկրորդում՝ 40-ամյա հասուն ստեղծագործողը: Ընդգրկված ժամանակաշրջանն է՝ 1890-1930-ական թվականները: Միջանկյալ ներկայացված են նաև պոլսահայ գրական-մտավորական կյանքի մի շարք ներկայացուցիչներ, որոնք գոհվեցին չարաղետ 1915-ին:

Հունանյանի պիեսի ընդգրկումի մասին որոշակի պատկերացում են տալիս նրա ներգրաված անձինք՝ Գեորգ Չորրորդը (կաթողիկոս), Թագուհին, Գեորգը, հիվանդանոցի № 7 հիվանդասենյակի բուժող բժիշկներ Բավվեն, Ժենեվիեր, Մարին, ապա Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը, Մեծ Վեգիրը, զինվորներ, բանալի կալանավորներ Դ. Վարուժանը, Սիամանթոն, Գ. Զոհրապը, Ենովք Շահենը, Հրանդ Աստվածատրյանը, Տիգրան Չյուկուրյանը, Տիրան Բելեկյանը, Գրիգոր Թորոսյանը, Երուխանը (Երվանդ Սրմաքեղխանյան), Սմբատ Բյուրատը, Ռուբեն Զարդարյանը, Գեղամ Բարսեղյանը, Հրանդը (Մելքոն Կյուրճյան), Թլկատիսցին (Հովհաննես Հարությունյան), Արտաշես Հարությունյանը, Գագիկ Օզանյանը, Փայլակը (Ժակ Սայապալյան), Նազարեթ Տաղավարյանը և ուրիշներ:

Հեղինակը նպատակադրվել է գոնե այս եղանակով ոգևորել մեր անմեղ նահատակների հիշատակը, բայց անհնարին է այս բոլորին մի գործողության մեջ տեղավորելը, ուր մնաց ակտիվ դեր կատարելը: Այսուհանդերձ, նա իր հարգանքի տուրքն է հայտնել ցեղասպանության պատճառով նահատակված մեր գրական մտքի պայծառ ներկայացուցիչներին:

«Վիլ ժյուլիֆի բուժարանի այցելուն» պիեսը գրվել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ:

<sup>1</sup> Կամուրջ, Թրիխտի, 2009, էջ 105-119:

Մի պտղունց խունկ բուրբի անմար հիշատակին:

Ցեղասպանութիւնն բառն արտասանելիս, մշտապես հիշվում է մեր ազգային երաժշտութեան ակունքները որոնող Մեծն Կոմիտասի անմոռաց անունը: Եվ եթե Ֆիզիկապետ փրկվեց 1915-ի եղեռնից, բայց նրա տեսածն էլ բավական էր, որ այլևս չկարողանա հանգիստ սրտով ստեղծագործել: Այսպես, 20 տարի լուռ տանջվելուց հետո, 1935-ին աչքերը փակեց Փարիզում, իսկ մեկ տարի անց՝ 1936-ին իր հավերժական հանգիստը դտավ Երևանում՝ Մայր Հայաստանում:

Երախտագետ հայ ժողովուրդը անմահացրեց Կոմիտասի անունը: Նրա անունով են կոչվել շատ հաստատութիւններ, երգչախմբեր, կրթօջախներ, փողոցներ: Բավական է ասել, որ նրա անունով է կոչվում Երևանի պետական կոնսերվատորիան, երկար տարիներ գործում է նրա անվան քառյակը (կվարտետ): Նրա անունն է կրում Երևանի քաղաքային պանթեոնը, ուր թաղված է նա: Իսկ վերջերս, ցեղասպանութեան 100-ամյակի առնչութեամբ Կոմիտասի այգում, պանթեոնի մոտ բացվեց Կոմիտասի թանգարանը իր ցուցադրութեամբ ու համերգասրահով, որը կդառնա մեր մայրաքաղաքի հիշարժան մշակութային կենտրոններից մեկը: Կոմիտասի անունով բազմաթիվ երգիչախմբեր են գործել սփյուռքահայ դաղթօջախներում:

Մարդասեր երկրներում հանգրվան գտած Հայութիւնն ամեն առիթով վերհիշել է իր կորցրած Հայաստան հայրենիքը, լինի դա Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակը ոգեկոչելու սգահանդեսներում թե գեղարվեստական երեկոներում, մեծարումներում – միևնույն է՝ կորցրած անցյալը չպետք է մոռացվի:

Մեծ եղեռնից փրկվածների մի զգալի մասը հիմնավորվել է Թուրքիայից առավել մոտ՝ եվրոպական երկրներում: Դա էլ մեծ բախտավորութիւնն էր թշվառ-թափառական հայի համար: Հիմնավորվելով տարբեր քաղաքներում, փախստական-գաղթական հայերը մի քիչ ազատ շունչ քաշելուց հետո սկսել են կազմակերպել իրենց հայրենակցական միութիւնները, փոխադարձ օգնութեան ձեռք մեկնել աշխարհով մեկ ցրված հայրենակիցներին:

Ահա, այդպիսի միութիւններից մեկն էլ եղել է Փարիզի Տրապիզոնցիների հայրենակցական միութիւնը: 1928-ի մարտի 3-ին, թատրոն Ռենուարում տեղի ունեցած մի երեկույթի գեղարվեստական մասում ներկայացվել է տրապիզոնցի բանաստեղծ և դերասան (հետագայում՝ Հայաստանի ժողովրդական արտիստ) Արման Կոթիկյանի գրած «Արյունոտ խթում» մեկ գործողութեամբ դրամատիկական էտյուդը: Տրապիզոնցիների օրինակով Կոթիկյանը համախմբ-

ման նոր լիցք է տվել փարիզահայությանը: Նյուեթը ոչ միայն հանրաժանոթ երևույթի արտացոլումն է բեմի վրա, այլև սխալված չենք լինի, եթե ասենք ինքնակենսագրական հիմք ունի:

Պիեսում ծավալվող գործողությունները տեղի են ունեցել Տրապիզոնի կոտորածների ժամանակ, երբ մի խումբ տրապիզոնցիներ, որոնց թվում և հեղինակը, մոտակա անտառների մեջ պատսպարված դիմադրել են թուրքերին մինչև ուսական բանակի օգնությամբ հասնելը<sup>1</sup>:

Ներկայացումն այնքան անմիջական ու ազդեցիկ է եղել, որ ցանկություն է հայտնվել պիեսն արտագրել և ուրիշ վայրերում ևս բեմադրել: Ցավոք, ոչ այդ պիեսի ձեռագիրն է պահպանվել, ոչ էլ Կոթիկյանն է գրավոր հետք թողել: Իսկ որ նա նաև դրամատուրգիական մտահղացումների շնորհք էլ է ունեցել, անվիճելի է: Այդ են վկայում մի շարք հեղինակների արձակ գործերի նրա բեմականացումները, որոնք բեմադրվել են տարբեր թատրոններում:

Բարբախտաբար, Կոթիկյանի արխիվում պահպանվել է այդ ներկայացման ծրագիրը, որով պարզվում է թե՛ գործող անձանց և թե՛ դերակատարների ով լինելը: Ահա նրանք՝ Էլենկո-տիկ. Գ. Փափագյան, Սիրանուշ-օր. Ալիս Դերձակյան, Արամ-Շահան Սարյան, Բաբա-Եանի - Ա. Սարաֆյան, Միսաք - Ե. Գրիգորյան, Ժիրայր - Արման Կոթիկյան, Սարգիս - Անտոնյան որդի<sup>2</sup>:

Յրանսիայում հաստատված, ճանաչված գրող դարձած արձակագիրներից մեկն էլ եղել է Պետրոս Զարոյանը: Նա էլ՝ իբրև ցեղասպանությունից փրկված սերնդի ներկայացուցիչ, անտարբեր չի մնացել և չէր էլ կարող չարձագանքել մարդկային այդ հրեշավոր աղետների ու նրանց թողած հետևանքների պատճառած վնասներին:

Երիտասարդ Զարոյանը 1927-ին գրել է «Ոստայն» վերնագրով մի դրամա, որի երեք տեսարաններում պատկերել է հայոց ջարդից փրկված և շունչը Յրանսիայում հանած ու հիմնավորված մի դերասանուհու կյանքը, որը Փարիզում իրեն համար մի համեստ ընտանիք կազմելու հարցում մեծ դժվարությունների առաջ է հայտնվում:

Զարոյանի «Ոստայն» դրաման բավականին ուշ է հայտնվել բեմում: Թատերական գործիչ Արբի Հովհաննիսյանի հետևողական ջանքերի շնորհիվ, այն ներկայացվել է Փարիզի Հայ թատրոնի ընկերակցությունից թատերական ընթերցումների շարքում, 2003-ի ապրիլի 6-ին:

<sup>1</sup> Ապագա (Փարիզ) 1928, № 22:

<sup>2</sup> Զարնցի անվան դրականություն և արվեստի թանգարանի թատերական բաժին, Ա. Կոթիկյանի ֆոնդ:

Զարոյանի գրչին են պատկանում նաև «Մեռնողները» և «Մենք ալ հայրենիք ունենք» հայրենասիրական պիեսները: Վերջինս, 1965-ին Բեյրութում, Հայոց ցեղասպանութեան 50-րդ տարելիցի առթիւ, Թեքեյան Մշակութային միութեան մրցույթում, թատերական գրականութեան անվանակարգում արժանացել է առաջին մրցանակի<sup>1</sup>:

Ցեղասպանութեան թեման հայ թատրոնում կանգառ չի ունեցել: Անընդհատ պիեսներ են գրվել, անընդհատ հին ու նոր պիեսներ խաղացվել: Եվ այդ բոլորը մշտական պայքարը շարունակելու համար: Դրամատիկական նորութիւններից մեկը եղել է «Գոյութեան պայքարը» վերնագրով չորս գործողութեամբ դրաման, որի հեղինակը ևս չի պարզված: Շատ սակավ են այս պիեսի և նրա բեմադրութեան մասին տվյալները: Հայտնի են միայն, որ այն բեմադրվել է 1929-ի մարտի 3-ին, Վիեննում, Ռ.Ա.Կ. – ակումբում: Կազմակերպչներին մեկը՝ Հովհաննես Մկրտչյանը հանդիսատեսներին բացատրել է, որ «ներկայացվելիք խաղի նյութը առնված է 1915-ի հայկական հեղափոխութենէն»: Կոչ է արվել՝ «Պետք է պարտաճանաչ ըլլանք և վառ պահենք մեր սրտերուն մեջ մեկ միլիոն զոհերու հիշատակը»<sup>2</sup>: Մամուլի տվյալներով բոլորը հաջող են կատարել իրենց դերերը:

Արևմտահայութեան կոտորածների և աքսորականների ընտանիքների քայքայման ու կործանման տխուր հետևանքները դրամատիկական երկերի նյութ է դարձրել նաև իրանահայ և իրանական գրական-թատերական կյանքում մեծ վաստակի տեր՝ դերասան, ռեժիսոր, դրամատուրգ, խմբագիր Գրիգոր Եղիկյանը: Արևմտյան Հայաստանի ծնունդ այս գործիչը երկար դեգերելուց հետո հանգրվանել է Ռաշտում:

Ցեղասպանութեան թեմայով Եղիկյանի գրած «Այն կինը» երեք գործողութեամբ, ողբերգական վերջաբանով այս դրաման ներկայացվել է 1932-ի նոյեմբերի 17-ին, Թեհրանի Զրադաշտականների ակումբում<sup>3</sup>:

Այն կինը – Իսկուհին աքսորի ճանապարհին կորցրել է տղային և աղջկանն ու ընկել արաբական անապատները: Հետո գտնում է տղային՝ Արշակին: Տասներկու տարվա գերութիւնից հետո նրանց հաջողվում է փախչել: Իսկուհուն հաջողվում է գտնել նաև ամուս-

<sup>1</sup> Գերսամ Ահարոնյան, Հուշամատյան Մեծ եղևնի 1915-1965, Բեյրութ, 1965, էջ 1114:

<sup>2</sup> Ապագա (Փարիզ) 1929, № 38:

<sup>3</sup> Ալիք (Թեհրան) 1932, № 38:

նուն՝ Միհրանին: Վերջինս հարազատներին գտնելու հույսը կորցնելով, նոր ընտանիք է կազմել: Ամուսնացել է Նվարդի հետ, աղջիկ ունեցել:

Օրերից մի օր Միհրանի ծանոթ Գուրգենը տեղեկանալով, որ արաբների կողմից մի կին է եկել, խորհուրդ է տալիս՝ գուցե թե նրա միջոցով կարողանա տեղեկություն ստանա կնոջ և երեխաների մասին: Միհրանի տանը տեղի է ունենում նրա և Իսկուհու հանդիպումը նոր կնոջ բացակայության ժամանակ: Միհրանն անակնկալի է գալիս տեսնելով տանջահար կնոջը: Իսկուհին հասկանում է, որ ամուսինը նոր կին ունի:

Միհրանը խոստանում է օգնել նրան, կրթություն տալ Արշակին միայն թե շրջապատում իմանան, որ իրեն եղբոր կինն ու որդին են: Սակայն Նվարդն իմանալով այդ ամենը, բացում է դադարիքը: Մարդ ու կին սկսում են վիճել: Նվարդն Արշակին ծեծելով տնից դուրս է անում: Նվարդն ու իր եղբայրը համոզում են Միհրանին հեռացնել նրանց քաղաքից: Վշտահար Իսկուհին իրեն հարբեցողություն է տալիս և սպանում Միհրանին:

Հայրենի բնաշխարհից վտարված և բազում զրկանքներ կրած երկու ընտանիք է քայքայվում: Ահա ցեղասպանություն դաժանություն դառն կնիքը իսկուհի հայի ճակատին:

Հայոց ցեղասպանություն և նրա հետևանքները շոշափող թեմային է անդրադարձել սփյուռքահայ մի այլ գրող՝ գյուղագիր Համաստեղը (Համբարձում Կելեյան): Ամերիկա փոխադրվելուց հետո, նրա սիրտը չի դադարել իր հայրենակիցների կրած ոչ միայն սարսափների, այլև նրանց հետնորդների հոգեբանական ցնցումների համար միայնուց: Մի տխուր երևույթ, որն իր հերթին նյութ է ծառայել նրա գրականության համար:

Ահա, այս մտահոգություններ, Համաստեղը գրիչ է վերցրել ու գրել «Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական դրաման: Այդտեղ նա պատկերել-նկարագրել է 1915-ի ջարդերից հետո Ամերիկա գաղթած երկու հարևան գյուղացիների ընտանիքների անդամների հոգեկան ապրումները ոչ հեռու անցյալում կրած և տարիներ հետո էլ չմոռացվող հալածանքն ու հայրենի տունը կորցնելու անբուժելի ցավը:

Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը» պիեսն ունեցել է բնական իր համեստ պատմությունը: Այդ նախաձեռնությունն իր վրա է վերցրել բեյրութահայ թատրոնի նշանավոր գերասան, թարգմանիչ և ռեժիսոր Վարուժան Խտրճյանը: Իր կազմակերպած «Թատրոն - 67» թատերախմբի անդամներով, Համաստեղի պիեսը նա ներկայացրել է 1987-ին, Հալեպում:

Ֆրանսահայ բեմից Հայոց ցեղասպանության դատապարտման կոչ է արել սփյուռքահայ դերասան, դրամատուրգ և ռեժիսոր Թրագոչը (Հարություն Թրագոչյան): Եվդոկիացի այս Հայրենասեր թատերական գործիչը էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո նվիրվելով թատրոնին, աշխատել է Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Մոսկվայի, Միջին Ասիայի (Անդրկասպյան երկիր), Իրանի, միջինարևելյան երկրների հայկական թատրոններում, 1931-ին հաստատվել Ֆրանսիայի Լիոն հայաշատ քաղաքում: Ցեղասպանության հետևանքները նա տեսել է դեռևս Անդրկովկասում և ապա՝ շրջագայած երկրներում:

Նախքան ցեղասպանության թեմայով պիեսներ գրելը, Թրագոչը մի շարք պիեսներ է բեմադրել նույն բովանդակությամբ: 1935-ին Վիեննում (Ֆրանսիա) նա բեմադրել է Լևոն Մարտիրոսյանի «Հակոբ Հաբեթ» պիեսը, որը խաղացվել է նաև Կարտանում: 1947-ին Մարսելի ազգային թատերախմբի ուժերով բեմադրել է Բագրատ Այվազյանի «Սասունը այրվում է» պիեսը՝ մի անգամ ևս հավաստելով, որ ավելի քան քառասուն տարի անց էլ նրանում շոշափված հարցերն իրենց արդիականությունը ճեպինում, Սենտ Անտուանում, Փոն Դը Շերում:

Թրագոչն իբրև դրամատուրգ անդրադարձել է հայ ժողովրդի հերոսական պայքարի անցյալին, վերակենդանացրել այն: Նրա գրած մեծ ու փոքր պիեսներից առավելապես հետաքրքրական են «Հայրենասեր հերոսուհին»՝ Հինգ և «Ցեղիս վրեժը» (Ցեղիս վրեժը լուծեցի) չորս գործողությամբ դրամաները:

Առաջին պիեսը ներկայացվել է 1952-ին: «Հայ ժողովրդի անցյալի տառապանքներն ու հերոսական դիմադրական ոգին» ներկայացնող «Հայրենասեր հերոսուհին» խաղացվել է նաև 1965-ին, Լիոնում, Մեծ եղևունի 50-ամյակի տարելիցին: Հիմնական դերակատարները եղել են՝ Թրագոչը, Նվարդ Մատոյանը, Նազարեթ Պշտիկյանը, Մ. Բեշիշյանը:

Հարազատ ժողովրդի կրած սարսափների տեսարաններ են պատկերվել նրա «Ցեղիս վրեժը» պիեսում, ուր խոսվում է տարագրության նախօրյակին, բուն տարագրության ու հետ տարագրության օրերի մասին, մինչև վրեժի առման պահը և հետագա օրերը:

Հայագգի երիտասարդներին ձերբակալելու նկատառումով, Օսման փաշան պատանդ է վերցնում Մուրատի սիրած աղջկան, որ-

պեսզի այդ միջոցով կարողանա հասնել իր նպատակին: Պիեսի հերոսը՝ Մուրատը ֆաքիրի տեսքով մտնում է փաշայի ապարանքը՝ իր շնորհքը ցուցադրելու: Եվ ցույց է տալիս: Ֆաքիրական հնարամտությունները ցուցադրելուն զուգահեռ, նա սպանում է փաշային և ազատում իր հարսնացու Սիրվարդին:

Թրագոշի «Ցեղիս վրեժը» պիեսը բեմադրվել է 1965-ի ապրիլի 10-ին, Լիոնում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առթիվ: Գլխավոր դերակատարներն են եղել՝ Եյուդեկյար (Գևորգ Չուլճյան), Բրաբիոն Տապաղյանը, Թ. Սալլապաշյանը, Գևորգ Պառավյանը, Եսայի Գարամանյանը, Հակոբ և Հովհաննես Պետրոսյանները, Ա. Գասպարյանը, Վ. Սահակյանը և ուրիշներ<sup>1</sup>:

Ցեղասպանության շարունակության մի ուրիշ թեմա է շոշափել ամերիկահայ թատրոնի դերասանուհի և հասարակական գործիչ Արշալույս Գուլումճյանը (պատմագրական աշխարհին լավ հայտնի Վահան Քյուրքճյանի աղջիկը): Նա օտարության մեջ հայերի անապահով բեկորների ձուլման ահազանգն է հնչեցրել:

Հայրենի հողից ու տնից զրկված, ընտանիքը կորցրած հայ կնոջ անտանելի վիճակը նրա հերոսուհուն՝ Ջարուհուն դարձրել է հայրենակիցների նկատմամբ անտարբեր անձնավորություն: Նա ուզում է օտար շրջանակներում երջանկություն որոնել:

Այս տխուր երևույթը մասամբ կասեցնելու նպատակով է Գուլումճյանը գրել «Օտարացած հայուհին» վերնագրով պիեսը, ուր բնութագրել է իր օրերի ամերիկահայ կյանքն ու կենցաղը: Սրտի ցավով նրա գրած այս պիեսը բեմադրվել է 1935-ի հունիսի 20-ին, Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցու սրահում: Բեմադրությունը մասնակցել են միայն կանայք ու օրիորդներ:

Նոր սերնդին օտարամոլությունից հետ պահելու հեղինակային գաղափարը հիմնականում դրսևորվել է Ջարուհու կերպարը ներկայացնող հեղինակ-դերասանուհի Արշ. Գուլումճյանի խաղում: Նրա Ջարուհին հոր մահվան լուրն ստանալուց հետո է «ուշքի» եկել և սկսել պայքարել իր անձի գոյության համար: Գուլումճյանի խաղը նկերներից են եղել՝ տիկ. Թ. Գոստիկյանը – Ֆլորենց, օր. Ա. Սաղրյանը – Սիսելիա, տիկ. Վ. Նահիկյանը – Աննա մորաքույր և ուրիշներ<sup>2</sup>:

Մեծ եղևունի 50-ամյակի շրջանում (1965) Հայոց ցեղասպանության թեման նորանոր արտահայտություններ է հրապարակ բերել:

<sup>1</sup> Ջարենցի անվան զրականության և արվեստի թանգարանի թատերական բաժին, Թրագոշի ֆոնդ:

<sup>2</sup> Հայաստանի կոչնակ (Նյու Յորք) 1935, № 33, էջ 785:

Այդ աշխատանքներից մեկը եղել է Մուսա լեռան հերոսամարտի փառաբանումը հայ դրամատուրգիայում: Մուսալեռցի գրող-դրամատուրգ Հակոբ Թորոսյանն ի թիվս այլ գործերի, գրել է նաև «Հայ եղեռնը և Մուսա լեռան հերոսամարտը» վերնագրով հինգ գործողությամբ դրաման:

Փոքր տարիքում ակննատես ու մասնակից լինելով մուսալեռցիների հերոսական պաշտպանությանը, նա իր տեսածն ու լսածը ցեղասպանությունը դատապարտելու նյութ է դարձրել: Պիեսը 1966-ին տպագրվել է Բեյրութում, իր «Թատերգությունների» առաջին գրքում:

Թորոսյանի «Հայ եղեռնը և Մուսա լեռան հերոսամարտը» պիեսում ծավալվող գործողությունները կատարվել են 1914-1915 թթ.: Առաջին արարվածում գործողությունը տեղի է ունենում գերմանական դեսպանատանը Կ. Պոլսում, երկրորդում՝ Մուսա լեռան մի գյուղական Մուխթարի տանը, երրորդում՝ Տեր-Աբրահամի բնակարանում, չորրորդում՝ 1915-ի ամռանը Թուրքիայի Ներքին գործոց նախարարության դահլիճում, հինգերորդում՝ Արևելյան հիվանդանոցում:

Պիեսում որպես գործող անձեր հանդես են բերված՝ Պոլսո գերմանական դեսպան Ֆոն Վանկրնհայմը, թուրքական բանակի գերմանական մարզիչ Ֆոն Սանտերսը, Թուրքիայի ռազմական նախարար էնվեր փաշան, Թուրքիայի Ներքին գործոց նախարար Թալեաթ փաշան, դոկտոր Լեփսուսը (բոլորն էլ իրական-պատմական անձնավորություններ), Մուխթարը, նրա խնամի Հովհանը, կինը՝ Շուշանը, որդին՝ Վարդանը, Հովհաննեսի որդի Առաքելը, աղջիկը՝ Վարդուհին (Առաքելի նշանածը), Եղուս Օլուք գյուղի քահանա Տեր-Աբրահամը, հայոց սպանդի գլխավոր կազմակերպիչ Պեհլիստին Շաքիրը, հերոսամարտի հերոսներից՝ Եսային, քաջ լուզորդ Գրըրգյանը, Մուսա լեռան զանազան գյուղերի մեծավորներ, կալանավոր հայ հեղափոխական, թուրք կալանավոր և ուրիշներ:

Ինչպես տեսնում ենք, հեղինակի ասելիքն այնքան շատ է, որ դժվարացել է սեղմել նրա բովանդակությունն ու թեթևացնել գործող անձանց քանակը: Թերևս մեծաքանակ գործող անձերի առկայության պատճառով է, որ ռեժիսորները չեն ձեռնարկել նրա բեմադրությունը: Բոլոր դեպքերում, մեզ անհայտ է նրա որևէ բեմադրության պատմություն: Այսուամենայնիվ, Թորոսյանի գործն իբրև ականատես-վկայի դիտարկում ու եզրակացություն, որպես ազգային դրամատուրգիայի արձագանք, այն էլ հերոսամարտից 50 տարի

անց, իր առանձնահատուկ տեղն ունի մեր դրամատուրգիայի, մասնավորապես ցեղասպանութւյան դեմ գրված գործերի պատմութւյան մեջ:

Թորոսյանը ցեղասպանութւյան թեմային նվիրված մի պիես էլ մանկապատանեկան թատրոնի համար է գրել: Պիեսի վերնագիրն է «Ծույլ Մեսրոպը», որը նույնպես տպագրվել է նրա «Թատերգութւյուններում»:

Դպրոցական Մեսրոպը ծույլ է, դասերը լավ չի սովորում: Մի անգամ էլ, երբ հոգնած է լինում, քնում է: Երազում տեսնում է թե ինչպես պապն իրեն համար գիրք է կարդում հայոց պատմութւյունից: Այդ ժամանակ նրանց բնակարանն են ներխուժում թուրք ոստիկանները, գիրքը խլում նրա ձեռքից ու պապին տանում: (Երագի գործողութւյունները կատարվում են նույն սենյակում):

Անսովոր երազից Մեսրոպն արթնանում է, զգաստանում և որոշում է անպայման լավ սովորի հայոց պատմութւյունը:

«Ծույլ Մեսրոպի» բեմական պատմութւյունից մեզ հայտնի են երկու բեմադրութւյուն իրանահայ թատրոնում: Առաջին բեմադրողը եղել է դերասանուհի-ռեժիսոր Կիտուշ Արզուլյանը (1981), իսկ երկրորդը՝ դերասան-ռեժիսոր Նորիկ Աբուլյանը (1983):

Դեռևս 1920-ական թթ. կեսերից նոր թեմա է շրջանառութւյան մեջ մտել հայ դրամատուրգիայում և թատրոնում: Այս թեմայի խորքում ընկած է Հայրենաբաղձութւյան հարցը, հատկապես այն սերնդի միջավայրում, ովքեր հայրենիք էին կորցրել: Այդ թեման ստացել է նոր անուն՝ ներգաղթ: Ցավոք, վերջին տասնամյակներում էլ երևան է եկել դրա հակադարձը՝ արտագաղթ, որը նույնպես բեմական կյանք է մտել:

20-րդ դարում ներգաղթի երեք շրջան է եղել՝ 1920-ականի, 1930-ականի, առավելապես (մասսայականը) 1940-ականի կեսերին: Եթե առաջին երկուսի ժամանակ ներգաղթել են միայն եվրոպական երկրներից, ապա երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, նաև Իրանից, միջինարևելյան երկրներից, Եգիպտոսից: Ներգաղթից բացի, ուսանողական հոսք է սկսվել սփյուռքից Երևան: Նրանցից ոմանք հիմնավորվել են Հայաստանում:

Սփյուռքի հայութւյանը մայր հայրենիքի հետ կապելու կարևոր օղակներից մեկը եղել է թատերական գրականութւյունը և բեմական արվեստի միջոցով խրախուսվել այդ նախաձեռնութւյունը:

Ներգաղթ-հայրենադարձութւյան թեմայով առաջին պիեսը գրվել է դեռևս 1920-ականի սկզբներին, երբ Հայաստանի հանրապետութւյան ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը երկրից-երկիր անցնելով կազմակերպում էր այդ շարժումը:

Հենց այս առնչությամբ, փարիզահայ դրական-հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը գրել է իր «Հրաշք» վերնագրով դրաման (1923), հիմքում ունենալով արտասահմանի հայությանը Հայաստանի հետ կապելու գաղափարը: Պիեսը ժամանակին չի բեմադրվել (տվյալ չունենք), բայց և չի մոռացվել: Այն բեմական կյանք է ստացել սլաոներազմի ավարտից հետո, 1946-ի դեկտեմբերին, զանգվածային հայրենադարձության շրջանում: Բեմադրել է փարիզահայ թատրոնի դերասան Խաչիկ Փափազյանը:

Հայրենադարձության երկրորդ շրջանի նոր գործը եղել է հայ թատրոնի և ռուսական ու ֆրանսիական (համր) ֆիլմերի դերասան Աշո Շահխաթունու (Արշավիր Շահխաթունյան) «Առաքել աղա» դրաման: Ինքը՝ Շահխաթունին, կամավորական շարժման մասնակից, Հայաստանի առաջին հանրապետության ժամանակ Երևանի սլաոն, այնուհետև գաղթական դերասան, միշտ էլ զգացել է հայրենիքի կարոտը: Տասնամյակներ անց, ի սլաոստիսան իր փարիզյան խողընկեր դերասան Արման Կոթիկյանի վերադարձի կոչի, նա ցավով հայտնել է, որ երբ իր ուժերի ծաղկման շրջանում չի կարողացել հայրենիքին օգտակար լինել, ապա հետագայում էլ՝ առողջութունը կորցրած, չի ցանկացել բեռ դառնալ:

«Առաքել աղան» ամբողջովին ներգաղթի թեմայի, Առաքել աղայի աղջկա՝ Անահիտի Հայաստան փոխադրվելու մասին է: Նրա բեմադրությունն էլ անմիջականորեն առնչվում է հայրենադարձությանը: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել Սևրի Մուրատյան վարժարանի Պեչիկթաշլյան թատերասրահում, 1936-ի մարտի 15-ին, հեղինակի բեմադրությամբ ու մասնակցությամբ: Ներկայացումը նվիրված է եղել թատերախմբի դերասաններ Անահիտ Դատյանի և Արման Կոթիկյանի՝ Խորհրդային Հայաստան մեկնելուն: Նրանց հետ Հայաստան է եկել նաև դերասան, «Կավոռ» երգիծաթերթի խմբագիր Երվանդ Թոլայանը: Առաջին երկուսն աշխատել են Երևանի Սունգուլյանի անվան թատրոնում, իսկ վերջինը զոհ է գնացել 1937-ին:

«Առաքել աղայի» գործող անձերն ու նրանց դերակատարներն են եղել՝ Առաքել աղա - Ա. Շահխաթունի, Զարուհի - Ադրինես Տերուան (Պիննեմեճյան), Անահիտ - Անահիտ Դատյան, Տատ - Անգլինե Սվաճյան, Օննիկ - Միսակ Սուրենյան, Ա. Ազգային - Երվանդ Թոլայան, Բ. Ազգային - Գրիգոր Լաքթա, Գ. Ազգային - Օննիկ Սանճազ, Կարոյան - Արման Կոթիկյան, Շիրինյան - Հակոբ Լաթիֆյան, Հայրապետ - Ա. Սարաֆյան, Ֆրանսուհի - Մատրլեն Տյորե (Օդեոնի թատրոնից):

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին մոտ, Շահխաթունին գրել է իր երկրորդ պիեսը՝ «Հայրենիքը զոզանջում է» չորս գործողություն ղրաման՝ նվիրված ժամանակակից կյանքին: Պատերազմի տարիներին հայ և ռուս համախոհների համագործակցություն պատմությունն է օտար երկրում: Թերևս ինքնակենսագրական բնույթ ունի և կապված է հեղինակի՝ կամավորական ջոկատների գործունեություն տարիների զինվորական ծառայություն հետ:

Այս պիեսը ևս բեմադրվել է հեղինակի կողմից, որը միաժամանակ կատարել է դեդապետ Ամատունու դերը: Առաջին անգամ ներկայացվել է 1945-ի ապրիլի 23-ին, Հայ ազգային ճակատի Փարիզի հայ ազգային թատերախմբի ուժերով: Մասնակիցներից են եղել՝ Հայր Ամատունի - Վաղինակ Ալթունյան, Արմենուհի - Սիրուհի Նշանյան, Լիզա (իբր ռուս ընկերուհին) - Ա. Էքիզյան, Վասիլի - Վահրամ Սվաճյան, Սանահայր Գաբրիել - Պ. Պոտոյան, Պիծա (բիճա) Մկրտիչ - Նազարեթ Պշտիկյան, Թատրոնի տնօրեն - Վահրամ (Սվաճյան), Ճաշարանի Գարսոնը - Ե. Հասակունի, բժիշկ - Մ. Իշլեմեճյան, Վալուտիա - Գրիգոր Տերվիշյան, Պաղտասարով - Հասկեյան, Ունան (ծառա) - Սիսակ Սուրենյան, Ղազար - Մանուկ Մանպաշ (Պաշտպետություն), դայակ Մարիամ - Քնար (Ազնավուրյան), փոքրիկն Վահե - փոքրիկ Ս. Մ., Ա. սպա - Մինելյան, Բ. սպա - Հ. Պոյաճյան, զթուլթյան քուլը - տիկ. Պոտոյան:

Շահխաթունին իր «Հայրենիքը զոզանջում է» պիեսը Փարիզի Հայ ազգային դրամատիկ թատերախմբի դերակատարների որոշ փոփոխումով, 1945-ի օգոստոսի առաջին կեսերին հյուրախաղային շրջագայություն է տարել Ֆրանսիայի հայաշատ մի շարք քաղաքներ: Երջապտուլտի կազմակերպիչն է եղել հասարակական գործիչ Մելինե Մանուչյանը՝ Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուչյանի այրին:

Խմբի առաջին կանգառը տեղի է ունեցել օգոստոսի 5-ին, Մարսելում: Այնուհետև ներկայացվել է Պոմոնում, Սենթ-Անտուանում, Վալանսում, Գրենոբլում, Լիոնում և Տեսինում: Նոր դերակատարների թվում են եղել՝ Արտաշես Գմբեթյանը - Վասիլի, Ռուբեն Տեր-Ասլանյանը - բժիշկ, Սիսակ Սուրենյանը - Վալուտիա, Շ. Սինանյանը - Պաղտասարով, Ա. Էքիզյանը - Գթուլթյան քուլը, օր. Խշտոյանը - փոքրիկ Վահե:

Ամենուրեք մեծ ընդունելություն է գտել բեմադրությունը:

Վալանսի ֆրանսիական մամուլում, օրինակ, ըստ Փարիզի «ժողովուրդ» թերթի արձագանքի, ներկայացման առթիվ գրվել է, որ այդ օրը գրեթե ամբողջ վալանսահայությունը հավաքվել է Քաղա-

քապետարանի թատրոն: Պրեսոնում շոշափված դադափարախոսության մասին այն միտքն է հայտնվել, որ «այս թատերախաղը հայրենիքի սերը կարտահայտե և միևնույն ժամանակ Սովետական Հայաստանի մեջ կատարած վերելքն ու շինարարությունը կարտահայտե և կմաղթե վերադարձը դեպի Հայրենիք, իր զավակին քով»: Այս վերջին ակնարկը վերաբերում է հենց իրեն՝ պիեսի հեղինակ Արշավիր Շահխաթունուն, որը հայրենիքում որդի է ունեցել:

Հետպատերազմյան շրջանի Փարիզի դաղթականական կյանքի առօրյային է նվիրված եղել Հրաչ Տարոնյանի «Հայրենիքն հևոու» չորս գործողությամբ պիեսը, որը բեմադրել է Կոմեդի Յրանսեզի նախկին դերասան Հայկազուն Բագրատունին (Բագրատիդ): Ներկայացումը տեղի է ունեցել 1946-ի մայիսի 12-ին Փարիզի հայ թատերախմբի ուժերով, Սալ դը Լա Շիմիում: Դերակատարներն են եղել Լևոն (նախկին ուսուցիչ) – Հ. Բագրատունի, Հարություն (տղան) – Նուրհան Մարգարյան, Հերմինե (աղջիկը) – Աիդա Ազնավուրյան, Հռիփսիմե (կինը) – Հասմիկ Քյուլթնեյան, Արմեն (Հերմինեի նշանածը) – Գեորգ Տերվիշյան, Աննիկ (Արմենի մայրը) – Քնար Ազնավուրյան, Օննիկ (Արմենի հայրը) – Վաղինակ Ալթունյան, Raoul – Հարություն Հրաչյան:

Դերակատարների այս ցանկը ցույց է տալիս փարիզահայ թատերախմբերից մեկի դերասանական կազմի ակնառու ուժերի մասնակցությունը, որն էլ ապահովել է բեմադրության հաջողությունը:

Ներգաղթի երկրորդ և երրորդ շրջաններին է վերաբերում եգիպտահայ գրող, դրամատուրգ, երգիծանկարիչ Գառնիկ Սվազլյանի «Ներգաղթ» վերնագրով դրաման: Պիեսի վերնագիրն արդեն բացահայտում է նրա բովանդակությունը: Առաջին և երկրորդ գործողությունները կատարվում են 1935-ին, Փարիզում, իսկ երրորդը՝ հայրենիքում: Հեղինակն իր պիեսը գրել է ճիշտ ժամանակին, երբ բավականաչափ ֆրանսահայեր էին ներգաղթում Հայաստան:

Պրեսոնում պատկերված է գործազուրկ հայ գաղթականի անապահով կյանքն օտարության մեջ: Փրկության միակ ելքը հայրենիք մեկնելն է, նրա վերաշինությունը մասնակցելը, մի թեմա, որը ժամանակին շատ է խորախուսվել հենց ֆրանսահայ մամուլում: Երևանի շրջակայքում Արևմտյան Հայաստանի տեղանուններով ավանների մի մասը, որ կամաց-կամաց ձուլվել է քաղաքին, Յրանսիայից ներգաղթած և ֆրանսահայության օժանդակություններ է կառուցվել:

Սվազլյանն իր դեպերումներից հետո հաստատվելով Ալեքսանդրիայում, հետաքրքրվել է Հայաստանի կյանքով: Մամուլի և այլ մի-

ջոցներով նա ծանոթացել է ինչպես ֆրանսահայության, այնպես էլ Հայաստանի տնտեսական վիճակին և իր պիեսով խրախուսել ներգաղթի քաղաքականութունը:

«Ներգաղթը» պիեսի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1944-ի դեկտեմբերի 17-ին, Ալեքսանդրիայի «Սեան» ընկերություն կողմից, թատրոն Լիսե Ֆրանսեում: Բեմադրության ղեկավարն է եղել եգիպտահայ թատրոնի բազմադրյուն դերասան և ռեժիսոր Օննիկ Վոլթերը (Գալֆայան), որը միաժամանակ կատարել է ընտանիքի հոր՝ Տիգրան Սարաֆյանի դերը: Նրա խաղընկերներն են եղել՝ Պեթրիս Վոլթերը - Մարի (կնոջ), Հ. Տեփանյանը - Գեղամ Սարաֆյանի (եղբոր), Լ. Փաթթաճյանը - Սիրանուշյի (Գեղամի նշանածը), Հայկ Ճիզմեճյանը - Դոկտոր Սիմոնյանի, Հայրապետ Ճիզմեճյանը - Գործարանի հսկիչի, Գ. Մանուկյանը - Մուշեղի, Ս. Մահսերեթյանը - Կարմիր խաչի բժշկի դերերում և ուրիշներ:

«Ներգաղթն» այնուհետև, իբրև հրաժեշտի ներկայացում, խաղացվել է 1946-ի նոյեմբերի 16-ին: Այս պիեսի մի բեմադրություն էլ իրագործվել է Հալեպում, ներկայացվել է Սինեմա Օրիենթալում:

Հեղինակի և եգիպտահայոց առաջնորդ ու Ներգաղթի կենտրոնական կոմիտեի նախագահ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի նախաձեռնությամբ «Ներգաղթը» բեմ է հանվել նաև 1947-ի ապրիլի 11-ին, Կահիրեի Էգպիքիեի թատրոնում «Սիփան» միություն թատերասիրաց խմբի մասնակցությամբ: Ներկայացման ամբողջ հասույթը հատկացվել է ներգաղթի ֆոնդին:

Սվազլանի «Ներգաղթ» պիեսի՝ Կահիրեի բեմադրության մեջ գլխավոր դերերի կատարմամբ հանդես են եկել 1944-ին Ալեքսանդրիայում տրված ներկայացման մասնակիցները և ուժեղացրել տպավորությունը: Կահիրեի բեմադրության մյուս դերակատարներն են եղել՝ Մ. Թուխմանյանը - Զվարթ (Սարաֆյանի աղջիկը), Ա. Չատրճյանը - Հակոբիկ (աղան), Բ. Ճիզմեճյանը - Այրի Սարաֆյան (մայրը), Գ. Թուխմանյանը - Գեղամ Սարաֆյան (եղբայրը), Ա. Փապուճյանը - Սիրանուշյ, Մ. Շատախյանը - Նուպար, Գ. Դավիթյանը - Դոկտոր Սիմոնյան, Ա. Մանուկյանը - գործարանի հսկիչ, Լ. Ճիզմեճյանը - Մուշեղ, Դավիթյանը - Արմենակ, Վ. Քիթապճյանը - Արշակ, Հ. Պալյանը - բնակավարչության ներկայացուցիչ, Հ. Դավիթյանը - Կարմիր խաչի բժիշկ և ուրիշներ:

Տարիներ անց, Սվազլանի «Ներգաղթ» պիեսը մի բեմադրություն էլ Երևանում է ունեցել: Երևանի «Սփյուռք» թատերախմբի ուժեքով, 1994-ին այն բեմադրել է թատերագետ Լուիզա Սամվելյանը, որը ծնողների հետ Երևան էր ներգաղթել 1936-ին, Ֆրանսիայից:

Ներգաղթի, կարոտի, հայրենաբաղձության թեմայով պիես են

գրել նաև արևմտահայ ծագումով դրամատուրգ Արամ և Աշոտ Պապայանները: Նրանց գրածը «Բախտավորները» (կամ «Բախտավորյալների ընտանիքը») մեկ գործողությունը կատակերգություն է, որը 1948-ին մեկ գործողությունը պիեսների Համամիութենական մրցույթում (Մոսկվա) առաջնություն է չահել և 1949-ին տպագրվել «Բախտավորների ընտանիքը» վերնագրով:

Այս պիեսի թեման շատ սյարզ է: Հայրենասեր Լևոնը ներգաղթելով Հայաստան, որոնում ու գտնում է իր մանկության ընկեր Փանոս Ասլանի Բախտավորյանին, որը հայրենիքում բախտավոր կյանքով է ապրում: Հեղինակներն այս պիեսը գրել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ աշխարհում պատերազմից հոգնած մարդիկ խաղաղ կյանքով ու աշխատանքով էին ապրում: Էլ ինչի՞ չպետք է բախտավոր լինեին:

Հայրենագարձություն<sup>6</sup> են թե արտագաղթ, մոտավորապես այսպիսի Հարց է դրված դերասան-դրամատուրգ-ռեժիսոր Կարպիս Ֆեսչյանի և արձակագիր-դրամատուրգ Հովհաննես Ղուկասյանի «Գնա՞նք թե մնանք» կատակերգության հիմքում: Հեղինակները՝ երկուսն էլ տարբեր տարիների սփյուռքից ներգաղթել են Մայր Հայրենիք՝ առաջինը Ռուսիայից, երկրորդը՝ Իրանից: Զբաղվել են իրենց նախասիրած աշխատանքով՝ թատրոնում և գրականության մեջ:

Բայց ահա, 1990-ական թվականների աշխարհափոխության տարիներին արտագաղթել են Ամերիկա և շարունակել իրենց համատեղ գործունեությունը: Ասում ենք համատեղ, քանի որ երևանյան տարիներին միասին գրել են «Ասողին յսոյ է պետք» պիեսը, որը Ֆեսչյանի բեմագրությունը խաղացվել է 1989-ին: Ամերիկա փոխադրվելուց շատ չանցած, նրանք գրել են «Գնա՞նք թե մնանք» երկփեղկված բովանդակությունը կատակերգությունը, որի հիմքում ընկած է ներգաղթի ու արտագաղթի դժվարին հարցը: Այս կնճոռտ Հարցը Հավանաբար վերարերում է նաև հեղինակներին, արտահայտում նրանց հոգեբանական ներքին պայքարը՝ ճի՞շտ են վարվել թե սխալվել են: Մի զգացողություն, որ շատերի հետ է պատահում արտագաղթողների շրջանում: Ինչ որ է, ամեն մարդ իր գլխի տերն է...

Պիեսի հեղինակները լուծում չեն տվել գնալ-մնալու հարցին, ամեն ինչ թողնելով հանդիսատեսի սեփական դատողությանը՝ ճի՞շտ են վարվել, որ արտագաղթել են, թե՞ հիասթափվել են: Որքան էլ այս բախտորոշ խնդրին գավեշտական ընույթ են տվել բեմագրության մեջ, այնուամենայնիվ, օգրերգական երանգը դառն նոսրվածք է թողել նրանց հոգեբանության մեջ, դարձել Համիտյան Հարց՝ «Գնա՞նք թե մնանք»:

«Գնա՞նք թե մնանք» պիեսը Կ. Ֆեսչյանի բեմագրությունը ներ-

կայացվել է 1994-ի մարտին, Լոս Անջելեսի «Երգիծանք» թատերախմբի ուժերով, որոնց մի մասը եղել են արտագաղթողներ: Այս պիեսի բեմադրության դերակատարներից են եղել՝ Հովհաննես Ղուկասյանը, Անժելա Ֆեսչյանը, Լուսինե Ֆեսչյանը, Վրեժ Հակոբյանը, էլինա Ալեքսանդրյանը, Հովհաննես Ֆեսչյանը, Մարիամ Հակոբյանը, Տիգրան Ղազարյանը<sup>1</sup>:

Վերջին տասնամյակներում ներգաղթ-արտագաղթի երևույթը հաճախակի դառնալով, մեր դրամատուրգներին թելադրում է նրա առաջն առնելու համար պիես գրել ու բեմից կոչ անել՝ ո՞ւր եք գնում, ձեր բնիկ վայրերն ինչո՞ւ եք լքում: Այս թեմայով գրված պիեսների թվին է պատկանում նաև բեյրութահայ գրող-խմբագիր-դրամատուրգ Համբիկ Մարտիրոսյանի «Հրեշտակների մայրաքաղաքը» պիեսը, որի մեջ պատկերված է և՛ սփյուռքից, և՛ Հայաստանից արտագաղթածների վիճակը Լոս Անջելեսում: Պիեսի մի բեմադրությունն էլ տեղի է ունեցել Հենց Հրեշտակների մայրաքաղաք Լոս Անջելեսում: Հեղինակի փափագն է, որ մարդիկ չլքեն իրենց տունն ու տեղը և հեռանան հայությունից, իսկ եթե գնում են՝ ապա Հայաստան մեկնեն:

Արարական անապատներում և այլ վայրերում ծնողներ ու հարազատներ կորցրած մարդիկ, որոնց համար կսկծալի հուշեր են իրենց մերձավորների գազանաբար սպանություններն ու անպատիժ մնալու ցավը, ստիպված են եղել նրանց հիշատակն անմար պահելու համար գրիչ վերցնել և ով ինչպես կարող է, կամ ինչ անպատմելի տեսարանի մասին լսել է փրկվածներից, պիեսներ գրել: Այդ իրադարձությունների կենդանի վերապատումը միայն թատրոնում է լինում: Եվ, որպեսզի հավաստի լինի նրանց պատկերած կյանքը, գործողություն վայրը կամ վայրերը, գործող անձերից պլխավորները ներկայացվել են ստույգ ճշմարտությունը:

Այդպես է վարվել նաև լիբանանահայ մտավորական Հովհաննես Մումճյանը, իր պիեսի վերնագիրը դարձնելով ուղղակի՝ «Տեր Զորի արհավիրքը»: Այս ցնցող վերնագրով ողբերգությունը բեմական կյանք է ստացել Բեյրութի Գերմանիկ սրահում, Մարաշի հայրենակցական միությունից հովանավորությամբ: Առաջին ներկայացումը կայացել է 1955-ի ապրիլի 23-ին և կրկնվել մայիսի 1-ին: Բեմադրությունն իրագործել է Հայ Կաթողիկէ Երիտասարդաց միությունից թատերախումբը, դերասան և ռեժիսոր Դավիթ էվերեկյանի ղեկավարությամբ<sup>2</sup>:

<sup>1</sup> Նավասարգ (Գլենդել) 1994, № 140:

<sup>2</sup> Դավիթ Յ. Էվերեկյան, Թատերահուշեր և նյութեր լիբանանահայ թատրոնի պատմության, Բեյրութ, 1971, էջ 61-62:

«Տեր Զորի արհավիրքը» պիեսի բեմադրութիւնը զուգադիպել է այդ արհավիրքներից փրկվածների հոգեկան աշխարհի անհանգստութեանը՝ ժամանակակից քաղաքական կյանքի վայրիվերումների անկայուն ժամանակաշրջանում: Բեմադրութեան մեջ զբաղված են եղել՝ Դ. Էվերեկլյանը (Սալիի Զեքի), Էլիզ Պղտիկյանը, Գասպար Էվերեկլյանը, Գարեգին Փանոսյանը, Կիրակոս Պաղտիկյանը, Մովսէս Վարուժեանը, Աբրահամ Բեհեյանը, Մանուէլ Բեշիշյանը, Դանիել Ներսիսյանը, Հարութիւն Տեր-Պետրոսյանը:

Մումճյանի «Տեր Զորի արհավիրքը» մարաշցիների Գերմանիկ թատերասրահում երկրորդ անգամ բեմադրվել է 1957-ի ապրիլի 24-ին, ի հիշատակ ապրիլյան զոհերի ոգեկոչմանը: Այս բեմադրութեան մասնակիցներից են եղել՝ Գարեգին Փանոսյանը, Գ. Բեշիշյանը, օր. Սրբուհի Տոնապետյանը, Հակոբ Նոխուտյանը, Մ. Ալաճաճյանը, Մանուէլ Պաղտատյանը, Հովհաննէս Զերքեզյանը և ուրիշներ:

Դավիթ Էվերեկլյանը կրկին «Տեր Զորի արհավիրքը» պիեսի բեմադրութեանն է անդրադարձել նաև 1973-ի ապրիլի 25-ին: Այս անգամ ներկայացումը նա պատրաստել է հիմնականում սասունցիներից կազմած Սասունյան թատրոն նոր խմբով:

Հայոց Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի (1965) շրջանում, երբ Խորհրդային Միութեան արտաքին ու ներքին քաղաքականութեան մեջ գերիշխում էր եղբայրութեան և բարեկամութեան գաղափարախոսութիւնը, տեղի ունեցավ անսպասելի ցանկալին: Զարթոնք ապրող Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայրենասեր երիտասարդութիւնը, ազգային ինքնագիտակցութիւնը վեր հանող ուսանողութիւնն իրենց կազմակերպած ցույցերով ու ելույթներով բարոյական մեծ դեր խաղացին մեր ժողովրդի կրած տառապանքների կազմակերպիչների ու կոտորածներ կիրառողների հեղինակների արարքները հրապարակայնորեն դատապարտելու և պահանջատիրութեան հայտ ներկայացնելու օրինական հարցում:

Երևանի Թատերական հրապարակում սկսված ցույցերը հասան իրենց բարոյական նպատակին՝ վերջնականապես ճանաչում գտավ և դատապարտվեց Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը: Հայաստանում և Ղարաբաղում ծնունդ առած այդ շարժման կազմակերպիչներից ոմանք ձերբակալվեցին կարճ ժամանակով և ազատ արձակվեցին, իսկ զարաբաղցիներից՝ գրող-պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը և ուրիշներ հասցրին փոխադրվել Երևան:

Հայոց ցեղասպանութեան թեմայով ազատ խոսելն ու գրելը քա-

ղաքացիական իրավունք ստանալով, սկսվեցին գեղարվեստական միջոցներով արտացոլել այդ ոճրագործության առանձին դրվագներ:

Անցյալի դառնադեմ եղելու թյուրեմներից մի պատկեր գրի առավ 1915-ի փախստական որբերի սերնդի ներկայացուցիչ, գրող Հրաչյա Քոչարը (Գաբրիելյան): Նրա գրած «Կարոտ» վիպակի մի քանի բեմականացումներ տեղ դտան պետական և ժողովրդական թատրոններում, ռադիոթատրոնում և Հայֆիլմում: Որոշ տարիներ անց, «Հայֆիլմը» նկարահանեց նրա նաև «Նահապետ» կինոֆիլմը նույն՝ ցեղասպանության թեմայով:

Ո՞րն է «Կարոտի» շարժիչ ուժը: Մեծ եղեռնի ժամանակ «էրգրից» գաղթած Առաքել էլոյանն ընտանիքով բնակուլթյուն է հաստատել Խորհրդային Հայաստանում, Արաքսի առափնյա գյուղերից մեկում: Անցնում են տարիներ, բայց «էրգրի» կարոտը՝ ծննդավայրը, ծնողների՝ անտեր մնացած գերեզմաններն Առաքելին հանգիստ չեն տալիս: Ու նա, մի խաղաղ գիշեր, առանց ընտանիքի անդամներին տեղյակ պահելու, անցնում է Արաքսը և սար ու ձոր կտրելով հասնում է իր ծննդավայրը, հանգիստում գեռևս իրեն հիշող տարեց քրդերի: Նրանց մոտ ապրող մի համր հայուհու ուղեկցությամբ գնում, գտնում է իրենց ավերակ տունը: Մի կուշտ լալիս է, ծնողների կարոտն առնում է նրանց մամուակալած տապանաքարերից ու վերադառնում հարազատների մոտ:

Առաքելի անհայտանալը քաղաքական արձագանք է ստանում, մեղադրվում է լրտեսության մեջ: Պետական մարմինները ձերբակալում են նրան իբրև քաղաքական հանցագործ, չարչարում: Աքսորի ճանապարհին, զնացքի վագոնում ինքն իրեն կախում է:

Իսկ դեռ որքան այգալիսի կարոտյալներ կային Հայաստանում, Անդրկովկասում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում և ամբողջ սփյուռքում: Ինչ կարոտով էին հիշում Բաքվի մեր հարևան արևմտահայերն իրենց վայրերը և ինչպես էին պահպանում իրենց ազգագրական-կենցաղային սովորությունները:

Սովորաբար ասվում ու գրվում է թե 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ մեկ ու կես միլիոն հայ է զոհվել: Իսկ ո՞վ է հաշվել աքսորի ու գաղթի ժամանակ ճանապարհների մահացածներին, թուրքերի ու քրդերի ձեռքից ազատվելու համար իրենց գետը նետած խեղդվածներին, համաճարակներին ու հիվանդություններին զոհ զնացածներին, անապատներում մերկ ու քաղցած անհետ կորածներին, որբանոցներում աչքերը փակածներին: Եվ այս ամենը կատարվել է քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ: Այդ բոլորի վրա աչք փակելու և խուլ ձևանալու քաղաքականությունն այսօր էլ դեռ շարունակում է իր անտարբերությունը:

Ի՞նչ անուն տալ այսօրվա սիրիահայուլթյան վիճակին, որ չար ուժերը քարը-քարի վրա չթողեցին Հալեպի ու Դամասկոսի, Քեսապի և մերձակա վայրերի հայուլթյան դարավոր բնակավայրերում, ավերեցին սրբուլթյունները և հայերն ստիպված նորից գաղթի ցուպը վերցրին: Եթե ժամանակին, թեկուզ և մեր օրերում դատապարտվեր հայերի կոտորածը, այսօր էլ լինի միջինարևելյան երկրների տասնյակ հազարավոր քրիստոնյաների ու մահմեդականների չվերթը դեպի եվրոպական ու ամերիկյան երկրներ:

Կարոտն անբուժելի հիվանդուլթյուն է, վա՛յ նրան, ով վարակվի դրանով: Ահա, այսպիսի կարոտի էջերից մեկն է Հ. Քոչարի «Կարոտը»: Քոչարի «Կարոտն» առաջին անգամ պիեսի է վերածել շրջանային թատրոնների դերասան և դրամատուրգ Գևորգ Գևորգյանը: Նրա տարբերակով «Կարոտն» առաջին անգամ բեմադրվել է 1964-ի հունվարի 3-ին, Ապարանի ժողովրդական թատրոնում: Բեմադրողը եղել է նույնպես շրջանային թատրոնների դերասան և ռեժիսոր Մուսայել Գալոյանը:

Մեկ տարի անց, 1965-ի մարտի 8-ին, բանաստեղծ, դերասան և ռեժիսոր Գրիգոր Չալիկյանի բեմականացումով ու բեմադրուլթյամբ «Կարոտը» հաղորդվել է ռադիոթատրոնով: Այդ ներկայացման շունչն ու հոգին ամբողջովին կենտրոնացած էր Առաքել Էլոյանի դերակատար՝ դերասան Ժան Էլոյանի կատարման մեջ: Ժանը լինելով Առաքելի հայացքների ու գործողուլթյան մարմնավորողը, մասամբ էլ Առաքելի նախատիպերից մեկը, փայլում էր իր լեզվական (Մշո բարբառով) հարազատ կատարմամբ ու մեծ դպացմունքայնուլթյամբ:

Միջանկյալ նշենք, որ Չալիկյանի բեմականացումով ու բեմադրուլթյամբ 1965-ի նոյեմբերի 27-ին ռադիոթատրոնով հաղորդվել է Քոչարի նաև «Նահապետ» վիպակի առաջին կատարումը:

Գ. Գևորգյանի բեմականացումով «Կարոտը» խաղացվել է նաև Վեդիի (1966), Բերդի (1968, Տավուշի մարզ), Հրազդանի (1979), Դիլիջանի (1979) ժողովրդական թատրոններում, Ախուրյանի շրջանի Ոսկեհասկ գյուղական թատրոնում:

Անվանի կինոռեժիսոր Հենրիկ Մալյանը մտադրուլթյուն է ունեցել Քոչարի «Կարոտը» սցենարի վերածել ու բեմադրել Կինոդերասանի (այժմ՝ Հ. Մալյանի անվան) թատրոնում, բայց վերահաս մահը (1988) խափանել է իրագործումը: Մալյանի գործը շարունակել է նրա աշակերտ Գրիգոր Բաբայանը և նվիրել իր ուսուցչի հիշատակին (1990):

Մալյանի անվան Կինոդերասանի թատրոնում «Կարոտը» երկրորդ անգամ շնչառություն է ստացել 2013-ի մարտի 21-ից, նրա գեղարվեստական ղեկավար, ռեժիսոր Նարինի (Մալյանի դստեր) կողմից, որոշ վերանայումներով պահպանել՝ նախկին բեմադրության շունչը: Ներկայացման մեջ զբաղված են հին ու նոր դերակատարներ՝ Վարդուհի Ռուշանյանը, Լիզա Ազիզյանը, Լևոն Ղազարյանը, Կարինե Ոսկանյանը, Գևորգ և Քրիստինե Հովակիմյանները, Ասողիկ Աբաջյանը և ուրիշներ:

1965-ին թատերական կյանք է մտել Հ. Քոչարի մի փոքրիկ գործ ևս՝ «Ուսուցիչ» պատմվածքի բեմականացումը, որը կատարել է զբամասուրդ Ազատ Շահինյանը: Գործողությունը տեղի է ունենում 1915-ի ապրիլյան ձերբակալություններից հետո: Թուրքերենի ուսուցիչ Մեսրոպ էֆենդին հայ երեխաներին պատվիրում է չմոռանալ մայրենի լեզուն:

Ուսուցիչն անձամբ ծանոթ լինելով Թալեաթ փաշային, գնում է նրա մոտ, իր ղեղճությունը հայտնելու կատարվածի նկատմամբ: Նա հիշեցնում է փաշային, որ իրենք քիչ բան չեն արել Աբդուլ Համիդի գահընկեցության համար, խոսում Ջոհրապի, Վարուժանի, Կոմիտասի մասին: Թալեաթը սկզբում մեղմորեն շոյում է Մեսրոպ էֆենդու մատուցած ծառայությունները, ապա հեղհետե տաքացած հայտարարում՝ մենք տեր ենք, իսկ դուք հպատակ, եթե Աբդուլ Համիդը մեկ-մեկ է կոտորել, ինքը պետք է ազգովին վերացնի: Կանչում է իր հավատարիմներին և կարգադրում Մեսրոպ էֆենդուն տանել Ջոհրապի մոտ:

«Ուսուցիչ» պիեսը խաղացվել է ռադիոթատրոնում, դերասան Արման Կոթիկյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ: Թալեաթ փաշայի դերակատարն է եղել Սունդուկյանի անվան թատրոնի ակնաավոր դերասան Գուրգեն Ջանիրեկյանը:

Վանեցի գաղթականների՝ Խորհրդային Հայաստանում ապաստան գտնելու պատկերմանն է նվիրված գրող-գրամատուրգ Ջարգանդ Դարյանի «Հանրապետության նախագահը» երեք գործողությամբ դրաման, որի առանցքն է կազմում Հանրապետության նորընտիր նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի՝ վերաշինության գործունեությունը:

«Հանրապետության նախագահը» Վարդան Աճեմյանի բեմադրությամբ (ռեժիսոր՝ Հրաչյա Աշուղյան, նկարիչ Ռոբերտ Նալբանդյան (Թբիլիսի), երաժշտության ձեռնարկ Արամյան) ներկայացվել է 1970-ի մայիսի 30-ին, Սունդուկյանի անվան թատրոնում:

Պիեսի բեմադրության մեջ առկա են նաև ռուս և ամերիկացի

գործիչներ: Հիմնական դերակատարներն են եղել՝ Բաբկեն Ներսիսյանը - Լենին, Խորեն Աբրահամյանը - Մյասնիկյան, Սոս Սարգսյանը - Հովհաննես Թումանյան, Ֆրունզիկ Մկրտչյանը - Ալեքսյուրի կայարանի ծառայող Օնես, Վանեցի և այլ վայրերի գաղթականներից՝ Արուս Ասրյանը - Մամիկ, Ժորա Չեպչյանը - Ուսուցիչ, Թաթուլ Դիլաքյանը - Բարունակ աղա, Վերջալույս Միրիջանյանը - Օդիկ Տուտու, Ավետիք Ջրաղացականյանը - Փանոս աղա, Ժան Էլոյանը - գաղթական և ուրիշներ:

«Հանրապետութեան նախագահը» ներկայացուց չորս թատերաշրջան եղել է թատրոնի խաղացանկի նախագահը:

1920-ական թթ. բզկտված Հայաստանի կյանքին է վերաբերում նաև բանաստեղծ Վահագն Դավթյանի «ՄՀերի դուռ» երկու գործողությունները դրաման: Այս պիեսը ևս բեմ է բարձրացել Սուեդուկյանի անվան թատրոնում, որի առաջին վարագույրը բացվել է 1970-ի դեկտեմբերի 30-ին: Բեմադրողն ու գեղարվեստական ձևավորողը նորից եղել են Վ. Աճեմյանն ու Ռ. Նայբանդյանը, իսկ երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Տիգրան Մանուկյանը:

«ՄՀերի դուռը» ևս պատկերում է գաղթականության տխուր վիճակը Երևանում: Թեմային բնորոշ կերպարներից են՝ բանաստեղծը, որի դերում հանդես էր գալիս Վլադիմիր Աբաջյանը: Մի ներկայացման օր, դերասանական օթյակում նստած պատմաբան-բանասեր Մորուս Հասրաթյանն ասաց՝ սա Ջարենցի կերպարն է: Ներկայացման գործող անձերից էին՝ Սասունցին - Ժան Էլոյան (որը հոյակապ հարազատությունը ու մաքուր արտասանությունը էր խոսում Մշո բարբառով), ճարտարագետը (Թերևս Ալեքսանդր Թամանյանը) - Ալեքսանդր Ադամյան, Տասնպետը - Շահում Ղազարյան, թուրք սպան - Վահրամ Եղջատյան և ուրիշներ:

Մեծ եղեռնից տասնամյակներ անց, հարազատներին գտնելու հույսը դեռ չկորցրած մարդու հոգեբանություն, ապրումների զգացողությունն ու նրա նկատմամբ կարեկցանքն է դրսևորված բժիշկ-դրամատուրգ Ժորա Հարությունյանի «Խաչմերուկ» երկու մասից դրամատիկական պատմություն մեջ: Խաչմերուկն ուղղակի կապ չունի պիեսի բովանդակության հետ, բայց փոփոցների խաչմերուկում գտնվող դեղատուներ մի կենտրոն է, որտեղ շոշափվում են ամեն բնույթի հարցեր:

Ալաշկերտցի Մանուկյանը (դերակատարը՝ Խաչիկ Նազարեթյան) արտասահմանից եկել է Երևան իրենց գերդաստանից օղջ մնացած՝ հորեղբոր տղային սրոնելու: Դեղատան վարիչը (դերակատարը՝ Սոս Սարգսյան), որն անցել է հայրենական պատերազմի թոհուրոհով և

ականատեսս եղել պատերազմից տուժածների վիճակին, շատ լավ է հասկանում եղեռնի ժամանակ հարազատներին կորցրած Մանսուրյանի հոգեկան վիճակը: Մանսուրյանը շատ է խնդրում Վարդան Արամյանին (ղեղատան վարիչին) օգնել իրեն՝ հարազատին գտնելու:

Արամյանը տեսնելով դիմացինի կարեկից վիճակը, եղբայրանում է նրա հետ՝ ես եմ քո եղբայրը - դրանով մխիթարում միակ հարազատին տարիներ շարունակ որոնող Մանսուրյանին:

Այս պիեսում կա նաև մի ուրիշ կարոտյալ՝ փողոցը գիշերը մաքրող վանեցի Մուշեղը (գերակատարը՝ Էդգար Էլբակյան): Գիշերային ժամին, քեֆը լավացրած բանաստեղծը (գերակատարը՝ Վլադիմիր Աբաջյան) հանդիպելով Մուշեղին ու նրա ընկեր Գասպարին (Վաղինակ Մարգունի), զրույցի է բռնվում նրանց հետ: Տեսնելով վանեցի Մուշեղի կսկիծը, հարցնում է նրա որտեղացի լինելը: Լսելով, որ վանեցի է, հարցնում է՝ հիշո՞ւմ ես Վանը: Հայրենակարոտ Մուշեղ - Էլբակյանը մի այնպիսի թախիծով էր ասում՝ կմոռացվի՞ր, որ հանդիսատեսը փշաքաղվում էր այդ մի հատիկ բառից:

«Խաչմերուկը» Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրել է Հրաչյա Ղափլանյանը, ռեժիսորը՝ Խորեն Աբրահամյան, նկարիչը՝ Եվգենի Սոֆրոնով, երաժշտական ձևավորումը՝ Ֆելիքս Արամյանի: Առաջին ներկայացումը տրվել է 1977-ի դեկտեմբերի 3-ին: 1978-ին ցուցադրվել է Մոսկվայում, 1982-ին՝ Պետերբուրգում, իսկ 1979-ին արժանացել Հայաստանի պետական մրցանակի:

Հարազատի կարոտը քաշող ու մշտապես որոնող հայն այնքան է սիրել «Խաչմերուկ» ներկայացումը, որ Սունդուկյանի անվան թատրոնի ղեկավարուժյունը հեռու թե մոտիկ վայրեր հյուրաստացրել է և այդ բեմադրուժյունը: Դրա լավագույն ասպցույցը հետևյալ վայրերի հիշատակումն է՝ (րոտ հերթական հյուրաստացրելի) Էջմիածին, Լենինական (Գյումրի), Կիրովական (Վանաձոր), Նոր Բայազետ (Գալստ), Եղեգնաձոր, Հոկտեմբերյան (Արմավիր), Թալին, Հրազդան, Սևան, Կապան, Քաջարան, Աբովյան քաղաքները, չհաշված բազմաթիվ դյուղեր:

«Խաչմերուկը» երկար տարիներ մնալով թատրոնի խաղացանկում որոշ գերակատարների փոփոխուժյուններ է ունեցել, բայց հիմնական ազդեցուժյունը չի կորցրել, մնացել է հանդիսատեսի սրտի խորքերում:

Թող զարմանալի չթվա, եթե ասենք, որ Ժորա (Գեորգ) Հարուժյունյանի «Խաչմերուկ» պիեսի առաջին բեմադրուժյունը հայ թատրոնում տեղի է ունեցել Ստեփանակերտի Մ. Գորկու (այժմ՝ Վահրամ Փափազյանի) անվան դրամատիկական թատրոնում: Ստե-

փանակերտի թատրոնում «Խաչմերուկը» բեմադրվել է «Այստեղ ապրել է մարդը» վերնագրով: Թատրոնի ռեժիսոր Օննիկ (Հովհաննես) Կարապետյանի բեմադրությամբ ու բեմանկարիչ Գրիշա Սահակյանի գեղարվեստական ձևավորումով ներկայացվել է 1977-ի օգոստոսի 31-ին:

Հարությունյանի «Խաչմերուկը» բեմադրվել է նաև Երևանի Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում: Այստեղ նա կրել է «Մենք ապրում ենք կողք-կողքի» (Мы живем рядом) վերնագիրը: Բեմադրող-ռեժիսորը եղել է թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանը, նկարիչը՝ Սարգիս Արուտչյանը, իսկ երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանը:

Կարոտի և սփոփանքի թեմայով դերակատարներն են եղել՝ Ադամյան - Յուրի Ֆրոլով, Մանսուրյան - Լևոն Զիգարժյան, Գասպար - Իվան Գրիկուրով, Մուշեղ - Եվգենի Ներսիսյան: Երևանյան այս բեմադրությամբ Ստանիսլավսկու անվան թատրոնը 1980-ին մասնակցել է Հունգարիայում կազմակերպված Խորհրդային դրամատուրգիայի փառատոնին: Ներկայացվել է Դյոր քաղաքի Կիշֆալուգիի անվան թատրոնում:

Ներգաղթ-արտագաղթի թեման իր բազմակի հուզող հարցերով ուշադրության է արժանացել նաև իրանահայ թատրոնում: 1985-ի նոյեմբերի 27-ին Հայ Մշակության «Սիփան» միության «Մկրտիչ Թաշճյան» թատերախմբի ուժերով, Մշակույթի շաբաթվա առթիվ, «Նաիրի» սրահում ներկայացվել է Վահան Մեհրաբյանի «Մշակույթ և «Մշակույթ» երկու մասանոց դրաման: Պիեսում ներգաղթ-արտագաղթի հետ շոշափվել է ազգային և ներմուծովի մշակույթի առանձնահատկությունների մասին հարցը: Այդ առթիվ գրվել է. «Մշակույթ և «Մշակույթ» թատերական պատկերները ներկայացնում են մեր ազգային հարագատ մշակույթը և նրան հակադիր ու մեր զանազան դադուլները անկող Հյուրի պես ներս մտած մի այլ մշակույթ»<sup>1</sup>: Ներկայացումն ընթացել է երգի ու պարի օրինակներով:

Անշուշտ, ցեղասպանությունից ահաբեկված սերնդի դեպերումների հետևանք է սփյուռքահայության ձուլման անխուսափելի վտանգը: Այս թեման իր լավագույն արտահայտությունն է ստացել քաղաքական սատիրայի և երգիծանկարչության մեծագույն վարպետ Ալեքսանդր Սարուխանի մոտ: Այդ վտանգն ինչ որ կերպով կանխև-

<sup>1</sup> Հայ Մշակության «Սիփան» միության հիմնադրության և գործունեության 25 ամյակի հատոր (1963-1988), Թեհրան, 1998, էջ 131:

լու ազնիվ մտահոգությամբ, նա վրձինը գրիչի փոխարինելով գրել է «Մենք հայերեն չենք գիտեր» երեք գործողությամբ երգիծախաղը:

Մայրենի լեզուն մոռացած նոր սերնդի ներկայացուցիչներն ի վիճակի չեն հայրենիքից ստացված հայերեն լեզվով գրած համակր կարդալ: Այս անմեղ թվացող հարցի թիկունքում մեծ վտանգ է յցված: Սրանից մեծ կորուստ դժվար է պատկերացնել: Լեզուն մոռացած մարդը ժամանակի հետ ազգային պատկանելութունն էլ կկորցնի: Նրա համար էլ ի՞նչ Հայ ու Հայաստան, ազգ ու ավանդույթ, եղևոն ու Հայ դատ: Հեռու չգնանք, լեհահայերի ձուլման փաստը սրա կենդանի ապացույցն է: Հանճարեղ Խաչատուր Աբովյանն իր սրտի կրակով գրած «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում նշել է. «Մեկ ազգի պահպանել է՛լ լեզուն և ու հավատը, թէ սրանց էլ կորցնենք, վա՛յն էկել և մեր օրին»:

Ահա, այս մեծ վտանգը կասեցնելու նպատակով է, որ անվանի երգիծանկարիչն իրեն հատուկ ժանրով օժտած կերպարների հարցը օրվա խոսակցության նյութ է դարձրել հայկական մի շարք համայնքների հայուլթյան համար:

Սարուխանի «Մենք հայերեն չենք գիտեր» պիեսը նախապես բեմադրվել է Կահիրեի Հայ Գեղարվեստասիրաց միության թատերախմբի կողմից: Բեմադրիչն է եղել եգիպտահայ թատրոնի երկարամյա երախտավոր գործիչ՝ գերասան և ռեժիսոր Վահե Պոյաճյանը: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1964-ի հունիսի 14-ին «Թեթևյան» սրահում:

Դերակատարները՝ գրեթե բոլորը եգիպտահայ թատրոնի երախտավորներ են եղել՝ Տիկ. Մելինե Կորկոտյան – Այծեմնիկ Պոյաճյան, Թերեզ – Արշալույս Առաքելյան, Փիթրը – Ժիրայր Բարազյան, Միսաք Աղա – Գևորգ Զարդարյան, Գառնիկ Շալվարյան – Գրիգոր Փարթամյան, Տոքթ. Նուպար – Բարսեղ Գարթալյան, Տիկ. Ալիս – Մանուշ Աղամյան, Տիկ. Անահիտ – Ատել Համբարձումյան, Միքայել – Միքայել Գարանֆիլյան, Բանդետենց – Երուանդ Տեմիրճյան, Խարալամպոս – Եղուարդ Զարդարյան, Մր. Ճևյոս Աքոթ – Արթուր Ավետիսյան<sup>1</sup>: Նույն թվականին ներկայացվել է նաև Ալեքսանդրիայում:

Սարուխանի այս պիեսը Կահիրեի Հայ Գեղարվեստասիրաց միության թատերախմբում երկրորդ անգամ բեմադրել է Սարգիս Մանուկյանը, բնականաբար՝ նոր դերակատարներով: Ներկայացումը տեղի է ունեցել 1982-ի հունիսի 26-ին<sup>2</sup>:

<sup>1</sup> Արև (Կահիրե) 1964, հունիսի 9:

<sup>2</sup> Հայ գեղարվեստասիրաց միության պատմություն 1920-2000, պատրաստեց Ավետիս Եսփուճյան, Կահիրե, 2004, էջ 175, 182:

«Մենք հայերեն չենք գիտեր» պիեսը հեղինակի հովանավորությամբ բեմական կյանք է ստացել նաև Հալեպի Հ.Բ.Ը.Մ. Հայ Երիտասարդաց ընկերակցության «Ուսանողական բաժին» թատերախմբում, «Պետրոս Ադամյան» թատերախմբի երիտասարդ դերասան և ռեժիսոր Վահե Սամուելյանի կողմից: Առաջին ներկայացումը կայացել է 1969-ի մարտին, Հ.Բ.Ը.Մ. սրահում:

Այս թատերախմբի երիտասարդ դերակատարներն են եղել՝ Տալիթա Պիլեմճյանը - Տիկին Մելինե Կորկոտյան, Պեթի Պեչլյանը - Թերեզ, Տիրան Գարասարգիսյանը (Սարգիսյան) - Փիթրը, Ավետիս Մալաքյանը - Միսաք աղա, Սեդրակ Պուրունսուզյանը - Գառնիկ Շալվարյան, Ներսես Տաղլյանը - Տոբթոր Նուպար, Սիլվա Կեցոյանը - Տիկին Ալիս, Ռոզմարի Պասմաճյանը - Տիկին Անահիտ, Նորայր Ոսկանյանը - Միքայել, Գառնիկ Արսլանյանը - Բանդետենց, Սարգիս Գաղանճյանը - Խարալամպոս, Լևոն Գաղանճյանը - Ջեյմս Աքոթ: Երաժշտությունը գրել է Վարուժան Թենեքճյանը:

Երիտասարդական այս խմբից Տ. Պիլեմճյանը, Տ. Գարասարգիսյանը (այժմ Բեյրութի «Երվանդ Օտյան» թատերախմբում), Ն. Տաղլյանը (Հալեպի «Պետրոս Ադամյան» թատերախմբի մայր սյուններից մեկը), Ռ. Պասմաճյանը ժամանակի ընթացքում ներգրավվելով «Պետրոս Ադամյան» թատերախմբում, դարձել են նրա առաջատար դերասաններ:

Սիյունքահայ հանրահայտ խմբագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ Էդմոնդ Կոտալազյանը (Երվանդ Ագատյան) դեռևս 1963-ին Սարուխանի այս պիեսի բեմադրություն առթիվ գրել է՝ «Այս թատերախաղը ևս - գոր հատուկ նրբությունը մը հեղինակը կոչած է կրգիծախաղ - ծնունդ է Սարուխանի ստեղծագործական աշխարհի ընդհանուր մթնոլորտին: Սարուխանի նախորդ ստեղծագործությունց և այս թատերախաղին խորքն ու ձգտումները նույնը մնալով տարբերությունը կսահմանափակվի ձևին մեջ՝ այս վերջինին տալով տեսակ մը ՇԱՐԺՈՒՆ ԵՐԳԻԾԱՆԿԱՐԻ ԲՆՈՒՄ»:

Որքան ուրիշ երկրների, առավել ևս ամերիկյան մայր ցամաքի հայ ազգաբնակչության համար շատ արդիական է եղել Ալ. Սարուխանի այս պիեսի բեմադրությունը: Բուլղարահայ և բուլղարական թատրոնների դերասան Շավարշ Մանուկյանը փոխադրվելով Ամերիկա, Նյու Յորքի «Պարոնյան» թատերախմբի ուժերով բեմադրել է «Մենք հայերեն չենք գիտեր» պիեսը: Ներկայացումը տեղի է ունեցել 1975-ի մարտի 16-ին, Ալեք Փիլիպոսյան վարժարանում: Մասնակիցների թվում եղել են՝ Նատիա Բերիմը - Տիկին Մելինե Կորկոտ-

յան, Ռոզմերի Եկինյանը – Թերեզ (Կորկոտյանի աղջիկը), Նուրբան Բերիմը – Միսաք աղա (Մելինեի հայրը), Շավարշ Մանուկյանը – Գառնիկ Շալվարյան, Մերի Հակոբյանը – Տիկին Ալիս, Սուրեն Հակոբյանը – Խարալամպոս և ուրիշներ<sup>1</sup>:

«Մենք հայերեն չե՛նք գիտեր» պիեսը, որը հարազատ թեմա է հայրենիքն ու միջավայրը կորցրած հայության շրջանակներում, մի բեմադրութուն էլ Մոնրեալում (Կանադա) է ունեցել: Դա տեղի է ունեցել 1981-ին, Հ.Բ.Ը. Միության տեղական ճյուղի թատերախմբում:

Հաջորդ բեմադրութունը կայացել է Երևանում, ռադիոթատրոնում: Բեմադրողը եղել է ռեժիսոր Գրիգոր Չալիկյանը, իսկ դերակատարները՝ Երևանի թատրոնների հանրաճանաչ դերասաններ՝ բնութագրական ու կատակերգական խաղաոճի հմուտ դերակատարներ Վարդուհի Վարդերեսյանը, Թագուհի Հակոբյանը, Երվանդ Մանարյանը, Ջարե Տեր-Կարապետյանը, Խաչիկ Նազարեթյանը – բոլորն էլ սփյուռքից ներգաղթածներ և ուրիշներ:

Թատերական այս շարժումին իր մասնակցութունն է բերել նաև Ամմանի փոքրաթիվ հայ համայնքը: Պիեսի մեջ բարձրացված հարցն այնքան կարևոր է եղել, որ տեղի թատերասերների խումբն էլ իր հերթին է 1983-ին ներկայացրել «Մենք հայերեն չե՛նք գիտեր» պիեսը<sup>2</sup>:

Սարուխանի գրած պիեսի կենսունակության օգտին է խոսում այն հանգամանքը, որ նրա մի բեմադրության պատմությունն էլ հեռավոր Ավստրալիայում է կերտվել: Բեմադրութունը տեղի է ունեցել Սիդնեյի «Մաքքուարի» համալսարանի սրահում, 1997-ի մարտի 15-ին: Բեմադրող-ռեժիսորը եղել է Համբար Չաքմաքը: Հ.Բ.Ը.Մ. «Վահրամ Փափաղյան» թատերախումբն այն բեմ է հանել հեղինակի՝ Ալեքսանդր Սարուխանի մահվան 20-ամյակի կապակցությամբ:

Մեծ եղևունի 50-ամյակը յուրատեսակ կերպով է նշվել արգենտինահայ թատրոնում: Ապրիլյան եղևունի և Քսան կախաղանների հիշատակի ոգեկոչման առթիվ, 1965-ի օգոստոսի 9-ին Բուենոս Այրեսի «Ագենդիա» թատրոնում Ասատուր Չեքեմյանի ընդհանուր ղեկավարությամբ ներկայացվել է Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի բեմականացումը, որ կատարել է Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ականավոր դերասան Գուրգեն Ջանիբեկյանը:

<sup>1</sup> Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժին, Մերի Հակոբյանի ֆոնդ:

<sup>2</sup> Արև (Կահիրե) 1983, № 19561:

ներկայացմանը մասնակցել է Ուրուգվայի Ս. Դ. Հնչակյան ուսանողաց միության թատերախումբը: Բեմում մասնակցություն է ունեցել 75 դերակատար:

«Վարդանանքի» բեմադրական աշխատանքները կատարել են ճարտարագետ Հարություն և Դանիել Երկանյան եղբայրները, երաժշտական մասը՝ Երվանդ Կանիմյանը, Կարապետ Մուճուկյանը, Մուրատ Տոսթուրյանը: «Վարդանանքի» բեմադրությունն ընդունվել է որպես «մեր ազգային դյուցազնամարտական ոգին խտացնող» բացառիկ ներկայացում: Իբրև խրախուսանք, ներկայացման ծանուցման մեջ նշվել է, որ այն ներկայացվել է «Հայաստանի պետական մարզադաշտի վրա 1200 դերակատարներով և 40.000 հանդիսականներու ներկայությամբ, իսկական Ավարայրի ճակատամարտ մը պատկերելով»<sup>1</sup>:

Միջազգային ասպարեզում Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը Հայ դատի պաշտպանությունն առաջին հաղթանակը լինելով, կարևոր դեր է խաղացել մի քանի սերնդի թատերական գործիչների ստեղծագործական կյանքում: Մեծ եղևունի 60-րդ տարելիցի առթիվ, գրվել ու հեղինակի կողմից բեմադրվել է Բեյրութի «Գասպար Իփեկյան» թատերախմբի դերասան և ռեժիսոր Փորժ Սարգիսյանի «Դատավարություն Սողոմոն Թեհլիրյանի» երկու մասով պիեսը (Տոքթ. Նեյմաթի դերով), 1975-ին:

Բազմամարդ է եղել պիեսը, հետևաբար և բեմադրությունը՝ 28 գործող անձ, իսկ 18-ն էլ՝ երգվյալներ, փոխանորդներ, երևույթ, որը որքան նպաստել է արդարադատության բացահայտմանը, այնքան էլ բարդացրել բեմադրական աշխատանքը:

Այս նոր պիեսի գործող անձերն ու դերակատարներից են եղել՝ Սողոմոն Թեհլիրյանը (ժիրայր Խաչերյան), Երվանդ Աբելյանը (ժիրայր Անմահունի), Ելիզավեթ Շղեկփառումը (Զևփյուռ Շանթ), Դոկտոր Լեմպերկը (Արթուր Քեչիչյան), դատախազ Գուլիկը (Հակոբ Թորիկյան), դոկտոր Ֆոն Գորտոնը (Սարգիս Արսլանյան), պրոֆեսոր Ետանես Լեփսիուսը (Փորժ Շահպանյան), տիկին Դիտմանը (Պայծառ Գարագաշյան), Պալաքյան սրբազանը (Հարություն Գաբրիելյան) և ուրիշներ:

Այս նույն թեման հայաստանաբնակ արձակագիր և դրամատուրգ Պերճ Զեյթունցյանի մոտ ստացել է «Ոտքի՛, դատարանն է գալիս» խորհրդավոր վերնագիրը: Այն իրենից ներկայացնում է «փաստագրական դրամա հեղինակային միջամտություններով» գործ: Այստեղ

<sup>1</sup> Շարժում (Բուենոս Այրես) 1965, № 9:

ևս ընդգրկված են պատմական-իրական մի շարք դեմքեր, որոնք նպաստել են Թեհլիրյանի արդարացմանը բեռլինյան դատավարութան ժամանակ:

«Ոտքի՛, դատարանն է գալիս» պիեսի բեմական պատմությունն սկսվել է Հալեպի «Պետրոս Աղամյան» թատերախմբի բեմադրությունից: Ընդառաջելով թատերախմբի ղեկավարութան առաջարկին, Զեյթունցյանը համաձայնություն է տվել, որ պիեսը խաղացվի արևմտահայերեն փոխադրությամբ: Պիեսը բեմադրել է Երևանում ռեժիսորական կրթություն ստացած Գրիգոր Քելեշյանը, Մեծ եղեռնի 65-րդ տարելիցի առթիվ:

Բեմադրողը «Հեղինակի կողմից» միջամտությունները դարձրել է որպես «Երգչախմբի» կողմից, իբրև մեկնաբան: Հետաքրքրական է եղել հատկապես բեմական այն մոտեցումը, երբ իրական վկաները դատարանում վկայություն տալուց առաջ երգվել են, իսկ նրանք, ովքեր իսկական դատավարութան ժամանակ ներկա չեն եղել, բայց մամուլի միջոցով իրենց վերաբերմունքն են արտահայտել՝ չեն երգվել:

Հալեպի «Պետրոս Աղամյան» թատերախմբում «Ոտքի՛, դատարանն է գալիս» պիեսի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1980-ի նոյեմբերի 28-ին: Տեքստն արևմտահայերենի է վերածել Ալեքսան Աթթարյանը: Բեմադրությունն ու երաժշտական ձևավորումը կատարել է Գրիգոր Քելեշյանը, ղեկորի ձևավորումը՝ երևանյան կրթությամբ ճարտարագետ Նազարեթ Գրաճյանը:

Այս մեծաքանակ կերպարներով պիեսի գործող անձինք և դերակատարներն են եղել՝ երգչախումբ – Մանիա Գարամանուկյան, Երվանդ Լեփեճյան, Տոքթ. Լեմպերկ – Ներսես Գարամանուկյան, Կոլնիք – Հակոբ Միքայելյան, Ատուֆ Ֆոն Կորտըն – Ջավեն Պիլեմճյան, Եոհան Վերթաուեր – Սիմոն Մուրատյան, Նիմայիր – Ճորճ Հատտատ, Սողոմոն Թեհլիրյան – Արա Թորանյան, Տիկին Տիթման – Մարի Արոյան, Թալեաթ փաշա – Հովհաննես Սամուելյան, Թալեաթի կինը – Արաքսի Ստեփանյան, Պեհետտին Շաքեր – Հովիկ Գաղանճյան, Տոքթ. Նազրմ – Վիգեն Պեսյան, Հասան Ֆրճմի – Անդրանիկ Աղամյան, Մորկենթաու – Հակոբ Մուրատյան, Ճենապ Շեհապետտին – Սարգիս Եազըճյան, Տոքթ. Լեփսիուս – Ներսես Տաղլյան, Լիման Ֆոն Ջանտերս – Մեսրոպ Չինչինյան, Զորավար Շարիֆ փաշա – Գևորգ Զերենցյան, Հայ քահանա – Գրիգոր Պուրճլյան, Եոհան – Վանիկ Մաճարյան, Շթորմեր – Գևորգ Կյուլյուճյան, Լիփման՝ – Նորայր Թինկճյան, Լրագրողներ – Էմիրխանյան, Չինչինյան, Պոյնարյան, Պալյան:

Այսքան մարդու դործողությունը, հոգեբանության վերլուծությունը թեև բեմադրողին մեծ հոգս են պատճառել, բայց ամեն ինչ հարթ է անցել և ներկայացումը կրկնվել մի քանի անգամ:

«Ուտքի՛, դատարանն է գալիս» պիեսը բնագրով առաջին անգամ խաղացվել է Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության թատերախմբում, 1983-ի փետրվարին դերասան և ռեժիսոր Արամայիս Աղամալյանի բեմադրությամբ, «Արարատի» սրահում: Այս բեմադրության մեջ «Խմբերգը» (խորը) դարձրել են չորս անձ՝ բոլորը տղամարդիկ, ավելացրել «Ճերմակավոր ոգիներ» – 6 աղջիկներով: Բեմադրողի տված դեկորի նախագիծը պատրաստել է Բաբկեն Ղարիբյանը, երաժշտական ձևավորման աշխատանքը կատարել է Գուրգեն Մովսիսյանը, ռեժիսորի օգնականն է եղել Անահիտ Գրիգորյանը:

Ներկայացման ծրագրում Սողոմոն Թեհլիրյանի մասին հակիրճ տեքստում ուշադրավ մեջբերում է կատարվել դատավարությունից: Այն հարցին՝ թե Թեհլիրյանն «Ինչո՞ւ ինքն իրեն կատարած ակտի համար հանցավոր չէր համարում», պատասխանը եղել է. «Մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ: Ինձ միայն իմ մորս, քույրերիս, եղբորս կանչերը չէին, որ տանջում էին, այլ մի ամբողջ ժողովուրդի: Ես հետևել եմ իմ ազնիվ ազգի արդար կանչին և կատարել իմ լավագույն արդարահատուցումը ի տես քաղաքակիրթ ազգերի անտարբեր վերաբերմունքին՝ հայկական ջարդերի նկատմամբ»:

Ինչպես հայտնի է, գերմանական կայսրությունը քիչ չի օգնել թուրքերին հայկական ջարդերի կազմակերպման ժամանակ: Եվ այս դատավարության օբյեկտիվ վերաբերմունքը Թեհլիրյանի նկատմամբ, ինչ-որ չափով մեղմում է նրանց հանցավոր միջամտության արարքը:

Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության թատերախմբի ներկայացման մեջ զբաղված են եղել շուրջ 40 անձ, վերհիշենք գլխավորներին՝ Սողոմոն Թեհլիրյան – Ռազմիկ Շահգալսթյան, Վիգեն Միրզայան, Թալեաթ – էդվարդ Ասլանյան, Թալեաթի կինը – Մարո Մինասյան, Ազմի բեյ – Սեպուհ Մնացականյան, Տանտիրուհի (տիկ. Դիտման) – Կիտուշ Արզույան, Գրիգոր Ջոհրայ – Արա Հակոբյան, Դատախազ Գոլնիկ – Գևորգ Նուբարյան, Դատապաշտպաններ՝ Ադոլֆ Ֆոն Գորդոն – Վարդգես Բաշյան, Եոհաննես Վերթաուեր – Ռազմիկ Մեսրոպյան, Լեմբերգ՝ Ա. Նահանգային դատարանի նախագահ – Սուրեն Բաղդասարյան, Շտորմեր (փորձագետ) – Հարմիկ Հակոբյան, Քրիստինե Թերզիբաշյան (վկա) – Մարո Սարգսյան, Դոկտոր

Լեփսիոս - Վարուժան Գալստյան, Լիման Ֆոն Զանդերս - Հայկազ Դավթյան, Մորգենթաու (Պոլսի Ամերիկյան դեսպան) - Մինաս Հովսեփյան, Քահանա - Հարութ Նազարյան և շատ ուրիշներ:

«Ութի՛, դատարանն է գալիս» պիեսը 1983-ին նույն դերակատարներով խաղացվել է նաև Ղազվինում:

Զեյթունցյանի «Ութի՛, դատարանն է գալիս» պիեսը թեև, համեմատաբար ուշ է բեմադրվել Հայաստանում, բայց ունեցել է երկու անդրադարձ՝ երկուսն էլ Երևանի Գ. Սուևդուկյանի անվան ակադեմիական թատրոնում: Առաջին անգամ բեմադրվել է 1988-ի փետրվարի 16-ին, իսկ երկրորդ անգամ՝ 2000-ի սեպտեմբերի 16-ին: Երկու դեպքում էլ բեմադրական կազմը նույնն է եղել՝ բեմադրող-ռեժիսոր Տիգրան Գասպարյան, ձևավորող նկարիչը՝ Վարդան Պետրոսյան, երաժշտական մասն ապահովել է Արամ Նազարյանը՝ օգտագործելով Կոմիտասի և Ժորժ Կառվարենցի գործերը:

«Ութի՛, դատարանն է գալիս» պիեսը հրապարակախոսական բնույթ ունի, իսկ Սողոմոն Թեհլիրյանի դերակատարներն էլ մի քիչ հռետորականի վերածելով, ոչ թե դատվում են, այլ իրենք են դատում, գործողությունն ավելի զինամիկ դարձնում: Մյուս դերակատարները պահպանում են ընդհանուր մթնոլորտը և տեսանելի դարձնում պիեսում առաջ քաշված քաղաքական հարցերն ու հոգեբանական ապրումները:

Դերակատարները երկու դեպքում էլ այսպիսի կազմ են ունեցել.

- |                                       |                  |
|---------------------------------------|------------------|
| Հեղինակի կողմից՝                      | Հար. Մովսիսյան,  |
| Մովսիսյան                             | Սամվել Փիլոյան,  |
| Սողոմոն Թեհլիրյան - Վլադիմիր Քոչարյան | Դավիթ Գասպարյան, |
| Մայր, Տիկին Դիաման - Գալյա Նովենց     | Տիգրան Ներսիսյան |
| Քահանա - Շահում Ղազարյան              | Գրետա Մեջլումյան |
| Գոյնիկ - Ազատ Գասպարյան               | Ռազմիկ Խոսրոս    |
| Դոկտոր Լեմբերգ - Գևորգ Զեփյան         | Ալբերտ Սաֆարյան  |
| Թալեաթ - Արմեն Մարության              | Արմեն Մարության  |
| Թալեաթի կինը - Ալիս Կապլանջյան        | Գրետա Մեջլումյան |
| Լիման Ֆոն Սանդերս - Մամիկոն Մանուկյան | Կարեն Զանգիրյան  |
| Շերիֆ փաշա - Ռուդոլֆ Ղևոնդյան         |                  |
| Ա. Ֆոն Գորդոն - Ալեքսանդր Խաչատրյան   |                  |
| Դոկտոր Լեփսիոս - Մայիս Կարաբյուրյան   |                  |

Թեև այնքան էլ շատ չեն հայ դրամատուրգների պիեսների բեմադրությունները ուսական թատրոնում, բայց և այնպես, սկսած 1880-ից («Պեսո», Թիֆլիս) մինչև մեր օրերը մեկ-մեկ տեղ են գրավում տարբեր քաղաքների թատերական խաղացանկերում: Վերջին

տասնամյակում ուսական թատրոնի խաղացանկը համալրվել է ևս մեկով: Դա Պերճ Զեյթունցյանի «Ութը՛, դատարանն է գալիս» պիեսն է, որը հեղինակի համաձայնությամբ խաղացվել է «Դատը շարունակվում է» (ԿԾ սժեմ...) վերնագրով (թարգմանությունը Նելսոն Ալեքսանյանի)<sup>1</sup>:

«Դատը շարունակվում է» պիեսը ներկայացվել է 2008-ի մայիսի 15-ին Մոսկվայում անցկացված «Կարոտ» միջազգային հայկական թատերական փառատոնի շրջանակներում, Արմեն Զիգարխանյանի թատրոնում: Այս դրամային ճանաչողական բնույթ տալու նպատակով, վերնագրի կողքին ավելացվել է «Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը» բացատրական մասնիկը: Ավելի քան 90 տարի առաջ տեղի ունեցած այդ դատավարությունն այսօր էլ շարունակվում է, որովհետև շուրջ երկու միլիոն հայերի ոչնչացումը հավի գլուխ թոցնել չէ:

Պիեսը բեմադրել է Մոսկվայի հայկական թատրոնի ռեժիսոր Սլավա Ստեփանյանը: Պիեսի բնույթին համապատասխան, գերակատարների կազմն էլ միջազգային երանգ է ունեցել: Մասնակիցների թվում են եղել Մոսկվայի թատրոնների դերասաններ Ալեքսեյ Պետրենկոն, Ալեքսանդր Միխայլովը, Ալեքսանդր Սևճևը (գերմանական դատավոր Գոլնիկ), Իգոր Կոստուլևսկին (գոկտոր Լեփսիուս), Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Ալբերտ Սաֆարյանը (Քահանա), մոսկվացի Օլգա Կաբոն (Թալեաթի կինը), Մոսկվայի հայկական թատրոնի դերասան Արթուր Դիլանյանը (Թալեաթ փաշայի և պետական մեղադրողի հակադիր դերերում) և ուրիշներ: Հեղինակի կողմից բացատրական տեքստը պատմել է Արմեն Զիգարխանյանը:

Զեյթունցյանի «Ութը՛, դատարանն է գալիս» պիեսը «Կարոտ» միջազգային հայաստանյան և արցախյան թատերական փառատոն է մտել նաև 2010-ի սեպտեմբերի 5-ին, նորից Ս. Ստեփանյանի բեմադրությամբ, դարձյալ Ռուսաստանի և Հայաստանի թատրոնների մի շարք դերասանների մասնակցությամբ: Բեմադրական ձևավորումները կատարել են Ալբերտ Աթոյանը (Գորկու անվան կինոստուդիա), Նելլի Շահբազովան (զգեստների նկարիչ), օգտագործվել են Կոմիտասի, Լյուլլիի, Գ. Մալլերի, Գրիվի Կանչելու երաժշտություններից համապատասխան կտորներ: Նոր մասնակիցներից են եղել՝ Նելլի Ուվարովան (Մոսկվայի ազգեմիական Երիտասարդական թատրոնից, Թալեաթի կինը), Մասաբ Կորոբովը (Սիրիա) և ուրիշներ:

<sup>1</sup> Голос Армении (Ереван) 2008, № 58:

Իրական-պատմական անձնավորությունների կերպարները բեմ հանելու մի այլ փորձ էլ է կատարել Պերճ Զեյթունցյանը: Դա «Մեծ լուռություն» 2 գործողությունամբ դրաման է, որ նա գրել է նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի ծննդյան 100-ամյակի առթիվ: Պիեսում տրված է հայ ժողովրդին այնքան սիրելի Դ. Վարուժանի, Ռուբեն Սևակի, Կոմիտասի, Վահրամ Փափազյանի հետ կապված լուռության մատնված պատմությունը:

«Մեծ լուռություն» պիեսի առաջին բեմադրությունը կայացել է 1984-ի մարտի 28-ին, Երևանի Դրամատիկական թատրոնում և նվիրվել է բանաստեղծի ծննդյան 100-ամյակին: Բեմադրել է թատրոնի գլխավոր ռեժիսոր Արմեն Խանդիկյանը, ձևավորել է բեմանկարիչ Սարգիս Արուտչյանը, իսկ երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

Մեծ խնամքով բեմադրված այս ներկայացման կենտրոնական դերակատարներն են եղել թատրոնի լավագույն ուժերը՝ Գուժ Մանուկյանը (Վարուժան), Արթուր Ութմազյանը (Ռ. Սևակ), Վլադիմիր Մսրյանը (Կոմիտաս), Հրաչյա Հարությունյանը (Վ. Փափազյան), Նորա Երզնկյանը (Արաքս), Զեմմա Կարաբոջյանը (Իսկուհի), Ռաֆայել Քոթանջյանը (Զեմալ Օղուզ) և ուրիշներ:

Ավելի քան տասը տարի «Մեծ լուռությունը» խոսել է Դրամատիկական թատրոնի հազարավոր հանդիսատեսների հետ ու միշտ կարոտ թողել նրանց՝ ցավազին ավստոսանքը շուրթերին: Բեմադրությունն ընկալվել է որպես ոչ միայն մեր երևելիների հիշատակի ոգեկոչում, այլև լինելիության, գոյատևման անլուելի զոզանջ:

Նույն՝ 1984-ի դեկտեմբերի 26-ին «Մեծ լուռությունը» ներկայացվել է Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության թատերախմբի կողմից, «Արարատի» սրահում, Արամայիս Աղամալյանի բեմադրությամբ: Դեկորների պատրաստման աշխատանքը կատարել է Իսրայել Հովասափյանը, իսկ երաժշտության համադրությունը՝ Լիդա Բերբերյանը՝ կյանքի կոչելով Կոմիտասի Պատարագը, «Անտունին», «Տեր Ողորմյան», Ա. Զամբազյանի «24 ապրիլ» սիմֆոնիկ պոեմը, Լորիս Ճգնավորյանի «Հոգեհանգիստ նահատակների» սիմֆոնիկ պոեմը: Երգչախումբը ղեկավարել է Անահիտ Հալեբյանը, արտասանությունները կատարել Ռազմիկ Արզուկյանը:

Թեհրանյան այս բեմադրությունը մասնակցել է 32 դերակատար, այդ թվում վեց վկա, ութ աքսորյալ: Գլխավոր դերերում հանդես են եկել առաջնակարգ դերասան-դերասանուհիներ Վարդգես Բաշյանը Վարուժանի, Ռազմիկ Շահգալոյանը Ռ. Սևակի, Արա Ասլանյանը

Կոմիտասի, Փեգի Խուզալաքիսը Արաքսիի, Կիտուշ Արզույանը Իսկուհու, Տիգրան Գրիգորյանը Զեմալ Օղուզի, Հարութ Նազարյանը Քահանայի, Վանիկ Մկրտչյանը Ոստիկանապետի դերերում:

Արժանավորներին արժանվույնը մատուցելով, Վարուժանի ծննդյան 100 և Մեծ եղեռնի 70-ամյակների առթիվ «Մեծ լուռությունը» պատշաճորեն բեմ է բարձրացրել նաև Նյու Յորքի Համագրայինի Մշակութային միություն թատերախումբը, նրա մշտական ղեկավար Հրանդ Մարգարյանի բեմադրությունում, 1985-ի մարտի 27-ին: Նյու Յորքում հաջողությամբ ներկայացնելուց հետո, այն խաղացվել է Բոստոնում և Նյու Ջերսիում ևս:

Քանի որ պիեսի հիմնական հերոսները խոսում են իրենց առօրյա խոսակցական լեզվով՝ արևմտահայերեն, ապա հեղինակի միտքը ճիշտ տեղ հասցնելու նպատակով, բեմադրողը որոշ միջամտություն է կատարել նրա լեզվական կառուցվածքում. «Մեծ լուռություն» պիեսի այս բեմադրության ղեկավարներն են եղել՝ Վարուժան – Հակոբ Վարուժյան, Արաքսի Վարուժան – Անի Նշան, Սևակ – Հովհաննես Պատիկյան, թուրք պաշտոնյա – Խաչիկ Հակոբյան և ուրիշներ:

1990-ի ապրիլյան օրերին (26-ին) Ուերմիայի մտավորականությունը ի հարգանս մեր անմեղ զոհերի, տիկ. Լորիկ Ազիզյանի ղեկավարությամբ ներկայացրել է «Մեծ լուռությունը»:

1991-ի ապրիլի 20-ին (առաջին օրը) Հ.Բ.Ը.Մ. «Արտավազ» (Լոս Անջելես) թատերախմբի ղեկավար Գրիգոր Սաթամյանի բեմադրությունում «Մեծ լուռությունը ներկայացվել է ի հիշատակ Մեծ եղեռնի անմեղ նահատակների: Վարուժանի դերում հանդես է եկել Գ. Սաթամյանը, Արաքսի Վարուժանի դերում՝ Վարդուհի Գոճայանը, Կոմիտասի դերում՝ Գևորգ Քեոշկերյանը: Մյուս դերերը կատարել են՝ Ռուբեն Հարմանտարյանը, Արմեն Քերասիմյանը, Հրանդ Խտրբաշյանը, Սագո Տատոյանը, Հերմինե Սահակյանը (Իսկուհի), Ալեքս Խորշիտյանը, Վարուժան Վարժապետյանը և ուրիշներ<sup>1</sup>:

Ներկայացումը սիրվել ու կրկնվել է մի քանի անգամ:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին «Մեծ լուռությունը» նորից երևացել է Թեհրանում, այս անգամ Հ.Մ. «Սիփան» միություն «Մկրտիչ Թաշճյան» թատերախմբի կողմից: Խաղացվել 2005-ի ապրիլի վերջերին (20-ին և մայիսին): Ըստ որում, ապրիլի 21-ի հատվածաբար ներկայացումը տեղի է ունեցել «Սիփան» միության բակում: Բեմադրել է թատերախմբի ղեկավար, երկար տարիների փոր-

<sup>1</sup> Նոր կյանք (Գլենդեյ) 1991, № 15, 19:

ձառու դերասան և ռեժիսոր Սուրեն Մնացականյանը: Օրվա նշանաբանն է եղել՝ «Ցեղասպանութուն, պահանջատիրութուն և արդարութուն»:

Բանախոսությունից, մեներդներից ու ասմունքից հետո խաղացվել են հատվածներ Ալֆրեդ Աբելյանի (Վարուժան), Շաքե Մնացականյանի (Արաքսի), Սուրեն Մնացականյանի (Վարդան), Վահագն Ազիզյանի (Օղոզ Բեյ) և ուրիշների մասնակցությամբ:

Մայիսյան ներկայացումները (4-5) տեղի են ունեցել «Նայիրի» սրահում, 21 դերակատարով և երգեցիկ խմբով՝ Ռազմիկ Օհանյանի ղեկավարությամբ: Երաժշտական համադրումը կատարել է Կարեն Մնացականյանը: Վերոհիշյալ դերակատարներից բացի, ներկայացմանը մասնակցել են՝ Երվանդ Սաֆարյանը (Ռ. Սևակ), Արա Ասլանյանը (Կոմիտաս), Անի Զաքարյանը (Իսկուհի) և ուրիշներ: Ներկայացումն ընթացել է առանց ընդմիջման:

«Մեծ լուռություն» ունեցել է մի արտակարգ հնչեղությամբ բեմադրություն ևս: Երևանի պետական համալսարանի սփյուռքահայ ուսանողները, դրական-թատերական միջոցառումների շրջանակներում, իրենց՝ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի ուսանողներին Հայոց ցեղասպանության զրվագներին ծանոթացնելու նպատակով ներկայացրել են Պ. Զեյթունցյանի «Մեծ լուռություն» պիեսը: Միջոցառումը նվիրվել է Հայոց Մեծ եղեռնի 90-րդ ոգևիտչման օրերին՝ գրականը 2005-ի ապրիլի 22-ին, իսկ թատերականը՝ 23-ին:

Օտարերկրյա ուսանողությամբ Հայոց ցեղասպանությամբ և նրա հետևանքներին ծանոթացնելու ուղղակի միջոց են հանդիսացել եղեռնի դո՛հ գրողների ստեղծագործությունների արտասանությունները: Այսպես՝ ձերբակալվածների հարցաքննության ժամանակ Դանիել Վարուժանի դերակատարը կարդացել է հատվածներ «Հացին կրգը» գրքից: Սրտառու է տեսարաններ են հանդիսացել Վարուժանի և Միամանթոյի հանդիպումը, Վարուժանի և Կոմիտասի զրույցը՝ վերջինիս երաժշտության տակ: Հնչել են Վարուժանի և Միամանթոյի բանաստեղծությունները:

«Մեծ լուռություն» պիեսի արտասահմանցի ուսանող-դերակատարներն են եղել նախապատրաստական ֆակուլտետի ներկայացուցիչներ Մովսես Խեչոն, Ադամ Դանոն, Հարություն Քաջողյանյանը, Շանթ Զաղլասյանը, Մուսես Ամմարը (Սիրիա), Մելիսա Պոզը, Մասիս Քրջիկը (Թուրքիա), Սվետա Յախչիբեկովան, Զաքար Գրիգորյանը (Թուրքմենստան), Ոսկհատ Հայբարյանը (Ռուսաստան), Աշոտ Անտոնյանը (Վրաստան):

Ներկայացման վերջում ուսանող-գերակատարներին ջերմ խոսքերով ողջունել-ոգևորել են պիեսի հեղինակը, համալսարանի ղեկավարութայան ներկայացուցիչները<sup>1</sup>:

2005-ի մայիսի 9-ին այս պիեսը ներկայացվել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձոր դյուղում, դպրոցի դահլիճում:

Փամանակը և թատրոնի պատմությունը վկայում են, որ ցեղասպանությունից հետո պիես գրողներից ամենահետևողականը մեր օրերում Պերճ Զելթունյանն է: Իր նախորդ պիեսներին ավելացել է ևս մեկը՝ «Հարյուր տարի անց» դրաման: Այս պիեսն իր բնույթով առավելապես հրապարակախոսական է: Դեմ հանդիման դուրս են գալիս թուրք ջարդարար Զեմալ փաշայի թոռ Զեմալ կրտսերը և 1922-ին Թիֆլիսում Զեմալին գետին տապալող վրիժառու Արտաշես Գևորգյանի թոռ Անդրանիկը:

Հետաքրքրականը նրանց խոսակցությունից թեման է՝ ցեղի հոգևրանությունը հարազատ: Զեմալ կրտսերն աշխատում է խուսափել իր նախնիների կատարած հրեշազորությունների համար պատասխան գտնելուց և ձգտում է մեղմել հայի պահանջատիրության հարցը: Զեմալով իբրև «Ակոս» թերթի խմբագիր Հրանդ Դինքի դասընկեր, հերոսական կեցվածքով ասում է. «Մենք բոլորս հայ ենք, մենք բոլորս Հրանդ Դինք ենք» և ապա՝ ասածն ավելի հիմնավորելու նպատակով ավելացնում՝ «Այդ ցույցը կազմակերպեցին թուրքերը, մի՛ մոռացեք»:

Անցյալի թեման կապելով արդիականություն հետ, հեղինակի գաղափարակիր Անդրանիկը հարց է տալիս պարծենկոտ թուրքին՝ ինչո՞ւ են ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն թուրք համարում և տիրանում նրա ստեղծագործություններին, ապա ավելի կոնկրետացնում իր ասելիքը՝ հայը երբեք քնած մարդուն չի սպանում, առավել ևս՝ կացնահարում: Արդարանալու տեղ չունի:

Միժեռակաբերդի Հայոց ցեղասպանությունից համալիրում վառվող կրակի մոտ Զեմալի կողմից ծաղիկներ դնելը<sup>2</sup>, հաշտության ձևաբանեկնելն ամենևին էլ չի նշանակում թե այսօրվա թուրքն ընդունում է երեկվա թուրքի ոճրագործությունները:

«Հարյուր տարի անց» պիեսը թուրքերի մոտ զղջումի զգացմունք առաջացնելու պահանջ է, որը պիես է այնքան շարունակվի, որ ոչ միայն թուրքերն, այլև նրանց զինակից բարբարոսները հասկանան՝

<sup>1</sup> Երևանի Համալսարան, 2005, № 19:

<sup>2</sup> Ազգ (Երևան) 2013, № 43:

Թե որքա՞ն, մինչև ե՞րբ կարելի է անմեղ մարդկանց թալանելու, ունեցվածքը գրավելու, երկրի երեսից վերացնելու մոլուցքը տանել: Չէ՞ որ ցեղասպանությունը ամենամեծ արատն է մարդկային պատմության մեջ:

«Հարյուր տարի անց» պիեսի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 2012-ի սեպտեմբերի 29-ին, Երևանի Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում: Բեմադրել է թատրոնի գլխավոր ռեժիսոր Տիգրան Գասպարյանը, որի աշխատանքին նպաստել են բեմանկարիչ Վահագն Թևանյանը, զգեստների ձևավորող Մերի Սարգսյանը, երաժշտության հեղինակ Էդվարդ Հայրապետյանը:

Դերերի կատարմամբ հանդես են եկել՝ Անդրանիկ – Տիգրան Ներսիսյան, Ջեմալ կրտսեր – Արմեն Մարության, Ջեմալ ավագ – Ազատ Գասպարյան, Մարիամ (Անդրանիկի տատը) – Նելլի Ներանյան, Գրիգոր Զոհրապ – Ալբերտ Սաֆարյան, Վարդգես (Սերենկյուլյան) – Անդրանիկ Հարությունյան:

Կյանքից հեռացած դերակատարներին փոխարինում են նորերը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնն իր նոր բեմադրությամբ 2015-ի մայիսին հյուրախաղերի է մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Գլխնդելի «Ալեքս» կինոգահլիճում ցուցադրված այդ ներկայացման հիմնական դերակատարները մնալով նույնը՝ Տ. Ներսիսյան, Ա. Մարության, Ն. Ներանյան, Ա. Սաֆարյան, կյանքից հեռացած Ազատ Գասպարյանին և Անդրանիկ Հարությունյանին փոխարինել են բեմադրության ռեժիսոր Տիգրան Գասպարյանը և Երևանի թատրոնների նախկին դերասան Լևոն Շարաֆյանը:

Այս նույն ներկայացումով թատերախումբը ելույթներ է ունեցել նաև Բոստոնում<sup>1</sup>:

Ցեղասպանության ահավոր հետևանքների ազդեցությունը հետագա սերունդներին ծանոթացնելու շատ ինքնատիպ, եթե չասենք բացառիկ հնարանքներով է ներկայացրել սփյուռքահայ բանաստեղծ և դրամատուրգ Մուշեղ Իշխանը (Ճենտերեճյան): Նրա պիեսի ցնցող վերնագիրն իսկ աչքի է ընկնում իր անսովորությամբ՝ «Մեռնիլը որքա՞ն դժվար է»: Այս պիեսը յուրատեսակ բողոք-երգիծանք է՝ ուղղված սառնասիրտ քաղաքակրթությանը, երբ առողջ մարդու գլխից հանում են նրա աշխատող ուղեղը, իսկ մարմինը փողոց նետում:

Աշխարհով մեկ սփռված գաղթական հայերի դաժան ճակատագրի

<sup>1</sup> + Կիրոս (Երևան) 2015, № 2, էջ 47:

բացահայտումն է այս պիեսը, ազգասպանության հետևանքի պատկերը՝ թե ինչպես արկածի ենթարկված գաղթական Ջեյմս Արամյանի ուղեղը պատվաստում են մի թուլամիտ ամերիկացու գլխում, որից հետո նա դառնում է հայի խելքով գործունյա, եռանդուն մարդ։ Նրա միտքն սկսում է զբաղվել նաև ուրիշների կյանքով, կարեկցանքով է վերաբերվում դեպի ուրիշ՝ ճշշված ժողովուրդները։

Հայի ուղեղով ամերիկացին այսպես է «լուսավորում» իր մորը՝ «Գիտես ինչ կնշանակե ժողովուրդը կոտորել ծրագրված ձևով և դադանային վայրագությամբ բռնագրավել նրա հողերը, թաղել նրա դատը, խեղդել նրա ձայնը...»: Ահա հեղինակի բուն միտքը։

Իսկ խելոք ուղեղի տեր հայը՝ տունը, տեղը, հայրենիքը կորցրած մարդը դարձել է գաղթական և թափառում է աշխարհում իր դատը պաշտպանելու հույսով։ Իսկ այդ երբ է եղել, որ հայի դատը ուրիշը պաշտպանի։ Ի՞նչ արեց Բեռլինի վեհաժողովը, որ ինչ անի նրանից ավելի քան հարյուր տարի անց, առավել քաղաքակիրթ թվացող պայմաններում ստեղծված Միասկի հանձնաժողովը։ Ի՞նչ արդարություն, ի՞նչ դեմոկրատիա։ Իբրև թե խաղաղության մեջ ենք, բայց գրեթե ամեն օր մարդ է զոհվում։ Ո՞վ արձագանքեց, ինչո՞ւ նպաստեցին սիրիահայուլթան նկատմամբ բռնությունների ու սպանությունների վերացման գործին։ Սա էլ 21-րդ դարի նոր ցեղասպանության երևույթ է, մի ոճրագործություն, որի համար ոչ ոք պատասխանատու չէ։ Մարդու կյանքը դարձել է մեղի կյանք՝ ով, երբ, որտեղ, ինչպես, ինչքան կուզի, ճղմելով կսատկացնի։

Ո՞ւմ սիրտը կարող է ցավել հայի համար, եթե նրանից շահ չունի։ Հայի դատը միայն հայը կարող է պաշտպանել։

«Մեռնիլը որքան դժվար է» պիեսը, որքան էլ որ բարդ է նրա ընկալումը, այնուամենայնիվ, խոսելով հայի հոգուց ու ցավերից, բավականին բեմական պատմություն է ստեղծել իր շուրջը։ Նրա առաջին բեմադրություններից մեկը տեղի է ունեցել Բեյրութի «Գասպար Իփեկյան» թատերախմբում։ Բեմադրողը և Ջոն Հելլրիի դերակատարը եղել է թատերախմբի ղեկավար՝ նշանավոր թատերական գործիչ, դերասան, ռեժիսոր և դրամատուրգ ժորժ Սարգիսյանը։ Ներկայացումը տեղի է ունեցել 1973-ին, Տեր-Մելքոնյան սրահում։

Բեմադրությանը մասնակցել են թատերախմբի հին ու նոր անդամները։ Ջեյմս Արամյանի դերակատարն է եղել Ժ. Սարգիսյանի աշակերտ Գալուստ Ճանսրզյանը (հետագայում գործել է Արգենտինայում)։ Մյուս դերերը կատարել են՝ Պողոս Առաքյալ - Խաչիկ Արա-

րատյան, օր. Մերի-Հերմինե Ճանսրզյան, Չարլի-Րաֆֆի Թորիկյան, Անիտա-Պայծառ Գարագաշյան, Ջոն Հելլերի մայրը-Ջեփյուռ Շանթ և ուրիշներ: Բեմադրությունն ունեցել է զգալի հաջողություն:

Մուշեղ Իշխանի՝ հետաքրքիր բովանդակությամբ այս պիեսը դրավել է նաև իրանահայ թատերական գործիչների ուշադրությունը: Բեմադրությունն իրագործել է Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության թատերախումբը՝ նրա ռեժիսոր և դերասան Արամայիս Աղամալյանի կողմից, որը եղել է նաև պիեսի գեղարվեստական ձևավորող-գեկորատորը, իսկ երաժշտությունը ձևավորել է բազմաշնորհ արվեստագետ-երաժշտագետ Լիդա Բերբերյանը: Օգտագործվել են ֆիլմի տեսարաններ:

Թեհրանյան «Մեռնիլը որքան՝ դժվար է» պիեսի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1974-ի մարտի 27-ին, «Արարատի» սրահում: Խաղացվել է իրանահայ թատրոնի դերասանական ընտիր կազմով, որոնցից շատերն իրենց արժանի հետքն են թողել Իրանի Հայ թատրոնի պատմության մեջ: Այսպես՝ Ջեյմս Արամյան-Սուրեն Բաղդասարյան, Պետրոս Առաքյալ-Մանվել Մարուլթյան, Դոկտ. Հարիսըն-Հարություն Մինասյան, Դոկտ. Շեփրատ-Գևորգ Նուբարյան, օր. Մերի-Այիդա Փիրզադյան, Գաբրիել Հրեշտակ-Մատթեոս Շաֆրազյան, Դոկտ. Տեյվիս-Համլետ Քարամյան, Ջոն Հելլըր-Աշոտ Ստեփանյան, Անիտա-Ասյա Ալեքսանդրյան, Մայք Ագամս-Հայկազ Ստեփանյան, Տիկ. Հելլըր-Ելենա Ավետիսյան, Սամ-Գառնիկ Պողոսյան, Ուսուցիչ-Սուրեն Մնացականյան:

«Մեռնիլը որքան՝ դժվար է» պիեսը Թեհրանում երկրորդ անգամ նույն բեմադրությամբ ներկայացվել է 1984-ի մարտի 27-ին՝ նվիրված Հ.Մ. «Արարատ» կազմակերպության 40-ամյակին, միաժամանակ նշելով Թատրոնի միջազգային օրը: Այս բեմադրության ծրագրում մի շատ ուշագրավ մեջբերում է արվել ամերիկացի դարձած Ջեյմս Արամյանի տեքստից, որն իր գաղափարական նպատակասլացությունը այսօր էլ բարձր է հնչում ու պիտի հնչի, մինչև նրա ձայնը տեղ հասնի աշխարհի բախտը «տնօրինողներին»: Արամյանի ուղեղով ամերիկացին ասում է. «Ես ամերիկացի եմ, այո, բայց պետք է բան մը ընեմ, աշխարհի խիղճը ցնցող արարք մը, որպեսզի չմոռացվի ցեղասպանության ահավոր դեպքը... Գիտես ի՞նչ մեծ, ի՞նչ արժեքավոր ժողովուրդ է Հայ ժողովուրդը...»:

Ով լսի-չլսի, թուրքի ականջները զմռսված են:

«Մեռնիլը որքան՝ դժվար է» պիեսի 1984-ի բեմադրության նոր դերակատարներից են եղել՝ Պետրոս Առաքյալ - Էդիկ Ասլանյան, Դոկտ. Հարիսըն - Տիգրան Գրիգորյան, Դոկտ. Շեփրատ - Ռաֆիկ Տ.

Գաբրիելյան, Դոկտ. Տեյվիս-Վանիա Պետրոսյան, օր. Մերի-Վերժիկ Թովմասյան, Գաբրիել Հրեշտակ - Արա Աբրահամյան, Չարլի (Ֆիլմում)-Արա Ասլանյան, Ջոն Հելլըր-Վարդգես Բաշյան, Անիտա-Մարո Սարգսյան, Մալք Ադամս-Վարդան Աղաբաբյան և ուրիշներ:

Այս բեմադրութեան ռեժիսորի օգնականը եղել է Անահիտ Գրիգորյանը, իսկ երաժշտութեան ձևավորողը՝ Բորիս Պետրոսյանը:

Իրանահայ թատրոնում «Մեռնիլը որքան դժվար է» պիեսի երրորդ բեմադրութիւնը կայացել է 1991-ի ապրիլի 12-14-ին, Նոր-Ջուղայի Հայ մարզամշակութային «Արարատ» միութեան սրահում: Նույն միութեան «Լ. Շանթ» թատերախմբի ուժերով պիեսը բեմադրել է ռեժիսոր Հրայր Տեր-Հովհաննիսյանը: Ներկայացման մասնակիցներից են եղել Վահիկ Գուրգենյանը, Մարիա Ասատրյանը և ինքը՝ Հ. Տեր-Հովհաննիսյանը:

Որտեղ հայ, այնտեղ թատրոն: Որտեղ թատրոն, նրա խաղացանկում ցեղասպանութեան թեմա: Սա է մեր կյանքի օրինաչափութիւնը, մեր կյանքի անբաժան ուղեկիցը, աշխարհի որ մասում էլ որ ապրի հայր: Հայի հիշողութիւնը պետք է արթուն պահի մեր ժողովրդի մի հսկա հատվածի եղբունական կորուստը և վառ պահի միլիոնավոր անմեղ նահատակների հիշատակը:

Եվ այսպես, հայի ուղեղով զարգացած ամերիկացու մասին Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքան դժվար է» պիեսը մուտք է գործել նաև ամերիկյան մայր ցամաքը՝ Հյուսիսում և Հարավում:

Առաջին անգամ բեմ է հանվել Նյու Յորքի Համազգայինի թատերախմբում, 1976-ի մարտի 14-ին: Բեմադրողն ու Հարիսընի ղերակատարը եղել է թատերախմբի ղեկավար Հրանդ Մարգարյանը: Նրա խաղընկերներն են եղել՝ Հովհաննես Պղտիկյանը (Ջոն Հելլըր), Երվանդ Քուփեյլյանը (Ջեյմս Արամյան), Անի Քելեճյանը (Տիկ. Հելլըր), Սոնիա Պղտիկյանը (Անիտա), Տիգրան Մինասյանը (Շարլ) և ուրիշներ:

Հարավային Ամերիկայում այն խաղացվել է Գորթուոլայի Համազգայինի մասնաճյուղի կողմից՝ մասնակցութեամբ Համազգայինի Վ. Լուիսի մասնաճյուղի «Ժորժ Սարգիսյան» թատերախմբի, 1986-ի օգոստոսի 13-ին, քաղաքապետարանի Թեատրոզել լիպերթատոլ խեներալ Սան Մարտին 400 տեղանոց սրահում: Բեմադրել է Ժ. Սարգիսյանի աշակերտ Գալուստ Ճանսրզյանը՝ ստեղծելով բոլոր տեսակետներից հաջող ներկայացում<sup>1</sup>:

«Կիլիկիո արքայից» հետո «Մեռնիլը որքան դժվար է» պիեսը Մ.

<sup>1</sup> Արմենիա (Բուենոս Այրես) 1986, № 452:

Իշխանի երկրորդ գործն է, որը տեղ է գտել Երևանի թատրոնների խաղացանկում: Վերջինը դերասան և ռեժիսոր Խորեն Աբրահամյանի կողմից բեմադրվել է 1993-ի հոկտեմբերի 16-ին Սունդուկյանի անվան թատրոնում և խաղացվել 23 անգամ: Ներկայացումների շարքն ընդհատվել է թատրոնի գործունեության հետագա շրջանի ժամանակավոր դադարի պատճառով:

«Մեռնիլը որքան դժվար է» պիեսը Սունդուկյանի անվան թատրոնում ունեցել է բեմադրական: աշխատանքների այսպիսի կազմակարգչականը Եվգենի Սոֆրոնով, գեկտոները – Մերի Սարգսյան, երաժշտականը – Արմեն Վարդանյան և Վարուժան Գալստյան, պարայինը – Ռուդիկ Կոստանյան:

Ներկայացման մեջ զբաղված է եղել թատրոնի միջին և երիտասարդ սերունդների ներկայացուցիչների հետևյալ կազմը. Հարություն Մովսիսյանը (Ջեյմս Արամյան), Գոհար Գալստյանը (Ջեսիկա Ստրոնգ), Իշխան Ղարիբյանը (Տեյլիս), Ժենյա Ավետիսյանը (Ջեսիկայի մայրը), Սամվել Սարգսյանը (Պողոս Առաքյալ), Խաչիկ Բաղայանը (Հրեշտակապետ), Արմեն Մարությանը (Սամ), Գևորգ Դոզոյանը (Հարիսըն), Լյուդմիլա Բաբայանը (Շեփերթ), Աշոտ Ղուկասյանը (Ջեյմս Բաուսման), Արթուր Նալբանդյանը (Մայքլ), Սերգեյ Միրոշչյանը (Ագրայիլ), Լուսինե Սարգսյանը (Ջոյ):

«Մեռնիլը որքան դժվար է» պիեսի նախավերջին ներկայացման հանգիստատեսների թվում են եղել Հայոց Բարեգործական Ընդհանուր միությունի նախագահ՝ հասարակական գործիչ Լուիզ Սիմոն Մանուկյանը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը (1994-ի հոկտեմբերի 23-ին) : Իսկ վերջին ներկայացումը խաղացվել է երկրապահների համար (նոյեմբերի 23-ին)<sup>1</sup>:

Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքան դժվար է» պիեսն ունեցել է նաև այլ բեմադրություններ: Այսպես՝

1989-ին Հասմիկ Սյուրմեկյանի բեմադրությունումը ներկայացվել է Փարիզում՝ Համագրայինի «Դիմակ» թատերախմբի ուժերով:

2000-ին Հալիպի «Ձալարյան» թատերախմբում, ռեժիսոր Հարություն Չենոզյանի բեմադրությամբ:

Ո՞ր հայ գրողը, այն էլ սփյուռքում ապրող հայր, կարող էր չանդրադառնալ Հայոց ցեղասպանության անբուժելի պատմությունը և մասնակցությունը չբերեր Օսմանյան թուրքիայի ծրագրած քաղաքականության՝ դարերով իրենց Հայաստանում երկրում ապրող հայերի մասսայական բնաջնջման դեմ բողոքի ու դատա-

<sup>1</sup> Գ. Սունդուկյանի անվան թատրոնի թանգարանի նյութերից:

պարտման հարցին: Այդպիսի գորողներից մեկն էլ եղել է հայ դատի պաշտպան, գրող և բազմափաստակ մանկավարժ Գեորգ Պաղճյանը (գրական անունով Վազգեն Այգունի):

Այգունին իր թատերական գործունեությունն սկսել է Բեյրութում: 1940-ին նա հիմնադրել է «Ռուբեն Մամուլյան» թատերախումբը և զբաղվել թատերական կյանքի առաջընթացի հարցերով: Բեյրութում և Դամասկոսում մի քանի ներկայացում տալուց հետո, ցավոք, ընդհատվել է թատերախմբի գործունեությունը:

Լիբանանյան չարաղետ դեպքերից հետո, շատերի նման, Այգունին ևս փոխադրվել է Կանադա: Այնտեղ նա գործակցել է Մոնրեալի «Արմենյան» թատերախմբի հետ, այս անգամ որպես դրամատուրգ: Առաջին գործը, որ նա ներկայացրել է թատերախմբին, եղել է 1941-ին Բեյրութում հրատարակած «Դեպի երկիր» երեք գործողությունամբ պիեսը:

Այգունու «Դեպի երկիր» պիեսը առաջին անգամ ներկայացվել է 1980-ի ապրիլի 26-ին, ապրիլյան սգատոնի շրջանակում, նախկին բեյրութահայ դերասան, դրամատուրգ և ռեժիսոր Դավիթ Էվերեկյանի բեմադրությունամբ, կատարելով նաև գլխավոր հերոսի՝ Խորենի դերը: Որպես խաղընկեր-դերակատարներ, նրա հետ հանդես են եկել Վերգինե Գրիգորյանը, Ռոզալյա Վասիլյանը, Արթո Նշանյանը, Գրիգոր Նուպարյանը, Հակոբ Էվերեկյանը և ուրիշներ:

Այս բեմադրության մասին Դ. Էվերեկյանը գրել է. «Սույն հայրենասիրական թատերախաղը, որ զանազան երկիրներե գաղթած՝ հուսկ Գանատա հաստատված հայերուս ներաշխարհին անձկալից փոթորկումներուն պատկերը կցուլացնեն, կջանայի անօրինակ հարազատությունամբ, արտասովորառն հուզումով և հոգվույս ամբողջ թափով ներկայացնել»<sup>1</sup>:

Բացենք այս պիեսում կատարվող գործողությունների տեսարանների վարագույրը և առաջնորդվենք բեմագրող Էվերեկյանի բնութագրությունամբ: Ձէ՞ որ, ինքն էլ երկրից երկիր գաղթելով շատ լավ է հասկացել թե հեղինակի մտահղացումը և թե կերպարների հոգեբանությունը:

Նախիջևանցի հիսնամյա վաճառական Խորենն իր կնոջ՝ Գոհարի և զավակների՝ Վազարչակի ու Աղասիի հետ հանգիստ ապրել ու գործել են իրենց հայրենիքում: Բայց երկրում սկսված անակնկալ շարժումները, շատերի նման, նրանց էլ հարկադրել են ընտանիքով փոխադրվել այլ միջավայր: Հայրենի օջախից հեռանալու ժամանակ,

<sup>1</sup> Դավիթ Էվերեկյան, Միշտ... Թատերական կյանքիս ճամբուն վրա, Լոս Անջելես, 1999, էջ 59:

Խորենն իր պարտեզի վարդենու թփի տակից մի բուռ հող է վերցնում և հետը տանում՝ մահից հետո իր զավակներին թողնելու, որպես հայրենիքի հիշատակ:

Գաղթի ճանապարհը Նախիջևանից նրանց տանում է մինչև Նոր Զուղա, Իրանի հարավը: Ինչպես ամեն մի գաղթական, նրանք էլ զրկանքներով են ապրում: Այդ հոգսաշատ և անապահով պայմաններում մահանում է կինը՝ Գոհարը: Թափառական մի աշուղի սրտառու է երգերը փոթորկում են նրանց անհանգիստ հոգիները: Մի քահանայի օժանդակությամբ, նրանց ընտանիքը գաղթում է մի ուրիշ աշխարհ:

Հասնում են Բևյրութ: Գոյուլթյան պայքարում Խորենն էլ չի դիմանում, նա էլ է մահանում: Զավակները՝ Վաղարշակն ու Աղասին ուխտ են անում սրբությամբ պահել հոր պատգամը՝ հայկական հողի հետ հայացքներն ու հոգիներն ուղղել «Դեպի երկիր»:

Դեպի հայրենիք վերադարձի այս պատգամը միշտ և ամենուրեք կարևոր դեր է խաղացել հայրենակարոտ սփյուռքահայուլթյանը Մայր հայրենիքի հետ կապելու և իրենց կյանքի մնացորդ տարիները Հայրենիքում ապրելու երանավետ գործում:

«Դեպի երկիր» պիեսը Մոնրեալում, դարձյալ Դ. Հյվերեկյանի բեմադրությամբ ներկայացվել է նաև 1991-ի հունիսի 2-ին, Հայ կաթողիկե միության «Ալիշանի» թատերասերների խմբի ուժերով, «Իփեկյան եղբարք» սրահում, հեղինակի ներկայությամբ: Ներկայացման Ա և Բ արարվածների ընթացքում մեծարվել է Դ. Հյվերեկյանը, իսկ ավարտին հեղինակն իր շնորհակալությունն է հայտնել բոլոր մասնակիցներին՝ 50 տարի առաջ իր հայրենասիրական պատգամը վերանորոգելու համար:

Հայ համայնքի հոգևոր հովիվ Գևորգ վարդապետ Զապարյանը դիտելով պիեսում ծավալվող գործողությունները և դերակատարների սրտառու է խաղը, այսպես է արտահայտվել. «Մարգարեաշունչ «Դեպի երկիր», տաք արցունքներ խլելով հանդիսականներու աչքերեն, փաստեց՝ թե 1941-ին լույս տեսած այս թատերախաղը իր այժմեականությունը տակավին կպահի ու պիտի պահե ցորքան սփյուռքի մեջ հայրենաբաղձությամբ ու ազգասիրությամբ տոգորված սրտեր գոյություն պիտի ունենան»<sup>1</sup>:

Ցեղասպանության թեման մարդկանց զգաստ և շրջահայաց պահելու մի այնպիսի մշտարթուն հարց է, որը տասնամյակներ շարուն-

<sup>1</sup> Դավիթ Հյվերեկյան, Միշտ... Թատերական կյանքիս ճամբուն վրա, Լոս Անջելես, 1999, էջ 80:

նակել ու դեռ այսօր էլ շարունակում է մտահոգել և՛ վերապրողներին և՛ հետնորդներին: Վերքը սպիանում է, բայց չի վերանում ու, մանավանդ, չի մոռացվում: Այսպիսի նստվածք է թողել անցյալի ահավոր դեպքերի ականատես Վիքթորիա Կոստանյանի հիշողութայան մեջ:

15 տարեկան հասակում տեսածն ու զգացածը ժամանակակից և ապագա սերունդներին հասցնելու նպատակով, Կոստանյանն 80-ամյա պատկառելի տարիքում գրիչ է վերցրել և գրել «Սրտի երգով» չորս գործողությամբ պիեսը: Իր իսկ անվանած «նկարագրական» թատերախաղը հեղինակը նվիրել է նահատակ հոր՝ Գրիգոր Էլմասյանի «քաղցր հիշատակին և ավելի քան 1.500 000 հայերու, որ զոհ եղան թուրքական ցեղասպանութայան ապրիլ 24-ին, 1915-ին»:

Կոստանյանն իր գրքի (պիեսի) «Երկու խոսքում» նշել է, որ արիլյան եղեռնի մասին պատմություն գրելու հավակնությունն չունի, բայց և այնպես ցանկացել է «գրել որպես Ականատես հայու նվիրական պատմություն, որովհետև, հայը երբ որ իր խաչին տակը կքած անցավ բյուրավոր գողգոթաներ է հհանդիպելով կարեկից նայվածքներու անգամ... քարսիրտ աշխարհը թեթևամտորեն խողխողեց հայուն արժանապատվությունը, իսկ ցեղասպան գազանը թողեց անպատիժ ու մինչև անգամ պատիվներու ալ արժանացուց»<sup>1</sup>:

«Սրտի երգով» (ինչու է՞ նաև վերքով) գրած պիեսի նյութը միանգամայն ինքնուրույն և բնորոշ երևույթի նկարագրությունն է: Պիեսի գործողությունները ծավալվում են Արևմտյան Հայաստանում՝ մինչև բռնազաղթը, տարագրության օրերին և դրանից քսան տարի անց Հալեպում:

Բյուրեղյանների ընտանիքը մտերիմներով համեստ շրջանակում նշում է իրենց ամուսնություն տասնամյակը: Նրանց հարեան Օսմանը կեղծ պատրվակով դուրս է կանչում բժիշկ Հրաչյային և տանում: Անցնում են շաբաթներ: Դեպքից ահաբեկված կինը՝ Արմինեն, մայրը՝ Թագուհին երեխաներով բռնում են գաղթի ճամփան՝ դեպի Հալեպ: Ճանապարհին մահանում է կաթվածահար Թագուհին: Հալեպ հասնելով Արմինեն հիվանդանում է տիֆով: Կորչում են Տիգրան ու Արմեն զավակները:

Առողջանալուց հետո Արմինեն, իբրև խոհարար, ծառայություն է մտնում հայասիր արար ճարտարապետ Պեշիրի տանը: Անցնում է 22 տարի: Մի օր նրանց մոտ ճաշի են հրավիրվում գերմանացի բժիշկ

<sup>1</sup> Վիքթորիա Կոստանյան, Սրտի երգով, <Հալեպ>, 1980:

էյմեն և երկրաչափ Սթրաուսը: Արմինեն հետևում է Սթրաուսին, իսկ վերջինս անընդհատ ուսումնասիրում է նրա վզից կախված մեղալյոնը, որ մինչ այդ նա թաքցրել էր:

Արմինեն խնդրում է Պեշիբին հարցնել Հյուբ-պարոնին, թե նա որտեղ է ծնվել: Երիտասարդը պատմում է, որ ծնվել է Արևելքում, փոքր հասակում իրեն ու եղբորը մի գերմանացի տարել է Գերմանիա, կրթություն տվել: Եզրայրը հետևելով հոր մասնագիտությունը, դարձել է բժիշկ: Հիշողության մեջ մնացել է միայն մոր քաղցր ձայնը: Այլևս անկարող լինելով թաքցնել իր հույզերն ու կասկածները, Արմինեն բացականչում է՝ զավակս, Արմեն: Մայրը զտնում է կորցրած զավակին: Տանտիրուհի ձեմիլեն եզրափակում է տեսարանի միտքը՝ մայրը սրտի երգով է ճանաչել զավակին:

«Սրտի երգով» պիեսի հեղինակը՝ Վիքթորիա Կոստանյանն ինքն էլ է անցել գաղթի նույն ճանապարհով՝ Հալեպ, Եգիպտոս, Ամերիկա: Տարագրությունից 65 տարի անց, նա որոշել է վերապատմել իր տեսածն ու լսածը և իբրև հարյուր-հազարավոր ականատեսներից մեկը, հավաստի պատմություն թողնել գալիք սերնդին ու աշխարհին: Ոչ միայն սրտի երգով, այլև սրտի մոմուացող ցավով պատանեկան անմոռաց հիշողությունները գրելով, նա պատմության դատին է հանձնել իբրև մի բեկոր ցեղասպանության ու նրա տխուր հետևանքների՝ սոսկալի ողբերգություն մի պատկեր, որով ամփոփել է տարաբախտ հայերի ճակատագիրը Արևմտյան Հայաստանում:

Հայոց ցեղասպանության ղողանջող գանգի ձայնը միշտ հնչեցնելու նպատակով, հայազգի թատերական գործիչները երբեմն անդրադարձել են օտարագիր հեղինակների՝ համանման թեմաներով գրված ստեղծագործությունների համակերպմանը հայ իրականություն հետ: Մի այդպիսի հետաքրքիր աշխատանք է կատարել սփյուռքահայ Հանրահայտ թատերական գործիչ Պերճ Ֆազլյանը: Օգտագործելով Ֆրանսիացի դրամատուրգ Ժան Պոլ Սարտրի «Անշիրիմ մեռելներ» պիեսը, նա հավելյալ մասեր է մտցրել, հարմարեցրել հայ իրականությանը և գրել «Անպատանք գիակներ» դրաման:

1890-ական թթ. արյունալի իրադարձությունների պատկերմանը նվիրված երեք մասից բաղկացած իր պիեսի մասին Ֆազլյանը տվել է հետևյալ բացատրականը՝ «Անպատանք գիակներ» գործը բեմ հանելով կուզեմ ծնրադրել հիշատակին առջև բաղմահազար անանուն հայ հեղափոխականներուն, որոնցմե մեկ եղավ հայրս՝ Հայկ Ֆազլյանը»:

«Անպատանք գիակներ» պիեսը Ֆազլյանն առաջին անգամ բեմադրել է Մեծ եղեռնի 60-ամյակի առթիվ, 1975-ի մայիսի 21-ին,

Բեյրութի՝ իր ղեկավարած «Ազատ բեմ» թատերախմբի կազմով, Հ. Տեր-Մելքոնյան թատերասրահում: Դերակատարներից են եղել Հարութ Ֆազլյանը (Հրանդ), Հարութ Գնդունին (Տիգրան), Սարգիս Տեր-Խաչատրյանը (Սասունցի Ավո), Վարդուհի Բեշիշյանը (Շաքե), Հարութ Թորոսյանը (Վահե), Պ. Ֆազլյանը (Ճիհաս), Լուսինի Թապալյանը (Պեքիր) և ուրիշներ:

Թուրք բռնապետութեան դեմ հայ բանտարկյալների բողոքի ձայնը ղողանջող այդ պիեսը Ֆազլյանը բեմադրել է նաև Կանադայում աշխատելու տարիներին՝ Մոնրեալի Թեքեյան Մշակութային միութեան՝ իր հիմնադրած «Հայ բեմ» թատերախմբի ուժերով, Մեծ եղևուների հերթական տարելիցին (1978): Այստեղ ևս Հրանդի և Ճեվտեթ պեյի դերակատարները եղել են որդի և հայր Ֆազլյանները: Մյուսները եղել են տեղացի թատերասերներ՝ Տիգրան Կեովչեյանը – Սասունցի Ավո, Զարեհ Զաքարյանը – Տիգրան, Աբել Վարդիվառյանը – Վահե, Արթուր Աբգարյանը – Վիգեն, Անի Զաքարյանը – Շաքե և ուրիշներ:

Օտար երկրում հայերի ձուլման վտանգի դեմ պայքարի ուրույն բովանդակությամբ աշխատանք է գրել սփյուռքահայ բանաստեղծ և դրամատուրգ Ժակ Հակոբյանը: Աչքի առաջ ունենալով իրեն ծանոթ միջավայրում տեղի ունեցող այդ վտանգը, որն ի ցավ ամենիս, գնալով ավելի համատարած երևույթ է դառնում, Հակոբյանը գրել է «Կռունկը կկանչե» պատկերավոր վերնագրով պիեսը: Հեղինակի ցանկությունն է եղել հայրենակարոտության խորհրդանիշ հանդիսացող կռունկի թևերով հայրենի տուն հավաքել բնավեր պանդուխտներին:

Պիեսում պատկերված է թե ինչպես հայր ու որդի դաղթելով Ավստրալիա, կորցնում են իրար: Հայութունից օտարացած որդին ծանոթանում է մի հայուհու հետ և ամուսնանում: Այդ եղանակով վերագտնելով իր արմատները, վերադառնում է հայրենիք:

Հակոբյանի «Կռունկը կկանչե» պիեսն առաջին անգամ բեմադրվել է Բեյրութում, լիբանանյան պատերազմի տարիներին (1977-1978), արտագաղթի շրջանում, երբ ասահեկված բնակչությունը տուն-տեղ թողած, չվում էր օտար երկրներ: Պիեսը բեմադրել է Համազգայինի «Գասպար Իսիկյան» թատերախմբի ղեկավար-ռեժիսոր Ժորժ Սարգիսյանը: Բեյրության բեմադրությունը հուսադրող դեր է կատարել տեղի հայ ազգաբնակչության միջավայրում, որի փայլուն վկայությունն է նրա 41 ներկայացումը Բեյրութում, 7-ը՝ Հալեպում, 2-ը՝ Դամասկոսում: Հիրավի սա բացառիկ երևույթ է սփյուռքահայ թատերական կյանքում:

Ժորժ Սարգիսյանը «Կռուները կկանչե» պիեսի մի բեմադրություն էլ Բուենոս Այրեսի Համազգայինի թատերախմբի հետ է տվել, 1980-ին: Չորս ներկայացում էլ Մոնտեվիդեոյում է խաղացվել:

1981-ին կռուների թեևս Սարգիսյանը հասել է Կանադա և Տորոնտոյի Համազգայինի «Պետրոս Աղամյան» թատերախմբի հետ նորից բեմադրել «Կռուները կկանչե» պիեսը: Այս նոր ներկայացումով թատերախումբը մասնակցել է Օնտարիոյի միջազգային թատերական փառատոնին և առաջնությունն շահել:

«Կռուները կկանչե» պիեսը հետաքրքրության է արժանացել նաև Տորոնտոյի «Հրաչյա Ներսիսյան» թատերախմբի կողմից: Բեմադրությունն իրականացրել է նախկին պոլսահայ դերասանուհի և ռեժիսոր Սիրարփի Աճեմյանը: Այդ ներկայացումով թատերախումբը ելույթ է ունեցել Դետրոյթում ևս (1989):

Մեծ եղեռնի ու գաղթի շրջանի գոհվածների ու վերապրողների մասին գրված դրամատիկական գործերից բացի, բեմ են հանվել նաև բավականին թվով մեծ ու փոքր, արձակ և չափածո ստեղծագործությունների բազմաթիվ բեմականացումների տարբերակներ, որոնց բեմադրությունները պակաս ներգործություն չեն ունեցել հանդիսականների վրա:

Այդպիսի գործերի թվին է պատկանում երևանաբնակ գրող-դրամատուրգ Դավիթ Գազազյանի «Թոռնիկա հայերեն չգիտե» պատմվածքի բեմականացումն ու բեմադրությունը: Պիեսն ունի շատ սեղմ, բայց հուզիչ բովանդակություն: Հայաստանում ապրող բանվոր Սերոբը շատ է մտահոգված, որ սփյուռքում գտնվող թոռնիկը վերագոհում է, բայց հայերեն չգիտե:

«Թոռնիկա հայերեն չգիտե» պատմվածքը բեմականացրել ու բեմադրել է Նոր Զուղայի թատրոնի ռեժիսոր Զարեհ Տեր-Սուքիասյանը: Ներկայացումը տեղի է ունեցել 1981-ի հոկտեմբերի 25-26-ին, «Արարատ» սրահում, Մշակույթի օրվա առթիվ: Նախաձեռնությունը պատկանել է Իրանահայ Ազգային և Մշակութային միություն Նոր Զուղայի մասնաճյուղին<sup>1</sup>: Վարպետ Սերոբ-Նորայր Մատուրյան, բանվորներ – Արիս Ղազարյան, Զարեհ Հարությունյան, Արա Հախնազարյան:

Ցեղասպանության տխուր հետևանքների մասին գրված արձակ դրամատիկական կառուցվածքով ներկայացված ուշագրավ գործերից մեկը պետք է համարել Դերենիկ Դեմիրճյանի «Ավելյորդը» պատմվածքը: Այս գործն ինքնին շատ հուզիչ է, իսկ դրամատիկա-

<sup>1</sup> Փյունիկ (Թեհրան) 1981, № 44:

կան տեսքի բերված տարբերակով գործող անձանց երկխոսությունը նյութին ավելի է կենդանություն տալիս և հանդիսատեսի ուշագրությունը կենտրոնացնում:

Դեմիրճյանն իր «Ավելորդը» պատմվածքը գրել է Մեծ եղեռնից հետո՝ ողջ մնացածների գաղթի շրջանում, 1916-ին, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անց, սկսվել էր մարդու իրավունքների պաշտպանությունը հանրությանը ներկայացնելու հարցի շարժումը:

Այս պատմվածքում հեղինակը մեծ սրտացավությամբ է պատկերել գաղթի ժամանակ ընտանիքը փոխադրելիս անդամալույժ քրոջն ավելորդ համարելը և նրան թուրքերի հաշվեհարդարի բաժին թողնելու որոշումը: Սուրբիկը, որն այնքան սիրով ու նվիրվածությամբ կապված է եղել եղբոր՝ Հաճի աղայի ընտանիքի հետ, վերջինիս դաժան որոշումով, ճանապարհին մնում է անտեր, անտիրական: Այսպիսի անմարդկային վարմունքն այնքան սոսկալի է եղել երկու կողմի համար, որ Հաճի աղան չի դիմացել այդ ահավոր ողբերգությանը և մտատանջությունից ու խղճի խայթից մահացել է:

Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի՝ թերևս առաջին ու միակ բեմականացումն ու բեմադրությունը տեղի է ունեցել Թեհրանի Հայ Մշակութային «Սիփան» միության «Մկրտիչ Թաշչյան» թատերախմբի կողմից, «Նաիրի» սրահում: Ներկայացումը հարմարեցվել է ապրիլի 24-ի տարելիցին: Բեմականացումը կատարել ու բեմագրել է «Սիփան» միության «Մկրտիչ Թաշչյան» թատերախմբի գերասան և ռեժիսոր, վաստակաշատ թատերական գործիչ Սուրեն Մնացականյանը, որը միաժամանակ կատարել է Հաճի աղայի դերը: Սուրբիկի դերակատարն է եղել Ժանեթ Օհանյանը:

Իրանահայ թատրոնում հաճախակի դառնալով գեղարվեստական երկերի բեմականացումների փորձերը, ընդարձակվել են դրանց թեմաները: Զգալի տեղ են հատկացվել նաև ցեղասպանության և նրա հետևանքների պատմությանը նվիրված գործերի բեմականացումներին: Այդպիսի գործերից մեկը եղել է գաղթականի արմատներով խորհրդահայ արձակագիր Մուշեղ Գալչոյանի «Մամփրե արքան» գործը: Հայաստանում տուն տեղ դրած, ընտանիքի տեր, նախկին գաղթական Մամփրե պապն աշխատում է իր թոռնիկի մոտ սեր զարթնեցնել գեպի հայրենի երկիրը, արմատները:

Հայրենասիրական բովանդակությամբ այս գործը բեմականացրել ու բեմագրել է նույնպես իրանահայ թատրոնի երախտալեցուն գերասանուհի և ռեժիսոր Կիտուշ Արզույանը: Պիեսը խաղացվել է 1984-ին, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության սրահում:

Այդ նույն 1984-ին Արզուլյանն անդրադարձել է ցեղասպանության թեմային առնչվող ևս մի նոր գործի բեմադրություն: Ուսումնասիրելով Վասպուրական աշխարհի հեղափոխական-ֆիդայիների շուրջը եղած դրականությունը, նա գրել է «Խանասորի արշավանքը» վերնագրով պիեսը՝ նվիրված 1897-ի հուլիսի 24-ի նշանավոր իրադարձությանը:

«Խանասորի արշավանքը» պիեսը ներկայացվել է Հայ Համայնարանականների սրահում, երիտասարդ թատերասերների ուժերով: Հեղինակի նպատակն է եղել նոր սերնդին փոխանցել շուրջ մեկ դար առաջ տեղի ունեցած Հայ ազատագրական պայքարի մասնակիցների հերոսական սխրանքների պատմությունը գրվագները:

Տարբեր տարիներ արձագանքելով ապրիլի 24-ի և նրան Հաջորդած ամիսներին նահատակված հայությունն անմարելի հիշողություն ոգեկոչմանը, Արզուլյանը ձեռնարկել է նորանոր աշխատանքների բեմականացումներ ու բեմադրություններ: Դրանցից մեկը՝ Հայաստանյան գրող Ռաֆայել Արամյանի «Մեղեգիներ» գրքից առանձնացված «Կոուկ» և «Սրինգ» գործերի բեմականացումներն են, որոնք իբրև եղեռնի թեմայով ստեղծագործություններ, ներկայացվել են 1995-ի ապրիլի 22-ին, Թեհրանի Հայ ակումբում: Հայ ակումբի և Հայ կին միություն կազմակերպած այդ միջոցառման գեղարվեստական (երգ, արտասանություն, բանախոսություն) բաժնի վերջում ներկայացված «Կոուկ» և «Սրինգ» գործերից հյուսված պիեսում խոսքը գնում է թե ինչպես 1896-ին Փարիզում, երիտասարդներով չրջապատված Կոմիտասը ծանոթացնում է նրանց Հայ երաժշտության և սրինգի գործածությունը: Այդտեղ նա ծանոթանում է Փարիզ գաղթած Արամի հետ և մտերմանում:

Ներկայացման մեջ օգտագործվել են Կոմիտասի երաժշտությունից առանձին գործեր: Կոմիտասի դերակատարն է եղել Ալֆրեդ Արելյանը, իսկ Արամինը՝ Ռոմեյ Սուլթանյանը:

Ապրիլյան հիշատակի ոգեկոչման թեմաներով գործերից Արզուլյանը բեմականացրել ու բեմադրել է նաև Վահագն Դավթյանի «Ռեքվիեմ» (1984), Եղիշե Չարենցի «Մահվան տեսիլը» (1985), Վաղգեն Շուշանյանի «Երկիր հիշատակաց»-ից «Մորս լուսանկարը» և «Երկրորդ մահը» գործերը «Կամրջող սերունդ» վերնագրով (1997):

Մեծ եղեռնի 83-րդ տարելիցին, 1998-ի ապրիլի 28-ին Թեհրանի Հայ ակումբի սրահում, նույն ակումբի «Հայ կին» միության նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ցեղասպա-

նության նահատակ մտավորականներին: Կենտրոնական դեմքը եղել է բանաստեղծ Դանիել Վարուժանը, որի «Կակաչներ» վերնագրով բանաստեղծությունն էլ դարձել է երեկոյի մասնակիցների ուշադրության և գործողության կենտրոնաձիգ ուժը:

Երեկոյի ընթացքում տեղի են ունեցել արտասանություններ, օրվա թեմայի հետ կապված երգ ու երաժշտություն, որոնց ավարտին ներկայացվել է Դ. Վարուժանին նվիրված մի տեսարան Պերճ Զեյթունցյանի «Վերջին արևադալը» վեպից: Նյութի բեմականացնողն ու բեմադրողը եղել է Կիտուշ Արզուլյանը, որը գեղարվեստական միջոցներով արտահայտվելով՝ որոնումների նոր ձևերով հետաքրքիր ներկայացում է ստեղծել: Բեմադրության մեջ եղել են ուղղակի խոսքեր, արտասանություններ, երաժշտական կտորներ, որոնք ամբողջացրել են Վարուժանի և նրա շրջապատի ընդհանուր պատկերը, մինչև թուրք ոստիկանի գալն ու նրան անվերադարձ տանելը:

Այս հետաքրքիր լուծումներով բեմադրության մեջ Դանիել Վարուժանի դերում ելույթ են ունեցել երկու գերակատար: Իբրև ներկա Վարուժանի դերում Արա Ասլանյանը, իսկ տեսիլում՝ Նժդեհ Հովհաննիսյանը: Վարուժանի կնոջ՝ Արաքսիի դերը կատարել է Մելինե Տեր-Սարգսյանը, Ռուբեն Սևակի դերը՝ Դվին Գալստյանը, պատանի Վահրամ Փափազյանինը՝ (տեսիլում) Հենրիկ Խաչատրյանը, Երիտասարդինը՝ Սևրգեյ Աղաջանյանը, Թուրք տասնապետինը՝ Արթուր Արթինյանը:

Հուշերի և կենդանի խոսքի շաղկապումը կատարել է պատմիչ-մեկնաբան Ռոմել Սուլթանյանը:

«Կակաչներ» ասմունքաներկայացումը իր ձևի ու բովանդակության ներգաշնակությունը եղել է տպավորիչ ու հուզիչ: Այդ ներկայացման առթիվ «Ալիք» թերթում տպագրված գնահատական խոսքում գրվել է. «Ոչ ողբ ու կոծ, ոչ հուսահատություն, այլ պայքար, 1915 թվի մեր բոլոր զոհված մտավորականների արյան պահանջը կար միջոցում, որը գեղարվեստական կատարումներով փոխանցվում էր հանդիսատեսին»<sup>1</sup>:

Բեմադրության մեջ օգտագործված երաժշտության համադրումը կատարել է Ռուբեն Տեր-Սարգսյանը և հաճելի տպավորություն թողել:

Դանիել Վարուժանի մասին խոսքով հանդես է եկել Թեհրան հրավիրված հեղինակը՝ Պերճ Զեյթունցյանը:

Մեծ եղևունի սերնդի ներկայացուցիչների հետագա կյանքի պատմությունն իր արտացոլումն է ստանում ոչ միայն այդ հարցի շուր-

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1998, № 108, (Կիտուշ Արզուլյան, Հայկիներ, Երևան, 2010, էջ 284):

ջը եղած գրամատիկական գործերում, այլև նույն բովանդակու-  
թյամբ գեղարվեստական գրականության բնականացման եղանա-  
կով ներկայացումներում: Միաժամանակ ակնհայտ է, որ այդ թեմա-  
յի շուրջը եղած գրականության մեջ դեռևս կան չբեմականացված-  
չբեմագրված գործեր, որոնք իբրև հին վերքերի մերօրյա մորմոքներ,  
ուենեն իրենց որոշակի արժեքն ու արժանիքները:

Այս տեսակետից շատ ինքնատիպ ու հետաքրքրական աշխա-  
տանք է գրել իրանահայ նշանավոր հրապարակախոս-բանաստեղծ  
Վարանդը (Սուքիաս Քյուրքչյան): Նրա «Նոր Նեմեզիդա» չափածո  
պիեսը նորարարութուն է ոչ միայն հեղինակի տված՝ «Համույթ չա-  
փաբերական» բնութագրումով, այլև գեղարվեստական կառուցված-  
քով, շնչով, դինամիզմով, պատկերայնությամբ և նյութի յուրահա-  
տուկ ընդգրկումով: Նոր և ամբողջական գործ է այն, այլ իր գրած  
«Արյան մղձավանջը» երկարաշունչ բանաստեղծության հիմքի վրա,  
տարբեր գործերից ու պոեմներից հարմարեցված ու խմբագրած հատ-  
վածներ, որոնց միջոցով նա արտահայտել է հարազատ ժողովրդի՝  
դարերից եկող այն հայածանքների ու ցեղասպանության փորձերի  
գեմ բողոքը, որին աշխարհի շատ երկրներում անտարբերությամբ  
են նայում:

Հայ ժողովրդի մասին այդ դյուցազներգությունը Վարանդը գրել  
է 1991-ի ամռանը, երբ զարաբաղյան շարժման հետ ծնունդ էր առել  
նաև Հայաստանի ազատ-անկախ գոյության գաղափարը: Երկու մա-  
սից բաղկացած այս պիեսի կառուցվածքը մոտ է ասմունքային-հրա-  
պարակախոսական թատրոնի կատարողական-մատուցման ոճին:  
Այդտեղ գործում են հինգ անձնավորություն՝ Ոգին, Զորավարը,  
Պատմիչը, Հարսը, Գաճաճ-պատանյակը: Նյութն ընդգրկում է հին  
ժամանակներից մինչև հավերժություն, գործողությունը կատար-  
վում է ամեն անգ:

«Նոր Նեմեզիդան» (վրեժի գաղափարը) Հայ ժողովրդի գոյատև-  
ման, անցյալի մռայլ էջերը մոռացության չտալու, նոր՝ ազատ ու  
անկախ հայրենիք կերտելու արձագանքն է միաժամանակ: Անցյալի  
ու ներկայի չաղկապումը Վարանդը շատ դիպուկ է ներկայացրել  
Հարսի հետևյալ տեքստում.

Տասնևհինգ թվի զոհյալներին ողջ  
Հոգին ամպել է Արցախի վրա,  
Եվ անձրևում է, անձրևում դողդոջ  
Նոր թաղվածներիս քար-ցեխի վրա...  
Տասնևհինգ թվին չունեցան շիրիմ  
Իմ ժողովրդի պավակները հեզ.  
Դրա համար էլ նրանց բա՛ց հոգին

Մավառնում է ուր հարկ է լինում, պետք:  
Տասնևհինգ թվի հոգիներն ամեն  
Մեկ էլ թխպում են Մասսի գաղաթին,  
Որ մի օր հանկարծ կայծակով զարկեն  
Թշնամու նենգ ու արնաներկ ճակտին...  
Տասնևհինգ թվի զոհյալներին ողջ  
Հոգին ամպել է Արցախի վրա.  
Եվ անձրևում է, անձրևում դողդոջ,  
Իմ ժողովրդի չար բախտի վրա:

Գրելով այս պիեսը, հեղինակը հույս է հայտնել, որ հայ ժողովրդի պատմական այդ փոթորկոտ օրերին, եթե իր աշխատութունը «օգնի հայկականության բյուրեղացման և հայ հոգու ավելի քան ամրապնդման գործին», ինքն իրեն անսահման երջանիկ ու բախտավոր պետք է զգա<sup>1</sup>:

Իր մի ինքնակենսագրության մեջ Վարանդը պատմում է, որ 1915-ի տարագրության օրերին իր Վերոնիկա տատը 7-8 տարեկան հասակում Կարինից գաղթելիս, հոգնածությունից այլևս անկարող լինելով գրկած տանել նորածին քրոջը, նրան դրել է ճանապարհի եզրին ու քարերով պատել շուրջը: Որոշ ժամանակ անց, խիղճը ստիպել է վերադառնալ և վերցնել քրոջը, բայց այլևս չի գտել նրան քարե ցանկապատի մեջ: «Թշվառ ու խեղճ կինը, — գրել է հուշագիրը, — ողջ կյանքում տվալտեց հոգեկան տառապանքով»<sup>2</sup>:

Նրա կրած այդ տառապանքն անցել է երրորդ-չորրորդ սերնդին, իր արտահայտությունն ստացել Վարանդի մի շարք գործերում: Եվ, ինչպես ստորև կտեսնենք ու կհամոզվենք, Վարանդի վիշտն ու հուզմունքը միայն արյունակցական շրջանակներով չի ավարտվել, այլ համազգային-համահայկական բնույթ է կրել:

Հայրենասեր բանաստեղծ լինելուց բացի, Վարանդը նաև համահայկական հոգսերի՝ կարոտի ու համախմբման, մեր արմատներն ավելի անսասան պահպանելու գաղափարակիր, ժողովրդի բարօրության համար մաքառող քաղաքացի է: Այս իսկ առումով նրա մշտական ուղադրության կենտրոնում է Հայոց ցեղասպանության արարքի դատապարտումը և պահանջատիրության հրաշիկ գծի թեժացումը:

Հայոց Մեծ եղեռնի հարյուրամյակի նախաշեմին, Վարանդն իր զրնգուն քնարով անդրադարձել է մի նոր թեմայի, որը եզակի տեղ է գրավում մեր ժողովրդի կրած հալածանքների ու կոտորածների

<sup>1</sup> Վարանդ, Նոր Նեմեզիդա, Երևան, 1993:

<sup>2</sup> Թորոս Թորանյան, Իրանահայ ողբերգի բանաստեղծը՝ Վարանդ, Հալեպ, 1977, էջ 10:

պատմութեան մեջ: Նա նորովի է պատկերել հայոց անցյալի ինչպես 1915-ի, այնպես էլ 1937-ի սև էջերի հեղինակների մերկացումը:

Հենց այս հարցերին է նվիրված Վարանդի «Քավարան-7» չորս գործողութեամբ էքստրասենսական թատերկը, որը նա գրել է 2011-ի սեպտեմբերի 1-ից-7-ը: Ո՞վ գիտն՝ քանի յոթ օր, քանի յոթ ամիս, քանի յոթ տարի է նա խորհել այս թեմայի շուրջը, մինչև որ ասպարեզ է հանել<sup>1</sup>:

«Քավարան-7»-ը գրված է «Նոր Նեմեզիդայի» պես ազատ չափածոյով: Գրված է բառերի դինամիկ շեշտավորումներով, որոնք բխում են ոչ միայն թեմայից, այլև գործող անձանց անհատականութուններից, իր անձնական մոտեցումից: Հեղինակն իր այս նոր պիեսը նվիրել է «Առաջին և երկրորդ աշխարհամարտերին նահատակված և դրա դաժան հետևանքները կրող հարազատներին... իբրև աղոթք, հոգեհանգիստ և պատարագ»:

Վարանդի «Քավարան-7»-ը նոր տեսակ է մեր դրամատուրգիայի պատմութեան մեջ՝ իբրև հայրենասիրական-հրապարակախոսական գրամա: Նրա խոսքը վերաբերում է երկու սերնդի իրական մարդկանց՝ անմեղ նահատակների հիշատակի ոգեկոչմանը: Ահա այդ սրբութունները՝ Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, ինչպես նաև Կոմիտասը, 1937-ի զոհեր՝ Եղիշե Զարենյը, Ակսել Բակունցը, Զապել Եսայանը, Վահան Թոթովենցը:

Գործողութեան վայրն ու ժամանակը ներկայիս Արարատի մարզի Զանախչի (Զանգակատուն) դյուղի մոտակայքն է՝ 1936-ի աշնանը: Դրամատուրգիայում ընդունված կարգի համաձայն, այստեղ ևս նույն տարածքում, փոխ առ փոխ կատարվում են հին ու նոր տեսարաններ:

Առաջին պատկերի ենթավերնագիրն է՝ «Երկնայինները» – 1915-ի նահատակները: Խավար լուսավորութեան մեջ մի պահ երևում են ու լուռ հեռանում: Ասպարեզ է գալիս բանաստեղծ Կոստան Զարյանը իր «Նավը լեռան վրա» վեպի հերոսներից մեկի՝ դոկտոր Պետրոս Մարկի կերպարով և ոգևորված պատմում է հայերի դերի մասին տարբեր երկրներում ու ժամանակներում:

Երկրորդը կոչվում է «Հետապնդվողները» – 1937-ի զոհերն են: Քաղաքից հեռու, բնութեան գրկում մաքուր օդ են շնչում, խորհում կյանքի մասին: Նրանց խմբին է մոտենում Պարույր անունով մի ուշիմ տղա՝ զրույցի ներքաշվում, բարեկամանում, դառնում համախոհ:

Երրորդը՝ «Արծաթե ճոպանալարում» – երևում են 1915-ի նահա-

<sup>1</sup> Վարանդ, Քավարան-7, Թեհրան, 2014, 86 էջ:

տակներն իրենց գրական հերոսների անուններով՝ Լալագեի, Դալիթայի, Թեֆարիկի հետ: Արևմտահայ և արևելահայ գրողների մասին իր կարծիքն է հայտնում Կոմիտասը:

Չորրորդը՝ «Թագի փոխանցումը» - գրական թագի փոխանցումն է սերնդե-սերունդ: Չարենցը զրույց է սկսում Պարույրի հետ:

Վերջինս դեռ չավարտած «Ես իմ անուշ»-ի արտասանությունը, գալիս է Չեկիստը և ոստիկանների ուղեկցությամբ բոլորին տանում: Գալիս է մի հայ Չեկիստուհի, հիշեցնում հայկական տարածքների՝ Արցախի, Նախիջևանի, Քարվաճառի, Գարդմանքի, Կարսի, Ջավախքի կորուստը:

Մի պահ լուսավորվում է վերին հարթակը, որտեղից Զոհրապը հիշեցնում է հայոց առաջին թագավոր Պարույրին, նրա թագը «փոխանցելով» պոետ Պարույրին (որը կրում է Ռ. Սևակի գրական անունը): Վերջինս վազում է Չարենցի ետևից:

Հայոց ցեղասպանության ու նրա հետևանքների տխուր ազդեցությունն իր հետքերն է թողել նաև վերապրողների որոշ ժառանգների հոգեբանության մեջ՝ նրանց կտրելով ազգային կյանքից ու արժանապատվությունից: Այսպիսի նորաղևտ ախտերի քննադատությամբ ու դրանց վերացման դեմ հանդես է եկել արևմտահայ ծագումով գրող և մանկավարժ Հարություն Էսեկյուլյանը: Նա է վերեկի է, եղել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության դասախոս, հետագայում փոխադրվել է Կանադա: Այս երկու տողն արդեն ասում է, որ նա ինքն էլ է կրել ցեղասպանության տառապանքները, հաղորդակից դարձել իր ճակատագիրն ունեցողների և նրանց զավակների աստանդական կյանքին ու հանձնվել բախտի քմահաճույքին:

Ցեղասպանության հետևանքների մասին Էսեկյուլյանը գրել է երկու պիես, երկուսն էլ՝ «գաղութահայ կյանք»:

Էսեկյուլյանի «Խղճի խայթ» երևք գործողությամբ պիեսը հայ ափյուռքին հուզող՝ ժամանակակից սերնդի այլասերության դեմ է: Մեծ եղեռնից մի կերպ փրկված որբ պատանի Գաբրիել Արևյանը բնակություն հաստատելով Ֆրանսիայում, հային հատուկ ձեռներեցությամբ ու աշխատասիրությամբ առաջագրիմելով, դառնում է գործարանատեր: Օտար շրջապատում ապրած և օտար «դաստիարակություն» ստացած Գաբրիելը կտրվելով ազգականներից ու հայ կյանքից, բնականաբար, ամուսնանում է ֆրանսուհու հետ, երեխա ունենում: Բայց կինը շուտով մահանում է: Հայրն սկսում է զբաղվել երեխային կրթություն տալու և նրա կյանքը բարեկեցիկ դարձնելու հարցերով:

Անցնում է քսան տարի: Գաբրիելի մոտ վերակենդանանում են ազգային զգացողությունները՝ մտաբերում է իր անցյալը, հայ կյանքը, եղևունը, որոնց տխուր էջերը հետզհետե նրա մեջ արթնացնում են պայքարի գաղափարն ինքն իր դեմ: Զարթոնք ապրած հայը ճակատագրական պայքարի մեջ է մտնում այլասերված հայի դեմ: Ահա, այս զարթոնք ապրած և դեպի հայուլթյունը վերադարձող անհատի օրինակով էլ, էսեկյուլյանը ձգտել է, որ իր հերոսը օրինակ ծառայի իրենց անցյալն ու ներկան կշռաբաշտողների համար, վերափոխի նրանց հոգեբանությունը, «խղճի խայթ» զգան:

էսեկյուլյանն իր «Խղճի խայթը» բեմադրել է Մոնրեալի «Արմենյան» թատերախմբի ուժերով, 1983-ի նոյեմբերի 19-20-ին, Մորիս Փիննե թատերասրահում: Ներկայացման երաժշտության պատասխանատուն եղել է Միհրան էսեկյուլյանը: Գաբրիել Արևյանի գլխավոր դերում հանդես է եկել նախկին բեյրութահայ թատրոնի, իսկ այնուհետև իր թատերական կյանքը Մոնրեալում շարունակող դերասան և ռեժիսոր Դավիթ էվերեկյանը - էվերեկյուլյանը զավակը: Այս ներկայացումով նշվել է վերջինիս բեմական գործունեության 40-ամյակը:

«Խղճի խայթի» մյուս գերակատարներն են եղել՝ Ժյուլիետ - Ալիտա Փեսայան, Հակոբ - Արթուր Նշանյան, Հասմիկ - Անի էսեկյուլյան, Հանրի - Սարգիս Սանդիկյան, Տոհմունի - Ներսես Տոլմաճյան, Ռոլան - Գրիգոր Գանար:

Ազգակիցների հոգեբանության մեջ ազգային դեմքը պահպանելու մտահոգությամբ, էսեկյուլյանը գրել է նաև «Մ՛ւր էր Հայոց Աստվածը» երեք գործողությամբ նոր պիեսը (ողբերգություն գաղութահայ կյանքե): Այս պիեսը նույնպես ներկայացվել է Մոնրեալի «Արմենյան» թատերախմբի կողմից: Դարձյալ հեղինակի բեմադրությամբ և Միհրան էսեկյուլյանի երաժշտական ձեավորումով այն ներկայացվել է 1985-ի սպրիլի 28-ին, Պոլսահայ միության թատերասրահում:

էսեկյուլյանն իր այս պիեսում պատկերել է Մեծ եղևունից փրկված տարագիրների կյանքի մի դրվագը: Ճիշտ է, համանման պատմություն տեղ է գտել նաև ուրիշ հեղինակների գործերում, բայց դրանք կրկնողություն չեն:

Ելնելով դրամայի բովանդակությունից, հեղինակն իր պիեսի հերոսին տվել է Տարագիրյան՝ բովանդակալից ազգանունը: Տարագիրյաններ են՝ Հակոբ աղան, նրա կինը՝ Հնազանդը (նույնպես իր պայմանների հետ հաշտվողական անունով), աղջիկը՝ Անահիտը, որոնք ծովեր անցնելով հասել են Եգիպտոս: Աքսորի ճանապարհին թուր-

քերը խլել են նրանց երկու տղային, որոնց կորուստը հանգիստ չի տալիս տարագիր Տարագիրյաններին: Հոգեպես վիրավոր հարազատները շարունակում են իրենց որոնումները:

Տարագիրյանների ապրած տանը, որպես վարձակալ, ապրում են ևս երկու որբ տղա, որոնք բարոյահոգեբանական առումով հակոտնյա կերպարներ են: Նրանցից՝ Օննիկ Մարզպանյանն ապրում է Հայրենասիրական գաղափարներով, ստացել է ֆրանսերեն կրթություն: Բոլոր հարազատներին կորցրած լինելով, շրջապատում ճանաչում է ստացել Անմխիթար (նույնպես բովանդակալից) անունով: Շուրջ տասը տարի նա թափառում է Կահիրեի փողոցներում, իր կսկիձը պատմում բոլորին: Փորձում է որոնել Հայոց Աստվածը՝ հարցնելու թե որտե՞ղ էր նա, երբ թուրքերը կոտորում էին հայերին:

Մի երեկո, երբ Տարագիրյաններն ի մի հավաքված առօրյա հարցեր էին քննարկում, լսվել է թափառական Անմխիթարի հուզված, մարդկային հոգիների խորքերը թափանցող զգացմունքներով պատմությունը իր տեսած երազի մասին՝ ունկնդիրներին լավ հայտնի մի պատկեր եղեռնի օրերից:

Հեղինակն այստեղ ընդհատում է զրուցակիցների պատմությունը ասելով՝ շարունակությունը բեմի վրա: Ասել է թե Տարագիրյանները գտել են իրենց կորցրած զավակին:

Այս բեմադրություն մեջ գործող անձանց դերակատարներն են եղել՝ Հակոբ աղա - Դավիթ Էվերեկյան, Հնազանդ - Անի Էսեկյուլյան, Անահիտ - Ալիտա Փեսայան, Գրիգոր աղա - Գրիգոր Գանար, Անմխիթար - Արթուր Նշանյան և ուրիշներ:

Մի քանի տարի անց, «ՄԷր էր Հայոց Աստվածը» պիեսը բեմադրվել է նաև Մոնրեալի Հայոց Բարեգործական ընդհանուր միություն թատերախմբի կողմից՝ «Արմենյան» թատերախմբից հրավիրված Արթուր Նշանյանի ղեկավարությամբ: Երաժշտությունը պատասխանատուներն են եղել Մ. Էսեկյուլյանը և Բաֆֆի Թաշճյանը: Ներկայացումը տեղի է ունեցել 1989-ի սեպտեմբերի 17-ին, Հ.Բ.Ը. միություն կենտրոնական սրահում:

Այս նոր բեմադրության մեջ դերերը կատարել են՝ Արթուր Նշանյանը (Հակոբ աղա), Անի Էսեկյուլյանը (Հնազանդ), Վարսենիկ Նազոյանը (Անահիտ), Մկրտիչ Գանունճյանը (Նորայր Վեհազնունի, որբ), Միհրան Ավետիսյանը (Ժան Մարզպան), Վարուժան Թաշճյանը (Անմխիթար), Պերճ Բյուրեղյանը (Գրիգոր աղա, դրացի), Անգինե Բաբայանը (Արաքսի):

Հետաքրքրական է, և ամենեին էլ պատահական չէ, որ Էսեկյուլյանն իր պիեսում ոչ միայն «Ջարգերից վերապրող, մտամոլոր» Մխի-

Թարին է դարձրել Անմխիթար, ըստ որում, ոչ թե որպես բառախաղի, այլ բուն իմաստով, այլև գլխավոր կերպարի համար ընտրել է մի այնպիսի եզակի ազգանուն, որը հոգեհարազատ է թեմայի բուն ոգուն:

Ցեղասպանության տխուր երևույթից բխող նման իրադարձություններին բնորոշ այսպիսի անվանումները գործածական են դարձել նաև սովորական կյանքում: Վերը հիշատակված Տարազիրյանի դերակատար Դավիթ Էվերեկյանի ազգանունը ծագում է նրա հոր Հակոբի ծննդավայր՝ Կեսարիայի շրջանի Էվերեկ գյուղի հիշատակը պահպանելու անհրաժեշտությունից: Նմանատիպ բնորոշ ազգանուններից են նաև Որբունի, Որբերյան ազգանունները, թերևս նաև՝ Նահատակյանը: Ֆրանսահայ բանաստեղծուհի և նկարիչ Պարգևուհի Պետրոսյանն ի հիշատակ իր ծննդավայր Ուրֆայի, դարձել է Պ. Օրֆա (1908-1980):

Ավելին: Հասարակական-մշակութային նշանավոր գործիչ Հայկաշեն Ուզունյանի եղբայրը ծնված լինելով 1915-ի աքսորի տարին, անվանվել է Աքսոր: Այդ անունով է նա ուսում ստացել: Հետագայում միայն Աքսոր անունը վերափոխել է Մանուկի: Սրան գուգահեռ դեռ կա Գաղթուհի անուն, որն իր մեջ բովանդակում է գաղթականության սերնդի հետքերի առկայությունը:

Մեծ եղևունի գաղթի ճանապարհին են ծնվել Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան Հայկական թատրոնի դերասան Հրաչիկ Սիմոնյանը և իրանահայ թատրոնի դերասան Շավարշ Բարխուդարյանը (Զանգեզուրցի), որոնք ծննդավայր չունեն:

Այսպիսի ճակատագրական անուն-ազգանուններով, ծննդավայր չունեցողներ, որ ավելին են, քան Հայտնի է մեզ, միայն բնավեր Հայր կարող էր ունենալ՝ աքսորի ու գաղթի սարսափելի խարանը ճակատին:

Այնքան խորն ու անբուժելի են ցեղասպանության վայրագության Հասցրած վերքերը, որ սպիացած վիճակում էլ հիշեցնում են ու պահանջում վերջ տալ կոտորածներին, արյունահեղություններին, նոր ցեղասպանություններին՝ երբ, որտեղ որ լինի:

Ցեղասպանության և նրա հետևանքների թեման գերակշիռ տեղ է գրավում նաև լիբանան-սիրիահայ թատրոնի դերասան, ռեժիսոր Վաչե Ատրունու բեմական ստեղծագործական կյանքում: 1970-1976 թթ. սովորելով և ավարտելով Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը, շուրջ չորս տասնամյակ նա

լայն գործունեություն է ծավալել ու դեռ շարունակում է համեստորեն ծառայել միջինարևելյան երկրների հայկական մշակույթի պահպանման ու առաջընթացի գործին:

Ատրուենին դրել ու բեմադրել է տասից ավելի պիես, որոնց մի գգայի մասը՝ Հայոց ցեղասպանության թեմայով:

Հետեղեռնյան սերնդի վրա ցեղասպանության տխուր հետևանքների արտացոլումը նկատելի տեղ է գրավել այդ սերնդի երրորդ-չորրորդ շառավիղ զրական-թատերական գործիչների ստեղծագործական կյանքում, որոնցից մեկն էլ Ատրուենին է: Ժամանակակից սփյուռքահայ թատրոնում նա միակ թատերական գործիչն է, որի ցեղասպանության դեմ շոշափած թեմաները սկսվում են 1904-ից և շարունակվում մինչև մեր օրերը:

Բեմական որոշակի փորձառություն ձեռք բերելուց հետո, Ատրուենին 1981-ին Բեյրութում, մի շարք նվիրյալ երիտասարդների հետ կազմակերպել է «Հայկական շրջուն թատերախումբ»՝ նպատակ ունենալով հայկական գաղթօջախներում վառ պահել Հայ թատրոնի ջահը, որպեսզի նրանով ջերմացնի օտար երկնքի տակ ապրող ազգակիցների հայրենակարոտ սրտերը, մայրենի լեզուն ու սովորությունները, կենդանություն տա անցյալի հիշողություններին:

Այսպիսի նպատակադրությամբ զինված ազգային գործիչը, բնականաբար, չէր կարող անտարբեր անցնել ցեղասպանության թեմայի կողքով: Եվ նա գրել է վերապրողների խաթարված կյանքը պատկերող «Ծառը» տխուր կատակերգությունը (1985), ապա՝ «Հորովելը» (1985), «Անավարտ սկիզբը» (1987) պիեսները և բեմադրել ինչպես Բեյրութում, այնպես էլ Հալեպում, Հայաստանում և այլ քաղաքներ կատարած Հյուրախաղերի ժամանակ:

«Ծառը» պիեսի բեմադրության առնչությամբ, բեմադրիչի իր խոսքում Ատրուենին գրել է. «Ծառը» թատերախաղի նյութը իմ մանկությունս է: Մեր սփյուռքահայության պատմությունը: Անոր մեջ արծածված հարցերն ու խնդիրները կկազմեն իմ քաղաքացիական մտածողությանս մեկ մասը: Ես սփյուռքահայ մըն եմ... ունիմ մարդկային որոշ ազատություններ, բայց այդ ազատությունն այ պարտադրված է ինձի: Որպես այդպիսին կտարբերվեմ աշխարհի վրա գոյություն ունեցող բոլոր մյուս ազգություններն ու ցեղախումբերին...

Ծառերը ազգերու պատմության խորհրդանշական վկայություններն են: Որքան այ կեցած չորնան անտնք, բայց պիտի տապալին, երբ խնամող ձեռքեր չունին ու երբ արմատախիլ եղած են մայր հողին:

Ծառերը ծաղկամաններուն մեջ չեն դրվիր: Մենք ծաղկամաններու մեջ ապրող սերունդ ենք»:

Հեղինակի քաղաքացիական այս բնորոշում-հավատամքը դրեթե նույնն է, ինչպես կոչվել են նրա նախորդ սերնդի գործիչները՝ մանկութունն չունեցող սերունդը: Ասված է պարզ, խտացված, վավերական:

Ոտքի տակ հայ հողի բացակայության կարոտի, օտար միջավայրում ազատ անագատի, խնամքի կարոտ ծառ-ընտանիքի պահպանության, դժվարությունները հաղթահարելու լուսաբանությունն է տրված «Ծառը» պիեսում: Մի ընտանիքի պատմության ընդհանրացումով գաղութահայ կյանքի առօրյա հոգսերից է անապաստան, տեղից տեղ փոխադրվող մարդկանց անհանգիստ ու անապահով կյանքի պատկերը: Ինչպե՞ս իրեն խմբի չտա հարազատներին կորցրած Թորոսը, ինչպե՞ս կյանքը շարունակելու համար բռնկությունն չսովորի կոշկակարի տղան: Սա պայքար է չարիքը հաղթահարելու դեմ, ապրելու և ստեղծագործելու համար:

«Հորովել» պիեսը նույնպես անցյալի հիշողությունն է: Ծերունի հայր ընկնում է Նյու Յորքի փողոցում: Տանում են հիվանդանոց: Հոգեվարքի մեջ նա վերհիշում է իր կյանքի անցած ուղին՝ սկսած մանկութունից, ապա Հայոց մեծ ջարդը, որից մի կերպ փրկվելով, անհույս երկրից երկիր է նետվել՝ անհեռանկար... Ծերունու դերը կատարել է թատերախմբի շնորհալի ուժերից մեկը՝ Մանվել Մարգարյանը:

«Անավարտ սկիզբը» պիեսում պատկերված է Մեծ եղեռնի շրջանում տարադրված և բախտի բերմամբ ողջ մնացած հայերի կյանքը Հալեպի արվարձաններում: Պիեսի հերոսներից ամեն մեկն ապրում է իր կորցրած հայրենի տան կարոտով: Առանձնապես տպավորիչ է Խենթը, որն անընդհատ կրկնում է «Կլիկկիան մերն է»: Այս պիեսն առաջին անգամ ներկայացվել է 1987-ին, Երևանում, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի հրավերով հյուրախաղերի ժամանակ:

Ատրուկնու պիեսներից մեկն էլ կրում է «Կամիչ 37» (կամ Շավո) անունը: Պիեսը չի բեմադրվել: Թեման՝ նույն վերապրողների, բայց խաթարված մարդկանց կյանքն է: Արաբական անապատի խորքում մի խումբ հայեր խրվում են ավազամրրիկի մեջ: Նահապետ Շավոն դուրս է հանում նրանց այդ ահավոր վիճակից: Պիեսն այլաբանական-հոգեբանական երանգ ունի: Գրվել է 1990-ակ. թթ. Ղարաբաղյան ազատագրական շարժման արձագանքների ազդեցության տակ:

Պատմական անցյալի վերակոչում է նաև Ատրուկնու «Առաքելոց վանքի կռիվը» պիեսը, որը բեմադրվել է Հալեպի «Պետրոս Ադամ-

յան» [Թատերախմբի ուժերով, 1989-ի ապրիլի 22-ին: Պիեսի բեմադրույթյան ծրագրում, Ատրուենին հետևյալ բացատրությունն է տվել իր աշխատանքի մասին. «Սուրբ Առաքելոց վանքի իրադարձությունը գեղարվեստականացնելով ու բեմականացնելով լույս մը կսփռենք Հայ Ֆէդայական շարժման էությունը: Հատկապես իմաստավորելով ժամանակաշրջանի ու վայրի մանրամասները: Ձուրավար Անդրանիկի, ինչպես նաև մյուս ֆէդայիներու կերպարին ընդմեջն ուղեցի ակնարկ մը նետել ողջ հայկական ազատագրական շարժումի վրա, վեր առնելով Օսմանյան թուրքիո հայաջինջ քաղաքականությունը որոշակի ծախքերը»:

Այս պիեսով Ատրուենին, միաժամանակ, արձագանքել է պողեստինյան ժողովրդի ազատագրական պայքարին՝ ընդդեմ բռնակալության:

«Առաքելոց վանքի կռիվը» պիեսի բոլոր կարգի ձևավորումները կատարել են «Պետրոս Ազամյան» թատերախմբի ստեղծագործական ու տեխնիկական աշխատողները: Իսկ դերակատարները եղել են՝ Անդրանիկ – Հակոբ Միքայելյան, Մշտո պապի – Հովհաննես Սամուելյան (ներկայացումը նվիրվել է նրա բեմական գործունեության 40-ամյակին), Հարութ – Նրսես Պոյաճյան, Վանահայր – Հակոբ Մուրադյան, Ավե – Ռաֆֆի Չաղլասյան, Գևորգ Չավուշ – Ջավեն Պրլեմճյան, Սեյտո Պողոս – Մկրտիչ Տարազճյան, Արեղա – Գևորգ Սարյան, Թուրք սպա – Սմբատ Երեցյան:

Վերջին տասնամյակում Ատրուենին իր գործունեության հիմնական վայրը դարձրել է Բեյրութը: Տարիներ առաջ Բեյրութում կազմակերպել է տեղի Թեքեյան Մշակութային միության «Երվանդ Օսյան» թատերախումբը և գործունեությունը շարունակում է նոր պիեսների բեմադրությամբ: Նրա գրած ու բեմադրած պիեսներն են՝ «Մեր թաղը» (2011), «Rue Սիս, Café Մասիս» (2012), «Թիվ 46 փողոց Մարաշ» (2013):

Վերոհիշյալ պիեսներում հեղինակը հայրենասիրական մեծ շնչով ներկայացրել է Կիլիկյան Հայաստանի բնակչության կյանքի, կենցաղի առանձին պատկերներ, թարմացրել անցյալի մասին հիշողություններն ու նոր կրանգ հաղորդել, իրար շաղախել Հին ու ժամանակակից վշտալի և զվարճալի դեպքերը, նոր սերնդին փոխանցել ազգային սովորությունները, բառն ու բանը: Եվ այս բոլորն այնպես վարպետորեն մատուցել, որ բոլորը գոհ են մնացել զվարճալի վերջավորությամբ ներկայացումներից:

Բոլոր այս պիեսներում Հինը վերականգնվել է սիրով, կարոտով –

ինչպիսիք են եղել նույն թաղի մարդիկ, ինչպես են առօրյայում գործածելի դարձրել Սիւր, Մասիւր, Մարաշի փողոցի բնակիչների կարոտալի հիշողութիւնները: Այս պիեսներով Ատրուսին մի կողմ է դրել կորցրածի համար ողբասացութեանը և ծիծաղի միջոցով ոգեկոչել կորած անցյալը:

Ատրուսու գրած ու բեմադրած վերջին գործը «Մերուսին և լեռը» պիեսն է՝ ողբերգական և զավեշտական իրադարձութիւններով համեմատած մի հայ ընտանիքի պատմութիւն, որն օրգանապես կապված է Հայոց ցեղասպանութեան և նրա հետեւանքների շարունակութեան հետ:

Պիեսը գրվել է Հայոց Քեսապի վերջին հայաթափութեան իրադարձութիւններից քիչ առաջ՝ կռահելով նրա մոտալուտ ողբերգութիւնը: Այս երևույթը սրտացավ հեղինակը արտակարգ սեղմ ժամկետում թատերգութեան վերածելով, նորից ընդգծել է թուրքերի ջարդարար քաղաքականութիւնը, որն ուրիշի երկրում էլ հանգիստ չի տալիս հայերին: Դարձյալ սկսվել է հայերի կողոպուտ, հալածանք, գաղթ...

Ինչպիսի զգացողութեամբ որ Ատրուսին կռահել է քեսապահայութեան ծանր վիճակն ու արձագանքել, նույնպիսի հրատապութեամբ էլ բեմադրել է՝ արդարամիտ մարդկանց հիշեցրել, որ այս լուսամիտ, գերզարգացած աշխարհում չի կարելի անտարբեր մնալ մի ժողովրդի անպաշտպան հատվածի նկատմամբ: Բանն այնքան խորացավ, որ հայերի պես, տեղական արաբ ժողովրդի տասնյակ հազարներով մարդիկ նույնպես բռնեցին դաղթի անհետանկար ճանապարհը:

«Մերուսին և լեռը» պիեսում հեղինակը ներկայացրել է մի հայ ընտանիքի անդամների երկփեղկված հոգեկան ապրումները Քեսապում կատարվող ուղիղ-քաղաքական տատանումների ժամանակ: Իրենց կյանքը վերահաս անխուսափելի վտանգից փրկելու համար ընտանիքի անդամները փոխադրվում են Հայաստան՝ այստեղից Ամերիկա գաղթելու մտադրութեամբ:

Ողբերգական ու զավեշտական տեսարաններն սկսվում են Փրանսիայի օդանավակայանում: Ընտանիքի ծեր անդամը չի ցանկանում Ամերիկա մեկնել: Նա ուզում է վերադառնալ իր հարազատ Կիլիկիան՝ լեռնային հրաշալի բնութեամբ Քեսապը, իսկ երիտասարդները որոշակիորեն տրամադրված են շարունակել իրենց ճանապարհը՝ հասնել Ամերիկա, նոր կյանք սկսելու երազներով:

Երկու սերնդի ներկայացուցիչների հայացքները չեն համակերպվում: Եվ այսպես, նոր գաղթի հարցը դառնում է՝ գնալ, թե՞ մնալու հարց:

Ատրուենին իր այս նոր պիեսը բեմադրել է Բեյրութի Պուրճ Համուտի Հ. Տեր-Մելքոնյան թատերասրահում, Թեքեյան Մշակութային միութեան «Երվանդ Օտյան» թատերախմբի ուժերով: Առաջին ներկայացումը կայացել է 2014 թ. մայիսի 11-ին: Բեմադրության մեջ զբաղված են եղել թատերախմբի փորձառու և երիտասարդ դերասան-գերասանուհիները՝ Մերունու պատասխանատու դերում՝ Տիրան Սարգիսյանը (նախկինում՝ Հալեպի «Պետրոս Աղամյան» թատերախմբից): Ատրուենին իր այս հերոսի համար ընտրել է Հայոց Արարատ լեռան անունը, որին ուզում է կառչած մնայ ծերունի Արարատը: Հեղինակի մտահղացմամբ կա երկու Արարատ՝ Հայութեան համար Մասիս - Արարատ լեռը, իսկ ծերունու ընտանիքի համար՝ Արարատ պապիկը: Ոչ առաջինից, ոչ էլ երկրորդից չի կարելի բաժանվել:

Մյուս դերերը կատարել են՝ Կասիա Թոփուշյանը - Հասմիկ, Հարութ Թորոսյանը - Թորոս (Ամերիկա դաղթելու դաղափարակիրները), Մասիս Լեփեճյանը - Առաջին Նարեկ, Կարեն Տարազճյանը - Երկրորդ Նարեկ, Սթեֆանի Ղուկասյանը - Նանե, Լուսինե Տադեսյանը - Ժան, Մակի Վասիլյանը - օդակայանի պաշտոնյա, Պեթի Սարգիսյանը - Իսկուհի: Երաժշտության ձևավորումը կատարել է պիեսի հեղինակը, երգերը կատարել է Կայել Թորոսյանը:

Ներկայացումը կրկնվել է մի քանի անգամ, արժանացել հանդիսատեսի համակրանքին ու գնահատությունը, ինչպես պիեսի, այնպես էլ դերակատարների հարազատ խաղի համար:

Ահա այդ գնահատականներից մեկը, որն ամփոփում է հեղինակի գաղափարախոսությունն ու մոտեցումը: Այդ մեկը Սիրիա-լիբանանյան գրական-մշակութային կյանքի բազմալատակ դործիչ Թորոս Թորանյանն է, որը գրել է.

«Բեմին վրա մեր այսօրվա կյանքն է ներկայացվողը:

Ամերիկա մեկնիլ ու մնալ երկիր:

Այսօրվան հայ տուներեն ներս հաճախակի ներկայացվող նյութ, զոր Վաչե Ատրուենի թատերագիր բեմադրիչը այդ օր բեմ բարձրացուց ըսելու համար մեզի՝ թե կան արտագաղթողներ, կան նաև երկիր մնացողներ, որոնց շարքին նաև դեպի այսօրվան Հայրենիքը նախընտրող մեկնողներ:

Հեղինակն այս թատերգության մեջ նաև փորձած էր խոսիլ Արցախի և մեր երկիրը ցնցած երկրաշարժին մասին անցողակի:

Հիմնական նյութը մնացած էր Հայրենիքի մեջ մնալու ու երկրեն չհեռանալու գաղափարը, զոր բեմին վրա հաստատված գտանք Հայրենիք մեկնող Հայուհիով մը և երկիր մնացող, Բևասպին կառչած մնացող օրվան Հերոսով, որ պետք է խոստովանի ու հաստատել՝ յավազույնս կատարեց իր դերը սրպես Արարատ՝ Տիրան Սարգիսյան...

Երբ Վաչե Ասրունին եկավ բեմ, ժողովուրդը ուռքի՝, Հոտնկայս ծափահարություններով լեցուց սրահը»<sup>1</sup>:

Հայրենիք մեկնելու իր կոչը Թորանյանը խոսքից դարձրել է գործ և որպես Հայաստանի քաղաքացի, նրա վերաշինության մասնակիցը դարձել: Իսկ Վաչե Ասրունին շարունակում է իր Հայրենասիրական աշխատանքը՝ նոր գործերով արձագանքելու Հայ կյանքի հին ու նոր արժեքների առաջընթացին:

1970-ական թթ. լիբանանյան պատերազմի արհավիրքներն աստիճանաբար վերանալուց հետո, նորից աշխուժութուն է սկսվել տեղի գրական-մշակութային կյանքում: Թատրոնների խաղացանկը համալրվել է հին ու նոր գրամատիկական գործերով: Դրանցից մեկը եղել է Հակոբ Օշականի «Երկնքի ճամբով» պիեսը, որն առնչվել է Հայոց ցեղասպանության թեմային և ներկայացվել է 1995-ի փետրվարին, Մեծ եղեռնի 80-րդ տարելիցին:

«Երկնքի ճամբով» պիեսը բեմադրել է նորարար-ռեժիսոր Վարուժան Խտրչյանը՝ Համազգայինի «Գասպար Իփեկյան» թատերախմբի գերասաններով, Տեր-Միկելոնյան թատերասրահում: Խտրչյանը վաղուց է ծանոթ եղել պիեսին, բայց բաղմամբով գործող անձեր պարունակող (25 խոսող, ավելացրած անխոս) այս գործի բեմադրութունը հեռաձգել է հարմար պահի: Որոշ կրճատումներով պիեսը «Թեթևացնելուց» հետո վերջապես բեմ է հանել այն, ընդգծել կերպարների հոգեկան ապրումներն ու տրամադրութունները: Գործող անձանց զգեստների ձևավորումները կատարել են Վարանդ և Կարինե Ալեքսանդրյանները, իսկ երաժշտութունը կատարվել է բեմից դուրս՝ նպաստել ներկայացման տրամադրության արտահայտությանը:

Դերակատարներից տպավորիչ խաղով աչքի են ընկել՝ Կարինե Փայլակյանը՝ Ռիթայի, Հակոբ Գալայճյանը՝ Վահրամի, Մարի Ռոզ Մանուկյանը՝ Մեծ մայրիկի (պառավի), Լիզա Մարտոյանը՝ Արամիկի, Վիգեն Ստեփանյանը (Երևանի թատրոնների գերասան)՝ Տեր-Ներսեսի, Սերժ Մինասյանը՝ Խալիլ փաշայի, Շողիկ Բարիքյանը՝ Քնարի, Սևան Կարապետյանը՝ Ելենայի դերերում և ուրիշներ:

«Երկնքի ճամբով» պիեսի բեմադրութունը բարձր է գնահատվել մամուլի կողմից: Բեյրութի «Զարթոնք» թերթի թատերախոս Պ.Ա.-ն (Պարույր Աղպաշյան?) այսպիսի գնահատական է տվել. «Խտրչյանը լավագույն ձևով կրցավ այս թատերախաղին տալ կենսունակութուն, շարժում և խաղ թե՛ հոգեկան խռովքներ ստեղծելու, թե՛

<sup>1</sup> Զարթոնք (Բեյրութ) 2014, մայիսի 17:

անցյալը կենդանացնելու, թե՛ գեղարվեստական դրոշմ տալու, թե՛ ստեղծագործական ներդրում կատարելու տեսակետեն, ինչ որ ամբողջ բեմականացման ընթացքին դարձան ամբողջ գործունեները թատերախաղին: «Դժվար» կտորը, «բարդ» հեղինակը ու «հանդուցային» բեմադրիչը, դարձան մեկ անձ ու մեկ հոգի, կրցան հանդիսատեսին հետ շաղվիլ ու նույնանալ, սլարզանալ ու բյուրեղանալ»<sup>1</sup>:

Դրամատուրգ հեղինակների գործերի բեմադրություններին զուգահեռ, հաճախ բեմական կյանք են մտել նաև արձակագիրների երկերի բեմականացումները և հարստացրել հայ թատրոնի սպասուկ-թյունը: Այդպիսի աշխատանքներից մեկը Ֆրանսահայ նշանավոր գրող Շահան Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ» երկի բեմականացրած տեսարանն է, ուր սրտառուչ խոսակցություն է գնում գնացքում՝ մի սիրառատ հայ մայրիկի և խեղճ գաղթական Նորայր Կարապետյանի միջև: Այս տեսարանը ներկայացվել է 1986-ի հունիսի 22-ին, Իսի-Լե-Մուլինոյի «Օուդիտորիում» սրահում, Անի և Գրիգոր Համելների ղեկավարությամբ «Գիսանե» թատերախմբի կողմից: Դերերը կատարել են՝ Մայրիկ – Անի Համել, Նորայր Կարապետյան – Արի Օհանյան<sup>2</sup>:

«Պճեղ մը անուշ սրտի» հաջորդ բեմադրությունը կատարվել է Բեյրութի «Արտավազ» թատերախմբում, 1988-ին: Բեմադրել է թատերախմբի կազմակերպիչ, Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի շրջանավարտ ռեժիսոր Ժան Ֆարրան<sup>3</sup>:

Հայոց ցեղասպանությունը ճանաչման տալու և դատապարտելու ամենօրյա հարցը դնալով նոր թեմաներ է բացահայտում, թեմաներ, որոնք ժամանակին սառեցված լինելով, վերջին տարիներին հարու-թյուն են առել և ասպարեզ մտել աշխարհով մեկ: Հենց այդ ցեղասպանության հեռանքով է, որ հայրենի տուն ու տեղ կորցրած, եղեռնից փրկվածները նոր կյանք են սկսել՝ ով որտեղ կարողացել է: Ավելի քան հարյուր տարի հայ և օտար մամուլում հարազատներին փնտրելու հայտարարություններ են տպագրվել: Այդ որոնողների մի մասին հաջողվել է գտնել հարազատների փշրանքներին, իսկ մեծ մասին հուսալիք արել:

Հայոց ցեղասպանության հեռանքներից բխող նորագույն արդիական հարցերից մեկը ժառանգության իրավունքի վերականգնումն է, պահանջատիրությունը: Ու, թեև, այդ պահանջատիրու-

<sup>1</sup> Զարթոնք (Բեյրութ) 1995, փետրվարի 20:

<sup>2</sup> Հոտաջ (Փարիզ) 1986, № 16265:

<sup>3</sup> Գեղարք, Սուրիահայ տարեգիրք, Ե գիրք, Հալեպ, 1996, էջ 177:

թյան ապացույցները վաղուց վերացրել են թուրքական պատասխանատուները կամ ուրանում են, բայց Հետապնդումները շարունակում են և պետք է հուսալ, որ ինչ որ ժամանակ որոշ արդյունքի կհասնեն:

Այս և նման հարցերը պատմությունից անցել են դրամատուրգիա, իսկ նրա միջոցով թատրոն, որի բեմերից տասնյակ հազարավոր հանդիսատեսներ ծանոթացել են իրենց մեծերից լսած նմանատիպ երևույթների մասին:

Այս պատմությունների մեջ նմանություն կա, բայց կրկնություն չկա, որովհետև յուրաքանչյուր դեպք, երևույթ յուրովի պայմաններում է կատարվել, տարբեր հանգամանքներով ծածկվել ու մարդկանց հիշողությունից «հանվել»: Նմանակերպ բովանդակությամբ պիեսները որոշ առումով, նաև ժառանգական կապերի բացահայտման աղբյուրներ են, որոնք ի հայտ են գալիս գործողությունների զարգացման ընթացքում: Տեսարան առ տեսարան բացահայտվում են նոր դեմքեր ու դեպքեր, դառնում մեր օրերի առօրյա կյանքի բաղկացուցիչ մասը, մեր ուղեկիցը:

Այս տեսակետից՝ հին ու նորի, անցյալի և ժամանակակից դեմքերին ու երևույթներին արդիական շունչ ու մեկնաբանություն տալու առումով, առանձին հետաքրքրություն է ներկայացնում գրող, դրամատուրգ, կինոգետ Դավիթ Մուրադյանի «Ժառանգության իրավունք» մեկ գործողությամբ պիեսը, որ նա գրել է 2004-ին, տպագրել հաջորդ տարին:

«Ժառանգության իրավունք» պիեսը հեղինակի ընտանեկան իրական պատմության արտացոլումն է՝ գրված սրտի ավյունով ու ջերմ շնչով: Տողերի միջից պատկերվում են խարբերդի կոտորածներից փրկված և Հալիպոլում ապաստան գտած, բայց այդ շրջանում, շատերի հետ գոհ զնացած փաստաբան Մուրադ Մուրադյանի ընտանիքի անդամները, ողջ մնացած նրանց երեխաները, որոնք հետագայում Հայաստան գալով, դարձել են արվեստի գործիչներ:

Պիեսի գործողությունները կատարվում են նույն բեմահարթակի վրա, բայց երկու զուգահեռ տեսարաններում, որոնց փոփոխությունները կատարվում են լուսավորության օժանդակությամբ: Գործողությունների հիմնական տեղը ժառանգության իրավունքների գրասենյակն է, ուր Տղամարդը ժառանգությունը հաստատելու համար ոչ մի փաստաթուղթ չունենալով, ընտանեկան մի լուսանկարով է ուզում ապացուցել իր իրավունքների հավաստիությունը: Առանց առկա փաստաթղթի, նույն հարցով է գալիս նաև մի Ծերունի: Գրասենյակի աշխատակցուհի՝ Ակնոցավոր կինը որին բանավոր, որին հեռախոսով խորհուրդներ ու պատասխաններ է տալիս:

Տեսարանի երկրորդ մասը Լուսանկարչի արվեստանոցն է, որտեղ լուսանկարվելու է եկել Մուրադյանների ընտանիքը, լուսանկար, որը հետագայում պետք է դառնար Տղամարդու միակ անժխտելի փաստաթուղթը: Այսպես, լուսավորության միջոցով փոփոխակի եղանակով երկու մասում էլ գործողություններն առաջ են դնում: Հեռուստատեսութայան թղթակիցը տեղն ու տեղը հաղորդում է պատրաստում, Փողկապավոր երիտասարդը պարզում է, որ Մուրադյանի ընտանիքին լուսանկարողը եղել է իր պապը՝ Միհրան Գուրբելյանը: Այս լուսանկարի շուրջը ծավալված հարց ու փորձով տեսարանից տեսարան հստակեցվում է 1915-ի ղոհերի և նրանց փրկված հարազատների պատմությունը:

Գործողութայան «Լուսանկարչատուն» մասում (որտեղ ներկայացվում է անցյալը) տրված է նաև թուրք ոստիկանի հետապնդումը երկու հայ օրիորդների, որոնց պաշտպան է կանգնում արաբ բժիշկ Չելեբին (նույնպես իրական անձնավորություն), նրանց ներկայացնելով իբրև հիվանդանոցի աշխատակցուհիներ և որոնք հարկադրված շրջապատի մարդկանց հետ արաբերեն են հաղորդակցվում: Դուրսը Մուստաֆա Չելեբին հետագայում ամուսնացել է իր փրկած աղջիկներից մեկի հետ և ընտանիք կազմել: Մուրադյանը Չելեբիի հետքերը գտել է ավելի վաղ, մինչև պիեսը գրելը: Նրան դուստրն էլ ապրելիս է եղել Հալեպում:

Տղամարդը պիեսի հեղինակն է, նկարագրած դեպքն էլ կատարվել է 2004 թվականին: Իր փոքրիկ Երվանդիկին ցույց տալով պապի ընտանիքի լուսանկարը, նա պատվիրում է լավ նայել և մեկիկ-մեկիկ հիշել իր հարազատներին: Նրա վերջին եզրակացությունն է. «Հիշողությունը մեզ մարդ է պահում: Նույնիսկ եթե մեջը ցավեր կան»<sup>1</sup>: Դրա համար էլ բոլոր տեսարանների վերջում նա հնչեցնում է «Կոունկ» հավերժական երգը:

Դավիթ Մուրադյանի «Ժառանգութայան իրավունք» բազմամարդ գործող անձերով այս պիեսն առաջին անգամ բեմադրվել է բուն գործողությունների վայրում, Հալեպում, տեղի «Պետրոս Ազամյան» թատերախմբի կողմից: Ներկայացումը նվիրվել է Մեծ եղեռնի 90-ամյակին, խաղացվել 2005-ի հոկտեմբերի 1-ին: Բեմադրությունն իրականացրել է երևանյան թատրոնների ռեժիսոր Նիկոլայ Ծատուրյանը՝ օգնականներ ունենալով ռեժիսոր Նարինե Մալյանին (Երևանի Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոնի գե-

<sup>1</sup> Դավիթ Մուրադյան, Ժառանգութայան իրավունք, Երևան, 2005, էջ 178:

ղարվեստական ղեկավար), բեմանկարիչ Հրազդան Թոքմաշյանին և երաժշտական ձեռնարկող Խաչիկ Խաչատուրյանին: Պիեսը խաղացվել է արևմտահայերեն փոխադրությամբ: Արաբերեն թարգմանությունը կատարել է գերասանուհի Կասիա Ստանպոլյանը: Բեմադրությանը ներկա են եղել պիեսի հեղինակ Դավիթ Մուրադյանը և Մուստաֆա Չելեբիի դուստր Տիկին Լամիսը (այժմ՝ մահացած):

Ներկայացման գերակատարներն են եղել՝ Ակնոցավոր կին – Մայտա Պոչկեղենյան, Փողկապավոր երիտասարդ – Արա Թորանյան, Ծերունի – Ներսես Պոյաճյան, Տղամարդ – Սմբատ Երեցյան, Երվանդիկ – Շանթ Հալլաճյան, Լուսանկարիչ – Ներսես Տաղլյան, Օրիորդ – Հուրի Փիլավճյան, Հայր – Նարեկ Վարժապետյան, Մայր – Կասիա Ստանպոլյան, Ա. Մանչուկ – Ճեմիլ Սանսուր, Բ. Մանչուկ – Արթուր Վարժապետյան, Թղթակցուհի – Մակի Ջոպյան, Դեռատի աղջիկ – Անի Աթաշյան, Նկարահանող – Անդրանիկ Տերտերյան, Լուսանկարիչի բարեկամը – Վազգեն Ֆերմանյան, Զինվորական – Արմեն Ստանպոլյան, Դոկտոր Չելեբի – Հակոբ Միքայելյան:

Ինչպես բեմադրության մասնակիցների, այնպես էլ ներկաների ոգևորությունը, հուզումնալից հանդիպումները հին ու նոր սերնդի ներկայացուցիչների հետ, անմոռանալի տպավորություն են թողել: «Ժառանգության իրավունք» պիեսի բեմադրությունը «Պետրոս Աղամյան» թատերախումբը նույն ամսին հյուրախաղերով ներկայացրել է Գամիշլիում:

Պատմական լեգենդ դարձած հայորդիներից մեկի՝ համաշխարհային ճանաչման արժանացած գեղանկարիչ Արշիլ Գորկիի (Ոստանիկ Ադոյան) կյանքը ևս դարձել է դրամատիկական պատմություն: Նրա կյանքի ու գործունեության մասին պիես է գրել և բեմադրել Հալեպի «Անդրանիկ» թատերախմբի ղեկավար ու պատմիչ, գերասան-ռեժիսոր Կարպիս Լևինսկյանը: Ներկայացվել է 1996-ի հունվարի 28-ին, Հալեպի Կրթասիրացի թատերասրահում, «Անդրանիկ» թատերախմբի ուժերով:

Թե ինչո՞վ է «Արշիլ Գորկի» պիեսը կապված Հայոց ցեղասպանության հետ, հեղինակ-բեմադրիչը հետևյալ արդարացի բացատրությունն է տվել. «Ինչպես դարասկզբին ծնված բոլոր հայորդիները, նույնպես և Ոստանիկը ցմրուր խմեց եղևունի պարտադրված բաժակը ու մոր և փոքրիկ քրոջ՝ Վարդանուշին հետ քայլեց մինչև էջմիածին, Երևան, հոն մայրը մահացավ և տասնամյա որբուկը քրոջ հետ ձևով մը հասավ Միացյալ Նահանգներ, ուր նախքան եղևունը իրենց հայրը՝ Սեդրակը ապաստանած էր»:

«Արշիլ Գորկի» պիեսի բեմադրական բոլոր աշխատանքները՝ ձևավորումը, դեկորները, երաժշտությունը պատրաստել, ինչպես նաև դիխավոր հերոսի դերակատարը եղել է Կ. Լեփեճյանը: Մյուս դերերը կատարել են՝ Քեննիչ – Հակոբ Հաճի Նարինյան, Թորոս Ռոսլին և Խորեն Տեր-Հարության – Հակոբ Ավագյան, Վարդուշ – Սիլվա Թաշճյան, Ագնես – Աստղիկ Հաճյան-Նազարյան, Գնչուհի – Սոսի Գուլումճյան, Ռոզենբերգ – Արմեն Կյուլվարդյան, Վիլի – Ասատուր Երեցյան, Ջոնի-Լեոն Պեքյարյան և ուրիշներ<sup>1</sup>:

Հայրենասեր Հայ թատերական գործիչներն իրենց ազգակիցների տրամադրությունը բարձրացնելու նպատակով, ինչպիսի միջոցների ասեք, որ չեն դիմել, թեկուզ ժամանակավոր, թեթևացնեն նրանց մտորումները նույնիսկ պատերազմի պայմաններում: Այս սովորույթը գալիս է դեռևս 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանից և շարունակվում է մինչև մեր օրերը:

Այս երևույթի ակնհայտ օրինակներից մեկը Հալեպի ՀԲԸՄ ՀԵԸ «Պետրոս Ադամյան» թատերախմբի գործունեությունն է 2013-2014 թթ. սիրիական պատերազմի պայմաններում ներկայացնելով մի շարք ոգևորիչ միջոցառումներ, որոնցից մեկն էլ Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուցի» բեմադրությունն է:

Մի փոքր պատմություն:

1880-ական թթ. Կ. Պոլսում գրական ասպարեզ մտած գրող-հրապարակախոս Արփիար Արփիարյանն աշխատելով «Արևելք» թերթի խմբագրությունում, օրը-օրին անդրադարձել է երկրում կատարվող իրադարձությունների լուսաբանմանը: Այդ նույնն արել է նաև որպես Թիֆլիսի «Մշակ» թերթի Պոլսի թղթակցի (Հայկակ) պաշտոնով:

Իր գրական գործունեության մեջ նա արձագանքել է նաև 1895-1896-ին Թուրքիայի մի շարք վայրերում հայերի նկատմամբ կազմակերպված կոտորածների պատմությանը, որն ամփոփվել է նրա «Կարմիր ժամուց» վիպակում: Վիպակը 1898-ից մաս-մաս տպագրվել է Լոնդոնի հայկական մամուլում, իսկ ամբողջովին լույս տեսել 1908-ին: Նյութի համառոտ գիծն է. պահպանողական Հայրապետ էֆենդին մոտ հարաբերությունների մեջ լինելով Սուլթանի շրջապատի մարդկանց հետ, անախորժություններից խուսափելու նպատակով հայրենակիցներին խորհուրդ է տալիս հեռու մնալ քաղաքական պայքարի մտադրությունից: Բայց երբ ինքն է ձերբակալվում, ազատվելուց հետո դառնում է թուրքերի դեմ ազատագրական պայքարի կազմակերպիչներից մեկը:

<sup>1</sup> Կարպիս Լեփեճյան, Պատմություն Անդրանիկ թատերախումբի 1919-2010, Հալեպ, 2010, էջ 58:

«Կարմիր ժամուց» վիպակն առաջին անգամ բեմականացրել են լրագրող-գրամատուրգ Սուրեն Պարթևյանը (Միսակ Պարտիզպանյան) և հանրահայտ բանաստեղծ, հասարակական գործիչ Վահան Թեքեյանը: Առաջին անգամ բեմադրվել է 1920-ի սեպտեմբերի 12-ին Կ. Պոլսի Վարիեաեի թատրոնում, պոլսահայ դրամատիկի դերասանների մասնակցությամբ: Պիեսի բեմադրողը և Հայրապետ էֆենդիի դերակատարը եղել է աքսորից Հալեպի-Այնթապ ճանապարհով Պոլիս վերադարձած դերասան-ռեժիսոր Աշոտ Մատթյանը: Նրա խաղընկերներն են եղել՝ Պ. Պալթազարյանը (Տեր Հուսիկ քահանա), Նշան Պեշիկթաշլյանը (Նիզակյան), Լյուսի Թոգաթլյանը (Նվարդ) և ուրիշներ<sup>1</sup>:

Արփիարյանի «Կարմիր ժամուցը» բեմական նոր կյանք է ստացել նաև մեր օրերում: Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ, Սիրիահայ կենտրոնական մարմինը նախապես մտահոգվելով կազմակերպվելիք միջոցառումների անցկացման հարցով, կազմել է մի շարք ծրագրեր, որոնք, սակայն, երկրում սկիզբ առած քաղաքական-ուղղման աննպաստ պայմաններում կասեցվել են: Բայց և այնպես հալեպահայությունը արձագանքել է այդ մտահոգման իրագործմանը՝ բեմադրության ներկայացնելով Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակի նոր բեմականացրած տարբերակը:

Պիեսը բեմադրության է պատրաստվել Հալեպի ՀԲԸՄ ՀԵԸ «Պետրոս Աղամյան» թատերախմբի կողմից, 2013-ի դեկտեմբերի 14-ին: «Կարմիր ժամուցը» բեմականացրել ու բեմադրել է Հալեպի «Պետրոս Աղամյան» թատերախմբի հիմնադիր անդամներից մեկը՝ մեծ վաստակի տեր Հակոբ Միքայելյանը: Ներկայացման գեղարվեստական ձևավորումը (գեկորներ) կատարել են Ներսես Չիլինկիրյանը և Արամ Հապեշյանը, իսկ երաժշտությունը գրել է Կարո Քեքլիկյանը:

«Կարմիր ժամուցի» ներկայացումն ընթացել է պատմողի մեկնաբանությամբ, որ կատարել է երկարամյա դերասանուհի Հուրի Պասմաճյանը: Ընդհանուր դերակատարներն են եղել՝ Հայրապետ էֆենդի - Ճորճ Դավթյան, Տեր Հուսիկ քահանա - Հակոբ Թահհան, Հասան փաշա - Ռաֆֆի Գալայճյան, Սրբազան - Ներսես Տաղլյան, Մուխտար - Վազգեն Ֆերմանյան, Օգսեն էֆենդի - Կարո Աղբարալյան, Կիրակոս էֆենդի - Նորայր Չաղալանյան, Ոստիկան - Աբո Թամերյան, Ժամկոչ - Անդրանիկ Լեփեճյան և ուրիշներ:

Հալեպի բնակչության մի զգալի մասը քաղաքի ռմբակոծության

<sup>1</sup> Վերջին լուր (Կ. Պոլիս) 1920, № 1972, 1974, 1975:

ահից հեռացել է, նվազել է նաև դերասանական խմբի անդամների թիվը, բայց թատերախումբը շարունակել է գործել, հանդիսատեսը՝ թատրոն հաճախել: Կենսունակութունը հաղթանակում է: Դրա վկայութուններից մեկը 2014-ի ապրիլի 5-ին Հակոբ Միքայելյանի ղեկավարութամբ տրված «Խնդա՛, Հալեալ» ներկայացումն է: Դժվարութունը խնդալու միջոցով հաղթահարելու լավագույն միջոցը թատերախմբի անդամների (Հակոբ և Նանոր Միքայելյաններ, Վաչե Ատրունի, Արաքսի Մուսալլի) գրած փոքրիկ, զվարճալից պիեսների բեմադրութունն է:

Հալեալի թատերախմբի անդամների և նրանց համակիր հանդիսատեսների ոգևորութունը շարունակվել է: Թատերախմբի հնագույն դերասան Ներսես Տաղլյանը հավաստիացնում էր, որ Մեծ եղևունի 100-ամյակի տարելիցի առթիվ մտադիր են բեմադրել Հ. Մարգարյանի «Հայելիներ» պիեսը: Չստացվեց: Նրան հաջորդած Գրիգոր Քելեշյանը պատրաստում էր Ս. Պարթևյանի «Ձայնը հնչե՛ց» պիեսը: Դա էլ չստացվեց: Անդադար ուժբախտութունները, ավերածութունները ծայր տվին նոր արտագաղթի: Այս տխուր արարողութամբ էլ փակվեց Հալեալի մեկդարյա հայկական թատրոնի վարագույրը:

Հայոց Մեծ եղևունի թեման երկար տարիներ զբաղեցրել է մեծ հեղինակութուն վայելող սփյուռքահայ թատերական գործիչներ Նորա Արմանիի (Էքսերճյան) և Ժիրայր Բաբազյանի ստեղծագործական միտքը: Ի վերջո եկել են այն եզրակացութայն, որ այդ թեման նրանք կարող են ներկայացնել ասմունքային եղանակով՝ արտասանութամբ, երգով, թմբուկի զարկի տակտով և այլ միջոցներով:

Մտահղացումը դարձրել են գործ, այն էլ բեմականացրած գործ: Ցեղասպանութայն նահատակ և այլ հայ բանաստեղծների գրական ժառանգութունից նրանք կազմել են մի ընտրանի և ստեղծել «Կայան Արարատյան» վերնագրով գրական-թատերական երկ, կատարել-ցուցադրել տարբեր երկներում, ներկայացրել հայ ժողովրդի պատմութունը:

1986-ից ի վեր «Կայան Արարատյանը» անգլերեն և ֆրանսերեն նրանք ներկայացրել են Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր:

Արմանին ու Բաբազյանը «Կայան Արարատյանը» ներկայացրել են նաև Հայաստանում, Երևանում՝ անգլերեն: Դա տեղի է ունեցել 1991-ին, Հայաստանի թատերական ընկերութայն կողմից կազմակերպված «Սփյուռքահայ թատրոնների Առաջին փառատոնի» ժամանակ: Մասնակիցներն արժանացել են մի քանի պատվավոր մրցանակների:

Հայոց ցեղասպանութիւնը թեմայով դեղարվեստական գրականութիւնը անսահման գործեր բնականացնելով կատարվել են նաև ամուսնացում-մոտենեցումների ձևով: Այս ճյուղում ամենահետադարձը կարող է դերասանուհի և ամուսնացող Մարի Ռոզ Աբուսեֆյանը, որը շուրջ երկու տասնամյակ Հայաստանում և սփյուռքում հանդես է եկել Կ. Զարյանի «Տատարգոմի հարսը», Շ. Շահնուրի «Նահանջը առանց կրօնի», Պ. Սևակի «Անլուսի զանգակատուն», Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», ինչպես նաև՝ «Մոռանալ ցեղասպանութիւնը» և այլ գործերի կատարմամբ:

Հայոց ցեղասպանութիւնը 100-ամյակի կապակցութեամբ, ամուսնացում-մոտենեցումների բացառելով շարունակել է թերթի Շուշիկ Խանդավազյանի անվան նորաստեղծ թատրոնի դեղարվեստական ղեկավար Լևոնիկ Հարությունյանը: Նա բնականացրել ու բեմադրել է Ռոբերտ Եսայանի «Հարության ժամանակը» բանաստեղծությունների շարքը, որը որպես երկխոսություն ներկայացրել են երիտասարդ դերասան-դերասանուհիները:

2012-ին այդ խումբը՝ Հարությունյանի ղեկավարութեամբ ելույթ ունեցավ նաև Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կազմակերպված միջոցառմանը և հաճելի տպավորություն թողեց:

Ռ. Եսայան – Լ. Հարությունյան համագործակցութեամբ Շուշիկում ներկայացվել է նաև Պ. Սևակի «Եռաձայն պատարագը»:

Ժամանակի հետ համընթաց քայլով թատերական կյանքը բոլորովին վերջերս՝ 2016-ի մայիսին համալրվեց ևս մի նոր գործի բեմադրութեամբ: Դա Երևանի Կամերային թատրոնի գլխավոր ռեժիսոր (մի քանի պիեսի հեղինակ) Արա Երնջակյանի «Ճերմակ արագիլներ» պիեսն է, որը նա գրել ու բեմադրել է մեկ ամսում:

Պիեսի նյութը՝ ադրբեջանցի հրոսակների ապրիլյան քառօրյա պատերազմի դեմ մարտնչումն է, բովանդակությունը՝ մեղավորներին պատժելու և աշխարհի անտարբերության «քաղաքականութեան» քննադատությունը, որն ամուսնացում-մոտենեցումների եղանակով հերթով կարգում են դերասաններ Մխիթար Ավետիսյանը, Սենիկ Բարսեղյանը, Ռաֆայել Երանոսյանը, Վահե Զիրոյանը<sup>1</sup>:

<sup>1</sup> Ազգ. (Երևան) 2016, № 21:

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻ Ու ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ ԳՐԱԾ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ ԵՎ ԹԱՏՐՈՆՈՒՄ

20-րդ դարի սկզբներին՝ Համաշխարհային առումով առաջին ամենամեծ ցեղասպանությունը, դա Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում ապրող Հայերի Մեծ եղեռնն է, որ կատարվել է Օսմանյան կայսրությունում, 1915-ի դարնանը: Հրաշքներով փրկվածներն իրենց բողոքի ձայնն են բարձրացրել Թուրքական բռնակալության դեմ, միլենոլյն ժամանակ դատապարտել եվրոպական քաղաքակիրթ աշխարհի անտարբեր կեցվածքը, ինչ-որ չափով նույնիսկ օժանդակությունը Թուրք բարբարոսների արարքներին:

Այդ ողբերգական երևույթն առաջին դատապարտողներից մեկը եղել է Հայերեն և Ֆրանսերեն գրող-գրամատուրգ Ղևոնդ Մելոյանը: Մեծ եղեռնի և նրա տխուր հետևանքների մասին գրված պիեսներից ամենաառաջինն ու հոգեբանորեն ամենացնցողը Թերևս Մելոյանի «Արմենուշ» հինգ գործողությունամբ ողբերգական դրաման է, որ նա գրել է 1918-ին Շվեյցարիայում, Ֆրանսերեն: Վերջին Հանդամանքը հեղինակի քաղաքացիական ակտիվության գրավականն է, որպեսզի եվրոպացիներից շատերին ծանոթ ֆրանսերենով մատչելի դարձնի այն վայրենի արարմունքը Հանդեպ մի անօգնական կնոջ, փոքրիկ երեխայի մոր կրած տառապանքները պատկերող բովանդակությունը:

Պիեսի գործողությունները կատարվում են աքսորավայրում և Գերմանիայում, Թուրք ու գերմանացի ցինիկ ղրինվորականություն կողմից Արմենուշին ստորացնելու և անարգելու անհագուրդ ծարավով բռնված հոգեբանությունը գրսևորելով:

Իհարկե, եղել են և երևույթի նկատմամբ առողջ դատողությունամբ առաջնորդվող մարդիկ, որոնք էլ Ժնևի Թատերական միջազգային փառատոնի ժամանակ, եվրոպական երկրներից 70 հեղինակի պիեսներից առաջնությունը տվել են Մելոյանի «Արմենուշ» ողբերգությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Զահակիր (Կահիրե) 1965, № 83:

Պիեսը ֆրանսերեն բնագրով առաջին անգամ տպագրվել է 1920-ին ժնևուսում: Գրքի տպագրութունն ավելի է մեծացրել նրանով հետաքրքրվողների շրջանակները: Պիեսի լույս ընծայման առթիվ Պոլսի «Վերջին լուր» թերթի Լոզանի թղթակից Վ. Մարտիկյանն ընթերցողներին համառոտակի ծանոթացրել է նրա բովանդակությանը: «Արմենուշի» մեջ, — գրել է նա, — հեղինակը կապակերացնես հայ կյանքը աքսորի դժոխային ճամբուն վրա և մյուս կողմես դերման զինվորականութունը, որ այնքան զգվելի և ամոթալի մասնակցութուն մը ունեցավ թուրքական մեծ եղեռնին մեջ: Տաճիկ բռնակալներու մեջ ծառայող դերման զինվորականութունը թուրքական գեհենային պաղարյունությամբ է, որ արցունքի և արյան մեջ հեգնեց հայու տառապանքը և խնջույքներ սարքեց դժբախտ տարագիրներու ողբ ու կոծին մեջ»<sup>1</sup>:

«Արմենուշը» բնագրով (ֆրանսերեն) բեմադրվել է բավականին ուշ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1948-ին նոյեմբերի 28-ին, Փարիզի Իենա սրահում: Բեմադրողն է եղել Մարկ Արյանը, դերակատարները՝ հայ և ֆրանսիացի դերասաններ:

«Արմենուշի» ֆրանսերեն բեմադրության նախապատրաստական աշխատանքների ընթացքում կազմակերպված մի հավաքում Մելոյանն այն միտքն է հայտնել թե՛ «Ինք հետևած է իր անկեղծ զգացումներուն, առանց երբեք ազդվելու նվաստության կանխազգացումեն... Գրվածքին խորհրդանիշն ու բովանդակութունը հայ և թրքոդերման ողբերգութունն է անցնելով համամարդկային խղճի և արվեստի մաղեն: Այն օրերուն, երբ գրեցի «Արմենուշը», դեռ թարմ էր հայկական անհուն արյունը, մեծ էր իմ վիշտն ու զայրույթը, որովհետև կհաստատվեր իմ նախազգուշացումս, հակառակ քաղաքական մեծ դեմքի մը կտրուկ դյուրահավանության և անծայր էր իմ ցավս, ուրիշ հայ կարևոր անձնավորությանց պաղարյունին բաղդատությամբ»<sup>2</sup>:

Հեղինակի հայերեն թարգմանությամբ «Արմենուշը» 1936-ին տպագրվել է Մարսելում և շարունակել իր բեմական կյանք: Ամենացնցող տեսարաններով այս պիեսում ցույց է տրված թե ինչպես Եփրատի ավերին թուրքերը քիչ համարելով անմեղ բնակչության տարագրութունը, խոշտանգում են մարդկանց, ծիծաղում ու ծաղրում նրանց աղերսի ու լացի վրա, խրախուսվում գերմանացիների սառն անտարբերությամբ: Խմբից առանձնացնում են ամենագեղե-

<sup>1</sup> Վերջին լուր (Կ. Պոլիս) 1920, № 8131:

<sup>2</sup> Արմենուշ (Փարիզ) 1948, հոկտեմբերի 25:

ցիկ կնոջը՝ Արմենուշին, խլուժ նրա երեխային և գլուխը դնելով մոր ծնկին, մորթում են ու արյունը բաժակի մեջ լցնելով, սափպում են մորը, որ խմի:

Մարդկային բարոյականության բոլոր սահմաններն անցած այս դժոխային տեսարանից հետո նրան տիրանում է գերմանացի սպա Օսկար Մյուլլերը իբրև հարձի, ապա վաճառում հայուհիների վաճառքով զբաղվողներին: Այսպես, ձեռքից ձեռք ընկնելով, Արմենուշը հայտնվում է Գերմանիայում: Կատարած ոճիրի ուրվականը հալածում է Օսկարին և նա նամակ է գրում մորը՝ գտնել հասարակաց տներում Արմենուշին և պահել իր մոտ: Մայրը նրան ազատում է նոր դժոխքից և տանում իր տուն: Օսկարը մեղա է գալիս կատարվածի համար, սակայն ուշ էր արդեն: Արմենուշը երեսովն է տալիս նրա ստոր արաքը իր և իրեն նմանների հանդեպ՝

— Գնա՛, անապատների մեջ սպանված, Եփրատի մեջ խեղդված նահատակներից ներողություն խնդրիր, ես երբեք չեմ կարող ներել ձեր ոճիրները: Ներել, մոռանալ, ասել է թե անարգել մեր սուրբ նահատակները:

Օսկարը խղճի խայթից ինքնասպան է լինում: Արմենուշը բաժակը լցնում է նրա արյունով և տալիս մորը, ասելով «խմիր զավակիդ արյունը»:

1915-ի տարագրության և խոշտանգումների սարսափներից ահաբեկված, անարգված ու լքված հայ կնոջ տառապանքն ի վերջո Արմենուշին հասցնում է խելագարության:

«Արմենուշի» բեմական կյանքը հայ թատրոնում սկսվել է 1923 թվականից և երկար տարիներ խաղացվել տարբեր երկրների հայկական թատրոններում: Առաջին բեմագրությունը տեղի է ունեցել 1923-ի դեկտեմբերի 2-ին, Կահիրեի Ռամզես թատրոնում: Պիեսը խաղացվել է եգիպտահայ թատերական նշանավոր գործիչ Վահան Հապեշյանի թարգմանությամբ: Բեմագրողն է եղել դերասան-դրամատուրգ Մանուկ Թաշճյանը, միաժամանակ կատարելով դոկտոր Վալտի դերը: Մյուս դերակատարներից են եղել՝ Բեստրիս Եկնյանը (հետագայում՝ Տիկ. Վոլթեր)՝ Արմենուշի, Կարապետ Կարապետյանը՝ Օսկար Մյուլլերի, Գազանճյանը՝ վերջինիս ընկեր Հեոբենրի, Վարդանուշ Պարթևյանը՝ Տիկին Մյուլլերի, Գրիգոր Բագրատունին՝ տիկին Վոլֆի գործակատարի, օր. Եվգինեն՝ Սպասահու դերերում և ուրիշներ<sup>1</sup>:

1924-ի հունվարի 3-ին Նոր Զուգայի Կաթոլիկաց դպրոցի թատե-

<sup>1</sup> Սովառնակ (Կահիրե) 1923, № 198:

րասրահուժ ներկայացվել է դպրոցների կողմից պատրաստված «Հայուհին» երեք դործողությամբ դրաման՝ թարգմանված Ֆրանսերենից: Պրեսին տրված միակ բացատրությունն է՝ «Տաճկահայ կյանքից հուզիչ դրամա»<sup>1</sup>: Ցավոք, այլ տվյալներ հայտնի չեն: Հնարավոր է, որ այս «Հայուհին» հուզիչ դրաման Ղևոնդ Մելոյանի «Արմենուշ» ողբերգությունը լինի, որն ինչ-ինչ հանգամանքներով քողարկված է մնացել: Ներկայացումը մեծ ազդեցություն թողնելով, հասարակության խնդրանքով կրկնվել է նույն հունվարի 31-ին:

«Արմենուշի» բովանդակությունը 1924-ին Փարիզի «Երևան» թերթում տպագրվելուց հետո, մուտք է գործել Ֆրանսահայ թատրոն: Առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1924-ին Մարսելում՝ Փարիզի հայ դրամա-օպերետային թատերախմբի ուժերով (2 դործողություն), հեղինակի ներկայությամբ: Գլխավոր դերերի կատարմամբ ելույթ են ունեցել՝ երգչուհի-դերասանուհի օր. Սոնա Ղարիբը (Արմենուշ), Լևոն Հարություն (բեմադրող և Օսկար Մյուլլեր), օր. Հայկուշը <Ջեյթադյան> (Տիկ. Մյուլլեր), Վարդ-Պատրիկը (Հեոպներ), Հակոբ Լաթիֆյանը (դուկ. Վալտ) և ուրիշներ:

1925-ի նոյեմբերի 1-ին «Արմենուշը» «Փարիզահայ դրամատիկոս» բեմադրել է Տրդատ Նշանյանը: Նրան հաջորդել է Փարիզի «Մայր բեմի» խմբի ներկայացումը Աննա Բուդաղյանի բեմադրությամբ:

Քաղաքական մթնոլորտն, ըստ երևույթին, անբարենպաստ է եղել «Արմենուշը» եվրոպական երկրներում բեմադրելու համար, քանի որ այն՝ Թուրքիայից բացի քննադատել է նաև դերմանական կայսրության կատարած բացասական դերը Հայոց ցեղասպանության աջակցելու համար:

Այս հարցում ազատ են եղել Եգիպտոսի թատերական խմբերը: Քաղաքականապես Եվրոպայից անկախ, ինչպես նաև տարածքով ու հարաբերությամբ հեռու Թուրքիայից և Գերմանիայից, նրանք մի քանի տասնամյակ բեմում պահել են «Արմենուշը»՝ նոր հասունացող սերնդին պատմելով իրենց նախնիների կրած տառապանքներն ու վշտերը:

Եգիպտահայ թատրոնում «Արմենուշը» միշտ էլ խաղացվել է Վ. Հապեշյանի թարգմանությամբ: Այսպես՝ 1940-ի մարտի 3-ին «Մայրը կամ Արմենուշ» վերնագրով ներկայացվել է Կահիրեի էգպեքի թատրոնում, Արաքսի և Ասատուր Օհանյանների կողմից: Առաջինը

<sup>1</sup> Բ. Հովակիմյան, Նոր Զուգայի թատրոնի տարեգրություն (1887-2012), Երևան, 2013, էջ 75:

կատարել է Արմենուշի, իսկ երկրորդը՝ դոկտոր Վալտի դերը: Իսկ ապրիլի 14-ին՝ եգիպտահայ թատրոնի բազմերախտ գործիչ Արաքսի Օհանյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ներկայացվել է Ալեքսանդրիայի Լիսե Ֆրանսեում:

Մեկոյանի «Մայրը կամ Արմենուշ» վերնագրով պիեսը բեմադրել է նաև եգիպտահայ մի այլ դերասան և ռեժիսոր՝ Կարապետ Կարապետյանը: Նրա բեմադրությամբ ներկայացումը տեղի է ունեցել 1950-ի փետրվարի 5-ին Հայկական ընթերցասրահում: Կարապետյան - Օսկարի խաղընկերներն են եղել՝ տիկին Ա. Պ-ն (տիկին Մյուլլեր), Սոնա Կարապետյանը (պանդոկապետուհի տիկ. Վոլֆ), Մայտա Կարապետյանը (մայրը՝ Արմենուշ), Հովսեփ Մըսրըլյանը (Մյուլլերի ընտանիքի բժիշկ Վալտ), Սեդի Գոչունյանը (Օսկարի ընկեր Հեորեներ) և ուրիշներ: Բեմի կառավարիչը եղել է պիեսի թարգմանիչ Վ. Հապեշյանը:

«Արմենուշի» վերջին բեմադրությունը եգիպտահայ թատրոնում իրագործվել է 1965-ի հունիսի 25-ին՝ նվիրված Մեծ եղեռնի 50-ամյակին: Բեմադրողն ու Արմենուշի դերակատարը նորից եղել է Արաքսի Օհանյանը: Նրա հետ բեմ են բարձրացել Անահիտ Մ. Քյուփեյանը (տիկ. Մյուլլեր), Կարպիս Կիրակոսյանը (Օսկար), Միհրան Մընըշյանը (Հեորեներ), Ավետիս Գուլումճյանը (Վալտ), Գրիգոր Նիկողոսյանը (Վոլֆ), Դավիթ Թոգաթլյանը (գործակատարի պաշտոնյա էրնեստ): Բեմադրական աշխատանքի հոգսատարն այս անգամ եղել է թարգմանչի որդին՝ Հրաչ Հապեշյանը:

«Արմենուշ կամ Առևանգված կինը» վերնագրով «Արմենուշը» 1950-ին բեմադրել է Հալեպի և Բեյրութի երկար տարիների թատերական գործիչ Վարդան Պարիկյանը՝ Հալեպի դրամատիկ խմբի ռեժիսոր: Հալեպից բացի «Արմենուշը» ցուցադրվել է Դամասկոսի հանդիսականներին:

«Արմենուշի» վերջին բեմադրությունն իրագործվել է Փարիզի «Հայ թատրոնի ընկերակցություն թատերական ընթերցումների» հերթական շարքում, 2003 թվականի ապրիլի 6-ին, Հայ ուսանողական ուստանում, 5 գործողությամբ, թատերախմբի ղեկավար Արբի Հովհաննիսյանի կողմից: Դերերն ընթերցումով կատարել են՝ Տիկին Մյուլլեր - Աստղիկ Շինկիթյան, Օսկար Մյուլլեր - Վաչե Տեմիրճյան, Տիկին Արմենուշ - Մարալ Քերովբյան, Տիկին Վոլֆ - Նոյեմի Յուսեֆի, Պարոն Հեորեներ - Թորոս Գովթիկյան, Դոկտ. Վալտ - Վահրամ Աժտերյան, Ծառա - Ժիրայր Չոլաքյան (որը եղել է նաև փորձերը վարողներից մեկը), բեմական գործողությունների ընթերցումը՝ Նայրի Հովսեփյանի կողմից:

«Արմենուշի» այս բեմադրութեան մասին հանդամանալից հոգ-  
ված է գրել «Հառաջի» գլխավոր աշխատակցուհի Արփի Թոթոյանը<sup>1</sup>:

Ղևոնդ Մելոյանի պիեսներից 1940-ին առաջին մրցանակի է ար-  
ժանացել նաև «Վասպուրականի հերոսամարտը» պիեսը՝ գրված  
նույն տարում՝ Փարիզում: Մրցանակը շահել է Ամերիկայի «Համա-  
վասպուրականի ընդհանուր միութեան» նյույորքյան մրցույթում:  
Պիեսից մի փոքրիկ հատված տպագրվել է Փարիզի «Արևմուտք»  
թերթում, գործող անձեր ունենալով՝ Պառավ, Մայրը, Ա. տղան,  
երեք երեխա, Խալիլ պեյ, քյուրդը<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, հայկա-  
կան ընտանիքը խաղալիք է դարձել թուրքերի ու քրդերի ձեռքին,  
ինչ և ինչպես որ ուզին, այնպես էլ կվարվեն:

Հայոց ազատագրական պայքարի հերոսներին նվիրված և ցեղա-  
սպանութեան դեմ թեմաներով Մելոյանը գրել է ուրիշ պիեսներ ևս:  
Դրանցից են «Ջրհորին առեղծվածը» (կամ «Գետնի տակեն», որը  
1930-ին թերթնով տպագրվել է Փարիզի «Հառաջ» թերթում, իսկ  
առանձին գրքով՝ 1955-ին, դարձյալ Փարիզում), «Սաղայելական»  
(տրագիկոմեդիա, 1964, Փարիզ), «Դավաճանութուն» («Դավոյի  
դավաճանութունը», տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագ-  
րում, 1923-ին) և ուրիշներ, որոնց բեմական կյանքի մասին տվյալ-  
ների չհանդիպելով, լուռն ենք:

Երկու լեզվով գրողներից մեկն էլ, մասնավորապես մեզ հե-  
տաքրքրող թեմայի մասին, երկարամյա եռանդուն թատերական  
գործիչ՝ դերասան, դրամատուրգ, թարգմանիչ, ռեժիսոր, բանաստեղծ  
Հրանդ Մարգարյանն է: 1967-ից նա ղեկավարում է Նյու Յորքի Հա-  
մագգայինի թատերախումբը, գրել ու բեմադրել է ավելի քան երկու  
տասնյակ դրամատիկական գործեր, այդ թվում և ցեղասպանութեան  
դեմ՝ հայերեն ու անգլերեն լեզուներով:

Առաջին փորձը կատարել է 1965-ին, Հայոց ցեղասպանութեան  
50-ամյակի առթիվ, Նյու Յորքի Հայ Մշակութային միութեան կազ-  
մակերպած միջոցառման ժամանակ: Նա բեմականացրել ու բեմադ-  
րել է նահատակ բանաստեղծ Ռուբեն Սևակի «Ջարդի խենթը» փոք-  
րիկ գործը՝ մասնակցութեամբ թատերախմբի անդամներ Հարություն  
Մըսրըլյանի և Արաքսի Պաքալյանի<sup>3</sup>:

Ցեղասպանութունը դատապարտող առաջին լուրջ և նշանակա-  
լից գործը «Սողոմոն Թեհլիրյան վրիժառուն» դրաման է, որը հեղի-  
նակի բեմադրութեամբ ներկայացվել է Մեծ եղեռնի 60-ամյակի առ-

<sup>1</sup> Հառաջ (Փարիզ) 2003, № 20669:

<sup>2</sup> Արևմուտք (Փարիզ) 1945, № 7:

<sup>3</sup> Մենք (Նյու Յորք) 1977, № 2:

Թիվ 1975-ի ապրիլի 6-ին, Պելմոնթ Հայ Աքուլում: Ներկայացումը կայացել է Հայ օգնություն միության Մեծագույն Բոստոնի մասնաճյուղի նախաձեռնությամբ, Նյու Յորքի Հայ Մշակութային միության թատերախմբերի ուժերով:

Մարգարյանը յուրովի մոտեցում է ցուցաբերել մեծ վրիժառու Թեհլիրյանի դատավարությունը պատկերելիս: Բեռլինում, Հայաստանի Հանրապետության Հյուպատոսարանի գրասենյակում Թեհլիրյանը տվյալներ է հավաքում Հայոց ոճրագործների մասին, այնուհետև Հայ ուսանողների օժանդակությամբ գերմաներեն լեզվի ուսուցչուհի որոնելու ծրագիր են կազմում:

Երևում է Սողոմոնի մոր ուրվականը, որին ծնկաչոք ուխտ է անում նա:

Մայր, հավատա՛ ինձի.

Կերգնում մայրությունդ սրբություն վրա

Կերգնում իմ Հողիս...

Պիտի լուծեմ վրեժը, արյան վրեժը ազգիս...

Մայր, հավատա ինձի...<sup>1</sup>

Ապա՝ գալիս է Թալեաթին տապալելու տեսարանը: Երբ ահաբեկված ամբոխը ազմուկ է բարձրացնում, Սողոմոնն ասում է՝ «անթուրք, ես՝ Հայ, ձեզի ինչ»:

Հաջորդ տեսարանը ներկայացնում է բանտախուցը, ուր գերմանացի հոգևորականը կարգադրում է Թեհլիրյանին աղոթել և ապաշխարել, մինչդեռ Հայ քահանան օրհնում է արարքը և աղոթում նրա փրկության համար:

Դատավարություն ընթացքն էլ չի երկարել, հաղթել է արդարությունը:

Ահա իրական մի հատված բեռլինյան դատավարությունից.

Նախագահ – Հանցավոր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլիրյանը 1921-ի մարտի 15-ին Շարլոտտենբուրգի մեջ դիտավորյալ կերպով մարդ մը, Թալեաթ փաշան սպանած ըլլալուն համար.

Երգվյալներու գլխավորը – Ո՛չ:

Նախագահ – կստորագրեմ որոշումը:

Քարտուղարը կկարդա որոշումը՝ Նախագահ – Ամբաստանյալը անպարտ կարձակվի պետական սնտուկի հաշվուն և բանտարկության հրամանը ամբաստանյալին նկատմամբ կջնջվի<sup>2</sup>:

Մի՞թե թեկուզ այս մի հատիկ օրինակը, որ տվել է Թուրքիայի

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Արձագանդ (Տորոնտո) 1968, № 2:

դաշնակից Գերմանիայի արդարադատությունը բավական չէ, որ թե՛ Թուրքիան և թե՛ Գերմանիան խոստովանեն, որ հայերի նկատմամբ իրենց հրեշավոր արարքը ցեղասպանություն է:

Սողոմոն Թեհլիրյանի դերում հանդես է եկել թատերախմբի լավագույն ուժերից մեկը՝ Հովհաննես Պզտիկյանը: Ներկայացումը կրկնվել է Բոստոնում և Վաշինգտոնում:

Հասարակութայն լայն շրջանակներում գտած ջերմ ընդունելությունից ոգևորված, Մարգարյանը հինգ տարի անց, նորից է բեմադրել իր պիեսը, որի ներկայացումը տեղի է ունեցել 1980-ի մարտի 2-ին նույն՝ մշակութային միության թատերախմբի անդամների ուժերով:

«Սողոմոն Թեհլիրյան վրիժառուն» պիեսի երկրորդ բեմադրութայն դերակատարներն են եղել՝ Հովհաննես Պզտիկյանը – Սողոմոն Թեհլիրյանի, Արաքս Պաքալյանը – Սողոմոնի մոր, Անի Բելեճյանը – Տիկ. Եղիսաբեթ Սթեյբաուսի, Մանվել Մարությանը (առաջին ելույթը ամերիկահայ թատրոնում) – Ադուֆ Ֆոն Գորդոնի, Հակոբ Վարուժյանը – Լիպմանի, Միքայել Շահինյանը – Լեփսիուսի, Հրանդ Մարգարյանը – Հայաստանի Հյուպատոս Զեյմա Գրինֆելդի (մոր կողմից՝ իրանահայ) դերերում և ուրիշներ:

Վերոհիշյալ կերպարների առկայությունը որոշակիորեն ցույց է տալիս, որ Մարգարյանի, ինչպես նաև այս հարցի շուրջը գրած մյուս հեղինակների պիեսները, կառուցված են պատմական ուսույցի և կոնկրետ դեմքերի գործունեութայն ամուր հիմքի վրա և նրանցում ոչինչ շինծու բան չկա:

Հայոց ցեղասպանութայն թեմայով Հրանդ Մարգարյանի հայերեն գրած պիեսներից մեկն էլ նվիրված է հաստատակ բանաստեղծ – բժիշկ Ռուբեն Սևակին (Զիլինկիրյան) և կրում է «Երբ արևը կլուս» պատկերավոր վերնագիրը: Պիեսը գրվել է 2004-ի գեկտեմբերին և տպագրվել 2005-ին (88 էջ), Երևանում: Նվիրված է Սևակի նահատակութայն 90-րդ տարելիցին:

«Երբ արևը կլուս» պիեսը բաղկացած է 15 տեսարանից, ընդգրկում է Ռ. Սևակի կարճատև կյանքի պատմությունը Լոզանում, Փարիզում, Պոլսում, Չանդրում (աքսորավայրում) և անհայտ դաշտում: Նրանում օգտագործված են Սևակի բանաստեղծություններից, մեջբերումներ նամակներից, ինչպես նաև մի հատված 1908-ի օգոստոսի 8-ին Կ. Պոլսում Վահրամ Փափաղյանի՝ Օթելլոյի առաջին դերակատարման օրվա ներկայացման վերջում թատրոնի հասարակական դերի ու նշանակութայն մասին ելույթից:

«Երբ արևը կլուս» պիեսի գործող անձինք են՝ Ռուբեն Սևակը,

Եաննի Ափելլը (Սեակի գերմանուհի կինը), Աղջիկը և Խենթը (երիտասարդներ, Սեակի «Ջարգի Խենթը» – Ադանայի կոտորածների տիպարներ), Միկերը, Ժիրայրը (Համալսարանի ուսանողներ), Պաշտոնյան (գերմանացի), Ոստիկանը, Քննիչը (թուրքեր), Վանկընհայմը (գերմանացի դեսպան Պոլսում), Հովհան վարդապետը, Դանիել Վարուժանը, Իսմայիլը (թուրք պաշտոնյա), գանգեր, խուճբ:

Մարգարյանի այս պիեսը նախապես ունեցել է «Հավերժի ճանապարհին» վերնագիրը, որով առաջին անգամ խաղացվել է 2005 թ., ապրիլի 17-ին, Նյու Յորքի Համագրայինի թատերախմբի ուժերով, հեղինակի բեմադրությունը: Դեկորի հղացումն ու երաժշտությունը ընտրությունը նույնպես պատկանել է հեղինակին, գործին նպաստող 20 աշխատակից-ընկերներով:

Առաջին այդ բեմադրության մասնակիցներն են եղել՝ Թորոս Թերվիզյանը – Ռուբեն Սեակի, Լուսին Ժամկոչյան-Ճիրճիրյանը – Եաննի Ափելլի, Սեդա Արագ-Շահինյանը – Աղջկա, Հովհաննես Ոսկերիչյանը – Խենթի, Գառնիկ Ներսեսյանը – Միկերի, Շանթ Հակոբյանը – Ժիրայրի, Հ. Մարգարյանը – Գերմանական պաշտոնյայի, Նազարեթ Մարգարյանը – Ոստիկանի, Խաչիկ Հակոբյանը – Թուրք քննիչի, Արիս Սեակը – Վանկընհայմի, Կարպիս Գալենտերյանը – Հովհան վարդապետի, Վահրամ Խոջայանը – Դանիել Վարուժանի, Միքայել Նեվրուզյանը – Իսմայիլի դերերում:

«Երբ արևը կլուծ» պիեսի ներկայացումը կրկնվել է Ֆիլադելֆիայում<sup>1</sup>:

Մեր գրականության անմոռաց նահատակներ, ականավոր դեմքերի՝ Վարուժանի, Սիամանթոյի, Սեակի, Զոհրապի և մյուսների հիշատակների ոգեկոչման լավագույն հուշարձաններից մեկն էլ Հրանդ Մարգարյանի «Երբ արևը կլուծ» պիեսն է, որը երբեք չի լուկու:

Հայոց ցեղասպանության թեմայով պիեսներ գրող հայ հեղինակներից թերևս միակը՝ Հրանդ Մարգարյանն է, որը հայերենից բացի գրում է նաև անգլերենով:

Ցեղասպանության թեմային նվիրված նրա երկրորդ աշխատանքը՝ «Հայելիներ» հոգեբանական դրաման գրել է անգլերեն (1993), որը հետագայում իր թարգմանությունը տպարգրել է հայերեն (2011, Երևան): «Հայելիները» Մարգարյանը գրել է իր դստեր՝ կոլեջի աշակերտուհի Երազ Մարգարյանի առաջարկով: Անմիջապես նկատենք, որ Երազ բացառիկ անունը, ինչպես համարնույթ ուրիշ անուններ՝

<sup>1</sup> Հառաջ (Փարիզ) 2007, № 21645:

Աքսոր, Աքսորուհի, Գաղթուհի – բխում են ցեղասպանության հետևանքներից: Մարգարյանի որդու անունն էլ Հույս է: Եվ այսպես՝ ապրում են Հույսով ու Երազով:

Երազը փոքր տարիքում, ցեղասպանության արհավիրքը տեսած և այդ աղետից փրկված տատիկից՝ Մարիամից լսելով հայերի կոտորածների մասին, հորն առաջարկել է պիես գրել այդ թեմայով: Աղջկա մտահղացումն ավելի հեռուն է դնացել, քան կարող էր երևակայել մի սովորական դպրոցական: Նրա ցանկությունն է եղել, որ այդ պիեսը բեմագրի իրենց կոլեջում և ինչպես աշակերտներին, այնպես էլ նրանց ծնողներին պատկերացում տա հայերի կրած տառապանքների ու նրանցից բխող հետևանքների մասին:

«Հայելիներ» պիեսը Մարգարյանը նվիրել է Մեծ եղեռնից փրկված Մորը և բոլոր «Անոնց, որոնց կյանքերն ընդհատվեցան 1915-ին և անոնց, որոնք ապրեցան վերհուշի մղձավանջով»<sup>1</sup>:

Մի անգամ, ի պատասխան հարցումիս, Մարգարյանը պատմեց մորից լսած հետևյալ դեպքը: Մորական տատը՝ Նունուֆարը գաղթի ճանապարհին իր ապագա մոր՝ Մարիամի ձեռքը բռնած, մյուս երեսային շալակին կապած կիրճով անցնելիս, ընկել է թուրքերի կրակոցների տակ: Փոքրիկ Մարիամը նկատել է, որ մոր մեջքից արյուն է կաթում: Սպանվել էր փոքրիկը: Մայրը մի կերպ փոս է փորել, երեսային ծածկել հողի տակ ու շարունակել վտանգավոր ճանարպարհը:

Այդ դեպքը, – ասաց Մարգարյանը, – մորս հիշողությունից չէր հեռանում մինչև նրա կյանքի վերջը: Ո՛ր սիրտը կարող էր դիմանալ այդպիսի ողբերգական աղետին:

Պիեսը հիմնականում կառուցված է երեք կենտրոնական գործող անձանց վրա, որոնց լրացնում են նրանց շրջապատում աշխատող մարդիկ՝ հանուն միասնաբար երջանիկ կյանքով ապրելու երազի: Իսկ ցեղասպանությունն աշխարհիս ամենահրեշավոր ոճրագործությունն է մարդկության դեմ:

Պիեսում գործողությունները կատարվում են նույն հարթակի վրա, լույսերի խաղով ստեղծելով տարբեր տեսարաններ: Ժամանակը և վայրը, 1970-ական թթ. Նյու Յորքի հոգեբուժական հիվանդանոցն է: Ներս են բերում մի ուշագնաց կնոջ, ուշքի բերում, բայց հիվանդը չի խոսում: Բժիշկ Բրաունը ծանոթանում է նրա «գործին»: Պարզվում է նրա անուն ազգանունը՝ Թենի-Վարդենի Պետրոսյան է: Ամերիկա գաղթելուց հետո նրա ազգանունը կիսել են՝ դարձրել Ռոսս:

<sup>1</sup> Հրանդ Մարգարյան, Հայելիներ, Երևան, 2011, էջ 3:

Մեկընդմեջ երևում է երիտասարդ Թենին՝ դաշտում թարխուն քաղելիս, թուրք ոստիկանից ազատվելիս, սիրելի Կարոյին (Ֆիդայի) հանդիպելիս: Բժիշկը հիվանդին խոսեցնելու նպատակով տեսարան է սարքում: Ինքը քողով ծածկվելով իբրև ոստիկան, իսկ օգնականը՝ ոստիկանից փախչող Թենի: Հիվանդ Թենին սայլակից վեր է կենում, երևակայական դանակով մի քանի անգամ հարվածում է ոստիկանին և հոգեպես հանգստացած ասում՝ «Ես սատկեցուցի, ես սատկեցուցի»: Բժշկի համար պարզվում է նրա՝ անցյալում կրած ծանր կացությունը, ընտանիքի անդամների զոհվելը, Կարոյին կորցնելն ու չամուսնանալը և միայն անցյալի հուշերով ապրելը: Բժիշկ Բրաունը Թենիին հայտնում է, որ իր փոքր եղբայրը ողջ է մնացել, ապրում է Երևանում և գալու է իրեն տեսության: Միջանկյալ ասենք, որ Բրաունն էլ որք ու որդեգրված է եղել:

«Հայելիները» (Mirrors) առաջին անգամ բեմադրվել է անգլերեն, դեռևս ձեռագիր վիճակում (տպագրվել է 1996-ին, Նյու Յորքում)՝ 1993-ի դեկտեմբերի 9-ին (և 3 օր) հեղինակի դասեր՝ Երազ Մարգարյանի ղեկավարությամբ, Կոլումբիա համալսարանի Բուրնարդ կոլեջի հայ և ամերիկացի ուսանող դերակատարներով, Մայնրը Լաթհամ թատրոնում:

Մեկ տարի անց, 1994-ի նոյեմբերի 16-19-ին նույնը բեմադրել է Նյու Յորքի Դրամայի և թատրոնի կոլեջի ավարտական կուրսի ուսանողուհի, Համազգայինի թատերախմբի (ղեկ. Հ. Մարգարյան) դերասանուհի և դիմահարդար, ամերիկյան կինոյի դիմահարդար Արմինե Մինասյանը: Համալսարանն ավարտելու նրա ղեկավարին բեմադրությունը կայացել է Քուքնգ կոլեջի Փոքր թատրոնում, բարձր դասարանների ուսանողների ուժերով, նորից անգլերեն:

Վերջապես հերթը հասել է «Հայելիներին» հեղինակային բեմադրությունը անգլերեն պրոֆեսիոնալ դերասաններով, 1995-ի հոկտեմբերի 26-29-ին, Նյու Յորքի Ֆիլ Պոզաուսակի թատրոնում: Ունեցել է հետևյալ դերակազմը՝ Թենի - Անահիտ, երիտասարդ Թենի - Երազ Մարգարյան, Գերմանացի պաշտոնյա - Հրանդ Մարգարյան, Տիկ. Տեյվիս - Թալին Ամատունի, բժ. Պրաուն - Ջո Բորի, բժ. Ուիլյամս - Սայ Յանկ, Մայր - Նորիկ Չքոսկի, Մերի - Լարա Միլյան, Կարո - Ռիչարդ Քալահան, Ժանդարմ - Արամ Տեյրիմենճյան: Բեմադրական աշխատանքներին (ղեկոր, տարազ, երաժշտություն, դիմահարդրում, լույս և ալյն) մասնակցել է խմբի 10 անդամ: Ամբողջ ներկայացման ընթացքում, որպես հիշողություն, հնչել է Թենիի սիրած «Դև յաման» երգը:

1995-1996 թթ. միայն Նյու Յորքում «Հայելիները» ներկայացվել է 21 անգամ: Արժանանալով հանդիսականների հավանությունը, այն խաղացվել է նաև Գլենդելում (1996), Սան Ֆրանցիսկոյում (1996), Մասաչուսեթսի Նորթ Անտովրում (1997) և Լոնդոնում (1997):

Օֆֆ Բրոդվեյի թատրոնում «Հայելիների» բեմադրությունն առթիվ մի շարք հայ և ամերիկյան հոգեբույժներ դրական գնահատական են տվել պիեսին ու նրա բեմադրությանը: Այսպես՝ Հայկազ Գրիգորյանը (Նյու Ճըրզի) գրել է. «Հայելիները» հոգեբանական դյուլթական թատերախաղ է, որ կշռչափե հիշողության վնասվածքի և լարվածության առնչությունները: Հանդիսատեսին կմղե մտածելու հավաքական և անհատական հիշողության մասին»: Երաժշտական գործիչ Հենրիկ Բուգալյանն էլ հայտնել է. «Մարգարյանը նոր պատուհան կբանա ներկայացնելու Հայկական ցեղասպանությունը համաշխարհային դաշտին մեջ»<sup>1</sup>:

«Հայելիներից» բացի Հրանդ Մարգարյանը մի պիես էլ է գրել անգլերեն՝ «Լուսթյուն բուրբաձև ծիածանի մեջ»:

Պիեսը գրել է Նյու Յորքի նահանգի Թատերական ինստիտուտի պատվերով, ունի երկու գործողություն, որոնք կատարվում են 1915 և 1927 թթ. Վանում:

Շուշանը միսիոներների օժանդակությամբ Ամերիկայում բուժքույրական կրթություն ստանալուց հետո վերադառնում է, ամուսնանում Լոգանում ուսում առած բժիշկ Հակոբի հետ: Ունենում են մեկ տղա երեխա, սպասում են երկրորդին: 1915-ին Հակոբը մեկնում է ուս-թուրքական ճակատ, հետո մեղադրվում է դավաճանություն մեջ և կախաղան հանվում Վանում: Կնոջը պարտադրում են ականատես լինել ամուսնու կախաղանի տեսարանին: Կախաղան հանվելուց առաջ Հակոբը խնդրում է իր թուրք ընկերոջը՝ բժիշկ Իհսանին՝ սպանել իրեն, մինչև կախվելը: Իհսանի հայատյաց ոստիկանապետ հայրը հրամայում է թրով պատռել հղի կնոջ փորը: Իհսանը ազատում է Շուշանին, միսիոներների հետ ուղարկում Ամերիկա, որտեղ վերջինս ապաքինվում է և ակնաբուժություն սովորում: Ավարտելուց հետո որոշում է վերադառնալ Վան և գտնել որդուն: Գտնելու միակ նշանը եղել է աչքի մեջ ճերմակ կետ ունենալը:

Ամերիկայի և Թուրքիայի միջև դաշինք կնքվելուց հետո, Շուշանն իր ամուսնու վաղեմի ընկեր Իհսանի միջոցով հրավիրվում է Վան, իբրև ակնաբուժության մասնագետ՝ օգնություն ցույց տալու

<sup>1</sup> Հրանդ Մարգարյան, Հայելիներ, Երևան, 2011, էջ 97-98:

տեղական բժիշկներին: Այդ ժամանակներում Իհասանը հրդեհից ազատում է մի տղայի, ենթադրելով, որ դա Շուշանի տղան կարող է լինել: Շուշանն ամերիկյան անուն է կրում Սուզան Ամիթ: Բայց Իհասանի հայրը, որ աչքերից տկարացել և ստամոքսի հիվանդությունից տառապում էր, կասկածանքով է նայում Սուզանի վրա, ուզում է նրան էլ վերջ տալ: Դեպքերի զարգացման ընթացքում, Սուզանը համոզվում է, որ զտնված տղան իր տղան է, սակայն աչքի վիրահատությունից հետո սպիտակ կետը չի երևում: Բայց նա համոզված է, որ դա իր երեխան է, հայ մոր զավակ, հայություն զավակ:

Մարգարյանի «Լուսթյուն ըլորածև ծիածանի մեջ» գրաման առջին անգամ բեմադրվել է Նյու Յորքի նահանգի Թատերական ինստիտուտի կողմից 2010-ի ապրիլի 30-ին Մետրո թատրոնում: Իսկ 2012-ի մայիսի 4-ին խաղացվել է Նյու Յորքի Օֆֆ Բրոդվեյում, Լիպրա-6 մշակութային կազմակերպության կողմից<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս տվյալները հաղորդել է պիեսի հեղինակը՝ Հրանդ Մարգարյանը:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ  
ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ ԳՐԱԾ  
ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ ԵՎ ԹԱՏՐՈՆՈՒՄ**

Մարդկային պատմության մեջ լավն էլ, վատն էլ մնում են հիշողության մեջ, լավը՝ երանությանը, վատը՝ դատապարտելով: Այսպիսի խորը տպավորություն են թողել հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ տեղի ունեցած անմոռաց երևույթների սխրանքները, որոնք հիշվել են տոնական տրամադրությանը, իսկ դժբախտ իրադարձությունները նշվել են ոգեկոչումներով ու սգահանգեսներով: Բոլոր դեպքերում՝ լավն էլ, վատն էլ չեն մոռացվում: Հայի միտքը հիշաչար չէ, բայց վատի հանդեպ մոռացկոտ էլ չէ: Հոգեբանական այս արժեքի հավասարակշռության պահպանումն է, որ հային ներշնչանք է տալիս անտարբեր չլինել անցյալի տխուր էջերի նկատմամբ և միշտ զգոն լինել:

Հայ ժողովուրդը ցեղասպանության ոտնձգության փորձություններ շատ է տեսել դարեր ի վեր: Բայց այդ երևույթները գնալով աճել ու օրհասական են դարձել աշխատասեր հայ ժողովրդի համար: Պետականությունից զրկված հայությունն ազնվորեն ծառայել է այն պետական կառուցվածքին, որը տեր է դարձել նրա հայրենիքին ու ունեցվածքին: Բռնությունների ակտիվ շարաններն սկսվել են 19-րդ դարի կեսերից, երբ հայը ըմբոստացել է իրեն ստրկացնողի դեմ, հարկ եղած դեպքում՝ զենք վերցրել իր և իրեն ազգակիցների ընտանիքները չարից փրկելու համար:

Հայի մեջ հայությունը վերացնելու, լեզուն փակելու, կրոնը փոխելու, Հայաստան անունը գործածությունից հանելու և շատ այլ բռնությունների ու հալածանքների դեմ է, որ բողոքի ձայն են բարձրացրել նախ՝ զեյթունցիները, ապա և Արևմտյան Հայաստանի այլ գավառների ըմբոստացող հայությունը թուրքի կամակատար չղառնալու համար:

Թուրքական անօրինուլթյունների դեմ պայքարում հայերը միայն զենքով չէ, որ կռվել են, այլ քաղաքակիրթ եղանակով՝ գրականուլթյան մեջ մերկացրել նրանց ստոր արարքները: Երբ արգելվել են գրական-քննադատական զենքերի տպագրուլթյունները՝ պարբերական մամուլից գրաքննուլթյունը հանել է ամբողջական հոգւածներ կամ առանձին պարբերուլթյուններ, երբեմն էլ փակել այս կամ այն պարբերականի հրատարակուլթյունը, հայերն առաջ են մղել թատերական ասպարեզը: Բայց մինչև ե՞րբ կարող էին այդ թղթե զենքով պայքարել կամ փոքր բեմերից փրկուլթյան կոչեր արձակել:

Շունչը բերանները հասած զեյթունցիների, վանեցիների, սասունցիների, տիգրանակերտցիների և այլ գավառների ինքնապաշտպանուլթյան ջոկատների դեմ հանված թուրքական բանակի կոտորածներով ու ավերածուլթյուններով սկսվեց ցեղասպանուլթյան առաջին մեծ ազդանշանը: Այդ շրջանների հայուլթյան մի զգալի մասը գաղթեց մոտակա բալկանյան, միջինարևելյան երկրներ, Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս, Ռուսաստան, Միջին Ասիա, Եվրոպա, Եգիպտոս, Ամերիկա և ստեղծվեց բնավեր հայուլթյան մեծ սփյուռք:

Այս տարագրյալներն օտար երկրներում իրենց ինքնուլթյունը՝ լեզուն, հավատը, սովորուլթյունները հարազատորեն պահպանելու նպատակով կազմակերպած գեղարվեստական միջոցառումներով սերնդե սերունդ են փոխանցել այն: Ողբերգական թե՛ զավեշտական անցյալը պահպանելու նպատակով հայ դրամատուրգների հայերեն գործերի օրինակով սկսել են պիեսներ գրել նաև հայերենը մոռացող, օտար լեզուներին վարժված հեղինակները: Այս եղանակով է ծնունդ առել օտար լեզուներով գրող հայերի թե՛ գեղարվեստական և թե՛ դրամատիկական գրականուլթյունը:

Որքան որ մեզ հայտնի է, այդ կարգի դրամատուրգիայի սկզբնավորողը եղել է հայերենին հազիվ տիրապետող օրիորդ Օլգա Եոնեսկուն: Ականատես լինելով 1895-1896 թթ. արևմտահայուլթյան բեկորների վշտալի վիճակին Բուլղարիայում (թերևս այդ ճանապարհով է ինքն էլ հայտնվել Բուլղարիայում), տեսնելով նրանց թշվառուլթյունների պատճառը հանդիսացող թուրքական՝ հայահալած քաղաքականուլթյունը մերկացնող ազգային թատերական գործիչների բեմագրուլթյունները, ինքն էլ է ոգեշնչվել հայրենասիրական այդ մղումով և բուլղարերեն մի պիես գրել:

Պիեսն արտացոլում չի դտել հայ գրական-թատերական կյանքում, բայց վերնագրից ելնելով, պետք է կարծել, որ իր աշխատանք

քով նա ցանկացել է տեղական ազգաբնակչությանը ծանոթացնել բալկանյան երկրներում ապաստան գտած իր հայրենակիցների կրած դժբախտությանը:

Օլգա Եոնեսկուն առաջին կին հեղինակն է մեր իրականության մեջ, որ դեռ տառապյալ ազգակիցների վերքերը չսպիացած, արտասուքը չցամաքած, 1900-ին գրել է «Սեր և ատելություն» պիեսը, որը հազեցված է եղել հայրենասիրական կրակոտ խոսքերով՝ քաղցր Հայաստանի ազատության համար<sup>1</sup>:

Ազգային ինքնագիտակցությունը, հայերենի այբուբենը հազիվ իմացող Օլգային մղել է արտահայտելու իր ցավն ու կարեկցանքը: Զգայացուցց մի թեմա, որով իր բողոքի ձայնն է բարձրացրել անմեղ ժողովրդի նկատմամբ դենքի ուժով խոսելու քաղաքականության դեմ:

Ցավոք, այլ տվյալներ հայտնի չեն մեզ Օլգա Եոնեսկուի մասին: Հնարավոր է, որ նա եղած լինի հայ գրական-հասարակական մտքի պատմության մեջ ոչ անհայտ բառարանագիր ու խմբագիր Անդրանիկ Իոնեսկուի (Արիստակես Հովհաննիսյան, 1835 Քիչնե – 1907 Փարիզ) քրոջ աղջիկը: Ա. Իոնեսկուն գավակ չունենալով իր ունեցվածքի մի մասը կտակել է քրոջ աղջիկներին: Նրանցից մեկը 1907-ին դեռ ողջ է եղել<sup>2</sup>: Թերևս դա եղել է Օլգան, որը կրել է նաև քեռու ազգանունը և տեր կանգնել նրա թողած ժառանգությանը:

Հայերեն դրամատիկական երկեր գրող հեղինակների շարքերը 20-րդ դարի 20-ական թվականներից համարվել են նաև օտար լեզուներով ստեղծագործող հայագգի դրամատուրգների նորանոր դեմքերով: Առաջին խոշորագույն ներկայացուցիչը նրանց մեջ եղել է համաշխարհային գրականության մեջ իր մնայուն տեղն ապահոված արձակագիր և դրամատուրգ Վիլյամ Սարոյանը:

Ճիշտ է, Սարոյանի ծնողները Ամերիկա են գաղթել 20-րդ դարի սկզբներին, ինքն էլ ծնվել է 1908-ին Ֆրեդնոյում, բայց նրա մանկությունը նախապես անցել է որբանոցում, իսկ հետո՝ Հայոց ցեղասպանությունից փրկված բեկորների միջավայրում: Դեռ դպրոցական տարիներից նա տեսել ու զգացել է ազգերի միջև խտրություն գնելու, ուժի դիրքից գործելու անարդարության հետևանքները: Եվ նա իր հետաքրքրության գլխավոր ուշադրությունը դարձրել է մարդու վրա՝ մարդկայինը մարդու մեջ:

Իր գրական գործունեության սկզբնական տարիներից Սարոյանն

<sup>1</sup> Շավիղ (Վառնա) 1900, № 4, էջ 53:

<sup>2</sup> Մշակ (Թիֆլիս) 1907, № 99:

անդրադարձել է իրեն հայրենակիցների հույզերի ու հոգսերի պատկերմանն արձակուրդում և զրամատուրդիայում: Նրա հայ հերոսների մոտ խորապես զգալի է հայրենի երկրի կարոտի զգացումը, ապրում են կորցրած հարազատների, տուն-ընտանիքից զրկվելու հիշողություններով և այդ բոլորը՝ թուրքական հայահալած քաղաքականության պատճառով: Սարոյանը մեծ հոգեբան է: Ամեն մի մեծ ու փոքր ստեղծագործության մեջ առկա է նրա սերը մարդու նկատմամբ:

Իբրև գրող և քաղաքացի, Սարոյանն այսպիսի բնորոշում է տվել իր մասին. «Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լեզուն, որով գրում եմ, ամերիկյան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն և ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»:

Հայոց ցեղասպանության հարցով Սարոյանը նախապես սկսել է զբաղվել արձակով: 1935-ին նա տպագրել է «Մարդ, որի սիրտը լեռներում է» պատմվածքը, որի մեջ զգացվում է հայի գաղթականական կյանքի ծանր կնիքը: 1939-ին Սարոյանը մի քանի օրում այդ պատմվածքին զրամատիկական զգեստ է հագցրել, դարձրել «Իմ սիրտը լեռներում է» վերնագրով մեկ գործողությամբ գրամա: Պիեսի վերնագիրը նա վերցրել է XVIII դարի շոտլանդական բանաստեղծ Ռոբերտ Բյորնսի (1759-1796) համանուն վերնագիրը կրող բանաստեղծությունից՝ «Իմ սիրտը լեռներում է», որը պիեսի համար նախաբանի պես մի բան է ներկայացնում:

Պիեսի հիմնական թեման Ամերիկա գաղթած մի հայ ընտանիքի ողորմելի կյանքի պատմությունն է, անտեր-անտուն թափառական գաղթականի անհեռանկար կյանքի մի իրական պատկեր: Պիեսի հերոսի իսկական անուն-ազգանունն է Բենիամին Ալեքսանդրյան, բայց ամերիկացիների համար այն խորթ ու երկար լինելու համար, հեղինակը կրճատել-գարձրել է Բեն Ալեքսանդր<sup>1</sup>:

Սարոյանն իր պիեսը ձոնել է

նրան,

Ով սրտով անկեղծ է.

Բարձրին ու ցածրին, ում կյանքը երգ է,

Եվ ձերին մանուկ, և մանկան անվիշտ.

Ով սրտով լեռներում է միշտ:

Գործողության վայրն է՝ Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքի Սան

<sup>1</sup> Վահագն Դավթյան, Բարի հսկան, Երևան, 1979, էջ 76:

Բենիտո փողոցի վրա փայտե մի տուն: Մի տեսարան էլ պատկերում է նպարավաճառ Կոսակի խանութը: Ժամանակը՝ 1914-ի օգոստոս-նոյեմբեր ամիսները:

Արևմտահայուլթյան կոտորածների պատճառով Ամերիկա գաղթած Ալեքսանդրի ընտանիքը բաղկացած է երեք անձից՝ ինքը, մայրը և որդին: Երեք սերնդի պատմություն: Նրանց կյանքի անցյալը կենսագրական առումով անհայտ է: Թերևս Բեն Ալեքսանդրի հայրը զոհվել է 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ: Երբ և որտեղ է նա ամուսնացել Ջոնիի մոր հետ, խոսք չկա: Մայրը գիտե թուրքերին, քրդերին, մի քիչ էլ արաբերին, բայց այդ լեզուներով հաղորդակցվելու առիթ և անհրաժեշտություն էլ չկա: Անգլերեն էլ չգիտե: Դրա համար քչախոս է: Բեն Ալեքսանդրն ինքն էլ անհաջողակ բանաստեղծ է: Գրածներն են թույլ, թե համաշխարհային պատերազմի թեմային համահունչ չեն, նրա բանաստեղծությունները սպազբող չկա:

Ինը տարեկան տղան՝ Ջոնին աչքաբաց, աշխույժ, հետաքրքրասեր տղա է, բայց միջավայր չունի: Նրա փիլիսոփայական եզրակացությունն է՝ «Ինչ որ տեղ մի բան սխալ է»: Նա աշխատում է մխիթարել հուսալքված հորը, սիրտ տալ, բայց ինչպե՞ս, չի կարող:

Սարոյանն իբրև մարդասեր գրող, այդ անբախտ հայկական ընտանիքին ավելացրել է այլազգի ևս մի դժբախտ մարդու, որոնք իրար լավ են հասկանում: Այդ մարդը շոտլանդական ծագումով դերասան Մեք Գրեգորն է, որի սիրտը փոխանակ իր հայրենի լեռներում լինի, փակվել է ծերանոցում: Իր մեջ ուժ գտնելով, նա հետապնդումից փախչում է, հանդիպում հյուրասեր հայերին: Երկար չի տևում նրա ազատությունը: Որոնում, գտնում, տանում են: Նորից է փախչում, հայտնվում հայերի տանը, բայց ուժերը տեղի են տալիս, մահանում է Արքա Լիրի ողբագին խոսքերն արտասանելիս աղճկա՝ Կորդելիայի մահվան առթիվ:

Բնակարանի վարձը մուծել չկարողանալու համար, Բեն Ալեքսանդրի ընտանիքին վտարում են տնից ու, երեք հոգուց բաղկացած քարավանը քայլում է անորոշ, անհույս ճանապարհով...

Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսն առաջին անգամ բնագրով բեմադրվել է 1939-ի ապրիլի 13-ին Նյու Յորքի Բրոդվեյի «Գիլդ» թատրոնում: Հայկական մամուլում նրա վերնագիրը գրվել է «Սիրտս ի բարձունս», «Սիրտս սարերն է» ձևերով: Պիեսը բեմադրել է Ռոբերտ Լուիսը: Դերակատարներն են եղել՝ Բանաստեղծ (Բեն

Ալեքսանդր) – Ֆիլիպ Լեոպ (Թատերախմբի կարող ուժերից), Ջոնի – Սիտնի Լուսեթ (հրեական թատրոնից – սքանչելի կատարումով), Ջոնիի տատը – Հեսթըր Սոնդերհարդ (ավելի դնչուի տարազով, քան իրական հայ մամիկի հագուստով), Շրջիկ աշուղը (Մեք Գրեգոր-դե-րասանը) – Արթ Սմիթ:

Ինչպես հայտնի է, թե բնագիր-անգլերենում և թե օտար լեզուներով թարգմանություններում Ջոնիի տատի աղքատիկ տեքստում հայերեն արտահայտություններ չկան: Պիեսի հենց առաջին բեմադրություն մեջ հայերեն տեքստ է ներմուծվել նրա համար: Մեք Գրեգորի մահվան առթիվ, նրան տանելու ժամանակ, դերակատարը «հոգոց» հանելով ասել է. «Տեր ողորմյա, Տեր ողորմյա, Տեր ողորմյա, Աստված հոգվույն ողորմի, խեղճ մարդ»<sup>1</sup>:

Ջոնիի տատին բեմում պարապ չթողնելու նպատակով մի նորամուծություն էլ է կատարվել: Լուռ պահերին մի կատու է գրկել ու նրանով զբաղվել:

Առաջին այս բեմադրություն առթիվ «Նոր դիր» Հանդեսի աշխատակից Մ. Ս.-ն (Մարտիրոս Սարգիսյան) հպարտություն քերել է. «Այս անդրանիկ ընծան իրական հայտնություն մը եղավ իր հիացողներուն և գրականության հետևողներուն»:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսը հետագա տարիներին էլ է բեմադրվել Նյու Յորքի թատրոններում:

Սարոյանի դրամատուրգիայի կենսունակություն օգտին է խոսում նրա՝ տարբեր ժանրերով գրած գործերի բեմադրությունների առկայությունը ուրիշ ժողովուրդների թատրոններում: Նրա «Իմ սիրտը լեռներում է» և «Հեյ, ով կա այդտեղ» գործերը բեմական կյանք են ստացել նաև որպես օպերաներ: Նրանց լիբրետոն կազմել է ինքը՝ Սարոյանը:

1970-ի սկզբներին Նյու Յորքում բեմադրված «Իմ սիրտը լեռներում է» օպերայում, որպես դերակատարներ ելույթ են ունեցել 13-ամյա դպրոցական Ջերարդ Հարրինգթոնը – Ջոնի, տենոր Ալան Կրոֆուտը – Բեն Ալեքսանդր, բարիտոն Կեննեթ Սմիթը – Մեք Գրեգոր, բաս Սփիրո Մալասը – Կոսակ: Մետրոպոլիտենի օպերային թատրոնի մենեդջուհի, կոնտրալտո Լիլի Չուգասոյանը կատարել է Ջոնիի տատի դերը, ըստ որում, նա իր տեքստը երգել է հայերեն<sup>2</sup>:

Ամերիկացիներից բացի, «Իմ սիրտը լեռներում է» պիեսը ամերիկահայ թատերական գործիչներն էլ են բեմադրել, այն էլ՝ անգլերեն:

<sup>1</sup> Նոր դիր (Նյու Յորք) 1939, № 2, էջ 118:

<sup>2</sup> Ջահակիր (Կահիրե) 1970, № 319:

Այդ բեմադրութիւնը տեղի է ունեցել 1997-ին, Համազգայինի Փաստինայի մասնաճյուղի «Լեոն Շանթ» թատերախմբի կողմից: Բեմադրող-ռեժիսորն է եղել Սաբո Տատոյանը:

Սարոյանի դրամատուրգիան մատչելի է եղել նաև եվրոպական թատերական գործիչներին և տեղ գտել նրանց թատրոնների խաղացանկում:

Սարոյանի գրական ժառանգութիւնը՝ արձակն ու դրամատուրգիան եվրոպական երկրներ է մուտք գործել Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո, տարիներ անց: Եվրոպացիները նրան բնագրով կարգալուց, մեծութիւնն զգալուց հետո սկսել են թարգմանել նախ՝ արձակը, ապա՝ դրամատուրգիան:

Դրամատիկական գործերից առաջիններից մեկը թարգմանվել ու բեմադրվել է նրա «Իմ սիրտը լեռներում է» պիեսը, որի առաջին բեմադրութիւնը տեղի է ունեցել 1954-ին Փարիզի «Էսպերտո» թատրոնում: Բեմադրել է Ֆրանսիացի ռեժիսոր Միշել Վիտուլը: Սարոյանի պիեսը Փարիզում ներկայացվել է նաև հեռուստատեսութեամբ, 1957-ին, Ռոժե Ինգլիզի բեմադրութեամբ:

Սարոյանի արձակն ու դրամատուրգիան ընդունելութիւն են գտել նաև Ռումինիայի գրական և թատերական միջավայրում: Ծանոթութիւնն սկսվել է 1964-ին, երբ Հրատարակվել է նրա «Մեկ, երկու, դուռը բացեք» վերնագրով պատմվածքների թարգմանական ժողովածուն: Նույն՝ 1964-ին էլ Բուխարեստի Լուչիա Սթրարգա – Բուլանրիայի անվան թատրոնում, Լուչիան Փինթիլեի բեմադրութեամբ ներկայացվել է «Իմ սիրտը լեռներում է» պիեսը<sup>1</sup>:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրութեան հաջորդ նախաձեռնութիւնը կատարվել է բուլղարահայ թատերական գործիչների կողմից: Ճիշտ է, Սարոյանի նկատմամբ բուլղարացիների հետաքրքրութիւնն արտահայտվել է նրա «Մարդկային կատակերգութեան» թարգմանութեամբ ու հրատարակութեամբ (1959), բայց դրամատուրգիայի առումով, առաջին հանդիպումը կայացել է 1966-ին, «Իվան Վազով» ժողովրդական թատրոնում, «Զեր կյանքի ժամանակը» պիեսի բեմադրութեամբ:

Բուլղարահայ թատերական գործիչները համագործակցելով բուլղարացի արվեստակիցների հետ, հանդիսատեսին են ներկայացրել «Իմ սիրտը լեռներում է» պիեսը: Թարգմանիչն ու բեմադրողը եղել է բուլղարական ինքնագործ թատերախմբերի ռեժիսոր Լիլիանա

<sup>1</sup> Գրական թերթ (Երևան) 1965, № 4:

Սկարլթովան, նկարչական ձևավորումը կատարել է Մելքա Նահե-  
լան, իսկ երաժշտականը՝ Հայկանուշ Աղասյանը: Ներկայացման բո-  
լոր դերակատարները եղել են հայեր՝ Սոֆիայի «Երևան» Մշակու-  
թային կազմակերպության «Գաբրիել Սունդուկյան» շքանշանակիր  
թատերախմբի անդամներ:

Բուլղարերեն լեզվով «Իմ սիրտը լեռներում է» պիեսն առաջին  
անգամ ներկայացվել է 1982-ի դեկտեմբերի 12-ին: Մասնակիցներից  
են եղել՝ Հակոբ Շիրինյանը, Կարո Պողոսյանը, Ստեփան Հինդլյանը,  
Մարգարիտ Մուրատյանը (Ջոնիի տատը), 13-ամյա Բաֆֆի Տեր-  
տերյանը (Ջոնի) և ուրիշներ<sup>1</sup>:

Հայագգի թատերական գործիչների ջանքերի շնորհիվ «Իմ սիրտը  
լեռներում է» պիեսը ներկայացվել է նաև Ջեխիայում, 2007-ի ապ-  
րիլի 22-ին Պրահայի «Բորգո» ակումբում: Պիեսն անգլերենից չեխե-  
րենի է թարգմանել ու բեմադրել երիտասարդ ռեժիսոր Անդրան Աբ-  
րահամյանը: Ներկայացմանը մասնակցել են «Փոքր բեմ» երիտա-  
սարգական թատրոնի անդամները՝ բոլորն էլ կրթական տարբեր  
հաստատություններում սովորող չեխ ուսանողներ, այդ թվում և  
ինքը բեմադրողը, որը սովորել է Կարլի համալսարանի կինոքննա-  
դատություն և կենսաբանություն ֆակուլտետներում<sup>2</sup>: Մասնակից-  
ներից առավել հաջողություն են ունեցել Բեն Ալեքսանդրի և Մեք  
Գրեգորի դերակատարները: Այս բեմադրություն մեջ ևս Տատիկի դե-  
րակատարը խոսել է հայերեն:

2008-ի հոկտեմբերին «Իմ սիրտը լեռներում է» պիեսի այս  
բեմադրությունը ներկայացվել է նաև Հայֆեստի երևանյան 6-րդ  
միջազգային թատերական փառատոնին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, Գերմա-  
նիայի Շտուտգարտ քաղաքի մի խումբ հայ ռազմագերիներ կազմա-  
կերպել են «Հայկական ճամբարային թատրոն» և 1946-1949 թթ. մի  
շարք ներկայացումներ տվել: Այդ խմբից մի քանիսը՝ Երևանի Սուն-  
դուկյանի անվան թատրոնի նախկին դերասաններ Սուրեն Աբելյա-  
նը և Արամ Գրիգորյանը, ինչպես նաև Գևորգ Ղարդաշյանը, Մերի  
և Սուրեն Հակոբյանները և ուրիշներ 1950-ական թթ. փոխադրվելով  
Ամերիկա, Լոս Անջելեսում Ս. Աբելյանի ղեկավարությամբ կազմա-  
կերպել են «Նորք» անունով թատերախումբ: Սարոյանը ներկա է  
եղել «Պաղտասար աղբարի» նրանց ներկայացմանը: Մինչև 1955  
թվականը Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը թարգմանած է

<sup>1</sup> Գուլիս (Կ. Պոլիս) 1983, № 868:

<sup>2</sup> Օրեր (Պրահա) 2007, № 1, էջ 29:

եղել Վարդգես Ահարոնյանը: Այդ պիեսը մտել է նրանց խաղացանկի մեջ: Ցավոք, ուրիշ տվյալներ չունենալով, ենթադրում ենք, որ բեմադրութայն գլխավոր դերակատարները կարող էին լինել՝ Արամ Գրիգորյանը - Բեն Ալեքսանդր, Մերի Հակոբյանը - Ջոնի, Մաշա Սուրբյանը - Ջոնիի տատը, Մ. Սևաչերյանը - Մեք Գրեգոր, Գևորգ Ղարղաշյանը - Կոսակ:

Սարոյանի գրականութունը թափանցելով եվրոպական երկրներ, այնտեղից անցել է Թուրքիա, Իրան, միջինարևելյան պետութուններ: Դրամատուրգիայի առումով առաջին կանգառը տեղի է ունեցել Կ. Պոլսում: Բանկալթի թաղի «Միխիթարյան սանուց միութայն» թատերախմբի նախաձեռնութայմբ իրագործվել է «Իմ սիրտը լեռնեբում է» պիեսի բեմադրութունը «Սիրտս լեռնագավառն է» վերնագրով: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1955-ի փետրվարի 9-ին<sup>1</sup>, հետո կրկնվել 16-ին և 23-ին, ապա՝ մարտի 3-ին: Այս կրկնութունները պարզորոշ վկայում են բեմադրութայն գտած հաջողութունը:

«Սիրտս լեռնագավառն է» պիեսը թարգմանել է գրող Արա Աբրահամյանը, իսկ բեմադրութունն իրականացրել են Հ. Խաչատրյանը և Ա. Աղասյանը: Գեղարվեստական և երաժշտական ձևավորումները կատարել է Հ. Խաչատրյանը: Այս բեմադրութայն առթիվ Կ. Պոլսի «Մարմարա» թերթի փետրվարյան համարներում տպագրված նյութերի մասին տեղեկութուն չունենալով, չկարողացանք պարզել դերակատարների կազմը:

Օտարագիր հայ դրամատուրգներից առաջինը, որի գործերը տեղ են գտել Հայաստանի թատրոններում և Անդրկովկասում առհասարակ, եղել է Վիլյամ Սարոյանը: Այդ հանդիսումը բավականին ուշ է սկսվել: Ահա թե ինչու: Սարոյանը լինելով ամերիկյան գրող, Խորհրդային իշխանութայն գաղափարախոսական մտքի կողմից համարվել է բուրժուական գրականութայն ներկայացուցիչ: Բայց երբ Սարոյանի հռչակը տարածվել է աշխարհով մեկ, Խորհրդային Միութունում փոխվել է նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

1958-ի աշնանը Խորհրդային Միութայն թատերական գործիչների, դրամատուրգների, թատերադեմոնների Համամիութենական կոնֆերանսին մասնակցելու համար Մոսկվա են մեկնել Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսոր Վարդան Աճեմյանը, թատրոնի դեմքը ներկայացնող դերասաններ Վաղարշ Վաղարշյանը և Գուրգեն Ջանիրեկյանը: Հոկտեմբերի 7-ի նիստից հետո, ըստ

<sup>1</sup> Մարմարա (Կ. Պոլիս) 1955, № 3921, 3928, 3957:

պայմանավորվածության, Սարոյանը գրականագետ Հակոբ Սալախյանի և ականավոր ասմունքող Սուրեն Քոչարյանի ուղեկցությամբ այցելել են «Ուկրաինա» հյուրանոց և հանդիպում ունեցել Աճեմյանի և Զանիբեկյանի հետ: Ջերմ, մտերմական զրույցի ժամանակ առաջարկ է արվել Սարոյանին՝ արտոնել նրա պիեսների բեմադրությունը: Սարոյանը տվել է իր համաձայնությունը և խոստացել Հայաստան գալ:

Սարոյանը Երևան է եկել 1960-ի սեպտեմբերին (14-22): Այդ կարճ ժամանակամիջոցում շատ հանդիպումներ է ունեցել Երևանում և նրանից դուրս, հրաշալի տպավորություն ստացել: Անպիտեմբերի 17-ին նա ներկա է եղել «Պաղտասար աղբար» ներկայացմանը և մեծ բավականություն ստացել հատկապես Հրաչյա Ներսիսյանի և Արուս Ասրյանի (Անուշ) դերակատարումներից:

Սունդուկյանցիների հետ հանդիպման ժամանակ, Սարոյանից մի բեմադրություն տալու միտքը կանգ է առել «Իմ սիրտը լեռներում է» պիեսի վրա, որ թարգմանել էր Խաչիկ Դաշտենցը: Բեմադրական աշխատանքն Աճեմյանն սկսել է 1961-ին: Հարազատ մնալով հեղինակի նշումներին, որոշ հավելումներով նա «Հարստացրել է» պիեսի բովանդակությունը, նրանում ընդգծելով հայ գաղթականի անպահով կյանքի ու կարոտի հասկացությունը: ԶԷ՝ որ ինքն էլ 10 տարեկան է եղել, երբ 1915-ին գաղթել է Հայաստան, պատանեկությունն անցկացնելով Ալեքսանդրապոլի (Գյումրիի) որբանոցում:

Պիեսի բեմադրության գաղափարական մեկնաբանության համար իր մտահղացումներն Աճեմյանը հիմնավորել է հեղինակային մոտեցումներով: Նա գրել է. «Սարոյանն այս ոչ մեծ դրամատիկական գործում արտահայտել է մեզ համար հասկանալի ու հարազատ մի գաղափար – մարդասիրական գաղափարը»: Նրա մեկնաբանությունն այս գաղափարի կիրառումն է բեմադրության մեջ:

Սարոյանի գրական կերպարներին այսպիսի մեկնաբանություն է տվել Աճեմյանը. «Իմ սիրտը լեռներում է» պիեսի գործող անձերը Ամերիկայում ապրող Ամերիկա գաղթած շարքային «փոքր» մարդիկ են: Նրանք բոլորն էլ ազնիվ, զեղեցիկ, վսեմ և պոետական հոգի ունեն: Նրանք ընդունակ չեն վատ արարքների, բոլորն էլ համակված են մարդասիրությամբ, միմյանց օգնելու, իրար սիրելու ձգտումներով: Այս սովորական և տարբեր ցեղերին պատկանող մարդիկ ուղում են գեղեցիկը զգալ, սիրել, լինել երջանիկ...»<sup>1</sup>:

Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսն առաջին անգամ ներ-

<sup>1</sup> Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի թասերական բաժին, Վ. Աճեմյանի ֆոնդ, № 39:

կայացվել է 1961-ի ապրիլի 15-ին, իբրև Հայոց Մեծ եղեռնի հերթական տարելիցի արձագանք: Պիեսի գեղարվեստական ձևավորման համար Մինսկից (Բելուռուսիա) հրավիրվել է բեմանկարիչ Արմեն Գրիգորյանցը և մի սքանչելի տեսարան ստեղծել՝ փայտե տնակի անշուք սենյակ, փոքրիկ բակ, մի լայնատերև ծառ, որ կենդանություն է տալիս շրջապատին և հնարավորություն ստեղծում Ջոնիին խաղալու արևի շողերի հետ: Երաժշտությունը գրել է արժանահիշատակ դաշնակահար-կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը, որի՝ շեփորի համար գրած երաժշտությունն այնպես է մերվել ներկայացման հետ, որ գրեթե բոլոր թատրոններում նրա երաժշտությունն է օգտագործվել:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսը Սունդուկյանի անվան թատրոնում խաղացվել է մինչև 1980-ի փետրվարի 18-ը և ունեցել է 183 ներկայացում: Ներկայացումների շարքն ընդհատվել է Բեն Ալեքսանդրի գերակատար Բաբկեն Ներսիսյանի մահվան պատճառով: Սկզբնական շրջանի գերակատարներն են եղել՝ Ջոնի-Վարդուհի Վարդերեսյան, Ջոնիի տատը - Արուս Ասրյան, Ջասպեր Մեք Գրեգոր - Հրաչյա Ներսիսյան, Կոսակ (նպարավաճառ) - Խորեն Աբրահամյան, Եսթեր (Կոսակի աղջիկը) - Մարիամ Դիլաքյան (դպրոցական), Ռուֆ Էպլի (ատաղձագործ) - Մամիկոն Մանուկյան, Հենրի (լրագրավաճառ, որը նաև սուլել է սովորեցնում Ջոնիին) - Նորայր Գևորգյան, Վիլլի (փոստատար) - Ավետիք Զրաղացյանյան, Կինգհամ (տները վարձով տվող գործակալ) - Արմեն Խոստիկյան, Ֆիլիպ Կարմիքայել (ծերանոցի աշխատակից) - Վաչե Բագրատունի, Վոլես - Էդվարդ Համբարձումյան, Երիտասարդ ամուսին - Լևոն Թուխիկյան, կինը՝ Հռիփսիմե Սրապյան:

Երկար տարիների բեմական կյանք վայելող այսպիսի ներկայացումը, բնականաբար, սերնդափոխություն է ունեցել: Փոփոխվել են Մեք Գրեգորի դերակատարները: 1961-ի հուլիսի 9-ից (Լենինականում - Գյումրի) սկսել է խաղալ Վահրամ Փափաղյանը, 1964-ի հուլիսի 3-ից (Բաքվում) - Հովհաննես Ավագյանը, 1970-ի հունվարի 25-ից՝ Գեղամ Հարությունյանը (յոթ անգամ): Սրանցից յուրաքանչյուրը խաղացել է, բնականաբար, ըստ իրեն վարպետության, բայց բոլոր դեպքերում պահպանել են նրա ազատության ձգտումը և խաղալու հույսը:

Հետաքրքրական է այս գերակատարներից առաջին երեքի մահվան տեսարանը: Նույն միզանոցներ: Բեն Ալեքսանդրի վարձած

բնակարանի աստիճանների վրա նստած «Արքա Լիրի» մենախոսու-  
թյան ժամանակ Հր. Ներսիսյանի գլուխը կախվում էր, Փափազյանի  
մոտ՝ նվազափողը ձեռքից սահելով ընկնում էր, իսկ իր գլուխը ասես  
ծալվում էր մի կողմ, իսկ Ավագյանի գլուխը հետ ընկած էր անշն-  
չանում:

Ջոնին Վարդուհի Վարդերեսյանի լավագույն դերակատարումնե-  
րից մեկն էր՝ եռանդուն, հարցասեր, մեծավարի դատող-հետաքրքր-  
վող: Թեև այնքան էլ մեծ չէր երևում, բայց ավելի փոքր ձևանալու  
համար հաճախ ոտքերը ծնկներից ծայած, մի քիչ էլ իրարից հեռու  
էր պահում, որ մեծ չերևա: Հոգեբանական շեշտը նրա ներքին ապ-  
րումների գեներն էր, որով 177 անգամ հիացրել էր հանդիսատեսին  
ամենուրեք: 1979-ից մի քանի ներկայացման մեջ Ջոնիի դերում  
հանդես է եկել Բաբկեն Ներսիսյանի դպրոցական որդին՝ Տիգրան  
Ներսիսյանը, որն այսօր Սունդուկյանի անվան թատրոնի առաջա-  
տար դերասաններից մեկն է: Շատ են փոփոխվել նաև Եսթերի դերա-  
կատարները՝ Ռիտա Յուզբաշյան (աշակերտուհի), Մարիամ Ահարոն-  
յան (ուսանողուհի), Շաքե Թուխմանյան, Ժենյա Մկրտումյան:

Ջոնիի տատ Արուս Ասրյանին երբեմն փոխարինել է Լենա Ալ-  
վարյանը, Խորեն Աբրահամյանի Կոսակին՝ Մհեր Մկրտչյանը: Ան-  
փոփոխ են մնացել Բ. Ներսիսյանի Բեն Ալեքսանդրը, Վաչե Բագրա-  
տունու Կարմիքայելը, Արմեն Խոստիկյանի Կինգհամը:

Ինչպե՞ս է թատերական քննադատությունն ընդունել այս բե-  
մադրությունը: Շատերից բերենք մեկը՝ Պարույր Սևակի տպավորու-  
թյունը, որ նա տպագրել է «Սովետական արվեստ» ամսագրում՝  
«Սարոյանին քիչ թե շատ ծանոթ մեկը, — գրել է նա, — այս պիեսի  
մեջ էլ տեսնում է այն առանձնահատուկը, որով գրողը գրող է դառ-  
նում և ինչը Սարոյանին Սարոյան է դարձրել: Այստեղ էլ Սարոյանը  
մեզ ստիպում է աշխարհին նայել ի՛ր աչքերով, կյանքի երևույթնե-  
րը՝ ի՛ր տեսակետից, մարդկանց գնահատել ի՛ր չափանիշով»: Դրա  
համար էլ նա այն միտքն է հայտնել, որ «այս պիեսը ոչ այնքան  
հիացնում է, որքան հուզում... Հարցեր չի լուծում, այլ առաջադրում  
է, որ մարդիկ խորհեն դրանց պատասխանի համար»:

Ոչ պակաս ուշադրավ է նրա տված գնահատականը բեմադրող-  
ուեսթիսոր Վ. Աճեմյանին, որն այս բեմադրությամբ հաստատել է, «որ  
նրա միտքը որոնող է, որ նա մեկն է այն հազվագյուտ արվեստա-  
գետներից, որոնց կոչում են «մշտապես երիտասարդ»: Աճեմյանի

<sup>1</sup> Սովետական արվեստ (Երևան) 1961, № 5:

աշխատանքում Սևակը գնահատել է մարդկանց նկատմամբ Սարո-  
յանի պատկերած կերպարների բարությունը և ստեղծել հետաքրքիր  
տեսարաններ՝ «Ջոնի – Տատ, Ջոնի – Մեք Գրեգոր, Ջոնի – Բեն Ալեք-  
սանդր, Ջոնի – Կոսակ, ինչպես և մյուսների հետ»:

Վ. Վարդերեսյանի Ջոնիին Սևակը համարել է մեծ հաջողություն  
թե՛ դերասանուհու, և թե՛ թատրոնի համար: Կատարելություն է հա-  
մարել Ա. Ասրյան – Տատի դերակատարումը, հատկապես նրա՝ լուելու  
արվեստը. «Եվ ինչպե՛ս լավ է լուում տատը... իսկ ի՛նչ արժե քայլ-  
վածքը միայն՝ փոքր-ինչ ճկված, ձեռքը մեղքին»:

Քիչ այլ է թատերախոսի կարծիքը Բ. Ներսիսյանի Բեն Ալեք-  
սանդրի մասին, որին համարել է «ճախողված բանաստեղծ», որը  
հաջողության չի հասնում: Ներսիսյանը չէր ընդունում Սևակի այս  
կարծիքը և շարունակում էր իր հռետորական շունչը, հատկապես  
երբ բանաստեղծության ձեռագիրը հետ էր ստանում և ամբողջ գայ-  
րույթը թափում պատերազմի դեմ:

«Իմ սիրտը լուներում է» պիեսի բեմադրության մեջ գլխավոր  
շեշտը դրվել է ցեղասպանության արհավիրքներից փրկված բեկոր-  
ների անհեռանկար կյանքը պատկերելու վրա, որին միացել է Մեք  
Գրեգորի ազատասիրական գաղափարը և մի հրաշալի գործ դարձել:  
Սարոյանը 1976-ի հոկտեմբերի 18-ին դիտելով այս ներկայացումը,  
զարմացել է թե այդ փոքրիկ պիեսին Աճեմյանն ինչպիսի հարուստ  
բովանդակություն է տվել:

Սունդուկյանի անվան թատրոնն իր այս բեմադրությամբ հյուրա-  
խաղերով հանդես է եկել Հայաստանի և Անդրկովկասի մի շարք քա-  
ղաքներում՝ ամենուրեք գեղարվեստական և մտավոր մեծ բավակա-  
նություն պատճառելով հանդիսականներին: Այս երևույթը կրկնվել  
է նաև թատրոնի՝ 1966-ին Լիբանան և Սիրիա կատարած հյուրախա-  
ղերի ժամանակ: Բեյրութի մամուլը բարձր է գնահատել բեմադրու-  
թյան ու դերակատարների աշխատանքի նպատակասլացությունը:

Ահա նրանցից մեկի՝ թատերախոս Գրիգոր Բնոսեյանի անկեղծ  
տպավորությունը.

«Մեծ բեմադրիչ Վարդան Աճեմյան ստեղծած է կախարդական  
աշխարհ մը, որ կգտնվի Մ. Նահանգներու մեջ, բայց որ կրնա  
գտնվիլ բոլոր երկնակամարներուն տակ. իր բեմադրությունը ար-  
դիական է և առաջնակարգ, և գիտե լուռ ներկայություններով  
բյուրեղաքաղաք մը կազմող տիպարներ և բարքեր պարզեւել... Ճոնին:  
Վարդուհի Վարդերեսյան մոռցնել տվաւ թե տղեկի ճարպկությամբ

և նորաբողբոջ հոգիով իր երևույթի հետին կար ծաղկուն կին մը... Բ. Ներսիսյան բանաստեղծին պոռթկումները, հնչեցին թէ՛ «Մի ինչ տեղ մի ինչ բան սխալ է»:

Հայու մեր սիրտը սիրտից մեծ մոր – Ա. Ասրյանի ներկայութենեն, որ հարազատ վերարտադրություն էր Հայ բոլոր մամիկներուն... կրկնակիրորեն հուզիչ էր տեսնել Հայ թատրոնի կազմին՝ Վահրամ Փափազյանը, որ կմարմնավորեր կարծեք թե իր կյանքը, քանի որ հերոսը «մեր ժամանակի շեքսպիրյան ամենամեծ դերասանն է», խոր ծերության մեջ շարունակելով խաղալ «Արքա Լիրը»<sup>1</sup>:

Այս ներկայացումն իր բովանդակությամբ բերութաՀայությանը հարազատորեն պատկերել է նրանց ոչ հեռավոր անցյալի պատմությունը, խոսել ժամանակակիցների սրտի լարերի հետ, քաջալերել կերտելու նոր ու ապահով կյանք:

Երևանի Սունդուկյանի անվան թատրոնից հետո, Անդրկովկասի Հայկական թատրոններից երկրորդը Ստեփանակերտի Մ. Գորկու (այժմ՝ Վ. Փափազյանի) անվան թատրոնի կոլեկտիվն է անցել Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությանը: Թարգմանությունն ու երաժշտությունը եղել է նույնը՝ Խ. Դաշտենցի և Ա. Բաբաջանյանի: Գեղարվեստական ձևավորումը կատարել է թատրոնի գլխավոր նկարիչ Գրիգոր Մատուրյանը: Բեմադրության համար Երևանից հրավիրվել է երիտասարդ ռեժիսոր Անդրանիկ Չաղալյանը:

Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1964-ի օգոստոսի 14-ին: Ստեփանակերտի թատրոնի պատմության հեղինակ և նույն թատրոնի գրական մասի վարիչ, գրող-թատերագետ Իսահակ Ալահվերդյանն իրենց թատրոնի բեմադրությունը համարել է Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության կրկնություն՝ «Իմ սիրտը լեռներում է» երևանյան բեմադրության փոխադրության մի փորձ էր»<sup>2</sup>:

Առաջին ներկայացումից մեկ շաբաթ անց, թատրոնին մոտ կանգնած բանաստեղծ-դրամատուրգ և պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը «Սովետական Ղարաբաղ» թերթում տպագրած «Նրանց սրտերը լեռներում են» վերնագրով թատերախոսականում այլ միտք է պնդել: Նա ծանոթ է եղել Աճեմյանի բեմադրությանը և ոչ միայն կրկնություն, այլև նմանություն ակնարկ չի արել: «Ամեն մի թատրոնի համար, – գրել է նա, – բարձր պատիվ է Սարոյան բեմադրելը:

<sup>1</sup> Զարթոնք (Բեյրութ) 1966, գեկանմբերի 14:

<sup>2</sup> Ի. Ալավերդյան, Ստեփանակերտի Մ. Գորկու անվան Հայկական պետական դրամատիկ թատրոն, Երևան, 1983, էջ 38:

Խոսքս, իհարկե, լավ բեմադրութեան մասին է: Շտապեմ ասել, որ մեր թատրոնը կարողացավ մտնել այդ ցուցակի մեջ: Մտավ, բարձրացրեց: Մեր թատրոնի համար սա կրկնակի պատիւ է»<sup>1</sup>:

Ըստ Ուլուբաբյանի, ներկայացումը կառուցվել է երեք հիմնական կերպարների վրա՝ Մեք Գրեգորի, Բեն Ալեքսանդրի և Ջոնիի: Ընդգծենք, որ Մեք Գրեգորի դերում ժողովրդական արտիստ Գուրգեն Հարությունյանի հանդես գալը շրջադարձային երևույթ է եղել: Երկար տարիներ նա լուրջ կատակերգակ դերասանի համբավ ունեւր: Ո՞վ կկարծեր, թե նրա մեջ խորը թաքնված է եղել դրամատիկական ողբերգական կերպար մարմնավորելու ցանկութունը: Այս երևույթը զարմանք է պատել նաև թատերախոսին՝ «Լուրջ Հարությունյանը ոչնչով չի դիջում ծիծաղեցնող Հարությունյանին: Մեք Գրեգորի ողբերգական պայծառ կերպարի մեջ սիրելի դերասանի մի նոր փայլատակումը, մի ավելորդ անգամ զգացինք, թե ինչպես իսկական տաղանդը սահմաններ չի ճանաչում»:

Թատրոնի առաջատար, բայց ոչ հեռուորական երանգով ժողովրդական արտիստ Միքայիլ Կորգանյանը եղել է Բեն Ալեքսանդրի ամենահարմար դերակատարը՝ դժվարութունների դեմ մաքառող բանաստեղծը:

Երրորդ աչքի ընկնող դերակատարումը եղել է էմմա Պապայանի (դրամատուրգ Արամաշոտ Պապայանի դուստրը) Ջոնին: Բնավորութեամբ համեստ այս դերասանուհին կարողացել է վերափոխվել, դառնալ հետաքրքրասեր, փիլիսոփայող մի պատանի ու դարձել իր և թատրոնի նվաճումը: Պապայանի խաղի մասին Ուլուբաբյանը գրել է. «Հավատում ես նրա ամեն մի խոսքին՝ լացին ու ծիծաղին... դերասանը գերի մեջ է, գերը՝ դերասանի: Եվ դու մոռանում ես, որ ներկայացում ես դիտում»:

Երկրորդական դերակատարումների մասին (Կոսակ - Գրիգոր Գրիգորյան, Ջոնիի տատ - Արուս Ղազումյան) նշվել է, որ կերպարները հարստացնելու կարիք ունեն: Հարկ է զգացվել ավելի նշանակալից դարձնել գաղութահայութեան ողբերգութունը:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրութունը համարվել է «թատրոնի ստեղծագործական լուրջ նվաճում»:

Սարոյանի պիեսի բեմադրութունների հաջողութունը վստահութուն է ներշնչել նաև իրանահայ թատերական գործիչներին: Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան թատերա-

<sup>1</sup> Սովետական Ղարաբաղ (Ստեփանակերտ) 1964, № 198:

կան հանձնախմբի նախաձեռնութեամբ «Իմ սիրտը լեռներում է» պիեսը բեմադրել է իրանահայ թատրոնի լավագույն ռեժիսորներից մեկը՝ Արամայիս Աղամալյանը, որի մահից հետո թատերախումբը կոչվել է նրա անունով: Թարգմանութիւնը եղել է Ս. Դաշտենցինը, գեղարվեստական ձևավորումը՝ բեմադրողինը, երաժշտական ձևավորումը կատարել է երաժշտագետ Լիդա Բերբերյանը՝ օգտագործելով Ա. Բաբաջանյանի երաժշտութիւնը:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսը բեմադրվել է 1974-ի ապրիլի 4-ին, Արարատի սրահում: Ներկայացման մասնակիցներն են եղել Սաբրինա Գրիգորյանը - Ջոնի, Յոլակ Ավետիսյանը - Բեն Ալեքսանդր, Արփիկ Աղաջանյանը - Ջոնիի տատը, Համլետ Բարամյանը - Ջասպեր Մեք Գրեգոր, Հանրի Եգանյանը - Պարոն Կոսակ, Փենիկ Փիրջանյանը - Եսթեր, Արմեն Զարգարյանը - Ռուֆ Էպլի (ատաղձագործ), Մատթեոս Շաֆրագյանը - Ֆիլիպ Կարմիրքայել, Արմիկ Ապրեսյանը - Հենրի (լրագրավաճառ), Գաբրիել Թեքիզյանը - Վիլլի (փոստատար), Սուրեն Մնացականյանը - Կինգհամ (տներ վարձու տվող գործակալ), Էդիկ Շահինյանը - երիտասարդ ամուսին, Արլետ Կարապետյանը - նրա կինը:

Դերակատարների զգալի մասն արդեն փորձառու դերասաններ լինելով, նպաստել են ներկայացման հաջողութեանը և գրեթե մի շնչում կատարել գործողութիւնները: «Ալիքի» թատերախոս Ժ. Ղ.-ն (ժիրայր Ղարիբյան) շատ տպավորիչ համեմատութիւն է կատարել՝ «արգիական բեմն իր դերակատարներով նույնացալ ժողովրդի հետ: Մի պահ, անկախ քո կամքից, զգում էիր, որ քո սիրտն էլ է ճախրում լեռներում, որովհետև դերակատարների սիրտը, արդարև, իրենց հմուտ խաղարկութեան շնորհիվ ճախրում էր լեռներում»<sup>1</sup>:

Ջոնիի կերպարը մարմնավորող 17-ամյա Սաբրինա Գրիգորյանի (վաղամեռիկ) դերակատարումը թատերական «գյուտ» է համարվել: Բեմադրութիւնը բարձր են գնահատել անվանի դերասան-ռեժիսոր Մանվել Մարությանը և երիտասարդ ռեժիսոր Արթի Հովհաննիսյանը (այժմ՝ Փարիզում): Ընդհանուր գնահատականն է եղել՝ «Ամբողջ խաղարկութիւնը մի հաջող համադրութիւն էր ու հոգեկան հաճույք պատճառող»:

Սարոյանի պիեսն իր ճամփորդութիւնը շարունակել է դեպի էլ ավելի հարավ և կանգ առել Հալեպում:

1972-ին Բեյրութի Հայկազյան կոլեջի (այժմ՝ համալսարան) նա-

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1974, № 79:

խաճեռնությամբ Սարոյանը հրավիրվել է Լիբանան: Բեյրութից բացի հանդիպումներ է ունեցել նաև Լաթաքիայում: Հարմար առիթն օգտագործելով, հալևապահայ մի քանի երիտասարդ երկու օրով նրան հրավիրել են Հալեպ, ծանոթացրել քաղաքին, միջնաբերդին, հյուրասիրել: Այդ երիտասարդների մեջ է եղել նաև Հալեպի «Պետրոս Աղամյան» թատերախմբի ատենապետ, դերասան Վահե Սամուելյանը, որը տաք զրույցի ժամանակ Սարոյանից արտոնություն է խնդրել իրենից որևէ պիես բեմադրելու համար՝ «չատ հրապուրված ենք ձեր թատերախաղերով, կարտոննք մեզի խաղալու ձեր հեղինակություններն մեկը»: Սարոյանն անմիջապես չի պատասխանել, բայց ավելացրել է՝ «դուք անսլալման կուզեք խաղալ, շատ լավ, խաղացեք, միայն մեկ պայմանով, ես չտեսնեմ»<sup>1</sup>: Այս պայմանն ասելուց հետո քահ-քահ ծիծաղել է և ծիծաղեցրել բոլորին:

Տարիներ անց, Սարոյան խաղալու առաջարկ է ստացվել Կիպրոսից: Հալևապի նախկին դերասան, Կիպրոսի Մելքոնյան վարժարանի անգլիերենի դասատու Հովհաննես Շեռհմելյանն աղամյանցիներին առաջարկել է բեմադրել «Իմ սիրտը լեռներում է» պիեսը իր թարգմանությամբ:

Աղամյանցիների մտահղացումը վերջնականապես իրականություն է դարձել 1987-ին, երբ այլևս չկար Սարոյանը: Բեմադրողն է եղել Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի շրջանավարտ, տեղացի Հարություն Չննոզյանը: Դեկորները պատրաստել են Ներսես Տաղլյանը և Ներսես Պոյաճյանը, օգտագործվել է Ա. Բաբաջանյանի երաժշտությունը: Առաջին ներկայացումը կայացել է հունվարի 31-ին, Հ.Բ.Ը.Մ. սրահում: Բեմադրությունը նվիրվել է թատերախմբի 25-ամյա գործունեությանը:

Թատերախմբի աշխատանքներին օժանդակելու նպատակով Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեի (Երևան) կողմից Հալեպ է գործուղվել Սունդուկյանի անվան թատրոնի առաջատար դերասան Սոս Սարգսյանը, որը պեսք է կատարեր Մեք Գրեգորի դերը: Փորձերի ավարտին մոտ Սարգսյանը հետ է կանչվել և Մեք Գրեգորի դերը բաժին է հասել բեմադրող-ռեժիսոր Չննոզյանին:

Բեմադրիչի իր խոսքում Չննոզյանն այսպիսի մեկնաբանություն է տվել Սարոյանի պիեսին՝ «Անոր աշխարհընկալման կարկինը շատ լայն է: Համամարդկայինն ու հայկականը միաձուլված են: Պարզ մարդոց խորունկ փրկիստփայլությունը, աղքատ մարդոց՝ աղքատու-

<sup>1</sup> Զարթոնք (Բեյրութ) 1986, դեկտեմբերի 27:

թյունն իսկ արհամարհելը, պատերազմի դեմ՝ պատերազմ մղելը, վերջապես համամարդկային այս դործը մեզ մեծ քննության առջև կանգնեցուց»:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությունը թարմություն է բերել հալեպահայ թատրոնին: Ներկայացման մեջ կարևոր տեղ են գրավել թատրոնի առաջատար՝ Միքայելյան ընտանիքի անդամների դերակատարումները՝ Ջոնի-Անի Միքայելյան-Թորանյան, Բեն Ալեքսանդր-Հակոբ Միքայելյան, Եսթեր-Նուշիկ Միքայելյան (դուստր): Մյուս դերերում հանդես են եկել՝ Մարի Արոյանը - Ջոնիի տատը, Հովհաննես Սամուելյանը - Կոսակ, Վահե Սամուելյանը - Ռուֆ Էպլի, Հակոբ Մուրատյանը - Պարոն Վիլլի, Հակոբ Փիլավճյանը - Ֆիլիպ Կարմիքայել, Հակոբ Քեչիշյանը - Հենրի, Վահե Ինճեյանը - Պարոն Կինգհամ, Սմբատ Երեցյանը - Երիտասարդ ամուսին, Արաքսի Սուփանյանը - Երիտասարդ կին:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրության համար թույլտվություն ստանալու նպատակով արաբերեն թարգմանությունը կատարել է բժիշկ Մանուել Վարժապետյանը:

Հալեպահայ թատրոնում «Իմ սիրտը լեռներում է» պիեսը մի ուրիշ բեմադրություն էլ է ունեցել: Թեև «Պետրոս Ադամյան» թատերախումբն ավելի վաղ է սկսել այդ ուղղությամբ աշխատել, բայց բեմադրության իրականացման առումով առաջինը Նոր սերունդ Մշակութային միության «Անդրանիկ» թատերախումբն է եղել: Այս բեմադրության առաջին ներկայացումը տրվել է 1983-ի հունիսի 3-ին, Մերքլ Կաթողիկ սրահում և խաղացվել է վեց անգամ:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրության նախաձեռնողը, իրականացնողը, գեղարվեստական ու երաժշտական ձևավորողը, երգի եղանակի հեղինակը, ամեն ինչ պատրաստողը եղել է թատերախմբի ղեկավար, դերասան և ռեժիսոր Կարպիս Լեփեճյանը: Նա միաժամանակ եղել է Մեք Գրեգորի դերակատարը:

Ներկայացման մյուս դերակատարներն են եղել՝ Գևորգ Մարտիկյանը - Ջոնի, Գառնիկ Պեքյարյանը - Բեն Ալեքսանդր, Հասմիկ Գույումճյանը - Մեծ մայր, Հակոբ Ավագյանը - Կոսակ, Ալ. Գաբրիելյանը - Եսթեր, Պողոս Հալլաճյանը - Կարմիքայել, Հրայր Պողիկյանը - Ռուֆ Էպլի, Հակոբ Հաճի Նարինյանը - Վիլլի, Ասատուր Հաճյանը - Հենրի, Արթուր Այնթապյանը - Երիտասարդ ամուսին, Հասմիկ Մեղքոնյանը - Երիտասարդ կին<sup>1</sup>:

<sup>1</sup> Կարպիս Լեփեճյան, Պատմություն Անդրանիկ թատերախումբի 1919-2010, Հալեպ, 2010, էջ 56:

Սարոյանի այս հանրահայտ պիեսը մի որոշ հետք է թողել նաև բեյրութաահայ թատրոնում: Հետաքրքրական է, որ բեմադրությունը տեղի է ունեցել սովորական մի խմբում: Դժբախտաբար, այս բեմադրությունից մեզ միայն մի տվյալ է հայտնի: 1981-ին տեղի ունեցած այդ ներկայացման մեջ Մեք Գրեգորի դերում հանդես է եկել աս-մունքող և դերասան Հարություն Գաբրիելյանը<sup>1</sup>:

Գաբրիելյանը թատերական-բեմական որոշակի փորձ ունեցող դերասան է եղել: Աշխատել է Բեյրութի Համազգայինի «Գասպար Իփեկյան», Մուշեղ Մուղալյանի «Դիմակ» և այլ թատերախմբերում: Նրա հետագա բեմական գործունեությունն անցել է Լոս Անջելեսում: Այս տվյալները համոզում են, որ նրա Մեք Գրեգորը պետք է համարել դերասանի բեյրության շրջանի լավագույն դերակատարումներից մեկը:

Սարոյան ներկայացնելու համար էական չէ թատրոնի տարիքը, թեև դա ավելի է վստահություն ներշնչում: Կարևորը տրված բեմադրության թողած դրական տպավորությունն է: Դրա ապացույցը Նյու Յորքի – Նյու Ճրքդիի Թեքեյան Մշակութային միության նորաստեղծ «Մհեր Մկրտչյան» թատերախմբի բեմադրությունն է: Դա եղել է թատերախմբի երկրորդ բեմադրությունը, որի ներկայացումը տրվել է 1999-ի ապրիլի 17-18-ին, Նյու Ճրքդիում, «Իմ սիրտը լեռներուն մեջ» վերնագրով:

Բեմադրողը-ռեժիսորը եղել է Մհեր Մկրտչյանի այրին՝ Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի նախկին դերասանուհի Թամար Հովհաննիսյանը: Այս նոր բեմադրության մեջ կիրառված նորությունը եղել է այն, որ ներկայացումը երկու լեզվով է ընթացել՝ Ջոնին՝ անգլերեն, իսկ մյուսները՝ հայերեն: Գլխավոր դերերում հանդես են եկել թատրոնի հիմնադիր անդամներ Հարութ Չաթմաճյանը – Բեն Ալեքսանդր, Արեգ Չաթմաճյանը – Ջոնի, Արփի Տատոյանը – Ջոնիի մեծ մայրը, Գառնիկ Ներսեսյանը – Ջասպեր Մեք Գրեգոր, ինչպես նաև Վարդան Իլանճյանը, Սասուն Օրագը – Հենրի և ուրիշներ:

Այս բեմադրության և դերակատարների թողած տպավորության մասին թատերախոս Միսաք Հայկենցը գրել է. «Պզտիկ հրաշքի մը ականատես ըլլալու վայելքը տվին ինձի անխոնջ դերուսույց-բեմադրիչը՝ Թամար Հովհաննիսյան, դերակատարները»<sup>2</sup>:

«Մհեր Մկրտչյան» թատերախմբի ատենապետ, նախկինում Բեյրութի «Վահրամ Փափաղյան» թատերախմբի ակտիվ գործիչ Հակոբ

<sup>1</sup> Դավիթ Էվերեկյան, Միշտ... թատերական կյանքիս ճամբուն վրա, Լոս Անջելես, 1999, էջ 129:

<sup>2</sup> Անկախություն (Նյու Յորք) 1999, մայիսի 13:

Վարդիվառյանը խրախուսել է թատերախումբը համալրող նորեկների աշխատանքը: Այս առումով նա հիացական տողեր է նվիրել Զոնիի փոքրիկ դերակատար Արեգ Չաթմաճյանին. «Արեգ եղավ ո՛չ միայն հայտնություն մը մեզի համար, այլև իր իսկ հաղթանակը՝ իր տաղանդին ընդմեջն: Թամար կրցավ Արեգը վերածել ճոնիի: Երկլեզու բեմադրության մեջ, ուր այս մանչուկը կներկայանա որպես գլխավոր դերակատար, Արեգ կրցավ հարազատորեն ցայտեցնել Սարոյանի նախագծած կերպարը»<sup>1</sup>:

Ահա, նորանոր այսպիսի բեմադրություններով հարստացած թատերախումբը 2007-ին հյուրախաղերով հանդես գալով Երևանում, հասուն դերասանական խաղ ցուցաբերեց ի ուրախություն մեզ՝ բոլորիս:

Թեև բավականին ուշացումով, բայց և այնպես Երևանի Հ. Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնն էլ է անդրադարձել Սարոյանի այս պիեսին: Թատրոնը մինչ այդ ներկայացրել է նրա «Կոտորածն մանկանց» պիեսը: Այս անգամ «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությունը նվիրվել է թատրոնի ավագ սերնդի առաջատար դերասան Լևոն Թուխիկյանի ծննդյան 70-ամյակին:

Մեք Գրեգորի դերակատարը եղել է հոբելյար դերասանը, բեմադրության ռեժիսորը՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիրկյանը, բեմանկարիչը՝ Կարեն Գրիգորյանը, երաժշտական ձևավորողը՝ Ա. Խանդիրկյանն ու Աշոտ Փափազյանը:

Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 2001-ի նոյեմբերի 2-ին, հետևյալ մասնակիցներով՝ Բեն Ալեքսանդր-Վլադիմիր Մսրյան, Զոնի-Պատանի Հանդիսատեսի թատրոնի դերասանուհի Շուշանիկ Ղազարյան, Զոնիի տատը-Հայկուհի Խուզավերդյան և ուրիշներ:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությունը Դրամատիկական թատրոնի կյանքում երկար կյանք չունեցավ: Դերասանների և բեմադրողի ստեղծագործական փայլը չհասավ այն բարձրությանը, որ նրանք ունենում էին շքսպիրյան բեմադրություններում:

2002 թվականին «Իմ սիրտը լեռներում է» պիեսն իր բեմական կյանքը շարունակել է Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան դրամատիկական թատրոնում: Բեմադրել է թատրոնի գեղարվեստական ղեկավար և տնօրեն Արմեն Բայանդուրյանը, արտաքին ձևավորումը կատարել է թատրոնի գլխավոր նկարիչ Թամարա Աղաջանովան, իսկ երաժշտականը՝ Վալերի Ամիրաղյանը:

Թատրոնն այս և ուրիշ պիեսների ներկայացումներով նույն թվա-

<sup>1</sup> Նույն տեղում:

կանի սեպտեմբերի առաջին կեսին հանդես է եկել Վանաձորում և Երևանում: Երևանյան ներկայացումը նվիրված է եղել Բեն Ալեքսանդրի դերակատար (Սունդուկյանի անվան թատրոնում) Բաբկեն Ներսիսյանի հիշատակին<sup>1</sup>:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությունն են անդրադարձել նաև Հայաստանի ժողովրդական թատրոնների մի քանի թատերախումբ: Առաջինը եղել է Եղեգնաձորի ժողթատրոնը (ռեժիսոր՝ Ն. Հովհաննիսյան, 1972), այնուհետև Ապարանի ժողթատրոնը (ռեժիսոր՝ Բ. Աբրահամյան, 1977):

Մանկական թատրոններն էլ հետ չեն մնացել այդ գայթակղությունից: 2002-ի հոկտեմբերի 10-ին, Երևանի Համազգայինի թատրոնում այն ներկայացրել է ինչիկ Դաշտենցի անվան դպրոցի «Բողոք» թատերախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Մ. Մնացականյան), իսկ 2003-ի նոյեմբերի 13-ին «Նուան հատիկ» մանկական թատերական փառատոնում «Կարմիր առագաստներ» (ղեկավար՝ Ի. Բրիչչյան) թատերախումբը: 2011-ի ապրիլին այս պիեսը ներկայացվել է նաև Երևանի Պուշկինի անվան դպրոցում, հայոց լեզվի ուսուցչուհի Հասմիկ Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Վերջին բեմադրությունը կայացել է Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնում 2013-ին (ռեժիսոր՝ Գոռ Մարգարյան):

Հայ թատրոնում Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի հայերեն բեմադրությունները ճանապարհ բացեցին նաև ուսսական թատրոնի համար (թարգմանիչ՝ Յու. Աբրզով):

«Իմ սիրտը լեռներում է» պիեսի ուսերեն առաջին բեմադրությունը կայացել է 1962-ի սեպտեմբերի 2-ին, Մոսկվայի Վ. Մայակովսկու անվան թատրոնում: Պիեսը բեմադրել է Երևանի Ստանիսլավսկու անվան ուսսական դրամատիկական թատրոնի նախկին ղեկրասան, Հայաստանի վաստակավոր արտիստ, Մոսկվայի թատերական միջավայրին դեռ անձանոթ Յան Յիցինովսկին: Իր բեմադրության մեջ Յիցինովսկին օգտագործել է Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի համանուն ներկայացման համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտությունը:

Սարոյանն իր այս պիեսի մասին ասել է. «Ահա մի դրամա, պարզ՝ ինչպես փողոցի խաչմերուկը, բնական՝ ինչպես հողը կամ մայթը ոտքերիդ տակ, ճշմարիտ՝ ինչպես համաշխարհային գրականության յուրաքանչյուր հեքիաթը»:

<sup>1</sup> Թատերական Երևան (Երևան) 2002, № 7, էջ 9:

Մոսկովյան բեմադրության գեղարվեստական ձևավորումը (նկարիչ՝ Ե. Մանկենե) շատ պատկերավոր է եղել՝ հավատարիմ պլեխսի հեղինակի նկարագրությանը: Մոսկովայի «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի թատերախոս Վ. Կուզրինի նկարագրությամբ հետևյալ տեսքն է ունեցել. «Արևը դանդաղ իջնում է ծիրանագույն սկավառակով և նրա կլոր կերպարանքը լի է հանդիսավորությամբ ու նշանակությամբ: Արևն իջնում է ուղիղ տղայի վրա, որը համբերությամբ կանգնել ու սպասում է գլուխը վեր բարձրացնելով... Հենց որ լուսատու մարմինը դանդաղորեն երևաց նրա գլխավերևում, նա բռնեց արևի ծայրից, այն ծայրից, որին կարող էր հասնել ու կանգնեցնել»<sup>1</sup>: Հենց այս տպավորիչ տեսարանի ներգործությամբ էլ շարունակվել է ամբողջ ներկայացումը:

Բեմադրության կենտրոնական դերակատարներն են եղել՝ Մ. Օուլովը - Մեք Գրեգոր, Ա. Լուկյանովը - Բեն Ալեքսանդր, 5-րդ դասարանի աշակերտ Անդրեյ Տերյոխինը - Ջոնի, Պ. Արժանովը - Կոսակ, Ջ. Լիբերչուկը - Ջոնիի տատը:

«Իմ սիրտը լեռներում է» պլեխսի ոուսերեն մի բեմադրությունն էլ տեղի է ունեցել Հեռավոր Արևելքում, Ռուսաստանի Վլադիվոստոկ-Պրիմորսկի Լենինյան կոմերիտմիության թատրոնում: Այս բեմադրության առանձնահատկությունը կայացել է նրանում, որ նրա մասնակից-դերակատարները եղել են տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: Միացյալ ուժերով պատրաստված այս ներկայացման հեղինակներն են եղել թատրոնի գլխավոր ռեժիսոր Լ. Անիսիմովը և ճապոնացի Ռ. Սիմիձգուն:

Մամուլի թողած տվյալներից պարզվում է, որ ներկայացման շեշտը դրվել է Մեք Գրեգորի ազատասիրական ձգտումների բացահայտման վրա: Բեմադրության մեջ «ամերիկյան մթնոլորտ» ստեղծելու գործին «նպաստել են» ամերիկացի պրոֆեսոր Բ. Չիսիդայի խորհուրդները՝ գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով Մեք Գրեգորի տիտղոս պատմության վրա:

Ակամայից հարց է ծագում, գուցե Տատիկի կերպարն էլ՝ որպես իրենց համար անծանոթ, անըմբռնելի անձնավորություն, խորությամբ չի բացահայտվել բեմադրության մեջ: Ինչո՞ւ են բացատրել անտուն, անտեր, գաղթական բանաստեղծի, նրա մոր ու տղայի երևույթը Ամերիկայում: Մի՞թե նրանք աստծո արարածներն էին, մարդկային նույն՝ եթե ոչ ավելի տառապանքները չեն կրել, քան

<sup>1</sup> Комсомольская правда (Մոսկվա) 1962, դեկտեմբերի 16:

Մեք Գրեգորը: Թե՛ ամերիկյան, թե՛ ճապոնական և թե՛ ռուսական թատերական գործիչները բավարարվել են «համամարդկային» հարցերի ընդհանրացումներով ու հավասարեցումներով:

Այս բեմադրությունը ներկայացվել է նաև Մոսկվայում, «Ռուսական ձմեռ» արվեստի փառատոնում, 1990-ի դեկտեմբերին, Մոսկվայի Պատանի հանդիսատեսի թատրոնում<sup>1</sup>:

Միջանկյալ նշենք, որ սիյուռեքահայ հեղինակներից ռուսերեն բեմադրվել է նաև մի տեսարան Լևոն Զավեն Սյուրմելյանի «Ձեզ եմ դիմումը տիկնայք և պարոնայք» վեպից: Վեպը թարգմանել է Ջուլիետտա Ջուֆալայկյանը<sup>2</sup>: Բեմականացրել է Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի գերասան, վաստակավոր արտիստ Ռոբերտ Հակոբյանը, ինքն էլ բեմադրել ու կատարել, որպես մեկ գործողությամբ մոնոդրամա: Ներկայացվել է 2011-ին, Ռուսական թատրոնում և նվիրված է եղել Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին: Բեմադրողին օժանդակել են նկարիչ Արթուր Հարությունյանը, ուեթիստը և երաժշտության ձևավորող Արտեմ Միրիջանյանը: «Ձեզ եմ ասում...» մենաներկայացումը մինչև այժմ էլ հանդիսատես տիկնանց ու պարոններին հիշեցնում է մեր անմեղ գոհերի մասին:

Ամերիկա գաղթած բիթլիսցի հայրենակիցների մասին Սարոյանի գրած «Խաղողի այգին» պիեսը դեռևս 1968-ին թարգմանվել էր Խաչիկ Դաշտենցի կողմից: Այն պետք է բեմադրեր Վարդան Աճեմյանը Լենինականի (Գյումրի) թատրոնում, բայց չի իրականացվել:

«Խաղողի այգին» պիեսը գրեթե ամբողջովին նվիրված է Արևմտյան Հայաստանից Ամերիկա գաղթած հայ մեծ գերդաստանի երեք սերնդի ներկայացուցիչների կյանքի ու աշխատանքի, ապրելակերպի ու վիճակի պատմությանը: Գործողության վայրը Ֆրեզնոյի մոտ խաղողի այգին է: Ընտանիքի ավագը շարունակում է իրենց ավանդական զբաղմունքը՝ խաղողագործությունը, որով շատ թեքիչ ապահովում են իրենց կյանքը: Թեման միանգամայն ծանոթ ու հարազատ է Սարոյանին, թերևս իր հերոսների նախատիպերին հանդիպած լինի Ֆրեզնոյում:

Ի՞նչն է հետաքրքրել գրող Սարոյանին, որպեսզի իր հայրենակիցները պահպանեն իրենց լեզուն, ավանդությունները, — հուզող հարցեր, որոնք աստիճանաբար վերափոխվում են նոր սերնդի անտարբերության և ձուլման պատճառով: Բուն ավանդապահները

<sup>1</sup> Комсомольская правда (Մոսկվա) 1990, դեկտեմբերի 25:

<sup>2</sup> Левон З. Сюрмелян. К вам обращаюсь, Дамы и Господа, Երևան, 1987:

ավագ սերնդի մարդիկ են, որոնք կապված են Հողի Հետ, խաղողի այգի են մշակում, աշխատանքի մեջ են: Նրանք են, որ պահում են լեզուն ու ազգային սովորությունները: Բլթլիսում ծնված և ծնողների հետ Ամերիկա դաղթած զավակները հարմարվելով ամերիկյան կյանքին, մի տեսակ սառնացել են ծննդավայրի նկատմամբ: Իսկ նորերը՝ Ամերիկայում ծնվածները անտարբեր են դարձել նույնիսկ իրենց մեծերի ցավի ու կսկիծի հանդեպ: Ահա թե ինչ ասել է գաղթի ահավոր հետևանքը:

Ընտանիքի ավագին՝ Մակար Թորգոմյանին հասկանում է նրա մեծ տղան՝ Գրիգորը, բայց և այնպես վերադարձի ճանապարհ չտեսնելով, նա էլ, ստիպված հաշտվում է ստեղծված պայմաններին: Սարոյանը Մակար Թորգոմյանին իր վիճակում մենակ չթողնելու համար նրա կողքին ավելացրել է նորվեգացի Գունար Մորգենստեի կերպարը, որը նույնպես ճակատագրի բերումով ապրում է հայրենիքից հեռու՝ օտարություն մեջ: Մակարը նրան հայերեն խոսել և նարզի խաղալ է սովորեցնում, որպեսզի նա էլ այդ միջոցով փարատի կարոտը:

Ահա, Սարոյանի մարգասիրական վեհ դադափարասիրության հատկանիշը, որ հարազատ է նրա դրամատուրգիային:

«Խաղողի այգին» առաջին անգամ բեմադրվել է Սունդուկյանի անվան թատրոնում, 1971-ի մայիսի 21-ին: Բեմադրող-ռեժիսորը՝ Հենրիկ Մալյան, նկարչական ձևավորողը՝ Վարդան Աճեմյան, երաժշտության ձևավորողը՝ Ռոբերտ Ամիրխանյան:

Բուն բլթլիսցի Մակար Թորգոմյանի դերակատարը մշեցի Ժան Հլոյանն էր՝ իր մարմնավորած հերոսի և այդ կարգի կերպարների եզակի, անփոխարինելի կատարողը: Արևմտահայության կարոտը ներկայացնող դերասանն իր պաթետիկ խոսելակերպով շատ հուզումնալից էր բոլորի համար: Երևի այդ ի նկատի ունենալով է, որ Հլոյանի մարմնավորած կերպարի լեզուն հարմարեցվել է մշո բարբառին՝ էրգրի համն ու հոտը զգալու համար:

Մյուս դերերում հանդես են եկել՝ Գրիգոր Թորգոմյան - Սոս Սարգսյան, Թոռը՝ Շաքե - Շաքե Թուխմանյան, Մուրադ - Ստեփան Գևորգյան (Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ուսանող), Տիգրան Ապրեսյան - Լորենց Առուշանյան, Մխիթար Մելքոնյան - Հովհաննես Ավագյան, Օվսաննա Մելքոնյան - Իրինա Հովհաննիսյան, Սոֆիկ - Գոհար Գալստյան, Մեմե (սեամորթ սպասուհի) - Նելլի Սարգսյան, նորվեգացի Գունար Մորգենստե - Վաղինակ Մարգունի:

Բեմադրության երկրորդ կազմի դերակատարներից հանդես են եկել՝ Հունիսի 5-ին՝ Գունար Մորգենստե - Ավետիք Զրաղացյանյան,

Մխիթար Մելքոնյան – Հարություն Հայրապետյան, հուլիսի 8-ին՝ Սոֆիկ – Սիլվա Բաղդիկյան, նոյեմբերի 18-ին՝ (Գյումրիում)՝ Մխիթար Մելքոնյան – Աշոտ Ներսիսյան, դեկտեմբերի 4-ին՝ Մուրադ – Աշոտ Ղազարյան, 1972-ի փետրվարի 2-ին՝ Տիգրան Ապրեսյան – Արծրուն Մանուկյան, փետրվարի 20-ին՝ Օվսաննա Մելքոնյան – Լենա Ալվարյան, հունիսի 16-ին՝ Անուշ Հովսեփյան (Թատրոնի ստուգիայից), մարտի 17-ին՝ Մեմե – Ջուլիետ Բաբայան:

Սարոյանի այս պիեսի բեմադրության մեջ տեղ գտած առավելությունների ու թերությունների մասին թատերագետ Լևոն Հախվերդյանն իր՝ «Խաղողի այգին» ներկայացման լույսն ու սովերը» բովանդակալից թատերախոսականն ավարտել է հետևյալ լավատեսական գնահատականով. «Խաղողի այգին» իր սովերոտ և լուսավոր կողմերով վկայում է խմորման այն բարդ ընթացքը, որ մեր թատերական արվեստում տեղի է ունենում բեմական արտահայտչության հնորյա և այսօրյա ոճերի միջև: Անխուսափելիորեն մի ընթացք, որ հաստատում է նորի գեղագիտական իրավունքները»<sup>1</sup>:

Այսպիսով՝ 1971-ի մայիսի 21-ից մինչև 1972-ի սեպտեմբերի 24-ը «Խաղողի այգին» ունեցել է 50 ներկայացում:

«Խաղողի այգին» պիեսը Խաչիկ Դաշտենցի թարգմանությամբ իր բեմական կյանքը շարունակել է նաև սիյուռքահայ թատրոնում: Նոր Ջուղայի (Իրան) «Շանթ» թատերախմբում այն բեմադրել է դերասան և ռեժիսոր Սարո Նազարյանը: Ներկայացումները տեղի են ունեցել 1983-ի մայիսի 4-6-ին:

«Խաղողի այգին» տեղ է գտել նաև Փարիզի «Հայ թատրոնի ընկերակցության» թատերախմբի խաղացանկում, թատերական ընթերցումների 19-րդ շարքում: Թատերախմբի ղեկավար, ռեժիսոր Արբի Հովհաննիսյանի բեմադրությամբ այն ընթերցումով ներկայացվել է 2004-ի դեկտեմբերի 13-ին, «Հայ ուսանողական ուստանի սրահում»: Ընթերցումը կատարել է թատերախմբի դերասանուհի Աստղիկ Շինկիթյանը:

Փարիզյան բեմադրության մեջ «Խաղողի այգու» ընթերցումով դերակատարներն են եղել՝ Պապիկ (Բաղեչի բարբառով) – Արսեն Այնթապյան, Մուրադ – Սևան Մինասյան, Գուենար Մորգենստե – Նազարեթ Գուլումճյան, Տիգրան Ապրեսյան – Վահան Բերովբեյան, Սոֆիկ – Անահիտ Փիլիպոսյան: Ներկայացմանը մասնակցել են նաև Ժիրայր Չուլաքյանը, Վահրամ Աժգերյանը, Վետա Պայվետյանը, Մարալ Բերովբեյանը:

<sup>1</sup> Գրական թերթ (Երևան) 1971, № 48:

Վիլյամ Սարոյանի «Հայերը» երկու գործողությամբ դրաման նուշնպես պատկանում է Հայոց ցեղասպանության տխուր հետևանքների արտացոլմանը նվիրված այն պիեսների թվին, ինչպիսիք են «Իմ սիրտը լեռներում է», «Խաղողի այգին» և ուրիշները: Ի տարբերություն այս վերջին երկու գործերի, «Հայերի» գործող անձինք բացառապես Հայեր են, որոնք Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գաղթել են Ամերիկա և բնակություն հաստատել Ֆրեզնոյում: Ինչպես տեսնում ենք, երևույթը և միջավայրը շատ ծանոթ ու հարազատ է Սարոյանին:

Նախքան պիեսի բեմադրությունը, առաջին անգամ բեմ հանելու համար, 1974-ի հոկտեմբերին Սարոյանն այսպիսի բացատրություններ է տվել իր բարձրացրած հարցերի մասին, որպեսզի առավել ճշգրիտ պատկերացում կազմվի հեղինակի մտորումների շուրջը: «Հայերը» կոչվող պիեսը, — գրել է նա, — ժողովրդի մասին է», այն ժողովրդի, որի հետ ինքը դեռևս 13-ամյա պատանի, որպես շրջիկ փոստատար, «փողոցում շրջող և վերնագրեր բղավող, տարբեր վայրեր այցելող լրագրավաճառ», աշխատանքի բերումով, փողոցում և տներում շփվելով մարդկանց հետ, իր հետևություններն է արել:

Սարոյանին հուզող հարցերից մեկը եղել է կյանքի պայքարում մարդու գոյություն պաշտպանության և, լայն առումով, մարդկային ցեղի շարունակության հարցը, որ պատերազմների պատճառով ավելի է սրվում: Այդ առնչությամբ նա գրել է. «Մենք կկամենայինք, որ ամեն ոք շարունակեր պայքարը, իհարկե, նաև Թուրքիայի դեմ, որպեսզի վերջինիս աչքերը բացվեն առանձնաշնորհություն և անօգնականություն հանդեպ, որը մարդկային հատկանիշ է»:

Այս վերջին տասնամյակներում, երբ աշխարհի մի շարք երկրներում պաշտոնապես ընդունվել է Հայոց ցեղասպանության փաստը Օսմանյան Թուրքիայի կողմից, ժամանակակից Թուրքերը ոչ միայն չեն ուղում լսել ցեղասպանություն բառը, այլև Եվրոպա և Ամերիկա ընկած, ջանք ու միջոց չեն խնայում հերքելու իրենց նախնիների կատարած հանցագործություններն ու վայրագությունները:

«Հայերը» պիեսի գործողությունները կատարվում են 1921-ի գարնան մի առավոտ, Կարմիր Աղյուս եկեղեցու դրասենյակում՝ Ֆրեզնոյի Վենտուրա և Մ. Փողոցների անկյունում, Սուրբ Երրորդության հայկական Առաքելական եկեղեցու դիմաց՝ Հայկական հայրենասիրական ակումբում:

«Հայերը» դրամայի գործող անձինք են՝

Տեր Հայր Գասպարյան — Հայ Առաքելական Կարմիր Աղյուս եկեղեցու քահանա:

Պատվարժան Մկրտիչ Քնաջյան – 48 տարեկան, հայ առաջին կաթոլիկ եկեղեցու քահանա, կաթոլիկ եկեղեցի:

Պատվարժան Փափազյան – 44 տարեկան, կրոնական եղբայրության ուխտավորութեան եկեղեցու քահանա:

Ալմաստ – 80-ամյա մշեցի կին, տեր հայր Գասպարյանի սպասուհին:

Մարդար – Կարմիր Աղյուս եկեղեցու ժամկոչ:

Բժիշկ Արշակ Զիվեբեյան – 58 տարեկան, բուստոնցի, Հարվարդի շրջանավարտ:

Ագարակատեր – 74 տարեկան:

Բիթլիսցի:

Մշեցի՝ Բաղդասար Տեր-Գաբրիելյան անունով:

Վանեցի:

Հարպուտցի՝ Կիրակոս Արփիար Տեր-Հովասարյան – արևելյան գորգերի վաճառական:

Վազգեն – Հարպուտցի մի մարդ:

Էրզրումցի մի մարդ:

Տիգրանակերտցի:

Կիլիկեցի:

Ընդհանուր առմամբ սա խրատական գրույց է Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից դադլթած, դանազան դբադմունքի մարդկանց միջև, որտեղ յուրաքանչյուրը յուրովի է բացատրում հայի և Հայաստանի վիճակը:

«Հայերը» պիեսը բնագրով բեմադրվել է 1975-ի փետրվարին, Նյու Յորքի Գավուկչյան սրահում: Բեմադրող ռեժիսորը եղել է «Դերասանական ստուդիայի» տնօրեն Էդվարդ Սևերակյանը: Ներկայացման մեջ զբաղված են եղել ամերիկյան կինոյի և հեռուստատեսութեան օտարագրի գերասաններ<sup>1</sup>:

Սարոյանի «Հայերը», «Բիթլիս» և «Հառաջ» պիեսները «Հայկական եռագրութեան» վերնագրով տպագրվել է 1986-ին, Ֆրեդնոյում Տիգրան Գուլումճյանի կողմից:

«Հայերը» հայերեն թարգմանել է Մերի Մաքսապետյանը (Երևան):

Օտար լեզուներով գրող հայագրի հեղինակներից մեկը, որը նույնպես անդրադարձել է Հայոց ցեղասպանութեան թեմային, եղել է Աշոտ Ռահանյանը՝ գրական անունով Alen Ruzo (Ալեն Ռուսո): Ամերիկահայ այս գրողը 1947-ին Դերբիթում լույս է ընծայել «Under the Ottoman Yoke» (Օսմանյան լուծի տակ) վերնագրով պիեսը:

<sup>1</sup> Նոր կյանք (Բուխարեստ) 1975, մարտի 7:

Ռահանյանի աշխատանքի մասին գրվել է. «Ահա ամենն աթմ-  
յան գիրքը, որով Հեղինակը կպատկերացնե հայ ժողովրդի դարավոր  
բուռն տենչն ու տառապանքը, ինչպես նաև նահատակութունը,  
հանուն ազատության: ԱՄԵՆ ՀԱՅ, որուն համար ՀԱՅ ԴԱՏԸ ունի  
նշանակություն ունի, ո՛չ թե միայն պետք է այս գիրքեն հաս մը  
ունենա իր տան մեջ, այլև պետք է զայն տարածե Ամերիկյան խա-  
վերուն մեջ, եթե կուզե նվիրական և չարաբաստիկ ՀԱՅ ԴԱՏԻՆ ծա-  
ռայել: Եվ արդեն գիրքը ճիշտ այդ նպատակին համար է, որ այս  
բախտորոշ օրերուն կհրատարակվի»<sup>1</sup>:

Այդ օրերի բախտորոշ հարցը եղև է Երկրորդ համաշխարհային  
պատերազմի ավարտից հետո, արևմտահայություն պատկան հողերը  
հայերին վերադարձնելու համար սփյուռքահայություն նախաձեռ-  
նությունը շարժումը միջազգային կյանքում: Բայց, ինչ արած, որ  
հայի բախտը ոչ ոքի չհետաքրքրեց:

Ռահանյանի պիեսի բեմադրված լինել-չլինելու մասին տվյալ  
չունենալով, ոչինչ չենք կարող ասել նրա բեմական կյանքի պատ-  
մությունից: Երևույթը մեծապես դրական է և համահունչ ժամանա-  
կի քաղաքական կյանքին:

Որքան տարբեր են եղել ցեղասպանության միջոցների աստիճան-  
ները, այնքան էլ անպարփակ են դրանց արտացոլման եղանակներն  
ու մոտեցումները: Դրա համար էլ ցեղասպանության թեման անցած  
120-տարիների ընթացքում սպառում չունի և մինչև հարցը լուծում  
չստանա, պիեսի շարունակվի:

Վերապրողների և նրանց սերունդների կյանքը տարբեր պայման-  
ներում ու հանգամանքներում ներկայացնելու մի ուրույն ձև է  
գտել Փրանսահայ՝ Փրանսալեզու դերասանուհի և դրամատուրգ  
Ռենն Պարթևը (Թագուհի Պարթևյան): Նա Տրապիզոնից գաղթածների  
զավակ է: Ծնվել է Փրանսիայում, ուսում ստացել և սկսել է ճանա-  
չել աշխարհն ու շրջապատը: Նրան խորթ է թվացել այն միջավայրը,  
ուր ապրել ու աշխատել է: Այդ առումով է, որ իր պիեսներից երկու-  
սը՝ «Արմենուչն» ու «Բաղդասարի տաղավարը» նա նվիրել է հայրե-  
նազրկվածներին և դրանից բխող իրավազրկության պատճառներին,  
որոնց հիմքում ընկած է ցեղասպանության սև արատը:

Իբրև Փրանսիական թատրոնի դերասանուհի, պարզ է, որ նա իր  
գործերը պետք է նախ և առաջ Փրանսերեն ներկայացներ:

Պարթևի պիեսներից «Արմենուչն» առաջին անգամ բեմադրվել է

<sup>1</sup> Պայքար (Բուսոն) 1947, № 1571:

1976-ի հունվարի 5-ին և շարունակվել հաջորդ տարիներին: Ներկայացումը տեղի է ունեցել Վանսեն քաղաքի «Դանիել Սորանո» թատրոնում, «Հրապարակային թատրոնի» դերասանական կազմով: Բեմադրող-ռեժիսորը եղել է Փարիզի համբավավոր «Կոմեդի Ֆրանսեզի» թատրոնի դերասան Ժան-Լուի Թուլթեն: Մարի – Արմենուշի առաջին դերակատարը եղել է պիեսի հեղինակը՝ Ռեն Պարթևը: Տարեվերջին նույն ռեժիսորի կողմից «Արմենուշը» բեմադրվել է «Բուսի Շու» թատրոնում, դարձյալ Ռ. Պարթևի մասնակցությամբ:

1985-1986 թթ. «Արմենուշը» անգլերեն թարգմանությամբ խաղացվել է Նյու Յորքի տարբեր թատրոններում:

Հայ թատրոնում «Արմենուշն» առաջին անգամ բեմադրվել է 1982-ին, Կանադայում: Նախաձեռնությունը պատկանել է Տորոնտոյի Համազգայինի «Պետրոս Աղամյան» թատերախմբերին: Ս. Չեքիճյանի բեմադրությամբ խաղացվել է 1982-ի նոյեմբերի 26-27-ին: Թատերախումբն «Արմենուշի» բեմադրությունը ներկայացրել է «Բազմամշակութային թատերական փառատոնին»<sup>1</sup>:

Թեմայի հոգեհարազատությունը նպաստել է «Արմենուշի» նկատմամբ ստեղծված հետաքրքրությունը նաև իրանահայ թատրոնում: Նախաձեռնողը, թարգմանողն ու բեմադրողը եղել է դերասանուհի և ռեժիսոր Էլո (Անելկա) Նազլումյանը, որն իր բեմական արվեստի զարգացմանն անհրաժեշտ կրթությունն ստացել է Փարիզում:

«Արմենուշի» առաջին ներկայացումը կայացել է 1990-ի նոյեմբերի 21-ին Թեհրանի Հ. Մ. «Արարատ» կազմակերպության «Արամայիս Աղամյան» թատերախմբի ուժերով:

Գործողությունները կատարվում են երկաթուղային կայարանում: Գործող անձինք չորսն են՝ սեամորթ կայարանապետը, գնացքի սպասող ուղևոր Մարի-Արմենուշը և երկու ֆրանսիացի: Ժամանակի հետ լսվում են գնացքի սուլոցներ, երաժշտական (հայկական) կտորներ:

Սպասողական վիճակն ինչ-որ բանով լրացնելու համար Մարիի զրույց-խոսակցությունը չի ստացվում եսասեր, ամբարտապան ֆրանսիացու հետ: Այդ տեսարանը հեռավորապես հիշեցնում է Հայոց Արշակ թագավորի վիճակը (գերությունը) պարսից շահի մոտ: Այսինքն՝ ֆրանսիացին գտնվելով իր հայրենի հողի վրա, վերևից է նայում Մարիին, մինչդեռ վերջինս գուրկ լինելով այդ հենարանից,

<sup>1</sup> Արմենիա (Բուենոս Այրես) 1982, № 552:

իրեն լավ չի գգում, ավելին՝ նրա բողոքը լսող չկա: Ո՛չ ամբարտա-  
վան Առաջին մարդը, ո՛չ էլ համեմատաբար հաղորդակցվող թվացող  
Երկրորդ մարդը չեն հասկանում Մարիի հոգեկան ներաշխարհը:  
Օտար մարդկանց անտարբերությունը, չարությունը, խոցում է Մա-  
րի-Արմենուշի ինքնասիրությունը:

Բեմադրող-ռեժիսորի իր խոսքում (ծրագրում) է. Նազլուձյանը  
նշել է, որ հեղինակի ներշնչման աղբյուրը եղել է «գաղթը»: Ծնված  
լինելով Ֆրանսիայում, նա գաղթը չի տեսել, բայց ապրել ու մեծա-  
ցել է «Չարգերից փրկված արմատախիլ ընտանիքի ծոցում»:

Հենց այս գաղափարն էլ էլո Նազլուձյանը դարգացրել է իր բե-  
մադրություն մեջ:

Իր միտքն ավելի է հիմնավորելու նպատակով Նազլուձյանը հե-  
ղինակի առաջաբանից բերել է տողեր, որոնցում արտահայտված  
մտքերը լիովին բացահայտում են պիեսի էությունը: «Այս գրված-  
քը, – գրված է այդտեղ, – մի ճիչ է ցավի, ընդվզումի կամ թերևս դի-  
տակցություն, չնայած որ ինքնակենսագրությունն է, բայց ես, ինչ-  
պես «Արմենուշը», մի «հայրենագուրկ», «գաղթականի» աղջիկ եմ...  
Մանուկ հասակում, բնականաբար, հավատացած էի, որ Ֆրանսիան  
իմ հայրենիքն է, հետո... մտքումս սկսեց առկայծել անցյալի տեսիլք և  
հուշերի փշրանքներ... և կարոտ դգացի վերգտնելու մի «հող» իր ամ-  
բողջ տաքությունը, լույսով ու շունչով... «Արմենուշը» հետաքրքիր  
է, տխուր, պարզունակ նկարագրով, նա մի սոսկալի կատաղությունը  
է լցված: Նրա գգայնությունը և խոր սերը դեպի մարդկությունը  
նրան գերծ են պահում մահից»:

«Արմենուշի» դերակատարներն են եղել՝ Մելինե Տեր-Սարգսյանը  
(Մարի – Արմենուշ), Վարդան Ալեքսանյանը (Առաջին մարդ), Եր-  
վանդ Սաֆարյանը (Երկրորդ Մարդ), Նժդեհ Հովհաննիսյանը (կա-  
յարանապետ): Ներկայացման մեջ օգտագործվող երաժշտության  
խորհրդատուն է եղել երաժշտագետ Լիդա Բերբերյանը:

«Արմենուշի» բեմադրությունը և դերակատարների աշխատանքը  
բարձր է գնահատել դերասանուհի և ռեժիսոր, ինչպես նաև թատե-  
րախոս Կիտուշ Արզուլյանը: Իր թատերախոսականում նա գրել է.  
«Մելինե Տեր-Սարգսյանը, որին տեսել ենք «Քեռի Վանիա»-ում,  
«Ճամբուն վրա»-ում, տարբեր տիպարներով, այս անգամ էլ ստեղ-  
ծեց Արմենուշի կերպարը իր խաղարկությունը գրասեղանով հոգեկան  
պոթիկումներ, երբեմն կատաղի, երբեմն մեղմ ու շոյող, որը կարող է  
ունենալ երկրորդ սերնդից մի հայ աղջիկ, որ ծնվել է օտարության

մեջ, սակայն, բարեբախտաբար, արմատները դեռ կառչած են հողին... Սիրելի էլոյին պիտի շնորհավորել նախ Ռեն Պարթևի «Արմենուշի» թարգմանութեան և ապա նույն թարգմանութեան բեմադրական աշխատանքի համար, հաջողութիւն մաղթելով իրեն»<sup>1</sup>:

Գործողութեան մի այլ բնագավառ է պատկերված Ռ. Պարթևի «Բաղդասարի տաղավարը» պիեսում: Խարխուլ մի ծերանոցում իր ծերութեան հիվանդութիւնն է մաշում եղևունից փրկված, բայց ամբողջովին անցյալով ապրող միայնակ ծերունի Բաղդասարը (պիեսում՝ հասկանալիորեն Բալթագար):

Հարազատ հողից արմատախիլ արված այս մարդը հիշողութիւններով ապրելով հանդերձ, այնքան ուժ է գտնում իր մեջ, որ կարողանում է ներգործել շրջապատի մարդկանց վրա: Նրա հոգեկան ընդգլուսմանը կարծես հասկանալի են դառնում բժիշկ Զարգային և բուժքույր Սեսիլին :

«Բաղդասարի տաղավարն» առաջին անգամ ներկայացվել է 1978-ին Օդեսոյի (Փոքր Օդեսոն) հայտնի թատրոնում, ռեժիսոր Գաբրիել Գարրանի բեմադրութեամբ: Բուժքույր Սեսիլի դերում դարձյալ հանդես է եկել պիեսի հեղինակը՝ Ռեն Պարթևը:

Հայերեն դրող հեղինակներին զուգահեռ, իբրև հարազատ ժողովրդի ցավերի ու հոգսերի արտահայտիչ, ցեղասպանութեան փորձերի դատապարտմանն անդրադարձած հեղինակներից մեկն էլ եղել է Ֆրանսագիր դրամատուրգ և թատերական գործիչ Ժան Ժակ Վարուժանը:

Վարուժանը ծնվել ու մեծացել է չմշկածագցի դերասան Հովսեփ Ուզունյանի ընտանիքում, 1927-ին, Մարսելում, բնականաբար՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների օջախում: Իր մի շարք պիեսներում, նա մասնակի ակնարկի ձևով կամ ամբողջութեամբ ընդգծել է ցեղասպանութեան թեման: Այդ առնչութեամբ Վարուժանը գրել է «1915» բավականաչափ արտահայտիչ և «Շնորհակալութիւն Զեյ, Սըր» վերնագրերով պիեսները:

Առաջինի համար նյութ է ծառայել Թալեաթ փաշայի սպանութեան կապակցութեամբ Սողոմոն Թեհլիրյանի դատապարտութիւնից ստացած տպավորութիւնը: «1915» պիեսը բեմադրվել է 1977-ին Ֆոնտեն թատրոնում:

Առավել ճանաչում է ստացել Վարուժանի «Սի Սե Ռոն» պիեսը, որակը պատկերել է հայութեան դեմ կատարված ոճիրի նկատմամբ

<sup>1</sup> Կիտուշ Արզույան, Հայելիներ, Երևան, 2010, էջ 101: (Ալիք [Թեհրան] 1990, գեկտեմբերի 1):

միջազգային Հասարակայնություն անտարբերությունը, դրանով իսկ իր բողոքի ձայնը բարձրացրել: Հայկական շրջանակներում ելույթների ժամանակ, Վարուժանի երեկոներին «Սի Սե Ռոն»-ից կատարվել են տեսարաններ ֆրանսիացի դերակատարներով:

Հայոց ցեղասպանություն տխուր թեմայով պիեսի հեղինակ է նաև վաղամեռիկ դերասան և դրամատուրգ Ռոբերտ Էդուարդ Թեմպեքը (1940-1976), որի 16 պիեսներից մեկը կրել է «Հայ դատ, Հայկական հարց» վերնագիրը: Իբրև պիեսի հեղինակ, նա գործածել է Էդուարդ Քեճյան ծածկանունը: «Հայ դատ, Հայկական հարց» պիեսը բեմադրվել է 1976-ին, անգլերեն:

Ամերիկյան թատրոնի մի այլ գործչի՝ դերասան և դրամատուրգ Էդուարդ Սեդրակյանի «Դեղին պայմանագիր» պիեսը նույնպես ցեղասպանության թեմայի արձագանք է:

«Դեղին պայմանագիրը» ինքնակենսագրության երանգ ունի: Եղեռնից փրկված Վահան Պաղտասարյանը 1915-ին կորցնելով կնոջը, հարազատներին, որոնք զոհ են գնացել թուրքերի ոճրագործություններին, 1920-ին իր համր աղայի հետ հանգրվան է գտել Ամերիկյան Վիրջինիա նահանգի հանքագործների մի քաղաքում, որտեղ պայքար է գնում հանքատերերի և հանքագործների միջև:

Պաղտասարյանն իր կաշվի վրա զգալով կռիվների ազետաբեր վտանգը, դեմ է այդ պայքարին, որտեղ հանքատերերը պարտադրում են հանքափորներին ստորագրել այն պայմանագրի տակ, որով արգելվում է նրանց միանալ արհեստակցական միությունը: Պաղտասարյանի համակրանքը ճնշված ժողովրդի կողմն է:

Սեդրակյանի «Դեղին պայմանագիր» պիեսը բեմադրվել է Նյու Յորքի Օֆֆ Բրոդվեյ թատրոնում, Արարատ թատերախմբի կողմից, որի կազմակերպիչն է եղել ՀԲԸ Միություն նախագահ, Հասարակական գործիչ Լուիզ Սիմոն Մանուկյանը: Պիեսի բեմադրությունն իրագործել է ռեժիսոր Ժոզեֆ Ռենկոն, 1988-ի մայիսի 4-ին: Պաղտասարյանի դերում հանդես է եկել կիսով չափ հայազգի դերասան Մարթին Շաքարը: Հետաքրքրականն այն է, որ Պաղտասարյանը եղեռնի մասին իր հիշողությունները պատմելիս, երբեմն ամերիկյան առողջանություն օգտագործել է հայերեն բառեր:

«Դեղին պայմանագիրն» ունեցել է 14 գործող անձ: Մամուլի վկայություններ բեմադրությունը բարձր է գնահատվել հանդիսատեսների կողմից: «Նոր կյանքի» թատերախոս Ե. Ա.-ն այս նեկայացման մասին գրել է. «Ամբողջ երեք քառորդ դար ցեղասպանության ահավոր վիշտը աղաղակեցինք, առավելաբար մեր լեզվով ու մեր ձևերով, և մեր աղաղակը քիչ արձագանք գտավ հայկական շրջանակներին

դուրս, մանավանդ գեղարվեստի մարզեն ներս: Ժամանակն Հասած էր (եթե ոչ՝ արդեն ուշացած), որ մեր ժողովուրդին ճակատագրված արհավիրքը ներկայացվեր ամերիկացի ժողովուրդին իր լեզվով ու իր հասկցած գեղարվեստական միջոցով»<sup>1</sup>:

Այս բեմադրութունից անցել է ավելի քան երեք տասնամյակ, բայց ամերիկյան կողմի անտարբերության մասին թատերախոսի քննադատութունը մնացել է նույն կետի վրա: Մեկ-երկու արձագանքները դեռ որակ չեն կազմում, որ Ամերիկայի հզոր տերությունն ընդունի Հայոց ցեղասպանության իրողությունը: Ընդհակառակը, ճնշված ժողովուրդներին «պաշտպան» հանդիսացող երկիրը դարձել է միջազգային քայքայիչ ուժ և ամենուրեք ավեր ու կոտորած է հրահրում:

Ամերիկյան թատերական գործիչների և ցեղասպանության թեմայով անգլերեն պիեսների գրողների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Ջոն Ջեյ կոլեջի դասախոս, դրամատուրգ, թարգմանիչ և ռեժիսոր Նշան Փարլաքյանը: Հայկական դրամատուրգիան անգլերենով Ամերիկայում մասսայականացնելու նպատակով, նա թարգմանել է Շիրվանյազեի «Պատվի համար», Սուևդուլեյանի «Պեպո» և այլ պիեսներ և բեմադրել Դասական թատրոնում:

Այս ամենին համընթաց, Փարլաքյանը գրել ու բեմադրել է նաև «Մեծ մայրիկ ազոթե ինձի համար» պիեսը, որը ներկայացրել է 1988-ի փետրվարի 19-ին և հաջորդ օրերին, Բիվերսայթ Շեքսպիր թատրոնում: Պիեսի նյութը 1915-ին Արևմտյան Հայաստանում կազմակերպված հայերի կոտորածներից փրկված և Ամերիկայում հաստատված մի հայ ընտանիքի կյանքի պատմությունն է: «Լիրիկական գործ մըն է, – հայտնել է Փարլաքյանը, – և լեզուն պահած է տալու տեղական գույնը և խոսելու կերպը Հայոց լեզվին»:

«Մեծ մայրիկի...» բեմադրությանը մասնակցել է Բեյրութից Ամերիկա փոխադրված, Հայոց Բարեգործական ընդհանուր միության ամերիկյան շրջանի մշակութային կյանքի հայտնի գործիչ՝ դերասան և ռեժիսոր Գրիգոր Սաթմաճյանը<sup>2</sup>:

Հայոց ցեղասպանության հերթական տարելիցի կապակցությամբ, Փարլաքյանը 2005-ին Նյու Յորքում հրատարակել է պիեսների անգլերեն մի ժողովածու, որի մեջ ընդգրկել է ժամանակակից հայ և օտարազգի հեղինակների պիեսներ՝ նվիրված ցեղասպանության թեմային<sup>3</sup>: Դրանք են՝

<sup>1</sup> Նոր կյանք (Նյու Յորք) 1988, № 28:

<sup>2</sup> Պայքար (Բոստոն) 1988, № 22:

<sup>3</sup> Contemporary Armenian American Drama, New York, 2005, 608 էջ:

1. Արգոլմանյան Ռաֆֆի – էլիս կղզի 101
2. Սարոյան Վիլյամ – Հայերը
3. Փարլաքյան Նշան – Մեծ մայրիկ աղոթե ինձի համար
4. Բեջոյան Բարբարա – Պարիս մայրիկ, պարիս
5. Այվազյան Լեսլի – Ինը հայ
6. Մարգարյան Հրանդ – Հայելիներ
7. Ռուեր Վիլյամ և Անթառանյան Աննա-Հայկական հարցը
8. Ջոյս Վան Դայկ – Աղջկա պատերազմը:

Հայոց ցեղասպանության և նրա հետևանքների թեմայով անգլերեն պեճաններ գրող հայ հեղինակների թվին են պատկանում նաև լոնդոնաբնակ դրամատուրգներ Քրիստինա Բոլլիթը և Թամարա Հինչքոն: Նրանց գրած դրամայի վերնագիրն է «Դատավճիռ» (The Sentence): Նյութը՝ Հայոց Մեծ եղեռնից փրկված և Լոնդոնում ընտանիք կազմած մի մարդու կյանքի տխուր և զավեշտական արկածներով լի պատմությունն է:

Ընտանիքի հայրը՝ Հարոն մանուկ հասակում տեսելով իր հարազատների սպանությունը թուրքերի կողմից, մի կերպ թաքնվել է և կյանքը փրկել: Հետագայում անցել է Կիպրոս, ապա փոխադրվել Լոնդոն: Այնտեղ ընդհարվելով մի թուրքի հետ, սպանել է նրան: Դատապարտվել է 20 տարով: Ժամկետը լրանալուց հետո Հարոն վերադարձել է Լոնդոն, միացել ընտանիքին:

Հարոյի թոռնուհին՝ Ռոզիկը հետաքրքրվելով պապիկի պատմություններով, բազմապիսի հարցերի պատասխաններից սկսում է ճանաչել իր արմատները, իր ով լինելը: Միաժամանակ հասկանում է իր պապի և նրա նմանների կրած դառը ճակատագիրը Օսմանյան թուրքիայում: Հոգեբանական հեղաշրջում է կատարվում նրա ներսում:

Բեմադրություն մեջ շոշափված հարցերի մեկնաբանություններից հանդիսատեսը հասկանում է թե ինչ ասել է ցեղասպանություն:

«Դատավճիռ» ՀԲԸ Միությունից Լոնդոնի մասնաճյուղի և «Պենյան Տրուսթ» ընկերության աջակցությամբ, առաջին անգամ ներկայացվել է 1996-ի մայիսի 7-ին «Old Red Lion» թատրոնում Ռոջեր Սմիթի բեմադրությամբ: Ներկայացմանը Հարոյի կնոջ՝ Մարիամի դերով մասնակցել է Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի դերասանուհի Ժենյա Ներսիսյանը: Նրա անգլերեն դերակատարումը բարձր է գնահատվել լոնդոնյան մամուլի կողմից: («Go Magazine», «Camden New Journal»)<sup>1</sup>:

<sup>1</sup> Հայկազ Երանոսյան, Ժենյա Ներսիսյան, Երևան, 2009:

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ  
ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ  
ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ**

Պատերազմը, կոտորածը, մարդկային մի հատվածի ֆիզիկական բնաջնջումն իր հարազատ վայրում, բարբարոսական մի արարք է, որը դարեր ի վեր «կատարելագործվելով» անցյալ դարի կեսերին ձևակերպվել է իբրև Փաշխտական գերիշխանություն մտածողություն: Սրա կողքին, բարբախտաբար, աշխարհում առկա է առաջագեմ հայացքների տեր մարդկանց սրտացավությունը նման երևույթների հանդեպ՝ այդ անիրավություններից տուժածներին օգնություն ձեռք մեկնելու, հոսսադրելու, վշտերն ամոքելու, բարոյական ու նյութական հենարան հանդիսանալու պատրաստակամություն, որը կոչվում է մարդասիրություն: Այս հարցում դեր չեն խաղում ո՛չ լեզուն, ո՛չ՝ կրոնը, ոչ սե՛ռն ու գույնը, այլ միայն գործում է բնության հրաշք՝ մարդու նկատմամբ սրտացավությունը:

Այս առումով, որքան էլ Օսմանյան Թուրքիայի պարագլուխները բարբարոսաբար սրի ու հրի մատնեցին Արևմտյան Հայաստանի խոշոր միավորումներին՝ Վանի, Սասունի, Զեյթունի, Տիգրանակերտի և հարակից վայրերի խաղաղ բնակչությունը, այնուամենայնիվ, գտնվեցին առանձին անհատներ, կազմակերպություններ, ընկերություններ, հայ թե օտար, որոնք դատապարտեցին անօգնական ժողովրդին կոտորելու, իրենց բնօրրանից զրկելու թուրքական քաղաքականությունը նաև գրականություն մեջ ու թատրոնում:

Հայերի նկատմամբ սրտացավություն մը ու ցեղասպանություն դեմ պայքարի առաջամարտիկների գերում հանդես եկան նաև օտարազգի գրողներ, որոնք գրականություն միջոցով դատապարտեցին 1915-ի Մեծ եղեռնի ոճրագործությունները: Այս կարգի սրտացավ, օտար ժողովրդի վիշաք զգացող գրողներից մեկը եղել է Ֆրանսիացի կամ Ֆրանսերեն գրող բելգիացի դրամատուրգ Ալֆրեդ Բրուներն: Նա

գրել է «Հայուհիներ» վերնագրով երեք գործողությամբ չափածո դրամա, որը վերահրատարակվել է 1916-ին: Ցավոք, մեզ մասնակցի գրականության մեջ չգտանք այս հեղինակի հետքերը: Բայց դա չի խանգարում, որ մոռացության տանք նրա երախտավոր ծառայությունը մեր ժողովրդի կրած ցավերին կարեկցությամբ արձագանքելու համար:

«Հայուհիներ» երկրորդ տպագրությունը ցույց է տալիս նրա հեղինակի՝ Հայության նկատմամբ իր սերն ու կարեկցանքն արտահայտելու անկեղծության աստիճանը: «Հայուհիներ» հրատարակ գալը օտարազգի գրողների առաջին արձագանքն է Հայոց ցեղասպանությունը դատապարտող դրամատուրգիական գրականության մեջ:

Ըստ Փարիզի «Ապագա» թերթում տպագրված մի փոքրիկ ակնարկի, «Հայուհիները» «Համիդյան շրջանի դրվագներով լեցուն ոտանավոր թատերախաղ մըն է, որ մեր մեջ ճանչրցված չէ»: Այստեղից կարելի է եզրակացնել, որ պիեսի նյութը վերաբերում է 1895-1896 թթ. կոտորածների ժամանակ Հայուհիների առևանգմանը, հարեմա-բռնաբարությունների ստոր արարքների մերկացմանը:

Բրունոյի «Հայուհիներ» դրամայի՝ մեզ հայտնի առաջին կամ միակ բեմագրությունը տեղի է ունեցել 1927-ի սկզբներին, Բրյուսելի Սուրբ Ժոզեֆ ինստիտուտի սանուհիների կողմից<sup>1</sup>:

Պատահականությունը երբեմն հրաշքներ է ծնում: Այս կարգի արտասովոր ծնունդների թվին է պատկանում նաև՝ ավստրիական ծագումով գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ, վիպասան Ֆրանց Վիկտոր Վերֆելի (1890-1945) «Մուսա լեռան 40 օրը» գեղարվեստական վեպը, որը պատկերում է Կիլիկիայում ծվարած Մուսա լեռ գյուղի հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության դրվագները թուրքական կանոնավոր բանակի դեմ-հանդիման կռվելիս, 1915-ի ամռանը:

Ե՞րբ և ինչպե՞ս է Վերֆելին անդրադարձել այդ վեպի ստեղծմանը: Այս պատմությունը բավականին մանրամասնորեն նկարագրել է մեր հայրենակից, գերմանաբնակ գրող և լրագրող Համո Պետրոսյանը՝ օգտվելով օտարալեզու գրականությունից:

Պատմությունն այսպես է սկսվել: 1929-ին Վերֆելը կնոջ հետ միջինարևելյան երկրներում կատարած ճամփորդության ժամանակ, եղել է Դամասկոսում (Սիրիա), ծանոթացել տեղական կյանքին: Տիկին Վերֆելին իր ճամփորդական հիշողություններում արձանագրել

<sup>1</sup> Ապագա (Փարիզ) 1927, № 34:

է, որ Դամասկոսի գորգի գործարանում իրենց ապշեցրել են «գունավոր դեմքերով և չափազանց մեծ մուգ աչքերով» երեխաները: Երբ Յ. Վերֆելը գործարանատիրոջը հարցրել է՝ «Թե այս ինչ տարօրինակ երեխաներ են», նա պատասխանել է՝ «Ախ, այս թշվառ արարածները ես հավաքած եմ փողոցներեն և կուտամ անոնց օրական 10 դահեկան, որպեսզի անոնք անոթի չմնան: Ասոնք թուրքերու կողմե ջարդված հայերու զավակներ են, եթե ես անոնց այստեղ չպահեմ, ստվամահ կըլլան, որովհետև շատ ուժասպառ են... այդ հայերը իր մտքեն դուրս չեկան: Պանդոկին մեջ, անկողնին վրա կդրվելին հայկական ջարդերու վերաբերյալ նոթագրություններ... Ան ճամփորդության ընթացքին ուրվագծեց վեպ գրելու դադափարը»<sup>1</sup>:

Հայ ժողովրդի պատմությանը, Առաջին համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության արհավիրքներին ծանոթանալու նպատակով, Վերֆելը 1929-1933 թթ. ստացել է Վիեննայի Մխիթարյան Հայրերի օգնությունն ու աջակցությունը՝ թեմային նվիրված գրականությանը հաղորդակից դարձել: Նա օգտվել է նաև գերմանական աղբյուրներից՝ դոկտոր Եոհաննես Լեփսիուսի, գրող Արմին Թ. Վեգների և ուրիշների գրքերից ու հոդվածներից<sup>2</sup>:

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպը Վերֆելը գրել է 1932-ի հուլիսից մինչև 1933-ի մարտ ամիսը, բաղկացած է 3 մասից և 18 գլխից: Առաջին տպագրությունը կատարվել է 1933-ին, Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում, 10.000 տպաքանակով: Հետագա տարիներին ունեցել է շուրջ 30 գերմաներեն և 20 թարգմանական հրատարակություններ: Հայերեն առաջին հրատարակությունը լույս է տեսել 1935-ին, Սոֆիայում, Երվանդ Տեր-Անդրեասյանի թարգմանությամբ: 1964-ին տպագրվել է Պարույր Միքայելյանի՝ արևելահայերեն թարգմանությամբ Երևանում: Բեյրութում լույս է տեսել Բաբգեն Փափազյանի արևմտահայերեն թարգմանությամբ:

Յ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը թարգմանաբար լույս տեսնելուց հետո, հայ թատերական գործիչների մոտ բուռն հետաքրքրության է առաջացել նրա նկատմամբ: Այն բացառիկ տեղ է գրավում ինչպես համաշխարհային գրականության մեջ, այնպես էլ հայ թատրոնի պատմության էջերում: Վեպ-պիեսում պատկերված է Կիլիկիայի Մուսա լեռ գյուղում ծվարած մի բուռ հայ ազգաբնակչության մղած հերոսամարտը թուրքական գործի

<sup>1</sup> Հասկ (Անթիլիաս) 2014, № 4, էջ 342:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 343:

դեմ: Հերոսական պաշտպանությունը տեւել է 1915-ի հուլիսի 30-ից մինչև սեպտեմբերի 10-ը: Դա հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութեան աննախադեպ սխրանքի ցայտուն դրվագներից մեկն է, որն իր գեղարվեստական արտացոլումն է ստացել հայի կրած տառապանքներն իր հոգուն հարազատ զգացած գրողի ստեղծագործութեան մեջ:

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպը բեմականացնելու առաջին փորձը, որքան մեզ հայտնի է, կատարել է կովկասահայ դերասան, դրամատուրգ (ցեղասպանութեան դեմ դրած պիեսների հեղինակ) և ռեժիսոր Անդրանիկը (Սողոմոնյան): Նախիջևանյան երկրի հայտնի Ագուլիս գյուղում ծնված թատերական դործիչը կյանքի դժնդակ պայմանների ներքո դարձել է տարագիր և ընտանիքի անդամներից կազմած «Անդրանիկ» թատերախմբով երկրե երկիր թափառելուց հետո հիմնավորվել է Լոս Անջելեսում:

Անդրանիկին հայտնի էին հարազատ ժողովրդի կրած տառապանքները, 1919-ին Ագուլիսի կոտորածը թուրքերի կողմից: Մեծ եղեռնի շրջանում նա գրել ու բեմադրել էր «Ռեսի աղջիկը» պիեսը, իսկ «Թալեաթի սպանությունը» հազիվ հասցրել է 1933-ին բեմադրել (Սողոմոն Թեհլիրյանի դերում՝ Եղիշե Հարութ) Ամերիկայում:

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպն Անդրանիկը բեմականացրել է 1935-ին: Հինգ գործողութեամբ այս պիեսի մասին պատկերացում տալու նպատակով, նա չորրորդ գործողությունը տպագրել է «Ասպարեզ» թերթում: Թուրք-ամերիկյան քաղաքական հարաբերությունների վրա սովեր չզցելու պատճառով պիեսը բեմադրելու արտոնություն չի ստացել:

Չի իրականացել նաև նույն պիեսը կինոֆիլմի վերածելու գաղափարը: «Մուսա լեռան քառասուն օրը» նկարահանելու մտադրությունն անհանդստացրել է Աթաթուրքին: Թուրքական մամուլը բողոք է բարձրացրել այդ թեմայով ֆիլմ նկարելու դեմ:

Այս վարմունքից զայրացած, իր մի հոգվածում Անդրանիկը գրել է. «Ինչի՞ համար է թուրքին այդ ոտ ու ձեռք իյնալը, կամչնա՞րդյոք իր արածներեն, թե՛ պատերազմի պատրվակին տակ կուտակված անմարդկային արարքները փաթթել կուզե հին թուրքերու շլինքին և ինքը անպարտ ու անմեղ կանգնիլ աշխարհին առջև... փոխվա՞ծ է իսկապես թուրքը, այժմյան և անցյալ թուրքին մեջ այլևս նմանություն չկա՞, հրաժարած են իրարմե, հականկիւված ու զուլվա՞ծ է այժմյան թուրքի արյունը, անոր հրեշային բնազդները, որոնք շարունակ հայուն բնաջնջումը կորստալին... Սակայն իրակա-

նությունը չի հաստատեր այդ, որովհետև դեռ մինչև օրս ալ մազա-  
չափ անգամ պակասած չեն անոր դավերը, նենգ ու խարդախ միջոց-  
ներով վարկաբեկել ու վնասել հային»<sup>1</sup>:

Ութսուն տարի առաջ թուրքին տված Անդրանիկի այս բնորոշու-  
մը այսօր իսկ մնացել է նույն աստիճանի վրա, եթե չասենք ավելի է  
հաստատվել:

Անդրանիկի սկսած, բայց ցանկալի նպատակին չհասցրած գործը  
չարունակել է կովկասահայ մի այլ հանրահայտ դերասան՝ գյուժրե-  
ցի Հովհաննես Ջարիֆյանը: Նա իր ծննդավայր Ալեքսանդրապոլում  
1918-ին դերի մնալով թուրքերի կողմից, ականատես է եղել նրանց  
բռնություններին, սեփական աչքերով տեսել ու, նաև զգացել սար-  
սափի տեսարանները:

Վերհիշելով այդ աղետալի շրջանի հոգեկան տառապանքները,  
Ջարիֆյանը ձեռնարկել է «Մուսա լեռան քառասուն օրը» դյուցազ-  
ներգության բեմադրական աշխատանքները: Հանդիսատեսի մոտ  
սեփական արժանիքների դիտակցությունը բարձր պահելու համար,  
նա ամեն ջանք գործ է դրել, որ բեմադրությունը ծառայի իր բուն  
նպատակին:

Հալթահարելով մի շարք դժվարություններ, Ջարիֆյանին հա-  
ջողվել է 1937-ի հունվարի 20-ին Բոստոնի դրամատիկ խմբի և հա-  
րակից ուժերի օժանդակությամբ, առաջին անգամ բեմ հանել «Մու-  
սա լեռան քառասուն օրը» պիեսը: Բեմադրվող երկի բովանդակու-  
թյունը բացելու նպատակով, պիեսի վերնագրի տակ Ջարիֆյանն  
ավելացրել է հետևյալ ծանուցումը՝ «1915 թ. մեծ պատերազմի ար-  
հավիրքներեն առնված թրքահայ տեղահանության կյանքե, դյու-  
ցազներգություն 6 արար»:

Բեմադրության մեջ զբաղված է եղել 50 անձնավորություն, այդ  
թվում և Բոստոնի ազգային երգչախումբը օր. Ս. Տեր-Մանվելյանի  
ղեկավարությամբ: Պիեսի առաջատար հերոսի՝ Գաբրիել Բագրատյա-  
նի դերակատարը եղել է ինքը՝ Ջարիֆյանը: Մյուս դերերը մարմնա-  
վորել են՝ է. Պարտիզպանյանը (ժյուլետ), Ն. Սողիկյանը (Տեր Հայ-  
կազուն), Ն. Սարգիսյանը (բժիշկ Պետրոս Ալթունի), Միհրան Ջորե-  
պանյանը (ուսուցիչ Հրանտ Ոսկանյան), Վահրամ Տեր-Բարսեղյանը  
(Արամ Թովմասյան) և ուրիշներ:

Ներկայացման հաջողությունը ոգևորել է Ջարիֆյանին: Վերամշա-  
կելով տեքստը, սրբաբերելով նկատված բացթողումները, նոր հավե-  
լումներով Ջարիֆյանն այն ներկայացրել է փետրվարի 22-ին:

<sup>1</sup> Ասպարեզ (Ֆրեդոն) 1935, № 1678:

Մամուլը բարձր է գնահատել Ջարիֆյանի կատարած աշխատանքը: Եվ, նա էլ սկսել է հայաշատ դադուլթներում հաճախակի ներկայացնել «ամեն հայի սրտից բխող» այդ պիեսը և դրանով իսկ կենդանի պահել հիշողությունը, մայրենի լեզուն, առանց թանաք-դրիչի դպրոց-թատրոնը:

Քաջալեքիվելով եղած գնահատությունից ու ընդունելությունից, Ջարիֆյանը «Մուսա լեռը» ներկայացրել է նաև Դեստրոյթի Մասունիկ Թեմայլ թատրոնում, մայիսի 23-ին: Բեմադրական աշխատանքներին այստեղ նա մասնակից է դարձրել Էքիզյանի ղեկավարությամբ երգեցիկ խումբը:

«Մուսա լեռը» Դեստրոյթում բեմադրելու համար կատարած աշխատանքները երկու ամիս են տևել: Այդ ընթացքում, ապրիլի վերջերին կնոջը՝ Արաքսին (Նյու Յորքում) ուղղած մի նամակում, Ջարիֆյանը մեծ գոհունակությամբ գրել է. «արդեն տոմսերը հրապարակի վրա են, «իշխան» ձուկի պես ձեռքե ձեռք կխլեն»<sup>1</sup>: Դա եղել է Հովհաննես Ջարիֆյանի վերջին ելույթը բեմում:

Այս նույն 1937-ի ամռանը, ամերիկահայ թատերական գործիչների հետ սերտորեն կապված թատերախոս Միաժան Ինկիլիզյանը, ավարտել է Փասատինայի Քրմյունիթի Փլեյհաուզի երկամյա թատերական դպրոցը: Որպես ավարտական աշխատանք, նա պատրաստել է «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի անգլերեն բեմականացման տարբերակը, որն արժանացել է գովեստի: Նրա այդ աշխատանքի հետագա ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ մեզ<sup>2</sup>:

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպը բեմականացնելու մի փորձ էլ կատարել է վանեցի գրող և հրապարակախոս Ռենը (Ռուբեն Վարդանյան), Բուենոս Այրեսում<sup>3</sup>: Նրա մշակումն ունեցել է հինգ գործողություն, չի տպագրվել: Հավանաբար չի բեմադրվել՝ մեծ թվով գերակատարների համար համապատասխան ուժեր չլինելու պատճառով:

Վերֆելի վեպի որոշ բեմականացումներ, դարձյալ 1937-ին, տեղ են գտել բուլղարահայ և ռումինահայ թատերախմբերի խաղացանկում: 1937-ի օգոստոսի 26-ին այն առաջին անգամ ներկայացվել է Սոֆիայի «Բաֆերթիվեն» թատրոնում: Բեմադրողն է եղել հայ թատրոնի պատմության մեջ որոշակի հետք թողած գերասան և ռեժիսոր Եղուարդ Չափրաստը:

<sup>1</sup> Չարենցի անվան գրականություն և արվեստի թանգարանի թատերական բաժին, 2. Ջարիֆյանի ֆոնդ:

<sup>2</sup> Նոր ուղի (Լոս Անջելես) 1937, № 46:

<sup>3</sup> Հառաջ (Փարիզ) 1991, № 17660:

Մեկ տարի անց, 1938-ի ապրիլի 3-ին, Չափրաստն այս պիեսը բեմադրել է Բուրգասում, Ազգային վարժարանի հոգաբարձության նախաձեռնությամբ, Թաղապետական թատրոնում: Բազրատյանի դերակատարը եղել է բեմադրողը (գուցե և բեմականանցնողը)՝ Չափրաստը: Նրա խաղընկերներն են եղել՝ Մարի Խորթումյանը (ժյուլիետ), Մարիցա Մարտիրոսյանը (Իսկուհի), Համբարձում Հակոբյանը (Նուրհան) և ուրիշներ: Բազրատյան – Չափրաստի մասին ահա թե ինչ է զրել թատերախոս Թովմաս Թյուլթյունճյանը. «Տիրական, խրոխտ, բայց միշտ փոթորկոտ ու զգայուն – զոր կրցավ այնքան խորունկ կերպով իր հոգեկան ապրումներուն հաղորդակից ընել մեզ, տալով իր ապրումներեն դեղեցիկն ու հարազատը»:

Բարձր է գնահատվել նաև Չափրաստի բեմադրական աշխատանքը՝ «Հրաշալի էր Ա. արարին վերջավորության Բազրատյանի ոգեկոչումը՝ ուղղված Մուսա լեռան: Հոս Չափրաստի ձայնը կարծես լեռներու ընդերքեն կբարձրանար ու արձագանքելով, ժայռերուն վրային իր փոթորկաշունչ պատգամը կուտար»:

«Մուսա լեռը» Պուրկազի մեջ – անշուշտ ամեն տեղ – կատարեց իր բարոյական մեծ դերը, թոթափելով հուսալքումի և ուժացման փոշին մեր թմրած մտքերուն վրայեն»<sup>1</sup>:

1937-ին «Մուսա լեռան քառասուն օրը» պիես-բեմականացումը ուշադրության է արժանացել նաև Բուխարեստի «Բաֆֆի» Մշակութային միության թատերախմբի կողմից: «Համաշխարհային հռչակ հանած վիպասան Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայկական դյուցազներգությունը» բեմադրության է պատրաստել դերասան Արարատյանը: Բեմադրական աշխատանքները տևել են սեպտեմբերից մինչև նոյեմբեր:

Պիեսի առաջին ներկայացումը նախատեսվել է ցուցադրել 1937-նոյեմբերի 21-ին, Բուխարեստի «Լիտերթաֆել» թատրոնում: Այդ մասին տեղական «Արագ» թերթում երկու անգամ հայտարարություն է տպագրվել, բայց, ըստ երևույթին, արգելվել է նրա ներկայացումը և տեղի չի ունեցել: Դրանից առաջ և հետո տրված ներկայացումների մասին ոչ միայն հայտարարություններ են տպվել, այլև թատերախոսականներ էլ են գրվել: Մինչդեռ «Մուսա լեռան քառասուն օրը» լուսթյան է մատնվել:

«Մուսա լեռան քառասուն օրը» երկին անդրադառնալու նոր շարժառիթ էր Մեծ եղեռնի 50-ամյակի հիշատակի ոգեկոչման բարձ-

<sup>1</sup> Ազատ խոսք (Սոֆիա) 1938, № 285:

րացած ալիքը: Դրա արձագանքն այս անգամ հնչեց միջինարևելյան երկրներում, մասնավորապես Բեյրութում: Ավելին, Թեքեյան Մշակութային միությունը մրցույթ էր կազմակերպել ցեղասպանությունը դատապարտող պիեսների համար:

Այս պատվավոր մրցույթին մասնակցելու համար, «Մուսա լեռը» (երևանյան հրատարակությունը) բեմականացնելու նպատակով լուրջ աշխատանք է կատարել հայաստանյան դրամատուրգ Մելիք Քոչարյանը: Քննող հանձնաժողովը Քոչարյանի աշխատանքը համարելով ոչ ինքնուրույն ստեղծագործություն, մրցանակի չի արժանացրել, բայց երաշխավորել է նրա բեմադրությունը:

Օգտվելով այս նպատակով պատեհ առիթից, Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախումբը ձեռնարկել է նրա բեմադրությունը: Պիեսն արևմտահայերենի է վերածել դրամատուրգ Հակոբ Թորոսյանը, որը մուսալեռցի լինելով, ինքն էլ է պիես գրել մուսալեռցիների հերոսական պաշտպանության մասին:

«Մուսա լեռը» բեմադրել է թատերախմբի՝ արդեն ճանաչված դերասան և ռեժիսոր Պերճ Ֆազլյանը: «Մուսա տաղի ժողովուրդին դուցազնամարտը թուրք ջարդարարների դեմ»<sup>1</sup> այս պիեսի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1965-ի հունիսի 4-ին և հաջորդաբար խաղացվել յոթ անգամ, որից երկուսը Ջահլեում և Տրիպոլիում:

Ներկայացման ծրագրում, թատերական վարչությունն իր «Երկու խոսքում» շատ դիպուկ է ներկայացրել այդ պիեսի բեմադրության անհրաժեշտությունը: Այդտեղ գրված է. «Ազգային պոռթկումի այս զորավոր մակընթացությունն անբաժանելի էր կրնար մնալ Հ.Ն.Ը. «Վահրամ Փափազյան» թատերախումբը, որն իր տրամադրության տակ ունի ազգապահպանման գեղեցիկ ազդակ մը՝ թատրոնը: Հիսնամյակի այս նշանակալից օրերուն ան չէր կրնար իր հասարակությունը հրամցնել ուրիշ բան, քան այդ պատմական օրերուն դրվատումներեն ներշնչված պիես մը»:

«Մուսա լեռան» բեյրության անդրանիկ բեմադրության գլխավոր դերակատարներն են եղել՝ Երվանդ Քասունին (Գարրիել Բազրատյան), Թորոս Սարգիսյանը (Տեր-Հայկազուն), Մանուել Մենենկիչյանը (Սարգիս Կիլիկյան), Պ. Ֆազլյանը (Մորիս Գոնզակ), Զավեն Գալուստյանը (Էնվեր Փաշա), Վարդան Չարրգյանը (Լեփսիոս) և ուրիշներ, ընդամենը՝ 30 դերակատար:

Մելիք Քոչարյանի բեմականացրած «Մուսա լեռան զավակները»

<sup>1</sup> Արարատ (Բեյրութ) 1965, № 7064:

պիեսի հրատարակութեան առիթով (Բեյրութ, 1965), գրականագետ Արամ Սեփեթճյանն իր գրախոսականում գրել է, որ նա «98 էջերու մեջ հաջողած է տալ Մուսա լեռան մեծ վեպը չորս արարներու բաժանումով: Առաջին արարի սկիզբն իսկ ան կրցած է հանդիսատեսը առնել իր ցանցին մեջ, անոր ցուցադրելով Բագրատյաններու ամառանոցը Մուսա լեռան ստորոտին: Հետզհետե կհասնին ու կծանոթացվին Մուսա լեռան հերոսները, դեպքերը կպատմվի հերոսներին ներկայութեամբ առանց արվեստական միջոցներու ու, այնքան բնական, այնքան հարազատ կընթանա մինչև վերջը պատմութեան»<sup>1</sup>:

Մ. Քոչարյանի տարբերակով «Մուսա լեռան քառասուն օրը» պիեսը բեմական նոր կյանք է ստացել Թեհրանում: Ներկայացվել է Հայ Մշակութային միութեան «Արարատ» կազմակերպութեան թատերախմբի կողմից, դերասան և ռեժիսոր Արամայիս Աղամալյանի բեմադրութեամբ, Արարատի սրահում: Դեկորները ձևավորել է ինքը՝ բեմադրողը, իսկ երաժշտական ձևավորումը՝ երաժշտագետ Լիդա Բերբերյանը: Առաջին անգամ ներկայացվել է 1979-ի մայիս-հունիսին, խաղացվել է 20 անգամ:

Բեմադրութեան մեջ զբաղված է եղել 31 դերակատար, այդ թվում՝ Գևորգ Նուբարյանը – Գաբրիել Բագրատյան, Կիտուշ Արզուլյանը – Ժյուլիա, Անդրանիկ Սարյանը – Տեր-Հայկազուն, Ռուբիկ Քոչարյանը – Արամ Թովմասյան, Արմինե Բուդաղյանը – Իսկուհի, Թունի Ամատունին – Էնվէր Փաշա, Հարություն Մինասյանը – Լևիսիոս, Տիգրան Գրիգորյանը – Մորիս Գոնզակ, Շահեն Մ. Ստեփանյանը – Սարգիս Կիլիկյան, Արա Հակովբյանը – Ծովակալ և ուրիշներ:

Որոշ թերութեաններով հանդերձ<sup>2</sup> 20 ներկայացման առկայութեամբ վկայում է թեմայի հարազատութեանը և ընդունելութեանը հանդիսատեսների կողմից:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, եվրոպական երկրներում դործող հայկական թատերախմբերից առավել զարգացում ու առաջադիմութեան է ունեցել բուլղարահայ թատրոնը՝ մի շարք քաղաքներում ունենալով իր դերասանական խմբերը: Նրանցից ամենագործունեյան եղել է Սոֆիայի «Երևան» կուլտուրական միութեան «Գաբրիել Սուսուդուկյան» թատերախումբը: Ահա այս միութեան Սոֆիայի և Վառնայի «Շիրվանզադե» թատերախմբերի ջանքերով էլ 1967-ի մայիսի 29-ին Սոֆիայի երիտասարդական ժո-

<sup>1</sup> Զարթոնք (Բեյրութ) 1965, № 229:

<sup>2</sup> Փյունիկ (Թեհրան) 1979, № 4:

դովրդական բեմի վրա ներկայացվել է «Մուսա լեռան քառասուն օրը» դյուցազնավեպի բեմականացրած տարբերակը, որն ի կատար են ածել բուլղարացի և հայ ռեժիսորներ Գ. Գանչևը և Մ. Պողոսյանը:

Մամուլն արձագանքելով այդ բեմադրությունը, նշել է, որ «Պիեսի նյութը հայուն գոյամարտն է, իսկ հերոսները՝ ժողովուրդը... այն համազգային և համաժողովրդական աղետին՝ 1915-ի մղձավանջային օրերեն, որ դեռ չարաշուք ուրվականի մը պես կհետապնդեն հայը և կչարչրկեն անոր իմացականությունը»<sup>1</sup>:

Ներկայացմանը մասնակցել են «Գ. Սունդուկյան» թատերախմբի 30-ի չափ դերակատար, ներառելով երեք սերնդի թատերասերների:

Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը արժանացել է նաև Հայաստանի թատերական գործիչների ուշադրությունը: Առաջինը եղել է հեռուստաթատրոնի ռեժիսոր Գրիգոր Չալիկյանը, որը Պարույր Միքայելյանի թարգմանություն հիման վրա այն բեմականացրել ու բեմադրել է 1986-ին:

«Մուսա լեռան քառասուն օրը» հեռուստաբեմադրության գլխավոր հերոսի՝ Գաբրիել Բաբրատյանի դերակատարն է եղել Հ. Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնի առաջատար դերասան Լևոն Թուխիկյանը: Մյուս դերերում աչքի են ընկել՝ սունդուկյանցիներ խորեն Աբրահամյանը (Տեր Հայկազուն), Լորենց Առուչանյանը, Դրամատիկական թատրոնից՝ Անահիտ Թովչյանը (ժյուլետ), Ռաֆայել Քոթանջյանը և ուրիշներ:

«Մուսա լեռան քառասուն օրը» պիեսի երևանյան երկրորդ բեմադրությունը տեղի է ունեցել 2009-ի հոկտեմբերի 18-ին, Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում: Բեմականացնողն ու բեմադրողը եղել է թատրոնի այժմյան գեղարվեստական ղեկավար, ռեժիսոր Արմեն Էլբակյանը: Բեմադրության գեղարվեստական ձևավորումներն ապահովել են բեմանկարիչ Դ. Մինասյանը՝ իսկ երաժշտականը՝ Գ. Քեոսյանը:

Երկու մասից բաղկացած այս ներկայացման մեջ առաջինում պատկերվել է մուսալեռացիների խռովահույզ միջավայրը, իսկ երկրորդում՝ նրանց հերոսական պաշտպանությունն ու փրկությունը: Պիեսի շարժիչ ուժի՝ Բաբրատյանի դերակատարն է թատրոնի առաջատար դերասաններից մեկը՝ Հարություն Մովսիսյանը: Մյուս դերերում՝ նույնպես երախտավորներ Աննա Էլբակյանը – ժյուլետ, Լորենց Առուչանյանը – Տեր Հայկազուն, Շողեր Գրիգորյանը – Իսկուհի, Գարիկ Չեպչյանը – էնվեր և ուրիշներ:

<sup>1</sup> Երևան (Սոֆիա) 1967, № 22, 23:

Հայոց ցեղասպանութեան դեմ կազմակերպված ամեն մի միջոցառում հուզել ու հետաքրքրել է նաև օտարազգի թատերական գործիչներին: Հայերի հետ համակրութեան զգացումները տեղ են գտել նաև Վերֆելի հայրենակիցների մոտ: Ավստրիացի ռեժիսոր Լեոպոլդ Կրուզընպաուերը 1966-ին բեմականացրել ու բեմադրել է «Մուսա լեռան քառասուն օրը» դերամաներեն, Լինց քաղաքում: Մուսալեոցիների հերոսական պաշտպանութունն այնքան է հետաքրքրել տեղական ազգաբնակչութեանը, որ այն ներկայացվել է ութ անգամ և հաջողութուն գտել<sup>1</sup>:

Հայոց ցեղասպանութեան հարցն օտարերկրյա պետութիւններում չի արձարծովել: Միայն առաջադեմ մտածողութեան տեր առանձին անհատներ են խոսել կամ գրել դրա մասին և դատապարտել ցեղասպանութիւնն առհասարակ: Այս հարցում նախապատվութիւնը պետք է տալ միջինարևելյան երկրների արաբ մտավորականներին:

Թեև ընդհանուր հարցերով հայոց ցեղասպանութիւնը դատապարտել են թե՛ ֆրանսիացի, թե՛ գերմանացի, թե՛ լեհ և թե՛ այլ ազգութիւնների մտավորականներ, բայց թեման ավելի մոտ է արաբների հոգեկան աշխարհին: Ում-ում, բայց ամենից առաջ և ամենից շատ արաբներին է հայտնի եղել հայ ժողովրդի մի հսկա հատվածի կոտորածի պատմութիւնը: Նրանք են ականատես եղել արաբական անապատներում քաղցից ու ծարավից, հիվանդութիւնից ու համաճարակներից մահացած անասելի թվով հայերի ամենաողորմելի վիճակին:

Մշտական շփման մեջ լինելով ցեղասպանութիւնից և նրա տիտեր հետևանքներից փրկված, արաբական երկրներում ապաստան գտած հայերի հետ, արաբ մտավորականները, յուրովի են անդրադարձել եղեռնի հարցերին ու գնահատութեանը:

1964-ի մայիսի 6-ին «Արաբական միացյալ հանրապետութեան» ռադիոյի «Սաութ էլ արաբ» գիշերային ձայնը հաղորդումների ժամանակ ունկնդիրներին ծանոթացրել է մի թատերգութեան (թեմսիլե), որի մեջ ներկայացվել է թուրքական պետութեան ավերումներն արաբական երկրներում: Ռադիոթատրոնում արաբ թատերական գործիչները որոշ տեղ են տվել նաև 1915-ի հայկական կոտորածների պատմութեանը<sup>2</sup>:

Ռադիոթատրոնով հաղորդված պիեսի վերնագիրը եղել է՝ «Ուր-

<sup>1</sup> Հայաստանի կոչնակ (Նյու Յորք) 1966, № 6, էջ 188:

<sup>2</sup> Շարժում (Բուենոս Այրես) 1965, № 50:

կուհաթ էլ Ապտալ»—«Հերոսների ճոճանակը» (կախաղան): Այս վերնագրից թերևս կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերել է Սեդրակ Շահենի «Քսան կախաղաններ» պիեսի արաբական տարբերակին: Անկախ դրանից, արաբ արվեստագետներն աչքի առաջ ունենալով թուրքերից հալածված, ոչնչացման եզրին հասած հայերի դառը ճակատագիրը, դրանով իրենց համակրանքն են հայտնել նրանց նկատմամբ և դատապարտել թուրքական ծրագրված քաղաքականութունը:

Արձագանքելով արաբ մտավորականների այս մարդասիրական մտահոգացմանը, Կահիրեի «Ձահակիր» թերթի խմբագիր Հայկ ժամկոչյանը ցանկութուն է հայտնել, որ վերոհիշյալ թեմայով ռադիոպիեսի բեմադրության հաղորդումը կրկնվի մի քանի անգամ, որպեսզի արաբախոս ամբողջ ժողովուրդը լսի և համոզվի թե ինչպիսի հոգեբանության տեր է թուրք ջարդարարը:

Հայերի նկատմամբ Օսմանյան Թուրքիայի քաղաքականության պատճառով ոչնչացման եզրին հասած արևմտահայության հազարավոր բեկորներ «ապաստան» գտնելով արաբական անապատներում, կարեկցության գութ են շարժել արաբ ժողովրդի որոշակի շրջանակներում:

Ինչպես հայերիս մոտ, այնպես էլ կարեկից արաբների սերունդների մոտ չի մոռացվում թուրքական բնաջնջումի ուրվականը: Եվ ահա, Հայոց Մեծ եղեռնից շատ տասնամյակներ անց, հայի տառապած հոգու արձագանքը կայծ է տվել նոր սերնդի արաբ գործիչների մեջ: Վերջիններիս թվին է պատկանում նաև սիրիացի արաբ գրող լրագրող Լուեյ Ապատեն, որը Հայոց ցեղասպանության և նրա հետևանքների թեմայով գրել է «Ալրաճու, ալլազի հարապա նաֆսահու» (Մարդը, որն ինքն իր դեմ է պատերազմում) դրաման:

Հեղինակը բավականաչափ ծանոթ լինելով ընտրած թեմայի պատմությանը, իր պիեսում պատկերել է մի հայ ընտանիքի՝ իրար կորցրած անդամների հանդիպման պատմությունն արաբի ընտանիքում: Այս երևույթը բնորոշ լինելով անցյալի կացություններին, յուրովի արձագանք է ստացել նաև հայ հեղինակների պիեսներում: Նմանօրինակ պատմությունը հետցեղասպանության ժամանակների համար եզակի բնույթ է կրել և դարձել է հատկապես որբերի կյանքում, ազգանվան փոփոխության ձևերից մեկը տարբեր երկրներում:

Լուեյ Ապատեի աշխատանքն աննկատ չի մնացել հայ մտավորականության կողմից: Անվանի գրող-խմբագիր Սարգիս Կիրակոսյանի

Թարգմանությամբ այն տպագրվել է «Բագին» ամսագրում՝ «Ակամա ինքնասպանը» վերնագրով: Պիեսի բեմադրությանը չի ուշացել: 1987-ի նոյեմբերի 25-ին այն բեմադրվել է Հալեպի «Պետրոս Ադամյան» թատերախմբի և Համալսարանի արաբ ուսանողների միացյալ ուժերով, արաբերեն՝ հայ-արաբական մշակութային շաբաթի շրջանակներում:

«Ակամա ինքնասպանը» բեմադրել է տեղացի ռեժիսոր Հարություն Չննոզյանը, որն իր մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետում (1970-1975) և աշակերտել Վարդան Աճեմյանին: Այդ բեմադրությունը դարձել է հայ և արաբ թատերական գործիչների համատեղ արված առաջին աշխատանքը:

Ներկայացումը տեղի է ունեցել Հայոց Բարեգործական ընդհանուր Միության Նազարյան սրահում: Գործող անձինք ու դերակատարները եղել են՝ Սիլվա-Լուբաբա Եունես, Հակոբ-Կարպիս Տեր-Բարսեղյան, Աշրաֆ - Ռոբեր Մուսալլի (հայազգի), Հիքմեթ - Էլի Մարտիրոս, Ահմետ - Հարութ Տերվիչօղլույան, Նա՛աման - Տիգրան Մուրատյան, Սուլեյման - Սմբատ Երեցյան, Զահրա - Հուրի Պասմաճյան, Ֆաթմե - Հասմիկ Գույումճյան, Հաճի Մուրատ - Հովհաննես Գանթարճյան, Օսման աղա - Սարգիս Պարոնյան, Խալիլ - Բաշար Յըսթոք, Ռեշար էֆենդի - Իսկենդեր Մարտիրոս, Ում Ահմետ - Սիլվա Ղալիկյան:

Բեմադրության տեխնիկական ձևավորմանը մասնակցել են՝ Գևորգ Կյուլումյանը (դեկորների իրագործում), Հակոբ Միքայելյանը (դեկոր և դիմահարգարում):

Ինչպես վկայում է ներկայացման ականատես, բանասեր Միհրան Մինասյանը, պիեսի հիմքում ընկած է իրական պատմության մի դրվագ: Պիեսի հեղինակի հայրը ժամանակին եղել է դպրոցի տնօրեն և երբեմն հաճախել է կերպարի նախատիպի տուն: Հորից լսելով որդեկիրույս կնոջ տխուր պատմությունները, որդին գրի է առել նրա պատմածները և գեղարվեստական տեսքի բերելով պիես դարձել:

Բարեկամական կապեր են եղել նաև հայ և հույն բախտակից ժողովուրդների փոխըմբռնման մեջ: Ժողովուրդներ, որոնք իրենց իսկ հայրենիքում բազմիցս ենթարկվել են թուրքական բռնապետության անասելի կոտորածների ու հալածանքների:

Թե՛ 1895-1896 թթ. Արևմտյան Հայաստանում կազմակերպված գանգվածային ջարդերից, և թե՛ 1915-ի Հայոց Մեծ եղեռնից հետո եվրոպական երկրներից առաջին մարդասեր պետություններից մեկը

եղել է Հունաստանը, որը կարեկցանքով ընդունել ու ապաստան է տվել դժբախտ դազթականությանը: Հիմնավորվելով Աթենքում, Սալոնիկում և այլ քաղաքներում, նրանք էլ ավելի են ամրապնդել հունա-հայկական բարեկամական կապերը: Երկու ժողովուրդներին իրար շողկապող օղակներից մեկը եղել է թատերական արվեստը:

Տարիների համագործակցությունը նրանց այնքան է միավորել, որ հայի չմոռացվող վիշտը դարձել է նաև հույն մարդուն հուզող հարց: Այս հոգեկան հարազատության վառ արտահայտություններից մեկն էլ դարձել է հույն գրող և դրամատուրգ Նիկոս Ֆուկուլոսի «Հայկական լուսինը» պիեսը, որը նվիրված է եղել Հայոց ցեղասպանության դատապարտմանը հույն ժողովրդի կողմից:

«Հայկական լուսինը» պիեսը գրելու շարժառիթների մասին Ֆուկուլոսն այսպիսի բացատրություն է տվել: «Հայկական լուսինը» գրելիս, — գրել է նա, — ես նպատակ եմ ունեցել արվեստի՝ տվյալ դեպքում թատրոնի միջոցով սատարել ցեղասպանության և դատապարտման գործին ոչ միայն մի երկրի, այլև համաշխարհային չափանիշներով:

Մտահղացումը ծնվեց «Իգմիրը բոցերի մեջ», «Զեղ եմ հարցնում, Տիկնայք և Պարոնայք» և հայկական ջարդերի մասին այլ գրքեր կարդալիս: Ընթերցելուց հետո հանգեցի այն եզրակացության, որ բարբարոսների գործած խժգժությունների մերկացման լավագույն միջոցը ամբողջ մի ազգի մեծ ողբերգության բացահայտումն է:

Պիեսի իրադարձությունները ծավալվում են Վանի վիլայեթի հայկական մի գյուղում, եղեռնին նախորդող և հաջորդող տարիներին: Ստեղծագործությունը հագեցված է հայկական երաժշտությամբ, երգ ու պարով:

Մենք վատ ենք ճանաչում ազգային այնպիսի հարուստ մշակույթ ունեցող մի հին ժողովրդի, ինչպիսին հայ ժողովուրդն է: Այդ իսկ պատճառով նրա անցյալն ու այսօրը թեկուզ և ոչ այնքան խորը բացահայտող պիես գրելու համար պահանջվեց հսկայական աշխատանք, հոգեկան և մտավոր ուժերի աննկարագրելի լարում...

Ես աշխատել եմ հայերի ազնվությունն ու կենսասիրությունը, տոկունությունն ու մարդասիրությունը, անսահման վիշտն ու թախիծը հնարավորին չափ համոզիչ ու հավաստի բացահայտել իմ աշխատանքում»:

Ֆուկուլոսի «Հայկական լուսինը» պիեսը բեմադրվել է Աթենքի

<sup>1</sup> Կանչ (Բեյրութ) 1978, № 362:

«Զմարուլա եռւլի» (Դերասանի տուն) նորաստեղծ թատրոնի բացմանը: Այս երևույթն արդեն ողջունելի քայլ է եղել հույն թատերական գործիչների կողմից՝ նոր թատրոնի բացմանն առաջին անգամ ազգային գրամատուրգի պիես ներկայացնելով ոգեկոչել հայ անմեղ զոհ-նահատակների հիշատակը: Մեկ ու կես տարի հավաքած նյութերի հիման վրա հեղինակի գրած այս պիեսի բեմադրութանն աջակցել և մեծ օժանդակութուն են ցուցաբերել տեղի հայերը՝ ավելի կատարյալ ու արտահայտիչ դարձնելով ներկայացումը (1976):

Ցեղասպանութան շուրջը գրականությանը ծանոթացող հիմնական դեմքը եղել է ամենահայ բանաստեղծ և լրագրող Հակոբ Ճելալյանը, իսկ երաժշտության համար օգտագործվել է Խաչատուր Ավետիսյանի «Անուրջների վրա» գործը<sup>1</sup>:

«Հայկական լուսինը» բեմադրել է երիտասարդ ռեժիսոր Դ. Պոտամիդիսը, երաժշտությունը հեղինակել է Կ. Կապնիսիսը, իսկ պարերը դրել է Ռ. Նասիպյանը: Բեմադրությունը մասնակցել է նաև Աթենքի հայկական երգչախումբը: Մեծ տպավորություն է թողել պիեսի գեղարվեստական ձևավորումը: Վարագույրը բացվելուն պես ուշադրություն է գրավել ետնավարագույրի վրա նկարված բիրլիական Արարատ լեռը: Հենց այդ տեսարանից սկսած հանդիսատեսները ծանոթացել են Հայաստանի, նրա ժողովրդի ստեղծագործող, խաղաղասեր, ուրախ հումորով լեցուն մարդկանց կենցաղին, մշակույթին, պատմութանը և, իհարկե՝ կրած դժբախտություններին:

Բեմադրության մեջ զբաղված են եղել քսան գլխավոր, մի այդքան էլ երկրորդական կերպարների դերակատարներ, երգիչներ, պարողներ, փառաբանել հայ ժողովրդին՝ լուսնի տակ իր տեղն ունենալու համար:

Հայոց ցեղասպանության և նրա հետևանքների թեման հետաքրքրությունների նոր էջեր է բացում մարդկության համար: Գնալով ավելանում է դեմոկրատական հայացքների տեր օտար հեղինակների մերձեցումը հայ կյանքին, նրա տխուր ու ողբերգական պատմութանը: Ականատես լինելով աշխարհում կատարվող անիրավութուններին ու պատերազմների պատճառով անմեղ զոհերի թվի ավելացմանը, շարժվել է նրանց գթասրտությունն ու սկսել են հասկանալ հայերի կրած ողբերգության պատճառները և իրենց բողոքի ձայնը բարձրացրել ամենուրեք խաղաղություն պահպանելու համար:

Այս տեսակետից միանգամայն հասկանալի է ամերիկյան գրամատուրգ Ռիթո Պոալոնիի սկսած քայլը: Ծանոթանալով հայ ժողովրդի

<sup>1</sup> Վ.Կայել է Հակոբ Ճելալյանը երևանում:

կրած ողբերգական էջերին, նա գրել է «Մ՛վ է հիշում հիմա» պիեսը՝ նվիրված վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի սխրանքին, որով օրը ցերեկով Բեռլինում դետոնին է տապալել հայերի ոխերիմ թշնամի Թալեաթ փաշա կոչեցյալին:

Պալոնիի «Մ՛վ է հիշում հիմա» դրաման Քեն Քլեյնի բեմադրությամբ, 1994-ի ապրիլից ներկայացվել է Կալիֆորնիայի նահանգի հայաշատ Գլենդել քաղաքի կոլեջի թատերական բաժնի հայ և այլազգի սովորողների ուժերով<sup>1</sup>:

Ժողովուրդների միջև խաղաղության համար պայքարի պատմության մեջ կարևոր տեղ է դրավում նաև Հայոց ցեղասպանությունը դատապարտող գրական հրապարակախոսությունը: Այս միջոցով բացասական երևույթները պատկերվում են մարդկային կերպարներով, կենդանի խոսքով ու ֆիզիկական գործողությամբ տեսանելի և ըմբռնելի դարձնում նյութը: Սա միակ ասպարեզն է, որտեղ դրամատիկական երկը գրված է խղճի մտք, անկեղծ անմիջականությամբ, երբ խորությունն չի դրվում մեծ ու փոքրի, սև ու սպիտակի, դավանանքի ու հավատքի միջև և առաջնորդվում է մարդկային առողջ դատողությամբ՝ բոլոր տեսակի ցեղասպանության միջոցները կանխելու սկզբունքով:

Մարդասիրական զգացումն է, որ ուրիշների ապրած-տարած ցավը հասկացող, ըմբռնող շատ ու շատ գրողների և արվեստագետների թևավորել է իրենց ստեղծագործություններով բողոքի ճիչ բարձրացնել բոլոր տեսակի ցեղասպանության երևույթների դեմ: Եվ այս բոլորն արվել ու արվում է տարբեր երկրների գանապան ազգությունների դեմ բռնությունները կանխելու համար:

Միայն Հայոց ցեղասպանության դեմ 1888-ից առ այսօր շուրջ 400 պիես է գրվել: Սա պատկառելի թիվ է մի հարցի շուրջը գրված գեղարվեստական ու դրամատիկական ստեղծագործությունների պատմության մեջ: Այնքան շատ են հայության կրած տառապանքները, որ ցեղասպանության թեմայով գրված և ոչ մի գործ մեկը մյուսին չի կրկնում: Թեև 1900-ական թթ. գրված պիեսներում թեմաների որոշ նմանություն է նկատվում, բայց դրանք համարվում և ոչ թե կրկնում են բովանդակությունը: Հայոց ցեղասպանության և նրա բացասական հետևանքների պատմությանը նվիրված գործերում անվերջանալի դեպքեր կան արձանագրված, որոնք հազարավոր դեպքերից միայն քաղվածքներ են ներկայացնում:

Ահա, այս սրտահույզ, ինչ-որ չափով հետաքրքրող ու հուզիչ թե-

<sup>1</sup> Ազգ (Երևան) 1994, № 97:

ման է, որ գրավել է նաև օտարազգի ազատամիտ մի շարք գրողների, որոնցից որն ականատես, որը տարագիրներից լսած պատմություններից հետաքրքրված, գրիչ են վերցրել ու գրել նրանց կրած անմարդկային տանջանքների ու կոտորածների սոսկալի պատմությունը: Իրենց հնարավորին սահմաններում նրանք ևս դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, որպեսզի կանխվի ցեղասպանության երևույթն առհասարակ աշխարհում:

Հայերի դեմ ծրագրավորված ցեղասպանությանը մեղադրանքի հայտ է ներկայացրել նաև լեհական ծագումով ամերիկյան դրամատուրգ Ռիչարդ Կալինոսկին: Նրա գրած «Հրեշը լուսնի վրա» պիեսը ցեղասպանության տխուր հետևանքների պատկերման եզակի հարց շոշափող գործերից մեկն է: Շատ խորհրդանշական այս վերնագիրը հեղինակը վերցրել է Սուլթան Աբդուլ Համիդի՝ 1896-ին կազմակերպած հայերի կոտորածներից ամիսներ առաջ լուսնի խավարումի պատմությունից, երբ այդ երևույթից զարմացած թե զայրացած օսմանյան բանակը կրակ է բացել լուսնի լույսը փակող «Հրեշի» դեմ:

«Հրեշը լուսնի վրա» պիեսում գործողությունը կատարվում է Ամերիկայի Միլուոքի նահանգում, 1921-1927 թթ.: Կենտրոնական հերոսը՝ 1915-ի ջարդերից փրկված, 24 տարեկան լուսանկարիչ Արամ Թոմասյանը հարազատներին կորցնելուց հետո, մտադրվել է ընտանիք կազմի՝ մերձավորների շրջապատը վերականգնի: Նրա սենյակում դրված է հարազատների խմբանկարը՝ առանց նրանց գլուխների (ընդգծելով նրանց գլխատված լինելը), ովքեր զոհ են գնացել թուրքական յաթաղանին:

Միայնակ Արամը ցանկանում է այդ անգլուխ հարազատներին տեղը նոր՝ կենդանի մարդկանցով համալրել: Այդ նպատակով նա նամակագրությամբ հարսնացու է բերում՝ 15-ամյա Սեդային: Պարզվում է, որ սա իր որոնած աղջիկը չէ, որին ծանոթ է եղել Պոլսի որբանոցից, այլ ուրիշ որբուհի է: Սեդան էլ, ի հիշատակ իր անհիշատակ մանկության, իրեն մխիթարելու համար հետը մի տիկնիկ է պահում:

Այս սիմվոլ-գաղափարով հեղինակը ցույց է տվել իր հերոսների՝ գաղթի, անապատային ճանապարհներով անցած, որբանոցից որբանոց փոխադրված և հազարավոր իրենց նմանների՝ ծնողազուրկ, մանկություն չունեցող, ընտանեկան սեր ու գուրգուրանք չտեսած երեխաների դժբախտ պատմությունը:

Կալինոսկու մասին գրվել է, որ նա որոշ շրջան ամուսնացած է եղել մի հայուհու հետ: Գուցե և վերջինս է ներշնչել նրան գրել այս պատմությունը՝ իրեն հայտնի դրվագներով: Գուցե և հայերի հետ

շփվելով է այդ եզրակացութեան եկել: Տվյալ դեպքում կարևորն այն է, որ նա հոգեպես զգացել է այդ խաթարված սերնդի ողբերգական պատմութիւնը և սրտացալութեամբ պատկերել անմխիթար որբերի անուրախ կյանքը:

Իրենց կյանքի պայմանները մի քիչ կարգավորելով, երկու որբերը ընտանիք են կազմում: Բայց նրանք նոր դժբախտութեան առաջ են կանգնում՝ չեն կարող սերունդ ունենալ և գլխատվածների տեղերը լրացնել: Միտ փոխարեն սառնութիւն է նկատվում երկուսի մոտ: Սեդան ձգտում է սեր արթնացնել Արամի մոտ, որ նա ոչ միայն իր ցավով ապրի, այլև մի քիչ էլ կնոջը տանջող ցավն զգա: Ու մի օր, Սեդան տուն է բերում 12-ամյա խտալացի մի որբ տղայի՝ Վինցենտին և դարձնում իրենց ընտանիքի անդամ:

Սեդայի այս նախաձեռնութեամբ Կալինոսկին մի նոր հայտնութիւն է արել: Հայերի ազգային ողբերգութիւնը կապել է համաշխարհայինի հետ՝ նաև օտար ազգութիւնների որբերի նկատմամբ ևս հոգատարութիւն ցուցաբերելու հարցում:

Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա» դրաման համարվել է 1995-ին գրված 10 լավագույն պիեսներից մեկը, իսկ 1996-ին արժանացել թատերական քննադատների Ամերիկյան ընկերութեան կողմից (Լուիսվիլի թատերական փառատոնին) սահմանված մրցանակի:

Ահա, այս ոչ քաղաքական ուղղվածութեամբ, բայց խորապես քաղաքական հարցեր հետապնդող պիեսն իսկույն գրավել է թատերական գործիչների ուշադրութիւնը: Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա» դրաման առաջին անգամ բեմադրվել է Ամերիկայի Լոնգ Բիչի համալսարանի թատերասրահում, ռեժիսոր Հարրի Մորսի բեմադրութեամբ և բավականին երկար բեմական կյանք ունեցել:

Կալինոսկու պիեսով հետաքրքրվող թատերական գործիչներից առաջիններից մեկը եղել է հայազգի անգլիագիր դրամատուրգ և ռեժիսոր, թատերախմբի ղեկավար Հրանտ Ալյանաքը: 1996-1997 թթ. նա ցեղասպանութեան թեմայով երկու բեմադրութիւն է տվել Տորոնտոյում՝ «Ձենթի գլխարկները» և «Հրեշը լուսնի վրա»: Վերջինս խաղացվել է 1997-ի ապրիլի 26-ին, տեղի Ռոսս Մուրայլ թատրոնում: Ձևավորումը կատարել է Ջիմ Փլաքստոնը, իսկ զգեստները՝ Վիկտորիա Վալլասը: Դերակատարներն են եղել՝ Արամ Թոմասյան – էզովարդ Ռոյը, Սեդա Թոմասյան – թատրոնի և կինոյի հանրահայտ դերասանուհի Արսինե Խանջյանը, Վինցենտ – Ռոզ Վիլսոնը<sup>1</sup>:

Այդ նույն՝ 1997-ին «Հրեշը լուսնի վրա» պիեսը տեղ է գտել նաև

<sup>1</sup> Հանդես գրականութեան և արվեստի (Թեհրան) 2003, № 6, էջ 23:

արգենտինյան թատրոնում, անգլերեն: Խաղացվել է Բուենոս Այրեսում: Արգենտինյան թատրոնում առավել հետաքրքիր բեմադրությունը տեղի է ունեցել 2001-ի հունվարի 3-ից Բուենոս Այրեսում և Մար-դել-Ֆլաթա ամառանոցային քաղաքում: Մեկ ընդ մեջ տրվող ներկայացումների թիվն անցել է հարյուրից<sup>1</sup>: Հետաքրքրական է եղել հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների համար:

Այս բեմադրությունը ակտիվորեն Մանուել Էլզավիանին 1998-ին Փարիզում ականատես լինելով «Հրեշ» անգլերեն և ֆրանսերեն բեմադրություններին, որոշել է ինքն էլ բեմադրել իր հայրենիքում՝ ցուցաբերելով իր ժողովրդի կարեկցանքն ու թուրքական բռնությունների դեմ բողոքի ձայնը: Իսպաներեն թարգմանությունը կատարել է Ալեխանդրո Սանչեսը: Դերակատարները եղել են՝ Արամ Թոմասյան-Մանուել Գալլաուն, Սեդա Թոմասյան-Մայենա Սոլդան, Վինցենտ-13 ամյա Մարտին Սլիփակը, Պարոն-Էմիլիո Դիոնիսին<sup>2</sup>:

«Հրեշը լուսնի վրա» պիեսի բեմադրական աշխատանքներին իրենց մասնակցությունն են ունեցել հայազգի գործիչներ Կարլոս Դոմանյանը (ռեժիսորի օգնական), Սարո Դանիելյանը (երաժշտություն ձևավորող), Ջորջ Թորիկյանը (պարերի երաժշտություն օգնական):

Արգենտինա-ամերիկահայ հանրաձանոթ բանասեր Վարդան Մատթևոսյանը, որը ներկա է եղել «Գազանը լուսնի վրա» պիեսի՝ 2001-ի հուլիսի 12-ի (երկրորդ բեմադրություն) 100-րդ ներկայացմանը Բուենոս Այրեսում, իր ստացած տպավորության մասին գրել է. «մեզի համար բազմաթիվ գեղեցիկ առիթ մըն էր այս նոր բեմադրությունը դիտել: Նշենք, թե վերջինը քիչ մը պիելի հակած է դեպի կատակերգականը՝ քան իր նախորդները: Այսինքն, խաղարկությունը ոչինչ կորսնցուցած է իր արամածիք երանգներն, բայց տեղ-տեղ ճնշիչ մթնոլորտը թեթևացած է երգիծանքի, զվարթախոհության կամ ուրախության պահերու խելացի օգտագործումով... Արամի ու Սեդայի կերպարները՝ բեմին վրա մեզի կերևային հար և նման իրենց հայկական նախատիպերուն»<sup>3</sup>:

Կալինոսկոս «Հրեշը լուսնի վրա» պիեսը բեմադրվել է նաև ֆրանսիական թատրոնում: Այն բեմադրել է թատերական կյանքում ոչ անհայտ ռեժիսոր Իրինա Բրուկը: Պիեսը ֆրանսերենի է թարգմանել Դանիել Լորիզան, ղեկորների և զգեստների ձևավորումը կատարել է Նոյել Ժինոֆրը:

Փարիզյան այս բեմադրությունը խաղացվել է 1998-ի հունվարի

<sup>1</sup> Հառաջ (Փարիզ) 2001, հոկտեմբերի 10:

<sup>2</sup> Ներկայացման ծրագիրը:

<sup>3</sup> Հառաջ (Փարիզ) 2001, հոկտեմբերի 10:

8-ից մինչև փետրվարի 8-ը: Դերերի կատարմամբ Հանդես են եկել տեղի Հայկական և Ֆրանսիական թատրոնների դերասան Սիմոն Աբգարյանը (Արամ Թոմասյան), Կորին Փաբերը (Սեդա Թոմասյան), Գի Տուրայը (Վինցենա): Պարոնի դերակատարներն են եղել՝ Զոնաթան Հադգադը և Քրիստիան Զոսսը:

Իրինա Բրուկի բեմադրությամբ «Հրեշը լուսնի վրա» պիեսը նախապես խաղացվել է Լոնդոնում, ապա՝ Լոզանում, Բեյրութում, Երևանում: Բեյրութում նրա ներկայացումներն ընթացել են 1999-ի մայիսի 26-ից մինչև Հունիսի 8-ը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի հովանավորությամբ: Ներկայացումների օրերին կազմակերպվել է Հայկական հին լուսանկարների և ազգագրական իրերի տպավորիչ ցուցահանդես, որը պիեսի բովանդակությամբ Համահունչ լրացումով խորը տպավորություն է թողել Հանդիսատեսների սրտերում<sup>1</sup>:

Հաջորդականություն առումով Ռիչարդ Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա» պիեսն ընդարձակելով իր բեմադրական շրջանակների տարածքը, մուտք է գործել նաև ռուսական թատրոն: Այն առաջին անգամ բեմադրվել է Մոսկվայի Զելսովի անվան Գեղարվեստական թատրոնում: Այս պիեսը ռուսական թատրոնում բեմ Հանելու Հետ կապված Հարցի առաջադրողն ու լուծողը եղել է մեկ մարդ՝ Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանը:

Զելսովի անվան թատրոնում «Հրեշը լուսնի վրա» պիեսի բեմադրությունը հերթական-սեզոնային բնույթ չի կրել, այլ մտցվել է Ստանիսլավսկու անվան միջազգային Փոնդի նախաձեռնությամբ կազմակերպված «Ստանիսլավսկու խաղաշրջան» փառատոնի մեջ:

«Հրեշը լուսնի վրա» պիեսը անգլերենից ռուսերենի է թարգմանել Ալեքսանդր Պոպովը, իսկ գեղարվեստական և երաժշտական ձևավորումները կատարել է ինքը՝ բեմադրող-ռեժիսոր Գրիգորյանը: Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի բեմադրության առաջին ներկայացումը տեղի է ունեցել 2004-ի նոյեմբերի 19-ին:

Պիեսի ոգուց բխող աղքատիկ ձևավորումը, դերակատարների ախրաշունչ խոսքի միասնությունը մոտավոր պատկերացում է տվել երիտասարդ որբ ամուսինների անցյալից մնացած տխուր հիշողությունների և մեր ժամանակներում դեռևս սարսափները տեսած ու կրած մարդկանց տառապալից կյանքի մասին:

Պատմողը (գերակատար՝ Սերգեյ Սոսնովսկի) Հանդիսականներին ցույց է տալիս ընտանեկան մի լուսանկար, ուր պատկերված են այդ

<sup>1</sup> Ալիք (Թեհրան) 1999, № 117:

ընտանիքի անդամներն՝ առանց գլուխներին: Միայն հոր նկարի գլխի տեղը փակցված է նոր մարդու գլուխ, որն Արամ Թոմասյանի (ղերակատար Սերգեյ Ուզրյուժով) համար դարձել է սլաշտամուկի սրբանկար՝ նոր կյանքով վերապրելու խորհրդանիշ:

Երիտասարդ կինը՝ Սեդան (ղերակատար Յանա Կոլեսնիչենկո) մանկութան տարիներին տեսած սարսափներն ու սպանությունների դառը հիշողությունը սրտում բռն դրած (մորը խաչել են հավատքը չուրանալու համար, քրոջը բռնաբարել, ինքն անկարող է զավակ ունենալ) տառապում է անցյալի հուշերից ու ներկայի անճարակությունից:

Եվ այսպիսի վիճակից դուրս գալու համար, ամուսինները հոգեբանորեն փրկում են մի այլ փոքրիկ որբի՝ Վինցենտին (Անտոն Միխայլով): Սեդան հոգատար մոր պես խնամում է անօթևան որբ երեխային, բարիք անելով մխիթարվում:

Պիեսի թեման այնքան հոգեհարազատ է եղել ղերակատարներին, որ նրանցից՝ Կոլեսնիչենկոն հայտարարել է, որ այդ ներկայացման մեջ «ես հայ եմ»<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ, թե՛ ռեժիսորի անկեղծ վկայությունամբ և թե՛ մամուլի գնահատությունամբ, բեմադրությունը մեծ հաջողություն է ունեցել և հետաքրքրություն առաջ բերել հանդիսատեսների մոտ:

Մոսկովյան բեմադրությունը հաջողությունը ոգևորել է Գեղարվեստական թատրոնի ղեկավարությունը և նրանք այդ ներկայացումով Հյուրախաղերի են մեկնել Պետերբուրգ և Երևան (օգոստոս, 2011):

Մոսկվայից հետո Ալ. Գրիգորյանը «Հրեշը լուսնի վրա» պիեսը ապրիլյան եղեռնի 90-րդ տարելիցին՝ 2005-ի ապրիլի 21-ին բեմադրել է նաև Երևանի ռուսական թատրոնում: Զեպտորման մեջ կենցաղային բնորոշ առարկաներ մտցնելով, նա ներկայացմանը հայկականություն տեսք է տվել ու մթնոլորտ ստեղծել, հարազատորեն տեղ հասցրել պիեսի հերոսների հոգեբանական բացահայտումներն ու փաղափարական նպատակասլացությունը:

«Հրեշը լուսնի վրա» պիեսի երևանյան բեմադրությունը մասնակիցներն են եղել՝ Արամ Թոմասյան – Արման Ղազարյան, Սեդա Թոմասյան – Աննա Բալանդինա, Վինցենտ – Սաշա Գրիգորյան, Պարոն – Սերգեյ Մադալյան: Ավելի քան տասը տարի բեմադրությունը շարունակում է իր կյանքը: Վինցենտի նոր ղերակատարն է Արամ Գասպարյանը:

«Հրեշը լուսնի վրա» պիեսի բեմադրությամբ Երևանի Ստանիսլավսկու անվան թատրոնը 2005-ին մասնակցել է Բրեստում (Բելո-

<sup>1</sup> Չփար (Երևան) 2008, № 41:

ռուսիա) տեղի ունեցած «Բելալա վեժա» թատերական փառատոնին: 32 երկրների թատրոնների շարքում երևանյան թատրոնի բեմադրությունը բարձր գնահատականի է արժանացել փառատոնի կազմակերպիչների կողմից և նրանց խնդրանքով երկու անգամ կրկնվել բարձր դասարանների աշակերտության համար:

Բելոռուսիայում Հայաստանի հանրապետության դեսպան Սուրեն Հարությունյանի հրավերով երևանցիները «Հրեշի» բեմադրությունը ցուցադրել են նաև Մինսկում<sup>1</sup>:

Ա. Գրիգորյանի բեմադրությունների հաջողության համբավը հասել է Հեռավոր Արևելք: Զիտայի (Ռուսաստան) երկրամասային դրամատիկական թատրոնը հրավիրել է նրան՝ իրենց թատրոնում ևս բեմադրել Կալինոսկոլ պիեսը: Բեմադրությունն իրականացել է: Տարիներ անց էլ Գրիգորյանը կապ է պահպանում գերակատարների հետ, որոնք են՝ Վլադիմիր Ալեքսանդր, Տատյանա Իվանովան, Ստեպան Խրյակովը և Սերգեյ Յուլինը<sup>2</sup>:

Բեմական այսպիսի ճանապարհ անցած պիեսը, մանավանդ որ այն նվիրված է ցեղասպանության հետևանքների պատճառով իրենց կյանքը խաթարված երկու որբերի հուսահատական վիճակին, չէր կարող անտարբեր թողնել հայ թատերական այլ գործիչների ևս: Այդ պիեսի հայերեն բեմադրության առաջին նախաձեռնողը եղել է շնորհաշատ օնեֆիսոր Նիկոլայ Ծատուրյանը:

«Հրեշը լուսնի վրա» (կամ «Գազանը լուսնի վրա») պիեսը Ծատուրյանն առաջին անգամ բեմադրել է Երևանի «Մեարո» թատրոնում, 2001-ի դեկտեմբերի 14-ին: Նկարչական ձևավորումը կատարել է Գարիկ Եվանգոլյանը, իսկ դերակատարները եղել են՝ Արամ-Լևոն Հովհաննիսյան, Սեդա - Կարինե Եսայան, Կրտսեր Վենսան - Պարոն Պարոնյան, Ավագ Վենսան - Կարեն Զանիրեկյան:

Ծատուրյանը թարգմանելով ու բեմադրելով «Հրեշը լուսնի վրա» պիեսը, որոշ «ուզողում է մտցրել» Կալինոսկոլ դրամայում: Լինելով խորապես հայերենասեր անձնավորություն, նա ընդդիմացել է ամերիկյան դրամատուրգին՝ թե աշխարհը լի է հայ որբերով, նրանց թողած, օտարազգի որբ է բերում հայի տուն: Կալինոսկին համամարդկային բնույթ տալով իր գործին, հայի պես չի մտածել, իսկ Ծատուրյանն էլ իր սրտացավությունը յուրովի է ցուցաբերել: Այնպես որ, ոչ մեկին չի կարելի հանդիմանել իր ճշմարտության մեջ:

Այս առնչությամբ, Ծատուրյանը մի հարցազրույցում հետևյալն է հայտնել. «Այս ներկայացումը ժողովուրդը սիրեց, քանի որ պատմությունը հուզեց իրենց: Մեր ներկայացումը մյուս «Հրեշներից»

<sup>1</sup> Голос Армении (Երևան) 2005, № 112:

<sup>2</sup> Վկայում է Ալեքսանդր Գրիգորյանը:

տարբերվում է, ես շատ եմ փոխել պիեսը: Ֆինալը լրիվ ուրիշ է, լավատեսական ու երջանիկ չէ: Այդ ետեղեռնյան ողջ պատմության ընթացքում խոսքը գնում է նրա մասին, որ մենք պետք է մեր ազգը շարունակենք: Եվ երիտասարդ գույգը խելացի մի երեխա է որդեգրում: Դա սուտ է հնչում»<sup>1</sup>:

«Հրեշը լուսնի վրա» պիեսը Ծատուրյանը երկրորդ անգամ բեմադրել է Գյումրիի Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնում, 2005-ին: Ձևավորումները կատարել են Գ. Եվանդուլյանը (նկարչական), Գ. Քևոսյանը և Հ. Բոխյանը (երաժշտությունը), Ռ. Տոնիկյանը (երաժշտական ձևավորումը), Ս. Բեջանյանը (զգեստները):

Այս բեմադրություն մեջ էլ Կարեն Զանիրեկյանը հանդես է եկել ծերացած Վենսանի դերում – սառը կշռադատված եղանակով պատմել եղելությունը: Իսկ այդ եղելություն հերոսներն ու դերակատարները եղել են՝ Արամ Թոմասյանը – Հովհաննես Հովհաննիսյան և Բաբկին Չոբանյան, Սեդա Թոմասյանը – Դիանա Մացոյան և Հասմիկ Սուվարյան, Վենսան կրտսերը – Դերենիկ Թոսունյան և Արամ Գրիգորյան:

2005-ին Նիկոլայ Ծատուրյանն այս բեմադրությունը ներկայացրել է Հալեպում (մարտի 18-19-ին) և լավ ընդունելություն գտել այն քաղաքում, ուր 1915-ին հալեպահայությունը սատարում էր անտեր-անտիրական որբերին ու գաղթականներին: Իսկ այս վերջին տարիներին հալեպահայությունն ինքն է հավասարվել 1915-ի վիճակին: Նրա ազգաբնակչությունը ահագնող պատերազմի պատճառով օրեցօր լքում է քաղաքը: Ահա ցեղասպանություն անպատժելիություն հետևանքները:

«Հրեշը լուսնի վրա» պիեսը նույն 2005-ին գյումրեցիները ներկայացրել են նաև Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում:

Հայոց ցեղասպանություն հիշատակի 90-րդ տարելիցի առթիվ, «Հրեշը լուսնի վրա» պիեսը 2005-ին նոր շնչառություն է ստացել Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում, Հակոբ Ղազանչյանի բեմադրությամբ: Ներկայացման մասնակիցներն են եղել՝ Իշխան Ղարիբյանը և Արա Մաթևոսյանը – Արամ Թոմասյան, Մարիամ Ղազանչյանը – Սեդա Թոմասյան, Գ-ամյա Վահագն Արեյանը – Վենսան:

Ռիչարդ Կալինոսկիի «Հրեշը լուսնի վրա» դրաման իր մարդասիրական բովանդակությամբ արժանացել է աշխարհի մի շարք երկրների թատերական գործիչների և բյուրավոր հանդիսատեսների ջերմ ուշադրությունը, թարգմանվել ու բեմադրվել մի շարք լեզուներով և հետաքրքիր պատմություն ստեղծել:

<sup>1</sup> 168 ժամ (Երևան) 2005, № 17:

«Հրեշը լուսնի վրա» պիեսի բեմադրությունների Հաջողություններից ոգևորված, մեկ տասնամյակ անց, Կալինոսկին գրել է իր երկրորդ պիեսը՝ դարձյալ նվիրված Հայոց ցեղասպանության թեմային: Դա նրա «A Crooked Man» («Կորացած մարդը») դրաման է:

«Հրեշի» բեմադրության կապակցությունում, Կալինոսկին ստեղծագործական կապերի մեջ լինելով Տորոնտոյի թատրոնի անվանի, գործիչ Հրանդ Ալյանաքի հետ, իր այս նոր պիեսի առաջին բեմադրությունը նրան է վստահել:

Կալինոսկու «Կորացած մարդը» պիեսն իր բեմական կյանքն սկսել է Կանադայում՝ 2006-ին, Տորոնտոյում, Հրանդ Ալյանաքի անգլիական թատրոնի ուժերով: Նախքան բեմադրությունը, Հայ Կենտրոնի Համազգայինի «Հ. Մանուկյան» գրադարանում, հեղինակի ներկայությունում պիեսն ընթերցվել, քննարկվել և հավանության է արժանացել: Որոշվել է պիեսից մի հատված ներկայացնել՝ մասնակցությունում գլխավոր հերոսի՝ Հակոբ Հակոբյանի, նրա դուստր Անահիտի (Արսինե Խանջյան) և թոռան՝ Ալեքսանի (Դավիթ Ալիա):

«Կորացած մարդը» պիեսը Կալինոսկին գրել է Սողոմոն Թեհլիրյանի դատավարություն տպավորության տակ, քանի որ նրա հերոսի գործողությունները շատ նման են եղել իր հերոսի կյանքին: Վերջինս ականատես լինելով իր հարազատների սպանությանը, որոշել է հետապնդել ոճրագործներին և ոչնչացնել նրանց, դատապարտվել ու արդարացվելով ազատ արձակվել:

Հետադայում փոխադրվելով Ամերիկա, Հակոբ Հակոբյանն ընտանիք է կազմել: Բայց անցյալում այս հարգված ու անուն հանած մարդը, հասուն տարիքում մնացել է միայնակ, ապրում է իր անցյալի հուշերով: Աղջիկը՝ Անահիտն ամուսնացել է օտարի հետ, իրենով չի հետաքրքրվում: Նրա որդի Ալեքսանը մի քանի տարվա բացակայությունից հետո գալիս է պապի մոտ, բայց ոչ թե նրա կյանքով հետաքրքրվելու, այլ նրա հիշողությունները գրի առնելու համար: Եվ այսպես մոռացված մարդը հոգեբանական վայրիվերումներով անց է կացնում իր կյանքի մնացած մասը:

Հակոբ Հակոբյանը եղեռնի շրջանում կորցրել է ոչ միայն հարազատներին, այլև ֆիզիկական առողջությունը: Կոտորածից փրկվելու հույսով, տանիքից ընկել, ոտքը ջարդել է: Սա էլ հիմք է ծառայել վերնագրի համար՝ կորացած, խեղված մարդը:

Պիեսի թեման հարազատ է եղել նաև բեմադրող Ալյանաքին: Նրա հայրն էլ երեք տարեկանում կորցրել է հարազատներին, որբացել, ինչ-ինչ հանգամանքներով հայտնվել Սուգանում, որտեղ էլ հետա-

գալու՞մ ծնվել է Հրանդը: Կերպարի հարազատությունը Ալյանաքին նորից վերադարձրել է դեպի դերասանական աշխարհ և նա կատարել է ամերիկաբնակ 88-ամյա Հակոբ Հակոբյանի դերը:

«Կորացած մարդը» պիեսի առաջին բեմադրությունը միջազգային թատրոնում տեղի է ունեցել Հ. Ալյանաքի ղեկավարությամբ, 2008 թվականի փետրվարի 20-ին և շարունակվել մինչև մարտի 2-ը Տորոնտոյի Թատերական կենտրոնում: Ըստ որում, գլխավոր դերերի կատարման համար Ալյանաքը ներգրավել է իր և «Արարատ» թատերախմբերի հայազգի դերասանների, որոնք ավելի հարազատորեն կարող էին հանդիսատեսին հասցնել հայի կրած դառնություններն ու տառապանքները, ազգային արժատներից կտրվելու պատմությունը:

Պիեսը բազմամարդ լինելով, դերակատարներից ոմանք խաղացել են մի քանի դերեր: Այսպես՝ Արաքսի Արսլանյանը (Համազգայինի թատերախմբից) – Հակոբի դուստր Անահիտ, դատավարության ժամանակ վկայություն տվող գերմանացի տանտիկին, թուրք կին, կուլը կին:

«Արարատ» խմբի դերասաններից՝ Կարեն Պոյաճյանը – գլխավոր դերակատարներից մեկը, Կարլո Հսաճյանը – Երիտասարդ Հակոբ, դոքտոր Շմիթ, Պաշտպան փաստաբան, Մայք Ղազարյանը – Մհճմետ փաշա, Դատավոր, Դատապարտող, Փաստաբան:

Ներկայացումն ընթացել է առանց ընդմիջման<sup>1</sup>:

Կալինոսկիի «Կորացած մարդը» պիեսի հասարակական քաղաքական նշանակություն մասին Մոնրեալի «Հորիզոն» թերթի աշխատակից Գալուստ Պապյանը գրել է. «Այս աշխարհը պիտի չփոխվի մեկ թատերախաղով... բայց պիտի արժարժվի Ցեղասպանության ոճիրն ու դայն ուրացողի շնականությունը: Հանգիստ պիտի չլծողունք աշխարհի խիղճը մինչև Հայ Դատի արդար լուծումն»:

Մենք շարունակելու ենք մնալ պատենչներու վրա»<sup>2</sup>:

1915-ի Հայոց Մեծ եղեռնից ողջ մնացած ու ահաբեկված սերնդի ներկայացուցիչների մի զգալի մասն էլ փրկություն է գտել Լատինական Ամերիկայի երկրներում: Հային հատուկ ազնիվ ծառայություն ու աշխատասիրություն մերվելով տեղական ազգաբնակչության հետ, նպաստել են իրենց նոր բնակավայր երկրի բարգավաճմանը գրեթե բոլոր ասպարեզներում: Օտար միջավայրում իրենց ազգային դեմքը պահպանելու նպատակով կազմակերպել են զանազան ընկերություններ ու միություններ և կյանքն առաջ տարել:

<sup>1</sup> Հորիզոն (Մոնրեալ) 2008, № 43:

<sup>2</sup> Նույն տեղում, № 37:

Լատինական Ամերիկայի երկրներում հայկական թատերական կյանքն սկզբնավորվել է 1920-ական թվականին գաղթած հայերի ջանքերով: Նրանք զարգացող նոր սերնդի հետ նպաստել են ինչպես աղգային, այնպես էլ օտարերկրյա արվեստների զարգացմանը: Ստեղծվել է համագործակցութայան փոխադարձ մի նոր կապ, որը շարունակվում է ահա մեկ դար:

Ստեղծագործական համագործակցութայան այդպիսի հիշարժան մի կապ է ստեղծվել արգենտինացիների և Արգենտինայում ապրող ու գործող հայերի միջև: Այդ կապերի օղակներից մեկն էլ արգենտինյան դրամատուրգ Կլաուդիա Փինեյրոյի գրած «Նույն կանաչ ծառը» վերնագրով դրամայի հրապարակ գալն է: Ծանոթ լինելով Հայոց ցեղասպանութայան դառնագին պատմութայանը, նա էլ իր հերթին է արձագանքել ու դատապարտել թուրքական բռնապետութայան բարբարոսական արարքները:

Պիեսի բեմադրութայան նախաձեռնությունն ստանձնել է Բուենոս Այրեսի «Լուսիա Հայրապետյան» հիմնարկությունը՝ իր հերթին աջակցելով Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութայան ճանաչման ընդունման պարտադրանքը հետապնդողների թափած ջանքերին:

«Նույն կանաչ ծառը» խորհրդանշական վերնագրով այս պիեսը բեմադրվել է 2006-ին, Բուենոս Այրեսի «Փայրո» թատրոնում: Գործող անձինք երկուսն են՝ հայ ընտանիքի այրի մայրը և նրա երիտասարդ փաստաբան աղջիկը: Անքուն գիշերներից մեկի ժամանակ, խորը հոգեբանական զրույց է տեղի ունենում նրանց միջև մարդկային ողբերգութայան շուրջը:

Մայրը պատմում է, որ Մեծ եղեռնի ժամանակ իրենց բազմադամ ընտանիքից ողջ են մնացել միայն ինքն ու իր մայր Դորան: 1920-ակ. թթ. նրանք գաղթել են Հարավային Ամերիկա և հաստատվել Արգենտինայում: Նա, ոչ առանց հուզմունքի, աղջկան պատմում է հայերի ջարդի, բռնությունների, ավերածությունների, վերջապես՝ գաղթի մասին: Ասես մի սովորական պատմություն է պատմում, որպիսին կարելի է լսել եղեռնից փրկված բոլոր փախստականների մասին:

Հայությունից, ազգակիցներից չկտրվելու նպատակով այրի կինն ապրել է հայկական թաղամասում, սենյակը կահավորել է հայկական հարդարանքով, խոսել է հայերեն, հայկական երաժշտություն լսել... Ամուսնու հետ այցելել են Արևմտյան Հայաստան, նախնիների ծննդավայրը տեսնելու:

Մոր զրույցներին ուշադիր ունկնդիր իրավաբան Սիլվան որոշել է նվիրվել ցեղասպանութայան բացահայտմանն ու դատապարտումի

խնդիր բարձրացնել: Կանաչ ծառի պես մշտապես ներկա է եղել Հիշողությունը: Պիեսում առավել հնչեղ երանգ է ստացել ողբերգությունը, իսկ բողոքի և պայքարի կոչը թողնվել հանդիսատեսին:

Ինչպես «Նույն կանաչ ծառը» պիեսի բեմադրողը, այնպես էլ երկու դերակատար դերասանուհիները Արգենտինայի առաջնակարգ արվեստագիտուհիներ են եղել: Իսկ «Լուսիա Հայրապետյան» հիմնարկությունն այդ ներկայացումով ոգեկոչել է հանգուցյալ փաստաբանուհի Լուսիա Հայրապետյանի հիշատակը և բեմը դարձրել հայերի ողբերգության նկատմամբ օտար ժողովուրդների համակրանքը կամրջող դործողության մի բարի ասպարեզ<sup>1</sup>:

Ամերիկյան մի այլ դրամատուրգ, որի արմատներում ցեղասպանությունից փրկվածի հայկականություն կա, նա նույնպես նոր ճշմարտություններ է ներկայացրել ամերիկյան ժողովրդին: Այդ նորությունների հետ ծանոթացնողը դրամատուրգ Ջոյս Վան Դայկն է, որը ցեղասպանությունից փրկված և Ամերիկա հաստատված տատիկից լսած պատմությունների հիման վրա գրել է «Աքսորվածները» անգլերեն պիեսը:

«Աքսորվածներն» ընդհանրացնող վերնագրով պիեսի հերոսները երկուսն են՝ Վիկտորյան (հայկական անունով՝ Էլմաս) և Վարդերը, որոնք էլ առաջ են տանում գործողությունը: Երկուսն էլ Մեզիբեի (Սարբերդի մոտ) բնակիչներ են եղել: Մեծ եղեռնի ժամանակ կորցրել են իրենց բազմանդամ ընտանիքները և մեծ նեղություններ կրելով հասել Ամերիկա: Հարազատների հիշատակը վառ պահելու նպատակով նոր ընտանիքներ են կազմել:

«Աքսորվածներն» առաջին անգամ բնագրով ներկայացվել է 2012-ին Բոստոնում: Հայոց ցեղասպանության կոտորածներից փրկվածների հետագա կյանքի այս թեման շատ բնորոշ լինելով հայրության համար, նրանով հետաքրքրվել են նաև Երևանյան երիտասարդ թատերական գործիչները: Եվ ահա, 2014-ի հոկտեմբերի 3-ին այն անգլերեն ընթերցմամբ ներկայացվել է Երևանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնի դահլիճում: Նրա բեմադրությունն իրագործել է մշակույթի կենտրոնի տնօրեն, ռեժիսոր Կարինե Դավթյանը «Համալսարանական» թատրոն-ստուդիայի ուժերով<sup>2</sup>:

Տարեց-տարի ընդլայնվում է ոչ միայն Հայոց ցեղասպանության և նրա հետևանքների մասին գրված պիեսների թիվը, այլև իրենց ազգային ակունքները չմոռացող օտարազիր գրողների ու դրամատուրգների քանակը: Վերջիններիս թվին է պատկանում ամերիկյան

<sup>1</sup> Հառաջ (Փարիզ) 2006, № 21552:

<sup>2</sup> Երևանի համալսարան (Երևան), 2014, № 9:

գրամատուրգ Ադրիանա Սևան Նիկոլսը, որի պապն ու տատը եղեռնից փրկվել ու հաստատվել են Ամերիկայում: 2009 թվականին Ա.Ս. Նիկոլսը գալով Հայաստան, իր մեջ հայուլթյան նոր լիցք է ստացել և գրել «Գիշեր Երզնկայի վրա» պիեսը, իր հարազատների ճակատագրի օրինակով ընդհանրացրել մի հայ ընտանիքի պատմությունը, որի հերոսները, ինչպես վերնագիրն է հայտնում, երզնկացիներ են եղել: («Night Over Erzinga»):

«Գիշեր Երզնկայի վրա» պիեսն անգլերենից հայերենի է թարգմանել ու Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում բեմադրել Հայաստանյան թատրոնների նախկին, իսկ վերջին տասնամյակներում ամերիկահայ (Նյու Յորք) թատրոնների ռեժիսոր Վարդան Գառնիկին (Հովհաննիսյան): Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 2014-ի դեկտեմբերի 19-ին, օժանդակությամբ Վարդիվար Բեշիշյանի (նկարչական ձևավորում), Տիգրան Նանյանի (երաժշտական ձևավորում), Նաիրա Հովհաննիսյանի (պարերի բեմադրություն):

Բավականին շատ են պիեսի կերպարները, ինչը վկայում է հեղինակի մտահղացումների առատությունը, մանավանդ, որ որոշ կերպարներ պատկերվում են երիտասարդ և հասուն տարիքում: Այս իսկ առումով էլ՝ որոշ դերակատարներ խաղում են մի քանի դեր: Այսպես՝ Արտավազդ Օղիդանյան (թերևս՝ Օզիդանյան) – Իշխան Ղարիբյան, Ալիս Օղիդանյան և Ավա «Աղավնի» (հավանաբար՝ հայկական անունը) – Սիրանուշ Լազյան, Արամ և Տարեց Արտավազդ – Տրդատ Մակարյան, Վերոնիկա և Տարեց Ալիս – Լարիսա Ղևոնդյան, Բենվենիտո, հիվանդապահ և վանական – Վիգեն Թադևոսյան, Թուրք զինվոր և Խալիլ – Ապավին Ալեքսանյան, Բժիշկ և Մեծ Հայր – Սամվել Դանիելյան, Մարինե և Սահիպա – Գոհար Կարապետյան, Տարեց էսթրեա – Շուշանիկ Ղազարյան, Հիվանդապահուհի – Անի Բայաթյան, Գեղեցիկ կին, Բեմբի և Սոպրանո – Անի Վարդանյան, Ոստիկան, Ալբերտո և Զոնի Զիուրլը – Կոստանդին Կոզմանով, Փոքր Աղավնի և Կարինե – Նելլի Խաչատրյան, Անուշիկ և Փոքր էսթրեա – Մարի Կարապետյան:

Թատրոնի գլխավոր ռեժիսոր Հակոբ Ղազանչյանին, բեմադրող Վարդան Գառնիկին և մասնակիցներին ուղղած իր շնորհակալական խոսքն Ադրիանա Սևան Նիկոլսն ավարտել է «Շատ, շատ շնորհակալություն» հայերեն բառերն անգլերեն տառերով գրելով<sup>1</sup>:

<sup>1</sup> Ներկայացման ծրագիրը:

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Հայերի նկատմամբ թաթար-ադրբեջանցիների կողմից ցեղասպանության քողարկված երևույթների վարքագիծը վերջապես բացահայտորեն երևան եկավ դարաբաղյան ազատագրական պայքարի ժամանակ և շարունակվում է մինչև օրս: Ավելի ճիշտ կլիներ ասել՝ Ղարաբաղյան շարժումն սկսվեց Ադրբեջանի կողմից ցեղասպանության փորձերը դատապարտելու գործընթացում:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայերի նկատմամբ ատեղությունն ու մահվան սպառնալիքները ջրի երես ելան Թուրքիայի արբանյակ Ադրբեջանում: Թուրքերի կատարած վայրագություններն օրինակելի դասեր էին Ադրբեջանի կառավարության դեկավարության համար: Վերջիններս էլ չուշացրին լիովին դրսևորելու իրենց իսկական դեմքն ու ոճրագործության տարբեր ձևերի ընդունակությունները: Տասնամյակներ շարունակ՝ սուս ու փուս, տարբեր եղանակներով սահմանափակելով Հայերի աշխատանքային բնագավառները, պատճառ են դարձել հարյուրավոր, եթե ոչ հազարավոր առաջնակարգ մասնագետների արտագաղթին իրենց ծննդավայրից կամ աշխատավայրից:

Որպեսզի ավելի հավաստի պատկերացնենք թուրք-թաթար-ադրբեջանցիների դարավոր ատեղությունը Հայերի նկատմամբ, բերենք տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կատարված մի երևույթի երեք ցայտուն օրինակ:

1. 1881-ի փետրվարի 27-ի դիշերը Ագուլիսի թուրքերը հարձակում են գործել տեղի Ս. Շամպոն եկեղեցու ծեր և միայնակ քահանա Տեր Սիմոնի տան վրա, մորթել նրան և ունեցած-չունեցածը հափշտակել:

Այս իրողության առիթով, «Մեղու Հայաստանի» թերթի ագուլիսի թղթակից Վիշապագունը գրել է. «Զարմանալի վայրենի են

այստեղի թուրքերը, ապրում են հայով, մի կտոր հաց են դտնում հայի միջնորդութամբ և յուրյանց երախտագիտությունը հայտնում են սպանությամբ... իսկ հայը, ազուլեցի հայը ձեռքերը խաչած դողում է թուրքից»<sup>1</sup>:

2. 1906-ի հուլիսի 12-ին Շուշիում թուրքերը կտրել են Սահակ անունով մի երիտասարդ գինվորի գլուխը քնած ժամանակ<sup>2</sup>:

3. 2004-ին, Բուդապեշտում ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովը գիշերը ներս է մտել հայ սպա Գուրգեն Մարգարյանի ննջասենյակը և քնած ժամանակ կացնահարել նրան: 30 տարվա առանց ներման դատապարտված մարդասպանին Հունդարական կառավարությունը հանձնել է Ադրբեջանին, որտեղ նրան մեծարել են ու փառքի արժանացրել:

Եթե քաղաքակիրթ Եվրոպան, իր սրտում կատարված դժոխային այս արարքը անպատիժ է թողնում, էլ ո՞ւմ մոտ գտնենք արդարությունը:

Մի ժամանակ Բաքվում շատ էր կատարվում հայերի և ադրբեջանցիների բարեկամությանը նվիրված մի կրգ, որի մեջ այսպիսի տողեր կային՝

Բյուռ, Արագ, Արարատ,  
Գյոզալ դըր բու հայաթ,  
Գարգաշ օլուբ Հայաստան,  
Ազարբայջան...

Հայաստանին եղբայրացած այդ դարգաշը (եղբայր) ո՞նց միանգամից դարձավ դուշման (թշնամի) ու դեռ շարունակում է իր թշնամական արարքները՝ զոհեր խլում մեր ազատարար բանակի շարքերից:

Երկու թուրքական պետությունների համագործակցությունը վաղեմի պատմություն ունի: Սկսել է բացահայտ բնույթ կրել դեռևս 1918 թվականի կեսերից: Բաքվի մուսավաթական կառավարությունն ամեն կերպ խանգարել է Ռուսաստանի օգնությունը Բաքվի կոմունայի գործունեությանը և ի վերջո հասել նրա անկմանը: Ռուսաստանի ժողովրդատի կողմից Բաքվի խորհրդի նախագահ և Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակված Ստեփան Շահումյանը դիմադրության հանդիպելով մուսավաթականների և էսերների կողմից, ինչպես նաև նկատի ունենալով Օսմանյան թուրքերի և անգլիացիների հետագա մուտքը Բաքու, հարկադրված է լինում դադար-

<sup>1</sup> Մեղու Հայաստանի (Թիֆլիս) 1881, № 40:

<sup>2</sup> Ռագմիկ (Ֆիլիպս) 1906, № 83:

րեցնել Կոմունայի գործունեությունը: Թեև զորավար Անդրանիկն առաջարկել էր իր օգնությունը, բայց բարդ իրավիճակի պայմաններում հրաժարվել են նրա օժանդակությունից:

1918-ին Անդրանիկն իր խմբով Բաքվին օգնելու նպատակով Զանգեզուր գնալու ճանապարհին, հանդիպելով նախիջևանցի թուրքերի դիմադրությանը, խիստ ջարդ էր տվել: Եվ այդ հարվածը տասնամյակներ շարունակ չէր մոռացվել Խորհրդային Նախիջևանի իշխանավորների կողմից:

1984-ին Նախիջևանի ինքնավար հանրապետության Մշակույթի նախարարութան պատվերով Լիտվայի Կառնաս քաղաքում 1000 օրինակ տպաքանակով ռուսերեն տպագրվել է «Նախիջևանն այսօր» տեղեկատվական բուկլետ, ուր Անդրանիկի վերաբերյալ գրված է. «Борьба за советскую власть в Нахичевани в 1918 г. была осложнена турецкой оккупацией. Весной и летом 1918 г. население края пережило ужасы от грабительских, разрушительских действий банд Андроника»<sup>1</sup>.

Բաքվի կոմունային (խորհրդային իշխանութայն կղզյակն Անդրկովկասում) փրկելու համար իր օգնությունն առաջարկող Անդրանիկն ինչո՞ւ պետք է դեմ լիներ Նախիջևանում խորհրդային կարգեր հաստատելուն: Սա դեռ քիչ համարելով՝ Անդրանիկին և նրա ազատարար ջոկատին անվանել են բանդիտներ, նրանց վզին փաթաթել կողոպտիչների ու ավերածություններ կազմակերպողների մականուններ:

Այսքանով չի ավարտվել Անդրանիկի դեմ հերյուրանքների շարանը: 1965-ի փետրվարին Անդրանիկի ծննդյան 100-ամյակը նշվել է միայն Բաքվի «Կոմունիստ» (հայերեն) թերթում՝ տպագրելով Անդրանիկի հեռագիրը Շահումյանին: Այդ նույն թվականի հունիսին Բաքվում հյուրախաղերով հանդես է եկել Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Աբելյանի անվան դրամատիկական թատրոնը, որի խաղացանկում եղել է նաև Գ. Գևորգյանի «Աշոտ Երկաթ» դրաման: Աշոտ Երկաթի դերակատար Վլադիմիր Գրիգորյանը պատմում էր, թե պիեսում մի տեղ կար, ուր արտասանվում էր «անդրանիկ» բառը: Ըստ երևույթին դահլիճում ադրբեջանցիներ լինելով՝ անդրանիկ բառը լսելուն պես ազմուկ են բարձրացրել և խանդարել ներկայացման ընթացքը:

Այդ շրջանում գործով Բաքվում լինելով՝ գնացել էի «Գրական

<sup>1</sup> Г. Мамедов, Нахичевань сегодня, Каунас, 1984:

Ագրբեջան» Հանդեսի խմբագրութիւնը՝ Հին ընկերներին տեսնելու: Հանդեսի խմբագիր, բանաստեղծ Սամվել Գրիգորյանը երկիմաստ խոսք ասաց. «Ձե՛ս պատկերացնի թե Հանդեսի հետ ինչ կկատարվեր, եթե Անդրանիկի մասին հողված տպագրերի, կփակվեր»:

Նախիջևանը բռնադրավող Օսմանյան թուրքերի՝ Բաքվին մոտենալու վտանգը մեծ հարված հասցրեց տեղի քաղաքական-տնտեսական կյանքի քայքայմանը: Մինչև թուրքերի Բաքու ներխուժումը՝ 1918-ի սեպտեմբերի 15-ը, թուրքական ահաբեկչութեան հետևանքներին ծանոթ շատ հայեր, այդ թվում և 1915-ից գաղթականներ, գլուխներն առել-փախել են տարբեր վայրեր, իսկ քաղաքում մնացած հայերից 30.000-ը զոհ են դնացել կոտորածին:

Այդ խառը շրջանում Բաքվից հեռացել են նաև շատ թատերական գործիչներ: Սիրանուշն աղջկա և թոռան հետ (նախապես Շահումյանին դիմած լինելով) փոխադրվել են Իրան և երեք տարի մնացել այնտեղ: Հովհ. Աբելյանն իմանալով, որ Մամիկոն և Արուս Ազնափուրյանները դերասանուհի Աստղիկ Երամյանի եղբայրն ու քույրն են, իրեն հովանավորութեան տակ է առել նրանց ու տեղավորել Աստրախան մեկնող վերջին նավում: Կես ճանապարհին իջել են և Հյուսիսային Կովկասի վրայով հասել Թիֆլիս<sup>1</sup>: Ժամենը նախապես մեկնել է Աշխաբադ (Թուրքմենիա), հետո անցել Էնզելի (Իրան), այնտեղից 1919-ին վերադարձել Բաքու: Էնզելի են մեկնել Միքայել և Մարգո Կոստանյաններն իրենց զավակներով, կոմպոզիտոր Անտոն Մայիլյանը՝ քրոջ հետ, երիտասարդ դերասաններ Բագրատ Մուրադյանը, Տիգրան Շամիրխանյանը, Ավետ Ոսկանյանը (Ավետիսյան), Ալեքսանդր Հովհաննիսյանը, Մարի Մալախյանը (Թավրիզյան) և ուրիշներ, որոնք մասնակցել են Կոստանյանների և վաղուց Թիֆլիսից Իրան հյուրաստացրած Արմեն Արմենյանի դրամա-օպերետային խմբերի ներկայացումներին և 1919-1921 թթ. վերադարձել Անդրկովկաս:

Էնզելիում սպանվել է շամախեցի Սմբատ Սարգիսբեկյանը (դերասանուհի Օլիաննա Սարգիսբեկյանի հայրը), մահացել՝ Բաքվի բանվորական թատրոնի դերասան և ռեժիսոր Մեսակ Սառաջյանը և էլի ուրիշներ:

Քաղաքական այս թռուցիկ մեջ իրենց երկրային կյանքն են ավարտել Բաքվի քսանվեց կոմիսարները, որոնցից 8-ը եղել են հայեր, 2-ը՝ վրացի, 2-ը՝ ագրբեջանցի, մյուսները՝ տարբեր ազգերից:

<sup>1</sup> Բ. Հովակիմյան, Շահումյանի վերջին հայ աղանատները, Մեր խոսքը (Երևան) 1994, № 6:

1918-ի սեպտեմբերի 14-ին Աստրախան մեկնող այս կոմիսարներին նավից առևանգել են օտարերկրյա վարձկանները և տարել Թուրքմենիա, Ախչակոլյամ վայրի անապատներում գնդակահարել 1920-ի սեպտեմբերին: Նրանց աճյունները հետագայում փոխադրել են Բաքու, վերաթաղել Ազատության հրապարակում, երկու անգամ հուշարձան են կառուցել: Բայց հիմա ի՞նչ է կատարվել նրանց հիշատակի հետ, անհայտ է:

Բաքվի 26 կոմիսարներին Աստրախան տանող նավում են եղել, ինչպես վերը նշվեց, Աբելյանը, Մ. և Ա. Ազնավուրյանները: Այս մասին ինձ պատմել էր Աստղիկ Երամյանը: 1978-ին Լենինականի թատրոնում՝ Արզո Արզումանյանի, Լևոն Աբրահամյանի (երկուսն էլ Հ. Աբելյանի աշակերտներ) և հանգուցյալ Արավազդ Փաշայանի գրիմանոցում, Արուս Ազնավուրյանին հարցրի քրոջ՝ Աստղիկի պատմածի մասին: Ասաց՝ երբ Շահումյանին և իր ընկերներին նավից իջեցնում էին, Շահումյանն իրեն շատ հանգիստ և հպարտ էր պահում, իսկ Աբելյանի աչքերն արցունքով լցվել էին: Նա, ձեռքը բռունցք արած, ոճրագործների հասցեին ճչաց՝ СВОЛОУИ!:

Քաղաքական այս երևույթը նախքան դրականության մեջ արտացոլվելը, բեմական կյանք է ստացել: Այդ թեմայով պիես է գրել ժամանակի դերասան Արմեն (Հաբեթնակ) Մանուկյանը (դրամատուրգ Ալեքսանդր Արաքսմանյանի հայրը): Նրա գրած «Բաքվի հերոսամարտը» վերնագրով պիեսում առաջին անգամ անձնավորվել են Ստեփան Շահումյանի, Ալյոշա Զափարիձեի, Ֆիոլետովի և ուրիշների կերպարները:

«Բաքվի հերոսամարտը» առաջին և միակ անգամ բեմադրվել է Թիֆլիսի Կրուժոկի սրահում, երգիչ-դերասան Շարա Տալյանի ղեկավարությամբ թատերախմբի ուժերով 1920-ի մարտի 3-ին: Դերակատարներից հայտնի են՝ Շ. Տալյանը – Շահումյան, Հայկ Տալյանը – Զափարիձե, Հայկ Հայկազյանը – Ֆիոլետով<sup>2</sup>:

Բաքվի հայերի կոտորածների մասին հասարակական գործիչ Բախչի Իշխանյանը բավականին հիմնավոր տվյալներ է հաղորդել հայերեն և ռուսերեն իր գրած աշխատություններում: Այստեղ ուզում ենք նշել նաև թատերական երեք գործչի վկայություն, որն անմիջապես վերաբերում է թուրքական բանակի և մուսավաթականների վայրագությունների մերկացմանը: Հետապնդելով զանգվածա-

<sup>1</sup> Աբելյանի անմար հմայքը, Բանվոր (Լենինական) 1978, № 239:

<sup>2</sup> Աշխատավոր (Թիֆլիս) 1920, № 50:

յին ոչնչացումից փրկված արևմտահայությանը՝ 1918-ին Ալեքսանդրապոլից մինչև Բաքու տեղական մուսավաթականների հետ նրանք միասնաբար հաշվհարդար են տեսել հայության հետ:

1923-ին դերասան և ռեժիսոր Հովհաննես Զարիֆյանի բեմական գործունեությունից 25-ամյակի առթիվ Նյու Յորքում տպագրված հուշերի «Պահակակետում», «Գերություն» և «Գաղթ» բաժիններում իր կրած չարչարանքների մասին նա գրել է. «1918 թվին տաճկական սուրը ինձ ստիպեց մտնել կամավորականների շարքը, և ես գրվեցի Ալեքսանդրապոլ քաղաքի բերդապահ զինվոր...»

Սկսվեց նահանջը, և մենք ոտքով փախանք Ալեքսանդրապոլից: Համամյուս գյուղից կինս գնաց Ղարաքիլիսա (Վանաձոր) և ապա Երևան, իսկ ես ու աղջիկս բաժանվեցինք և գերի մնացինք տաճիկների մոտ: Երկուս ու կես ամիս անցած լսեցինք, որ Հայաստանին անկախություն էր տրված: Մի թուրք սպայի միջոցով ինձ հաջողվեց աղջկաս հետ Երևան փախչել: Չեմ ուզում նկարագրել այդ հինգ ամսվա գերություն օրերը, բավական է հիշել, որ երեք անգամ թաքնվելով ազատվել եմ մահից:

Հասավ 1920 թիվը: Տաճկաց բանակը մոտենում էր Ալեքսանդրապոլին: 18 թվի գերություն օրերը հիշելով՝ վճռեցի հեռանալ և բախտ որոնել օտարություն մեջ»:

Երեք-չորս տասնամյակ առաջ Զարիֆյանի ամերիկյան խմբի դերասան Վահրամ Տեր-Բարսեղյանը (որը 1918-1920 թթ. եղել է Բաքվում և Երևանում), գալով Երևան, պատմում էր, որ գերի դերասանն իր բեմական իրերը, զգեստները, կինոնկարահանումների նմուշները թաքցրել է իր տան մեջ փորած փոսի մեջ: Զարիֆյանի ապրած տան հետքերի որոնումներս արդյունք չտվին: Իսկ ահավոր երկրաշարժը ջնջեց ամեն ինչ:

Մոսկվայի «Ազատ» և «Կամերային» թատրոնների դերասան Արշակ Գրիգորյանը 1910-ական թթ. երկրորդ կեսին գործել է Բաքվի ռուսական թատրոնում: 1918-ի սեպտեմբերին Օսմանյան թուրքերի բանակի Բաքու ներխուժումից հետո, որին նպաստել են տեղական թուրք-աղբբեջանցիները, Գրիգորյանը թեև փրկվել է մահից, բայց ճաշակել է գերություն ստորացուցիչ դառը պտուղները:

1919-ի աշնանը Հայաստանի հանրապետությունից լուսավորության նախարարին գրած դիմումում, առաջարկելով իր ծառայությունները Հայաստանին, նա միաժամանակ գրել է. «Բաքվի սեպտեմբերյան իրադարձությունները շատ մարդկանց դժբախտություն, վիշտ, ավերածություն պատճառեցին: Դրանց թվին եմ պատկանում և ես: Իմ

բոլոր բեմական ունեցվածքը, զգեստները, իրերը և այլն, բոլորը հափշտակեցին ու թալանեցին սեպտեմբեր ամսին Բաքվում: Ես ինքս էլ գերության մեջ եմ եղել թուրքերի մոտ Բաքվի մոտակայքում, որտեղ երեք ամիս տարել եմ աներևակայելի տանջանքներ, ծեծ, քաղց և շատ ուրիշ բաներ, որոնց մասին չարժե խոսել: Գերությունից հետո, հինգ ամիս հիվանդ եմ եղել տիֆով»<sup>1</sup>:

Նյութական միջոցների բացակայության պատճառով ՀՀ լուսավորության նախարարությունը չի կարողացել դրական պատասխան տալ Գրիգորյանին: Թե ինչպես է դասավորվել նրա կյանքի հետագա ճակատագիրը, անհայտ է:

Մի այլ օրինակ: 1963-ի աշնանը՝ Սայաթ-Նովայի սերնդի հետքերով որոնումներ կատարելու նպատակով, Բաքվում այցելեցի նաև մեր հայտնի վիպասան Պերճ Պռոշյանի ժառանգների տուն, որը գտնվում էր այն ժամանակվա Լենինի պողոտայի (1918-ին Ստանիսլավսկի փողոցի) և Ապրիլի 28-ի (հնում Տելեֆոնայա փողոցի) փողոցի խաչմերուկի անկյունի շենքի (գերմանական եկեղեցու մոտ) երկրորդ հարկում: Երկար տևեց մեր զրույցը Պռոշյանի վեց զավակից միայն ողջ մնացած 86-ամյա Անուշի հետ, մինչև որ կարողացա պարզել, նրա՝ Շուշանիկ տատի հայրանունը, որով պետք է ճշտվեր Սայաթ-Նովայի կրտսեր որդու՝ Օհանի (Հովհաննեսի) ժառանգության ճյուղավորությունը: Վերջապես միտքը պարզվեց և ասաց, որ Սուսաննա Իվանովնա էին կոչում տատին: Կծիկի ծայրը գտնվեց՝ Պռոշյանի կնոջ՝ Աննա Մարտիրոսի Դոլգյանի պապն էլ եղել է Օհանը:

Բայց ինչն էր դժվարացնում մեր խոսակցությունը: Նա խոսակցությունն անընդհատ ետ էր տանում դեպի 1918-ի կոտորածները, երբ թուրքերը մտան Բաքու, սկսվեցին սոսկալի կոտորածներ... Եվ այսպես, անընդհատ վերհիշելով այն օրերի դեպքերը, մի տեսակ վախ էր արտահայտում՝ չլինի թե հիմա էլ են դալու: Այդ դեպքերն այնքան էին ահաբեկել խնդհ կնոջը, որ չէր կարողանում կենտրոնանալ: Ահա թե ինչ ասել է՝ «այստեղով թուրքեր են անցել»: Ի՞նչ իմանար այդ ահաբեկված կինը, որ դրանից ավելի քան յոթանասուն տարի հետո՝ 1990-ին, Բաքվում տեղի էին ունենալու հայերի նոր կոտորածներ ու դարերով Բաքվում ապրած, շենացրած, կառուցած, մշակույթ ստեղծած հայերն արժանանալու էին 1918-ի սեպտեմբերյան օրերի հայության ճակատագրին, իսկ իր կրտսեր եղբոր՝ նկարիչ Էաջեի աղջիկներն էլ իրենց ընտանիքներով գաղթելու էին Ամերիկա...

<sup>1</sup> Հայաստանի Ազգային արխիվ, ֆոնդ № 10, գործ 156, № 26:

Ադրբեջանի մուլեգնած մուսավաթականները ոչ մի պայմանով չեն հանդուրժել հայության գոյությունը Բաքվում: Բանակցութունների ոչ մի պայման չեն ընդունել: Ընդհակառակը, բաքվեցիներին հայտնի բժիշկ-բանաստեղծ Լևոն Աթաբեկյանը (գրականագետ Մարգարիտ Աթաբեկյանի հայրը), երբ փորձել է խաղաղություն պահպանել հայերի և ադրբեջանցիների միջև, 1918-ի մարտի 20-ին զոհ է գնացել թշնամու գնդակին:

Ցարական Ռուսաստանի անկումից հետո Անդրկովկասում՝ 1918-ի մայիսի վերջերին, ձևավորվել են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները: Ըստ որում, նախկինում սեփական ազգության, ժողովրդի և պետության անուն չունեցող թուրք-թաթար կոչեցյալները դառնում են Ադրբեջանի ադրբեջանցի քաղաքացիներ, թեև մինչև 1936-ի ԽՍՀՄ Սահմանադրությունը, հանրապետության անունից բացի ամեն ինչ կրել է թուրք բառից բխող ձևափոխումներ՝ թուրքաց լեզու, թուրք դրոշմ, թուրք գրականություն, թուրք թատրոն և այլն:

Անդրկովկասն ազգային հանրապետությունների բաժանվելուց հետո հարց է բարձրացվել մեծամասնությամբ հայերով բնակվող Ղարաբաղը միացնել Հայաստանին: Դա արվել է և՛ ներքին օղակներում, և՛ պետական խորհրդակցություններում:

1919-ի հունիսի 22-ին Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու գավթում տեղի է ունեցել միտինգ, որին մասնակցել է 30.000 մարդ: Միտինգում ելույթներ են ունեցել Հովհաննես Թումանյանը և ուրիշ այլ անվանի գործիչներ՝ Ղարաբաղը Մայր Հայաստանին միացնելու կոչով: Բանաձևում գրվել է. «Հայ ժողովուրդը իր գայրույթն ու բողոքն է հայտնում Ղարաբաղի անգն բնակչության, կանանց ու երեխաների վերաբերմամբ տեղի ունեցած ոճրապատումի հեղինակներին, ողջուն է ուղարկում Ղարաբաղի հերոս ժողովրդին, հանուն այն կովի, որ նա վարում է մայր երկրին միանալու իրավունքի պաշտպանության համար»:

Առաջարկում է՝ «Իսկույն հեռացնել Ղարաբաղից Ադրբեջանի իշխանությունը, որին չի ճանաչել և չի ճանաչում Հայկական Ղարաբաղը և կցել պատմական Ղարաբաղը մայր երկրին – Հայաստանին, դա է ազգաբնակչության միակ բաղձանքը»<sup>1</sup>:

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում Մոսկվայի պետական ապարատում: Ղարաբաղը կարծես կռվախնձոր լիներ՝ խոսքով Հայաստանին էին

<sup>1</sup> Աշխատանք (Երևան) 1919, № 37:

միացնում, գործով՝ ձեռքից խլում: Եթե Ղարաբաղը ժամանակին միացվեր Հայաստանին, չէր լինի ցեղասպանության խնդիրը և Ղարաբաղյան շարժման անհրաժեշտությունը:

Դեռևս 1921-ին Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու պետական որոշումը շատ կարճատև կյանք ունեցավ: Այդ առթիվ Բաքվի «Կոմունիստ» (Հայերեն) թերթի 1921-ի հունիսի 22-ի համարում նրա խմբագիր Սեդրակ Վարդանյանն իր «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին» առաջնորդող հոդվածում գրել է. «Այսօր Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի կառավարությունների միջև կայացած համաձայնությունից հիման վրա, թեպետ և այդ համաձայնությունը բավականին ուշացավ, բայց լավ է ուշ, քան երբեք, Լեռնային Ղարաբաղը հայտարարվում է Խորհրդային Հայաստանի անբաժան մասը: Ցեղազրականորեն իսկապես Լեռնային Ղարաբաղը պիտի որ Հայաստանինը լիներ, այդ է ցույց տալիս պատմությունը, այդ է ապացուցում Լեռնային Ղարաբաղի ճնշող մեծամասնությունամբ հայերով բնակեցված լինելը: Ուրիշ կերպ էլ լինել չէր կարող... Պատմական մեծ քայլ է դա և ողջունելի»<sup>1</sup>:

Պատմական այդ «մեծ քայլը» նման է այն ասացվածքին՝ թե կատվի վազ տալը մինչև մարագն է: Այդ խաղը երկար չտևեց, և 1923-ի հուլիսի 7-ից Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզի կարգավիճակով մնաց Ադրբեջանի կազմում:

Ղարաբաղի ազատագրություն՝ Հայաստանին միացնելու իրենց բաղձանքն են հայտնել նաև սիյունաքահայերը: Նրանց այդ ցանկությունն իր դրսևորումն է ստացել դրամատուրգ Սեդրակ Շահենի «Հակական հարսանիք» չորս գործողությունամբ դրամայում, որն առաջին անգամ բեմադրվել է հեղինակի ղեկավարությունամբ Նյու Յորքում «Կայծ» դերասանական խմբի կողմից:

Պիեսի շոշափած թեման «Հայաստանի տնտեսական և քաղաքական ազատագրության մանրակերտն է»՝ Ղարաբաղի մելիքների և Հայաստանի աշխատավորության պայքարը՝ Կարսի անկումից հետո Ղարաբաղը Հայաստանին միավորելու համար: Հաղթանակից հետո Հայաստանի բանվորական ակումբում տեղի է ունենում պիեսի հերոսների շատ խորհրդանշական անուններով՝ Ազատի և Հայաստանի հարսանիքը: Ազատի և Հայաստանի դերերում հանդես են եկել «Կայծ» թատերախմբի անդամեր Վ. Գալոյանը և Ե. Կյուլտիկյանը:

<sup>1</sup> Կոմունիստ (Բաքու) 1921, № 136: Այդ նույն համարում տպագրվել է նաև Ալեքսանդր Մյասնիկյանի հաղորդումը Ղարաբաղը Հայաստանին անցնելու մասին:

«Հայկական Հարսանիքի» դաղափարական բուլանդակությունն այնքան հարազատ է եղել տարագիր հայ համայնքներին, որ այն կարճ ժամանակամիջոցում ներկայացվել է Ջիկազոյի «Մուրատ», Ուստրի «Արծիվ» դերասանական և այլ խմբերի կողմից:

Նախքան խորհրդային Միության փլուզումը՝ 1988-ի փետրվարին, Լեոնային Ղարաբաղի հասարակայնության նախաձեռնությամբ, համաձայն խորհրդային Սահմանադրության օրենքի, որոշում է կայացվել՝ որպես ինքնավար մարզ դուրս գալ Ադրբեջանի հանրապետության կազմից և միանալ Հայաստանի հանրապետությանը: Դրանից ավելի զորավոր ուժեր չէր կարող պայթել Ադրբեջանի ղեկավարության գլխին: Եվ նա սկսեց բացահայտ հաշվեհարդար տեսնել Ադրբեջանի հայ ազգաբնակչության հետ, լիովին բացահայտել իր քողարկված հոգեբանությունը:

Ադրբեջանը քաղաքական-տնտեսական, պատմական և աշխարհագրական առումով ոչ մի իրավունք չուներ Լեոնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նախաձեռնությունը ճնշելու և արյունահեղությամբ զբաղվելու: Ու նա անցավ վրեժխնդրության: Եթե անցած տասնամյակներում աստիճանաբար էր կատարվում հայերի արտամղումն Ադրբեջանից, Նախիջևանից ու Ղարաբաղից, ապա Ղարաբաղյան ազատագրական շարժումից հետո, նրանց մեջ վերագարթնեց վայրագության կիրքը:

Բայց ո՞ր իրավունքով է Ադրբեջանը պահանջատեր և ուժի՞ց:

Մի փոքր դիմենք պատմության թողած տվյալներին:

1958-1963 թթ. Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակությամբ Բաքվում 20.000 տպաքանակով լույս տեսած «Ադրբեջանի պատմությունը» երեք հատորով (չորս գրքով) ուսերեն գրքում այնպես է ներկայացվել «Ադրբեջանի պատմությունը» ասես աշխարհի ամենահին պետություններից մեկն է եղել: Դեռևս մեր թվարկությունից դարեր-հազարամյակներ առաջ ապրած մարդկանց դամբարաններից հայտնաբերված իրերը պատկանում են ադրբեջանցիների նախնիներին: Ադրբեջանի տարածքը մ.թ.ա. 8-րդ դարում կոչվել է Մաննի, հետո՝ Միդիա, հետո՝ Ատրոպատեն (Ատրպատական), ի վերջո՝ Ալբանիա (Կովկասյան Ալբանիա-Աղվանք) և շուրջ 15 դար, մինչև 1918-թվականը այլևս պետություն չի ունեցել:

Ըստ հույն պատմիչ Ստրաբոնի (մ.թ.ա. I – մ.թ. I դար) Աղվանքի պետությունը կազմված է եղել 26 ցեղերից, որոնցից ոչ մեկի անունը հայտնի չէ: Աղվանքը զբաղեցրել է Քուռ գետից դեպի Հյուսիս՝

Դադստան հասնող տարածքը, որը լեզգիների տվյալներով իրենցն է եղել: Այս բազմացեղ երկրի համար Մեսրոպ Մաշտոցը 52 տառից բաղկացած այբուբեն է կազմել՝ նկատի ունենալով այդ ցեղերի խոսակցական լեզուն, մի շարք տառեր տարբեր ձևերով են ներկայացվել, ինչպես ասենք պարսկա-արաբերենում ս, ք, կ և այլ տառեր:

Ադրբեջանցիները, Աղվանքի կարևոր մարզերից մեկը համարելով Արցախը, նրանում գտնվող Լեռնային Ղարաբաղի հետ դարձրել են Ադրբեջանի՝ այն ժամանակի մի մասը: Հասարակ մի հարց է ծագում՝ Քուռ և Արաքս գետերի միջև ընկած Արցախն ինչպես գտնվեց Աղվանքում: Մի ցեղ (մի կողմ թողնենք նրա գոյության հարցը), որ իր անունով ոչ որոշակի լեզու է ունեցել, ոչ պետութուն (ինչպես ասենք՝ հայն ու Հայաստանը, վրացին ու Վրաստանը, հույնն ու Հունաստանը), ինչպես դարձավ պետության տեր-տիրական: Մի ցեղ, որ իր ունեցած թե փոխառած լեզվում ց հնչյունն ու տառ չի ունեցել, ինչպե՞ս է արտասանել Արցախ բառը, որ այսօր՝ հետին թվով գրում են Արսախ կամ Արտասախ: Արի ու մի ասա՝ ա՛յ սարսաղներ, որ չեք կարող Արցախ ասել, էլ ինչպե՞ս է ձերը:

Տարածքից, լեզվից բացի Ադրբեջանի պատմագետներն ու գրականագետները յուրացնում են նաև հայ գրողների ու պատմիչների գրական ժառանգությունը: Մ.թ. 7-րդ դարի բանաստեղծ Դավթակ քերթողը, որը Գարդմանքի տիրակալ Ջավանշիրի սպանության առնչությամբ ողբերգական ներբող է գրել հայերեն, այն էլ հայոց այբուբենի բոլոր տառերի աքրոստիկոսի ձևով, ըստ գրականագետ Միքայիլ Ռաֆիլով՝ («Ակնարկներ ադրբեջանական գրականության պատմության») աղվանքի բանաստեղծ է: Որ Աղվանքի բանաստեղծ է, ուրեմն ադրբեջանցի է:

Այս եզանակով էլ Նիզամի Գյանջավին դարձել է ադրբեջանցի բանաստեղծ, այն դեպքում, երբ, ըստ դադստանյան մտավորականների, Իլյաս Նիզամու հայրը՝ Յուսուֆ Նիզամին լեզգիական ծագում ունի<sup>1</sup>, մայրը՝ ըստ Նիզամու՝ քրդուհի է, առաջին կինն էլ ղփչաղ է եղել: Գրել է պարսկերեն, և Գյանջավի ձևն էլ պարսկերեն տեղացի լինելն է ցույց տալիս: Այդպես են վարվել նաև տաշիկ բանաստեղծուհի Մեխեսաթի հետ, որը կյանքի երկրորդ կեսն անց է կացրել Գանձակում: Նրան էլ անվանել են Մեհեսեթի խանում, ծննդավայր խոջենիթն<sup>2</sup> էլ դարձրել Գյանջա: Մեխեսաթի-Մեհեսեթի Գյանջավին էլ է գրել պարսկերեն, եղել է Նիզամու ժամանակակիցը:

<sup>1</sup> Абдурагимов Г. А., Кавказская Албания – Лезгистан, С. Петербург, 1995, էջ 118:

<sup>2</sup> Таджи Усман, Жемчужины таджикской поэзии, Сталинабад, 1960, էջ 24:

Սակայն վերադառնանք Ղարաբաղ արտահայտությունն պատմությանը: Ե՞րբ է Արցախի լեռնային մասը Ղարաբաղ անվանվել: Այս հարցի պատասխանը մեր պատմիչներն են տվել:

Ըստ Սամուել քահանա Անեցու «Հավաքմունք ի դրոց պատմագրաց» աշխատության հետ «Հովհաննիսիկ վարդապետի համառոտ պատմություն» հավելվածում տեղ գտած աղբյուրի՝ առաջին անգամ այդտեղ ենք հանդիպում Սև այգի անվան<sup>1</sup>: Այս տվյալը վերաբերում է մոտավորապես 1585 թվականին: Անեցու գրքի առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ, շուշեցի բանասեր Արշակ Տեր-Միքելյանը «Սև այգին» աստղանիշով տողատակին բացատրել է՝ «Այս է, որ այժմս Ղարաբաղ կոչի Տաճկեաց բարբառով»<sup>2</sup>:

Ղարաբաղն իբրև տարածքի անուն, գրականություն մեջ առաջին անգամ օգտագործել է միջնադարյան մի այլ պատմիչ՝ Թովմա Մեծոփեցին: Իր «Պատմության» մեջ երկու անգամ հիշատակել է Ղարաբաղ բառը որպես ձմեռանոց «առաջին թագավորացն մերոց»<sup>3</sup>: Թվականն է 1387:

Իսկ ինչո՞ւ է կոչվել Սև այգի, որը հետագայում թարգմանվելով թուրքերեն, դարձել է Ղարաբաղ: Այդու սեռությունը փոխաբերական իմաստ ունի, ինչպես ասենք՝ Սև ծովը: Այդ տարածքի անտառներն այնքան խիտ են եղել, որ մթնոլթյան տեսք տալով սևին են տվել: Սև այգու բառակազմությունն ինքնին հայկական ծագում ունի՝ սև այգի:

Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը, «Ադրբեջանի» պատմական անցյալի մասին սեփական պատմաբան չուենալով, օտար պատմիչներից պարզոր տվյալներ հավաքելու նպատակով, հունական, արաբական և այլ հեղինակների թվում օգտվել է նաև հայկական աղբյուրներից:

Այդ նպատակով 1957-ին Պատմության ինստիտուտի կողմից ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով հրատարակվել է Թովմա Մեծոփեցու «Թիմուր-Լանկի և նրա հաջորդների պատմությունը» գիրքը, որը լույս է տեսել կրճատումներով՝ իբրև թե կրճատել են կրոնական բովանդակություն ունեցող մասերը:

Մեծոփեցու Պատմության թարգմանություն համար հիմք է ծա-

<sup>1</sup> Սամուելի քահանայի Անեցու Հավաքմունք ի դրոց պատմագրաց հաղագս գյուտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս, Վաղարշապատ, 1893, էջ 193 (ընդգծումը մերն է – Բ. Հ.):

<sup>2</sup> Նույն տեղում, (ընդգծումը – Ա. Տեր-Միքելյանի):

<sup>3</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմություն Լանկա թամուրա և հաջորդաց յուրոց, Փարիզ, 1860, էջ 20:

ուայել Կարապետ վարդապետ Շահնազարյանի՝ 1860-ի փարիզյան հրատարակությունը: Գրաբարից ուղևերենի է թարգմանել Գ. Տեր-Գրիգորյանը, խմբագրել է Ա. Բաղրամյանը, իսկ ուղևերենից ադրբեջաներեն թարգմանել Հ. Բաքիխանովը: Ընդհանուր խմբագիրը եղել է Մ. Սեյիդովը: (Գիրքը լույս է տեսել Գ. Տեր-Գրիգորյանի մահից հետո):

Երկլեզվյան այս հրատարակության մեջ Կ. Շահնազարյանի 47 ծանոթագրությունից (որոնցից 25-ը տեքստային տարբերակներ են ըստ Վենետիկյան ձեռագրերի) օգտագործվել է 20-ը, իսկ 79 նոր ծանոթագրությունը իբրև թե կաղմել են հայ թարգմանիչն ու խմբագիրը (?): Ընդհանուր խմբագիրը մտցրել է այն ուղղումները, որոնք նշվել են Հայաստանի գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից<sup>1</sup>:

Այս միջամտությունից պարզ երևում է, որ Տեր-Գրիգորյանն ու Բաղրամյանը զոհ են գնացել ադրբեջանցիների նվաճողական քաղաքականությանը՝ շահագործելով նրանց անունները, արել են այն, ինչը ձեռնտու է եղել ադրբեջանցի պատմաբաններին: Ծանոթագրություններում կան բազմաթիվ հարցեր, որոնց մեկնաբանության հետ հաղիվ թե համակարծիք լինեին հայաստանցի պատմաբանները:

Մի քանի ցայտուն օրինակ ուղևերեն տարբերակից (ադրբեջաներենն էլ նույնն է):

Ծանոթ. 14. - «1387 թ. Ոսկե Օրդայի իսան Թոխտամիշը (1376-1391) 90.000 զորքով Դերբենդով և Շիրվանով շարժվեց դեպի Ադրբեջան» (էջ 86):

Ծանոթ. 17. - «Նախչուան - Նախիջևան Արաքսի վրա - քաղաք նախկին Վասպուրական նահանգում: Ներկայումս Նախ. ԻԱՍՀ մայրաքաղաք» (էջ 86):

Ծանոթ. 18. - «Սյունիք - Սյունյաց երկիր, ներկայիս Լեռնային Ղարաբաղը, ներառյալ Սևանա լիճը» (էջ 86):

Ոչ մի հայ բանասեր այսպիսի անհեթեթ, անպատասխանատու ծանոթագրություն չէր տա: Այդ ո՞ր օրվանից է Վասպուրականի նահանգը «Ադրբեջանի» մաս կազմել, Սյունիքը մինչև Սևանա լիճը Լեռնային Ղարաբաղ դարձել: Այսքան էլ ազահուլթյուն, այն էլ երկու լեզվով, որ աշխարհն իմանա:

Ծանոթ. 71. (էջ 90) - (Թիմուրի) «կողմից Թուրքիայից և Սիրիայից փոխադրած հիսուն հազար բնտանիք, մեծ մասամբ Հեռնորդներից

<sup>1</sup> Фома Мецонский, История Тумур-Ланка и его преемников, Баку, 1957, էջ 9-47 (ադրբեջ.), էջ 55-91 (ուղևերեն):

այն թուրքերի, որոնց խուլագու խանը վերաբնակեցրել էր Պարսկաստանում և որոնք ժամանակ առ ժամանակ տեղափոխվել են թուրքիա և Սիրիա, նա բնակեցրել է Ղարաբաղում, Գանձակում և Երևանում»<sup>1</sup>:

Եթե այս տվյալներին ավելացնենք Մեծօփեցու հայտնած մտքերը, ամեն ինչ ջրի երես դուրս կգա: Նա գրել է, որ թիմուրը երկնքի աստղերից և ծովի ավազից շատ ավար ու գերի է վերցրել, «60.000 տուն Ղարա-թաթար անունով, ընտանիքներով ու որդիներով տարել խորասան»<sup>2</sup>:

Մեծօփեցու այս վերջին տվյալից պարզվում է, որ զբաղանու-թյան մեջ առաջին անգամ է հիշատակվում թաթար ցեղի անունը՝ այն էլ Կարա-թաթար (սև թաթար): Սրանք թերևս Կարա-Կոյունլու ցեղի ճյուղերից լինեն: Այս թաթարներն են, որ չորս-հինգ դարի ընթացքում ազգ են դարձել: Մինչև 1918 թվականին Ադրբեջանի հանրապետություն կազմելը՝ ի տարբերություն Ղրիմի, Աստրախանի և Կազանի թաթարների, նրանք կոչվել են կովկասյան թաթարներ: Սայաթ-Նովան 1758-ի մարտի 6-ին իր մի բանաստեղծությունը գրել է չորս լեզվով՝ քարթուլի, սոմխուրի, պերսուլի, թաթրուլի (վրացերեն, հայերեն, պարսկերեն, թաթարերեն): Վերջինս հենց այսօրվա ադրբեջաներենն է:

Արդյոք ա՞յս թաթարները չեն ադրբեջանցիների նախնի ցեղերը:

Բայց նորից անդրադառնանք պատմական մի շարք վայրերի գիտական դավթմանը:

1986-ին Բաքվում լույս է տեսել ճարտարապետ Դավուդ Աղա օղլի Ախունդովի «Հին և վաղ միջնադարյան Ադրբեջանի ճարտարապետություն» ուսեսերեն գիրքը: Ուրիշների ունեցվածքները յուրացնելու շարանից բերենք մի քանի ցայտուն օրինակ:

1. Մարդկային կյանքի ամենահին օջախն Ադրբեջանում Ազոխի քարայրն է. 500 000 տարվա մարդու գանգ է հայտնաբերվել (էջ 3):

Ազոխ հայկական գյուղը գտնվում է Լևոնային Ղարաբաղի Հադրութի շրջանում, առավելապես մոտ է Արաքսին:

2. Կրզըլ-վանքի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նկարազարդ խեցեղեն, որոնք վերաբերում են մոտավորապես մ.թ.ա. II-I հազարամյակի սկզբներին (էջ 10-11):

Բա սրանք մի մտածող չունեն, որ իմանան, թե վանքը քրիստոնեական շինություն է և ոչ թե հեթանոսական դարերի կառույց:

<sup>1</sup> Այս ծանոթագրությունը քաղված է XIX դարի առաջին կեսի ռազմական պատմաբան Արբաս Կուլի Բաքիխանովի «Գյուլխատան Իրամ» աշխատությունից:

<sup>2</sup> Թ. Մեծօփեցի, 1860, էջ 66:

Կըզըլ-վանքի ավերակները գտնվում են Նախիջևան քաղաքի և Արաքս գետի միջև սարալանջի վրա՝ երկաթգծից մի քիչ վերև: Կառուցված է կարմիր, ողորկ քարով և արևահարությունից ոսկու գույն ստանալով կոչվել է Կըզըլ (ոսկե) վանք: Հեղինակին շատ լավ հայտնի է, որ ադրբեջաներենում վանք, խաչ բառերը համարժեք չունեն: Դրա համար էլ խաչքարը դարձրել են խաչ-դաշ, վանքը մնացել է նույնը, իսկ Վանք գյուղը վերանվանվել է Վանքլու-ի:

Միջանկյալ նշենք, որ եթե ադրբեջանցիները, տեղ կանգնելով ներկա տարածքում մնացած հայկական հուշարձաններին, իրենց գովքն են անում, այդ ինչպե՞ս հանկարծ վայրենի մտահոգացում ծնվեց՝ ավերել, հողին հավասարեցնել Հին Ջուղայի հազարավոր խաչ-դաշերով հայտնի հայկական գերեզմանադաշտը: Հին Ջուղայի գերեզմանատունը սովորական հանգստարան չէր: Դա իսկական թանգարան էր բաց երկնքի տակ: Դա ճարտարապետության, քանդակագործության, մանրանկարչության միասնության անկրկնելի արվեստով կերտվածք էր, աշխարհում երկրորդը չունեցող պատմական հուշարձան: Պատմելով չի լինի, լուսանկարը տեսնելով այն սպավորությունը չի ստացվում, ինչ կարելի էր սեփական աչքով տեսնել:

Մեզ բախտ էր վիճակվել 1947-1952 թթ. տարեկան 2-3 անգամ Բաքու-Երևան գնալ-գալ (ուսանողական տարիներին), դրանից հետո էլ՝ մինչև 1980-ը մի քանի տարին մեկ այցելել հարազատներս:

Սկզբնական տարիներին մարդատար գնացքի վագոնների պատուհաններից Հին Ջուղայի գերեզմանատան ներքևի աղեղնաձև ճանապարհից ամեն ինչ երևում էր ցերեկային լույսով: Մի 10-15 տարի հետո, գնացքի չվացուցակն այնպես կազմեցին, որ մայրամուտի ժամանակ անցնի Հին Ջուղայի մոտով: Գերեզմանատան միջով արդեն ինքնաթիռի մեքենաների ճանապարհ էին բացել, և դժվար էր կռահել, թե այդ ամայի, բուսականությունից զուրկ վայրից ինչ կարող էին տանել կամ բերել: Հեռու-դիմացի կարմրավուն քարերն էլ արևից խանձված, հազիվ թե պետք լինեին շինարարության համար:

Հին Ջուղայի կանգուն, թեքված, գետնին տապալված ասեղնագործ խաչքարերը, խոյաքանդակ-տապանաքարերը դարերով արևից խանձված, հողմերից մաշված, բայց իրենց նրբակերտ հմայքը պահպանած անլիզու արարածներ էին, որոնց իսպառ վերացումը 21-րդ դարի յուրատեսակ ցեղասպանութուն էր Ադրբեջանի իշխանությունների կողմից:

Ջուղայի խաչքարերն արժանի էին դասվելու աշխարհի հազվա-

գյուտ հրաշքների շարքը, ավանդ, չորս-հինգ դար ապրելուց հետո դարձան հայերի դեմ դազազած դազանների զոհերը՝ բարբարոսներին հատուկ եղանակով: Ցավալին այն է, որ ոչ մի պատիժ չկրեցին համաշխարհային արժեքին հավասարազոր հայ արվեստի այդ հուշարձանների ցեղասպանները...

3. Աղվանական պատմաբան Մոխսեյ Կապանկատվատցի (էջ 212):

Այս ուսյալ մարդը, որն Աղվանքը համարում է ադրբեջանցիների պետութայն նախնական անուններից մեկը, ինչո՞ւ հաշվի չի նստում ո՛չ քրիստոնեական ճարտարապետութայն առանձնահատկությունների, ո՛չ էլ լեզվա-գրական կառուցվածքի հետ: Ը, ծ, ց, ճ, դ, ձ, տ և այլ տառեր ու դրանցով կառուցված բառեր չունեցող ժողովուրդը ինչպե՞ս կարող է Աղվանքից լինել:

4. Եռանեֆ տաճար Յիցերնավանք (էջ 222):

Եթե այս Ծիծեռնավանքը աղվանական կառույց է (6-րդ դ.), նորից հարց տանք, այդ երբևի՞ր է ծ տառը ադրբեջանցիների նախնիներից այսօրվա ադրբեջանցիներին հասել: Եթե Լաչինի շրջանը մնացել է ժամանակակից Ադրբեջանի տարածքում, ուրեմն Ադրբեջանի ճարտարապետութայնն է պատկանում: Բայց չէ՞ որ Ծիծեռնավանքը հարևան Գորիսի շրջանում է գտնվել: Նույնը վերաբերում է նաև Խաչավանքին կամ Խոտավանքին (էջ 226): Բառերն իսկ հայկական են:

5. Արցախ-Խաչենը Կովկասյան Ալբանիայի մարզերից մեկն է, ներկայիս Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը և մասամբ Ադրբ. ՍՍՀ Քյալբաջարի շրջանը (էջ 227):

Դև, եթե Քարվաճառը Քյալբաջար է դարձել, ամեն ինչ էլ հնարավոր է:

6. Ալբանական պատմաբան Գյանջա քաղաքից, Կիրակոս Գյանդեզակի... (էջ 227), ինչպե՞ս է, որ Կիրակոս Գյանջավի չեն կոչում: Գանձակեցու համար էլ Ձ տառ ու հնչյուն չունեցողին ոչինչ չի հետաքրքրում, իր էշն է քոչում:

Եվ սրանք եզակի կամ պատահական օրինակներ չեն: Ինչ անուն որ չեն կարողացել ձևափոխել, ամբողջովին են փոխել: Բնորոշ ապացույցներ Նախիջևանի հանրապետությունից: Մեսրոպ Մաշտոցի անունը կրող Մեսրոպավան դյուղը դարձրել են Նասիրվազ, Ագուլիսը՝ Այլիս, Ադրբեջանի և Հայաստանի սահմանակից Նորաշեն կայարանը՝ Իլիջևակ: Իսկ հիմա էլ նոր անուն կլինեն տված:

Այսպիսի ինքնակամ, հայկական անուններին ադրբեջաներեն

վերջանուկներ կպցնելը տեղ է գտել ավելի հեղինակավոր հրատարակութուններում: Հայկական Սովետական հանրագիտարանի խմբագրութան առաջարկով դեռևս 1977-ին Ադրբեջանական Սովետական հանրագիտարանի մասին գրած կարծիք-գրախոսականում նշել ենք այսպիսի անհարկի ձևափոխումների մասին, բայց հայտնի չէ, հետագա հատորներում ուղղել են, թե նույն ձևը պահել: Խոսքս մեր պատմիչների մասին է՝ Անանիա Շիրակլը, Մովսես Խորենյը, Կիրակոս Գյանջալը, Մովսես Կաղանկատվալը, Առաքել Թաբրիզլը և այլն:

Ինչպե՞ս հավատալ Ադրբեջանի գիտնականների ու գիտական հաստատությունների անկեղծությունն ու անաչառությունը, երբ իրենք չգիտեն, թե ի՞նչ են գրում աջից ձախ և ինչ՝ ձախից աջ:

Մի վերջին, շատ պարզ օրինակ՝ իբրև գիտություն հայելի:

Բաքվի Միջնաբերդի՝ դեպի Կասպից ծովը հարող մասում դեռևս պահպանվում է միջնադարյան «Գրգ գալսաք» (Կոլյսի աշտարակ) բոլորաձև կառույցը: «Ադրբեջանի պատմություն» գրքում նրա լուսանկարի տակ գրված է XII դ.<sup>1</sup>, իսկ ճարտարապետ Դ. Ա. Ախունդովի «Հին և վաղ միջնադարյան Ադրբեջանի ճարտարապետությունը» գրքում՝ մ.թ.ա. VIII-VII դդ.<sup>2</sup>: Արի ու էչը ցեխից հանի:

Իրենք, որ իրենց ձեռքով են աղավաղում սեփական (?) պատմական ճշմարտությունը, ուրիշի տարածքը նվաճելու համար նույն «բարեխղճությունը» էլ յուրացնում են, ինչ որ դուր է գալիս իրենց:

Անցնենք մի քանի վիճակագրական տվյալների, թե ադրբեջանցիները Ղարաբաղի կամ Հայաստանի ո՞ր տարածքներում են ապրել և ինչ քանակությամբ:

1886 թվականին «Մշակ» թերթի թղթակիցներից մեկը սրտի ցավով նշել է, որ «Ղարաբաղի այն գյուղերում, ուր 1869 թվին մահմեդականի շուք էլ չկար, 1879 թվին մենք տեսանք հայերի հետ բնակվելիս 3-5-10-15 թուրք բնակիչներ, իսկ հայերից այդքան թվով պակասած և նույնպես էլ կիսով չափ նվազած»<sup>3</sup>: Նրա հիշատակած գյուղերից են՝ Բալլուջա, Չանախչի, Խանաձախ, Ղայբալու, Շոշու, Ղարաղշլաղ (Ղարաբաղում), Գորխա, Ընկղակոթ (Անգղակոթ-Չանգեղուրում):

Բայց սրանք պատահական հիշվածներն են, իրականում դրանց

<sup>1</sup> История Азербайджана, т. 1, Баку, 1958, էջ 158:

<sup>2</sup> Д. А. Ахундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, էջ 79:

<sup>3</sup> Մշակ (Թիֆլիս), 1886, № 75:

Թիվը շահ շատ է: Իսկ թե Հայրենական պատերազմի տարիներին որքան ադրբեջանցիներ են հիմնավորվել հայկական գյուղերում, ոչ ոք ոչինչ չի կարող ասել, բացի ղարաբաղցիներից: Այս նույն պատկերը բնորոշ է եղել նաև Շամախի – Շիրվանի նահանգին, Նուխի – Խաչմազ տարածքին: Հենց ինքը՝ Խաչմազը ծագել է Խաչի մասնունից և եղել է Ղազարյանների կալվածքը:

Սփյուռքահայ գրող և հասարակական գործիչ Զապել Եսայանը, Փարիզից փոխադրվելով Խորհրդային Հայաստան, ակտիվորեն մասնակցել է հայրենիքի զրական-հասարակական կյանքին: Հայ ժողովրդի Մեծ եղեռնի տառապանքները տեսած ու նկարագրած գրողը միտք է հղացել տեսնել և ծանոթանալ Ղարաբաղի իր հայրենակիցների վիճակին:

1927-ին Լեռնային Ղարաբաղ կատարած իր ուղևորութուններից ստացած տպավորութունների մասին նա հոդվածաշար է տպագրել «Խորհրդային Հայաստան» թերթում՝ իբրև նոթեր: Ըստ Եսայանի բերած տվյալների, որոնք նա քաղել է պաշտոնական աղբյուրներից՝ 1927-ի մարդահամարի տվյալներից, հետևյալ պատկերն է պարզվում: Լեռնային Ղարաբաղի 127.000 բնակչից 117.000-ը եղել են հայեր, մնացած 10-ից 9.000-ը՝ թուրք, 1000-ը՝ ռուս: 224 գյուղից 206-ը եղել են հայկական, 12-ը՝ ադրբեջանական, 4-ը՝ խառը բնակչությամբ, մեկը՝ ռուս, մեկը՝ հույն բնակիչներով<sup>1</sup>:

Շուրջ երեք տասնամյակ անց, 1959-ի հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութունն ունեցել է հետևյալ պատկերը: Բնակչության 100 տոկոսից հայերը կազմել են 84,4 տոկոսը, ադրբեջանցիները՝ 13,8, ռուսները՝ 1,4, ուկրաինացիները՝ 0,2, այլազգիները՝ 0,3 տոկոս<sup>2</sup>:

Ինչպես վերը բերված առանձին օրինակներից տեսանք (իսկ դրանց քանակին թիվ չկա), քարե-բրոնզե դարից, Վանի ուրարտական արձանագրութուններից սկսած մինչև 1918 թվականը անունով և պետությամբ անանուն մի ցեղ, որ միջնադարից հետո մարդկային ասպարեզ է մտել, սկսել է յուրացնել շրջապատի տարածքը, ունեցվածքը և ստեղծել իր «փառահեղ պատմութունը»: Բայց կգա ժամանակ, որ քամու բերածը քամին կտանի. լեզգիները, թաթերն ու թալիշներն էլ իրենցը կպահանջեն Ադրբեջանից:

Ադրբեջանահայության նկատմամբ թշնամանքը տարիներով կու-

<sup>1</sup> Խորհրդային Հայաստան (Երևան) 1927, № 128:

<sup>2</sup> Нагорный Карабах за годы Советской власти, Степанакерт, 1969, էջ 38:

տակվեց (փակվեց հայկական թատրոնը, Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը փոխադրվեց Ստեփանակերտ՝ տեղում բացելով ադրբեջանական բաժանմունք), հաջորդաբար փակվեցին հայկական դպրոցները Բաքվում և այլ քաղաքներում, մինչև որ իսպառ վերացավ հայկական դպրոցը:

Բաքվի Քաղաքային կենտրոնական գրադարանից (որը 1860-ական թթ. եղել է Բաքվի Հայոց մարդասիրական ընկերութայն գրադարանը), 1950-ականի կեսերին հայերեն հինգ ձեռագիր զավթեց Նիզամու անվան թանգարանը՝ մեր հանրապետութայն մեջ է, մերն է նշանաբանով: Բոլոր հանրահայտ բժիշկներն իրենց պաշտոնները «գիջեցին» ադրբեջանցիներին: Նույնը նաև ինժեներական սիստեմում: Այսպիսի պայմաններում ո՞վ ասես՝ որ երկար դիմանար: Տեսնելով, որ զոռով հայերին չեն կարող կտրել իրենց դարավոր ապրելավայրից, սկսեցին կազմակերպված շարժ պատրաստել, որոնք իրենց արյունահեղ արտահայտությունն ստացան նախ՝ Սումգայիթ քաղաքում (1988-ի փետրվար), ապա՝ Բաքվում (1990-ի հունվար), Կիրովաբադում (Գանձակ) և հայաշատ այլ վայրերում: Հայերին 1915-ի օրինակով դարձրին գաղթական տնավեր, որքանը քաղաքներում գոհվեցին, մի այդքանն էլ նոր, անապահով վայրերում կյանքին հրածեշտ տվին:

Բասան տարուց ավելի է Ադրբեջանի ղեկավարությունը հանգիստ չի տալիս Հայաստանի և Ղարաբաղի հանրապետությունների ազգաբնակչույթյանը՝ «իր կորցրած» տարածքն է պահանջում: Նախ պետք է տարածք ունեցած լիներ, հետո պահանջի հարց դներ: Պատմությունը գենքի ուժով չի գրվում, այլ հայրենիքի նկատմամբ սիրով լցված աշխատանքով: Իսկ Ղարաբաղն ազատություն ձեռք բերելուց հետո, սումգայիթյան և Բաքվի հայության կոտորածների պատասխանատուներն իրենց սովորության համաձայն մարդասպանության (ինչպիսի միջոցներով ասես, որ չի կիրառվել) դիմելը Ադրբեջանի իշխանության պարծանքն է:

Պատմությունը նշում է, որ պատերազմներ հրահրողները հավիտյան անեծքի ու պարսավանքի են ենթարկվում:

Բաքվից ոչ հեռու նորաստեղծ Սումգայիթ քաղաքի քիմիական և արդյունաբերական մի շարք գործարաններում իրենց մասնագիտական ու կազմակերպչական աշխատանքով, բարձրագույն կրթության գիտելիքներով գինված որքան հայ մասնագետներ գոհ գնացին չարագործների կողմից:

Սոււմգայիթի հայուլթյան ցուցակները կազմած, տնետուն վրա են տվել անմեղ, անզեն մարդկանց սպանել, խոշտանդել, այրել: Դրանով չբավարարվելով՝ երկու տարի անց նույն գործողութիւնները կատարվել են Բաքվում, Կիրովաբադում և այլ վայրերում՝ չխնայելով նույնիսկ ծերանոցների անդամալուծներին:

Դեռ պատմութեան դատաստանին պետք է հանձնվեն ու անարգանքի սյուներն գամվեն Սոււմգայիթի և այլ վայրերի ղոչինների բարբարոսական արարքները և անմեղ հայուլթյան ջարդերի կապակցութեամբ Մոսկվայում կազմակերպված թատերականացված խայտառակ դատավարութիւնը երկրի բարձրագույն ատյաններում:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից կազմակերպված Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, Սպիտակի երկրաշարժից տուժածների համար դնացքներով մարդասիրական օգնութիւնն ու շինարարական ապրանքները թալանելու արարքը դատապարտելը դեռ ավարտված չէ: Նրանց ստոր գործողութիւնները դեռ պետք է գրականութեան և դրամատուրգիայի նյութ դառնան, ինչպես դա կատարվել է 1915-ի ցեղասպանութիւն տարիներին:

Ինչպես հարյուր և ավելի տարիներ Թուրքիայում հայերի նկատմամբ կազմակերպված ջարդերը չեն մոռացվում, այնպես էլ Սոււմգայիթում, Բաքվում և մյուս վայրերում Ադրբեջանի իշխանութիւնների արարքները չեն մոռացվելու: Այս ամենի մասին թեև ժամանակին որոշ բան գրվել է, բայց պետք է դրամատիկական գործողութիւններով մատուցվեն դրանք, որպեսզի նոր սերունդը և նրա հետնորդները կենդանի պատկերացում ունենան, թե ինչ ասել է ցեղասպանութիւն:

Աղետալի այդ պայքարին Անդրկովկասի հայուլթյան հետ իրեն ակտիվ մասնակցութիւնն է բերել նաև սփյուռքահայուլթիւնը, սատար կանգնել Ղարաբաղի վերակենդանացմանը:

Դեռ պետք է նոր պիեսներ, ողբերգութիւններ գրվեն, ինչպես գրվել են 1895-ից սկսած մինչև մեր օրերը կատարվող թշնամական գործողութիւնների մասին: Պետք է գրվեն մեր քաջարի մարտիկների, անվահեր ֆիդայիների, հերոսամարտերում զոհվածների, ազգային-ազատագրական պայքարի համար զենք վերցրած կանանց ու աղջիկների, ազգային հերոսների՝ Մոնթե Մեղքոնյանի և ուրիշների, ազատամարտիկ-գերասանուհի, մեր ժամանակի Այծեմնիկի (Անիի պաշտպան), Ժաննա Դ'արկ-Ժաննա Գալստյանի, հայ դատի պաշտպան ակադեմիկոս Անդրեյ Սախարովի, անգլուհի բարոնուհի Բերո-

լայն Քոքսի և շատ ուրիշների սխրանքներով լի գործունեություն մասին: Դա կլինի մեր օրերի պատմական իրադարձությունների կենդանի արձագանքի փոխանցումը գալիք սերնդին:

Ղարաբաղյան ազատագրական շարժման, տեղահանություն, զանգվածային գաղթի, անմեղ զոհերի հիշատակի պատմությունը թեև դեռևս լիաբուռն արտացոլում չի ստացել, բայց մոռացություն էլ չի տրվել: Իբրև ժամանակի արձագանք՝ Սումգայիթի անպաշտպան հայություն՝ Ադրբեջանի իշխանությունների կողմից նախապես ծրագրված ու իրագործված ջարդերին է վերաբերում «41 Ա» պիեսը: 1991-ի վերջերին այն բեմադրություն է պատրաստել Երևանի Քաղխորհրդի մշակույթի վարչության «Սոնետ 101» Թատրոն-Ստուդիան: Բեմադրող-ռեժիսորն է եղել Արմեն Մեհրաբյանը: Պիեսի համար հիմք է ծառայել Սումգայիթ քաղաքի 44 Ա շենքի հայազգի բնակչության աներևակայելի եղանակներով խոշտանգումներն ու կրած ողբերգությունը: Պիեսը նվիրվել է այդ զոհերի հիշատակին:

Սումգայիթյան ջարդերից վերապրողների կյանքին է նվիրված թատրոնի և կինոյի սիրված դերասան, դրամատուրգ և ռեժիսոր Երվանդ Մանարյանի գրած «Վարպետ Զաքարի մասին» պիեսը: Հեղինակն այն բեմադրել է 1994-ին՝ Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական թատրոնում: Նրանում ցույց է տրվել ջարդերից փրկված, բայց խելակորույս մի մարդու, որին կենթ Փիսո են կոչում, որովհետև սարսափների ահաբեկությունից կորցրել է խոսելու ընդունակությունը և կատվի պես մոռում է: Այդ դերը մեծ զգացմունքով կատարել է թատրոնի դերասան Գուրգեն Խաչատրյանը:

Ղարաբաղյան շարժումը, Հայաստանի շրջափակումների և արդի քաղաքական ու տնտեսական կյանքի արձագանքն իր արտացոլումն է ստացել նաև հայրենիքից անբաժան սփյուռքահայ թատերական գործիչների կողմից: 1988-ի Հասարակական-քաղաքական դեպքերի ուժեղ տպավորության տակ Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի շրջանավարտ Մանուել Քեչիշյանը գրել ու Հալկում (1989) բեմադրել է օրվա հրատապ հարցերին նվիրված «Անկյունագարձը» պիեսը:

«Անկյունագարձում» պատկերված է Հայաստանում կատարվող իրադարձությունների անդրադարձը սփյուռքահայության շրջանակներում: Ղարաբաղյան շարժում, երկրաշարժի աղետավոր հետևանքներ ու շրջափակում սահմանակից պետությունների կողմից, տնտեսական անկայուն վիճակ, սով ու խավար, պետական

ունեցվածքի քայքայում և ավար, բարյացակամ երկրների օգնութեան ձեռք մեկնումներ, որոնք մի ամբողջ էպոպեա Հանդիսացան Հայ ժողովրդի համար: Սովորական անձնավորութուններից բացի՝ գործող անձինք են Հանդիսանում նաև ղեկավար, ղեկավար կին, կառավարիչ, եկեղեցական, բժիշկ, գիրնվորներ, ցուցարարներ:

Մի հարցազրույցի ժամանակ պիեսի հեղինակ-բեմադրիչ Մանուել Քեչիշյանն ասել է. «Ղարաբաղյան շարժման օրերուն բախտը ունեցա շատ մոտիկեն ասպրելու և առնչվելու մեր ժողովուրդի հայրենաբնակ զանգվածներուն հետ, որպես Հայ մարդ ամբողջ էությունս հագեցած էր ազգային ամենաազնիվ զգացումներով: Համեստ գրիչովս պետք է գրեի ու լիցքաթափվեի, գրեցի ոչ որպես հեղինակ, այլ՝ բեմադրիչ»:

Քեչիշյանն իր «Անկյունադարձով» ասելիքը չի ավարտել: Համոզվելով, որ արտահայտած մտքերը ճշտվել են ժամանակի ընթացքում, նա գրել է ևս մի նոր պիես՝ նույնպես նվիրված ժամանակի իրադարձութուններին ու հուզող հարցերին: Այդ պիեսը կոչվում է «Տխուր մոմեր», որը ներկայացվել է 1991-ի փետրվարի 13-ին և հաջորդ օրերին՝ Զավարյան թատերասրահում: Դերակատարները՝ շուրջ 16 մարդ, եղել են «Գերմանիկ Վասսպուրական» թատերախմբի անդամներ:

Այս պիեսի մասին բեմադրիչի իր խոսքում Քեչիշյանը, ինքն իր հետ զրույց վարելով, այն հարցին, թե ամիսներով գլուխդ ցավեցնում, պիես ես գրում, անունն էլ «Տխուր մոմեր» դնում, չէիր կարող ուրիշ բան գրել, հետևել է այս պատասխանը՝ «Գիտես, ոչ թե իմ պարտքս կընկատեմ այսօր հայրենիքիս կապվիլ, այլ Հայաստանով ապրիլ, Արցախով շնչել, հայութենես մեկ վայրկյան իսկ չհրաժարվիլ ինչպես շատ-շատերը, այլ պարզապես, ուրիշ կերպ չեմ կրնար...»:

Շարունակելով իր հայրենասիրական գործունեութեան ընթացքը՝ Մ. Քեչիշյանը 1993-ին էլ բեմականացրել ու բեմադրել է Ֆրանսահայ նշանավոր կինոռեժիսոր Անրի Վերնոյի (Աշոտ Մալաքյան) «Մայրիկ» վեպի իր տարբերակը՝ նույնպես, որպես արձագանք անցյալի ու ներկայի հայութեան միասնութեան կապի: «Մայրիկ» ներկայացման մասնակիցներն են եղել «Հովհաննես Թումանյան» թատերախմբի անդամները:

«Մայրիկ» վեպ-պիեսի մասին Քեչիշյանն իր բացատրական խոսքում խոստովանել է, որ ինքը, հարազատ մնալով գրական երկին, առանձին տեղերում, ուր խոսք է դնացել եղևոնի մասին, որոշ հա-

վելու մենք է կատարել: Այսինքն՝ ինչպես «Մայրիկ» կինոֆիլմում են լրացուցիչ տեսարաններ ավելացրել, այնպես էլ ինքն է վարվել վեպը պիեսի վերածելու պատրաստման ժամանակ՝ պատճառաբանելով, թե «երբեմն կարդացած ենք նաև չգրվածը»:

«Մեր «Մայրիկը, – գրել է Քեչիշյանը, – միայն մայր չէ, այլև կտեղեկոնյա օրերու մտահոգությունները, շատ հարազատ պատկեր մը նկարագրած ենք, այդ օրերն են կող և մինչև մեր օրերը հասնող պատկեր մը»:

«Մայրիկ» պիեսի առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1993-ի ապրիլի 17-ին՝ Նոր գյուղի «Զվարթնոց» սրահում: Դերակատարների թվում են եղել՝ Մ. Տարազյանը – Հայր, Ս. Թաչճյանը – Մայրիկ, Գ. Հակոբյանը – Աշոտ, Հ. Քեմանճյանը – Բժիշկ, Տ. Քեմանճյանը – Գայանե, Ս. Մելքոնյանը – Աննա, Մ. Գարբուզյանը – տանտիրուհի և ուրիշներ:

Ղարաբաղում և Հայաստանում, ինչու էլ, նաև սիյուռքահայության շրջանակներում տագնապ առաջացրած կացությունը չէր կարող իր արտացոլումը չունենալ հասարակական-քաղաքական երևույթներին մշտապես արձագանքող թատերական կյանքում: Ղարաբաղյան շարժման թեման դրամատիկական ստեղծագործության նյութ է դարձել նաև տեղական թատերական գործիչների համար: Նրանցից առաջինը Լեոնային Ղարաբաղի գրողների միության նախագահ, գրող-գրականագետ Վարդան Հակոբյանն է անդրադարձել այդ հարցին՝ գրելով «Ղարաբաղյան բալլադ» պիեսը:

Հակոբյանի «Ղարաբաղյան բալլադը» միայն տեղական բնույթ չի կրում, ընդգրկում է առհասարակ ադրբեջանահայության նկատմամբ ադրբեջանցիների վայրագությունների զոհ դարձած հայերին: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել հայ-ադրբեջանական պատերազմի զինադադարից հետո՝ 1994-ի հունիսի 5-ին, Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում: Պիեսը բեմադրել է Գյումրիի երկրաշարժից տուժած ռեժիսոր Կարեն Աբրահամյանը, իսկ ձևավորումը կատարել է երիտասարդ բեմանկարիչ, այժմ ՀՀ վաստակավոր նկարիչ Մարտիրոս Բաղալյանը:

Բեմագրության մեջ հանդես են եկել թատրոնի առաջատար դերասան-դերասանուհիները՝ Քաջիկ Հարությունյանը – պատմիչ, Սամվել Վիրաբյանը – զինվոր, Մարգո Բալասանյանը – մայր, Ժորա Մովսիսյանը – Ժորա, Բենիկ Օվչյանը – Արշակ, Միքայել Հարությունյանը – Սերոժ (Բաքվից փախած) և ուրիշներ:

Այդ տարիներին մի անգամ Երևան էր եկել Բենիկ Օվչյանը: Ավտոբուսով գնալիս, ուղևորներից մի քանիսը մեր խոսակցությունից հասկանալով, որ զրուցակիցս Ստեփանակերտից է եկել, Օվչյանին հարցրին Ղարաբաղի վիճակի մասին: Նա ոչ այն է զայրացած, որքան հրամայական եղանակով բարձրաձայն ասաց՝ ավտոմատ տվե՛ք, ավտոմատ... Ամեն ինչ ասվեց...

Ղարաբաղյան շարժման իրադարձություններին է նվիրված նաև Ստեփանակերտի թատրոնի Հնագույն դերասան, որոշ ժամանակ նաև տնօրեն Զինավոր Գևորգյանի «Պապ, կրակում են» պիեսը: Հայրենասիրական այս պիեսը առաջին անգամ բեմ է հանվել 1998-ի մարտի 18-ին: Պիեսի բեմադրողը և ձևավորողը եղել է հեղինակը՝ Զ. Գևորգյանը:

Ղարաբաղում ծավալված ազատագրական պայքարի պատմությանը նվիրված պիես է գրել նաև լոնդոնաբնակ հայագետ-գրող Մանուել Ադամյանը: Նրա գրած պիեսներից են «Մահապարտը» և «Մեծ եղեռնը»: Առաջինը նվիրված է սփյուռքահայ ազատամարտիկ-նահատակ Մոնթե Մելքոնյանի գործունեությանը: Այս պիեսը 2004-ին ռեժիսոր Հակոբ Ղազանչյանի բեմադրությամբ ներկայացվել է Երևանի Պատանի Հանդիսատեսի թատրոնում: Նույն թվականին «Մահապարտը» բեմադրվել է նաև Լոնդոնի Ealing Town Hall սրահում: Իսկ երկրորդ պիեսը նույն Հ. Ղազանչյանի բեմադրությամբ 2005-ին ներկայացվել է Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում՝ նվիրված Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին:

Թեև ահա երկու տասնամյակ է, ինչ զինադադար է կնքված, բայց, ինչպես զարաբաղցիներն են ասում՝ «թորքը մնամ ա թորք», ամեն օր խախտում են զինադադարի ռեժիմը և տարբեր սահմանակետերից հարձակումներ կատարում, բաղմացնում ղոհերի թիվը:

Պատերազմական այս անվերջանալի ոտնձգությունները մեզ մոտ նորից հայրենասիրական ղողանջներ են բարձրացնում՝ ազատագրական թեմաներով պիեսներ գրվում ու բեմադրվում: Ղարաբաղցի գրող Կոմիտաս Դանիելյանը Ստեփանակերտի Վ. Փափաղյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն դառնալուց հետո սկսել է Ղարաբաղի ինքնապաշտպանության և անկախության հարցի շուրջը պիեսներ գրել: 2012-ին Երևանում լույս է տեսել նրա «Մենք մեր սարերն ենք» վերնագրով պիեսների ժողովածուն, որի մեջ ամփոփված են «Տո լաճ տնավեր», «Պըլը Պուղին Մոսկվայում», «Մենք մեր սարերն ենք» գործերը, որոնցից առաջինն ու վերջինը բեմադրվել են Ստեփանակերտի թատրոնում:

Դանիելյանի «Տո լաճ տնավերը» նվիրված է 1915-ի նահատակներ Ռուբեն Սևակին (կենտրոնական դեմքը), Կոմիտասին, Դանիել Վարուժանին, Սիամանթոյին, ինչպես նաև Սևակի կնոջը, Թուրքիայում գերմանական դեսպան Հանս Վանգենհայմի, Թուրք հրամանատար Հիլմի փաշայի և ուրիշների գործողություններին:

«Պըլը Պուղին Մոսկվայում» պիեսը նվիրված է Ղարաբաղն Ադրբեջանի կազմից հանելուն: Իբրև քաղաքական սատիրա, այդտեղ ընդգրկված են Խորհրդային Միության պետական գործիչներ Լենինը, Ստալինը, Խրուշչովը, Բրեժնևը, Գորբաչովը, Միկոյանը, ինչպես նաև զորավար Անդրանիկը և ուրիշներ:

«Մենք մեր սարերն ենք» պիեսը նույնպես նվիրված է Ղարաբաղի անկախությանը: Հայերի հետ գործող անձեր են նաև Թուրք սպան ու Թուրք թղթակիցը: Պիեսը գրվել է 2007-ին, ունի վեց պատկեր:

Օրվա իրադարձությունների հետ համընթաց քայլող թատերական գործիչները թեև իրենց հայրենասիրական «մարտերը մղել են» նկուղներում, շատ հաճախ մոմի լույսի տակ, բեմական աննպաստ պայմաններում, բայց կարողացել են բարոյական նեցուկ լինել թե՛ մարտնչող զինվոր-ազատամարտիկ-երկրապահ ուժերին և թե՛ ուժակոծությունների սարսափներն արհամարհող, Արցախի ազատագրությունը նվիրված բնակչությանը:

Արցախ-Ղարաբաղի ազատագրումը ադրբեջանական լծից հայ ժողովրդի մեծագույն ռազմա-բարոյական նվաճումն է:

## ՎԵՐՉԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայոց ցեղասպանության 120 և Մեծ եղեռնի 100-րդ տարելիցների առնչությամբ Հայաստանյան ու սփյուռքահայ համայնքների մի շարք թատրոններում և թատերախմբերում բեմադրություն են պատրաստվել տարվա դիսավոր թեմային վերաբերող պիեսներ, այդ թվում և առաջին անգամ հանդիսատեսին ներկայացվող դորժեր: Սրանցով համայն հայությունը ոգեկոչում է թուրքական բռնապետության կազմակերպված ջարդերին զոհ գնացած ավելի քան մեկ ու կես միլիոն մեր նահատակների հիշատակը: Այս ցավի ու հարգանքի տուրքը մեր ժողովրդի հիշողության պահպանման ամենաթանկ հարստությունն է:

Ապրիլյան սզո օրերի առթիվ տրվել են մի շարք նոր բեմադրություններ թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ օտարություն մեջ հայկական ոգով ապրող մեր հայրենակիցների համար:

Ապրիլի 13: Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում, նրա ղեղարկեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանի նոր բեմադրությամբ ներկայացվել է ամերիկյան դրամատուրգ Ռիչարդ Կալինոսկու «Հրեշը լուսնի վրա» պիեսը:

Ապրիլի 14: Վերսկսվել են ղերասան և ռեժիսոր Նարեկ Դուրյանի բեմադրած «Օպերացիա Նեմեսիս» պիեսի ներկայացումների շարքը: Նրա առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 2012-ին, բայց Հայոց ցեղասպանության 100-ամյակի տարելիցի օրերին նոր հնչեղություն է ներկայացվել: Պիեսը կազմված է Պ. Զեյթունցյանի «Ուղի՛, դատարանն է գալիս» դրամայի և Ֆրանսիական պատմաբաններ ժերար Շալյանի, Իվ Բեռնոնի, Ժակ Թերոժի ուսումնասիրություններից կազմված ընդհանուր տեքստով, պատմելով. մնջախաղային տեսարաններով, բեմի և դահլիճի միջև փոխըմբռնման կապեր հաստատելով: Ներկայացումները տեղի են ունեցել Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում:

«Օպերացիա Նեմեսիս» ներկայացումով Ն. Դուրյանի ղեկավար

րուծյամբ թատերախումբը նոյեմբերին հյուրախաղերով հանդես է եկել Բեյրութում: Տրվել է երեք ներկայացում, որոնցից մեկը՝ աշակերտության համար: Ներկայացումները խաղացվել են Բեյրութի Հայտնի Հ. Տեր-Մելքոնյան թատերասրահում:

Բեմադրության գլխավոր դերակատարներն են (ըստ որում, ոմանք երկու և ավելի կերպարների կատարմամբ)՝ Ն. Դուրյանը-Հոնան, Գագիկ Ռոստոմյանը-պատմաբան, Սարգիս Գրիգորյանը-Թալեաթ և գերմանացի դատախազ, Ավետիք Խալաթյանը - Ս. Թեհլիրյան, Քրիստինե Հովհաննիսյանը - Թալեաթի կինը և Թեհլիրյանի մայրը և ուրիշներ<sup>1</sup>:

Հայաստանյան և բեյրութահայ թատերական գործիչների ստեղծագործական վաղեմի համագործակցությունը նորովի հաճելի երևույթ է դարձել:

Ապրիլի 17: Վանաձորի Շարլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում, տեղի Պոեզիայի թատրոնի ղեկավար Զիվան Սարգսյանի բեմականացումով, բեմադրությամբ ու մասնակցությամբ ներկայացվել է Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքի բեմական տարբերակը: Ներկայացմանը մասնակցել են՝ Իվան Անտոնյանը, Սևակ Սարգսյանը, Դայանա Ամիրխանյանը, Երվանդ Ալավերդյանը, Նարեկ Մուկուչյանը, Արամ Քարաջյանը<sup>2</sup>:

Ապրիլի 17: Թեքեյան Մշակութային միության Նյու Յորքի «Մհեր Մկրտչյան» թատերախումբը, երկրորդ անգամ բեմադրել է Պերճ Զեյթունցյանի «Ոտքի՛, դատարանն է գալիս» դրաման: Պիեսը բեմադրել է Փարիզից հրավիրված, որոշակի համբավի հասած ռեժիսոր Ժիրայր Բաբազյանը, օգնական ունենալով թատերախմբի առաջնակարգ դերասան Հարութ Չաթմաճյանին: Ներկայացումը տեղի է ունեցել Բրոդվեյի «Սիմֆոնի Ըսփեյս» թատերասրահում: Երաժշտական ձևավորումը կատարել է Հարութ Պարսումյանը: Պիեսն արևելահայերենից արևմտահայերենի է փոխադրել Պայծիկ Գալայճյանը: Մամուլի վկայությամբ, ամերիկահայ թատրոնում առաջին անգամ այդ պիեսի ներկայացման ժամանակ է կիրառվել անգլերեն թարգմանությունը, որ կատարել է Անահիտ Քյուրտյանը<sup>3</sup>:

Բեմադրության դերակատարներն են եղել՝ Սողոմոն Թեհլիրյան - Հարութ Պարսումյանը, որը ներկայացումից հետո կատարել է «Հայի տառապանքը Տեր Զորից մինչև Այաշ ու Չանկըր» մենախոսու-

<sup>1</sup> Ազգակ (Բեյրութ) 2015, նոյեմբերի 20:

<sup>2</sup> Երկունք (Վանաձոր) 2015, № 4:

<sup>3</sup> Ազգ (Երևան) 2015, № 14:

թյունը, Թալեաթ – Գառնիկ Ներսեսյանը, Հենրի Մորգենթաու – Արմենակ Գուրուշյանը, Դոկտ. Մարթին Նիփակ – Բոյ Պաշյանը, Տոքթ. Եոհաննես Լեփսիուս – Հակոբ Վարդիվառյանը, Օթթո Լիման Ֆոն Սենտրըզ – Սարգիս Փիլավճյանը, Դատական ատյանի նախագահ – Հարութ Չաթմաճյանը, Դատախազ Կոլնիք – Շմավոն Ադամյանը, պաշտպան փաստաբաններ – Միսաք Պողոսյանը, Բաֆֆի Կյուլպենկը, Թալեաթի կինը – Թալին Գարակյուլլեյանը, Տիկին Դիտման – Էլիզապեթ Աքյանը և ուրիշներ: Հետաքրքրական է, որ այս ներկայացմանը մասնակցել են Հին սերնդի մարդիկ՝ 90-ամյա Վանեցի Հովհաննես Գարթալյանը Նազիմ պեյի և 80-ամյա Խաչիկ Սարըմինսյանը հայ քահանայի դերերում:

«Մհեր Մկրտչյան» թատերախմբի ատենապետ, երկար տարիների թատերական գործիչ Հակոբ Վարդիվառյանն իր խոսքում գրել է. «Միջազգային այս կարևոր ուստանի սրտին վրա Մկրտչյանցիներ կշարունակեն թատրոնի առաքելությունը նոր սերունդին և կմնան պահանջատերը մեր իրավունքներուն: Վերջապես, թատրոնը քաղաքական բեմ է»<sup>1</sup>: Միանգամայն ծափահարելի գնահատություն է:

«Մհեր Մկրտչյան» թատերախումբն իր այս ներկայացումով («Դատարանն է, ոտքի») 2016-ի ապրիլին հանդես է եկել նաև Գյումրիում ու Երևանում և հաճելի տպավորություն թողել:

Ապրիլի 18: Երևանի Հ. Լափլանյանի անվան Դրամատիկական թատրոնում, նրա գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանի բեմադրությամբ, առաջին անգամ ներկայացվել է Հայոց ցեղասպանությունն իր մի շարք պիեսներով դատապարտող Պերճ Զեյթունցյանի «Փարիզյան դատավճիռ» (A.S.A.L.A., 1981 Փարիզ) երկու գործողությամբ դրաման:

Պիեսը պատկերում է Հայոց ազատագրական պայքարի բանակի չորս խիզախ հայրենասեր երիտասարդների դատավարությունը՝ Փարիզի թուրքական դեսպանատան աշխատակիցներին մի քանի ժամ պատանդ պահելու համար:

Բեմադրության ձևավորումները կատարել են՝ բեմանկարիչ Կարեն Գրիգորյանը, զգեստների նկարիչ Մերի Սարգսյանը, իսկ երաժշտականը՝ Աշոտ Փափազյանը:

Պիեսի չորս հերոսի դերակատարներն են՝ Գրիգոր Խաչատրյանը – Վազգեն Սիւլյանի, Արտաշես Մխիթարյանը – Արամ Պասմաճյանի, Բաբկեն Զոբանյանը – Գևորգ Գյուլբեկյանի, Նիկոլայ Ավետիսյանը – Հակոբ Զուլֆայանի դերերում: Ներկայացման մասնակիցներից են

<sup>1</sup> Ազգ (Երևան), 2015, № 14:

նաև՝ Հրաչյա Հարությունյանը – դատավոր, Արթուր Ութմազյանը – Պատրիկ Դեեջյան, Արմեն Բարսեղյանը – Պյեր Դյովալ, Գրիգոր Գաբրիելյանը – Դասախոս, Գոհար Իգիթյանը – Մելինե Մանուկյան, Վահագն Գալստյանը – Քննիչ և ուրիշներ:

Ապրիլի 18: Կիպրոսի Համազգայինի «Օչական» մասնաճյուղի «Դիմակ» թատերախումբը Հարութ Թահմազյանի բեմադրությամբ Նիկոսիայի «Փալաս» սրահում ներկայացրել է Պերճ Զեյթունցյանի «Ուղի՛, դատարանն է գալիս» (Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը) դրաման<sup>1</sup>:

Ապրիլի կեսերին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի օրերին, «Հրեշը լուսնի վրա» պիեսը ներկայացվել է Պետերբուրգի Հայոց եկեղեցու դահլիճում: Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հոգևոր թեմի աջակցությամբ այն խաղացվել է «Գավիթ» երիտասարդական թատերախմբի ուժերով, իմբի ղեկավար Համլետ Ղալեչյանի բեմադրությամբ:

Մայիսի 1: Երևանի Պատանի Հանդիսատեսի թատրոնում, նրա գեղարվեստական ղեկավար, ցեղասպանության դեմ գրված մի քանի պիեսի բեմադրության հեղինակ Հակոբ Ղազանչյանի կողմից առաջին անգամ բեմ է բարձրացվել երիտասարդ դրամատուրգ Անուշ Ասլիբեկյան-Արծրունու «Մերսեդես» դրաման<sup>2</sup>: Բեմադրական աշխատանքներին օժանդակել են Աշոտ Քեչիշյանը, Վահան Արծրունին (երաժշտություն) և Գագիկ Կարապետյանը (պարեր):

«Մերսեդեսը» նախապես տպագրվել է որպես պատմվածք: Հեղինակը հետո բեմականացրել է այն: Պիեսի նյութը երկու տարագիրքույրերի ճակատագիրն է՝ սկսած 1946-ի Մեծ Հայրենադարձությունից մինչև մեր օրերը: Նրանց ծնողները Տեր Զորից մի կերպ Սալոնիկ հասած փախստականներ են եղել: Քույրերից մեկը՝ Զարուհին 1946-ին ներգաղթել է Հայաստան, իսկ մյուսը՝ Մերսեդեսը մնացել Սալոնիկում: Ծանր օրեր, տարիներ են ապրել, բայց իրարից չեն կտրվել, ղիմակայել են, հաղորդակցվել, միմյանց մխիթարել:

Ներկայացումն ընթանում է առանց ընդմիջումի: Նրա հերոսների ապրած դրաման ոչ միայն պատկերում է հին ժամանակների և մերօրյա կյանքը, այլև հանդիսատեսին մասնակից է դարձնում բեմադրության ընթացքին: Ներկայացման տրամադրությունը բարձրացնում է հերոսների լավատեսությունը, առողջ ծիծաղը:

Պիեսի գլխավոր հերոսուհու՝ Զարուհու ղերակատարման համար

<sup>1</sup> Արձագանգ (Նիկոսիա) 2015, № 1-2:

<sup>2</sup> Տպագրվել է Դրամատուրգիա (Երևան) հանդեսում 2013, № 34-35:

Թատրոնի ղեկավարութունը հրավիրել է սփյուռքահայ թատրոնի և կինոյի հանրահայտ դերասանուհի Նորա Արմանիին (Էքսերճյան), որի վերադարձից հետո, այդ դերը շարունակում է խաղալ Նառա Սարգսյանը: Կերպարի մեկնաբանման հոգեհարազատութունը երկուսի մոտ էլ բարձր ներշնչանքով է մատուցվել ու բարի հետք թողել: Մերսեդեսի դերում հանդես է գալիս Լարիսա Ղևոնդյանը: Ընդհանուր տպավորությանը նպաստում են Իշխան Ղարիբյանը՝ կոմերիտականի, Վիգեն Թադևոսյանը՝ փոստատարի դերերում և ուրիշներ:

«Մերսեդեսից» բացի Ասլիբեկյանը ցեղասպանության թեմայով գրել է նաև «Կոմիտաս. Լույս բարեբեր» դրաման: Պիեսը բեմադրվել է Սանկտ Պետերբուրգում, ռեժիսոր Համլետ Հայրապետյանի և ռուս դերասան – ռեժիսոր Իվան Լատիշևի կողմից ու նվիրվել Կոմիտասի մահվան 80 և Հայոց ցեղասպանության 100-ամյակներին<sup>1</sup>:

Մայիսի 3: Շիշլիի (Կ. Պոլիս) Քենթ Մշակութային կենտրոնում, Ազգային կեդրոնական վարժարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Դանիել Վարուժանի հիշատակի ոգեկոչման երեկույթ, որի ժամանակ խոսքից, արտասանությունից բացի, վարժարանի աշակերտության ուժերով ներկայացվել է նախկին սան Պողոս Չալկըճըղլուի՝ Դ. Վարուժանին նվիրված «Մ՛վ է պատասխանատու» պիեսից տեսարաններ, 9-10-րդ դասարանների աշակերտների կատարմամբ: Դ. Վարուժան – Մասիս Թաշը, Արաքսի – Մելանի Աքա, Տղա մը – Առատ Երլուրըմ, Դ. Վարուժան (տղա) – Նարեկ Պոյնուզալըն, Վահրամ Փափազյան (տղա) – Տայք Միսիսողլու, Ոստիկան – Ռաֆֆի Աշճը<sup>2</sup>:

Հուլիսի 5: Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետթատրոնում ներկայացվել է անվանի դրամատուրգ Կարինե Խողիկյանի «Մեկ ժամ հիշողութուն» մեկ մասանոց դրաման: Պիեսի տպագիր օրինակը բաղկացած է 2 գործողութունից<sup>3</sup>:

Ամերիկյան գիտնական Անդրե Արսենն ընկնելով մի հայի ընտանիք, կարոտով է հիշում Կարին-Էրզրումից Ամերիկա գաղթած իր պապի պատմությունները: Հենց այդ կարոտով էլ երիտասարդ մարդն ապրում է օտար շրջապատում: Նրա կյանքում, հատկապես վերհուշի առումով, նշանակալից դեր է կատարում այդ հայ ընտանիքի փոքրիկ աղջիկը՝ Ջապելը և հուշում, որ նրա գալիք երեսույթի անունը Կարին դնեն:

<sup>1</sup> Գրական թերթ (Երևան) 2015, № 32:

<sup>2</sup> Դանիել Վարուժան, 1884-1915, Ստամբուլ, 2015, էջ 59:

<sup>3</sup> Դրամատուրգիա (Երևան), 2013, № 34-35, էջ 68-99:

«Մեկ ժամ Հիշողություն» դրաման բեմադրել ու զգեստների ընտրությունը կատարել է թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահե Շահվերդյանը: Նկարչական ձևավորումը կատարել է բեմանկարիչ Կարեն Գրիգորյանը, երաժշտության ձևավորումը՝ Սեդրակ Զարգարյանը:

Բեմադրություն մեջ զբաղված են՝ Անդրե Արսեն – էդգար Քոչարյան, Զապել – Մերի Միքայելյան, Մեծ մայր – Հասմիկ Ալեքսանյան, Հայր – Արթուր Պապիկյան, Մայր – Ալլա Դարբինյան, Ավագ քույր – Արմինե Վերմիշյան, Ավագ եղբայր – Արման Սաքանյան, Սպասուհի – Մարինե Պետրոսյան, Սպասավոր – Հովհաննես Հարությունյան, Մարի Դեղանել – Թինա Գալոյան, Ֆիլիպ Արմսթենյ – Լևոն Զաքարյան, Փան Պերիե – Հակոբ Դեմիրճյան:

Հուլիսի 9-10: Երեանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, Տյուրիխի (Շվեյցարիա) պետական թատրոնի բալետի մենակատար (Երեանի պարարվեստի ուսումնարանի շրջանավարտ) Արսեն Մեհրաբյանի բեմադրությամբ, իր սցենարով ներկայացվել է «Արշիլ Գորկի» մեկ գործողությամբ բալետը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարվան:

«Արշիլ Գորկի» բալետը կառուցվել է Մեծ եղևունից փրկված, գաղթի շրջանում մորը կորցրած (մահացած), ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու (Ոստանիկ Ադոյան) կյանքի վերջին տարիներին գրած նամակների բովանդակության բացահայտման վրա: Ներառվել է հեռակա հանդիպում մոր հետ, գաղթի շրջանի առանձին տեսարանների ցուցադրություն, որոնք համալրել և ընդհանուր տպավորություն են հաղորդել ցեղասպանության տխուր հետևանքների մասին:

Բեմադրության մեջ զբաղված են հղել *Forceful Feelings* շոուի և «Բարեկամություն» պարի անսամբլի (գեղարվ. ղեկ. Նորայր Մեհրաբյան) միացյալ ուժեր, հրավիրված և տեղական բալետի արտիստներ: Գեղարվեստական և զգեստների ձևավորումները կատարել է Օտտո Բուբենիչեկը, իսկ երաժշտության մեջ օգտագործվել են Կոմիտասի («Ծիրանի ծառ»), Ի. Ս. Բախի, Ալյան Հովհաննեսի երաժշտական որոշ գործեր:

Կենտրոնական դերերի կատարմամբ հանդես են եկել՝ Արսեն Մեհրաբյանը (Արշիլ Գորկի), «Բարեկամություն» պարախմբի մենապարուհի Անժելիկա Դավթյանը (Մայրը), Փնևի Մեծ թատրոնի մենապարուհի Անժելա Լի Ռեբելոն (Կինը)<sup>1</sup>:

<sup>1</sup> Голос Армении (Երևան) 2015, № 76:

Արշիլ Գորկուն նվիրված մի պիես էլ տեղ է գտել Գյումրիի Վ. Աճեմյանի անվան թատրոնում: Ռեժիսոր Հովհաննես Հովհաննիսյանի բեմադրությամբ ներկայացվել է Գեորգ Սարգսյանի «Արշիլ Գորկի» դրաման:

Այս թատերաշրջանում բեմադրության են պատրաստվել ևս երեք ներկայացում: Թատերաշրջանի ավարտին հանդիսատեսին է հանձնվել Տիգրան Քելեմյանի նոր պիեսը՝ «Մենք, նրանք. հետաքննություն» դրաման, որը նույնպես նվիրված է Հայոց ցեղասպանության դատապարտմանը: «Մենք, նրանք. հետաքննություն» պիեսի վերնագիրը եթե պարզեցնենք, կտացվի՝ հայերը, թուրքերը և Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը:

Հայկական մի թատերախումբ մեկնում է Թուրքիա և Հայոց ցեղասպանության հետքերով որոնումներ կատարում արխիվներում: Թուրք արխիվապահը, որի տատն էլ հայուհի է, չի հավատում, որ թուրքերը կարող էին այդպիսի ոճրագործություններ կատարել: Իրողությունը պարզելու նպատակով կազմակերպվում է ներկայացում, ներկայացման մեջ՝ դատ դատի դեմ:

«Մենք, նրանք. հետաքննություն» դրամայի բեմադրությունն իրականացրել է «Էդգար Էլբակյան» թատրոնի գեղարվեստական ղեկավար, ռեժիսոր Արմեն Էլբակյանը, ձևավորել է Գարեգին Եվանզուլյանը<sup>1</sup>: Ներկայացման մասնակիցներն են՝ Մեսրոպ Աբտոյանը, Աննա Էլբակյանը, Տաթև Հոռուփյանը, Ստեփան Շահինյանը, Դավիթ Գասպարյանը, Հակոբ Հակոբյանը, Հմայակ Ազիյանը, Շողեր Գրիգորյանը:

Բեմադրության պատրաստված՝ մեզ հայտնի վերջին պիեսն ու նրա բեմադրողը նորություններ են մեր՝ ժամանակակից թատերական կյանքում: Բեմադրողը՝ Սունդուկյանի անվան թատրոնի նախկին ղեկավարն է Կարինե Քոչարյանն է (Սուքիասյան), որը պատահարի գոհ զնացած ամուսնու, շնորհալի ղեկավարն է Վլադիմիր Քոչարյանի անունով թատերախումբ է կազմակերպել և մտադրվել է հոկտեմբերին հյուրախաղերով հանդես գալ Հայաստանում:

Քոչարյանը թուրք գրող Քեմալ Եալչընի «Հոգիս ձեզմով կխայտա» գործի հիման վրա գրել է նույն անունը կրող փաստագրական դրաման և բեմադրությանը նվիրել Հայոց ցեղասպանության 100-ամյա պատմությունը: Բեմադրությունը Հայաստանում ներկայացվել է 2015-ի հոկտեմբերին Գյումրիում, Վանաձորում և Երևանում:

<sup>1</sup> Առավոտ (Երևան) 2015, № 145:

Վերջին տարիներին Հայոց ցեղասպանության թեմայով գրված, հրքեմն էլ տպագրված ու բեմադրված պիեսներից կարողացել ենք ի հայտ բերել նոր՝ ուշադրության արժանի գործեր:

Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի կապակցությամբ 2005-ի ապրիլի 28-ին, Լոս Անջելեսի Հայ դրամատիկ արվեստների միության նախագահ, ծնունդով իրանահայ Բիանկա Բազատուրյանը ներկայացրել է իր «Քայլեր» փոքրիկ պիեսը: Նյու-Յորք հարցազրույց է 90-ամյա վերապրողներից մեկի հետ, որից հետո նա մահանում է: Այս պիեսը բեմադրվել է նաև Մասաչուսեթսում (2007) և Գլենդելում (2010):

2008-ին, թատրոնի և դրամատուրգիայի ասպարեզի մտավորական Ռոբերտ Սկուտը հրատարակել է «Ցեղասպանության թատրոն» վերնագրով պիեսների մի ժողովածու, որում տեղ դտած գործերում դատապարտվում է ցեղասպանության ակտը Ռուանդայում, Բոսնիայում, Կամբոջայում և Հայաստանում: Այդ պիեսներն են.

Լորն Շիրինյանի «Աքսոր օրորոցում» պիեսը նվիրվել է ցեղասպանության բոլոր տառապյալներին, նրանց, ովքեր դեռ զգում են այդ ցավը: Գործողությունները կատարվում են 1915-ի ապրիլի 26-ից մինչև 2001-ի դեկտեմբերի 1-ը: Մի Հայ երիտասարդ և մի միջին տարիքի մարդ զնայքով գնում են (տանում են): Երիտասարդը վրդովված է թուրքական Հայաստան ուժիմի դեմ, միջահասակը մեղմում է նրա վրդովմունքը, կարծելով, թե կիրկվեն: Երիտասարդը վազոնից ցած է զցում իրեն: Միջահասակը տեսնելով զավակների սպանությունը, հասկանում է երիտասարդի իրավացիությունը: Երիտասարդը հայտնվում է Տորոնտոյում: 85 տարեկան հասակում էլ տառապում է անցյալի արհավիրքներից:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի օրերին, 2015-ի ապրիլի 28-ին, Լոս Անջելեսի Քրեք Դուգլասի անվան թատրոնում Centr Theatre Group-ի և Հայկական դրամատիկ խմբի դերասանական ուժերով մի երեկոյում ներկայացվել են Նիլ ՄակՖերսոնի «Ուզում եմ մեռնել երգելով», Սևան Գալուստյան-Գրինի «Մոռացված հացը» և Լեսլի Այվազյանի «15/15» պիեսները: Բեմադրող ուժիսորն է եղել Միքայել Արաբյանը, երաժշտության ձևավորողը՝ Սալբի Կերգոնիանը: Լ. Այվազյանն իր պիեսում կատարել է Բեատրիսի դերը: Երեք պիեսում էլ մասնակցել են 4-ական դերակատար:

Ընդհանուր ցեղասպանության հարցերին է նվիրված կանադացի հնդիկ դրամատուրգ Ռահուլ Վառմայի «Հարատևող ժխտում» պիեսը, որտեղ զուգահեռներ են անցկացվում 1915-ին թուրքիայում հայերի և 1995-ին Ռուանդայի (Աֆրիկա) ցեղասպանության միջև և դատապարտում ցեղասպանությունն առհասարակ: Նյու-Յորք ուժիսորը հարցազրույց է ունենում Սահանա անունով մի հարգված

Արյունոտ թթիւմոր

բեմականացում, 1906, Ֆիլիպե

բեմականացումը Կարո Խաչատրյանի, 1959, Բեյրութ

բեմականացում, 1981, Թեհրան

Խայը

բեմականացում, 1964, Թավրիզ

Մայրը (Մայրերը)

բեմականացումը Մնացական Մարությանի, 1912, Օքրոյա-  
կերտ, Վրաստան

բեմականացում, 1915, Բաքու

բեմականացում, 1919, Կ. Պոլիս

բեմականացում, 1926, Փարք (ԱՄՆ)

բեմականացումը Վահրամ Տեր-Բարսեղյանի, Զիկագո,  
Պրովիդենս

բեմականացում, 1932, Իրանի Փերիա գավառի Բոլորան գյ.

բեմականացումը Նորայր Պահլավունու, 1960, Թեհրան

բեմականացում, 1962, Նոր Զուղա

Վազրիկը

բեմականացումը Մանվել Մարությանի, 1961, Թեհրան

բեմականացումը Ալբերտ Մինասյանի, 1975, Ահվազ

8. Ահմարանյան Հովհաննես (XX-XXI դդ., Փասատինա)

Արծիվներու բերդը (1999) – Շապին Գարահիսարի, Մուշի,  
Էրզրումի արյունալի դեպքերեն

Երկու անունով աղջիկը (1984, Փասատինա)

Հույսը, որ չի մեռնիր (1985)

9. Աղայան Աբրահամ (XIX-XX դդ.)

Հայրենյաց ազատագրումը (1915)

Չար մարդու վերջը (1911, Մոսկվա)

10. Աղաջանյան Հովհաննես (XX դ.)

Ողջեր և մեռածներ

11. Աղասարյան Անահիտ (1958 ?)

Ղողանջ հուսո (ըստ Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն»  
պոեմի)

12. Աղասի (Թուր-Սարգիսյան Կարապետ, 1881-1941)

Զեյթունի հերոսները

13. Աղասյան Հակոբ (1880-ակ. թթ. – 1935-ից հետո)

Լրտեսին զոհը («Հեղափոխաշունչ դրամա», 1908, Ադրիանա-  
պոլիս)

14. Աղեկյան Վարսիկ (որբուհի, Թիֆլիս, XX դ.)

«Կամավորական» շարժման մասին, 1914

կյանքում: Ներկայացման կազմակերպիչները պիեսում շոշափվող հարցերը կապել են ժամանակակից Թուրքիայի կանանց անազատ վիճակին: Բեմադրութայն նախաձեռնողներին է եղել դերասանուհի Էլիֆ Գարաման:

2015-ին, Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին, ցեղասպանութայն թեմային է անդրադարձել և Վրոցլավի Եժի Գրոտովսկու անվան Թատերական ինստիտուտի «Թատրոն ԶԱՌ»-ը, որի գեղարվեստական ղեկավար Յարոսլավ Ֆրետի բեմադրութայն մերկայացվել է «Արմինե, քույր» վերնագրով պիեսը: Երգի, շարժումների, դանազան միջոցներով պատկերացում է տրվել հայկական կոտորածների և այն համաշխարհային կյանքում լուութայն մատնելու, անտարբերութայն դիրքորոշման մասին:

Այս պիեսը ներկայացվել է նաև Ամերիկայում, Թատերական Փառատոնի ժամանակ՝ մայիսի 24-30-ին Սան Ֆրանցիսկոյում: Այնուհետև այն խաղացվել է եվրոպական քաղաքներում՝ Ավինյոնում, Էդինբուրգում, Վենետիկում, Կրակովում, Բրյուսելում:

Հնարավոր է, որ ուրիշ Թատրոններում ու Թատերախմբերում ևս նորութայններ լինեն, որոնք կհամալրեն թե՛ ցեղասպանութայն թեմայով գրված պիեսների շարքը, որոնց մոտավոր թիվը անցնում է 400-ից, և թե՛ մեր Թատրոնի պատմութայն էջերը: Ցավալի է, սակայն, որ հայ Թատրոնի այսօրվա խաղացանկում Հայոց ցեղասպանութայն թեմայով տասից ավելի պիեսի բեմադրութայն ունեցող Թատերական կյանքում մի փառատոն չկազմակերպվեց այս ոգեկոչման տարում:

\* \* \*

Հայոց ցեղասպանութայն թեմայով գրված պիեսները, ինչպես նաև նույն բովանդակութայն արձակից ու չափածոյից կատարված բեմականացումներն ու նրանց բեմադրութայնները միասին կազմում են մեր հայ ժողովրդի ապրած կյանքի, մի ամբողջ դարաշրջանի ողբերգութայն ստույգ պատմութայնը:

Հայոց ցեղասպանութայն և նրա տխուր հետևանքների մասին թեման վերջ չունի և չի ունենա այնքան ժամանակ, մինչև որ Թուրքերի կողմից հայերին հասցրած ֆիզիկական ու բարոյահոգեբանական վերքերը բուժում-հատուցում չունենան: Ինչպե՞ս վերջանա, երբ արմատահան արված հայութայն մի քանի սերնդի ներկայացուցիչների վիրավոր սրտերի մորմուքը, կակիժը չի դադարում, աչքերի արտասուքը չի չորանում, հիշողութայնը չի մշուշվում: Քանի դեռ իշխում է՝ «հայ չկա, հայի պրորբեմ էլ չկա» քաղաքականութայնը, դժվար թե մեր ժողովրդի ողբերգութայն ժանրը փոխվի:

Հայերի նկատմամբ թուրքերի, գերմանական սպայակազմի, քյուրդ վարձկանների կազմակերպած կոտորածները, բռնությունները աշխատավոր Հայերի զգալի մասին դարձրել են ազատագրական պայքարի ջոկատների մարտիկներ, տնից-տեղից կտրված ֆիդայիներ, որոնք նվազագույն ուժերով ձգտել են ապահովել իրենց գյուղի, քաղաքի բնակչուկայան խաղաղ կյանքը, հայրենի ոստանը, ընտանիքի պատիվը: Զարմանալ կարելի է, որ արդեն քանի՞ հարյուրամյակ է թուրքերն ապրում են հայ ճարտարապետների, շինարարների կառուցած պալատներում, բայց չեն հանդուրժում նրանց գոյությունը թուրքիայի բռնապետական տարածքում, մի երկրամաս, որտեղ ավերումներից բացի ոչ մի դրական բան չեն կատարել:

Ո՞ր հայը կարող է հաշտվել այն մտքի հետ, երբ թուրքը գրավի նրա հայրենի գյուղը, քաղաքը, շրջանը, կոտորի տեղական քրիստոնյա ազգաբնակչուկայանը, դազանաբար ոչնչացնի հայության հետքերն ու նա հլու-հնազանդ լռի...

– Երբ տիրացել է նրա դարավոր ապրած տանը, վարելահողին, այգիներին, արհեստանոցներին, մառաններին, գոմերին, անասուններին, կրթական և մշակութային շինություններին ու լռի...

– Երբ ավերել-կործանել են ժողովրդի քրտինքով, պապերի ջանքերով կառուցած պաշտպանական շինությունները, կամուրջները, ջրաղացները, աղբյուրները, որպեսզի այդտեղ ևս չնկատվի հայի հետքերը, ու նա լռի...

– Երբ սրբապղծվել ու սրի են քաշվել հազարավոր ընտանիքներ, առևանգվել դեռատի օրիորդներ ու կանայք, հաճախ էլ՝ վերավաճառվել մարդատրսողներին ու կորցրել նրանց հետքերը և նա հարմարվի ու լռի...

– Երբ մարդկային բարոյական խիղճը կորցրած (դեռ հարց է երբևէ ունեցել են այդպիսի մարդասիրություն) թուրք ասկյարներն իրենց տմարդի հաճույքի համար գրազ գալով, թրատել են հղի կանանց փորը, որ տեսնեն պտուղը տղա՞ է, թե աղջիկ: Կարելի՞ բան է, որ հայ չէ, ով ուզում է լինի, լսի ու լռի...

– Երբ ասիական ֆաշիստները մեծ հրճվանքով քարով ջախջախել են թուրքական պառլամենտի հեղինակավոր անդամ, մեծ գրող ու իրավաբան Գրիգոր Զոհրապի խելոք գլուխը, դրանից հետո կարելի՞ է նրանց մարդկային արարածների թվին դասել ու հանդիստ խղճով լռել...

– Երբ երեսանների աչքի առաջ դնդակահարել կամ սրի են քաշել նրանց հարազատներին կամ նույն եղանակով ծնողների առաջ վերջ են տվել նրանց զավակներին, ներելի՞ բան է հաշտվել այդ մտքի հետ ու լռել...

– Երբ ծայրահեղ հուսահատության մեջ մարդիկ գերադասել են ընտանիքներով դետում կամ ծովում խեղդվել, քան գազանի գնդակին կամ սրին զոհ դառնալ, անշիրիմ կորչել, սերունդ չթողնել, նրանց հառաչանքը եթե չենք լսել, մի՞թե խլացել ենք, ինչո՞ւ լռենք...

– Երբ մի անհատը ի՞նչ կարող էր անել պետութայան դեմ, որ հրապարակայնորեն կացնով կտրում են նրա գլուխը ամբոխի առաջ, ժամերով թողնում, որ սգան-ողբան, արի մի՞ ողբա ու լուռ հեռացիր...

– Երբ մեկը քիչ է, քսան «մեղապարտի» են միասին կախաղան հանում Բայազետի հրապարակում, արգելում մարդկանց՝ չմոտենալ նրանց, ո՞ւր է խիղճ ասված բառը, ինչո՞ւ և ինչպե՞ս լռել...

– Երբ որք երեսաներին թուրքացնելու նպատակով, «բարերար» ձևացած անուան են փոխել, հավատը մեռցրել, ազգը մոռացրել, ցեղը սպանել-սա՞ ինչպես տանել ու հանգիստ լռել...

– Երբ իրենց չարամիտ գործերով աշխարհը որբերով լցրին, իսկ սրտացավ հայը ամեն մի որբի համար մի ոսկի տալով, որբանոցներ բացելով, խնամելով և ուսում տալով նրանց կյանքը հոգաց, երբեք չի լռի ու միշտ կմնա պահանջատեր:

– Երբեք թուրքի մտքով անցե՞լ է, որ այժմյան տարածքի մի մասը, որ նա գենքի ու զորքի վայրագությամբ, Բյուզանդիայի հետ զավթել է Արևմտյան Հայաստանը և զրկել նրա հայ բնակչութայնը հայրենիքից: Եկվորն ու զավթողն ինքն է, զրկվածը՝ բնիկ հայը, որը վաղուց ցրվել է աշխարհում, կարոտը՝ սրտում... ինչպե՞ս լռի:

– Ինչպե՞ս հաշտվել այն իրողութայն հետ, որ Հայոց 13 մայրաքաղաքներից չորսը՝ Վանը, Տիգրանակերտը, Կարսը, Անին ներկայումս որբացած մնում են Թուրքիայի զավթած տարածքում և քանի՞ հայ է ապրում այդտեղ:

– Ե՞րբ է գալու այն բաղձալի ժամանակը, երբ հայը ոչ թե զբոսաշրջիկի կարգավիճակով երկու քայլի հեռավորությամբ Անիին տեսութայն գնա ու արտասուքն աչքերին վերադառնա, այլ իր ժառանգական իրավունքով ապրի ու աշխատի այնտեղ, վերականգնի նրա անցյալի փառքն ու հեղինակությունը:

– Ե՞րբ է տոնական դառնալու այն կրանավետ օրը, որ Բագրատունյաց թագավորութայն բերդ-ամրոց Անի մայրաքաղաքի բուրգաձև պարիսպների վրա փողփողա Հայկական դրոշակը, պատարագը մատուցվի Մայր տաճարում, դառնա հայոց պատմութայն թանգարանը բաց երկնքի տակ, որպեսզի այլևս ոչ ոք կարոտով չերգի՝ «տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» սրտակեղեք երգը:

Չէ՛, չպետք է լռել: Պետք է աշխարհի աչքն ու ականջը բացել:

## SUMMARY

### **The Theme of the Armenian Genocide in the Theatre (1895-2015)**

*Every event or phenomenon that occurs in the Armenian political and social life finds its coverage in the theatre. Many playwrights have pursued the theme of the Armenian Genocide, which has gained a permanent place in the repertoire of Armenian theatre for already 120 years. Besides Armenians, people of different nationalities have also touched upon this theme in condemnation of this phenomenon.*

*Every work written on the Armenian Genocide is a specific incriminating document-testament denouncing this monstrous act.*

*In several hundred plays written on the Armenian Genocide and its sad consequences a considerable part of characters, both Armenians and Turks, or even people of other nationalities, are real figures, historical personalities. The authors of the plays are eyewitnesses who have miraculously escaped the massacres, their heirs in the third and fourth generations who have continued the work condemning the genocide, as well as non-Armenian writers who as human beings, deeply feel the pain of the Armenians.*

*Writing and speaking about the Armenian Genocide is a loud ring for mankind to denounce any bloody attempt of genocide in a combined effort and bring peace to the peoples of the world.*

*Drama works written in condemnation of genocide are endless pages in the history of liberation struggle via theatrical art – through word and action.*

*The late 19<sup>th</sup> century dramaturgy picturing the historical past of Armenia was replaced by plays condemning the attempts of massacre that started in 1890s in Mush, Sassoun, Zeytoun, Van, Tigranakert and other places. The massacres, deportations, oppression, plunder and pillage forced the Armenians to engage in freedom-fighting movement and self-defense to save their families, villages and the surroundings. But it did not help either, as it infuriated the Turks even more and boosted mass genocide.*

*Plays created on the Armenian Genocide and its adverse consequences have gone through four staging periods in the history of Armenian and non-Armenian theatre.*

- 1. The reflection of 1895-1915 mass murders and massacres in the Armenian dramaturgy and theatre.*
- 2. Plays written by Armenians in the Armenian language and performances based on these works featuring the 1915 Genocide and its aftermath.*
- 3. Plays written by Armenian authors in mother tongue or foreign languages performed in the Armenian and non-Armenian theatres.*
- 4. Production of plays written by non-Armenian authors on the Armenian Genocide in the theatres worldwide in English, Arabic, Bulgarian, German, Spanish, Greek, Czech, Polish, Romanian, Russian, French languages as well as in their Armenian translations.*

*In the theatrical life the first samples depicting struggle against the Armenian Genocide appeared in the 1880s. Two important data in the history of this issue should be mentioned.*

*First, after the Russo-Turkish War of 1877-1878 (during which 60, 000 Armenians were killed in the military arena in Armenia), the great patriot and dramatist Gabriel Sundukian wrote the play "The Husbands" in 1888. Being under the control of the tsarist Russia, he responded to the heavy plight of Western Armenians under the veil of family relationships.*

*One of the characters, the Russo-Turkish war veteran officer and writer Artashes Aramian says to his agriculturist friend, Levon Shirakian. "You cannot even imagine what you feel in command of the battlefield, when suddenly you face .... the age-old enemy who has stolen your land, for which your grandparents and ancestors have sweat blood and where every stone, every ruin tells you the glory of the past".<sup>1</sup>*

*On another occasion, speaking of "our poor countrymen" Aramian says: "You do not know in what plight those poor people are. Honor, life, wealth, family, nothing, nothing is secure for those miserable people".<sup>2</sup>*

*"The Husbands" is the only play written by Sundukian in literary language which he explained by the fact that "through the main characters of the play he tried to convey the idea of independent and free Armenia, and to preach the ideas of patriotism in the Armenian dialect of Tiflis (Georgia) would be ridiculous".*

*Second, together with the Armenians, the 25th anniversary of Sundukian's literary activity was also celebrated by Tabriz intelligentsia who sent him an address of congratulation. On this occasion, his most*

---

<sup>1</sup> G. Sundukian, "The Husbands", Act 1, Scene 12.

<sup>2</sup> Ibid, Act 4, Scene 5.

*famous play 'Pepo' was performed by Caucasian Armenian actors Stepan and Alma Safrazians in December 1888 in Azeri Turkish translation (translated by A. Panvelyan).*

*The performance was followed by presenting four live images called "Dream" devoted to the "Armenian issue" (question).*

- 1. Mother Armenia (Janik Aramian's famous picture) is sitting sadly on the rubble of the Armenian ruined capital.*
- 2. A Turk, with a sword in his hand, holding fiercely the woman (Mother Armenia) by her plaits wants to kill her.*
- 3. Mother Armenia seizes the sword from the hand of the Turk and chases to kill him.*
- 4. Mother Armenia has killed the Turk and placed her foot on his chest showing the hand shield, with the large number 61 displayed on it.*

*The political content of "Dream" was criticism of European policy-making for moving the discussion of Armenian question from Article 16 to Article 61 in the Congress of Berlin.*

*Several people in the audience (including foreign diplomats), representatives of Turkey in Tabriz wanted to ban the "Dream", but the Iranian government did not allow to interfere with the internal life of their country.*

*In mid-1890s, to escape the massacres in Western Armenia organized by the Turks, a large group of Armenians found refuge in Bulgaria. The theatre performers set up troupes, created and directed plays on the theme of massacres. The first to perform was Tigran Galemchian, an ex-actor, prompter and playwright in Constantinople's "Eastern Theatre", who since 1896 had produced "The Heroes of Sassoun", "Zeytoun Rebellion", "The Heroes of Vaspourakan" in Varna. The latter play was also staged in Sofia (1904), where the part of Komitas was performed by the actor of Shakespearean theatre, orphaned Karapet Galfayan from Trabzon.*

*The play "The Armenian Hayduks" was performed in Bulgaria in 1899, directed by Vahan Papayan and Arshak Penlian, actors who had emigrated from Constantinople. Among other plays staged by them were "Sassoun Rebellion", "Aslan Zarouhi or the Bloody Wedding" and "Arabo" written by Armen Shitanian.*

*Many theatre performers who escaped the massacres in 1895-1896 and emigrated to America continued their theatrical life in the new places. Emigrants from Tigranakert who mostly concentrated in the West Hoboken, New Jersey, performed "Tigran Avenger" and "Mother Armenia" by Armenak Shishmanian, "Gohar" ("The Murder of Tigranakert and Gohar's Kidnapping") by Thovmas Zavzavatchian and other plays.*

Mushegh Bazeyan's "Fights of Van Self-Defense" was devoted to the heroic battles in Van; Aghassi (Karapet Ter-Sarkissian) wrote about the self-defense of Zeytoun and surrounding areas in "Zeytoun heroes" and many other plays.

Caucasian Armenians also touched upon the deplorable plight of Western Armenians. The first to address the issue was Vardan Shahparonian, a literary man and educator from Akhalkalak, who wrote the play "Freedom-fighter Armen" in 1901, but the performance was banned by the censorship committee. After making some changes to the play and giving it a different title, "Armen and Fathma, or The Siege of Zeytoun", it was staged in Baku in 1915 by actress Siranouysh, who also acted as Fathma.

Shah-Paron was also the author of "Sea of Tears" (or "Tortured people"), in the preface to which he expressed his cry of protest against Turkey's anti-Armenian policy. He wrote: "It is a depiction of life of our unfortunate Armenian people in Turkey, this is still a far-away, remote image of everything that happened in this bloody country ... No, no, there was blood, streams of tears running; sobs, laments, wailings, heart-rending cries, terrible voices calling for help were heard".

At the beginning of the 20th century among the writers and playwrights who created plays on the genocide theme were Avetis Aharonian ("Valley of tears", "The Oath-Givers"), Levon Shant ("The Egoist", "On the Road"), Bagrat Ayvazian ("Sassoun Burning") and others.

In June 1908, the new Ottoman Constitution was introduced by which, as if certain rights were granted to national minorities. But hardly a year had passed, the Adana massacre was organized in April 1909, resulting in killing of 11,000 Armenians. As a sign of protest against the atrocities, the Tbilisi Armenian Drama Group presented A. Sumbatov-Yuzhin's drama "Betrayal" directed by Olga Maysuryan, in which the actor Arshak Harutyunyan playing the part of Suleyman Khan appeared in Abdul Hamid's makeup. A brilliant idea.

After the Genocide in April 1915, the genocide theme was covered with a new content. Along with the writers living in the Caucasus, Western Armenians who had survived the massacre started to write plays in parallel. The exile survivors, victims' relatives, people who witnessed and never forgot the horrible scenes wrote about genocide, and mourned the vicious murder of more than one and a half million Armenians in their tragedies and dramas.

Among the authors whose plays were staged most on the theme of the Armenian Genocide were Suren Partevyan's "Eternal flame", "The voice rang out", Sedrak Shahen's "Taleat's Murder", "Outstanding Arches", "The Armenian Wedding", "The Tortured", "Twenty Gallows". The latter

play is devoted to 20 Hnchakyan activists who were hanged in Bayazid Square of Constantinople on June 15, 1915. One of these twenty activists, Paramaz, also authored plays on the theme of genocide, namely "Hands up", "Pako", both staged during his lifetime and after his death.

In the decades since, plays that gained wide recognition are Moushegh Ishkhan's "It is So Hard to Die", Alexander Sarukhan's "We Do Not Know Armenian", and many more plays, as well as productions based on prose written on the theme of genocide.

Several authors, in addition to the mother tongue have composed plays in English and French. Among them are Ghevond (Leon) Meloyan ("Armenush"), William Saroyan ("My Heart's in the Highlands"), Herand Markarian ("Mirrors") and many others.

In recent decades, authors whose works on genocide theme have been performed most include Perch Zeytuntsian ("All rise, the Court is in Session", "The Great Silence" and others), Vache Atruni ("The Battle of the Apostles Church", "The Old Man and the Mountain") and others.

Many plays were written about the heroism of Andranik, Gevorg Chaush, Komitas, Soghomon Tehliryan and other figures, as well as on events and places of heroic self-defense.

In the second half of the 20th century, non-Armenian playwrights perceiving the troubles and pain of the persecution of the Armenians started to create works in condemnation of the Armenian Genocide. Among them are: Alfred Brunaud (French), Franz Werfel (German), Richard Kalinoski (English), Luey Ayate (Arabic), Claudia Piñeiro (Spanish), Nikos Fukolous (Greek) and others.

Thus, in 1895-2015 over 240 authors wrote around 480 plays on the Armenian Genocide, that were published or performed in more than 200 places in 38 countries around the world, in 13 languages.

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ  
ԹԵՄԱՅՈՎ ԳՐՎԱԾ ՊԻԵՍՆԵՐԻ ՑԱՆԿ**

**ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՊԻԵՍՆԵՐ  
ԵՎ ԲԵՄԱԿԱՆԱՅՈՒՄՆԵՐ**

1. Աբեղյան Սուրեն (1911-1996)  
    Խավարման զիշեր (տպ. 1996, Երևան)  
    Ֆեդայիներ կամ Կապույտ զնդուն հուլունքներ
2. Աբրահամյան Աբրահամ (1882-1980)  
    Անդրանիկը պատերազմի դաշտում
3. Աբրահամյան Միքայել (XX դ.)  
    Ժողովրդի վրիժառուն (Սողոմոն Թեհլիրյան)
4. Ադամյան Մանուել (1935)  
    Մահապարտը  
    Մեծ եղեռն
5. Ազարյան Ալեքսանդր (1883-1939-ից հետո)  
    Ազատության ճանապարհին  
    Քաղաքացիական պարտք  
    (է. Մայսար) Վանի դրավումը և Անդրանիկի հերոսությունը
6. Ալեքսանյան Գյուլնարա (XX-XXI դդ.)  
    Սողոմոնն արդար է... Հայոց դատը շարունակվում է (տպվ.  
    2002, Երևան)
7. Ահարոնյան Ավետիս (1866-1948)  
    Արցունքի հովիտը  
    Ուխտվածները  
    Ազատության ճանապարհին  
    բեմականացում, 1907, Սենթրըլ Ֆոլս (ԱՄՆ)  
    (Կյանքի ճամբին) – բեմականացումը Ղազար Բոլատի,  
    1916, Կահիրե  
    (Մեր ժողովուրդը ինքը) – բեմականացումը Գևորգ  
    Նուբարյանի, Թեհրան

Արյունոտ թթիւմոր

բեմականացում, 1906, Ֆիլիպե

բեմականացումը Կարո Խաչատրյանի, 1959, Բեյրութ

բեմականացում, 1981, Թեհրան

Խայր

բեմականացում, 1964, Թավրիզ

Մայրը (Մայրերը)

բեմականացումը Մնացական Մարությանի, 1912, Օքրոյա-  
կերտ, Վրաստան

բեմականացում, 1915, Բաքու

բեմականացում, 1919, Կ. Պոլիս

բեմականացում, 1926, Փարք (ԱՄՆ)

բեմականացումը Վահրամ Տեր-Բարսեղյանի, Զիկագո,  
Պրովիդենս

բեմականացում, 1932, Իրանի Փերիա գավառի Բոլորան գյ.

բեմականացումը Նորայր Պահլավունու, 1960, Թեհրան

բեմականացում, 1962, Նոր Զուղա

Վազրիկը

բեմականացումը Մանվել Մարությանի, 1961, Թեհրան

բեմականացումը Ալբերտ Մինասյանի, 1975, Ահվազ

8. Ահմարանյան Հովհաննես (XX-XXI դդ., Փասատինա)

Արծիվներու բերդը (1999) – Շապին Գարահիսարի, Մուշի,  
Էրզրումի արյունալի դեպքերեն

Երկու անունով աղջիկը (1984, Փասատինա)

Հույսը, որ չի մեռնիր (1985)

9. Աղայան Աբրահամ (XIX-XX դդ.)

Հայրենյաց ազատագրումը (1915)

Չար մարդու վերջը (1911, Մոսկվա)

10. Աղաջանյան Հովհաննես (XX դ.)

Ողջեր և մեռածներ

11. Աղասարյան Անահիտ (1958 ?)

Ղողանջ հուսո (ըստ Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն»  
պոեմի)

12. Աղասի (Թուր-Սարգիսյան Կարապետ, 1881-1941)

Զեյթունի հերոսները

13. Աղասյան Հակոբ (1880-ակ. թթ. – 1935-ից հետո)

Լրտեսին զոհը («Հեղափոխաշունչ դրամա», 1908, Ադրիանա-  
պոլիս)

14. Աղեկյան Վարսիկ (որբուհի, Թիֆլիս, XX դ.)

«Կամավորական» շարժման մասին, 1914

15. Աճեմյան Հայկ (1898-1965)  
Կոմիտաս վարդապետ
16. Ամիրյան Հ. (XIX-XX դդ.)  
Բռնակալի մահը (1913, Ուստր)
17. Այվազյան Բագրատ (1862-1934)  
Սասունն այրվում է
18. Անգուլթ (Սոմոննճյան Գրիգոր, ? – 1924)  
Հայրենիքի ձայն (1919, Ադանա)
19. Անդրանիկ, Դերասան Անդրանիկ (Սողոմոնյան, 1873-1949)  
Դեպի հայրենիք  
Թալեաթի սպանությունը  
(Ա. Դաշտեցյան) – Ռեսի աղջիկը
20. Անդրի (XIX-XX դդ.)  
Հայ աղջկա վրեժը (Մարտիկներ, 1916, Բաքու)
21. Անթառանյան Լենա (1950)  
Վանա կատուն (2014, Երևան)
22. Ասսայան Ռուբեն (1894-?)  
Հայ տառապյալները (1918)  
Փոքրիկ հերոսը (1911, Եվդոկիա)
23. Ասլիբեկյան-Արծրունի Անուշ (1981)  
Կոմիտաս, Լույս բարեբեր  
Մերսեդես
24. Ատրպետ (Մուբայաջյան Սարգիս, 1850-1937)  
Շուշան (տպվ. 1890, Պետերբուրգ)  
Վրիժառուներ
25. Ատրունի Վաչե (1949)  
Առաքելոց վանքի կռիվը  
Թիվ 46 փողոց Մարաշ  
Ծառը  
Ծերունին և լեռը  
Կամիշ 37 (Շավո)  
Հորովել  
Մեր թաղը  
Rue Միս, Café Մասիս
26. Արամայիս (Տեր-Դանիելյան Միսակ, 1874-1954)  
Զարհուրելի ոճիրը (Մուշ-Սասուն, տպվ. 1916, Բաքու)
27. Արամյան Հմայակ (Շվոտյան Մարտիրոս, 1878-1919)  
Անմահ ժիրայր կամ Մեծ հեղափոխականը  
Բռնակալին մահը
28. Արամունի (Քեչիշյան) Խորեն (1948)  
Հարութ պապը (1997, Գլենդել)

29. Արապաճյան (Կառվարենց) Գևորգ (1892-1946)  
Հայաստանի հույսը
30. Արզույան Կիտուշ (1938)  
Խանասորի արշավանքը  
«Կոռունկ» և «Սրինգ»-բեմականացումը ըստ Ռ. Արամյանի  
«Մեղեդիներ» երկի  
Մահվան տեսիլ-բեմականացումը ըստ Ե. Չարենցի  
Մամփրե արքան-բեմականացումը ըստ Մ. Գալչոյանի  
Ռեքվիեմ-բեմականացումը ըստ Վ. Դավթյանի  
Վերջին արևադարձը-բեմականացումը ըստ Պ. Զեյթունցյանի
31. Արշակունի (Հովհաննիսյան Արշակ, 1883-1954)  
Էնվեր փաշա (1917, Թիֆլիս)
32. Արսենյան Վահան (XIX-XX դդ., Աթենք)  
Հաճընի անկումը կամ Յեղին հարուժյուներ (Ադանայի  
կոտորածի մասին)
33. Արփիարյան Արփիար (1851-1908)  
Կարմիր ժամույց  
բեմականացումը Վ. Թեքեյանի և Ս. Պարթևյանի, 1920, Կ.  
Պոլիս  
բեմականացումը Հ. Միքայելյանի, 2013, Հալեպ
34. Բազատուրյան Բիանկա (XX-XXI դդ.)  
Քայլեր (2005, Լոս Անջելես)
35. Բազեյան Մուշեղ (1880-1950-ակ. թթ.)  
Վանի ինքնապաշտպանության կռիվները
36. Բյուրատ (Տեր-Ղազարյան) Սմբատ (1862-1915)  
Զեյթունի հավատքը կամ Զորանոցը  
Ելլալըզե Սասուն-բեմականացումը Սարգիս Տիրունու
37. Բյուրատ Վաղինակ Սմբատի (1886-1972)  
Արյունոտ թաշկինակ (որբերի մասին, տպ. 2002, Երևան)
38. Գազազյան Դավիթ (1910-1969)  
Թոռնիկա հայերեն չգիտե - բեմականացումը Զ. Տեր-Սուքիա-  
սյանի, Նոր Զուղա
39. Գալեմճյան Սեթ Տիգրանի (1884-1972)  
Անդրանիկը կամ Հայաստանի առյուծները
40. Գալեմճյան Տիգրան (1844-1920)  
Զեյթունի ապստամբությունը  
Պաքուի աղետը և Հայ բանվորներ (Բաքվի)  
Սասնո հերոսները  
Վասպուրականի հերոսները (Տավրոսի հերոսները կամ Հազ-  
թանակ Զեյթունցվոց)

41. **Գալչոյան (Մանուկյան) Մուշեղ (1933-1980)**  
 Մամիրե արքան-բեմականացում, Երևան  
 – բեմականացումը Կիտուշ Արզուլյանի, Թեհրան  
 – բեմականացումը Ջիվան Սարգսյանի, Վանաձոր
42. **Գապարաճյան Գևորգ (1916 – ?)**  
 Ռուբեն Սևակի վերջին օրերը
43. **Գասապյան Հարություն (XIX-XX դդ.)**  
 Վանի ինքնապաշտպանության կռիվը (1913, Ուստր)
44. **Գասպարյան Եղիա (1893-1948)**  
 Մեր գլխուն եկածը (տպվ. 1941, Բոստոն)
45. **Գիտակից (Պելեմճյան) Արամ (1891 –?)**  
 Հուր և սուր Կիլիկիո մեջ
46. **Գևորգյան Զինավոր (1920-2005)**  
 Պապ, կրակում են (Ստեփանակերտ)
47. **Գոճայան (Կետիկցի) Կարապետ (1877 –?)**  
 Հայկական հառաչներ (1911, Մարզվան)
48. **Գրիգոր Վահան (Մաքսուտյան, 1905-1971)**  
 Երկու ճամբա (հայերի ձուլման դեմ)  
 Թաղված գանձ (տպվ. 1972, Բեյրութ)
49. **Գույումճյան (Քյուրքճյան) Արշալույս (1900-ակ. թ. –1965)**  
 Օտարացած հայուհին
50. **Գուտուլյան Գրիգոր (1886-1966)**  
 Վրեժի ոգին, Հայ նամուսը, Բռնապետին վախճանը
51. **Դանիելյան Կոմիտաս (1947)**  
 Մենք մեր սարերն ենք  
 Պըլը-Պուղին Մոսկվայում  
 Տո լաճ տնավետր
52. **Դաշտենց (Տոնոյան) Խաչիկ (1910-1974)**  
 Խողեղան-բեմականացումը Կ. Վարժապետյանի  
 Ռանչպարների կանչը-բեմականացումը Վ. Թովմասյանի
53. **Դավթյան Վահագն (1922-2005)**  
 Մհերի դուռ
54. **Դարյան (Մովսիսյան) Զարգանդ (1912-1984)**  
 Հանրապետության նախագահը  
 Ձմռան մի գիշեր-հեռուստաթատրոն, 1984, Երևան
55. **ԴարՖի (Հովհաննիսյան) Գևորգ (1907-1964)**  
 Անդրանիկ  
 Արյունի ճամբին (Կարմիր Հնոց-1941, Նոր Զուղա, Կարմիր  
 օրեր-1927, Նոր Զուղա)

56. Դեմիրճյան (Դեմիրճօղլյան) Դեբենիկ (1877-1956)  
 Հովնան մեծատուն  
 Ավելորդը - բեմականացումը Ս. Մնացականյանի, Թեհրան
57. Դիլանյան Նաիրա (1968)  
 Կոմիտաս
58. Դոնդարյան Ի(վան?) Մ. (XIX-XX դդ., Անդրկովկաս)  
 Դեպի էրզրում (ռուսերենից թարգմ. Շիրվանզադե)
59. Եղիկյան Գրիգոր (1880-1950)  
 Այն կինը  
 Կարմիր գազանին վերջը (տպվ. 1914)  
 Նոր մարգարե (Ուստըր)  
 Պատերազմ (1915)
60. Եսայան Զապել (1878-1943)  
 Սիլիհտարի պարտեզները - բեմականացումը և բեմադրությունը  
 թուրքերեն (2015, Կ. Պոլիս)
61. Եսայան Ռոբերտ (1958)  
 Եռաձայն պատարագ - բեմականացումը, (ըստ Պ. Սևակի), 2011,  
 Ստեփանակերտ  
 Հարության ժամանակը - բեմականացումը և բեմադրությունը  
 Լեոնիդ Հարությունյանի, 2012, Ստեփանակերտ
62. Երեցյան Արամ (Հմայակ քաչ., 1890-1952)  
 Գևորգ Չավուչ  
 Սասուն  
 (Երեցյան Հ. Ա.) - Սասնո դյուցազունները
63. Երիցյան Գարեգին (1879-1966)  
 Կամավորներ  
 Մոտ է գարունը
64. Երկաթ (Շամլյան) Արսեն (1893-1974)  
 Արյունոտ Հայաստան (տպվ. 1916)
65. Երնջակյան Արա (1951)  
 Ճերմակ արագիլներ
66. Զավգավաթճյան Թովմաս (1842-1911)  
 Գոհար (Տիգրանակերտի կոտորածը կամ Գոհարի առևանգումը)
67. Զարյան (Եղիազարյան) Կոստան (1885-1969)  
 Տատրագոմի հարսը  
 բեմականացում, ռադիոթատրոն, Երևան  
 մենաթատրոն - Մարի Ռոզ Աբուսեֆյանի կատարմամբ
68. Զարոյան Պետրոս (1903-1986)  
 Մենք ալ հայրենիք ունինք  
 Մեռնողները (1928, Փարիզ)  
 Ոստայնը (1929, Փարիզ)

69. **Զեյթունցյան Պերճ (1938)**  
 Հարյուր տարի անց  
 Մեծ լուսթյուն  
 Ութի՛, դատարանն է գալիս  
 (Նույնը՝ Ն. Ալեքսանյանի ուսերեն թարգմանությունը,  
 «Суд надем», Մոսկվա)  
 Փարիզյան դատավճիռ
70. **Զոհրաբյան Էլֆիք (1979)**  
 Սիրանուշ (մենաթատրոն, տպվ. Նայիրի տարեգիրք Գ, Թեհ-  
 րան, 2010, էջ 53-68)
71. **Էմմեէ, Է. (Բախչիսարայցյան Էմմանուել, 1865-1943)**  
 Արյունաներկ արևելք (1915)
72. **Էսեկյուլյան Հարություն (1913-1993)**  
 Ազգային ցավեր (Յավոտ հարցեր)  
 Խղճի խայթ  
 Ո՞ւր էր Հայոց աստվածը
73. **Էսմերյան Սեդրակ (1914-1990)**  
 Նախաճաշ յունի տակ  
 Նշանածո Ամերիկա է  
 Ռադիո Պեյրութ
74. **Էվերեկյան Դավիթ (1927)**  
 Փոքրերը՝ քսաններով կամ Արարատին նայելով...
75. **Թազվորյան Գաբրիել (XX դ., Ալեքսանդրիա)**  
 Օրը տարածամ էր (տպվ. 1959, Ալեքսանդրիա)
76. **Թաթյան Առաքել (1893-1966-ից հետո)**  
 Կոմիտաս (3 գործող. օպերայի լիբրետո)
77. **Թախթաճյան Մելիքսան (XIX-XX դդ.)**  
 Փրկարար համերաշխությունը
78. **Թեքեյան Վահան (1878-1945)**  
 Մայրերը
79. **Թլկատինցի (Հարությունյան Հովհաննես, 1860-1915)**  
 Դեպի արտասահման (1912)  
 Կուլիկ ու վարժապետը (1913)
80. **Թոթովենց Վահան (1889-1938)**  
 Մահվան բատալիոն (տպվ., 1920)
81. **Թորոսյան Եղիշէ (1870-ակ. թթ. - 1947-ից հետո)**  
 Անանուն դյուցազուններ
82. **Թորոսյան Հակոբ (1909-1991)**  
 Անդրանիկ (տպվ. 1992)  
 Ծույլ Մեսրոպը (մանկապատանեկան)  
 Հայ եղևունը և Մուսա լեռան հերոսամարտը

83. Թրագոչ(յան) Հարություն (1897-1992)  
Հայրենասեր հայուհին  
Ցեղիս վրեժը (Ցեղիս վրեժը լուծեցի)
84. Ժեռո (Տեր-Հարությունյան) Անուշավան (XIX-XX դդ.)  
Հազարներից մեկը
85. Ժիրայր (XIX-XX դդ.)  
Սարերի ետևում
86. Իշխան (Ճենտերեճյան) Մուշեղ (1913-1990)  
Մեռնիլը որքան դժվար է
87. Լեռ Կամսար (Թովմասյան Արամ, 1887-1965)  
Զոհը (1919, Երևան)
88. Լեռի (Մարգարյան) Արա (1890-?)  
Հրանուշ (1915)  
Նախօրյակին
89. Լեռնորդի (XX դ., Բեյրութ)  
Արյան կանչը (տպվ. արաբերեն «Սարխաթ Ուլ-տամ»)
90. Լեփեճյան Կարպիս (1949)  
Արշիլ Գորկի
91. Խալաթյան Սամվել (1950)  
Հրադադար
92. Խանպեկյան Մանուկ (XX դ.)  
Կարմիր գետը (տպվ. 1952 Վենետիկ)  
Հային վրեժը
93. Խերանյան Մկրտիչ (1899-1970)  
Շիտնց Միհրան (Երևան, Թեհրան)
94. Խյմեթյան Եղիա (XIX դ. - 1964)  
Կոմիտասի կյանքը
95. Խոզիկյան Կարինե (1957)  
Մեկ ժամ հիշողություն
96. Մոցիկյան Սարգիս (1870-1959)  
Գոհության աղոթք (տպվ. 1914)  
Հալածվածներ (1920)  
Համբույրը (տպվ. 1914)  
Սահմանադրություն (տպվ. 1914)
97. Կարապետյան Մկրտում (1868-1955)  
Սասունի կոտորածը
98. Կարապետյան Սամսոն (1885-1965)  
Զուլուժի աշխարհ կամ Սիրահարի վրեժը
99. Կյուլվանեսյան Իմաստուն (1913-1980)  
Անդրանիկ

100. *Կյուրճյան Միքայել (1877-1965)*  
Տուրքը
101. *Կոստանյան (Էլմասյան) Վիքթորիա (1900 – 1980-ից հետո)*  
Սրտի երգով (տպվ. 1980, Հալեպ)
102. *Կռանյան (Զեքիճյան) Անդրանիկ վարդապետ (1929)*  
Նուարդը
103. *Հակոբյան Ժակ (1917-?)*  
Կռունկը կկանչե
104. *Հակոբյան Վարդան (1948)*  
Ղարաբաղյան բալլադ
105. *Համաստեղ (Կելենյան Համբարձում, 1895-1966)*  
Հայաստանի լեռներու սրնդահարը  
Վերջալույսի հետ (տպվ. 1920)
106. *Հայրապետյան Միշա (1941-2010)*  
Ավետում (Գևորգ Չավուչ)
107. *Հատտեճյան Ռոպեր (1926)*  
Մահը ա՞յս է արդյոք (1977, Ստամբուլ)
108. *Հարուժյուկյան Ժորա (1928-2002)*  
Խաչմերուկ  
Քո վերջին հանգրվանը
109. *Հերյան Ռուբեն (1869-1921)*  
Բանտի դասեր կամ ձշմարտացի կտակը (1904, Բոստոն)
1010. *Հեքիմյան Օ. (XX դ.)*  
Սկիզբն երկանց
111. *Հովհաննիսյան Արբի (1943)*  
Թե ինչպես մորս ասեղնագործ գոգնոցը կսփռվի կյանքիս մեջ  
– բեմականացում ըստ Արշիլ Գորկու, Վազգեն Շուշանյանի  
և Լևոն Շանթի գործերի
112. *Հունանյան Վալերի (1952)*  
Վիլ ժյուլիֆ բուժարանի այցելուն (Կոմիտաս) – ռուս. թարգմ.  
Անահիտ Բոստանջյան և Արա Արթյան, տպվ. 2009,  
Թբիլիսի
113. *Մաժակ (XIX-XX դդ.)*  
Պատերազմի դաշտը
114. *Մահարի (Աճեմյան) Գուրգեն (1903-1969)*  
Երգ մահու և անմահության
115. *Մանարյան Երվանդ (1924)*  
Վարպետ Զաքարի մասին
116. *Մանուկյան Արմեն (Աբեթնազով, 1883-1963)*  
Բաքվի հերոսամարտը

117. **Մատաթյան Աշոտ (1882-1965)**  
Ահա՛, սերունդը (1918, Հալեպ)
118. **Մար (Տեր-Մարտիրոսյան Միքայել Գ., 1868-1931)**  
Հերոսացանք
119. **Մարգարյան Հրանդ (1938)**  
Անլռելի գանգակատուն – բեմականացումը ըստ Պ. Սևակի  
Եռաձայն պատարագ – բեմականացումը ըստ Պ. Սևակի  
Եղեռնի համադրություն – բեմականացումը ըստ Մինաս  
Թեոլեոլյանի  
Երբ արևը կլռե (Հավերժի ճանապարհին)  
Սողոմոն Թեհլիրյան վրիժառուն  
Լուռթյուն բողոքաձև ծիածանի մեջ (անդլերեն)  
Հայելիներ (անդլերեն)  
Ղարաբաղյան դողանջներ (բեմականացում)  
Ջարդի խնեթը – բեմականացումը ըստ Ռ. Սևակի
120. **Մարտիրոսյան Ա. (XIX-XX դդ.)**  
Վասպուրականի հերոսները
121. **Մարտիրոսյան Լևոն (1884-1974)**  
Հակոբ Հաբեթ
122. **Մարտիրոսյան Համբիկ (1945)**  
Հրեշտակներու մայրաքաղաքը (տպվ. 2004)
123. **Մարության Մանվել (1901-1986)**  
Կարմիր Սուլթանը (Աբդուլ Համիդ, Սուլթան Համիդ)  
Կոմիտաս  
Նոյան տապանը Ատլանտյանի ջրերի վրա (դադթականական  
կյանքից), 1961, Բուենոս Այրես
124. **Մելոյան Ղևոնդ (1877-1967)**  
Արմենուշ (Արմենուշ կամ Առևանգված կինը – Փրանսերեն  
Արմենուշ – հեղինակի թարգմանությամբ, հայերեն  
Արմենուշ – Վահան Հապեղյանի թարգմանությամբ  
Դավաճանություն (Դավոյի դավաճանությունը)  
Ջրհորի առասպելը (Հողի տակեն, Գետնի տակեն)  
Սաղայելական  
Վասպուրականի ճակատամարտը (հերոսամարտը)
125. **Մեհրաբյան Արսեն (XX-XXI դդ.)**  
Արշիլ Գորկի – բալետի լիբրետո և բեմադրություն, 2015,  
Երևան
126. **Մեհրաբյան Վահան (1957)**  
Մշակույթ և «Մշակույթ»
127. **Մեշտոլտճյան Վարդան (1869-1942)**  
Արյունոտ հարսանիք



**ԱԴԱՄԵԱՆ**  **ԹԱՏԵՐԱՄԻՒՄԲ**

„ԱՐԱՐԱՏԻ“ ԵՔԵՂ ԹԱՏԵՐԱՄԱՆՈՒՄ  
**22** ՀՈԿՏ. 1954 թ. ԵՐ. Ժ. **7**<sup>1</sup>/<sub>2</sub>-ԻՆ  
 Ա. ՇԻՐՎԱՆՋԱԴԷԻ  
 ≡ **ԱՐՅԱԻՐԲԻ**  
**ՕՐԵՐԻՆ** ≡

ՅՆՈՂ ԳՐԱՍՏ ԵՄ ԱՐԱՐԱՏԻ  
 ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՓԻՒՌՔԱՅԱՑ ԲԵՍԻ ՎՐԱՑ ԱՆՆԱ-  
 ՈՆԹԱՑ ԶԲԵՂՈՒԹԵԱՄ ԵՒ ՍԵԱՆՉԵՆԻ ԴԵՎՈՐՆԵՐՈՎ:  
**ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ ՄԻ ՄՈՌԱՑԷԲ.**  
 Հսկա. 22-ին. բարձրագույն լուսնային դպրոցի  
 „ԱՐԱՐԱՏ“ սարքի և ևնրանցիկու համար մեր  
 ցեղային առաքնությանը և նպարտամքի սրբա-  
 նիրում:  
 ԹՈՂ ԻՐԱՐԱՄԱՆԻՐ ԳՐԱԻ ՄԵՋ ԾԵՑՏԻ ԿԱՑ  
 ԼԻՆԵՆՈՒ ԳՐԱՐՑ ԶԳԱՑՈՒՄԸ:  
 Արթուր. 22 Հսկա. 1954 թ. Երկր. ժ. 7:30-ին:  
 Գրքար. ԿՐԹԱՐԱՆԻ ԿՐԹԱՐԱՆԻ ԿՐԹԱՐԱՆԻ ԿՐԹԱՐԱՆԻ

Արհավիրքի օրերին, 1954, Թեհրան

**ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԺ ԵՂԵՐՆԻ ՑԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌՔԻՒ**

**ՀԱՅ ԵՐԻՏ. ԹԱՏԵՐԱՄԻՒՄԲԸ** (ԱՌՈՒՆ ԵՒ ԵՐՁԱՆԻ)  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ՅՈՑ ԳՐԱՐԱՆՈՒԹԵԱՄ  
 ԿԵ ՆԵՐԿԱՍԱՑԱՆ

ՀՈՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ՅՈՑ ԲԱՐ. ԳԱՅՑՊԱՆ “ԱՌՈՒՆԱՄԱՍԻՐԱՑ”Ի  
 ԵՒ ԴԵՎՈՐՆԵՐՈՎ  
 ԺՈՒ. ԴԵՐԱՍԱՆ ԹՐԱԳՕՅԻ  
 ՄԱՆՈՒԿՈՒԹԵԱՄ ԶԻՒՄՏԻՔԻ  
 ՏԻԿ Ա. ՄԵՐԱՅԱՆՆԵՆ - ՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՐ ԵՐԳԵՐՈՎ  
 10 Ապրիլ 1965.  
 Շարք երկրորդ ժամը 9-ին, Լիոնի Ազգ. Տոմ սրահին մէջ  
**225, Rue Voltaire**

**ՑԵՂԻՍ ՎՐԷԺԸ**

ՅՈՒՄՈՐ — ԳՐԱԳՕՐ ԿՐԹԻ ԳՐԱՄ ԾՈՒՄԵՆԻ ՄԱՅԻՆ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ — ԵՐԵՎԱՆԻՍԻՆ ԾՐԱՐԱՆ — ՆԱՅ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԿՐԹԱՐԱՆԻ ՊԱՆԸ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ  
 ԳԻՏԱՅԻՆ ԳԵՂՈՐԸ ԵՒ ԴՈՒՆԱՅԻՆ  
 ՕՐ ԲՐԱՆԻ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՒ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ

Ցեղիս վրեժը, 1965, Լիոն

**ՀՐԵԲԻ ԷՄ ԵՈՑ ԵՐԵՎՈՑԵՆ ԺԵՐԸ ԶԿ-ԻՆ,**  
**ԵՂԳ. ԿԵՆԴ. ԴՊՐՈՑԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ**

ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ

**ԵՐԵՏ-ԵՂԱՐՈՆԵԱՆԻ.**

**“ Ա Ր Ց Ո Ւ Ն Ք Ի -**  
**Հ Ո Վ Ի Տ . - Ը ”**

ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ  
 ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ ԵՂՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ

Արցունքի հովիտը, 1929, Նոր Զուղա

ԵՂՆՈՒՆԻ 60-ՍՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Մեծազոյց ՊոսթըՍի Մասնագիտիչերու ճախածանուցիչամբ

ԿԻԻ ԵՌՐԵԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԹԱՏԵՐԱՊՈՒՄԲԸ

Կը հեղաշայնէ

«ՍՈՂՈՍՈՒ ՌԵԽՄԵԱՆ ՎՐԻՃԱՌՈՒՆ»

Էնդիմուցիչամբ Եւ Ղեկավարչիչամբ

ՀՐԱՆՂ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

ԿԻՐԱԿԻ, ԱԳՐԻՆ 6, 1973, Կ. Ե. ԺԱՄԸ 3-ՅՈՒՆ

Պէջմբ Հայ Սեպի Վէշ

Սոզոմոն Թեհչիրյան վրիժառուն  
1973, Նյու Յորք



Կիրակի, 14 Յուլիս 1964, Երեկոյան ժամը 11:20ին «ՔԼԻՄԵՆԿՆԻ ԱՐԱՅԻՆ ՎՆՂ»

Հայ Գիտարուեստաստիցաց Միութեան  
քաներախումբը

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրէ  
**Ս.Ա. ՍԱՐՈՒԻՍՆԻ**

«ՄԵՆՔ ՀԱՅԵՐԷՆ ՉԵՆՔ ԳԻՏԵՐ»,  
ԵՐԳԻԵՆԵՆԻՆԸ (3 ԼՈՒՐ)



— Հայկ. կարգաւ Գրատար, Եւ այլ Գրատարաց, բերքը ԵՆ շնորհիւր:  
(Մտադարձիչ՝ Տիգր. Ա. Գրայնման, Գր. Գր. Փայրման Եւ Գր. Գր. Կարգիչան)

Մենք Հայերեն չենք գիտեր  
1964, Կահիրե

ՀԱՅՎԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՍՐԱՀ - 21 ԺԱՐԱ ԹՈՒՊՐԱ, ԳԱՀԻՐԷ՝

ԵՂԱՆԱԿԻ ԱՄԵՆԱԾՔԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ԿԻՐԱԿԻ, 5 ՓԵՏՐՈՒԱՐ 1950, Կ. Վ. ԺԱՄԸ ԶԻԾԳ 6ԻՆ

«ԵՐՄԻՆ» ԹԱՏԵՐԸՆՈՒՄԲԸ ՄԵՑ ԳԱՏՐԱՏՈՒԹԵԱՄԸ ԿԸ ՌԵՄԱԴԻԷ  
ՂԵՒՈՆԴ ՄԵԼՈՑԵԱՆԻ

**Մ Ա Յ Ր Ը**

Կ Ա Մ

**Ա Ր Մ Ե Ն Ո Յ Շ**

Հայկական կիւմիճի առնուած գրայացումը տում 5 արաբ

Գ Յ Ր Ծ Ո Ղ, Ա Ն Զ Ի Ն Ք

ՏՆԿԻՆ ՍՈՒԼԼԵՐ (Թրոմետերի կիճ) Տիկնց Ա. Գ.

ՏՆԿԻՆ ՎՈԼՆ (Գանգակապետեան) Ու. ՍՈՒԱ ԿԱՐԱԳԵՏԵԱՆ

ՍԱՏԸՐ՝ «ԱՐՄԵՆՈՑ» Օր. ՄԱՌՏԻԱ ԿԱՐԱԳԵՏԵԱՆ

Ղեկավար՝ Գր. Ա. ԿԱՐԱԳԵՆ ԿԱՐԱԳԵՏԵԱՆ

Յուլետար՝ Գր. Ա. Գ.

ՕՍԿԱՐ (Սպայ, Տիգր. Միլլերի ազգից) Գ. Կ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ

ՏՕՔԹ. ՎԱԼՏ (Միլլեր Բուսնիքի բլիթեր) Գ. Ս. ՄԱՐԸՐԸՆԵԱՆ

ԼԵՐՔԵՐԸ (Սպայ, Օսկարի բլիթեր) Գ. Ս. ԳՈՏՈՒՆԵԱՆ

ՈՒՏԱՎԱՐ՝ Գր. Ա. ԿԱՆԱՆ ԼՈՊԵՏԵԱՆ

Մայրը կամ Արմենուշ, 1950, Կահիրե

Վ. ՍԱՐՅԱՆ

**ԻՄ ՍԻՐՏԸ  
ԼԵՌՆԵՐՈՒՄ Է:**

Ներկայացում առանց բեղմիջման  
Քարզմանությունը բնագրից և ԳԱՇՏՆՅՈՒՄ

Ռեմադրություն՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, պեռ.  
մրցանակների դափնեկիր Վ. ԱՇՏՄՅԱՆԻ

Կգորիչ՝ ՐՍՍՀ արվեստի վաստ. գործիչ  
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

Ծածկությունը ՍՍՀՄ ժող. արտիստ, կամպոզիտոր  
Ա. ՐԱՌԱԶԱՆՅԱՆԻ

*Իմ սիրտը լեռներում է  
1961, Երևան*



Friends of William Saroyan  
Club of Yerevan  
& The Writers Union of  
Armenia  
Մեզին:


You are cordially invited to the  
May meeting of the Friends of  
William Saroyan Club of Yerevan.

Date: Friday, 16 May 2003

Time & Place: 15.00 at The  
Writers Union Hall, 2<sup>nd</sup> Floor,  
Circle Hall, Baghramian Street

- Agenda: 1. Reading & Discussion: "The Problems of Writing" by  
William Saroyan.  
2. Renaming or construction of a Yerevan site in honor of  
William Saroyan.  
3. Bakhtiar Hovakimyan: Essay about William Saroyan's plays  
presented in Armenian theaters.  
4. Refreshments  
5. Next meeting

*Վիլյամ Սարոյանի երեկո  
2003, Երևան*



*Մեր Գրեկոր – Վ. Փափաղյան*



*Մեր Գրեկոր – Հ. Ներսիսյան*

*ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է*



*Ջոնի – Վ. Վարդերիսյան  
Բեն Այբրամսոն – Բ. Ներսիսյան*



*Սարե*

*Տառիկ – Ա. Ասրյան*



*Բեն Այբրամսոն – Մ. Կորդանյան  
(1964, Ստեփանակերտ)*



**ՄՈՆՐԷԱԼԻ  
ԱՐՄԵՆԵԱՆ  
ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ**

ԿԸ ՆԵՐԿԱՑԱՑՆԷ  
ՏՈՒՔԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՍԷԿԻՒԸԱՆԻ



**ԽՂՃԻ ԽԱՅԹ**

ԹԱՏԵՐԱՆԱՎԸ, ԳԱՂՈՒՐԱՆԱՅ ԿԵԱՆՔԷ  
(Իրեմ արար)

ԲԵՄԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՇԵՂԵՆԱԿԻՆ

ՇԱՐՔԻ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1983, ԺԱՄԸ 20.00-ԻՆ  
ԿԻՐԱԿԻ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ 1983, ԺԱՄԸ 18.30-ԻՆ  
COLLEGE MARIE-ANNE-Ի ՄՐԱՆԻՆ ՄԻՋ  
100 SAUVÉ EST, MONTREAL, QUÉ.

Խղճի խայթ, 1983, Մոնրեալ



Անկյունադարձը, 1989, Հալեպ

**Ս.Ձ.Մ.-ՊԵՏՐՈՒԹ**

**ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ**

**1915-1965 ՑԻՄՆԱՄՆԱԿԻՆ ԱՌԹԻԻ**

Ս. Շ. Մ. Ի Քառերախումբը  
Նահապետրեան Ցիսմամնակիմ առթիս պիտի մեկկայացնէ

**«ՏԱՆՋՈՒԱՇՆԵՐԸ»**

(Ողբերգութիւն 5 արար)  
Դեռուսոյ՝ ՅԱԿՈՒ ԳՆՈՒՆԻ

16 Մայիս 1965, Երասթ գիշեր ժամը 20ին, Սահակեան Յրան  
Տոմերու Գիշեր՝ 3 եւ 2 Լիբ. Ոսկի  
ԵՐԱՅԹ. — Փոքրիկներու ժուռը բարարձակապէս արգիլում է:  
Երասթ կ.ե. ժամը 4ին յատուկ ներկայացում դպրոցականներու համար

Տանջվածները, 1965 Բեյրութ

**Հ.Բ.Ը.Մ. Վ. ՓԱՓԱՋԵԱՆ, ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ**

ԿԸ ՆԵՐԿԱՑԱՑՆԷ  
ՔԷՒԷՆԱՆ Մշակը. Միութեան կազմակերպած  
մրցումներու արեւոյ մրցանի բացառիկ գիտնաչութեան  
արժանացած՝

**ՄՈՒՍԱԼԵՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ**

Նիդիմակ՝ Մ. ԳՈՉԱՐԻԱՆ — անց վերձեկի համաժողովի  
վկայի հիման վրայ)

Բնագրի՝ ՊԵՂ ՅԱՅԻՆ

ճ. Տ. Ո ՅուՆիս կ. ե. ժամը 8ին, Ուղ. Մանուկեան  
Վարձ-ի Գ. Կիւղեկեան հանդիսարանին մէջ  
Գիծ՝ 5. 3 եւ 2 Լ. Ո.

Տոմերը տառակ ձեռնեակ վայելելու. — Գասպար Մեմակ (Գուրծ),  
Վահագնաւան ՄՅՐ (Յգարի), Իրանշիւան Նդրաթ (Գլաւա Իւրի),  
Գրտուս Լիտրըզ ազ ՅՈՅ Շուրզ (Ջոզաք էլ Ղաթ), Յոթժ Սնի (Ջո-  
ցաք էլ Ղաթ), Գանձար (Գուրծ. Շամու), Զարեհ. Նուպար ակուր  
(Գալ Իարիս), Արշարիկ. Սեւան ակուր (Նամբ):

Մուսա լեռան քառասուն օրերը  
1965, Բեյրութ



Գ. ՉԵՑՔՈՒՆՅԱՆ

**Ո Տ Ք Ի,  
ԴԱՏԱՐԱՆՆ Է ԳԱԼԻՍ**

Փաստագրական սրբաժան ակտիվիստների  
միջամտություններով 2 մասից

Մեմագրությունը՝ **ՏԻՒՐԱՆ ԿԱՍԳՈՐՅԱՆԻ**  
 Նկարիչ՝ **ՎԱՐԿԱՆ ԳՆՏՄՈՍՅԱՆ**  
 Կոմպոզիտոր՝ **ԱՐԱՐ ԿԱԶԱՐՅԱՆ**  
 Ռեժիսորի ափսոսնք՝ **ԱՐՄԸՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ**

Ներկայացման մեջ ոգտագործված են կոմիտսոլի  
Ժ. Գառվաթեղի ստեղծագործությունները:

*Ոտքի՛, դատարանն է գալիս  
1988, Երևան*



**Հ Ա Ն Ր Ա Գ Ն Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ն Ո Ւ Յ Գ Ա Ն Ը**

Գրող՝ **Գ. ՉԵՑՔՈՒՆՅԱՆ**  
 Մեմագրությունը՝ **ՍՄՄ Ժող. առ-  
տյան ակտիվիստ մրցակցների  
գափակիչ**՝ **Վ. ԱՆԻՄՅԱՆ**  
 Նկարիչ՝ **ՎՍՄԸ Լ. ՄՍՇ առվտար  
Վասա. Գառվիչ**՝ **Ծ. ԱՍԻՐԱՆՅԱՆ**

Առաջին ներկայացումը՝ ակտիվ 1970 թ.  
Շաշիտի 24-ին


*Հանրակրթության նախագահը  
1970, Երևան*

*Հանրակրթության նախագահը  
Բարունակ աղա – Թ. Դիլաքյան  
Օդիկ դուգու – Վ. Միրիջանյան  
Փանոս աղա – Ա. Զրաղացյանյան*






Մեռելի օրբան զօվար է, 1978, Թեհրան



Աղամա ինքնասպանը, 1987, Հայկ



Մեռելի օրբան զօվար է, 1978 Թեհրան: Ներքևից՝ Կ. Արզույան, Մ. Մարուխյան, Ա. Մահարյան (գիմնազարդար), աջից՝ Ա. Մկրտումյան



Ճամբուլն զրա, 1989, Թեհրան




Ճամբուլն զրա, 2005, Այնճար (Լիբանան)



Ճամբուլն զրա, Թեհրան  
Մարի – Մ. Տեր-Սարգսյան, Վահրամ – Գ. Մալխասյան

# ՄԵԾ ԼՌՈՒԹՅՈՒՆ



1985, Թեհրան



1984, Երևան




1985, Թեհրան

Դ. Վարուժան – Վ. Բաշյան, Իսկուհի – Կ. Արզուլյան



*Մենք լուռթյուն, 2005, Թեհրան*



*Եսի մարդը, 1988, Ուոթրթաուն*



*Մենք լուռթյուն, 2005, Թեհրան  
ներկայացման մասնակիցները*



*Ավերտղը, 1982, Թեհրան: Հաճի ազա – Ս. Մնացականյան*




*Արմենուշ, 1990, Թեհրան*

*Արմենուշ – Մ. Տեր-Սարգսյան, Երկրորդ մարդ – Ե. Սաֆարյան*



Իմ սիրտը լեռներում է, 1987, Հալկա



Առաքելոց վանքի կրիվը, 1989, Հալկա



Իմ սիրտը լեռներում է. ձախից՝ Մեք Գրեգոր – Հ. Չննոզյան, Ջոնի – Ա. Միքայելյան, Կարմիրբայել – Հ. Փիլավճյան, Մարի – Մ. Արոյան, Բեն Ալեքսանդր – Հ. Միքայելյան



*Ժառանգութեան իրավունք, 2005, Հալեպ*



*Կարմիր ժամույց, 2013, Հալեպ*



*Ժառանգութեան իրավունք, 2005, Հալեպ: Մուսաաֆա Չելքրիի գուտար Լամիսը բեմագրութեան մասնակիցների հետ (կենտրոնում)*

## ՀՐԵՇԸ ԼՈՒՍՆԻ ՎՐԱ



2001, Բուենոս Այրես  
Արամ Թոմասյան – Մ. Կոլիգու.  
Վենսան – Ռ. Գիոնիսի  
Սեդա Թոմասյան – Մ. Սոլդա



2001, Երևան  
Սեդա – Կ. Եսայան  
Արամ – Լ. Հարությունյան

# Une Bête sur la lune

TEXTE : Richard Kalinowski  
MISE EN SCÈNE : Irina Brook

AVEC : SIMON ABKARIAN, CORINNE JABER, GUY TOURAILLE / JONATHAN HADDAD OU KRISTEN JOSSE  
TEXTE FRANÇAIS : DANIEL LORZY / DÉCOR ET COSTUMES : NOËLLE GENEPIE / LUMIÈRE : PASCAL HEART / COLLABORATION COSTUMES : JACELYNE EBERS  
COPRODUCTION : MC 95 BOULVARD / THÉÂTRE VIOY-LOUSONNE T.T.F.



Télérama

PARIS  
PREMIÈRE



LA POSTE

8 JAN > 8 FEV 1998 / 01 41 60 72 72

1998, Փարիզ

ԱՐՏԱՎԱՏԻ ԱՄՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԱՆՎԱՆ  
ԴԵՏԱԿԱՆ ԳՐԱՄԱՍԻԿԱԿԱՆ  
ԹԱՏՐՈՆ



Գեղանուշ  
Սայադյան

«Իմ տառապած, իմ փառապանծ»

Երկրայայտուհի-կոմպոզիտոր և նվագակատ  
Պապուկ Թեմուրյանի 90-ամյա տարեկիցին

Իմ տառապած, իմ փառապանծ  
2005, Արտաշատ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ РА  
ГОСУДАРСТВЕННОЙ ОПЕРЕНЫ ДРУЖБЫ НАРОДОВ  
РУССКОЙ ДРАМАТИЧЕСКОЙ  
ТЕАТРА им К. С. СТАНИСЛАВСКОГО

Р. КАЛУНОСКУ  
**ДУШНОЕ  
ЧУДОВИЩЕ**  
В ДВА ДЕЙСТВИЯ И ТРИ АКТЫ  
КОРЕИ ВЕЛЛЕДИ ИСАИ



ХУДОЖЕСТВЕННЫЙ РУКОВОДИТЕЛЬ ТЕАТРА  
НАРОДНЫЙ АРТИСТ РА,  
ЗАСЛУЖЕННЫЙ ДЕЙТЕЛЬ ИСКУССТВ РОССИИ,  
ЛАУРЕАТ МЕЖДУНАРОДНОЙ ПРЕМИИ СТАНИСЛАВСКОГО  
АЛЕКСАНДР ГРИГОРЯН

ԵՐԵՎԱՆ 2005

Հրեշը լուսնի վրա  
2005, Երևանի Ռուսական թատրոն



Լայկոյում է հայոց գեղաստեղծության  
100-րդ տարեկիցին

«ՔՄԻ ԶԵՆՈՒՐԱԾՈՆ  
«ՓԱՐԻԳԱՆ ԴԱՏԱՎՃԻՈՒ»  
A.S.A.L.A  
ԴՐՈՒՑ ՓԱՏԻՔ

(Գրական 2 քարտիչություն)

Թեատրալոգիայի մեթոդներ՝

ՀՀ Ժողովրդական արտիստ  
ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր  
ԱՐՄԵՆ ԽԱՆՆԻԿԱՆ

Կերպարանի մեթոդներ՝

ՀՀ Կարճամետրաժային գրքիչ  
ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր  
ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Չեղաների կապիչ՝

ՍԵՆՆԱ ԿԱՐԳԱՆՅԱՆ

Երանդաթանի մեթոդներ՝

ԱՆՈՏ ՓԱՓԱԶԱՆՍԻ

Լուսալիմի մեթոդներ՝

ՎԱԿԱԳԵՆ ՄԻՔԱԵԼԵԱՆՍԻ

Տեսողական մեթոդների սեմինար՝

ՇՐԱԶՅԱ ԱՏԵՓՈՒԼՅԱՆ

Լուսանկարչիչ՝

ԱՆՆՈՒԿ ԿԱՐԵՆ ԹԵՏՅԱՆ

Ռեժիսորի ավիանավ՝

ԱՐՏԱՎԱՏ ԵՆԻՓԱՐՅԱՆ

Ռեժիսորի օպերաներ՝

ԱՄՎԵՆ ԿԱՐԻՓՈՐՏՆՅԱՆ

Լեզվադասցաների տնտեսություն՝ 2 միավ 15 րոպե  
Լուսալիմի կերպարանի կապիչներ է  
2015 թ. փ. ապրիլի 18-ին

Փարիզյան դատավճիռ  
2015, Երևան

«Գիշերական Մեծ Երկիր»

ԳԻՇԵՐ  
ԵՐԶՆԿԱՅԻ  
ՎԼՍԱ

Մյս խաղը առաջին անգամ է թեստավորվում  
Հայաստանում, որը հեղինակի՝ Մեծ  
Եղեռնի հետևանքները նրա Գ  
Ամերիկայում ապրող ընտանիքի  
պատմությունն է

Գիշեր Երզնկայի վրա  
2015, Երևան

128. Միրովոյ (XIX-XX դդ.)  
Միհրդատը (1916, Բաքու)
129. Մխիթարյան Սերովբե (1907-?)  
Մոխրաբերդի ճակատամարտը (մի դրվագ Ռչտունիքի  
ինքնապաշտպանության կռիվներից), 1980, Բեյրութ
130. Մնացականյան Մարգարիտ (1947)  
Ծիրանի ծառ – Հեղինակի բեմադրությամբ, 2010, Երևան
131. Մուսճյան Հովհաննես (XX դ.)  
Տեր Զորի արհավիրքը
132. Մուրադյան Դավիթ (1951)  
Ժառանգության իրավունք
133. Յըլդըզյան Մաթյու (XX դ.)  
Ապրողներն ու մեռածները
134. Նազարյան Հովհաննես (1872-1924)  
Խանասորի արշավանքը
135. Նաթալի (Տեր-Հակոբյան Հակոբ) Շահան (1884-1983)  
Ասլան բեկ (տպվ. 1918, Բոստոն, բեմադր. Պրովիդենս)
136. Նավասարդյան Բեգլար (189?-1966)  
Խորհուրդներու լույսով
137. Նար-Դոս (Հովհաննիսյան Միքայել Զ., 1867-1933)  
Հենակներով մարդը
138. Ներսեսյան Փոլ (XX դ.)  
«Ամերիկա 71» – Հեղինակի բեմադրությամբ, 1971, Բեյրութ
139. Նորիկյան Խաչիկ (XIX դ. – 1937)  
Բռնկող կայծեր կամ Ազատության ճամբան
140. Շաթիրյան Միքայել (1916-1985)  
Անմահություն – բեմականացումը Կ. Վարժապետյանի ըստ  
«Ասք արմավենու մասին» վեպի
141. Շահան (Քերեստեճյան) Շահնուր (1903-1974)  
Նահանջը առանց երգի  
բեմականացումը Օննիկ Գանթարճյանի, 1973, Բեյրութ  
բեմականացումը և բեմադրությունը Մանուել Քեչիշյանի,  
Հայիսյ  
բեմականացումը և բեմադրությունը Հայկ Մնացական-  
յանի, Արտաշատ  
բեմականացումը և մոնոներկայացումը Մարի Ռոզ Աբու-  
սեֆյանի  
Պճեղ մը անուշ սիրտ – բեմականացում և բեմադրություն  
(1986, Փարիզ, Իսի-Լե-Մուլինո)  
բեմականացումը և բեմադրությունը Ժան Ֆարրանի,  
1988, Բեյրութ

142. **Շահեն (Շահինյան) Սեդրակ (1887-1975)**  
 Գյուղացի քաջը  
 Զեյթուն  
 Թալեաթի սպանությունը (անկումը)  
 Լուկոչները  
 Կարկառուն կամարներ  
 Կարմիր աղջիկը  
 Հայկական հարսանիք  
 Մարիան  
 Մացակ Բիձա  
 Չորս գանկերու վրեժը  
 Սարսափի սաները  
 Տանջվածները  
 Քսան կախաղաններ
143. **Շահխաթունի (Շահխաթունյան) Արշավիր (1882-1957)**  
 Առաքել աղա  
 Հայրենիքը դողանջում է
144. **Շահ-Պարոն(յան) Վարդան (1858-1935)**  
 Արմենն ու Ֆաթման կամ Զեյթունի պաշարումը  
 Արցունքի ծով կամ Չարատանջ ժողովուրդ  
 Վրեժ
145. **Շանթ (Նահաշպետյան) Լևոն (1869-1951)**  
 Եսի մարդը  
 Ճամբուն վրա
146. **Շառոյան Ռուանդ (1952)**  
 Մեր բաժին ուրախությունը
147. **Շիշմանյան Արմենակ (1849-1911)**  
 Ահռելի ողջակեզը  
 Գիտակից զոհեր  
 Խորհրդավոր գործիչը  
 Հեղափոխականի աղջիկը  
 Մայր Հայաստան (Ողբ Մայր Հայաստանի)  
 Վրեժխնդիր Տիգրանը
148. **Շիրանյան Արմեն (Աբրահամ, 1870-1932)**  
 Անձնագոհ դյուցազուներ  
 Արարո  
 Արյունոտ հարսանիք կամ Ասլան Չարուհի  
 Աքսորականը - բեմականացում  
 Չորավար Անդրանիկ  
 Պետո կամ Կախաղանի տակ  
 Սուլթան Համիդ

- Վանի հայդուկները  
Վաչխաուուն-բեմականացումը Հակոբ Աթաշյանի  
Ֆաթմա (եղերգական դրվագ մը Տեր-Ջորի աքսորավայրեն,  
1916-1918 թթ.), տպվ. 1925, Վառնա
149. Ծիրվանգաղե (Մովսիսյան Ալեքսանդր, 1858-1935)  
Արհավիրքի օրերին
150. Շոինդ (Հովսեփյան Խորեն, 188? – 1914)  
Թուրքիայի գաղտնիքը կամ Սուլթան Աբդուլ Համիդ
151. Չալիքճըօղլու Պողոս (XX-XXI դդ., Ստամբուլ)  
Ո՞վ է պատասխանատու – Դանիել Վարուժանի մասին (2015,  
Ստամբուլ)
152. Չարենց (Սողոմոնյան) Եղիշե (1897-1937)  
Դեպի ապագան – Չարենցի գործերից կազմած դրամատի-  
կական համադրում, կազմողներ՝ ռեժիսոր Վարդան Աճե-  
մյան, թատերագետ Լևոն Հախվերդյան
153. Չարբզ(ճյան) Արամ (1874-1960)  
Շապին Գարահիսար (Փառք Շապին Գարահիսարին)
154. Չիթունի (Չիթճյան) Տիգրան (1881-1960)  
Վասպուրականի հերոսամարտը
155. Չոպանյան Արշակ (1872-1954)  
Հրաշք (Ներգաղթ)
156. Չորմիսյան Լևոն (1896-1980)  
Եղեունը (1947, տպվ. 1974, Փարիզ)
157. Չուգասրզյան Վահան (1885-1961)  
Ազատության արշալույսը  
Ցեղիս գողգոթան (Սերաստիո իրական կյանքեն առնված  
դրամա)
158. Պաղճյան Գևորգ (1913-1999)  
Դեպի երկիր
159. Պապայան Աշոտ (1911-1998) և Արամ (1918-1945)  
Բախտավորյալները
160. Պարգև Հրայր (XX դ.)  
Անապատի հոգիներ
161. Պարթևյան Սուրեն (Պարտիզականյան Սիսակ, 1876-1921)  
Անմահ բոցը  
Չայնը հնչեց
162. Պարտիզականյան-Ֆանուս Շուշան (1938)  
Պանք Օթոման (տպվ. 1997, Լոս Անջելես)
163. Պետրոսյան Ալվարդ (1946)  
Ես մի ծառ եմ ծիրանի – բեմականացումը և բեմադրությունը  
Վահե Շահվերդյանի, ըստ համանուն երկի

164. **Պետրոսյան Աննա (1935)**  
 Անավարտ եղբրդ խաչվածին (տպվ. 2014, Երևան)  
 Արտոնված եղեռն  
 Բանտախոց 7160 (Գուրգեն Յանիկյան մասին)  
 Տիրամոր ճիչը (տպվ. 2001, Երևան)
165. **Զամբազյան Ավետիս (1929-1971 ?)**  
 «Ապրիլ 24» – սիմֆոնիկ պոեմ, բալետ-ներկայացում, 2004,  
 Թեհրան
166. **Ռշտունի (XIX-XX դդ.)**  
 Զեյթունի ահեղ ճակատամարտը (1909)
167. **Սագոյան Ղազար (1929)**  
 Գաղթի ճամբան (1980 ակ. թթ., Դամասկոս)
168. **Սազճյան Գևորգ (XX դ., Բեյրութ)**  
 Հավատքի ճամբուն վրա
169. **Սահառունի Վ. (XIX-XX դդ.)**  
 Կարմիր մարդը (Ոգի Հայաստանի կամ Կարմիր մարդը)
170. **Սայադյան Գեղանուշ (XX-XXI դդ., Հայաստան)**  
 Իմ տառապած, իմ փառապանծ
171. **Սանասարյան Արմենակ (XIX-XX դդ.)**  
 Արյունոտ կիսալուսին
172. **Սառաջյան Մեխակ (188?-1920)**  
 Արյան հետք  
 Հայդուկներ (1915, Բաքու-Բալախանի)
173. **Սարաճյան Պետրոս կաթողիկոս (1872-1940)**  
 Հաճըն
174. **Սարաֆյան Կարոլին (XX-XXI դդ.)**  
 Առանց վերադարձի իրավունքի (արևմտահայերենից ռուս.  
 թարգմ. Սոնա Մելոյան)
175. **Սարգիսյան Ժորժ (1915-1982)**  
 Դատավարություն Սողոմոն Թեհլիրյանի
176. **Սարգսյան Գևորգ (1934)**  
 Արաբո  
 Արշիլ Գորկի  
 Խենթացած մի վանք (Առաքելոց վանքի կռիվը)  
 Կարմիր կիրակիի զինվորը (Անդրանիկ)  
 Որ սպանվեց էլ, չպիտի մեռնենք (Գևորգ Չավուշ)  
 Միրո քսան տարի անց (Գևորգ Չավուշ)
177. **Սարգսարյան-Արեշատյան Ադամ (1856-1913)**  
 Հայդուկներ կամ Ֆրեյդուն ավազակապետը կամ Գյուլլիզար  
 յար (նորագույն հայ գրողներից կատարած փոխադրու-  
 թյան բեմականացում), 1894, Թիֆլիս

178. Սարուխան(յան) Ալեքսանդր (1898-1977)  
Մենք հայերեն չենք գիտեր
179. Սելյան Սարգիս (XX-XXI դդ.)  
Կտակը (1965)
180. Սեակ (Չիլինկիրյան) Ռուբեն (1885-1915)  
Ջարդի խենթը – բեմականացումը և բեմադրությունը Հրանդ Մարգարյանի
181. Սեակ (Ղազարյան) Պարույր (1924-1971)  
Անլուելի զանգակատուն – բեմականացումը Հրանդ Մարգարյանի  
Եռաձայն պատարագ – բեմականացումը Հրանդ Մարգարյանի  
Եռաձայն պատարագ – բեմականացումը Ռոբերտ Եսայանի  
Ղողանջ հուսո – ըստ Պ. Սեակի «Անլուելի զանգակատուն» երկի – Անահիտ Աղասարյան
182. Սեվայր (XIX-XX դդ., Բոստոն)  
Բռնկող կայծեր
183. Սիմոնյան Անուշավան (XX դ.)  
Մահվան շուքին տակ (հայկական ջարդերեն առնված, 1957, Բեյրութ)
184. Սիրվարդ (Եղիա Գ. Գրիգորյան, 1889-1985)  
Ջախջախված գանկեր (տպվ. 1920, Բոստոն)
185. Սվազլյան Գառնիկ (1904-1948)  
Ներգաղթ
186. Սունդուկյան Գաբրիել (1825-1912)  
Ամուսիններ
187. Վալադյան Վալադ (Վանեցյան Մկրտիչ, 1883-1974)  
Ազատության ճանապարհին կամ Անդրանիկ փառայի մահը
188. Վահրամյան Մարուսյա (1919-2012)  
Կոմիտաս վարդապետ
189. Վաղարշյան Վաղարշ (Տեր-Պողոսյան Վաղարշակ, 1894-1959)  
<Աբդուլ Համիդ>
190. Վանլյան Ճորճ (1939)  
Ծիրանի ծառ – բեմականացումը ըստ Ս. Փանոսյանի «Վարք Կոմիտաս վարդապետի» վեպի  
Կոմիտաս Կուտինացի
191. Վասիկերտցյան Հ. Գ. (XX դ.)  
Երեք քաջեր անապատին մեջ (հեղափոխական կյանքե)
192. Վարանդ (Քյուրքչյան Սուքիաս, 1951)  
Նոր Նեմեզիդա  
Քավարան-7

193. Վարուժան (Չպուկեքյարյան) Դանիել (1885-1915)  
Արմենուհի-բեմականացումը Հակոբ Սիրունու
194. Վիմենց (Թաշճյան Մանուկ, 1879-1973)  
Անդրանիկ
195. Տարոնյան Հրաչ (1917-1990)  
Հայրենիքեն հեռու (1946, Փարիզ)
196. Տեսեկյուլ Նշան (1888-1930)  
Ամերիկահայ փեսացուն  
Եկվորները  
Հատուցման ժամը (տպվ. 1918)
197. Տեր-Գրիգորյան Էմին (1855-1939)  
Սուր և հուր (Մ՛վ է մեղավոր)
198. Տեր-Հովնանյան Արշալույս (1890-1958)  
Նոր առավոտ կամ Տաճկահայ դրաման (կամավորներ)
199. Տերտերյան Միհրան (1888-1929)  
Դրոշակակիր հերոսուհին (1906, Վառնա)  
Խանասոր
200. Տիրատ(ուրյան?) Վարդան (189?-1971)  
Ոճրագործին սերը
201. Փարամազ (Սարգսյան Մատթեոս, 1863-1915)  
Զուգերը վեր կամ Ճուղուպրիստները  
Պաքո
202. Փարթամյան Հովհաննես վարդապետ (XX դ.)  
Հայրենիքի կարոտը – 1949, Բեյրութ
203. Փափազյան Վրթանես (1864-1920)  
Արշալույս
204. Քելեմյան Տիգրան (1961)  
Մենք և նրանք. հետաքննություն
205. Քեհյայան Երեմիա (XIX-XX դդ., Լոս Անջելես)  
Գոյություն պայքարը (1914-1919 թթ., հայ կյանքից)
206. Քեչիշյան Մանուել (1952)  
Անկյունադարձը (Ղարաբաղյան շարժում)  
Տխուր մոմեր  
Մայրիկ-բեմականացումը ըստ Ա. Վերնոյի համանուն երկի  
Նահանջը առանջ երգի – բեմականացումը և բեմադրությունը  
ըստ Ծ. Շահնուրի համանուն երկի
207. Քեռչկերյան Մանուել (XX դ.)  
Չար գիշերը (Մարաշի ինքնապաշտպանությունը) (տպվ.  
1958, Ադիս Աբեբա)
208. Քեֆելյան Հարություն (XX դ., Փարիզ)  
Արյունոտ դաշտ

209. **Քիրեճյան Նուպար (XX դ.)**  
Մեծ մայրիկի պատմութիւններ (Վերջին հրաշքը)
210. **Քոչար (Գաբրիելյան) Հրաչյա (1910-1965)**  
Կարոտ – բեմականացումը Գևորգ Գևորգյանի  
բեմականացումը Գրիգոր Չալիկյանի  
բեմականացում  
Նահապետ – բեմականացումը Գ. Չալիկյանի  
Ուսուցիչը – բեմականացումը Ազատ Շահինյանի
211. **Քոչարյան Կարինե (XX-XXI դ.դ.)**  
Հողիս ձեզմով կիսայտա – բեմականացումը և բեմադրութիւններ  
ըստ թուրք գրող Քեմալ Եալչընի համանուն գործի
212. **Օշական (Քյուֆեճյան) Հակոբ (1883-1943)**  
Անվերնագիր  
Ավելի անդին  
Երկնքի ճամբով  
Մայրերը
213. **Օշական Վահե (1923-2000)**  
Հողեհանգիստ 4 («Պատուհանը բաց մնացած է», 2012, Փարիզ)  
Սփյուռք (2012, Փարիզ)
214. **Օտյան Երվանդ (1869-1926)**  
Աբղուլ Համիդ և Շերլոկ Հոլմս – բեմականացումը Լ. Շիշ-  
մանյանի  
Աբղուլ Համիդ և Շերլոկ Հոլմս – բեմականացումը Գ. Զա-  
լիկյանի
215. **Յազլյան Պերճ (1926-2016)**  
Անպատանք դիակներ
216. **Ֆելեկյան Սիմոն (1831-1904)**  
Սասուն և Զեյթուն
217. **Ֆեսչյան Կարպիս (1928) և Ղուկասյան Հովհաննես (1919-1991)**  
Գնա՞նք թե մնանք
218. **Ֆրանկյուլյան Անուշավան (<1909> - ?)**  
Արյունի մարտը

## ՕՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԵՐ

### ա) Անդլերին

219. **Այվազյան Լեսլի (1947)**  
Ինը հայ  
15/15 (Լոս Անջելիս, 2015)
220. **Արզումանյան Ռաֆֆի (XX-XXI դ.դ., Անգլիա)**  
Էլիս կղզի 101

221. *Բեջոյան Բարբարա (XX-XXI դդ., Ամերիկա)*  
Պարիզ մայրիկ, պարիզ
222. *Բուլիթ Քրիստինա (1961), Հինչքո Թամարա (1938)*  
Դատավճիռ
223. *Գալուստյան-Գրին Սևան (XX-XXI դդ.)*  
Մոռացված հաց (Լոս Անջելես, 2015)
224. *Թեմպեք (յան) Ռոբերդ էդուարդ (1940-1976)*  
Հայ դատ, Հայկական հարցը
225. *Շիրինյան Լորն (XX-XIX դդ., Ամերիկա)*  
Աքսոր օրորոցում (Մեդիսոն, 2008)
226. *Ռուսո Ալեն (Ռահանյան Աշոտ, <1910>- ?)*  
Օսմանյան լծի տակ
227. *Սարոյան Վիլյամ (1908-1981)*  
Բիթլիս  
Իմ սիրտը լեռներում է  
[Թարգմ. Ֆրանսերեն  
[Թարգմ. ռումիներեն  
[Թարգմ. բուլղարերեն՝ Լ. Սկարլիթովա  
[Թարգմ. չեխերեն՝ Ան. Աբրահամյան  
[Թարգմ. ռուսերեն՝ Յու. Աբրզով  
[Թարգմ. Վ. Ահարոնյան  
[Թարգմ. Արա Աբրահամյան  
[Թարգմ. Խ. Դաշտենց  
[Թարգմ. Հ. Շեռհմելյան  
Խաղողի այգին – [Թարգմ. Խ. Դաշտենց  
Հայեր  
Հառաջ  
Ֆրեզնո, սրճարան Արաքս (հեռուստաթատրոն)
228. *Սեդրակյանն էդուարդ (XX դ.)*  
Դեղին պայմանագիր
229. *Սիրականյան Էրիկ (XX-XXI դդ.)*  
Էրմենի (բեմ. 2015, Ամերիկա)
230. *Սյուրմեյան Լևոն Զավեն (1907-1995)*  
Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք – ռուսերեն [Թարգմ.  
Ջուլիետտա Ջուֆայակյան [К вам обращаюсь, дамы и гос-  
нода], հատվածի բեմականացումը և բեմադրուլթյունը Ռ.  
Հակոբյանի
231. *Փարլաքյան Նշան (1925 – 2011)*  
Մեծ մայրիկ աղոթե ինձի համար

բ) Բուլղարերեն

232. Եոնեսկու Օլգա (XIX-XX դդ., Վառնա)  
Սեր և ատելություն

գ) Ֆրանսերեն

233. Ժան Ժակ Վարուժան (Ուզունյան, 1927-2005)  
<<1915>>  
Շնորհակալություն Ձեզ, Սըր  
Սի Սե Ռոն
234. Ռեն Պարթև (Պարթևյան Թագուհի (1937)  
Արմենուշ  
Ամենուշ-թարգմ. էլո Նազլուժյան  
Բալթագարի (Բաղդասարի) տաղավարը

ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԵՐ

ա) Անգլերեն

235. Ադրիանա Սևան Նիկոլս (XX-XXI դդ., Ամերիկա)  
Գիշեր Երզնկայի վրա – թարգմ. և բեմադր. Վարդան  
Գառնիկի
236. ՄակՖերսոն Նիլ (XX-XXI դդ.)  
Ուզում եմ մեռնել երգելով (2015, Լոս Անջելես)
237. Ռահուլ Վառմա (Հնդիկ, XX-XXI դդ., Մոնրեալ)  
Հարատևող ժխտումը (2015, Մոնրեալ)
238. Ռիթո Պոալոնի (XX դ., Ամերիկա)  
Ո՛վ է Հիշում Հիմա (Սողոմոն Թեհլիրյան)
239. Ռիչարդ Կալինոսկի (XX-XXI դ., Ամերիկա)  
Հրեշը լուսնի վրա  
Թարգմ. Ֆրանս. Դանիել Լորիզա  
Թարգմ. ռուս. Ալեքսանդր Պոպով  
Թարգմ. իսպան. Ալեխանդրո Սանչես  
Թարգմ. ռուս-հայ, Նիկ. Ծատուրյան  
Կորացած մարդը
240. Ռոբերտ Աստըլն (XX դ., Կանադա)  
Պարոն Ջենոբի գլխարկները
241. Ջոյս Վան Դայկ (XX-XXI դդ., Ամերիկա)  
Աղջկա պատերազմը – դարաբաղյան թեմայով (տպվ. 2004,  
Նյու Յորք)  
Աքսորվածները

242. Վիլյամ Ռոլեր և Աննա Անթառանյան (XX-XXI դդ., Ամերիկա)  
Հայկական հարցը (տպվ. 2004, Նյու Յորք)

բ) Արաբերեն

243. Լուեյ Այատե (XX-XXI դդ.), Հալեպ)  
Ակամա ինքնասպանը (Ալրաճուլ, ալ լազի հարապա նաֆ-  
սահուլ)

գ) Գերմաներեն

244. Աքհանլի Դողան (թուրք գրող, XX-XXI դդ.)  
Մոր լուսթյունը – մենաթատրոն, գերմաներեն, 2012 Բեռլին,  
2013 Քյոլն

245. Ֆրանց Վերֆել (1890-1945)

Մուսա լեռան քառասուն օրը – բեմականացումը բնագրով՝  
Լեոպոլդ Կրյուզընպախերի  
բեմականացումը բնագրով՝ Ֆերդինանտ Բրուքների  
Հայերեն բեմականացումները՝

Անդրանիկ Սողոմոնյան (Լոս Անջելես)

Հովհաննես Զարիֆյան (Բոստոն)

Ռենն (Վարդանյան Ռուբեն, Արգենտինա)

Գրիգոր Չալիկյան (Երևան)

Մելիք Քոչարյան (Երևան-Բեյրութ)

Արմեն Էլբակյան (Երևան)

Ծրածան Ինկիլիզյան (անգլ. բեմականացում, Ամերիկա)

դ) Իսպաներեն

246. Կլաուդիա Փինեյրո (XX դ., Արգենտինա)  
Նույն կանաչ ծառը

ե) Հունարեն

247. Նիկոս Ֆուկուրոս (XX դ. Հունաստան)  
Հայկական լուսին

զ) Ֆրանսերեն

248. Ալֆրեդ Բրունո (XX դ., Բրյուսել)  
Հայուհիներ

## ՀԵՂԻՆԱԿՆ ԱՆՀԱՅՏ ՀԱՅԵՐԵՆ ՊԻԵՍՆԵՐ

1. Աղբյուրը Սերոբ (1921, Ռեյսին, ԱՄՆ)
2. Անդրանիկ կամ լրտեսը (1933, Բեյրութ)
3. Առաքելոց վանքի կռիվը
4. Առաքելոց վանքի ցույցը (1920-տվ. թթ., Ֆրեզնո)
5. Առևանգված Հայուհին (1924, Պրովիդենս)
6. Արդար պատիժ (1920, Ֆատլըր)
7. Արյունին ձայնը – միլիոն մը Հայերու ջարդի պատմությունը, 1914-1918 թթ. (տպվ. 1924)
8. Արյունոտ երազ (1928, Փարիզ)
9. Արյունոտ Կովկասը (1907, Ուեստ Հոպրքըն)
10. Արյունոտ հարսանիք (1906, Ֆիլիպս [Պրովիդենս])
11. Արյունոտ ճամբան (1908, Ուստր)
12. Բանկ Օտոմանի դրավումը (1928, Վալանս)
13. Գոյություն պայքար (1929, Վիեն)
14. Երկաթե մարդիկ կամ Լեռան հերոսները – Սասնա հեղափոխական կյանքից (1913, Այնթապ)
15. Զեյթունի ապստամբությունը (1906, Բոստոն)
16. Զորավար Անդրանիկ (1934, Հալեպ)
17. Ընկեր Կարո (1928, Լիոն)
18. Ժիրայր
19. Ինքնակիզում (արևմտահայերեն, 1987, Թեհրան)
20. Խնաստրի արչավանքը (1928, Լիոն)
21. Հայ Հայդուկներ (1899, Վառնա)
22. Հայ հերոսի սերը (1904, Բոստոն)
23. Հայդուկի աղոթքը (1920, Ֆիլադելֆիա)
24. Հայերեն լեզուն օտարամոլություն և ալյասերման հոսանքին դեմ (2012, Բեսապ)
25. Հեղափոխական կամ Կարմիր աղջիկը (1928, Ամերիկա)
26. Հերոսուհին
27. Մատնիչը կամ Արյունոտ թթխմոր (1903, Պրովիդենս)
28. Մարտիկներ
29. Սասնա լեռներու պատերազմը (1928, Լիոն)

30. Սասունի ապստամբությունը (1902, Վառնա)
31. Վանի գրավումը (1916, Բուխարեստ)
32. Վասպուրականի հերոսամարտը (1928, Ֆրեզնո)
33. Վասպուրականի հերոսները (1901, Ռուսչուկ)
34. Վարդ-Վարդան (1904, Բոստոն)
35. Վշտահար մայրը (1924, Ռեյսին)
36. Վրեժը (1906, Վառնա)
37. Վրեժի սերունդը (1906, Ֆիլիպե)
38. Վրեժինդիր ոգիները՝ Արյունոտ ճամբուն մեջ (1908, Ուստր)
39. Տաճկական խոստմունք (ողբերգ., 1888, Նոր Ջուղա)
40. Տարաբախտ ծերուկը (1926, Կոնստանցա)
41. Տարագիրները
42. Ուրֆայի հերոսամարտը (1928, Ֆրանսիա)
43. Քսան մահապարտներ (Թերևս՝ Քսան կախաղաններ ?)
44. 41<sup>Ա</sup> (Սումգայիթի 41<sup>Ա</sup> թաղամասը, 1991, Երևան)
  
45. Հերոսների ճոճանակը (կախաղանը – արաբերեն՝ Ուրկուլաթ էլ Ապտալ)
46. Արմենուհի, քույր (լեհերեն, 2015, Վրոցլավ) .

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ  
ՌԵՄԱՅՈՎ ԳՐՎԱԾ ՊԻԵՍՆԵՐԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿ**

**1. Ամերիկա**

1. Բոստոն (Հայ., անգլ.)
2. Գլենդեյլ (Հայ., անգլ.)
3. Դեարոյթ
4. Եոնիլն Սիթի
5. Թրոո
6. Լոնգ Բիչ (անգլ.)
7. Լոս Անջելես
8. Լորենս
9. Հարթֆլդըդ
10. Մեդիսոն
11. Նյու Բրիթեն
12. Նյու Յորք (Հայ., անգլ.)
13. Նյու Ջերսի
14. Նորթ Անտովըր
15. Ջիկագո
16. Պեմոնթ
17. Պենֆլդըթ
18. Պրովիդենս
19. Ռեյսին
20. Ռոչեստր
21. Սան Ֆրանցիսկո
22. Սենթրըլ Ֆոլս
23. Տեմերըսթ
24. Ուեստ Հոպոքըն (Յոունիըն Սիթի)
25. Ուոթըրթաուն
26. Ուոթըրվիլդ
27. Ուոքհիլըն
28. Ուստր
29. Փասատինա

30. Փարք
31. Փեթրսըն
32. Փորթլենդ
33. Օնտարիո
34. Ֆաուլըր
35. Ֆիլադելֆիա
36. Ֆրեզնո

**2. Անգլիա**

37. Լոնդոն

**Անդրկովկաս**

**3. Ադրբեջան**

38. Բաքու
39. Գանձակ
40. Գետաչեն գյ.
41. Հին Նախիջևան
42. Հին Ջուղա
43. Նուխի
44. Վերին Ագուլիս

**4. Լեռնային Ղարաբաղ**

45. Առաջաձոր գյ.
46. Շուշի
47. Ստեփանակերտ

**5. Հայաստան**

48. Աբովյան
49. Ալեքսանդրապոլ (Գյումրի)

50. Բեզազլու գյ. (Ղամարլոււի շրջ.)

51. Գորիս

52. Դիլիջան

53. Եղեգնաձոր

54. Երևան (Հայ., ռուս., անգլ., ֆրանս.)

55. Էջմիածին (Վաղարշապատ)

56. Թալին

57. Կապան

58. Հոկտեմբերյան (Արմավիր)

59. Ղարաքիլիսա (Վանաձոր)

60. Նոր Բայազետ (Գավառ)

61. Սևան

62. Քանաքեռ (այժմ՝ Երևանի տարածքում)

63. Քաջարան

#### 6. Վրաստան

64. Ախալցխա

65. Բաթում

66. Թբիլիսի

67. Սարթլևել

68. Օբրոյակերտ

#### 7. Ավստրալիա

69. Սիդնեյ

#### 8. Ավստրիա

70. Լինց (գերմ.)

#### 9. Արգենտինա

71. Բուենոս Այրես (Հայ., անգլ., իսպ.)

72. Գորթոպա

73. Մար-Դել-Ֆլատա (իսպ.)

#### 10. Բելգիա

74. Բրյուսել (ֆրանս., Հայ.)

#### 11. Բելոռուսիա

75. Բրեստ (ռուս.)

76. Մինսկ (ռուս.)

#### 12. Բրազիլիա

77. Սան Պաուլո

#### 13. Բուլղարիա

78. Բուրգաս

79. Ռուսչոուկ

80. Սլիվեն

81. Սոֆիա (Հայ., բուլղ.)

82. Վաննա

83. Ֆիլիպե (Պլովդիվ)

#### 14. Գերմանիա

84. Բեռլին (գերմ.)

85. Կարլսուոհե (գերմ.)

86. Քյոլն (գերմ.)

87. Օբերհասուզեն (գերմ.)

#### 15. Եգիպտոս

88. Ալեքսանդրիա

89. Կահիրե

#### 16. Եթովպիա

90. Ադիս Աբեբա

#### 17. Էստոնիա

91. Տալլին

#### 18. Թուրքիա

92. Ադանա

93. Ադրիանապոլիս

94. Ամասիա

95. Այնթապ

96. Ատաբազար

97. Արդահան

- 98. Բանկալթի
- 99. Եվդոկիա
- 100. Էրզրուժ (Կարին)
- 101. Թիքնիզ դյ. (Կարսի մարզ)
- 102. Իգդիր
- 103. Իգմիր (Զմյուռնիա)
- 104. Կամախի Բազառիճ դյ.  
(Վերի ու վարի)
- 105. Կարս
- 106. Կիրասոն
- 107. Կ. Պոլիս (Հայ., թուրք.)
- 108. Մերսին
- 109. Նիկոմիդիա
- 110. Պարտիզակ
- 111. ՎագըՔ դյ. (Կիլիկիա)
- 112. Վան
- 113. Տարսոն
- 114. Տեորթ Յոլ (Զորք  
Մարզվան)
- 115. Տեսեաղաճ
- 116. Տերսիմ
- 117. Տրապիզոն
- 118. Քզի

**19. Թուրքմենստան**

- 119. Աշխաբադ
- 120. Կրասնովոդսկ
- 121. Մերվ (Մարի)
- 122. Քերքի

**20. Իտալիա**

- 123. Վենետիկ

**21. Իրան**

- 124. Աբադան
- 125. Ահվադ
- 126. Բոլորան դյ. (Փերիսյի գվ.)
- 127. Թավրիզ
- 128. Թեհրան
- 129. Ղազվին

- 130. Ղալասար
- 131. Մաշհադ
- 132. Նոր Զուղա
- 133. Ռաշտ
- 134. Ուրմիա

**22. Իրաք**

- 135. Բաղդադ

**23. Լեհաստան**

- 136. Կրակով (լեհ.)
- 137. Վարշավա (լեհ.)
- 138. Վրոցլավ (լեհ.)

**24. Լիբանան**

- 139. Այնճար
- 140. Բեյրութ (Հայ., ֆրանս.)
- 141. Զահլե
- 142. Հաղմիե
- 143. Շթորա
- 144. Պեյլան դյ.
- 145. Տրիպոլի

**25. Կանադա**

- 146. Մոնրեալ
- 147. Պլենտֆլըրա
- 148. Տորոնտո (անգլ.)
- 149. Քվեբեկ

**26. Կիպրոս**

- 150. Նիկոսիա

**27. Հորդանան**

- 151. Ամման

**28. Հունաստան**

- 152. Աթենք (Հուն., Հայ.)
- 153. Գոթինա
- 154. Սալոնիկ

29. Հունգարիա
155. Դյոր
30. Շոտլանդիա
156. Էդինբուրգ
31. Շվեյցարիա
157. Ժնև
158. Լոզան (Ֆր.)
32. Չեխիա
159. Պրահա (չեխերեն)
33. Ռումինիա
160. Բուխարեստ (Հայ., ռում.)
161. Կոնստանցա
34. Ռուսաստան
162. Աստրախան
163. Արմավիր
164. Գրոզնի
165. Եկատիրինոզար  
(Կրասնոզար)
166. Մոզդոկ
167. Մոսկվա (Հայ., ռուս.)
168. Նոր Նախիջևան (Ռոստով)
169. Չիտա (ռուս.)
170. Պետերբուրգ (Հայ., ռուս.)
171. Պրիմորսկ (ռուս.)
172. Տուսկսես
35. Սիրիա
173. Ալեքսանդրիեթ
174. Գամիշլի
175. Դամասկոս
176. Հալեպ (Հայ., արաբ.)
177. Հաջի Հաբիբլի
36. Ուզբեկստան
178. Կոկանդ
179. Սամարղանդ
37. Ուրուգվայ
180. Մոնտեվիդեո
38. Ֆրանսիա
181. Ալֆորվիլ
182. Ավինյոն
183. Արնովիլ
184. Գրենոբլ
185. Իսի-Լե-Մուլինո
186. Լիոն
187. Կարտան
188. Մարսել
189. Նիս
190. Պելվիլ
191. Պոմոն
192. Սեն Շամոն
193. Սենթ Անտուան
194. Վալանս
195. Վանսեն (Ֆրանս.)
196. Վիեն
197. Տեսին
198. Փարիզ (Հայ., Ֆրանս.)
199. Փոն դը Շերի

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանութւան և նրա հետևանքների թեման թատրոնում (1895-2015 թթ.) .....	5
Հայոց ցեղասպանութւան թեման Հայ դրամատուրգիայում և թատրոնում (1895-1915 թթ.) .....	17
1915 թվականի Հայոց Մեծ եղեռնի դատապարտումը Հայ դրամատուրգիայում և թատրոնում.....	104
Հայոց ցեղասպանութւան թեման Հայ հեղինակների մայրենի ու օտար լեզուներով գրած դրամատուրգիայում և թատրոնում .....	234
Հայոց ցեղասպանութւան թեման Հայ հեղինակների օտար լեզուներով գրած դրամատուրգիայում և թատրոնում.....	247
Հայոց ցեղասպանութւան թեման օտարազգի հեղինակների դրամատուրգիայում և աշխարհի թատրոններում .....	281
Ղարաբաղյան ազատագրական շարժումը որպես Հայոց ցեղասպանութւան դեմ պայքարի նոր արտահայտութիւն .....	309
Վերջաբանի փոխարեն .....	334
Summary.....	346
Հայոց ցեղասպանութւան և նրա հետևանքների թեմայով գրված պիեսների ցանկ .....	351
Հայոց ցեղասպանութւան և նրա հետևանքների թեմայով գրված պիեսների բեմադրութիւնների վայրերի ցանկ .....	373

**ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ  
(1895-2015)**

**БАХТИАР ОВАКИМЯН  
ТЕМА ГЕНОЦИДА АРМЯН В ТЕАТРЕ  
(1895-2015)**

**BAKHTIAR NOVAKIMYAN  
THE THEME OF THE ARMENIAN  
GENOCIDE IN THE THEATRE  
(1895-2015)**

*Համակարգչային շարվածքը և էջադրումն Ա. Իսանզադյանի*

Չափսը՝ 70x100 1/16: Ծավալը՝ 23.625 տպ. մամուլ:  
Թուղթը՝ օֆսեթ, 70գ: Տպաքանակը՝ 300:

Տպագրված է «էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում

**ԷԴԻԹ  
ՊՐԻՆՏ**  
Իրատարակչություն



Թումանյան 12, 3,  
ՅԵՄՍ 52 08 48  
56 08 41  
info@edithprint.am





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0469321

«Բուկինյան ԱՊԸ»

ISBN 978-9953-72-07-12



2 0 0 2 9 2 0 0 7 7 0

A 11  
103262